Սասունցի Դավիթ



ԱՇԽԱՐՀԻ
ԲՈՒՀ
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Давид Сасунский

Армянский народный эпос

АРМЯНСКАЯ ССР
ГОСУДАРСТВЕННОЕ ИЗДАТЕЛЬСТВО
ЕРЕВАН 1939

ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԻԹ



ՀԱՅԿԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՊՈՍ

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ
ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1939

Համահավար տեքստը կազմել յեվ տպագրության ե պատրաստել ԽՍՀՄ Գիտությունների Ակադեմիայի Հայկական Ֆիլիալի Լեզվի յեվ Գրականության Ինստիտուտի գիտական ընդգաղան, հետեվյալ կազմով.

Պրոֆեսոր դոկտոր
ԱՌԵՂՅԱՆ ՄԱՆՈՒԿ
Պրոֆեսոր
ԱՌՈՎ ԳԵՎՈՐԿ
(Նախագահ)
Ինստիտուտի ավագ գիտ. աշխատող
ԴԱՆԵԼՅԱՆՑԱՆ ԱՐԱՄ

Ընդհանուր խմբագրություն յեվ առաջաբան ակադեմիկ
Ի. Ա. ՕՐԲԵԼԻԻ

Իլյուստրացիանները նկարիչ
ՄՀԵՐ ԱՌԵՂՅԱՆԻ
Կազմը, Ֆորզացը, անվանաթերթերը, շմուցտիտուլները, գլխազարդերը յեվ վերջնազարդերը նկարիչ՝
ՍՏԵՓԱՆ ԱԼԹՈՒՆՅԱՆԻ

1000

ԱՌԱՋԱՐԱՆ

Արդյո՞ք կարելի է խոսել տասնյակ սերունդների կոլեկտիվ «ստեղծագործության արդասիքը հանդիսացող ժողովրդական եպոսի հազարամյակի և առհասարակ նրա ծագման թվականի մասին, յեթե նրա մեկնակետն ու հիմնական առանցքը չի հանդիսանում մի վորևե վորոշակի պատմական իրադարձություն, վորի տեղն ու ժամանակը նշված լինեն համապատասխան չափի խորը անցյալում մի վորևե հաստատապես վորոշված, տեսանելի, շոշափելի, ընթեռնելի կամ մեկնարանելի հիշատակարանում։

Ժողովրդական եպիկական չրջանի ծագման ճիշտ տարեթիվը վորոշելու այդպիսի մի փորձ արդյո՞ք նույնքան տնիրագործելի չե, վորքան դետի հոսանքի, նրա չրի գույնի ու համի նկատմամբ կատարվող դիտողությունների հիման վրա այն առաջին վտակի գոյացման ժամանակը սահմանելու փորձը, վորը հետո զառնում է իր ալիքները դեպի մեծ, աղի ծովի ափերը քչող վեհ ու հզոր մի գետ։

Բացի յերկրաբանից, վորը կարողանում է ճանաչել չերտավորված նստվածքները, ընդունակ է հաշվարկել ամենաարժեքավոր պալեոնտոլոգիական մնացուկներ պարունակող հարյուրավոր ամենանուրբ, խստիվ չափակցված պարբերական խավերը,— ո՞վ կհանդգնի լուծել այս խնդիրը թեկուզ ամենահեռավոր ճշգրտությամբ։

Բայց ի՞նչը կարող է ավելի պարզ լինել, քան դետի հունի փոփոխման ժամանակը վորոշելու, այսինքն այն ժամանակը վորոշելու խնդիրը, վորից վոչ առաջ տեղի յե ունեցել այդ փոփոխությունը,— յեթե դետը նոր հուն փորելիս կործանել է իր նշած նոր ճանապարհի վրա գտնվող պատմական կյանք ապրած մի քաղաք, վորի ավերակները պարզ յեղանակին տեսանելի յին նոր հատակում նրանց վրայից թավալվող ալիքների վճիտ ջրերի միջով։ Այդտեղ յերկրաբանը տեղը դիջում է պատմաբանին։ Պատմագիտությունը, վոր ունի մարդկային ձեռքի հորինվածքների հետազոտման բազմազան պրիոմներ, կվորոշի և՛ այդ քաղաքի կյանքի ժամանակը, և՛ մեծ ճշգրտությամբ այն տարեթիվը, վոր նշում է քաղաքի կյանքի վերջին որերը նրան հասած աղետից առաջ։

Այդպես էլ ժողովրդական եպոսի նկատմամբ, մանավանդ այնպիսի մի եպոսի, վոր ընդգրկում է հերոսների մի քանի սերունդների կյանքը և միքանի արարքներն ու սխրագործությունները, հերոսներ, վորոնք թեպետ և ժողովրդական ավանդությամբ հարմարեցված են պատմական անձնավորությունների անուններին, բայց իրենց մեջ և իրենց վրա կրում են հարյուրա-

վոր խավավորումներ։ Այդ խավավորումներն աստիճանաբար զատվում էին, ինչ չափով վոր աճում ու զարգանում եր մարդկային մտածողությունը, ինչ չափով վոր մարդու մոտ մտապատկերներ էին գոյանում բնության, նրա ուժերի մասին, նրանց պայքարի, նրանց և մարդու առերևույթ պայքարի մասին, մի պայքար, վորը պրիմիտիվ մարդն ընդունում եր վորպես բնության և նրա ուժերի պայքար իր դեմ. նա տակավին չեր գիտակցում, վոր վոչ թե բնությունն է պայքարում իր դեմ, այլ ինքն է պայքարում բնության դեմ։

Հայկական ժողովրդական մեծ եպոսի տարբեր վարիանտներն ուսումնասիրելու և գրի առնելու գործն սկսվել է սրանից 65 տարի առաջ։ Առաջին բուն նահավաքը յեղել է հայկական ֆոլկլորի հայտնի հետազոտիչ Սրվանձտյանը, հետո սի շարք ուրիշներ և, առաջին հերթին, պրոֆ. Մանուկ Աբեղյանը, վորը վարիանտներից մեկը գրի յե առել 1886 թվին Վաղարշապատ քաղաքում. մի ամբողջ հինգամյակի ընթացքում Աբեղյանը շարունակ վերադարձել է աշխատելու եպոսի վրա, նրա մասին գրել է յերկու ընդարձակ ուսումնասիրություն և իր աշխատանքն ավարտել է մասնակցելով այն համակարգմանը, վորը հնարավորություն տվեց հրատարակելու եպոսի բաղկացուցիչ մասերի և վարիանտների քննադատական ամփոփումը։

Բանահավաքների թողած գրառումներից մի քանիսը ներկայացնում են ամբողջ եպոսի շարադրումն իր բոլոր չորս բաժիններով, իսկ մյուսները ներկայացնում են լոկ եպոսի առանձին ճյուղերի, առանձին հատվածների գրառումը։

Հավաքված և եպոսի համակարգման ժամանակ ուղտագործված նյութերը կազմում էին ավելի քան յերկու հազար հինգ հարյուր տպագիր եջ և բաղկացած էին 50 վարիանտից։

Համակարգումը կատարվեց 1938 թվի աշնանը ԽՍՀՄ Գիտությունների Ակադեմիայի Հայկական Ֆիլիալի Գրականության և Լեզվի Ինստիտուտի բրիգադայի կողմից, վորի կազմի մեջ մտնում էին պրոֆ. Մանուկ Աբեղյանը, պրոֆ. Գեվորգ Աբովը և ավագ գիտական աշխատակից Արամ Ղանալանյանը։ Մինչև կառավարական Հրելյանական Կոմիտեի կողմից համահավաք խմբագրության հաստատվելը, ամբողջ տեքստը խորացրած քննարկման յենթարկվեց ԽՍՀՄ Գիտությունների Ակադեմիայի Հայկական Ֆիլիալի Գիտական Խորհրդի ղոնբաց նիստերում և եպոսի 1000-ամյակի տոնակատարության Հանրապետական Հրելյանական Կոմիտեում։ Խնդիրն այն եր, վոր կապակցված մի պատմվածքի միաբերվելիս վարիանտները, առանց տեքստի վրա բռնանալու և առանց այն խեղաթյուրելու, առաջարկելով չորս հերոսներից յուրաքանչյուրի հետ կապված առանձին մասերը, ըստ վորում հանձնաժողովի խնդիրն եր վոչ միայն սահմանել լիակատար տեքստը, այլև կրճատել կրկնությունները, առանց թեկուզ փոքրիկ հավելումներ, միջադրումներ կատարելու, թող լինի անգամ միջանկյալ հատվածներ մտցնելու։ Ավելի քան տասնմեկ հազար տող պարունակող սույն համահավաք տեքստում չկա վոչ մի տող, վորը գոյություն չունենա բուն փաստաթղթերում, այսինքն՝ բանահավաքների գրի առած բուն վարիանտներում։ Նմանապես տաղաչափական և լեզվական վերամշակման են յենթարկված առանձին տողերն ու հատվածները՝ լեզվի և վոճի միասնության հասնելու նպատակով։

Եպոսի պատմողները վաթսուն հինգ տարվա ընթացքում յեղել են առավելապես ավագ սերնդի ներկայացուցիչներ, թե՛ տղամարդ և թե՛ կին, հաճախ խորը ծերության հասած մարդիկ։

Եպոսը պատմվել է հայկական տարբեր բարբառներով ու յենթաբարբառներով, առավելապես Մոկսի, Մուշի, Սասունի, ինչպես և Արարատյան և այլ բարբառներով։

Եպոսը պատմվում է յերգաձայն, ռիթմիկ առոգանությամբ, իսկ առանձին դրվագները յերգվում են, և յերգի պես հնչող այդ հատվածները տաղաչափական հանգավոր ձև են պահպանում։ Ցերբեմն միմյանցից սաստիկ տարբերվող բարբառներից յուրաքանչյուրի բնորոշ առանձնահատկությունները առանձնապես ցայտուն են դրսեորվում եպոսի այն մասերում, վորոնք յերգի ձևով չեն տրված, վորովհետև յերգը, մելոդիայով, չափով ու հանգով կապված լինելով, առհասարակ և միշտ ավելի լավ է պահպանում բովանդակության հաղորդման յեթե վոչ շատ հին, ապա ամենից ավելի հին ձևերը։

Բարբառների և յենթաբարբառների, նրանց բառակազմի և քերականության մեջ յեղած այդ բոլոր տարբերությունները մեծ դժվարություններ եյին ներկայացնում տեքստի համահավաք խմբագրությունը կազմելիս, բայց թարգմանության վրա անդրադառնալ, իհարկե, չեյին կարող։

Բավական դժվարին խնդիր եր հանդիսանում հենց հայկական տեքստի— վոչ միայն համահավաք խմբագրության, այլև հայկական խմբագրության լեզվի սահմանումը, վորովհետև տարբեր բարբառների հաղորդմամբ մեզ հասած բազմազան վարիանտները տեքստի մեջ մտցնելիս բարձրանում եր լեզվի նորմաները սահմանելու, թեկուզ և ժամանակակից կենդանի դրական հայերենին յուրահատուկ այս կամ այն կանոնները կիրառելու հարցը։ Հարկավոր եր հրաժարվել կամ պոեմի ռիթմը պահպանելուց, կամ էլ այն լեզվով թարգմանելու խնդրից, վորի դրողներն են հանդիսանում մեծ մասամբ Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության քաղաքացիները։ Ցերբեմն այնտեղ, ուր ժողովրդական յենթաբարբառները բնագրում դործ են ածում մի վորևե կարճ բառ, ժամանակակից դրական հայերենի փոխադրելիս հարկ եր լինում դնել յերկու-յերեք բառ, իսկ այդ խոսքի ռիթմին սաղել չե կարող։ Այս խնդիրը, ըստ յերևույթին, բրիդադան հաջողությամբ է լուծել, այն է՝ պահպանելով այդ յենթաբարբառների առանձնահատկությունները, բայց միևնույն ժամանակ հնարավորության չափով մոտենալով այն բարբառին, վորը դրված է ժամանակակից կենդանի հայերեն լեզվի հիմքում։ Հիմնականում չեն փոխված բնագրի քերականական առանձնահատկություններն ու նախադասությունների կազմությունը, այլ փոխված է դլխավորապես բառերի ֆոնետիկան, այն մոտեցնելով արարատյան առոգանությանը։

Հայկական ժողովրդական ավանդության մեջ, պատմողների բերանում, եպոսը կրում է մի քանի անուն, վորոնք ընդգծում են նրա միասնությունն ու ամբողջականությունը, բայց նշանակալի դժվարություն են ներկայացնում սպառիչ հստակությամբ վորևե լեզվով թարգմանելու համար։

Այն կոչում են «Սասնա ծռեր», այսինքն՝ «Սասնա կատաղիներ», «կատաղի սասունցիներ», բայց «ծռում» բառը հայերենում ունի մի քանի նշա-

նակություն — զիվահար, խելագար, խենթավուն, խելառ կորիճ, և այդ բոլոր նշանակություններն եպոսի հերոսների կյանքի առանձին մոմենտներում նրանց վերաբերմամբ կիրառելի չեն, ճիշտ է՝ վոչ պարսավական իմաստով։

Եպոսում հանդես են գալիս նաև քաջերը, քաջերի թագավորը, «Քաջանց տունը», այսինքն՝ հնում կիսաստվածային եյակներ հանդիսացող այն վոգիները, վորոնց անվան մենք հանդիպում ենք նաև կովկասի մյուս ժողովուրդների մոտ այդ բառի նշանակության տարբեր նրբերանդներով—բարի վոգիներ, չար վոգիներ, արդեն մարդկայնացած կախարդներ, վհուկներ, դեմոնական ուժով ոժտված կիսամարդկային արարածներ։ Կանացի ցեղով՝ այդ քաջերի տոհմից են սերվում եպոսի հերոսների յերեք կրտսեր սերունդները։

Պատմողները, վորոնք վոչ միշտ են եպոսը հաղորդում ամբողջությամբ, հաճախ պատմում են նրա բաժիններից մեկը կամ յերկուսը, եպոսի միասնությունն ընդգծելով այն ողորմիներով, վորոնք փառաբանում են մնացած բոլոր հերոսներին։ Բայց պատմվող մասի անունը տրվում է այն հերոսի համեմատ, վորի շուրջը կազմավորվում է եպոսի տվյալ բաժինը, պատմողների սերմինոլոգիայով՝ տվյալ «ճյուղը»։

Համահավաք խմբագրության մեջ վորոշված է ամբողջ եպոսը վերնագրել հերոսներից մեկի անունով, վորն անվիճելիորեն ամենից ավելի ցայտունն է և ամենից ավելի գործունը։

Այս պատումներից հիմնականն է հանդիսանում յերրորդ «ճյուղը», այն անմիջապես կապված է այս ամբողջ եպիկական շրջանի գլխավոր հերոսի—հերոսների չորս սերունդների շարքում ըստ ավագության յերրորդը հանդիսացող Դավթի հետ, վորն ամենից ավելի մոտիկ է ժողովրդական հիշողությանը, ամենից ավելի յե զուրգուրվում նրա կողմից, ամենից ավելի յերկրային է և ամենից ավելի ժողովրդական։

Այս ամբողջ մեծ եպոսում հերոսները չորս հոգի յեն։ Նրանցից առաջինը՝ Սանասարը, վորին նրա յերկվորյակ բաղդասարի հետ միասին հրաշքի միջոցով ծնել է մի կույս, հղիանալով ծովի խորքից դուրս յեկած ժայռից հանկարծ բղխող աղբյուրի ջրի մի ումպով, վոչ միայն իր ծննդյան հրաշքայնությամբ, այլև իր արարքներով հարյուրավոր թելերով կապված է հնադույն միֆերի հետ, իր մեջ մարմնավորում է կոսմիկական եյակի չատ գծեր,— եյակ, վորը մարդկային պատկերի մեջ կրում է բնության ուժերի նշաններ, կապեր նրա կենդանարար, արդասավորող տարերքի՝ ջրի հետ։ Ջրից ծնված այս տիտանը ջրից է ստացել իր անխորտակելի զենքն ու զրահը և ամենակործան սուրը, ջրից է ստացել իր հասակը, ամրությունն ու անչափ ուժը։ Ջրից է ստացել նաև իր հրեղեն ձին՝ Քուռկիկ Ջալալին, վորն ոժտված է կանխատեսության և մարդկային խոսակցության ձիրքով, ընդունակ է հողմից արագ սլանալ, ծովի խորքերից վոստնելով դեպի կիզիչ արևը թռչել, անքակտելի հավատարմությամբ է կապված և՛ իր առաջին տիրոջ՝ Սանասարի, և՛ նրա վորդի Մեծ Մհերի, և՛ նրա թոռ Դավթի, և՛ նրա թոռնորդու՝ Փոքր Մհերի հետ։

Մեծ Մհերը, Սանասարի և քաջանց թագավորի դստեր՝ դեղանի վհուկի ամուսնությունից ծնված, հորից ժառանգեց վոչ միայն հրաշալի զենքն ու զրահը և իմաստուն ձին, այլև կենդանարար ջրի՝ կաթնաղբյուրի հրաշալի ակունքից դեմոնական ուժ քաղելու ընդունակությունը։ Իր ուժով անխորտակելի, բայց յերկիր իջնելուն համեմատ՝ մարդկային միջավայ-

բում մարդկային թուլություններ ստացած, նա լեցուն է այն կրակով, ի սեր վորի Պրոմեթեոսը, մարդասիրությունից դրդված, խախտեց աստվածների կամքը, լեցուն է այն մարդասիրությամբ, վորը մեծ Հերակլեսին կիսաստվածից դարձրեց մարդկային ցեղի հավատարիմ սպասավոր, վորն իր սխրագործությունները կատարում էր վոչ թե հանուն փառքի, այլ հանուն մարդկային բարիքի։ Իր դերբնական էության շնորհիվ դուլալ աղբյուրի թոռ Մհերն առաջին իսկ որերից մեծանում է վոչ թե տարով, այլ ժամով։ Մանկական հոգով ու միամտությամբ այս հսկան պատրաստ է իր բոլոր ուժերը տալու մարդու բարիքի համար։ Լսելով, վոր սով է սկսվել յերկրում, վորովհետև հրեչային մի առյուծ ինչ-վոր տեղ պառկել ու փակել է այն ճանապարհը, վորով բերում են ժողովրդին սնող հացը, նա պլանում է թշնամու վրա, ուժգնությամբ մեկդի վանում ահռելի գազանի դեմ կռվի յելած ամբողջ զորքին և մեն-մենակ, իր հուժկու բազուկներով պատառոտում առյուծին։ Լսելով, վոր հարևան յերկրի տիրակալ դևը փակել է աղբյուրի ճանապարհը, նա կռվի յե բռնվում նրա հետ և սպանելով նրան, իրեն կնության է վերցնում դևի դերության մեջ տանջվող դեղանի արքայադուստր Արմաղանին։ Կռվում համոզելով արաբների տիրակալ Մրսրա-Մելիքին իր արիության ու անխորտակելի ուժի մեջ, չնախատեսելով գալիք փորձանքները, յեղբայրակցում, ախպերանում է թշնամու հետ, մի բան, վոր մարդկանց ավելի ամուր կապերով է կապում, քան արենակցական յեղբայրության կապերը։ Մհերը ձգտում է հավատարիմ լինել իր պարտականություններին, ուզում է հավատարիմ լինել նաև իր դեղանի կնոջը՝ Արմաղանին, բայց բոպեական թուլությունը— յեղբայրակցի նենգ այրի Իսմիլ-խաթունի ձեռքից գինի խմելուն համաձայնելը— խորտակում է նրա կամքը· հարբած վիճակում պարպելով մոռացության այդ բաժակը, նա կորցնում է հստակ դատողությունը և կատարում Իսմիլ-խաթունի կամքը, բաժանելով նրա մահիճը և նրան տալով մի վորդի— Փոքր Մսրա-Մելիքը, վորն իր յերակներում կրում է իր հսկա հոր արյունն ու ուժը, իսկ սրտում՝ բոլոր մարդկանց ու բոլոր ժողովուրդների վրա տիրելու ծարավը, վորը նրան ներշնչել է մայրը, թագուհի Իսմիլ-խաթունը։

Ծնունդ տալով այդ վորդուն, Մհերն Իսմիլ-խաթունի հոգում ծնեցնում է նաև այն հույսը, թե «այժմ կչողա Մսրա աստղը և կմթնի Սասնա աստղը»։ Բայց մոր կողմից վորդուն տրված այդ խրատները հրաշագործ հակաթույնի պես Մհերին բուժում են թմրությունից, և նա Մսրից հայրենի Սասունն է պլանում իր հոր հրեղեն ձին նստած։

Մհերը վերադառնում է իր սիրեցյալ կնոջ մոտ և ձգտելով ճրագ վառել Սասունում, վորպեսզի նրա փայլը հայրենի Սասունը պաշտպանի այն փորձանքներից, վոր հայերի դլխին պիտի բերեր Մսրա-Մելիքը, գրժում է իր սիրեցյալ կնոջ արած ուխտը, նրան համոզում է դրժել սոսկալի ուխտը վոչ թե հանուն ծառայական յեպիսկոպոսների և վանականների դատած թողության ֆորմուլայի, այլ հանուն այն բանի, վոր նոր կյանք ծնվի։

Թե՛ Մհերը և թե՛ Արմաղանը, վոչ թե ի սեր ցանկասիրության, այլ ի սեր նոր կյանքի դրժելով յերդումը, վորի թողության համար վոչ վոք ուժ չունի, մեռնում են, հենց վոր վորդի ունենալու յերազը կատարվում է։ Ծնվեց Դավիթը, և դերեղման իջավ Արմաղանը, դերեղման իջավ Մհերը։

Դավիթը մնաց մեծ հորեղբայրների ձեռքին։ Նրանցից մեկը, Զենով-Հովանը, հորից ժառանգել էր դերբնական ուժի մի դիծ միայն— ձայնը,

վոր կարող եր կտրել-անցնել դաշտերի տարածությունը և արձաղանգ տալ լեռնաշղթաներից դենը, այնպիսի կարողությամբ լցված թոքեր, վոր յերբ հարկ եր լինում կանչ արձակել, Զենով-Հովանին պետք է փաթաթելին յոթը դոմբի կաշի և շղթաներով կապելին, վոր չը տրաքեր։

Մյուս հորեղբայրը՝ Ցոան-Վերդոն դերձ և սիսան Սանասարից սերված լինելու նշաններից, Սեծ Մհերի արյունակից յեղբայրը լինելու նշաններից։ Նա մարդկային թուլության մարմնացումն է. ամեն ինչի դրդող մարդկային ստորադույն թուլության մարմնացումը։ Նա վախկոտ է, ստոր, դերձ չե խոցելու ցանկությունից, յեթե այդ կարող է անպատիժ անցնել, և նրա անունը— «Ցոան Վերդոն»— դալիս է ասելու, վոր նա արտասովոր ընդունակություն ունի չորջ բոլորը կեղտաելու առաջին իսկ վախից, իսկ վախենում է նա միշտ և ամեն ինչից։

Մանուկ Դավիթն ուրիշի կուրծք չի վերցնում, բայց այն հույսն է արձարձվում, թե նրան սովամահությունից ազատել կարող է նա, ով Մսըրում, թեկուզ խարեությամբ, բայց բաժանել է նրա հոր մահիճը։ Գայի հրեղեն ձին, հասկանալով Զենով-Հովանի՝ իրեն ուղղած խոսքերը, բարուրած Դավթին հողմի պես թռցնում է Իսմել-խաթունի մոտ, և Դավիթը ճաշակում է Մսրա-Մելիքի մոր կաթը։ Այնուհետև հայրենի Սասունի մեղր ու կարագով սնվելով, Դավիթն իր հոր՝ Մհերի պես արագ մեծանում է։ Վոչ թե տարով, այլ ժամով է մեծանում նա, բայց մանկական անարատ հոգու մաքրությունը նրա մեջ պահպանվում է յերկար, մինչև այն ժամանակ, յերբ պատանի հերոսը, վոր դեռ հսկա չի դարձել, բայց և այնպես ոժտված է վոչ-մարդկային ուժով և ժողովրդի նկատմամբ այն ամրողջ անձնուրաց սիրով, վորով լեցուն եր նրա հայրը, առաջին անդամ լինելով լարում է իր ուժերը, վորպիսդի հաղարի դեմ ինքը մենակ վոնդի Մսրա-Մելիքի ուղարկած յոնացոդներին— հարկահաններին։ Միայն մի քանիսին է խաղաղ արձակում, վոր Մսրա-Մելիքին լուր տվող լինի Մսրա լծի տակ հյուծվող Սասունի վրա հարձակում գործած ջոկատի ջարդվելու մասին։

Մսրա-Մելիքի մեջ վաղուց, Դավթի կյանքի առաջին տարվանից, զայրույթ եր կուտակվել նրա դեմ. նա զգում եր, վոր Դավթի շնորհիվ կլոզա Սասնա աստղը և կմթնի Մսրա աստղը. իսկ Սասուն ուղարկված զորքի ջարդը, վոր Դավիթն եր գործել, և Մսրը վերադարձած ու Դավթի ձեռքով ապլանդակված զորապետի՝ Կոզրադինի վոզորմելի տեսքը լցնում են Մսրա-Մելիքի զայրույթի բաժակը։ Մսրա-Մելիքը կոիվ է գնում Սասունի վրա։

Իր իշխանության յենթակա բոլոր յերկրներից բարձրաղոչ կանչով և սեփական արյամբ գրած հրովարտակով Մսրա-Մելիքը զորք է կանչում և գնում Սասունի վրա, նրա հետ մեկտեղ՝ Մսրա զորքերը, նրա հետ մեկտեղ՝ իր իշխանությանը յենթակա յոթը թալավորի զորքերը։ Ռազմիկները կուտակվում են ամպերի պես և այնքան շատ են, վոր մեկական ումպ ջուր խմելով՝ իրենց ճանապարհին ցամաքեցնում են գետերը։ Մի բուռ Սասունցիների գործը չե այդ ահեղ զորքին հաղթահարելը, բայց, ձեռք բերելով հոր գենքն ու զրահը և հրեղեն ձին՝ Ջալալին, Դավիթը, ջուր խմելով կաթնաղբյուրից, հասակով ու ուժով հորը նմանվելով, իր բացականչությամբ վոտքի հանելով արարների քուն մտած բանակը, թրով ջարդուկոտոր է անում արթնացածներին, հրեղեն ձիու սմբակների տակ տրորում նրանց։ Ճակատամարտի ցասումը չի խլացնում այս իրոք ժողովրդական հերոսի լռությունը և, անսալով արաբ ծերունու իմաստուն խոսքերին, թե հարյավոր է թաղավորների հետ կռվել և թաղավորներին ջարդել, և վոչ թե

նրանց, ովքեր հարկադրաբար են Սասուն յկկել, վորովհետև պատերազմը ժողովրդին հարկավոր չէ, թալավորներին և հարկավոր,— Դավիթը սլանում է դեպի Մսրա-Մելիքի վրանը։ Մենամարտի ընթացքում վանմաղուն ազնվություն, ուղղամտություն և մեծահոգություն ցուցաբերելով մինչև անպամ վոխերիմ թշնամու նկատմամբ, նա սպանում է Մսրա-Մելիքին ու վերջ տալով բոլոր նրանց, ում պատերազմ է հարկավոր, անվնաս արձակում է Սասունը պաշարած անթիվ զորքին։

Սասունն ազատ է, Դավիթն այժմ կարող է ականջ դնել հեռավոր արքայազատեր՝ Խանդութ-խանումի զիղնցկությունը գովարանող գուսանների յերգերին, կարող է սլանալ նրա մոտ, նրան սքանչացնել իր արիությամբ և զեղեցկությամբ։

Դավթի և Խանդութ-խանումի վորդին, Փոքր Մհերը, ծննդյան որից մինչև յոթը տարեկան դառնալը չլսեսավ հեռավոր յերկրներ գնացած հորը, իսկ յերբ յոթնամյա մի դյուցազն եր, պատահաբար նրան հանդիպելով կռվի յե բռնվում, և միայն թևին կապած բաղրսնդն է ազատում նրան մահից, իսկ Դավթին՝ վորդեսպանությունից։ Դավիթն իր կյանքի վերջն է գտնում Նենդ Զմշկիկ-Սուլթանից ունեցած սեփական փոքր աղջկա ձեռքից։

Դավթի վորդի Փոքր Մհերը լցված է ժողովրդի կուտակած փորձով, ծանր փորձությունների փորձով, լցված է այն համոզմունքով, վոր անարդարությունն է ծանրացել աշխարհի վրա, լցված է մարդու ծանր, անանելի ճակատագրի դեմ ուղղված բողոքով։ Նա պատրաստ է մարտի կոչել յերկնային հրեշտակին, վորպեսզի սրի հարվածով, սրի դատաստանով վերջ տա աշխարհը լցված անարդարությանը, ժողովրդին բաժին ընկած ճնշմանն ու սովին։ Բայց նախքան մարտը, բախտը դատավոր հրավիրելով, նա ստուգում է իր իրավացիությունը, ինքը նշելով իր իրավացիության և աշխարհը կառավարող ուժերի իրավացիության չափանիշները։ Նա սուրը բարձրացնում է մի հուժկու սև ապառաժի վրա— թե չճեղքվեց՝ ինքն իրավացի չէ, ճեղքվեց՝ ուրեմն ինքն այլևս տեղ չունի յերկրիս յերեսին մինչև այն ժամանակ, յերբ հին աշխարհը կը քանդվի և կը ստեղծվի նոր աշխարհ, արդարության աշխարհ, մի աշխարհ, ուր «ցորենի հատիկն անտառի ընկույզի չափ կը լինի, դարու հատիկը՝ մասուրի չափ»։

Սև ապառաժը ճեղքվեց պատենական հզոր սրի հարվածից, և եպոսի հերոսներից վերջինը՝ Փոքր Մհերը՝ պապի ձին հեծած և պապի զենքն ու զրահը հագած փակվում է ժայռում, վորպեսզի մնա նրա ընդերքում, մինչև վոր կը հասնի աշխարհի վերակառուցման ժամանակը։ Ցերբեմն միայն մի քանի ակնթարթ նա լույս աշխարհ է այցելում, վորպեսզի իմանա՝ հասե՞լ է ժամը, թե վոչ։

***

Եպոսի հերոսները, ինչքան էլ նրանք իրենց ծագումով, իրենց գերմարդկային ուժով, իրենց հատկություններով ու արարքներով կապված լինեն բնության և նրա ուժերի հետ, այն ուժերի հետ, վոր հնագույն մարդն զգում եր անչափ ավելի մեծ սրությամբ, քան այն մարդը, վորը սովորեց իրեն յենթարկել այդ ուժերի թեկուզ մի մասը,— խորապես մարդկայնական են։ Նրանք կենդանի մարդիկ են, վոր ոժտված են արիությամբ և բարձր հատկություններով, բայց իրենց մեջ կրում են նաև մարդկային թուլություններ. և նրանց վոչ միայն սխրագործությունները, այլև զգաց-

մունքները ցայտուն արտահայտություն են գտել նրանց յերկրավոր կյանքի վերաբերյալ պատմությունների մեջ։

Եպոսի հիմնական թելի զարդացումը բնության այն ուժերի՝ իսկական մարդու վերամարմնավորվելու ընթացքն է, վորոնք մարդկային մտածողության կազմավորման արշալույսին սկսեցին ընդունել զաղանային կամ մարդկայնացված ձևեր։ Հերոսների յուրաքանչյուր հաջորդ սերունդն ավելի ու ավելի յե մոտենում յերկրին, ավելի ու ավելի յե մոտենում յերկրավոր մարդու կերպարանքին։

Նրանք կատարում են իրենց սխրագործությունները, վորովհետև այդ պահանջում է ժողովրդի բարիքը և վորովհետև նրանք իրենց մեջ այդ կատարելու ուժ են զգում. այդ սխրագործությունները նրանց վոչ մի առավելություն չեն տալիս. ժողովրդի հետ իրենց սերտ կապը չեն կորցնում փառք վաստակած հերոսները. չեն կորցնում նաև, նույնիսկ հասակն առնելուց հետո, իրենց մանկական հոգու մաքրությունը, պարզասրտությունը, ողնության յուրաքանչյուր կոչին տնմիջապես արձագանգելու ընդունակությունը։

Ցերիտասարդ հսկա Մհերը, վոր կարողանում է իր ֆիզիկական ուժով արմատախիլ անել ծառերը և թեթև դավազանի պես ուսին գրած տանել, կարողանում է այդ մահակի հուժկու թափահարումներով սրբել թշնամիների խաժամուժը, իր մանկական բանականությամբ գեռ չեր հասել ձի նստելու հնարավորության մտքին, իսկ յերբ առիթ և լինում ձի ջոկելու, ձեռքի ափի ծանր հարվածներով գետնին է սղմում լավագույն մարտական ձիերին։

Արդեն այնքան ուժ կուտակած լինելով, վոր կարողանում է թռչելիք բռնել պատանի հսկայի արձակած հրեշային ջրինդը, մանուկ Դավիթը գեռևս յերեխայի պես անմիտ է և չի կարողանում ածուխի կրակը տարբերել արևի պես շողացող վոսկուց, ընդունակ է պատի ճեղքից ներս ընկած արևի շողքը կենդանի արտրածի տեղ դնել և այդ թշնամու հետ մենամարտության բռնվել։

Դառնալով զառնարած, ուլ ու գառը սարերը քշելով, Դավիթը միամտությամբ, վորպիսին արդարացվում է այն բանով, վոր նոր եր թևակոխել յոթներորդ տարին, արդեն այնքան ամրակազմ է, վոր կարողանում է, առանց իրարից տարբերելու ուլերը, նապաստակները, աղվեսները և կզաքիսները, շրջակա լեռներից հավաքել և նրանց իրար խառնած քշել կեսորվա փարախ հանդիսացող քարանձավը, ապա և բերել քաղաք։ Իսկ մի որ հետո, խոշոր յեղջյուրավոր անասունների խնամքը վերցնելով իր վրա, այդ յերեխան. վորը գեռևս չեր կարողանում կովն արջից և յեղն առյուծից տարբերել, ուժ և համարձակություն և ունենում իր հոտի հետ քշել-բերել ժայռերից ու կիրճերից, դաշտերից ու անտառներից հավաքած վայրենի զաղանները, սարքափի մատնելով քաղաքացիներին։

Գեռևս յերեխա ժամանակ իր զարմանալի զգեցկությամբ դայթակղեցնելով հորեղբոր վավաշոտ կնոջը՝ Սառային, Դավիթն իր կյանքում յերկու անգամ, նույնիսկ հարբած վիճակում, կարողանում է պահպանել իր մաքրությունը և ուրիշի կնոջ՝ նրա համար սրբազան՝ անձեռնմխելիությունը, դրանով առաջացնելով իր նկատմամբ այդ ֆեդրայի առելությունն ու վրեժը, վորը ձգտում է զրպարտել ու վտարել տալ Դավթին։

Մեծահոգություն— ահա այն գիծը, վորի կրողն է հանդիսանում Դավիթը։ Նրա ի՞նչ հոգն է, վոր թշնամին, մահացու թշնամին, արդեն ոգ-

տագործել է զուրզի յերեք հարվածներ. քանի վոր իրեն ծիծ տվողը խընդրում է—նա նրան չնորհում է Թշնամուն հասցվելիք առաջին հարվածը և իջեցնում է բարձրացրած սուրը. չնորհում է յերկրորդ հարվածը, վորովհետև այդ խնդրում է Թշնամու քույրը, վորը մի ժամանակ իր ծնկների վրա յե պահել նրան։ Յերրորդ հարվածը նա պատրաստ է հասցնելու և հասցնում է ջախջախիչ կերպով, Թեև դիտե, վոր նենգ Թշնամին փոխանակ համաձակորեն չարունակելու մենամարտը, Թաղնվել է ջրհորի խորքում, քառասուն գոմշի կաշու և քառասուն ջաղացքարի տակ։ Բայց այդ մեծահոգությունն ունի անխորտակ ժայռի նման ամուր մի հիմք— հաղթանակի վրա հավատությունը, իսկ այդ վստահությունը ոգեշնչում է իր գործի, հայրենիքի ու հարազատ ժողովուրդը Թշնամիներից պաշտպանելու գործի արդարության անսասան գիտակցությունից։

Դավիթի համար հատկանշական է նաև մեկ ուրիշ բան. մինչև անգամ վոխերիմ Թշնամիների նկատմամբ, յերբ մտքում դրել է անխնա բնաջնջման յենթարկել նրանց, նա չի ձգտում ավելի նպաստավոր դրության մեջ դնել իրեն՝ հանկարծակի հարձակվելով չը նախապատրաստված Թշնամու վրա։ Յերկու անգամ նա հարձակում է գործում Թշնամու գորքի վրա։ Մեկ անգամ, յերբ նրան ճակատամարտ է սպասում Մսրա-Մելիքի զորքի դեմ, վորի անթիվ քանակը Նուշնիկ նրան սոսկում և ազդում, և յերկրորդ անգամ, յերբ պատրաստվում է հարձակվել Գապր Ֆրենկի— այդ յուրահատուկ, եպոսում անձամբ հանդես չ'եկող, բայց նշանակալից դեմքի— գորքի վրա։ Յեվ յերկու անգամն ել, չնայած իր ամբողջ վրդովմունքին, վոր այնպես կենդանի գույներով տալիս է պատմողը, նա չի մոռանում դադարեցնել իր ձիու վազքը և Թշնամու բանակի ամբողջ տարածության վրա դղրդացող բարձր ձայնով կանչ արձակել, վոր Թշնամին արթնանա, զինվի, ձի հեծնի և պատրաստ լինի կռվի։ Սա այն մարտակոչը չե, վորով Թշնամիներն աշխատում են իրար գրգռել Իլիոնի պատերի տակ և բարձր պարիսպների վրա,— սա այն փոխադարձ հայհոյանքը չե, վորով զվարճանում է իրեն Սանասարը դյուցազուններին դեմ կռվելուց առաջ, սա այն ծաղրանքը չե Թշնամու հասցեին, վորը հաճախ ձեռնամարտի բանավոր նախադուռն եր հանդիսանում և վորին մենք հանդիպում ենք ճակատամարտերի տասնյակ բանաստեղծական ու գործնական նկարագրությունների մեջ զանազան ժողովուրդների, այդ Թվում նաև հայերի մոտ,— սա պարզապես մի սեղմ, հստակ ու անծաղր մարտակոչ է։ Նրա համա՞ր է արդյոք դա այդքան սեղմ, հստակ, իր ուժգնությամբ հանդարտ և չիտակ, վոր Դավիթի եպոսում չի նկարագրվում սրի ասպետների համար սովորական տասնյակ մարտերից մեկը, այնտեղ նկարագրվում է վոչ Թե սրի, այլ հովվական ցուպի ու մաճի ազնիվ և ուղղամիտ, բայց նախատական պարագաների չը սովորած ասպետի մարտը։ Նա կարիք չուներ ծաղրելու Թշնամուն, վորովհետև նրան հրապուրում եր վոչ Թե մարտի պրոցեսը, վոչ Թե հաղթանակն ի սեր փառքի, այլ հաղթանակն ի սեր հայրենիքի լարիքի. նա կարիք չուներ բորբոքելու իրեն, վորովհետև ամբողջապես այրվում եր հափշտակիչների հանդեպ տածած ատելությամբ և կամենում եր վոչ Թե փառքի տիրանալ, այլ հաղթել, վոնդել, բնաջնջել։

Դավիթը տաքարյուն է, մարտում անզուսպ, ամբողջությամբ կրքի մարմնացում, ինչ ել վոր անելիս լինի. բայց մոլեգնության ամենաուռն նոպայում անգամ նա ընդունակ է հանկարծ մեղմանալ և հյուհնազանդություն ցուցաբերել, յեթե նրա մոլեգնությանը հակադրվում և քնքշու-

թյուն, վաղաքչական մի խոսք։ Ինչպե՞ս է կերպարանափոխվում Դավիթը՝ հրաժեշտ տալով Զենով-Հովանին, որն իր կամքով վոչինչ չեր արել յեղրոր վորդուն կովի հանդերձելու համար և վողորում եր Մհերի դենքն ու դրահը, վորոնք կարող եյին լոկ բախտակից դառնալ Մհերի վորդուն և վոչընչանալ լոկ նրա հետ միասին։

Ընդունակ լինելով՝ մոլեգնության հասնել, ձեռք բարձրացնել զառամած հորեղբոր վրա իր նկատմամբ խոսքով անուշադրություն ցուցաբերելու համար, Դավիթը հանդիստ ու առանց զայրույթի յե ընդունում անձամբ իրեն սպառնացող դավաճանությունը։ Համառության կիսահարբած խոյանքով խնջույքի սեղանից պոկելով սփռոցը, նա տեսնում է Խանդութ-խանումի ձեռքը խնդրող յերեսուն ինն դյուցազունների յերեսուն ինն սրերը սեղանի տակ թաղցրած։ Հասկանալով նրանց նենգ դիտավորությունը,— այդ չրհասկանալ նա չեր կարող,— նա ջարդում է սրերը և տալիս Ծառային՝ Ծաղրաբար հրամայելով պահել դրանք Քուռկիկ-Ջալալիի պայտերի մեխ դարձնելու համար. իսկ հետո նրան մտահոգում է Խանդութ-խանումից մերժում ստացածների համար արժանավայել հարսնացուներ գտնելու միտքը, և ինքն անձամբ, վորպես իրեն մահ պատրաստող նախկին ախոյանների հարսնախոս, գնում է դեղեցկուհիների յերկիրը— Գյուրջիստան։

Այս եպոսը ժողովրդական է, ժողովրդական վոչ միայն նրա համար, վոր ապրում է ժողովրդական գանձվածների մեջ և պատմվում նրանց բերանով, վոչ միայն նրա համար, վոր մինչև վերջին ժամանակներս, մինչև մեր որերը, ապրում է ժողովրդի բանավոր պատմության մեջ, վոչ միայն նրա համար, վոր նրա լեգուն բոլոր վարիանտներում ժողովրդական լեգու յե, հին կամ նոր հայերեն գրական լեզվի կազմությանն ու բառապաշարին ոտար։ Եպոսը ժողովրդական է նախ և առաջ նրա համար, վոր նրա հերոսների ամբողջ աշխարհայեցողությունն անխզելիորեն կապված է բուն ժողովրդական ներբնախավերի հետ, վոր նրա բոլոր հերոսներն անխզելիորեն կապված են ժողովրդի հետ, և վոչ թե նրանց հետ, ովքեր հազարամյակներ շարունակ իրենց ձեռքումն եյին պահում հայ ժողովրդի բախտը։

Զնայած իրենց արիության, իրենց ուժին, իրենց սխրագործություններին, վորոնք շարունակ կատարվում են ժողովրդի բարիքի համար, ավելի ճիշտ՝ հենց այդ հատկությունների շնորհիվ, հերոսներից վոչ մեկն ամենափոքր չափով անդամ իր հնարավորություններից վոչինչ չի թողում իրեն համար, շրջապատող միջավայրում ինչ-վոր հատուկ իրավունքներ ձեռք բերելու համար, իշխանության նշույլ անդամ դրավելու համար, ըստ իր կամքի տնորինելու համար այն հողը, վոր նրանք պատրաստ են վոռոգել իրենց արյունով, տիրելու համար այն ջրին, վորն այդ բոլոր հերոսների ուժի աղբյուրն ու ամբողջ ժողովրդի հիմնական կենսապայմանն է հանդիսանում և վորը նրանք ազատում են դևերից, վորպեսզի կենդանարար հեղուկը տան ժողովրդին։ Վոչ մի տիտղոս և վոչ մի պատվո կոչում ժողովրդի հիշողության մեջ չի բարդացրել այս չորս հերոսների անունները։ Իսկ մյուս բոլորը, բոլոր նրանք, ում հետ չփվում են նրանք, հենց իրենց անունների մեջ պահպանում են ժողովրդականության գծեր, վորովհետև նրանց անունները խորթ են իշխանական միջավայրին, իսկ մականունները լեցուն են այն արտահայտչությամբ, հաճախ այն յումորով, վոր-

պիսին հատկանշական է ժողովրդական ներքնախավերի համար և անընդունելի՝ վերնախավերի համար։ Հերոսներն ամուսնանում են արքայադուստրերի հետ, բայց իրենց բախտը կապելով եպոսի հերոսների հետ, նրանց կյանքի մեջ մտնելով իրենց տիտղոսով, այդ բոլոր արքայադուստրերը կորցնում են իրենց ծագում տված թագավորական տան հետ ունեցած կապի ամեն տեսակ նշանները։

Մհերը, վոր ամբողջ Սասունի հույսն ու նեցուկն է հանդիսանում, վոչ իշխան է և վոչ էլ թագավոր, թեպետև իրեն թույլ է տալիս, մի գուցե հոր՝ Սանասարի հետ կապված լինելու հետևանքով, պարսպապատ գաղանանոց կառուցել։ Սասունցի Դավիթը և այս բոլոր հերոսները կյանքից հեռանում են իբրև նույնպիսի հասարակ դասի մարդիկ, ինչպիսիք են նրանց չրջապատողները։ Միայն թե նրանք լավագույն մարդիկ էին։

Եպոսում հիշատակված թե՛ թագավորները և թե՛ իշխանները հանդես են գալիս իբրև դժգույն ստվերներ։ Սանասարի վերաբերյալ առաջին պատումներում միայն մենք տեսնում ենք կենդանի և լիարյուն, բայց հեքիաթային Խալիֆային, վորին հակադրված է իր դեմքով նույնպես հեքիաթային Դագիկ թագավորը։ Իսկ մնացած բոլորը հիշատակվում են այն մարդկանց ցուցակում, վորոնց հետ չփվել են այս հերոսները, այն մարդկանց ցուցակում, վորոնցից կամեցել են խորհուրդ ստանալ այս կամ այն դեպքում, բայց դրանք այնպիսի մոմենտներ են, վորոնք որդանապես կապված չեն եպոսի վո՛չ նախորդ, վո՛չ էլ հաջորդ շարադրման հետ։ Դա շատ հատկանշական է «Սասունցի Դավթի» համար և վերջինիս շատ խստիվ տարբերում է մի ամբողջ շարք այլ եպիկական յերկերից, վորոնք մեզ են հասել թե՛ հայկական միջավայրում և թե՛ Արևելքի մյուս ժողովուրդների միջավայրում, և այդ ել ավելի յե մեզ համոզում, վոր «Սասունցի Դավիթը» ներքնախավերից յեկած իսկական ժողովրդական մի եպոս է։

Այն հանգամանքը, վոր հին հայկական պատմագիրների տեքստերում մենք չենք հանդիպում այս եպոսի վերաբերյալ հիշատակություններ, մեզ չի կարող հանգել տալ այն յեզրակացության, թե այս եպոսը դեռևս այն ժամանակ պատմվելիս չի յեղել ժողովրդական մասսաների մեջ։

Մինչդեռ այն բանի վերաբերյալ, ինչ պատմվել է, և պատմվել Մովսես Խորենացու ժամանակվանից շատ առաջ, այն որվանից շատ առաջ, յերբ առաջին անգամ ուրվագծվեց հայկական այրուբենի թեկուզ մի տառը,— այդ բանի վերաբերյալ շատ տվյալներ կան բուն եպոսում։

Անտարակուսելի յե Դավթի և արարական գորքի կռվի վերաբերյալ, հայրենի յերկրից ոտարերկրացի հրոսակների վտարման վերաբերյալ պատումի պատմական հիմքը, այդ պատումի զուգադրումը ժամանակակից պատմաբան Թովմա Արծրունու (X դար) այն խոսքերի հետ, թե ինչպես Խութի բնակիչները— սասունցիները, իմնելով իրենց անմատչելի լեռներից, բնաջնջեցին և վոնդեցին արաբական ջոկատը։ Պատմական Հայաստանի գործիչների անունների հետ համընկնող մի շարք անունների առկայությունն եպոսի զանազան վարիանտներում՝ մի քանի ուսումնասիրողների հանգել տվեց այն մտքին, թե հնարավոր է բացահայտել եպոսի և նրա առանձին մասնամասնությունների բովանդակությունը, վորպես Հայաստանի քաղաքական պատմության գեղարվեստական չարադրումն փորձ-ինչ պաճուճված ձևով։

Ցեռանդուն փորձեր տրվեցին Հայաստանի այն իշխաններին և թագավորներին, վորոնք կրում են եպոսում յեղած անունները կամ նման են նրանց, դնել եպոսի գործող անձերի տեղը։

Բայց, վոր դյխավորն է, եպոսի «պատմական» մեկնաբանման այդ բոլոր փորձերն աչքաթող եյին անում եպոսի իսկական պատմական արժեքը, վորպես վոչ թե քաղաքացիական, վոչ թե քաղաքական, այլ կուլտուրական պատմության մի փաստաթղթի, այնպիսի մի փաստաթղթի, վորի մեջ արտահայտվել է հայերի աշխարհայեցողության մշակման պրոցեսն այն անհունորեն հեռավոր ժամանակներում, յերբ մարդը, պայքարելով իր գոյության համար, առաջին անգամ սկսեց փորձեր անել իմաստավորելու իրեն չրջապատող բնությունը, պրիմիտիվ ձևով սահմանելու բնության յերևույթների փոխադարձ կապը։ Այդ փորձերի ժամանակ աչքաթող եյին անում այն բանը, թե եպոսում ի՛նչպիսի ցայտունությամբ է անդրադարձել Հայաստանի ազգաբնակության պայքարը հազարամյակների ընթացքում (ի՛նչպիսի անուններ ել կրելիս լինեյին այդ դարաշրջաններում հայերը և նրանց կառավարողները) հանուն իր կյանքի, հանուն այն բանի, վոր հնարավոր լինի ապահովել սնունդը, տարրական կենսապայմանները, լինի դա բերքը հավաքելու, թե վայրենի կենդանիներին ընտելացնելու ճանապարհով։ Այդ փորձերի ժամանակ մոռացության են տրված նաև եպոսի արժեքավորագույն վկայությունները կենցաղավարության մասին, թեկուզ և միայն Հայաստանի լեռնային շրջաններում, վորոնք եպոսի գոյացման կամ ձևավորման դարաշրջանում անգամ տակավին ամբողջապես մուտք չեյին գործել ֆեոդալական կյանքի հունը և պահել եյին կլանի տարրերը։ Այդ փորձերի ժամանակ մոռացության եր արված նաև ժողովրդի պայքարը ֆեոդալների և ֆեոդալական սոանձնաշնորհումների դեմ, վորպիսին իր անդրադարձումն է գտել եպոսում, թեկուզ և այն հրաչալի պատկերում, յերբ Դավիթը խորտակում է զազանանոցի պարիսպները, դրանով իսկ ժխտելով՝ հանուն իրը թե դաղանի հանդեպ տածած հարգանքի և իսկական վորսորդական արվեստի հանդեպ տածած հարգանքի՝ վորևե մեկի իրավունքները վորսի կենդանիների նկատմամբ և միայն տվյալ դեպքում արհամարհելով հոր նվիրական հիշատակը։ Չե՞ վոր դա— արդեյոցի վոչնչացումը— այնպիսի մի վոչնչացում է, վորի համար պայքարում եյին աշխատավոր, հող, ջուր ու վորսի կենդանիներ չունեցող խավերը վոչ միայն Հայաստանում։ Դավթի և Ռորին Հուդի մտքերի մերձակցությունը պատմական մի փաստաթուղթ է, նույնքան արժեքավոր, վորքան Հայաստանի պատմության մեջ իրոք քաջակորով ու պանծալի իշխան Թեոդորոս Ռշտունու անվան հիշատակությունն արդեն ոչ վոչ թե միֆական, այլ ֆանտաստիկական մի պատմվածքում։

Միակը պատմական անուններից, այսինքն՝ այն անձանց անուններից, վորոնք հայտնի են Հայաստանի այն դրավոր պատմության մեջ, վորն ըստ ժամանակի մոտենում է եպոսում պատմված իրադարձություններին, արաբական տիրապետության դեմ հայերի մղած վերջին պայքարին,— դա Գագիկ Արծրունի թագավորի անունն է, մի մարդու, վորը X դարում կառուցեց Վոստանը Վանա լճի հարավային ափում, հիմնեց մի չարք ամրոցներ, վերանորոգեց Աղթամար կղզու ամրությունը և այդ կղզում թողեց հայկական արվեստի ամենահիանալի կոթողներից մեկը— զարդարված հարստագույն բարձրաքանդակներով։ Բայց եպոսում ծերացած Գագիկն անց է կենում դժգույն ստվերի նման, նա հիշատակված է, բայց լոկ իբրև հայրը դեղանի արքայադուստր Ռոմինարի, վորը հենց իր անվան մեջ կրում է ջրային տարերքի— ծովի հետ կապված լինելու նշանը։

Հին պատմագիրների մոտ հիշատակություններ չրկան եպոսի վերաբերյալ, նրա այն մասերի վերաբերյալ, վորոնք ավելի ուշ, բայց պակաս

Ֆանտաստիկական բնույթ են կրում և ուր վորպես գլխավոր հերոսներ հանդես են գալիս ներքնախավերի մարդիկ։

Բայց եպոսի այն բաժինների վերաբերյալ, վորոնք դեռևս կրում են զուտ միֆական բնույթ, ակնարկներ կան հին գրողների մոտ։ Նրանց թվում՝ Հայաստանում տիրող խավերի այնպիսի ցայտուն մի ներկայացուցչի մոտ, ինչպիսին և Մովսես Խորենացին, վորը խնամքով պահպանել է Հայաստանի հնագույն կոսմիկական եպոսի շատ դրվագներ, սիրով հաղորդել է պատմվածքները հայ թագավորների և իշխանների պանծալի գործերի վերաբերյալ, Ասորեստանի մեծ թագավորների հետ նրանց ունեցած ազգակցական կապերի վերաբերյալ, բայց լռությամբ է անցել նրանց վրայով, ում այնքան սիրում, ոգնում էր Դավիթը։

Վո՛չ հոտաղները, վորոնց տոնական հյուրասիրության մասին իր ժամանակին մտածեց Դավիթը,— համեղ խորտիկները խլելով հարուստներից և հոգևորականներից,— վորոնց վասակն ապահովելու մասին մտածեց նույն Դավիթը, սպառնալով բոլոր նրանց, ում մտքով կ՝անցկենա կտրել հոտաղի վաստակից, վոչ էլ մաճկալները, վորոնց իր հզոր բազուկով և իր ձիու կարողությամբ ոգնության է գալիս Դավիթը, նրանց բազմորյա աշխատանքը կատարելով մի քանի ժամում,— չեն գրավել Հայաստանի պատմագիրների ուշադրությունը։

Բայց Թովմա Արծրունու տեքստում Սանասարի մասին յեղած հիշատակությունը չը պետք է բացատրել միայն այն բանով, վոր նա ձգտել է փառաբանել իր առասպելական նախահորը, չը պետք է լոկ Մովսես Խորենացու անհատական ձգտումներով բացատրել այն բանը, վոր նա «Հայոց պատմություն» անունով հայտնի իր բանաստեղծական պրոզայում, դովերգելով լոկ թագավորներին և հերոսներին, հիշատակում է Սանասարին և Բաղդասարին, ասես թե եպոսից վերցնելով նրանց։

Մովսեսի խոսքերը և Թովմայի խոսքերը վերաբերում են վոչ թե եպոսի հերոսներին, այլ կիսառասպելական կամ ամբողջապես առասպելական հնագույն իշխաններին, ասորեստանյան թագավորական տան շառավիղներին, և նրանց հիշատակությունը լոկ արտացոլումն է ասորեստանյան թագավորների իրոք պատմական արշավանքների՝ դեպի այն յերկիրը, վորը յերկու դար հետո ստացավ Հայաստան անունը, իսկ այդ արշավանքների ժամանակ կոչվում էր Ուրարտու։

Ահա այդ հնագույն թագավորների հետ է միահյուսվել այն կոսմիկական ուժերի վերաբերյալ պատկերացումը, վորոնք անտարակույս այդ միահյուսման նախորդող ժամանակաշրջանում կրել են Սիննահերիբի (Սենեքերիմի) ինչ-վոր ազգականների ասորեստանյան անուններ տեղական արտասանության այն կամ այն կերպ ներդաշնակող անուններ։

Այս միահյուսումը ծաղել և բարդացել է նույն մակարդակի վրա, վորի վրա ծաղել և բարդացել է յերկնային վորսորդ Վերեթրագնայի կերպարի միահյուսումն իրանական արքա Վարահրանի, Բահրամ Հուրի, հայ արքայորդի Վահագնի, վրացական արքա Վախթանգ Գորգասլանի հետ, բայց ավելի վաղ ժամանակաշրջանում։ Այն ժամանակաշրջանում, յերբ դեռևս կազմավորվում եյին, բայց տակավին վոչ այնքան խորացել ու ձևակերպվել եյին դասակարգային հակասություններն այն ցեղերի միջավայրում, վորոնք հետագայում միաձուլվեցին հայ ժողովրդի կազմում։ Այն ժամանակաշրջանում, յերբ այլացեղ կիսառասպելական յեկվորները, արքայորդիները (ի դեպ՝ յեկած Միջագետքից, այն յերկրից, ուր իրենց կյանքի

առաջին տարիներն են անցկացրել Եպոսի հերոսներ Սանասարն ու Բաղդասարը) տակավին չէին կարող Ժողովրդի հիշողության մեջ ձևակերպվել և ամրանալ իբրև «Թաղավորներ», վորովհետև սեփական Թաղավորներ էլ դեռևս չը կային։ Ժողովրդական ավանդության մեջ դրավելով ինչ-վոր միջակա դիրք, լինի դա սեփական տոհմի ականավոր մարդկանց, լինի դա տոհմապետների, լինի դա ցեղի առաջնորդների դիրք, նրանք ընդունելի և մոտիկ էին այն ցեղերի ավելի լայն մասսաների համար, վորոնք հետագայում միաձուլվեցին հայ Ժողովրդի կազմում։ Նրանց միահյուսված, կիսակոսմիկական, կիսայերկրավոր կերպարները արտացոլումը հնադույն եպոսում կարող էր Ժողովրդականություն վայելել արդեն իսկ հայ Ժողովրդի միջավայրում, ինչպես նրա ներքնախավերում, այնպես էլ նրա վերնախավերում, վորոնք, Թերևս, ավելի մեծ չափով էին ընդգծում այդ հերոսների արքայականությունը։ Ահա Թե ինչո՞ւ այնքան դժվար է, շատ հարյուրամյակներ անցնելուց հետո, հիմնվելով բանավոր ավանդության վրա, վոր մերթ պահպանում է հնադույն աղբյուրի մի պատառիկ, մերթ էլ պատումը հայորդում է հետնադույն հեռանկարով, վորոշել այդ կերպարների՝ Սանասարի և Բաղդասարի սոցիալական էությունը։

Իսկ ինչո՞ւ այժմ կարելի չէ խոսել Եպոսի հազարամյակի մասին։ Եպոսի միֆական մասերի արժեքը հաշվի չ՚առնելը, յուրահատուկ արհամարհական վերաբերմունքը «հեքիաթային» տարրերի հանդեպ, վորոնք իբր Թե համարյա խճողում են յերկրային դարձած հայ հերոսների պանծալի արարքների վերաբերյալ պատմությունը, մի քանի հետազոտողների հանդել տվին այն մտքին, Թե մենք պետք է լոկալիզացիայի յենթարկենք եպոսը, վորպես հենց մեկ հազարամյակ մեզանից հեռու դարաշրջանում ծագում առած մի եպոս։

Իրականության մեջ բանն այլ կերպ է։ Հնարավորություն կա պնդելու, Թե այն տեսքով, վորով կազմավորվել են համահավաք տեքստի մեջ մտած պատումների հիմնական մոտենները, նրանք ձևակերպում են ստացել մոտավորապես հազար տարի սրանից առաջ, վորովհետև միֆական հերոսների արարքները հարմարեցված էին յերկրավոր կյանքին, շաղկապված էին արաբական նվաճողների դեմ հայ Ժողովրդի մղած լարված պայքարի իրադրությանը։ Այս իմաստով եպոսին հազարամյա տարեթիվ տալը լիովին կարող է դիմանալ նույնիսկ շատ խիստ քննադատության։

Իսկ եպոսի առանձին մոտենների ծագումը մեզանից անջատվում է վոչ Թե մեկ, այլ շատ և շատ հազարամյակներով։

Եպոսի ձևակերպման ժամանակը վորոշելու համար մեծ նշանակություն ունի այն հանդամանքը, վոր մենք վոչ մի տեղ, եպոսի բաժիններից և վոչ մեկում, չենք դտնում Հայաստանի վրա արաբների գործած այն արշավանքի արտացոլումը, վորը տեղի յե ունեցել VII դարի կեսերին։ Հայաստանի տերիտորիայում արաբական կուսակալի կամ հարկահանի լինելը արդեն փաստ և հանդիսանում այս եպոսը պատմողների հենց առաջին իսկ խոսքերից։

Մենք հիմք ունենք յենթադրելու, վոր յեթե այս մեծ պատումից այսքան շատ տարրեր են հասել մեզ, ապա քիչ հավանական է, վոր այնպիսի նշանակալից մի մոմենտ, ինչպիսին է արաբական տրշավանքը, բոլոր հիսուն հինգ պատմողների հիշողությունից դուրս ընկած լիներ, և այս եպոսի ձևա-

կերպումն ու կազմավորումը լոկալիզացիայի պետք է յենթարկել այն դարաշրջաններում, որոնք հաջորդել են (այն էլ վոչ մեկ անգամից) Հայաստանի վրա արաբական տիրապետության հաստատվելուն։

Այս առնչությամբ չափազանց մեծ արժեք է ստանում արտաքուստ աննշան թվացող մի մանրամասնություն։ Թյուրքիայում հայերը հեթանոս և կռապաշտ էին կոչում մուսուլմաններին դեռևս մեր հիշողության շրջանում։ Դա, անտարակույս, արդյունք էր վոչ այնքան մուսուլմանության «միաստվածությունն» անտեսելու ցանկության, որքան մուսուլմանական շրջապատում իրար հետ խոսակցելիս «մահմեդական», «մուսուլման», «իսլամ» բառերից խուսափելու ցանկության, բառեր, որոնք բոլոր լեզուներով հավասարապես հասկանալի չեն, որքան վոր բոլոր լեզուներում առավել կամ նվազ ճշգրտությամբ կրկնվում են արաբական տերմինները կամ Մուհամմեդի արաբական անունը։ Այս իմաստով հայերի կենցաղում «հեթանոս», «կռապաշտ» բառերը հանդիսացել են պայմանական, մի տեսակ կոնսպիրատիվ տերմիններ։ Բայց եպոսում տրվում է «կռապաշտ» բառի հետագա բացահայտումը խալիֆի վերաբերմամբ դրծադրվելով. «կռապաշտ» բառից ծագում է մի ամբողջ եպիզոդ, պատմվածք այն մասին, թե ի՞նչպես խալիֆն աղոթում է իր կռքերին, ի՞նչպես խալիֆի կռատանը կան կուռքեր, ի՞նչպես խալիֆին ոգնություն ցույց չի տալիս «փոքր կուռքը» և ոգնության է գալիս «գլխավոր կուռքը», ի՞նչպես կռքերը խալիֆից մարդկային զոհաբերություն են պահանջում, ի՞նչպես կարող է, կամ չի կարող, պահպանվել մարդկային զոհաբերության ծիսակատարությունը։ Այսպիսով, կոնսպիրատիվ, պայմանական արտահայտությունը վերաճում է մուսուլմանական պաշտամունքի միանգամայն խեղաթյուրված պատկերման։ Այնինչ առանց բացառության բոլոր պատմողները տասնյակ տարիներ կողք-կողքի ապրել են մուսուլմանների հետ, լինեն դրանք թյուրքեր թե քրդեր, կամ թե՛ մեկը և թե՛ մյուսները, և հիանալի գիտեին, որ իսլամում վոչ մի կուռք չը կա։ Իսկ քանի որ վոչ մի այլ ցուցում չը կա այն մասին, որ պատմողները խալիֆին մուսուլման էլ էին համարում, բացի միայն այն բանից, որ «հեթանոս», «կռապաշտ» բառով հայերը պայմանաբար կոչում էին մուսուլմաններին, ուստի հարց է ծագում, թե եպոսը խալիֆին ընդունո՞ւմ է արդյոք որպես մուսուլման։ Այստեղ հիմնականը, եպոսի համար վաղմի չի՞ հանդիսանում արդյոք այս ոտարական նվաճողի ընդունումը որպես իրոք հեթանոսի, կռապաշտի, և Նրա խալիֆ հորջորջումը չի՞ հանդիսանում արդյոք հետագա մի խավորում, այն տերմինի կիրառումը, որը բնորոշում է հայտնապես վոչ-հայ և վոչ քրիստոնյա նվաճողին։ Եպոսում կռքերը հիշատակված են միայն խալիֆին, Սանասարին և Բաղդասարին վերաբերող պատմվածքում։ Ըստ հին հայկական ավանդության, որպիսին իր արտացոլումն է գտել նաև թե՛ Մովսես Խորենացու և թե՛ Թովմա Արծրունու մոտ, Սանասարը, եպոսի հերոսը, ասորեստանյան արքա Սենեքերիմի (Սիննահերիբի) որդին է։ Այսպիսով, այս մանրամասնությունը մեզ, որը բնավ պատահական չէ, պահպանվել է եպոսի սկզբնական ետապների զարգացման նախընթաց ստադիան, այն ստադիան, որը նախորդել է իսլամի հետ հայ ժողովրդի ծանոթացմանը, արաբական նվաճմանը։

Մյուս կողմից, նույնպես յերկրորդական թվացող մի մանրամասնություն վկայում է այն մասին, որ եպոսի մեջ են թափանցել ավելի ուշ մի շրջանի պատմական մոմենտների անդրադարձումները, քան եպոսի ձևավորման սահմանված դարաշրջանը։ Այն զորքերը, որոնց դեմ Խանդութ-

խանումի մոտ հասնելիս կովի յե բռնվում Դավիթը, ուղարկված նյին վոմն ոտարական իշխանավորի՝ Պապ-Ֆռանկի կողմից, վորի անվան մեջ հեշտ ե ճանաչել «Ֆռանկ պապին»— Հռոմի պապին։ Իսկ հայերի ծանոթացումը Ֆռանկների և պապի հետ նրա այդ «պապ» անունով, վերաբերում ե լոկ խաչակրաց արշավանքների դարաշրջանին։ Նրա «պապությունը» և նրա «Ֆռանկությունը», այսինքն՝ Ֆռանկների հետ կապված լինելը (Ֆռանկն ընդհանուր մի անուն ե խաչակրաց արշավանքների մասնակից բոլոր յեվրոպացիների համար, իսկ ներկայի ասորյա խոսակցության մեջ՝ կաթոլիկների համար, անկախ նրանց ազգությունից, այդ թվում նաև հայ կաթոլիկների համար) վոչնչով չի անդրադարձել եպոսում՝ բացի անունից, վորը նույնպիսի հեշտությամբ կարող եր կազմավորված եպոսի մեջ թափանցել ոտարերկրյա մեծ զորքի անանուն իշխողին հարջորջում տալու համար, վորպիսի հեշտությամբ խալիֆի տիտղոսը թափանցեց վորպես արևելյան հզոր իշխանավորի անուն, Սանասարի վերաբերյալ պատումի կազմավորումից մեկ դար հետո, այն ժամանակ, յերբ Սանասարի պապը ստացավ վոլշ եպիկական շրջանի ձևակերպման դարաշրջանում ապրող հայկական Դավիթ թագավորի անունը։

Զավազանց հետաքրքրական ե այն հանգամանքը, վոր եպոսում հիշատակվող պատմական անունների մեջ մինչ չենք գտնում վոչ մի անուն, վորն բուն ժամանակի լոկալիզացիայի յենթարկված լիներ X դարի առաջին յերրորդամասից հետո։ Եթե չարունակվեր հետագա ժամանակաշրջանի ինչվոր պատմական անձնավորությունների հետ կապված փաստերի թափանցումն եպոսի մեջ, ապա այդ անուններն անդրադարձում կդտնեին պոեմայի այս կամ այն բաժնում։ Ժողովրդական եպոսի առանձնահատկությունը, յեթե այդ եպոսը վորևե չափով չվում ունի պատմական իրադարձությունների հետ, հանդիսանում ե այն բանը, վոր նույնիսկ յերկրորդական անձնավորություններն անուն են ստանում այնտեղ, վորովհետև ինչպիսի հերոս էլ վոր լինի, եպիկական պատմության մեջ առանց անվան գործել չի կարող։

Վերջապես, եպոսի ձևակերպման ժամանակը վորոշելու փորձեր անելիս հարկավոր ե հաշվի առնել նաև այն բանը, վոր հնարավորություններ կան մեր եպոսը, հատկապես նրա այն առանձին մասերը, վորոնք կապված են Սասունցի Դավթի հետ, զուգադրել արաբական նվաճողների և փոքր-ասիական հույների պայքարի ու սահմանային ընդհարումների վերաբերյալ եպիկական պոեմայի հետ, վորը կրում ե «Դիգենիս Ակրիտ» անունը։ XI դարի ձեռագրերում պահպանված այս պոեմայի մի ամբողջ շարք մոմենտներ մոտիկ զուգահեռ են հանդիսանում Սասունցի Դավթի պատումի համար։

Եպոսում անսովոր չափով ընդգծված ե մի ինչ-վոր յուրահատուկ կրոնական հանդուրժողություն։ Թեպետև գեղանի Ծովինարին, այդ «խաչապաշտին» (դա քրիստոնյաների սովորական անունն ե հեթիաթների մեջ) կռապաշտ խալիֆին տալու անհրաժեշտությունը վրդովեցուցիչ ե, բայց չի ծաղում այն հարցը, թե դրանից Ծովինարը կարող ե տուժել իր հավատի տեսակետից, ասես թե վաղորոք վստահ լինեն, վոր «խաչապաշտ» կնոջ հետ միասին խալիֆն իր մոտ կ'ընդունի նաև նրա խոստովանահորը։ Խալիֆին էլ ամենևին չի վրդովեցնում այն բանը, վոր իր պալատներից մեկում ապրելու յե քրիստոնյա քահանան. «յես իմ հավատս կը պաշտեմ, նա՝ ի-

բը»։ Հետագայում ևս Եպոսում չը կա քրիստոնեության վոչ մի ընդհանրացնող հակադրումն մյուս, ոտար հավատին. պայքար և մղվում բռնացողների, հափշտակիչների դեմ, Սասունի և սասունցիների թշնամիների դեմ, միանգամայն անկախ նրանց կրոնից, միանգամայն անկախ սեփական քրիստոնեական յեկեղեցին հնարավոր վոտնձգությունների դեմ պաշտպանելու ձրգտումից։ Մարութա բարձրիկ Ասպարածին յեկեղեցու ֆիզիկական ավերումն ել ընդունվում է իբրև բնության ակտ, վոչ թե իբրև սրբության դեմ ուղղված մի վոտնձգություն, վոր անդրադարձնում է բռնացողների և հարձակման յենթարկված սասունցիների կրոնների սարբերությունը։ Յեկեղեցում տեղի ունեցած կոտորածից ճողոպրած հոգևորականի հայտնվելուն ել Դավիթը վերաբերվում է հեգնորեն, ծաղրաբար, յելնելով այն բանից, վոր յեթե հոգևորականներից մեկն ու մեկը յեկել է իր մոտ, ապա ակնհայտորեն ի սեր վորևե նյութական բարիքի,— մեղրամոմ կամ կանթեղի ձեթ մուրալու։

Հոգևորականության հանդեպ յեղած վերաբերմունքի համար հատկանշական է այն պատմվածքը, վոր վերաբերում է Մհերի Մսըրից Սասուն վերադառնալուն։ Յերբ Մհերի կին Արմաղանը հրաժարվում է իր մոտ ընդունելու ամուսնուն, քանի վոր ուխտ էր արել նրանից բաժան ապրել քառասուն տարի՝ նրա դավաճանությունը (Իսմիլ–խաթունի մոտ գնալը) քավելու համար, այն ժամանակ ներկայացող յեպիսկոպոսները և վարդապետները հայտարարում են։ «Որհնած, որենք ի ձեռ վարդապետաց... Քառասուն տարին բերենք անենք քառասուն ամիս, քառասուն ամիս բերենք անենք քառասուն շաբաթ, քառասուն շաբաթ բերենք անենք քառասուն որ, քառասուն որն ել բերենք անենք քառասուն սհաթ»։ Յեվ նրանք լուծում են յերդումը, բայց այդ լուծումը Մհերին և Արմաղանին չի փրկում ուխտադրուժների ճակատագրից։

Մանր ուխտի սրամիտ լուծման այս պատմությունը և հատկապես այն մանրամասնությունը, վոր վերաբերում է միաչքանի քահանայի արած հավելմանը, իր վոգի յերդիծական հաղեցվածությամբ, վորպիսին թվում է թե հակասում է տրագիկ իրադրությանը, ասես ձայնակցում է, մեկ կողմից, V դարի դրող Փավստոսի հիանալի պատմվածքին՝ ճարպիկ յեպիսկոպոս Հովհաննեսի մասին, վորը խլում և յուրացնում է ավազակի ձին, ողտագործելով իր յերգն ու աղոթքը, և, մյուս կողմից, XIII դարի յերգիծանքով լեցուն առակներին, վորոնք դնում են հոգևորականության ուխտազանցությունը, ծախվածությունը և խարդախությունը։

Եպոսի միֆական տարրերի վերլուծությունը, վորոնք բարձրանում են մինչև կոսմիկական մտապատկերները, հնարավոր է միմիայն պալեոնտոլոգիական հետազոտության յենթարկելով մարդկային մտածողության ետասլների զարգացումը, մարդկային մտածողության, վորի միասնությունը մարդկային կուլտուրայի պատմության մեծագույն կոթողի՝ լեզվի պալեոնտոլոգիայի հետ այնպիսի հանճարեղությամբ ցույց է տվել և ողտագործել Ն. Յա. Մառը։

Միմիայն խորացրած պալեոնտոլոգիական վերլուծության յենթարկելով միֆի զանազան տարրերը, վորոնք մնացուկային բեկորների ձևով տակավին հնչում են մեր հիշողության չրջանում, հնչում են այժմ ել պատմողի բերանում, վորը ձգտում է ճշգրտությամբ հաղորդել իր ունկնդիրներին հորից, պապից կամ տատից լսածը,— կարելի է վորձ անել վորոշելու միֆի զանազան տարրերը, նրա զանազան բնորոշ առանձնահատկությունները, ըստ

ամբողջ մարդկության համար ընդհանուր յեղող աշխարհայեցողության գծերի զարգացման ստադիաների, նրա պրիմիտիվ, նրա հնագույն ձևերով։

Բարին ալիրանալը, կրակին ալիրանալը, մետաղին տիրանալը չբջապատող կյանքի համաձայն պայմաններում զարգացման նույն ուղին և անցել յերկրագնդի զանազան ծայրերում, բայց վոչ միաժամանակ։ Մարդու մտածողությունը, վորն իր զարգացման մեջ ընթանում է նույնպիսի միասնական ուղիով, եպոսի տարբեր մասերում արտահայտություն է գտել նման ձևերով, նման կերպարներով, այդ կերպարների պայքարին վերաբերող նման առասպելաբանություններով։ Եվ հաղարավոր սերունդների կողմից բերան-բերան հաղորդվելով՝ այդ միքները՝ հավատալիքները, նշանները, բնության, գաղանի և այլ մարդու դեմ մարդու մղած պայքարում մարդկային փորձի այդ բոլոր կուտակումները հաճախակի մեջ հասած են լինում զարմանալիորեն նման ձևերով։ Հնագույն միքերը, հնագույն կոսմիկական կերպարները չ՝ունեն վոչ միայն ժողովրդական, այլև ցեղային աեր, վորովհետև նրանք ծաղում են աեսել այն որերին, յերբ վոչ միայն ժողովուրդները չեյին կազմավորվել, այլև ցեղերն իսկ չեյին առաջացել։

Բայց, ինչպես այն վաակը, վորը վազելով իր հունով իր մեջ և վերցնում ուրիշ վտակներ, վողողում, շրջափակում կամ իր ալիքներով ծածկում և ճանապարհին հանդիպած խոչընդոտները, այնպես եվ կոսմիկական կերպարների և նրանց փոխադարձ կռվի վերաբերյալ պատումները, միքերը, կրկնվելով հաղարավոր բերաններով, մարդկանց հարյուրավոր սերունդների կողմից, իրենց մեջ են վերցնում նորանոր գծեր, նորանոր մանրամասնություններ, վորոնք հաճախ հեռվից բերել և մի այլ հոսանք։ Այդ միքերը հաղարամյակներ ապրած իրենց ձևով սքողում են պատմական կյանքի պրոցեսում ծագում առած դեպքերի և յերևույթների վերաբերյալ հիշողությունները, միահյուսվում են նրանց, միքական բնույթ տալով պատմական յեղելություններին և պատմական յերանգավորում՝ իրենց ըստ նյության միքական բովանդակությանը։

Ժողովրդի պատկերացումով հերոսն իր ուժերը քաղում և կենսատու տարերքի հետ շփվելուց։ Շատ արժեքավոր և այն զուգադրությունը, վոր կատարում է պրոֆ. Կ. Վ. Տրեվերը Անթեյի և Սանասարի միջև. ջրով հարուստ, բայց վարելահողով աղքատ Հելլադայի կյանքի պայմաններում Անթեյն իր զորությունն ստանում է հողից, իսկ Հայաստանի կյանքի պայմաններում, վորի բարեկեցությունն ամբողջապես կախված է ջրից, Սանասարն ուժի աղբյուրն է հանդիսանում ջուրը։

Սանասարի և Բաղդասարի մեջ մենք ճանաչում ենք այն յերկվորյակ հերոսներին, վորոնք մի ամբողջ շարք ժողովուրդների մոտ ծնվում են հրաչալի աղբյուրի ջրից։ Դրանք հերոսական Դիոսկուրներն են, Կաստորն ու Պոլյուկսը, փրկիչ յեղբայրները (Soteres), վորոնց կանչում են փորձանքի ժամին, ինչպես յենթադրվում է, վորպես առավոտյան և յերեկոյան աստղի մարմնավորում. նրանց համապատասխանում են Հնդկաստանի Ավշիները և Իրանի Ասֆինները։

Կենսատու ջուրը կնոջ կերպարանքով, վորը նույնպես կյանք և տալիս— Ն. Ցա. Մարի սեմանտիկայի պալեոնտոլոգիական վերլուծության մեկնամոտեցումներից մեկը— անդրադարձում է գտել գեղանի Արմաղանի կերպարի մեջ, վորին դեից աղատում է Մհերը, դրանով իսկ դեից աղատելով նաև աղբյուրը, այսինքն՝ նույն այն պատկերը, վորը Հունաստանում

վեր է ածվել Արդուսի կողմից պահվող և Գերաեյի ձեռքով ազատագրված Անդրոմեդի վերաբերյալ միֆին։

Սանասարի վորդի Մհերն իր անվան մեջ և իր մի քանի սխրագործություններում, մասնավորապես սպիտակ դևի դեմ կռվելու, հավատարմորեն վորսորդությանը նվիրված լինելու, ձեռքով վայրենի ղազաններ վորսալը սիրելու վերաբերյալ պատմվածքներում կրում է անտարակուսելի կապ այն լուսատուի հետ, վորի անունն է Միտրա (Միհր)—թե՞ Հնդկաստանի ու Իրանի հնագույն միֆերում, թե՝ Հայաստանի հնագույն միֆերի արձագանքներում և թե՝ Արևելքից հույների ու հռոմեացիների փոխ առած միֆերում անքակտելիորեն կապված և Վերեթրագնայի համարյա յերկնմանակը հանդիսացող անխոնջ վորսորդի վերաբերյալ պատկերացման հետ։ Միտրան մորթեց սև ցուլը և իրեն վերցրեց սպիտակ ցուլը, վորը և պետք է գտնել Միհր-Արևին։ Չե՞ վոր Mumpa անունը լեզվական խիստ բազմաբան այլատեսակություններով կարելի յե ճանաչել և՝ պահլավերեն ու պարսկերեն լեզվում—Mihr, վոր նշանակում է թե՝ արև և թե՝ սեր, և՝ հայերեն լեզվի կազմում հարազատ հայկական ձևով— Մհեր, և՝ Իրանից փոխ առնված ձևով— Mihr, և՝ սլավոնական Mup ձևով, վոր հնչում է կարմիր Արև-Վլադիմիրի անվան մեջ, մի մարդու, վորն իր սեղանի շուրջը բերեց հին Ռուսիայի լավագույն դյուցազներին։

Եպոսում յերկիր իջած Միհրի կերպարը կիսվելով յերկուսի յև վերածվել, պապը և թոռը, վորոնք դժվարությամբ են զանազանվում եպոսի մի քանի վարիանտներում, պապը և թոռը, վորոնք ասես միմյանց մեջ բաժանում են իրենց կոսմիկական յերկնմանակի գծերը։ Պապը վորսորդ է, պապը սև ցուլի—խավարի ու սանդարամետի այդ սիմվոլի—սպանողն է, պապը, վոր ստացել է վոչ թե ծլասպան մակդիրը, ինչպես Միհրը, այլ Առյուծաձև մակդիրը, քանի վոր նրա կերպարի մեջ միահյուսվել են Արևելքում Միհրի հետ կապված Հերակլեսի— Նեմեյան առյուծի այդ հաղթողի գծերը։ իսկ թոռը նա յե, վոր շրջում է աշխարհում իր անվերջ թափառումների ընթացքում, նա, վոր ոսեթյան Ամրանի պես, վորը նույնպես իր անվան մեջ կրում է Միհր անունը, հեռանում է ժայռի խորքը։ Չե՞ վոր դա այն քարանձավն է, վորտեղ միայն իհնուց անտի կարող եյին շինվել Միհրի սրբարանները, Միհրի, վոր ամեն որ թաղցնում եր իր յերեսը յերկրավոր յերկրպագուներից, նախապես լվացվելով մաքրող ջրով, վորն անփոփոխ եր պահում նրա լուսաճաճանչ դեմքի փայլը։ Միհրի սուղումը ծովում նույնպես ամրապնդում և ուժեղացնում է նրա փայլը, ինչպես վոր չփումը ջրի հետ ամրապնդում է Մհերի և նրա տոհմի կարողությունը։

Հին հայերի հնագույն կոսմիկական պատկերացումները, հնագույն միֆերը, վորոնք գոյացել են Հայաստանի կյանքում տեղի ունեցած աչքի ընկնող իրադարձություններից հազարամյակներ առաջ, և այդ իրադարձությունները, վորոնք դրոշմվել են ականատեսների ու նրանց սերունդների հիշողության մեջ հազարավոր տարիների ընթացքում, միաձուլվել ու դարձել են արտաքուստ պատմական ձևով զունավորված միասնական մի ամբողջություն, պահպանելով իրենց միֆական հագեցվածությունը՝ մեկի կամ մյուսի, պատմականության կամ միֆականության գերակշռությամբ, նայած այն բանին, թե հնագույն պատումի տարբեր բաժիններն ինչ չափով են մոտեցած այն ցնցումներին, վոր կրել է հայ ժողովուրդն իր արդեն իսկ պատմական կյանքում։ Այդ իրադարձություններն իրենց լայնությամբ և հզորությամբ, նրանց առնչությամբ ցուցաբերված ժողովրդական կոլեկտիվ

հելլոսության ուժգնությամբ, հանդիսացան այն պատշաճ հիմքը, վորպիսին դանելուց հետո հնագույն միֆերը նստեցին և ստացան կուռ ու հաստակ ձևեր։ Նրանք կազմավորվելով դարձան կապակցական մի պատմվածք այն հերոսների մասին, վորոնք այս եպիկական ցիկլի չորս սերունդների տեղության շրջանում ընթացան իրենց պիտանական ուժի կրճատման, իրենց դերմարդկային չափերի նվազման ուղիով, աշխարհի վրա փռված յերկնակամարի արեղակնային տարածությունների և կապույտ ծովի անհուն խորությունների հետ ունեցած անմիջական կապից կտրվելու ուղիով։ Հերոսները կորցնում են ծովային հրեղեն ձիով ծովի խորքերից դեպի արևի կիզիչ սկավառակը թռչելու ընդունակությունը, վորպեսզի ամուր բնակություն հաստատեն յերկրի վրա, անդիտակցաբար պահպանելով կապը միայն մեկ տարերքի, առանձնապես կենդանարար տարերքի՝ ջրի հետ, և վորպեսզի, վերջապես, դնան հողի ընդերքը, դրանով իսկ ավարտելով մարդկության վաղեմի մտապատկերը յերեք յերկնքի մասին,—վերին յերկինքը, ուր արևակեզ անելու համար բարձրացնում է Սանասարին հրեղեն ձին,—ջրային յերկինքը, վորի խորքից Սանասարին դուրս բերեց նրա հրեղեն ձին,— և ամուր գետինը, ուր Սանասարի նույն հրեղեն ձին տարավ նրա թոռնորդուն՝ Փոքր Մհերին։

Հերոսների տոհմը սպառվեց։ Եվ այդ չորս հերոսներից ամենից ավելի մարդկայինն և յերրորդը, վորին ծնել և կինը՝ մարդկայնացած կիսատիտանի հետ ամուսնանալով,— վորին սնել և կինը և վորն իր մեջ կրում է թե՛ մարդկային թուլությունները և թե՛ մարդու համար յերևակայելի մեծագույն արիությունը,— վորը մեռնում է մարդկային մահով և վոչ թե մնում ապրելու ինքնատարագիր վիճակում, ինչպես իր վորդին։ Այդ Դավիթն է, վորին չորսի մեջ ամենից ավելի սիրում նրան գովերգող ժողովուրդը, վորն ամենից ավելի ամուր ու անխզելի կապերով է կապվել եպոսի կազմավորման և ձևակերպման հիմքում դրված պատմական իրադրությանը։ Դավիթը, Մեծ Մհերի վորդին, Սանասարի թոռը, Փոքր Մհերի հայրը, դարձավ նաև ոստրերկրյա, արաբական տիրակալության ճնշման տակ հեծող հայ ժողովրդի վշտի ու ծանր վիճակի հիշատակների կրողը։ Նա դարձավ նաև հայ ժողովրդի ձգտումների արտահայտիչն ոստարերկրյա լծից ազատագրվելու ուղղությամբ և մարմնավորումը ժողովրդի, նրա ներքնախավերի կոլեկտիվ ուժի, այն ներքնախավերի, վորոնք դեռ նեսելով դուքանը, հովվական ցուպը կամ վորսորդությամբ ապրող լեռնցու ատաղը, զենք վերցրին, վորը թաղցրել ելին նրանցից՝ անընդունակ համարելով նրանց պատվով կրելու զենքն ու զրահը, սաղավարտն ու իշխանական սուրը,— վորպեսզի իրենց դղյակներում նստած հայ թագավորների և իշխանների ուժերից բարձր սխրագործություններ կատարեն։ Հայ ժողովրդի այդ հավքանակն ոստարերկրյա նվաճողների հանդեպ, արաբական հարկահանների, արաբական կուսակալների, արաբական զորքերի վտարումը Հայաստանից տեղի ունեցավ սրանից հազար տարի առաջ։ Այդ իրադարձությունն իրեն քաշեց հին միֆերն ու հին պատմվածքները, այդ իրադարձության պայմանների, նրա ուղենիշների, անունների հետ միաձուլվեցին հնագույն պատմվածքները։

Ահա թե ինչո՞ւ այժմ կարելի է և պետք է խոսել «Սասունցի Դավիթ» եպոսի հազարամյակի, նրա կազմավորման, բայց վոչ ծագման հազարամյակի մասին։ Իսկ նրա առանձին պտտումների ծագումը բազմաթիվ հազարամյակների խորություն ունի։

❋❋❋

Հետազոտողները հայ հին պատմագիրների մոտ, հայկական հնագույն ժամանակագրություններ մեջ յեռանգագին տեղեկություններ եյին վորոնում հայկական ժողովրդական մեծ եպոսի մասին և վոչինչ չը գտան:

Զարմանալի եյ վորոնել:

Ինչպես վոր Փոքր Մհերի համար տեղ չը կար հին աշխարհում, այնպես եյ դրքերում տեղ չը կար հայ ժողովրդի ակնկալություններին ու հույսերին վերաբերող հիշողությունների համար, այն իսկական հայ ժողովրդի, վոր հող եր վարում, անասուններ եր արածացնում, հարկադրական ծանր աշխատանքով մեծագույն տաճարների և հզոր բերդերի պատեր եր հիմնում: Զե՞ վոր ամբողջ տասնհինգ դար այդ գրքերը գրում եյին այն միջավայրից յելած մարդիկ, վորն ոգտագործելով մաճկալների, խաշնարածների և կառուցողների աշխատանքը, փակվում եր բերդերում վոչ այնքան հայրենիքը պաշտպանելու համար, վորքան այդ դղյակներ հիմնողների վրա իր իշխանությունն ամրապնդելու համար: Ո՞վ չը գիտե, վոր այդ դղյակները կառուցվում եյին վոչ միայն այնտեղ, ուր կարող եր սպառնալ ոտար յերկրներից յեկած զորքը, այլև այնտեղ, ուր աղբյուրի պես հոսում եր Հայաստանի համար կենդանարար ուժը— ջուրը: Ո՞վ չը գիտե, վոր այդ դղյակներում, ինչպես Սանասարի սպանած վիշապը, ինչպես Մեծ Մհերի հարվածած գեր, նստել եյին հողի և ջրի տիրակալները,— ջրի, վորի տիրակալը կարող եր սովով խեղդել յերկիրը:

Լրացավ հազար տարին այն որերից, յերբ հայ ժողովուրդը, համախմբելով իր ուժերը, վրայից նետեց ոտարերկրյա, արաբական տիրապետության լուծը: Լրացավ հազար տարին այն որերից, յերբ ժողովրդական ավանդության մեջ ձևակերպվեց Սասունցի Դավթի եպոսը, Դավթի, վորն իր կերպարի մեջ մարմնավորում է իր ժողովրդի լավագույն ակնկալություններն ու ձգտումները:

Զե՞ վոր հերոսների այդ չորս սերունդները, պապ Սանասարը, վորդի Մհերը, թոռ Դավիթը և թոռնորդի Մհերը, միմյանց լրացնելով, ավելի ճիշտ՝ միասին կազմելով մեկ ամբողջություն, իրենց մեջ իսկապես վոր անդրադարձել են նրանց կերպարները կերտող ժողովրդի պատկերացումը և՛ սեփական ճակատագրի մասին, և՛ ապրելու իրավունքի համար մղվող պայքարի մասին, և՛ այն մասին, ինչ հարկավոր է, վորպեսզի մարդիկ յերջանիկ լինեն:

Ժողովուրդն այդ կերպարների մեջ մարմնավորել է նաև պատերազմների, կործանարար ասպատակների, արյունհեղությունների և ոտար նվաճողների կամ սեփական թագավորների լծակրության դարավոր փորձով մշակված հայացքը բոլոր նրանց ակնկալությունների ընդհանրության վերաբերյալ, ովքեր պատերազմներ չեն սկսում, բայց ստիպված են մղել այդ պատերազմները, ովքեր չեն կամենում թափել վո՛չ իրենց, վոչ ել ուրիշի արյունն ի հաճույս ավելի մեծ իշխանության ծարավով բռնված հափշտակչի: Մի՞թե թագավորների կողմից բռնադատված (հարգը տիտղոսը չե) ժողովուրդների չահերի միասնության մասին չեն վկայում լիարերան և՛ յոթը ոգմիկների հայր արաբ ծերունին, և՛ պատանի հերոս Դավիթը:

Դավթի վորդի Մհերը համոզվել եր, վոր հին աշխարհում փրկություն լինել չի կարող, վոր հին աշխարհը պետք է քանդվի, վոր պետք է ստեղծվի նոր աշխարհ: Նա հավատացած եր, վոր կը հասնի այդ որը: Հաղար տա-

րի նա տառապեց ապառաժի ընդերքում, սպասելով իր ժամին, այն ժամին, յերբ կը կարողանա դուրս գալ յերկրի յերեսը։

Եվ Մհերի ժամը հասավ։ Հասավ մեր որերում, յերբ հին աշխարհի մի ամբողջ մասն արդեն քանդված է, և յերկրագնդի մեկ վեցերորդ մասում աշխատանքի սովոր ժողովրդի ձեռքով ստեղծվում է նոր աշխարհ, ուր անարդարություն տեղ չունի։

Ամրացել է հողը, դետինն այլևս յերբևք փուլ չի դա Մհերի տակ, նրա հուժկու ձիու սմբակների տակ, և ձին հաստատաքայլ իր տիրոջը դուրս կը բերի արևտվտ, նոր կյանքի ջերմությամբ վողողված յերկրի յերեսը։

Եվ դուրս գալով իր կամավոր, բայց հարկադրյալ կալանքից, նա կարող է նայել, թե ինչպես նրա ատելի ու քանդված հին աշխարհի տեղում հիմնվում է նոր աշխարհ, թե ի՛նչպես որը-որին բարձրանում են պարիսպները անխորտակելի մի բերդի, որի համեմատությամբ նրա մեծ պապի—տիտան Սանասարի ձեռակերտ հուժկու բերդը՝ Սասունը աչքով անտեսանելի ավազահատիկ է միայն։

Բայց վոչ միայն նայել կը կարողանա Մհերը նոր աշխարհի ստեղծման վեհապանծ պատկերի վրա։ Իր հուժկու ձին՝ Ջալալին հեծած, ամենակործան Թուր-կայծակին ձեռքը բռնած, աշխատավոր ժողովրդի մյուս միլիոնավոր հավատարիմ զավակների հետ միասին նա կը պահպանի հիմնվող ամրոցի մատույցները, բովանդակ մարդկության այդ պատվարը։

Եվ հենց մեր որերում առանձապես մոտիկ, հասկանալի ու հարազատ է դառնում տնհիշատակ ժամանակներում ժողովրդի դիտակցության մեջ կազմավորված հզոր հերոսի կերպարը, որը ջերմ ու մարդու հոգով արձագանգում է ողնության յուրաքանչյուր կոչին և անշահախնդրությամբ սխրագործություններ է կատարում իր ժողովրդի բարիքի համար, հայրենիքի բարիքի համար։

Ակադեմիկ Ի. Ա. ՈՐԲԵԼԻ

ԿԱԶՄՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ

Մեր աշխատանքը հանդիսանում է հայ ժողովրդի դարերի խորքից մեզ հասած բազմերանգ ու հարուստ ստեղծագործության— «Սասունցի Դավիթ» համահավաք հյուսվածո տեքստը կազմելու առաջին փորձը։

«Սասունցի Դավիթ» եպոսի համահավաք հյուսվածո տեքստը կազմելիս՝ յուրաքանչյուր ենք ունեցել եպոսի 1000-ամյակի տոնակատարության Հորելյանական Հանրապետական կոմիտեի հաստատած հետևյալ սկզբունքները.

1. Ի մի հավաքել և հաջորդականությամբ խմբագրել գրի առնված 50 տեքստերի մեջ յեղած այն բոլոր եպիզոդները, վորոնք որդանապես կապված են եպոսի սյուժեյի զարգացման հետ և չեն հակասում եպոսի ամբողջական կառուցվածքին և վոգուն։

2. Եպոսի ընդհանուր ոիթմը ի նկատի ունենալով՝ առանձին տողերը յենթարկել ոիթմական միորինակության՝ դուրս չը գալով եպոսի տողերի իմաստի ու շարահյուսության սահմաններից՝ յերբեմն միայն առանձին բառեր պակասեցնելով կամ ավելացնելով ու վերադասավորելով բառերը։

3. Տարբեր պատումների բարբառային առանձնահատկություններն ի մի բերելու և անհասկանալիությունները վերացնելու համար՝ տարբեր բարբառների հնչյունները մոտեցնել արարատյան բարբառի հնչյուններին, պահպանելով արևմտյան բարբառների մի շարք քերականական ձևեր՝ ինչպես որինակ «ում», «տի» ձևերը և «կր»-ի գործածումը նելկա ժամանակի համարսակայն հիմնականում եպոսը պատմել անցյալ կատարյալ ժամանակով։

4. «Մանասար և Բաղդասար» ճյուղի առաջին և յերկրորդ մասերը հյուսել է պրոֆեսսոր-դոկտոր Մանուկ Խաչատուրի Արեղյանը, «Առյուծաձև Մհեր» ճյուղը և «Սասունցի Դավիթ» ճյուղը՝ մինչև «Դավիթ և Խանդութ» մասը, հյուսել է պրոֆեսսոր Գեվորգ Արշակի Ասովը, իսկ այդ ճյուղի II-րդ, «Դավիթ և Խանդութ» մասը և «Պստիկ Մհեր» ճյուղը— ավագ գիտական աշխատող Արամ Տիգրանի Ղանալանյանը։

Եպոսի ընդհանուր տեքստը յենթարկվել է վերոհիշյալ բրիգադայի քննությանը, կարդացվել ու քննության է յենթարկվել ԽՍՀՄ Գիտությունների Ակադեմիայի Հայկական Ֆիլիալի գիտական խորհրդի ու Հ. Խ. Գրողների Միության Վարչության ընդլայնած միացյալ նիստերում, կարդացվել է «Սասունցի Դավիթ» Հորելյանական Հանրապետական Կոմիտեի նիստերում և հաստատվել է նրա կողմից։

Պրոֆ. դոկտ. Մ. Խ. ԱՐԵՂՅԱՆ
Պրոֆ. Գ. Ա. ԱՍՈՎ
Ավագ գիտ. աշխ. Ա. Տ. ՂԱՆԱԼԱՆՅԱՆ

Սասունցի Դավիթ

ՍԱՇԱՍԱՐ
ԵՎ
ԲԱՂԴԱՍԱՐ

Դառնամ, զողորմին տի տամ*)
Խանում Ծովինարին.
Դառնամ, զողորմին տի տամ
Սանասարին, Բաղդասարին.
Դառնամ, զողորմին տի տամ
Քեռի Թորոսիկին.
Դառնամ, զողորմին տի տամ
Ականջ արողների ծրնողներին:

---

*) Նախերգանքները յերգվում են:

ԿՌԻՎ
ԲԱՂԴԱՍԱՐԻ ԽԱԼԻՖԱՅԻ ԴԵՄ

2

Հ սկիզբն եր կըռապաշտ խալիֆան,
Մեկ ել Հայոց Գագիկ թագավոր.
Կռապաշտ խալիֆան Բաղդադ կը նստեր,
Գագիկ թագավոր՝ Բերդ-Կապոտին:

Գագիկ թագավոր ծեր, ալեվոր եր.
Զինք շա՛տ հարըստություն ուներ,
Զարմ ու զավակներ չուներ.
Մեկ աղջիկ ուներ, շատ տեսակով,
Անուն՝ Ծովինար խանում:

Են ժամանակ վո՛ր թագավոր զորեղ ըլներ,
Են մեկելից հարկ կ'առներ:
Բաղդադու խալիֆան շատ զոր ու զորընդեղ եր.
Ասքար արեց, եկավ վեր մեր ազգին.
Շատ առ ու ավար առավ,
Ու շատ գերի բռնեց տարավ,
Շատ ըզմեր ազգ կտրեց, նվազցուց:
Ու Հայոց Գագիկ թագավոր
Բաղդադու խալիֆային խարջդար եղավ:

Որերից մեկ որ խալիֆան ելավ,
Երկու մարդ հարկ առնող ուղարկեց.
— Գնացե՛ք, իմ խարջ ժողվեցեք, բերեք:
Հարկ առնողներն եկան, անցան
Թագավորի քոշկ ու սարի առջեվեն.
Վոր կ'անցնեյին, լուս մի ենոնց երեվաց:
Իրիշկեցին, ի՞նչ տեսնեն,—
Ենպես խորոտ աղջիկ մի երեվաց,
Արեվուն կ'ասեր. «Դու դուրս մ'ե՛լներ,
յե՛ս դուրս ելնեմ»:
Աղջիկ ենպես խորոտ, ենպես խորոտ,
Վոր տասնուչորս ավուր լուսնին կը նմաներ,
Վոր յոր սարի ետեվեն կ'ելնի:
Եդ հարկ առնողներ ինչ տեսան զեդ աղջիկ,
Խելք գլխըներուց գնաց,
Երկուսն ել անհուշ, անակահ ընկան:
Մեկ սհաթեն թագավոր մարդ ուղարկեց,
Եկան, գենոնք տարան իր պալատ:

Եդ մարդիկն իսկի բան չասին.
Երկուսն ել ելան, սուս ու փուս դարձան,
Իրենց Խալիֆայի մոտ գնացին:
Խալիֆան հարցուց.— Խարջ բերի՞ք: Զբերի՛ք:
Ասին.— Թագավոր ապրած կենա, ի՞նչ խարջ,
ի՞նչ բան.
Ենպես մեկ բան մ' ենք տեսեր,
Աղեկ եր մենք չմեռանք:
Դու ըլնեյիր, ավատաս, իրեք ամիս
Անհուշ գետին կ'ընկնեյիր:
Խալիֆան հարցուց.— Ի՞նչ եր ձեր տեսած:
Ենոնք ասին.— Քո տուն աստված շինի.
Դու ի՞նչ կ'անես ապրանք ու գանձ,
հարըստություն.
Քեզ ունիս հո՛ղ, յերկի՛ր, ապրա՛նք ու գանձ,
հարըստությո՛ւն.
Դու շա՛տ ունիս վոսկի, արծաթ, անգին քարեր.—
Են խաչապաշտ Հայոց թագավորին

Մի ե՛ն տեսակ աղջիկ ունի.
Աղջիկ մի իրենից շատ խորոտիկ,
Վոր ամե՛ն մի բան կ'արժի:
Ահա, խա՛լիֆա, զեդ հրեղեն աղջիկ տեսանք.
Վոր գիշեր-ցերեկ չուտես, չխմես,
Հա՛ ենոր շենք ու շինորհքին թամաշա անես:

Խելք ընկավ կռապաշտ խալիֆային,
Զուղաբ դրկեց Հայոց թագավորին.
Ասաց.— Քո աղջիկ տա՛ս ինձի:
Թագավորն ասաց.— Ցես հայ եմ, դու՝ սրաբ.
Ցես խաչապաշտ, դու՝ կրակապաշտ,
Ի՞նչ բան է, վոր յես իմ աղջիկ տամ քեզ:
Ցես իմ աղջիկ չեմ ի՛տա քեզ:
Խալիֆան ասաց.— Գագի՛կ թագավոր,
Խաթրով ընի, տի տա՛ս.
Կռվով ընի տի տա՛ս:
Թե քո աղջիկ չտա՛ս.
Քո ժողովուրդ առ ու գերի կ'անեմ,
Ձեզ ամենիդ կը մորթեմ,
Քո ազգ ամեն կը կտրեմ,
Քո քաղաք տակ ու վերեվ կ'անեմ,
Քո թախտ ու թագ կը քանդեմ:
Ասաց.— Կռիվ կ'անեմ, չեմ ի՛տա:

3

Բաղդադու խալիֆան կանչեց, ասաց.
— Հա՛, ասքա՛ր, ասքա՛ր արեք, գնացե՛ք.
Աղջիկ կը տա՝ կը տա. չի տար,
Քար քաղեցե՛ք, ավազ մաղեցե՛ք,
Ժողվեցե՛ք, բերե՛ք՝ ինչ կա:
Ելան, ասքար արին, եկան.
Եկան Հայոց թագավորի վերա:
— Ահա, թա՛գավոր,
Քո աղջիկ կամ կը տաս տանենք,
Կամ քար քաղենք, ավազ մաղենք.
Ժողվենք, տանենք՝ ինչ կա:

Թագավորն իրիշկեց, ի՛նչ իրիշկեց,—
Քանց աստղ երկինք՝ զորք է թափվե:
Կռիվ արին, շատ զորք սպանին.
Խաչապաշտ թագավոր կոտրվեց:

Ծովինար խանում երդիք կայներ ը.
Միտք արեց իր մեջ. «Վոր իմ հերն իմանար,
Եսքան մեղք ու արունք չեր ձգի իմ վիզ,
ինձ կը տար-
Իմ պատճառով եսա ամեն մարդ տի սպանեն,
Ենոնց տղաներ տի մնան վորբ, ինձ տ'անիծեն,
Վերջը զուռով ինձ տի տանեն:
Աղեկն են է, վոր յես իմ կամքով երթամ,
Իմ հոր թագավորությունն ել հաստատ մնա».
Աղջիկն ելավ, գնաց իր հոր դիվան,
Ասաց.— Հա՛յրիկ, ինչի՞ կը մտածես:
Հեր պատասխան ետու ենոր, ասաց.
— Ցես ենոր համար կը մտածեմ,
Վոր ես զորքեր ամեն, են քո համար է եկած
Կամ տ'երթաս, կամ մեր երկիր տ'ավերեն,
Խալիֆան մեր թագավորություն տ'առնի,
Զամեն տի սպանի, գերի տի տանի:
Թե իմ աղջիկ տամ, են արար է, յես հայ եմ-
Ծովինար խանում ասաց.
— Վոր յես են կռապաշտ թագավոր չառնեմ,
Զամեն տի սպանի իմ պատճառով,
Աղեկն են է, յե՛ս երթամ,
Ուրիշ մարդու թող բան չըլնի:
Ցե՛ս մենակ մեռնիմ իմ հոր թերեն.
Ցես մեկ ջան եմ, երթամ, կորսըվիմ,
Քանց մեր Հայաստան երկիր ավերի,
Են հազար հազար հոգիք կորուսանին:
Դարձավ ասաց.— Հա՛յրիկ, ինձ տուր ենոր:

Ժողով արին իրենց մեջ,
Թե ի՛նչպես անենք, տա՞նք, թե՞ չտանք:
Զուղար արին թագավորի աներոջ,—

Ինչ Վարդպատրկա եպիսկոպոսն եր,— եկավ։
Զուղաբ արին Քեռի Թորոսին,— եկավ։
Թագավոր կանչեց իր ընտանիք,
Ժողով արեց, ասաց.
— Ժո՛ղովուրդ, դուք ի՞նչ կ'ասեք.
Կամքով տա՞նք զաղջիկ, թե չե՝ կովենք.
Դուք ի՞նչ խորհուրդ կը տաք։
Մեկն ասաց.— Չկա՛րնանք՝ կռիվ անենք.
Աղջիկ ե, տանք՝ առնի, տանի։
Մեկն ել ասաց.— Չե՛, կռիվ կ'անենք։
Մենք զմե զամեն տի տանք կոտորել
Ու զմեր աղջիկ չենք ի՛տա կռապաշտ թագավորին։—
(Դե ազգություն ե, թասիր կ'անեն).
Եդտեղ Թորոս, տասյոթ-տասնուրթ տարեկան եր.
Տեսավ ժողովական կ'ուզեն՝
Պատիվ անեն թագավորին,
Կ'ուզեն կռիվ անեն, աղջիկ չտան,—
Ասաց.— Թագավոր ապրած կենա,
Ցես գիտեմ ժողովական կ'ուզի՝
Կռիվ անի, աղջիկ չտա.
Աղեկ ե, վոր աղջիկ մի վերջանա,
Քանց թե ազգ մի վերջանա։
Թա՛գավոր, վոր դու ինձի ականջ անես.
Արի աղջիկ տանք՝ տանի.
Մենք չկա՛րնանք՝ կռիվ անենք։
Ենպես հաշվենք, թե եդ աղջիկ
Իսկի չի՛ եղեր բեզի։
Եդտեղ խորհուրդք արին,
Եպիսկոպոսն ել համաձայնավ, ասաց
— Մեկ հոգու պատճառով ա՞զգ մի տանք կտրե՛լ.
Չե՛, եդ մե՛կ հոգին թող երթա։

Հեր չեր ուզի եդ բան.
Տեսավ, վոր ճար վերան կտրավ,
Համաձայնավ, ելավ, աղջիկ տվավ։
Խաբար ղրկեց Խալիֆային,
Թե.— Հա՛, կը տանք. արի տա՛ր։

Խալիֆան ել իր պատրաստություն տեսավ,
Զիր հարսնեվոր առավ, եկավ:
Աղջիկ գնաց հոր մոտ, ասաց.
— Հա՛յրիկ, Խալիֆային ասա՝
Զոկ տեղ քոշկ ու սարայ մի շինի,
Ինձ վոր տանի, ենտեղ դնի.
Մեկ տարի մոտ ինձ չգա,
Իմ հետ փարդան չմտնի:
Հա՛յրիկ, դու ել մեկ քահանա դիր հետ ինձ,
Վոր առավոտ, իրիկուն ժամ ասի,
Ցես իմ աղոթք անեմ, մնամ մեր որենքով.
Մեկ ել քեռմե՛ր մի դիր հետ ինձ, յես կ'երթամ.
Ցես ինչ ասի, Խալիֆային խնդրի,
Վոր են բաներ կատարի:

Հերն ել իր աղջկան ասածն ամեն
Բաղդադու Խալիֆային ասաց:
— Խա՛լիֆա, ասաց Գազիկ թագավոր.
Ցես հետ քեզ կռիվ չեմ անի.
Ցես հետ քեզ պայման տի կապեմ:
Վոր յես իմ աղջիկ տամ քեզ,
Իմ աղջկան հետ քահանա մի տի գա.
Են իր ասված կանչի, իր խաչ պաշտի
Դու քո կռքեր պաշտես:
Ենոր ջոկ տեղ սենեկ մի տի տաս.
Մեկ տարի ել մոտ ինք չերթաս:
Կռապաշտ թագավորն ասաց.
— Զա՛նըմ, յես հետ քեզ կը հաշտվիմ.
Հետ քեզ պայման կը կապենք:
Դու քո աղջիկ տուր ինձ,
Ցես ել քենե հարկ չեմ ուզի.
Իմ անուն քո աղջկան վերա ըլնի,
Ինձ թող ասեն Հայոց թագավորի փեսա, բավ է:
Զե թե չուր մեկ, ուխտ ըլնի,
Զուր յոթ տարի մոտ ինք չերթամ:
Խրդամ մի կրդնես հետ,
Քահանա մի կրդնես հետ.

Աղջիկ կը տաք, յես կը տանեմ մոտ ինձ.
Իմ սարայի դիմաց ենոր համար
Զոկ քոշկ ու սարայ կը շինենք:
Աղջիկ մնա՝ ի՛ր որենքով,
Յես մնամ ի՛մ որենքով.
Զե՞ մենք արաբ ենք, դուք՝ հայ:

4

Կոսպաշտ թագավորն եկեր, Տեղտիս կը նստեր
Գագիկ թագավորի նստած տեղ
Նորագեղա դաշտի մեջն եր:
Թագավորն ենտեղ ուներ ամառանոց,
Հոտավետ, անուշ արոտատեղեր,
Ծաղիկներով ու մարգերով զարդարված.
Ենտեղ կը գտնվի Կաթնով Աղբուր:
Ենտեղ վրաններ զարկին,
Յոր-ուր որ հասսնիք արին:

Ծովինար խանում խնդիրք արավ թագավորից,
Ասաց.— Հա՛յրիկ թագավոր,
Վաղ համբարձում է, հրաման տուր ինձ՝
Երթամ Հիլի, աղբրներու վերան գբոսանք.
Մեկ տասն իմ չափին աղջիկ դիր հետ ինձ,
Երթանք սեյրան, ուրախություն անենք,
Ման գանք չուր իրիկուն,
Իրիկուն դառնամ, երթամ իմ տեղ:
Թագավորն ասաց.— Քեզ հրաման է,
Գնա՛, մա՛ն արի, դարձի՛:

Ծովինար խանում, ենոր քեռմեր ու աղջիկներ
Գնացին պըտըտելու Կաթնով Աղբուր:
Ման եկան չուր իրիկուն:
Աղջիկ տեսավ՝ արեվ-աշխարք կա, արեգակ կա.
Ամեն մարդ հետ իր գործին.
Վոմանք հետ իրենց ջրին, ոչխարին.
Վոմանք ել հետ իրենց ռանչպարությանին:

Աղջիկ միտք արեց, ասաց.— Հե՜յ-վա՜խ,
Ինքան լուս աստեվոր կա, յես չեյի գիտի:
Գնացին, ելան սարի վերեվ,
Ենտեղ նստան չահրի վերա, կերխում արին,
Հետո ման եկան, տեսան Կապոտ ծով.
Գնացին ծովափ սեյր անելու:

Իրիկուն վոր տի դառնար, տուն գար
Ծովինար ասաց աղջիկներուն.
— Աղջի՛կներ, դուք քելեք, գնացեք,
Ձեզ համար ման եկեք, քեֆ արեք,
Ցես երթամ, քիչ ջուր խմեմ:
Մտածելով ծովու բերան վե գնաց.
Գնաց, կայնեց մեկ քարափ տեղ.
Նայեց, տեսավ, վոր ծովին ծեր չկա:
Ինք ու քեռմեր ծովու պռուկ նստան, լացին:
Շատ նեղացավ աղջիկն ման գալով.
Ենոր խրդամ շատ ծարվեցավ,
Ինքն ել շատ ծարվեցավ, ասաց.
— Ես ծովի ջուր շատ աղի յե:
Ա՜խ, յերանի՛ մեկ կաթ ջուր ըլներ,
Ցես խմեյի, սրտիս պապակն անցներ
Քեռմերքն շատ փրռաց, ջուր չգտավ
Են ժամանակ Ծովինար ասաց.
— Աստված, դու մեկ աղբուր ետեղ բուսցես,
Մեկ ել ինձի մեկ լուս ու նար անես:
Աստուծու հրամանով, ծովքն բացվավ,
Մի շատ համեղ ջուր դուրս եկավ:
Նայեց, տեսավ՝ մեկ ջոջ քար կա ծովու պռուկ,
Սիպտակ աղբուր մի եդ քարի.ց կը թալի.
Ջուրն ել եդ քարի չորս բոլոր բռներ եր,
Մարդ չեր կարնա, առանց հալավ հանելու,
Եդ աղբուր երթա, վոր ջուր խմի:
Ինքն իր շորեր եհան, գնաց եդ աղբուր,
Բուռ ետու եդ անմահական աղբրրի մեջ,
Մի բուռ լիք ջուր խմեց,
Մեկ ել՝ մի բուռ կիսատ:

Աղբուրը ցամաքավ։
Եդ երկու բուռ ջրից հղացավ։
Ցետ ենոր իր աղջիկներ ժողվեց,
Ենդից դարձան, եկին տուն,
Եկին Գագիկ թագավորի մոտ։

Առավոտուն խալիֆայի զորքը ճաշվավ։
Թագավորն իր աղջրկա ձեռք-վոտք տեսավ։
Ելան, հեծուցին, տարան, հասուցին
Են կռապաշտ խալիֆայի քաղաք։
Ցերը գնացին, քաղաք հասան,
Եդ թագավոր շատ ուրախացավ,
Ցոթն որ, յոթ գիշեր հարսնիք արեց,
Մեջլիս, ուրախություն արեց։
Ենոր համար մեկ ջոկ սարայ շինեց,
Հաց, ջուր դրկեց ենտեղ,
Ասաց։— Սարայից դուրս չգաք։
Ծովինար խանում գնաց, մտավ յոթոտանին,
Ցոթ դուռ շինեց, սուգ արեց։

5

Մի ժամանակ վրա անցավ,
Ծովինար իմացավ, վոր երեխով ե։
Ակհավ, վոր են ծովից ե։
Ամա խալիֆային չհայտնեց։
Խալիֆան ել ակհավ, ասաց։ «Իմ զարմից չե»։
Գնաց դիվան նստեց, կանչեց վազրին.
Թե։— Ձես ասի, եսպես բան ե եղե.
Վազի՛ր, ապա ի՞նչ անենք։
Վազիրն ասաց։— Թագավոր ապրած կենա, սպանենք։
Հրամայեցին դահինին։
— Գնա, ենոր վիզ կտրի՛։
Դահինն եկավ սարայ, ասաց։
— Թագավոր հրաման արե՝
Ըզքո վիզ տի կտրեմ։
Ծովինար խանում ասաց։
— Ձեր թագավորին դատաստան չկա՞,

Զե՞ վոր երեխով կնկան վիզ կտրել
Մեկ անգամից երկո՛ւ մարդ ըսպանել է:
Խալիֆային ասա՝ Դադրե՛ք,
Զուր յես իմ երեխան բերեմ.
Են ժամանակ,— տեսնենք՝
Տղա յե, ինչ է,— թող իմ վիզ կտրեն:
Թե վոր կը հարցուցեք, ասաց,
Իմ հոր տնեն վոր կուս եկեր եմ,
Մինչև եսոր դեռ կուս եմ յես.
Իմ երեխան, աստծու կամքով,
Ծովի ջրից է գոյացե:
Դահին գնաց Խալիֆայի մոտ,
Ասաց.— Թագավոր ապրած կենա,
Քո կնիկ, Դագիկ թագավորի աղջիկ,
Եսպես, եսպես ասաց ինձի:
Վազիրն ասաց Խալիֆային.
— Աղեկ է ասեր Ծովինար խանում.
Թող մնա, իր երեխան բերի,
Են ժամանակ վիզ կտրենք:
Ժամանակ տվին, չուր երեխան բերի:
Են ել ասաց.— Զգուշ կացե՛ք.
Իրիշկենք, չուր երեխան ընի, իր կամքն է
Յես տեր եմ. իմ կնիկն է Ծովինար.
Ել դուք մի՛ խառնըվիք:

Մնաց: Ինն ամիս, ինն որ, ինը ժամ,
Ինը րոպե վոր թամամավ,
Ենոր ժամանակ լըմընցավ,
Երկու տղա երեր.
Մեկրն թամամ, մեկրն կիսատ:
Մելքիսեթ քահանան եկավ,
Թոնդրան վերա կնքեց.
Զոջ տղի անուն եդիր Սանասար,
Պստիկին՝ եդիր Բաղդասար:

Ականջկլան տարան Խալիֆային,
Թե.— Քեզ ջուխտ մի լան ելավ:

Թե խալխ տարով կը ջոջանան,
Ենոնք որով ջոջացան:
Խալիֆան վոր իրիշկեց,
Տեսավ զերկու տղան, աչքեր կուրցավ:
Ասաց·— Դահինն ասեք,
Թող երթա, ենոր վիզ կտրի:
Դահին գնաց Ծովինարի մոտ·
Ասաց·— Քո վիզ տի կտրեմ:
Ծովինար խանում ասաց·
— Ձեր թագավորին կանոն, որենք չկա՞·
Ծծմոր տղեքը ի՞նչպես կը շահեն,
Վոր են իմ վիզ կը կտրի:
Թող իմ տղեք մեծանան,
Նոր՝ իմ վիզն են թող կտրի,
Ցես հո եստեղից չեմ կա՛րնա փախնիմ:

Դահին գնաց Խալիֆային հայտնեց·
Են ել կանչեց վազրին հարցուց·
— Ի՞նչ խորհուրդ կը տաք ես բանի համար:
Վազիրն ասաց·— Տաս տարի ժամանակ ենոր,
Տղեք մեծանան, վիզ նոր կտրենք·
Են եստեղից դո՞ր տի գնա·
Թող բռնավորի պես ներս մնան:
Թող սարայից դուրս չգան:

Կես տարի սարայի մեջ մնացին:
Հետո ջուղաբ դրկեց Խալիֆային·
Ցես հա՞վք եմ, վոր դու ինձ դրեր ես վանդակ,
Ցես բռնավո՞ր եմ եստեղ,
Վոր ինձի դրեր ես բանտ,
Ձես թողնի տանից դուրս գանք·
Արեվ երդիս վե՛ կը տեսնենք,
Լուս երդիս վե՛ կ'առնենք:
Խալիֆան ասաց·— Իրավունք ունին·
Թող դուրս գան, գնան ման գալու:
Դռնապանները իրավունք տվին,
Ու դուրս եկին ման գալու:

Քանի մի ժամանակ անցավ,
Եդ ճժերն որբստորե պետացան.
Ինչ եղան մեկ տարեկան,
Ինչպես հինգ տարեկան տղա:
Կ'ելնեն դուրս, հետ ճժերուն կը խաղան.
Ճճեր կը տփեն, կը լացուցեն:
Քաշեց հինգ-վեց տարի, չքաշեց,
Սանասար ու Բաղդասար պետ կտրիններ դարձան.
Մերն ասաց քահանային.— Տե՛ր տեր,
Իմ տղաներին դաս տուր՝ կարդան:
Դաս ետու տղաներին.
Ենոնք գրել-կարդալ սովորեցին:

Ավուր մեկին խալիֆան
Եդ երկու տղաներ կանչեց,
Տարավ դիվան, իրիշկեց,—
Ենոնց խոշորություն վոր տեսավ,
Ենոնց խոսք ու զրուց վոր լսեց,
Վախեցավ ենոնց մոտեն,
Ճամբեց, գնացին տուն:

Ճժեր եղան յոթ տարեկան:
Որ մի կը խաղային հետ են մեկել ճժերուն.
Սիլա մի զարկեց Սանասար վազրի լանուն,
Վիզրն ծռվեց, մնաց ծուռ:
Վազիր գնաց խալիֆայի մոտ գանգատ,
Ասաց.— Ես ի՞նչ աստծու պատիժ ե.
Մեզ ճիժ չքողին սալամաթ:
Խալիֆան ասաց.— Ցես ի՞նչ անեմ:
Ցես գիտեմ՝ ենոնք վոր ջոջանան,
Տի կախվեն իմ մորուսից:
Կա՛ց, ենոնց համար բան մի կ'անենք:

6

Տղեկներ վոր ջոջացան,
Մեկ որ առավոտուն

Հետ ճժերուն կը խաղային:
Ճժեր թափվան ենոնց վերան,
Ասին·— Դուք բի՛ն եք, դուք բի՛ն եք:
Ցերբ որ ենոնց խոսք լսեցին,
Լալով եկան մոտ իրենց մեր, ասին·
— Կամ մեզ ասա՝ ով ե մեր հեր,
Կամ կ'երթանք, մեզ կը թալենք գետ:
— Վո՛ղդիք, ասաց, ձեր հեր Խալիֆան ե:
— Զե՛, ասին, թե են մեր հեր ըլեր,
Խալխըն մեզ բին չեյին ասի:
Մեկ ժամանակ են ես խոսքով
Լաներ բռնապետեց ներս:
Քանի մի որեն լաներ նորեն
Գնացին քաղաք խաղ անելու·
Տղեք նորեն թափվան վրաներ.
Թե·— Դուք բի՛ն եք, դուք բի՛ն եք·
Ինչի՞ կը գալ մեջ մեզի:
Ե՛լի լալով դարձան,
Զիրենք թալին իրենց մոր զոգ:
Շատ վոր լացին, մոր դժվար եկավ,
Ասաց·— Վո՛ղդիք, դադրե՛ք,
Զուր առավոտուն ձեզ կը տանեմ,
Ձեր հոր գրուց կը տամ:

Առավոտուն ելավ իր խըդամին ասաց·
— Ա՛ռ կապոց, հետ տղեկներուն երթանք գետափ,
Վոր քիչ մի սրտերնիս բացվի:
Ցերբ գնացին, Սանասար ասաց·
— Մարե՛, արի ասա՝ իմ հեր ով ե·
Թե չե՝ ինձ գետ կը թալեմ:
Մերն ասաց·— Վո՛ղդի, դու հեր չունիս:
Տղան ասաց·— Մարե՛,
Ցես հա քարի, թփի տակեն չեմ ելեր,
Հալբաթ յես ել մարդուց ելեր եմ:
Ասաց·— Վո՛ղդի, յես մեկ ժամանակ
Հետ իմ քեռմոր գնացի ծովափ,
Շատ ծարվեցա, քեռմոր ասի՝

Մ'եկ ջուր գտի ինձի համար.
Ծով բացվեց, մեկ համեղ ջուր եկավ,
Ցես ել են ջուր խմեցի,
Մեկ բուռ լիք, մեկ բուռ կիսատ.
Աստված ձեզ են ջրից ետուր ինձ.
Դու են լիքըն բռնից ես,
Ծուռ Բաղդասարն ել են կիսատ բռնից:
Տղան ասաց իր մոր.
— Մենք իմացանք մեր եյուրյուն.
Դե՛ արի դու քո եյուրյուն ասա մեզ:
Մերն ասաց.— Վո՛ղդիք,
Ցես Հայոց թագավորի աղջիկն եմ:

Ջուր իրիկուն ման եկան.
Իրիկուն դարձան քաղաք,
Գնացին, մտան իրենց պալատ:

7

Շատ ժամանակ վերան անցավ.
Սանասար ու Բաղդասար տեսան՝
Իրենց մեր որ վեր ավուր կը կոտորվի.
Ասին.— Մարե՛, եսա քեզ ի՞նչ է եղեր,
Վոր դու որ վեր ավուր կը կոտորվիս,
Քո աչից արտասուք չի պակսի.
Մենք կը նայինք՝ աստվածություն
Մեզ տվեր է քե՝ ջուխտակ մի լան.
Դու թագավորական կին ես.
Մենք կ'որոնենք՝ քե բան պակսորդ չկա:
Եկո՛ նայինք՝ քո դարդը ի՛նչ է,
Վոր դու որ վեր ավուր կը կոտորվիս:

Մերն դարձավ, ասաց տղեկներուն.
—Հա՛յ, վո՛ղդիք, վոր յես չկոտորվի՛մ, ո՞վ կոտորվի.
Խալիֆան, եսոր եզուց է մնացեր,
Իմ ու ձեր երկուսի վիզն ել տ'առնի:
Սանասար պատասխանեց, ասաց.

— Մարե՛, եդպես բան ե՞լ կա։
Շատ լավ, տեսնենք՝ ինչպես կ'առնի։

Տաս տարին վոր լըմընցավ,
Խալիֆան դահիճներ ուղարկեց,
Ասաց։— Գնացե՛ք, ենոնց վիզ կտրեք։

Սանասար ու Բաղդասար,
Կշտի սենեկի մեջ քուրսիկների վերան նստած,
Կ'ասեն, կը ծիծաղան, մերըն կը լա։
Ներս մտան դահիճներն ու ասին։
— Եսոր ձեր վիզ տի կտրենք։
Մերն ասաց։— Մեր վիզ կտրե՛ք,
Իսկ իմ տղաներին՝
Ձեր ձեռ կերթա՞, վոր վիզ կտրեք։
Դահիճների մեկն ասաց։
— Մեր ձեռն ել չե՛րթա վեր քո տղաներին։
Ապա մենք ի՞նչ անենք։
Խալիֆայի հրաման ե, վոր կտրենք։
Մերն լալով ասաց։— Մի քիչ ցած խոսեք։
Իմ տղաներըն չլսեն, վախենան։
Մի քիչ ել թող ծիծաղան։
Դուք ել նստեք, հանգստացեք։
— Չե, ասաց, մեզ իրավունք չկա նստել։
Դե շուտ արեք, երթանք դուրս։
Թե չե եստեղ ձեր վիզ կտրենք,
Արուն սարայի մեջ կը թափի։
Բռռաց, ասաց։— Շո՛ւտ արեք։
Ձենն ընկավ Սանասարի ականջ,
Դուռն երաց, տեսավ՝ քանի մի մարդ՝
Թրերով կայներ են սենեկի մեջ։
Ասաց։— Ի՞նչ մարդ եք, ի՞նչ կ'ուզեք։
Մերըն ծածուկ աղաչեց, ասաց։
— Իմ տղաներին չասեք,
Թե եկեր ենք, վոր ձեր վիզ կտրենք։
Իմ տղաներ տանից դուրս հանենք,
Դահիճ մի կայնի են կող, մեկն՝ են կող։
Ձարնեն, իմ տղի վիզըն թռուցեն,

Վոր նա չտեսնի, վախենա:
Ապա առաջ ինձ սպանեք, նոր իմ տղեք:
Դահիճն ասաց.— Դե՛ յել երթանք:
Սանասար ասաց.— Մարե՛, դո՞ր տ'երթաք:
— Մենք տ'երթանք դուրս, տի գանք:
— Մարե՛, ինձի ասա՝
Մեկ բան կա ստա, վոր քեզ կը տանեն:
Մերը չուզեց ասել:
Սանասար չեթող՝ երթա, ասաց.
— Մեկ բան կա ստա, վոր ինձ չես ասի:
Մոր սրտին դիպավ, ասաց.
— Վո՛ւրդի, վոր նշմարիտ կ'ուզես,
Խալիֆան զրկե, վոր իմ վիզ կտրեն:
Ասաց.— Կտրող ո՞վ է:
— Ես մարդ:
Մոտեցավ դահճին, բռռալով ասաց.
— Դո՞ւ իմ մոր վիզ տի կտրես:
Դահիճն ասաց.— Խալիֆայի հրաման տված,
Վոր ձեր վիզ տի կտրեմ:
Սանասար մեկ սիլա կպցուց դահճի երեսին.
Գլուխ թռավ, ջանդակ մնաց կայնուկ:
Մեկելներ վոր տեսան, թողին փախան.
Գնացին, Խալիֆային ասին.
— Քո լաճ մեկ սիլա եզար դահճին,
Գլուխ թռավ, ջանդակ մնաց կայնուկ:

Խալիֆան զորք ուղարկեց ենոնց վերան կռիվ:
Սանասար ու Բազդասար տեսան,
Վոր զորք եկավ՝ կռիվ անի,
Ելան, չուր իրիկուն են զորքի կեսն ըսպանեցին,
Կռվին դադար արին, եկին տուն:
Մեկել որ մարդ չեկավ կռիվ.
Խալիֆան ասաց զորապետին.
— Գնա կռիվ:
Զորապետն ասաց Խալիֆային.
— Փաթշա՛հ, մենք չենք կանա վեր ենոնց.
Ենոնք ազնավուր մարդ են, փահլեվան են.

Քո թագավորություն կը փնացնեն:
Աղեկն են ե՝ չերթանք կռիվ,
Մեր զորքերն ել չըսպանվին:

Խալիֆան ել միտք արեց, ու միտք արեց,
Տեսավ, վոր ճար չկա,
Կռիվ իրեն վնաս ե, ասաց.
— Ել գործ չունինք ենոնց հետ:
Հիմի կը հավատամ,
Վոր Ծովինար խանում անմեղ ե.
Են ազնավուրներ ծովից են:
Իմ կնիկն ե Ծովինար,
Ենոնք ել իմ տղեկներն են:

8

Եդ Խալիֆան մեկ ել ասքար արեց,
Ու եկավ վեր մեր ազգին:
Վոր պատրաստություն կը տեսներ,
Ծովինար խանում երազ տեսավ:
Ելավ առավոտ, պատմեց իր երազ,
Ասաց.— Խալիֆան ապրած կենա,
Սրի՛ դու ինձ ականջ արա,
Դու մի՛ երթա կռիվ:
Խալիֆան հարցուց.— Ինչո՞ւ:
Ասաց.— Ես գիշեր երազ մ' եմ տեսե:
Ասաց.— Եդ ի՞նչ երազ ես տեսե:
Ասաց.— Ես գիշեր տեսա՝ մանր աստղեր՝
Ենպես են բոլորած մեկ մեծ աստղի բոլոր,
Եդ մանր աստղեր մեկեն՝
Ամեն թափան եդ մեծ աստղի վերան:
Եդ մեծ աստղ ցոլըլաց, եկավ,
Եկավ, մեր դռան առաջ ընկավ:
— Ե՛հ, ասաց, խորո՛տ Ծովինար,
Քեզի համար կը քնես,
Ուրշի համար երազ կը տեսնես:
Քանի որ իմ ջահել ժամանակն ե,

Պիտի երթամ կռիվ:
Են ել ասաց·— Կապված ե քո կամքին,
Կ'երթաս՝ դու գիտես, կը մնաս՝ դու գիտես:
Համա չե՞ դու պայման ունիս հետ իմ հոր:
Ասաց·— Իմ միտք փոխեր եմ·
Տ'երթամ կռիվ, իմ հարկ առնեմ:

Զորք ժողվեց, բանակ կազմեց,
Ամեն պատրաստություն տեսավ զորքի համար,
Ելավ, եկավ կռիվ:
Ցոթքն տարի կռիվ արեց:
Եկավ Բնրդ–Կապոտին քաղքի բոլոր փաթթեց·
Զորքն եդի փաթթեց, նստավ:
Քաղքի ապրանք, տավար մնաց իրա քաղքի մեջ·
Մնացին առանց վար ու ցանք,
Սերմ ել գետին չթալին,
Քաղքի՛ մեջ թանգություն ընկավ:
Ենպես մի թանգություն եղավ,
Վոր մեկ հաց մեկ վոսկու չեն տար:
Քաղքի մեջ թանգություն ընկավ:
Սովամահ կը մեռնեյին շատեր:
Մարդիկ լցված են սենեկներն իրար կ'ասեն·
— Աստված, կ'ընի՞ վոր մե՛կ ել
Մենք եժնություն տեսնենք,
Կուշտ փորով մեկ ել հաց ուտենք:

Ենոնց մեջ մեկ բարի մարդ կար, ասաց·
— Վաղն ես ժամանակ հարուր լիտր հացն
Մեկ արծաթի առնող չիլնի:
Ենոնց մեջ մեկ անհավատ մարդ կար,
Կրո անունով, ելավ, ասաց·
— Ա՛ռ ես մեկ ճանկ վոսկին, հաց տուր,
Տանեմ, տամ՝ իմ երեխեքն ուտեն:
Ախար, ա՛յ մարդ, ո՞ւստ կը տաս:
Ցես իմ աչքով հաց տեսնեմ,
Ցես իմ բերնով հաց ուտեմ,
Ցես չեմ հա՛վտենա, յես չեմ հա՛վտենա:

Են բարի մարդն եդոր անիծեց.
— Կրո՛, հուս ունիմ իմ աստրծու,
Վոր լուսուն հաց կ'ըլնի փալասանք.
Վոր չես ա՛վատա իմ ասելուն,
Աչքով քո տեսնես, բերնով քո չուտես:

Գագիկ թագավոր ջահել տղաներ
Ժողվեց, եբեր զորք իր համար:
Իրիկուն մուք վոր ընկավ,
Ենի իր զորք ժողվեց մեկտեղ,
Ենոնց սովորեցուց, ասաց.
— Զուր իրավունք չտամ, չ'զարկե՛ք:
Գիշերվան մի պահ ձեն-ձուն վոր հանդարտեց,
Մեկ անգամ ձեն ետու.— Զարկե՛ք:
Եդոնք վոր զարկեցին.
Են կռապաշտ թագավորի զորքեր,
Առաջին դարձավ վեր յետինին,
Ցետին դարձավ վեր առջինին,
Քեռի Թորոս, ջահել տղե՛ք
Սրով, թրով իջան խալիֆայի զորքի մեջ,
Ու ջարդեցին, ու սպանեցին, ու կոտորեցին:
Ենպես մի կոտորում ընկավ զորքի մեջ,
Վոր զորք զորքին չընճա՛նչեներ.
Ձիրար կը սպանեյին, կը ջարդեյին,
Ենպես վոր արուն ելավ, գնաց:
Խարար տվին են կռապաշտ խալիֆային,
Թե.— Ի՞նչ կ'անես, զորքդ պրծավ կտրելով:
Խալիֆան ինքն ելավ, տեսավ.
Տեսավ, վոր զորք զիրար կը ջարդի,
Եկավ, իր մոտ կը հասնի.
Մնաց ինք խալիֆան մենակ:
Մեր ազգ եդ անգամ զինք շատ նեղ լծեց:
Ինք հեծավ մեծ դավեն ու փախավ:—
Ենոր Շամա ուղտ կ'ասեն,—
Ու հեծավ, ու փախավ:

Լուսուն ելան, տեսան՝
Խալիֆայի զորք բնաջինջ եղած:

Են անհավատ բերին, դրին չափրար,
Վոր ենտեղի մնացած հացն ու կերակուր
Մարդուն մարդազլուխ տա, վոր տանեն, ուտեն։
Մեկ մարդու բաժնից պակաս ետու.
Իր ձեռի չափ վերցին, զարկին գլխուն,—
Են անհավատ չափրար մեռավ.
Ուղորդ վոր աչքով տեսավ ու չկերավ։

Վոր Խալիֆան հեծավ, փախավ,
Եդ նեղուքնի մեջ կանչեց իր կոքերուն.
— Կոքե՛ր, արիք իմ ոգնուքյան,
Ինձ ազատեք ես հայ ազգի ձեռից.
Քառասուն անծին երինջ ձեզի մատաղ կ'անեմ։—
Ե՛յ, կոքեր ո՞ւր սիտի գան ոգնուքյան։—
Մեկ անգամ ել դարձավ, ասաց.
— Կոքե՛ր, արիք իմ ոգնուքյան,
Ձեզի հարուր լիտր արծաթ կը բերեմ,
Ձեզի վոսկի ընծա կը բերեմ.
Դուք ինձ ազատեք ես թշնամուց։
Կոքեր ոգնուքյան չեն հասնի։—
Ախբր կուռք ի՞նչ ե, վոր ոգնուքյան գա։—
Ես անգամ կանչեց, ասաց,
— Ո՛վ Զոջ Կուռք,
Վոր դու հասնիս, վոր դու հասնիս,
Դու զիս ազատ անես ետա ազգից,
Ու յերբ որ յես վողջ առողջ իգամ,
Սանասարն ու Բաղդասար քեզի մատաղ կը տամ։

Են ժամանակ դիվանք եկան,
Մտան ուղտի փորտակ.
Ու փախցուցին ըզխալիֆան, ու տարան։

9

Են գիշեր Ծովինար քնավ, տեսավ երազ.
Տեսավ վոր իրան երկու ճրագ կար.
Կը գար առջեվ անցընելուն վոր անցըներ,

Ու կը դառնար հեղ մ' ել լուս կը տար:
Ելավ գիշերանց, յերբ որ զարթնեց,
Կանչեց, երեր իր կուշտ երկու տղան,
Մեկ վեր մեկ ծնգան եդիր,
Մեկել վեր մեկել ծնգան եդիր,
Ելաց, բռնեց տղեկներու երես պագեց:

Տղեկներ հարցուցին.— Մարե', ինչո՞ւ կը լաս:
Ու մեր գիր երազի եղելություն
Պատմեց տղեկներուն ու ասաց.
— Ես գիշեր սուրբ Կարապետ երազ եկավ ինձի,
Վոր Խալիֆան ընկեր է նեղութնի մեջ,
Ու զձեզի մատաղ կանչե իր կռֆերուն.
Ցերբ որ եկավ ձեզի մատաղ կ'անի.
Դուք ձեր գլխու ճարը գտեք:
Վորդիք, ձեզի մատաղ կ'անի,
Փախեք, գնացեք Հայոց թագավորի քաղաք:
Գիշեր պայծառ աստղը բռնեք նշան,
Ցերեկն ել հարցուցեք
Արեվելից թագավորի երկիր:

Տղեկներ ելան, մեկ մեկ գենք առին,
Նետ ու աղեղ, գուրզ ու թուր.
Վերուցին զիրանց ուտելիք,
Ու լցին մեկ ագուրք,
Գնացին Խալիֆայի ախոռ:
— Հե՜յ ձիապան, ասին,— երկու լավ ձի',
Մեզ համար շուտ դուրս քաշի':
Ձիանք քաշեցին դուրս, հեծան, եկին,
Պագին իրենց մոր ծիծ, ասին.
— Մարե', դե' են Խալիֆան թող գա,
Մեզ բռնե, տանի, մորթե իր կռֆերուն:
Երկու աղբեր կանչեցին զիրենց աստված,
Ու գիշերով ընկան ճամբա,
Առան ու փախան չուրի լուսցավ:

Աղոթրանին եր, լուս բացվեր եր,
Ծովինար իանում ելավ դուրս:

Ելավ դիվանխանի տանիսն,
Տեսավ վոր առանց զորք, առանց զորապետ,
Հեծեր է Շամա ուղտն ու կը գա·
Խալիֆան սեվցեր է, եղե կուպր:
Եկավ են կռապաշտ թագավոր,
Ափալ-թափալ իրեն թալեց դուռ:
Ծովինար խանում ասաց·
— Ցա՛, թա՛գավոր, ապրած կենաս,
Աստված բարի անի·
Եդա յոթ տարի քո ձեն լավ կը գար·
Եդ ի՞նչ եղե քեզի:
Խա՛լիֆա, ո՞ւր է քո զորք,
Ո՞ւր է քո զորապետ:
Խալիֆան պատասխանեց, ասաց·
— Կնի՛կ, ենպես արի զգավուրներ.
Լցի բերդի պարսպի ներս·
Վերջին ժամ եր, վոր պիտի թասլիմ ըլներ.
Մեկ ել աղոթքանին կրակ թափվեց վերեվից,
Իմ զորքն ու զորապետ ամեն ջարդվեց·
Հրեղեն սուր ընկավ մեջ իմ զորքին,
Ձիրար կոտորեցին, բրդեցին:
Պիտի յես ել ընկնեյի մեջ,
Հեծա դսվեն, փախա:
Ինչքան իմ կռքերուն մատաղ ասի,
Վոսկի, արծաթ ընծա ասի,
Ձեկան ինձի ոգնություն,
Ձեկան ինձի ազատեյին:
Սանասարն ու Բաղդասար
Մեր Ջոջ Կռքին մատաղ եմ կանչե,
Վոր նո՛ր հազիվ ինձ ազատած, բերած է:

Ծովինար եղտեղ իր մեջ միտք արեց, ասաց·
— Վալլա՛հ, իմ երկու տղան պիտի տաներ,
Անմեղ տեղը պիտի մորթեր:

Քանի մի ժամանակ վերան անցավ·
Կռապաշտ խալիֆան գնաց կռքարան:

Հեռի լսողաց, չար թշնամին
Մտավ ենոնց կոֆերի մեջ,
Իրենց մատաղ ուզեցին:
Ջոչ կոֆից ձեն ելավ, ասաց.
— Քո տղաներ, Սանասար ու Բաղդասար,
Բեր իմ առջեվ, ինձի մատղե,
Դու ինչ մուրազ անես,
Ցես զքե քո մուրազին տի հասցնեմ:
Կոֆապետն ել եկավ խալիֆայի առջեվ,
— Կոֆեր մատաղ կ'ուզեն:
Ասաց.— Ինչ կ'ուզեք՝ տարեք, մատղեք:
— Խաչապաշտ թագավորի աղջըկանից
Երկու տղա կա քեզի,
Զենոնք մատաղ կ'ուզեն,
Ուրիշ բան չեն ուզի:
Ասաց.— Լա՛վ, տասն որից յետ,
Մեր կոֆեր տանենք վեր աղբըրներուն սեյր,
Ցես իմ երկու տղան ել տանեմ,
Մեր կոֆերուն մատաղ անեմ:

Խալիֆան են որ եկավ, ասաց.
— Թագավորի՛ աղջիկ, գիտե՞ս՝ ինչ կա:
— Հա՛, ի՞նչ կա, հարցուց Ծովինար:
— Ապա չե՞ս ասի, իմ կոֆեր մատաղ կ'ուզեն:
Ծովինար խանում ասաց.
— Քո տուն չավրի, քեզի չկա՞ երինջ,
Չկա՞ ոչխար, չկա՞ տավար,
Զենի՛, արա մատաղ:
Խալիֆան ասաց.— Չե՛, չե՛, մա՛րդ կ'ուզեն:
— Ե՛, մա՞րդ կ'ուզեն.
Չկա՞ քո քաղքի մեջ անտեր տղա,
Զենի՛, արա մատաղ:
Խալիֆան ասաց.— Չե՛, չե՛, քո տղեկներ կ'ուզեն.
Կնիկ, քո տղեկնե՛ր մատաղ եմ ասե.
Պետք է տղեկներ տանեմ, մատղեմ կոֆերուն,
Վոր ինձ ազատեր են թշնամուց:
Գազիկ թագավորի աղջիկն ասաց.

— Ֆո տուն չավրի, ինչո՞ւ.
Իմ տղեկներ ֆո տղեկներ չե՞ն.
Ինչպես գիտես, ենպես արա.
Տար, գենոնք արա մատաղ:
Համա ո՞ւր ե Սանասա՛ր, ո՞ւր ե Բաղդասա՛ր.
Մե՛նք ո՞ւր, մեր երկու տղա՛ն ո՞ւր:

10

Են գիշեր վոր Սանասար ու Բաղդասար
Հեծան ձիանք, ընկան նամբա ու ֆշեցին:
Զորս որ գիշեր ցերեկ ֆշեցին,
Խալիֆայի հողից ելան դուրս:
Շատ պըտրտվան, զարկին, եկան կարիր երկիր,
Եկան նեղ ձոր մի մտան:
Տեսան, վոր մեկ մեծ գետ կը գար, կ'անցներ ենտեղ,
Ու մեկ բարակ առու մի ենդիեն՝
Կ'իջներ, կը գար բարձր սարերից,
Կը զարկեր մեջ եդ գետին,
Ու կը կտրեր գեդ գետ,
Ու կը շերտեր չուրի մեջտեղ,
Ապա կը խառնըվեր մեջ եդ գետին ու կ'երթար:

Եդտեղ երկու աղբեր իրար հարցուցին.
— Եդա բարակ առվի զորություն ի՞նչ ե,
Վոր կը կտրի գեդ ահագին գետ, կը կիսի,
Կ'անցնի ու կը դիպնի ես փըլին:
Սանասարի միտքը փոխվեց,
Վերուց, ասաց Բաղդասարին.
—Զարմացեր եմ, շատ եմ զարմացեր եդոր վերան:
Եդ բարակիկ ջուրն կը գա,
Հրե՛ն, են սարի գլխեն կը գա,
Ու կը զարնե գետին, ու կը կտրե,
Ու նոր կ'երթա հետ ես գետին:
Եդ ի՞մալ ջուր ե, Բա՛ղդասար:
Աղբերն ասաց Սանասարին.
— Եդ ջուր ազնանցորդու ջուր ե.
Ով որ եդոր ական ջուրը խմե,

Եդպես կտրին կ'ելնի,
Ենոր մեջքը գետին տվող չի'լնի:
Սանասար ասաց Բաղդասարին.
— Ով որ գեդա պատիկ ջրի ակը գտնե,
Ու գիր տունն ել շինե վեր եդ ջրին,
Ենոր զավակն ել վոր ելնի,
Եդպես զորեղ կ'ելնի,
Ենոր մոտեն ազնանցորդի կ'ելնի.
Ենոր տղեք կտրին կ'ելնին:
Սանասար եդտեղ երդում արեց.
— Հացն ու գինին, տեր կենդանին.
Եդ ջրի ակ վորտեղ եղավ,
Երթանք, ենտեղ մեր տուն շինենք.
Ենտեղ, ջրի վերան շենլիք շինենք:
Մենք զորբա, ես ջուր զորբա,
Ես ջուր խմող ազրայի'լ մարդ կը դառնա:
Բաղդասար ասաց.— Դու գիտես, աղբեր:

Եդ ջոջ գետ անցան, գնացին ենդին:
Ելան, առան զառուն,
Ու բռնեցին զեն բարակ ջուր,
Ու գնացին երկու աղբեր:
Ու գնացին, գնացին լեռներ, լեռնե՛ր.
Ելան եդ սարերի գլուխ.
Գիշեր ցերեկ՝ արին մեկ,
Ու գնացին մեկ վերունի երկիր հասան,—
Քարափրթա՛, ձո՛ր, անդո՛ւնդք, քար ու կապա՛ն,
Անտա՛ռ, արջ ու գազա՛ն:
Շենլիք չկար եդ վերքեր:
Եդ երկրին շատ հավնեցան:
Ու գնացին, գտան զաղբուր:
Եդ աղբրի ջուր լուլա մի ջուր ե,
Կ'երթա, կը կտրե գիր տակի մեծ գետ:
Տեսան, անուշ ջուր եր, ու տեղն ել եր անուշ.
Սանասար ասաց.— Ենտեղ խորոտ ե.
Աղեկ ե, վոր մենք ենտեղ մնանք,
Մեզ համար տուն մի ու քոշք շինենք.

Նստան վեր եդ ջրի ական,
Սահմանեցին՝ իրենց համար բերդ մի շինեն:
Մեծ աղբեր ասաց պստիկ աղբոր.
— Գնա, մեկ վորս զարկ, բեր, եփենք, ուտենք
Ցես ել քարեր դնեմ իրար վերա,
Նշանակ շինեմ, վոր գեղ շինենք:
Ցորն որ իրսար վերա չուր կեսորին՝
Բաղդասար հավքեր զարկեց, բերեց.
Սանասար ել քար բերեց, նշանակ շինեց:
Ու բերին, զիրենց բերդի հիմ դրին:
Սանասար գնաց արեվելի կողմ,
Բաղդասար գնաց արեվմտի կողմ,
Ջոջ ջոջ քարափներ կրեցին, բերին:
Քարեր բերին, լրացուցին,
Ձեռ իրար տվին, աստված կանչեցին,
Եղան վարպետ, պատ շարեցին,
Իրենց համար վեր են ջրին
Իրարու հետ տուն մի կը շինեյին:
Ապա Սանասար նետ ու աղեղ կ'առներ,
Կ'երթար վորսի լուսարացին չուր իրիկուն,
Ու Բաղդասար կը դատեր վեր են բերդին:

11

Մեկ տաս-քսան որ բանեցին վեր եդ քոշքին
Են մեկ որ Սանասար եկավ,
Տեսավ, վոր Բաղդասար թաշկեր եր,
Ու քուն անցեր եր վերան,
Արնոտ վորսեր ենպես անեփել՝
Թալեր եր ի գետին ու քներ եր:
Շատ կսկծաց ենոր համար.
Ու ասաց.— Աղբեր, ելի երթանք.
Մեր ապրուստ ենպես չի'լնի.
Չուր յե՞րբ պիտի մնանք ետեղ,
Ու անալի' միս ուտենք:
Աստված վոր տար մեզի,
Խալիֆայի քոշք ու սարեն կը տար:

Բաղդասար հարցուց Սանասարին·
— Ապա ի՞նչ անենք, աղբեր:
— Թողնենք, երթանք աշխարհ վե՛ր:

Երկու աղբեր հեծան ու գնացին, հասան Մուշ:
Գնացին Մուշեղ թագավորի առաջ,
Գլուխ իջուցին, յորդ տեղով երկիր պագին,
Ուրի վերա ձեռներ կապին ու կայնան:
Ու թագավոր հարցուց ենոնց,
Թե·— Ի՞նչ պակասություն ունիք,
Ի՞նչ պիտի ձեզի, վո՛ղդիք:
Տղեկներ դարձան, ասին·
— Պակասություն չունինք·
Վերի դին աստված ենք ապավինե,
Ներքի դին՝ քեզի, թագավոր,
Վոր մեզի պահես ու պահպանես,
Քո աչք հովանի մեզի վերա ըլնի·
Ետեվ անցման աստված իրարուց չամաչեցու:
Վերուց, հարցուց·— Վո՛ղդիք, վի՞ր տղեկներն եք:
Թե·— Բաղդադու խալիֆայի:
Ասաց·— Վոր եղպես ե, վո՛ղդիք,
Մենք չենք ի՛շխենա ձեզի պահել·
Ենի զորեղ թագավոր ե,
Կը գա մեր առ ու գերին կը տանի:
Ձեռ դարձեք, գնացեք, չենք կա՛րնա պահել:
Եդա տեղեն ելան ու գնացին·

Ու միտք արին, թե·— Դո՞ր երթանք:
Ու դեմ արին Արզրում նստող ամիրային:
Գնացին եդ մարդուն երկու աղբեր,
Գլուխ իջուցին ու կայնան առաջ:
Ահագին ու քո ուզած՝ հաստաբազուկ
Ու հաղթուկ մարդ եյին եդ երկու աղբեր:
Արզրում նստող ամիրան
Վոր տեսավ, շատ հավանեց եդոնց:
Հարցուց զիրենց ազգ ու տակ,
Ու ասաց·— Դուք ի՞նչ մարդ եք:

Սանասար պատասխանեց.
— Մենք՝ Բաղդադու խալիֆայի տղեկներն ենք:
Եդ ամիրան ասաց.— Հա՛յ, հա՛յ, հա՛յ,—
Ու զիր փողպատ թոթվեց ենոնց մոտեն:
— Մենք եդոնց մեռելներուց կը փախնինք,
Եդոնց կենդանո՞ւն ռաստ կը գանք:
Վոչ, ձեզի տեր չենք կա՛նա ըլնի.
Ուրվե կ'երթաք, գնացեք:
Եդտեղեն ել ելան ու գնացին:

Ճամբան խորհուրդ արին:
Սանասար ասաց Բաղդասարին.
— Աղբեր, մենք եդ մարդու մոտեն կը փախնինք,
Զեդոր անուն ինչի՞ դրեր ենք մեր վերան:
Արի մենք եդ շան անուն չտանք.
Քանի որ մենք եդոր անուն տանք,
Մեզի պահող չկա:
Ես դիր ուր որ գնանք, ով որ հարցուց,
Տ'ասենք՝ մեզի բան չկա,
Վոչ հեր, վոչ մեր, վոչ տուն, վոչ հայրենիք,
Բալֆի մարդիկ զմեզի տիրեն:

12

Ու ենտեղեն դարձան,
Թողին, եկին Մանձկերտու բերդ:
Թագավոր մի կար ենտեղ, անուն Թևաթորոս,
Եկին, ենոր դուռ կայնեցին,
Թագավորի մարդիկ եկին.
— Դուք ի՞նչ մարդ եք, հարցուցին:
Ասին.— Եկանք, թագավորին ըլնինք ծառա:
Թագավորին իմաց տվին:
Գնացին, գլուխ իջուցին,
Ցոթը տեղով երկիր պագին,
Ուքի վերա ձեռ կապեցին
Ու կայնան ենոր առջև:
Թագավորն ինչ զեդ երկու խարտեշ,

Սիրունատես տղեմ տեսավ,
Շատ հավանեց ենոնց, հարցուց.
— Վո՛ւրդիմ, ի՞նչ պիտի ձեզի.
Ինչի՞ համար եմ եկե:
Պատասխան տվին ենոր.
— Վերի դին աստված ենք ապավինե,
Ներքի դին՝ քեզի, թագավոր,
Վոր մեզի պահես ու պատոպանես,
Քո աչքի հավանի վերա մեզի ընի,
Ետեվ անցման աստված իրարուց չամաչեցու:
Ու թագավոր հարցում արեց.
— Վո՛ւրդիմ, դուք վո՞ր տեղեն եք:
Պատասխան տվին, ասին.— Ձենք գիտի:
— Ի՞նչ ունիմ, ի՞նչ չունիմ. հեր ու մեր ունի՞մ:
Ասին.— Իսկի բան մի՞ել չունինք.
Վոչ տուն, վոչ տեղ, վոչ հայրենիք,
Մենք ինչ մորե ելեր ենք;
Վոչ հեր ենք տեսե, վոչ մեր ենք տեսե.
Մեզի եսպես որբուկ տղա չենք տեսե:
Թագավոր նորեն հարցուց.
— Դուք ի՞նչ կ'ասեմ, ինչի՞ման կը գամ:
— Մենք եկեր ենք կո՛, կըլնինք քեզի ծառա:
Թագավորին շատ դուր եկան, ասաց.
— Տարեմ եդ տղեկներ դրեմ մեկ մաքուր տեղ,
Սենեկի մեջ անկողիններ փռեմ:
Տարան, դրին մեկ սենեկի մեջ
Ու ենոնց ժամեժամ հաց կը տանեյին:
Թագավոր զենոնք շատ ուզեց.
Սանասարին արեց սեղանապետ.
Բաղդասարին՝ գինապետ:

Մեկ տարի քամամ պահեցին:
Տարին վոր թամամավ,
Վազիր թագավորին ասաց:
— Թագավոր, մի բերե՛ս, փորձես գեղջնք.
Տեսնես՝ մեջերն հունար կա՞, թե չկա:
Թագավորն ասաց.— Ադեկ կ'ասես:

Ու կանչեցին եդ տղեկներ,
Բնրին թագավորի դիվան,
Ու թագավորն ասաց եդոնց.
— Վա՛ղդիք, լուսուն պիտի կռիվ երթանք:
Ու տղեկներ եդա տեղեն ելան,
Գնացին, նստան իրենց սենեկի մեջ.
Մնացին ենտեղ չուրի լուսացավ:
Առավոտ բարի լուսուն ելան,
Ամեն մեկ իր զենքեր առավ վերան,
Հեծան իրենց ձիանք,
Ու գնացին կռվի մեյդան.
Թագավորն ել իր զորքով եկավ:
Վերուց, ասաց, թե.— Սա՛նասար,
Զորքերն առ, դու մեկ դին կայնի,
Ցես, Բաղդասար, վազիր մեկ դին կայնենք:
Սանասար ասաց.— Եդպես չե, թագավոր:
— Հապա ի՞նչպես, հարցուց թագավոր:
Ասաց.— Ցես ու իմ աղբեր մեկ դին կայնենք,
Դու, քո զորքեր, վազիր՝ մեկ դին:
Թագավոր ասաց.— Քո խոսք ըլնի:
Ու եկան. տուսն իրար կռիվ:
Թագավոր մեկ ել նայեց, տեսավ,
Վոր ել զորքեր չկան, ամեն ջարդած են:
Ասաց.— Վազիր, քո տուն ավերի,
Ինչպես որ դու իմ տուն ավերեցիր.
Մինչի հիմի եդոնք գիտեյին,
Թե մեր մեջ վորձ մարդ կա.
Հիմիկս իրենք մարդ են, մենք՝ կնիկ:
Վազիր վերուց, թե.— Վոր եդպես ե,
Բաղքից դուրս արա, թող երթան:

Են որ քաղքի նախիր ավազակներ տարան:
Ելավ, երեր մի երեսուն ձիավոր,
Տղեկներու հետ տի դներ,
Վոր երթային տանողների յետեվ:
Սանասար ասաց.— Թա՛գավոր,
Մենք չենք ուզի եդ երեսուն ձիավոր.

Մենք երկուսով մենակ կ'երթանք:
Առին զենքեր, հեծան ու գնացին:
Գնացին, հասան ավազակներուն.
Զարկին, ջարդեցին, նախիր թափեցին,
Զեդ ավազակներ խառնեցին նախրի տավրի հետ,
Դարձուցին, բերին քաղաք:
Թագավոր բռնեց, զավազակներ կապեց:
Եդա անգամ զտղեկներ ե'լ լավ պահեց:

Առավոտուն ելան, գնացին, պըտըտեցին,
Տեսան՝ ջահել տղեք վահանամարտ կը խաղան.
Վահան բռնած ձեռներ՝ փետ կը զարնեն իրարու:
Ասին.— Մենք ել երթանք, հետ ենոնց խաղանք:
Գնացին, վո՛ր մեկին ձեռ տվին,
Ուշաթափ եղան, ընկան գետին:
Գնացին, թագավորին խաբար տվին.
— Ելի տես՝ ինչ են արած:
Թագավոր կանչեց գենոնք, ասաց.
— Տղեք, դուք ես ի՞նչ կ'անեք.
Ես ձեր արած բան ի՞նչ է:
Ասին.— Թագավոր ապրած կենա,
Մենք խաղացինք, եդպես եղավ:
Ասաց.— Դուք զորեղ, ազնավուր մարդ եք,
Ենոնք ձեզի կարնա՞ն դեմ կենան:
Դիր մ'ել եդպես բան չանեք:
Ասին.— Ել չենք անի:

Մեծ քաղաք եր. հարսնիք արին.
Ջահելներ ելան, գնացին, ձի խաղցուցին:
Թագավոր ասաց Բաղդասարին.
— Ելեք, դուք ել գնացեք.
Ձիաթռոս, ուրախություն արեք:
Եդոնք վոր գնացին, ձիավորներ կայնան:
Եդ երկուս կայնան մեկ կողմ,
Ձիավորներ կայնան մեկ կողմ.
Եկան, իրարուց կրակ տարան:
Ցերը մեծ աղբեր կ'երթար ետեվ,

Զրինդ կը բալեր, վնաս չեր տար,
Յերբ որ պստիկ աղբեր կ'երթար,
Կը զարկեր, կող կը ջարդեր.
Երկու–իրեմ տղի վնաս ետաս:
Սանասարին եդ դուր չեկավ.
Ելան, դարձան, եկին տուն:

Մեկ սինի պտուղ վերցուց մեծ աղբեր,
Եդի պստիկ աղբոր գլխու վերա,
Տարավ թագավորի դիվան:
Են տղաներու տիրվանիք եկած են,
Գանգատ կը տան, կ'ասեն.
— Թագավոր, եդ տղաներ նամբու դիր.
Թե չե՝ գորեղ են, քեզ կը վնասեն:
Սանասար վոր պտուղ տարավ,
Տղաներու տիրվանիք տղաներուն մոռցան,
Եկին, լցվան պտղի վերա, կերան:

13

Ենոնց ընկեր տղաներից մեկ գնաց, ասաց.
— Թագավոր բարկացեր է ձեր վերա,
Ձեզի քաղքից դուրս տի հանի:
Սանասար Բաղդասարին ասաց.
— Աղբեր, ետեղ մեզ տուն չի'լնի,
Երթանք, մեր տուն շինենք:
Ենքան ջանք թափեցինք ենտեղ,
Ու մեր են ավերակն ենպես մնաց կիսատ:
Ասաց.— Դու գիտես, աղբեր, երթանք:
Լուսուն վոչ դու հաց պատրաստիր,
Վոչ յես գինի լնում, իտամ.
Առավոտուն չերթանք իրեն երեվան:

Թագավոր քնուց զարթնեց, վոչ են կա, վոչ են-
Եդ հետ կանչեց զենոնք:
Եկին թագավորի առաջ:
— Թա'գավոր, ասին, մեր մեղքն ի՞նչ է,

Վոր դու մեզի քաղքից դուրս կ'անես:
Ասաց.— Վո՛րդիք, խոսք է, բերնես գնացեր է,
Ձեզի պիտի դուրս անեմ:
Եստեղեն գնացեք ձեր սենեկ,
Ու միտք արեք, տեսնենք՝
Վոր կողմ կ'ուզեք, տամ ձեզի,
Գնացեք, ենտեղ նստեք:
Տղեկներն ել միտք արին,
Թե.— Երբանք ենտեղ, վոր նշանգաե թալեր ենք:
Երբանք, ենտեղ նստենք:

Մնացին գիշերն իրենց սենեկի մեջ:
Բարի լուսըն վոր բացվեց,
Եկին թագավորի առաջ կայնան:
Ու թագավոր հարցուց.— Վո՛րդիք.
Վո՞ր կողմ ուզեցիք, վոր դուք նստեք:
Ասին.— Թագավոր ապրած կենա,
Մենք, ուղորդ է, հեր ու մեր չունինք,
Համա քենե պահենք, աստրծուց ի՞նչ պահենք,
Ձանք մեկ ավերակի տվեր ենք մի քիչ.
Հետո թորկեր, եկեր ենք եստեղ:
Ու պատմեցին ենոր, ասին.
— Ես որինակ մեկ աղբերակ.
Եդ աղբրի կուշտ հիմք ենք թալե.
Կը խնդրենք, վոր թողնես մեզի,
Երբանք մեր տուն շինենք, տնավորվինք:
Թագաորոս թագավոր վերուց, ասաց.
— Ախբր, վո՛րդիք, յես առաջ ձեզ հարցուցի,
Թե ձեզ ինչ կա, հեր, մեր.
Ու դուք ասիք, թե՝ բան չկա, վոչ տուն, վոչ տեղ:
Հիմի քանի որ եդպես է, ասաց,
Կ'երթաք, հազար բարին,
Գնացեք ձեր տուն ու բերդ շինեք:

Սանասար ու Բաղդասար դարձան, ասին.
— Թագավոր, ապրած կենաս,
Մեկ բան ել կը խնդրենք քենե,

Մենք մենակ չենք կարնա ենտեղ նստինք.
Կը խնդրենք՝ մեկ քանի տուն աղքատ,
Մեկ քանի տուն հարուստ տաս մեզի,
Դան հետ մեզի, մեզի մոտ տուն շինեն,
Վոր իրիկնեց ժողովվինք մեկտեղ,
Զրուցենք մեզի մեր քաղքի մեջ:
Թագավորի սիրտ կոչաց վեր ենոնց.
Ետու ենոնց քառասուն տուն.—
Հե՛յ գիտի տո՛ւն...
Ամեն մեկուն մեկ եշ ու մեկ նախրակ:

Առավոտուն իր վազիրին նամբեց քաղքի մեջ,
Եդ քառասուն տուն ետու քոչել,
Ենոնց համար ետու հիսուն բեռ ալուր,
Հետներ եդիր ուտելիք:
Ելան, բարձան զիրենց տներ:
Աղբերներն ել թագավորին կաց-բարով ասին,
Ու հետ իրենց քոչին գնացին:
Գնացին, սարերն ելան,
Հասան վեր իրենց աղբերակին,
Ու վեր իրենց բերդի հիման:
Սանասար ասաց Բաղդասարին.
— Առաջ զմեր բե՞րդ շինենք,
Թե չե՝ զեղա աղքատ-ուղքատի տներ:
Բաղդասար պատասխանեց.
— Առաջ շինենք զեղոնց տներ,
Ու նոր շինենք զմեր բերդ.
Եդ խեղճ մարդեր չեն կարնա
Արեվուն առջեվ կենա:
Ու սկսեցին զտներ:

Սանասար ենքան զորեղ եր,
Վոր որ տասըն տան տեղ կը փորեր,
Են մեկելն ել զփետեր կը բերեր,
Ու բանվածքըն երկուսով կը շինեյին:
Երկու աղբեր չորս ավուր մեջ լման՝
Զքառասուն տների պատեր շարեցին,

Եդա ջոջ սարերի գերանները
Կտրեցին, բերին առանց թփռելու,
Թալեցին վերան, ծածկեցին, պրծան:
Ու ֆոչեր նստեցուցին տների մեջ:

Տղեկները վոր տներ կը շինեյին,
Որեն մեկի տուն հաց կ'ուտեյին,
Վ.իր տուն վոր հաց կ'ուտեյին,
Ենոր տաշտ ու մաղ կը կախեյին:

Յերբ որ ֆուչեր իրենց տներ նստան,
Տղեկներ կրկին ըսկըսեցին ըզբերդ շինել:
Սանասար ջոջ ֆարափներ շալկեց, եբեր.
Զոջ ջոջ ֆարեր ել իր աղբեր եբեր:
Գնացին հետո ֆաղաֆ,
Վարպետ ու բանվորներ բերին:
Վարպետ տեսավ բերած ֆարեր,
Ասաց.— Յես չեմ կարնա շինել:
Սանասար գնաց ֆաղաֆ,
Ուրիշ մեկ վարպետ ել եբեր:
Ես վարպետ ել վոր տեսավ են ջոջ ֆարեր,
Ասաց.— Սանասար, ես ի՞նչպես տի շարենֆ.
Յես չեմ կարնա ես ֆարափներ իրար տալ:
— Ապա ո՞վ կարնա, հարցուց Սանասար:
Վարպետ պատասխանեց.
— Մարդ չի կարնա իրար տալ:
— Ապա ի՞նչպես տի շարենֆ:
— Յես ել չեմ գիտի, ասաց վարպետ:
Են ժամանակ Սանասար վերուց, ասաց.
— Դե դու, վա՛րպետ, լարեր կապի՛, տեղեր շտկի՛,
Ինձի ասա, յես ֆար դնեմ իր տեղ:
Եսպես իրենց բերդ շինեցին:
Զոջ ջոջ ֆարեր կը բերեյին հրեշալի,
Վարպետների հետ ել մեկտեղ կը բանեյին:
Ենոնֆ ենֆան զորեղ եյին,
Վոր ֆարե սան ֆարե սուն զարկին, ձագ թալեցին:
Մեկ տարի բոլոր ենոնֆ եսպես աշխատեցին,

Մեկ տարին վոր լրացավ,
Նոր ենոնց բերդն ու տուն եկավ գլուխ։
Դարձան փոքրիկ եկեղեցի մեջ շինեցին։
Մնաց բերդի ու տան անուն։
Ու չեն գիտի, թե ինչ դնեն եդոր անուն։

14

Ապա Սանասար ասաց Բաղդասարին։
— Շատ աղեկ, մենք մեր տուն պրծանք։
Մեր տան անուն ի՞նչ տի դնենք։
Բաղդասար ասաց։— Ա՛ղբեր, դու գիտես։
Շինել վեր մեր երկուսիս,
Անուն դնել վեր քեզ։
Ով որ եկավ, բռնեց, ասաց։
— Իմ տան անունն դրեք։
Մարդ չիմացավ, թե ինչ ասեր։
Քանի մարդ եկավ եդտեղ,
Բերանները փակվավ, անուն չասին։
Ով ել եկավ, անուն եդիր,
Անհարմար ապին դրած անուն։
Մնաց։ Մի իրիկուն խորհուրդ արին։
Բաղդասար ասաց իր ապրոր։
— Լավն են ա, վոր երթաս,
Մեկ ալեվոր մարդ գտնես, բերքես,
Եստեղ հացկերություն անի,
Ելնի, բերդին անուն դնի, երթա։

Առավոտուն լուս վոր բացվեց,
Սանասար ելավ, գնաց մաճ եկավ։
Սիպտակմորուս պապիկ մի տեսավ։
Վեցկին լծեր եր մեջ ոստնին,
Հետ հոտաղին վար կ'աներ։
Հալվոր ինչ եդ փահլեվան տեսավ,
Ձեռքեր ելան դոզ, վար կայնեցուց։
Սանասար եկավ, ձեռ եթալ,
Հալվորի թեվ բռնեց, ասաց։

— Պապիկ, արի երթանք մեր տուն:
Հալվորն ասաց·— Ձեռք վեր առ ինձանից։
Ասաց·— Մի վա՛խենա, պապիկ·
Արի եսոր մեր տուն հյուր·
Քեզ կը տանեմ, յետ կը բերեմ:
Հալվոր համաձայնավ, գնաց:
Ինչ մոտեցան, հոգնեց, ասաց·
— Հերիք է՝ ինձ տանես, յես նեղացա:
Ասաց·— Պա՛պիկ, հա՛-հա՛. մոտեցանք,
Հա՛մա ձեռ ետու զպապկի ճիվ,
Եթալ վեր իր ձիուն,
Առավ, տարավ, մեջ տան եդիր գետին:

Տարավ տուն, հացկերույթյուն արին,
Նստան, զրուցեցին չուր իրիկուն:
Ասաց·— Պապիկ, դու գիտե՞ս՝
Ինչի համար ենք քեզ բերե:
Ասաց·— Հա՛յ կանաչ կտրիճ,
Բա յես գիտե՞մ, յես ի՞նչ գիտեմ՝
Ինչի համար եք ինձ բերե:
Սանասար ասաց·— Հա՛յ պապիկ,
Դեր ալեվոր, մեծ մարդ ես դու,
Աշխարք շատ ման եկեր ես·
Ես տուն մենք նոր ենք շիներ,
Դեռ մեր տուն անուն չունի,
Մեր բերդի անուն չենք գի՛տի՝ ինչ դնենք:
Պապիկ, յես քեզ բերի եստեղ,
Վոր դու անուն դնես մեր բերդին:
Մեր տան անուշ անուն մի դիր,
Տեսնենք՝ ինչ տի դնես տան անուն:
Հալվորն ասաց·— Թող ըլնի:
Ապա դարձավ, հարցուց, ասաց·
— Ձեր հոգուն մեռնիմ, տղաներ,
Ի՞նչ անուն կ'ուզեք, ի՞նչ անուն դնեմ:
Ենոնք ասին·— Հալվոր պապի,
Մեր ուզածով չե· դու քեզ համար ինչ կ'ուզես՝ դիր։

Հետո հալվորն ասաց·
— Հիմի մութն է· առավոտուն ելնենք, ման գանք,
Ցես իրիշկեմ, ենոր գորա անուն մի գտնենք։

Քնեցին։ Առավոտուն հյան վե,
Լվացվան, աղոթք արին·
Հալվոր կուշտ հաց կերավ,
Ելավ, գնաց, բակի մեջ մեկ փռաց, փռաց,
Խորոտ ու գեշ մտիկ հտու,
Դարձավ, ասաց·— Ցես չեմ տեսնա՝
Ձեր տուն քանի մ'ե, վոր անուն դնեմ։
Սանասար ասաց·— Պապիկ,
Արի յես քեզ շալկեմ,
Մեր բերդի չորս բոլոր ման ածեմ,
Դու տես, նոր՝ անուն դիր։

Շալկեց, ելավ դուրս, բերդի բոլոր փռաց·
Հալվորն աշեց են տան չորս բոլոր,
Տեսավ՝ սար մի կո՛ շարած վեր իրարու։
Առավոտուն արևմտյան դռնեն ելավ,
Բերդի բոլոր պըտրտեցուց,
Իրիկուն նոր պրծավ, եկավ. հասավ մոտ են դուռ,
Եկան, կայնան դռան առջեվ։
Իրենք ել եսպես են մտածե·
«Հալվորի գալուն պես ելնենք դիմաց,
Ինչ խոսք ենոր բերնեն ելնի,
Մեր բերդի անուն են թող ընի»։
Ասին·— Պապիկ. ի՞նչ կ'ասես։
Հալվոր նայեց դարգահի վերա,
Եդոր վերին հարկեր տեսավ,
Քարեր հանած եդա բարձր հարկեր,
Տեսավ քարափներ պատ շարած,
Զարմացած մնաց, հարցուց, ասաց·
— Եդո՞ր անուն դնեմ։
Աստված ձեր տուն շինի,
Ցես ի՞նչ անուն դնեմ ես տան։
Աստված բարի տա ձեզ,

Դուք ի՞նչքան ուժ ունիք,
Վոր վեր հաներ եք ես մե՛ծ մեծ քարեր:
Վա՛, ես ի՞նչ սասուն քարեր են,
Դուք են սասուն քարեր
Ի՞նչպես հաներ եք են վերին տեղ,
Ու քարե սան սուն եք զարկե·
Ես տո՛ւն չեք շինե դուք,
Ապա սասուն մ՚ եք շինե:
Վա՛, քանի սասուն բերդ մի·
Ես տուն չե, ես սասուն ե:

Սանասար ասաց·— Բավ ե, պապիկ,
Ել ձեն մի հա՛նի, ել անուն մի՛ դնի·
Ա՛յ պապի, անուն դրվավ,
Անուն եղավ Սասուն:
Քանց եղա ավել ել ի՞նչ անուն:
Վոր դու ասիր՝ սասուն քարեր,
Քարե սան սուն եք զարկե,
Մեր բելդի անուն եղավ Սանսուն, Սասուն:
Մեր տան անուն՝ Սասնա տուն:
Ու են բերդի անուն կոչվավ Սասուն,
Են տան անուն մնաց Սասնա տուն:

Բերդի անուն դրին, պրծան,
Սանասար ասաց հալվորին·
— Պապիկ, ետեղ մնա,
Ցես քեզ խորոտ կը պահեմ:
Հալվորն ասաց·— Աստված վոր կը սիրես,
Ե՛լի ինձ կը տանես, դնես իմ տեղաց վերա·
Են վաթանն ե, ետեղ իմ համբեր չգա:
Սանասար զհալվոր վերուց,
Տարավ, իր տեղ եդիր:

15

Ի՞նչ եր ենոնց սովորություն, արվեստ:—
Երկու աղբեր ցերեկ սարեր ման կը գային,

Կ'երթային, կը հասնեյին չուրի ծովափ,
Վորս կ'անեյին, իրիկուն կը գային տուն:

Ավուր մեկին Սանասար ասաց Բաղդասարին.
— Հա՛յ աղբեր, երթանք ծովու բերան,
Մեկ լավ ձի մեզ համար գտնենք, բերենք:—
Հրեղեն եյին, գիտեյին, վոր ծովու ձի կա:—
Ելան, գնացին ծովու պռուկ.
Երկուս նստան ենտեղ:

Սանասար ասաց Բաղդասարին.
— Աղբեր, արի մեզ տանք վեր ես ծովուն,
Տեսնենք՝ մարդ. կը խրվի՞ մեջ:
Բաղդասար դարձուց, ասաց.
— Աղբեր, հոգին քաղցր ե.
Ցես ինձ չեմ թա՛լի ծով:
Սանասար աղբորն ասաց.
— Լավ, դու կայնի ետեղ, յես կ'երթամ.
Թե յես չընխրվա ես ծովի մեջ. դու ե՛լ արի.
Թե յես խրվա, խեղդվա, դու ել մի՛ գա,
Դու ետեղ վողջ կը մնաս:
Սանասար սիրտ արավ,
Մեկ աստուծու անուն ետու,
Ձինք շալապուտիկ արավ, եքալ ծով:
Աստուծու հրամանքով ծով բացվեց,
Սանասարի աչից առջեվ եղավ չոր գետին,
Բաղդասարի աչից ծով կ'երեվար:
Բաղդասար մնաց ենտեղ ծովու պռուկ,
Հա՛մա կը լար, կ'ասեր.
«Վա՛յ, իմ աղբե՞ր, գնաց ծովու մեջ կորսըվա՛վ,
Իմ աղբեր գնաց ծով, խեղդըվա՛վ»:
Վոր ել գենի չտեսավ,
Ուշքը գնաց կըսկըծու,
Ընկավ ծովու բերան:

Սանասար ծովու մեջ վոր մտավ,
Ինչ չոր գետնի վերա գնաց:

Գնաց, հասավ ծովու տակ մեկ պարտեզ,
Տեսավ՝ ֆոշֆ ու սարսյ մի կա ենտեղ.
Հավուզ մի կա՛ մեջ են պարտեզին.
Են ֆոշֆ ու սարի առջեվ ջուր կը թափի:
Տեսավ Ծովային ձին, Ռուկիկ Ջալալին,
Ենտեղ կապուկ, թամֆ սադաֆին վերան պատրաստ,
Կեծական Թուր վերան կախած:
Նայեց՝ եկեղեցի մի կա ենտեղ:
Ինչ մտավ եկեղեցին,
Ակահ գնաց, թավալեց, ընկավ:
Մեջ ֆնուն երազ տեսավ,
Մայր Աստվածածին եկավ երազ, ասաց.
«Հե՛յ, Սանասար, ելի վե՛ր:
Խաչ Պատերազմին կո՛ եատեղ է.
Ելի՛, յոթ ծունը, աղոթֆ առջեվ արա.
Արժան ըլնիս, ֆեզ կը հասնի,
Դնես վեր ֆո աջ թեվին, վոր դարբ չառնի:
Ծովային ձին, Ռուկիկ Ջալալին,
Ենտեղ թամֆած, սանձին բերան զարկած,
Երկնուց իջած Թուր Կեծակին վերան կախած.
Թե արժան ես, կ'առնես, կը հեծնես:
Ենտեղ մեկ պահարան կա, բա՛ց.
Մեջը շատֆկ զրեհին.
Զրեհի ֆամարն ի մեջֆին,
Գլխու զուտն զրեհին,
Զրեհի կոշիկն ի վոտին,
Ծանրիկ գուրզ փահլեվանին,
Ամուր նիզակ, նետ ու աղեղ,
Փող այլորին, պինդ վահան.
Ամեն ենտեղ է, կ'առնես:
Են դարբասի աղբրի մեջ ել կրլողանաս,
Կը չոջանաս, կը զարանաս, ֆտիրնանաս,
Ֆո ուժ կ'ընի ֆան յոթ,
Մեկն յոթ կը հավելնա, կը լցվիս,
Կ'երթաս ֆո մուրազին կը հասնիս»:
Սանասար ֆնուց զարթնց, նյավ, ասաց.
«Են ի՞նչ երազ եր, յես տեսա.

Տեսնես՝ ուղղո՞ւդ է, թե՞ սուտ է»։
Գնաց ենտեղ, ինչ շանց ետու,
Են պահարան եբաց, տեսավ ենտեղ՝
Ինչ եբազի մեջ սեսեր եր։
Տեսավ մեկ զրեհի զուտ ենտեղ.
Երկու լիտր բամբակ դներ մեջ,
Դներ գլուխ՝ չկայներ.
Մեկ զրեհի մեջկապ ենտեղ,
Ցոթ փաթ եկավ բոլոր մեջաց.
Մի ջուխտ զրեհի կոշիկ ենտեղ,
Մեկ մեկ լիտր բամբակ դներ մեջ,
Հագներ, հալա ջոչ եր։
Եկեղեցուց ելավ դուրս,
Գնաց, մտավ են դարբասի հավուզ, լոդացավ.
Աղբրի ջուր խմեց, ֆնեց.
Քնեց մի ֆիչ, աստծու շնորհֆ առավ.
Զոջացավ, զորացավ, կտրընացավ,
Լցվավ, դարձավ հրեղեն։
Վեր ելավ, են գեստեր կապեց ամեն։

Ըզզրեհի շապիկ հագավ.
Ըզզրեհի ֆամար կապեց,— ֆամսոր մեջֆով եր.
Ըզզրեհի զուտրն եդի գլուխ,— գլխով եր.
Ըզզրեհի կոշիկ հագավ,— վոտֆով եր.
Ամեն գեստեր, գենֆեր առավ։
Ցոթ ծունր, աղոթֆ արավ,
Զթուր կեծակին կապեց վեր իր։
Հրեշտակներ ըզխաչ Պատերազմին
Դրին վեր աջ թեվին,
Վոր դարբ չառնի Սանասարին։

Ելավ, սիրտ առավ, վոր ձին հեծներ։
Քուռկիկ Ջալալին դարձավ, ասաց.
— Հողածին, ի՞նչ կանես, ֆո միտն ի՞նչ է։
Ասաց.— Քե կը հեծնեմ։
Ասաց.— Քե կը տամ արեգական, կ'երեմ։
Ասաց.— Ծովային եմ, ինձ կըտամ ֆո փորի տակ։

Ասաց·— Քե կը տամ գետին, կ'երթաս անդունդ:
Ասաց·— Ծովային եմ, ինձ կը տամ քո քամակ:
Թռավ քամակ, հեծավ ըզձին,
Վոր կը տար արեգական՝ երեր,
Ինք ետու ձիու փորի տակ·
Վոր կը տար գետին՝ երթար անդունդ,
Ինք ետու ձիու քամակ:
Ձին քիչ մ'ել թռավ վեր-վեր,
Դես փախավ ու դեն փախավ,
Կայնավ վեր հետին վոտներին,
Փրփուր ետու վեր բերնին,
Ձկաբցավ ըզՍանասար ձգեր գետին:
Խելացացավ, կայնավ, հնազանդեց,
Ասաց·— Ցես քո ձին, դուն իմ տեր:

Սանասար քշեց ըզձին, բաղչով կ'երթար,
Ե՛լի ճամբին ծով բացվեց,
Մեկ ել տեսավ ծովու երես,
Դուրս ելավ, վոր գա աղբոր մոտ:
Աղբեր գետին նստած կը լար·
Տեսավ՝ մեկ սար ելեր սարի վերա, կը գա:
Ասաց· «Են գազան ինձի կ'ուտի·
Են ըզիմ աղբեր քաշեց ի ծով,
Ըզիս ել տի տանի, քաշի ծով»:
Ձճանչեցավ, վախեցավ, լալով փախավ:
Սանասար կանչեց, ասաց·— Բա'ղդասար, մի փաղխ:
Գնաց, հասավ Բաղդասարին, ասաց·
— Ա՛յ աղա, ինչի՞ կը լաս:
Ասաց·— Ե՛յ, յես չլամ, բա ո՞վ տի լա·
Ցես եմ իմ մեկ աղբեր·
Իմ աղբեր զինք հթալ ծով, գնաց, խեղդըվավ·
Ցես ել մնացի եստեղ մենակ:
Ապս յես չլամ, ո՞վ լա:
Սանասար ասաց·— Ե՛յ, տղա,
Մկա քո աղբեր տեսնես՝ կը ճանչենա՞ս:
— Ապա չե՞մ ճանչենար:
Ասաց·— Ցես քո աղբերն եմ:

— Իմ աղբեր եդիան ջոջ չեր.
Քանց իս մեկ լար մի ջոջ եր:
Իմ աղբեր եդ ձին ո՞ւստ գտավ.
Իմ աղբեր եդա գենքեր ո՞ւստ գտավ:
Հասավ աղբոր գլուխ պաչեց, ասաց.
— Բա՛ղդասար, յես քո աղբերն եմ,
Սանասարն եմ, մի՛ վախենար, մի՛ լար:
Բաղդասարն ել Սանասարի գլուխ պագավ.
Ասաց.— Աղբեր, քանի դու կ'երեվայիր,
Ցես կ'իրիշկեյի քեզի.
Ցերբ դու չերեվացիր, յես նստա, լացի:
Ենոնք իրար գլուխ պագին,
Մեկտեղ ելան, գնացին տուն:

16

Երկու աղբեր նստուկ եյին Սասուն:
Բաղդասար քնուկ եր մեկ գիշեր.
Մեկ ել տեսնի, ի՞նչ տեսնի լավ:—
Ջոջ Կուռք եղավ իծու որինակ,
Եկավ գլխու վերեվ, մըկմըկաց,
Մինչի լուս չթողեց, վոր են քներ, սքրեր:
Մեկ ամիս թամամ եդպես կ'աներ:
Ամիսն վոր լրացավ,
Դեղնուբյուն թափավ Բաղդասարի վերան,
Հիվանդացավ, նիաթ կախեց:
Սանասար հարցուց աղբոր.
— Ինչո՞ւ յես դու հիվանդացե.
Քանի կը բանեյինք, ուրախ եյիր,
Հիմի նոթեր կախեր ես:
Բաղդասար պատասխանեց.
— Աղբեր, դու խաբար չես, յես գիշեր չեմ քնի.
Եդ մեկ ամիս Ջոջ Կուռք չի թողի,
Վոր յես գիշեր քնեմ:
Կ'ըլնի իծու պես, գիշեր կը գա,
Կը տըրնըկի չուր լուս վեր ինձի,
Իմ գլխու վերեվ կը մըկմըկա.

Չի թողի, վոր յես ֆնեմ:
Աղբեր, յես կ'երթամ Բաղդադ,
Կամ Խալիֆան ինձ տի մատաղ անի Զոջ Կոֆին,
Կամ յես՝ Խալիֆային:
Սանասար վերուց, ասաց.
— Աստուծով են չի կարնա մեզ մորթի:
Բաղդասար դարձուց, ասաց.
— Հսմա, աղբեր, ինձի չի պա'տկանի,
Վոր յես մենակ երթամ:
Մեկտեղ երթանք, ըզխալիֆան զարնենք, սպանենք.
Կոֆատուն վառենք, չխուլ մարդիկ թալենք կրակ.
Մեկ ել երթանք մոտ մեր խեղճ մեր,
Տեսնենք՝ ինչպես ե, ինչ կ'անի:

Ելան, ֆանի մի մարդով ընկան ճամբա,
Եդ հաշվին գնացին, հասան Բաղդադ.
Ու ֆաղֆից դուրս մեջ դաշտին
Իրենց վրան զարկին, նստան:
— Բա'ղդասար,— աղբորն ասաց Սանասար.
Դու շուտ գնա, մեր մորն աչֆալուս տուր:

Գնացին, ջուաբ տարան Խալիֆային, ասին.
— Քո աչֆ ի լուս, տղեֆ եկան:
Խալիֆան ուրախացավ, զվարթացավ, ասաց.
— Զորավոր ե մեր Զոջ Կուռֆ,
Իր մատաղներ ֆաշեց, բերեց:
Վերուց, ասաց իր մարդոց.
— Դուֆ ինձ երեսով կը տայիֆ.
Տեսա՞ֆ իմ կոֆերի զորություն.
Զոջ Կուռֆ ֆաշեր, իր մատաղներ բերեր ե:
Մարդիկ ճամբեց, եկան տղեկներուն ասին.
— Խալիֆան ասաց՝ Դուֆ բարի եկաֆ.
Դուֆ գիտցաֆ, վոր իմ կոֆերու որ ե,
Ազիզ որ ե, տի տանեմ ձեզի մատաղ անեմ:
Ասին.— Մենք գիտցանք՝ կոֆեր զոռ են.
Եկանք՝ մեզի մատաղ անի:

Երկու աղբեր մեկել որ ելան,
Գնացին խալիֆայի երես:
Տեսան, վոր են ելեր Դիվանխանի տանիք,
Թեվեր կանքե, կ'երքա ու կը գա:
Վոր զՍանասաը ու Բաղդասար տեսավ, բոռաց.
— Դուք շան լակոտներ, շուն-շանորդիք,
Ո՞ւր անցիք, դո՞ր գնացիք, ինչի՞ շուտ չեկաք.
Դուք չգիտցա՞ք, վոր դոր երքայիք,
Ջոջ կուռք ձեզի կը բերեր:
Ասին.— Հերի՛կ, քե մեռնինք, հերի՛կ, քե մեռնինք.
Վոր մենք մորե ծնվեր եյինք,
Աշխարհ չեյինք տեսե.
Աշխարհ տեսանք, մոռացանք:
Համա արեվելք փախանք, չպրծանք,
Արեվմուտք փախանք, չպրծանք,
Ազատվեցինք քո կռքերու ձեռնեն:
Քո Ջոջ կուռք շատ զորավոր կուռք է,
Գիշերն ել չեր թողնե,
Վոր մենք ենտեղ սրբըրվինք:
Ասաց.— Դե՛ արիք, երքանք կռոց տուն,
Ձեզի մատղեմ իմ կռքերուն:
Ասին.— Թագավոր, ապրած կենաս,
Դու զմեզ տ'անես քո կռքերուն մատաղ.
Մենք թագավորի տղա յենք, մեզ չվա'յելա,
Իսկուն տանես, գաղտիկ-մաղտիկ գենես:
Մենք կ'աղաչենք, վոր դու, ինչքան ժողովուրդ կա,
Ժողվես, բերես ենտեղ,
Վոր տեսնեն ու փառք տան կռքերուն:
Խալիֆան ասաց.— Շատ աղեկ.
Ինչպես որ դուք կ'ուզեք, ենպես կ'անեմ:
Ամեն ել կը ժողվեմ, բերեմ:—
Տղաներ դարձան, եկան իրենց վրան:
Ու գնացին մոտ իրենց մեր:

Խալիֆան թուղթ ուղարկեց, ասաց.
— Իմ երկու լան տի տանեմ,
Իմ կռքերուն մատաղ անեմ.

Եկեք, կոքերուն փառք տվեք:
Քաղաք քաղքով ու գեղ գեղով թափվան դաշտ,
Հազարավոր մարդեր եկան, դաշտ լցվավ.
Ասեղ թալեյին, չեր ընկնի գետին:

Ենոնց մեր, Ծովինար, գիշեր չուր լուս նստավ,
Իր տղեկներն ապով արցունք թափեց:

Սանասար տեղից ելավ, ասաց.
— Բա՛ղդասար, ձիու գլուխ բռնի, յես կ'երթամ:
Վոր յես կանչեմ, ձին ինձ կը հասուցես:
Ասաց, գնաց մոտ Խալիֆան.
Ենի տեսավ, վոր Սանասար կը գար,
Ճանչեցավ, ուրախացավ, ասաց.
— Ե՛յ, մեռնիմ քեզի, Ջոջ Կուռք,
Ի՞նչպես ըզքո մատաղ իր վոտով քաշիր, բերիր:
Հար յերբ ե մնացե,
Զմեկելն ել կը քաշես, բերես իր վոտով:
Ու դարձավ, ասաց.— Ե՛յ, վո՛ղդի,
Քո աղբեր ո՞ւր ե. ինչի՞ շուտ չեկաք:
Սանասար պատասխանեց.
— Իմ աղբեր փոքր ե, հետի-հետի կը գա.
Ինձ տար, զենի՛, չուր իմ աղբեր կը գա:
Ասաց.— Դե կուզ ըլի՛, ըզքե զենեմ:
Սանասար ասաց.— Խա՛լիֆա, ինչո՞ւ,
Մարդ մատաղ սրբի դռա՞ն կը զենի, թե՞ չոլ տեղ:
Երթանք կռատուն, ենտեղ զենի,
Վոր մատաղ ընդունելի ըլնի:

Խալիֆան ասաց.— Հա, վա՛ղլա, քո խոսքն ե:
Խալիֆան սուր ձեռն առավ,
Կանչեց, ասաց.— Արի, վո՛ղդի, երթանք,
Երկրպագություն արա Ջոջ Կռքին,
Վոր ըզքեզի զենեմ, մատաղ անեմ:
Առավ զտղան ու երկուսով մտան կռատուն:
Տղան ասաց Խալիֆային.
— Յերբ մենք գնացինք, պստիկ եյինք,

Մենք զքո կոքի զորություն չզիտեյինք.
Ցես եդոր երկրպագություն չեմ տվե:
Չեմ զիտի, թե ինչպես կը պառկեն առջեվ,
Վոր կոքերուն հաճո ըլնի.
Դե՛ արի, առաջ դու պառկի կռոց առաջ,
Դու կզի, երկրպագություն տուր,
Վոր յես տեսնեմ՝ ինչպես կը տաս,
Ցես ել քեզնե ուսնեմ, ենպես անեմ:
Խալիֆան կզավ, երկրպագություն ետու,
Ասաց.— Ենպես, տղա, ենպես տուր:
Սանասար կուզեկուզ արավ:
Խալիֆան դանակ եհան,
Քաշեց, վոր վիզ կտրեր, մատղեր.
Սանասար տեսավ՝ ուղորդ, վիզ տի կտրի,
Ասաց. «Ցա հացն ու գինին, տեր կենդանին».
Ահուց մ՝ եզար Խալիֆային,
Վոր զնաց իրեք շալապուտիկ
Վեր մեկմեկի ետեվ, շրջվեց ենտեղ:
Զխալիֆան բռնեց, կապեց:

Ենոր մարդիկ ձեն քցեցին քաղաք,
Զորք ժողվեցին, եկան,
Քաղաք քաղքով թափան վերա կռիվ:
Սանասար կանչեց.— Բա՛ղդասար, ձի՛ն...
Բաղդասար ըզձին հասցուց:
Սանասար թռավ, հեծավ ըզձին:
Ասաց. «Այ-վա՛յ, այ-վա՛յ.
Ենոնք ըլնին բամբակ, յես ել ըլնիմ կրակ,
Ենոնք չեմ կարնա վառել.
Ենոնք ըլնին կրակ, յես ել ըլնիմ ջուր,
Ենոնք չեմ կարնա անցնել»:
Ձիուն յեզու եկավ, ասաց.
— Սանասար, ինչի՞ կը վախենաս.
Դու քո աստված կանչի.
Քանի դու քո կեծական Թրով կտրես աջ-ձախ,
Ենքան յես իմ պոչով կը սպանեմ.
Ինչքան դու կեծական Թրով կտրես,

Ենքան յես իմ շնչով կը սպանեմ,
Ենքան ել իմ քամով կը սպանեմ.
Ինչքան դու կեծական Թրով կտրես,
Ենքան յես իմ վոտներու տակ կը կոխոտեմ:

Երկուս թրեր առան ձեռ,
Ու քշեցին երկու աղբեր.
Մեկ երկու դիր գնացին, եկան,
Ձիերու վոտաց փոշին ելավ երկնուց երես:
Ու փրթեցին, ենպես փրթեցին,
Ինչպես ձին իր գարին կտրի:
Ու խալիֆայի մարգեր ընկան,
Խսրի նման փովան գետնին:
Դարձան ձիուց իջան տակ,
Ըզխալիֆան բռնին, բերին մոտ իրենց մեր.
Ձվանով վոտնեն չուր գլուխ փաթթեցին սան,
Տախտակ գլխով անցուցին,
Ճրագ գլխի վերա վառեցին,
Նստան տակ Սանասար, Բաղդասար,
Նռան գինին սեղնի վերա դրին,
Կարմիր գինին աչքի առաջ խմեցին,
Ուրախություն, խնջույք արին:

17

Խարաբ գնաց, հասավ պապին,
Թե Սանասար ու Բաղդասար զորացեր են,
Կռապաշտ խալիֆան բռներ, կապեր են.
Նստած՝ ուրախություն կ'անեն:
Պապիկն ասաց.— Ա՛յ աստված,
Վոր են տղեք տեսնեյի,
Թող իմ հոգին առներ:
Խաչապաշտ Գազիկ թագավորն ելավ,
Թուղթ մի գրեց, ետուր Քամուն, ասաց.
— Իմ թուղթ կը տանես Բաղդադ,
Իմ թոռ Սանասարի ձեռ կը տաս:
Քամին ըզթուղթ երեր,
Ականատից եթալ Սանասարի ձեռ:

Սանասար ըզբուղթ կարդաց.
Պապիկ թղթի մեջ գրեր եր.
«Հազար բարին իմ թոռ Սանասարին:
Վոր ես թուղթ կըհասնի քո ձեռ,
Կլուխդ եդտեղ թրջես, եստեղ կնտես»:
Սանասար Բաղդասարին ասաց.
— Ցես կ'երթամ, խալիֆային բաց չթողնես:
Զձին քաշեց, հեծավ, գնաց պապի տուն:
Պապիկ մոր նմուշի վերա գրոռ ճանչեցավ.
Շա'տ մի ուրախացան, գրուց արին.
Ու շատ խոսքի ընկավ Սանասար,
Մոռացավ ըզմեր ու զիր աղբեր:

Ամեն որ Բաղդասար կ'ելներ, կ'երթար վորսի.
Որ մեկ վերու ոչխար կը բերեր.
Կը գային, կը նստեյին կերուխումի,
Քեֆ-ուրախություն կ'անեյին:
Մեկ ել վոր են գնաց վորսի,
Խալիֆան փաթթած տեղեն՝ ասաց աղջկան.
— Ձե՞ յես խեղճ եմ, քո տուն չավրի,
Փշուր մի իմ կապեր թուլցո'ւ:
Աղջիկ ելավ, զկապեր արձակեց, եդիր ենդին:

Խալիֆան ելավ, ի՞նչ ելավ:
Զամեն տեսավ, ժողվեց:
Գնաց քաղաք, ինչ իշխան մարդ կար մնացած,
Խալիֆայի մարդեր խուրհուրդ արին,
Թե՝ «Ի՞նչ անենք, վոր ազատվինք»:
Իշխաններից մեկն ասաց.
— Սանասար գնացե, մնացե Բաղդասար,
Երթանք, գենի սպանենք:
Մեկն ել ասաց.— Մենք չենք կարնա գենի
սպանենք.

Կանչենք հարսնիք, խմացընենք,
Տանենք, թալենք մեջ փոսին,
Փուշ ու փալաշ ժողվենք վերան, թող մեռնի:
Խալիֆան ասաց իր մարդերուն.
— Եկեք, յոթ ուղտաբեռ քացախ գինի

Լցեք, տարեք Ախմախու սար,
Վոր յես վաղ ըզԲաղդասար խաբեմ, բերեմ.
Ենտեղ գինի տանք ենոր,
Խմացընենք, հարբեցընենք, սպանենք:
Մարդեր ելան եդպես արին:

Իրիկուն Ծուռ Բաղդասար վորսից եկավ.
Տեսավ՝ Խալիֆան արձակած, բան չասաց:
Խալիֆան ասաց ենոր.
— Բաղդասար, գիտե՞ս ինչ կա:
Ասաց.— Ի՞նչ կա, խա՛լիֆա:
Ասաց.— Ինձ թող, երթանք Սեվ սար,
Ենպես վորսի տեղ մի գիտեմ,
Վոր վերու ոչխար, վերու տավար,
Ամեն լցվեր են ենտեղ:
Ինձ թող, վաղ երթանք, ամեն բոնենք,
Մեզ համար ենտեղ ուրախություն անենք,
Ձեվ քո աղբեր յետ դառնա, գա:
Բաղդասար ասաց.— Թող ըլնի, երթանք:
Ենպես Բաղդասարին համոզեց:

Մեկե՛լ որ հեծան իրենց ձիանք, գնացին:
Վոր հասան Ախմախու սար,
Ես դեհեն, են դեհեն, գինու կթխեք ձեռքեր,
«Հազար բարի քե, Բաղդասար»
Ասին, ու չորս դեհեն տվին:
Ինչքան գինի բերին, մարդ չխմեց,
Ամեն տվին Բաղդասարին:
Ենպես Բաղդասարին խաբեցին,
Ցոթն տարվան քացախ գինին գլուխ կապեցին:
Վո՛ր մեկին մեկ թաս գինի տվին,
Ասաց.— Հազար բարին Բաղդասարին:
Բաղդասար կանչեց.— Ձեր հազար կտրվի.
Լցեք տաշտեր, յես խմեմ:
Բաղդասար խմեց, ենպես հարբեց,
Վոր անակահ, անհուշ ընկավ:

Խալիֆան ասաց իր մարդերուն.
— Դե գուրգեր առեք, ելեք վերան:
Առան գուրգեր, եկան սպանելու:
Վախեն հեռվեն կը զարնեյին:
Ենքան զարկին, ենքան զարկին,
Բաղդասարի չորս դեհեն՝
Ենպես խանդակ, փոս շինեցին,
Վոր քառասուն գազ փոս կ'ըլներ—
Աստրծու հրամանքով,
Մեկ գուրզ Բաղդասարին չեր դիպնի:

Սանասար ելավ դուրս, իրիշկեց երկինք,
Տեսավ՝ Բաղդասարի աստղ խավարեր եր,
Իր մտքի մեջ ասաց. «Իմ աղբեր նեղն ե»:
Դարձավ, իր պապիկին ասաց.
— Ավա՛, պապիկ, յես տ'երթամ, իմ ձին քաշեք-
Ցես իմ աղբոր կամ լաշին կը հասնիմ, կամ նաշին:
Պապիկն ասաց.— Քո տուն չավրի.
Քո աղբեր հիմի հանգիստ նստեր ե,
Իր մոր հետ ուրախություն կ'անի,
Կը խնդանա, դուն ել մեզ խնդացու:
Սանասար համբեր չարավ.
Ելավ, ինքն իր ձին քաշեց դուրս,
Հեծավ, աչք խփեց երաց, հասցուց մոր մոտ:
— Մարե, ո՞ւր ե իմ աղբեր Բաղդասար:
Թե.— Խալիֆան առե, տարե գաշտ ու սեյրան,
Գնացած Ախմախու սար ուրախուքեն:
Ասաց.— Ահա՛, իմ աղբեր խաբած, տարած:
Հե՛յ-վա՛խ, իմ աղբեր տի սպանեն:
Ասաց թե չե՝ քշեց, հասավ Բաղդասարին:

Տեսավ՝ Բաղդասար ենպես խմեր ե,
Քոռ հարբած ընկեր ե, ակահ չունի.
Ենոնք ել առած գուրզեր, թրեր,
Եկած են, չորս կողմեն կը զարնեն, վոր սպանեն:
Ինքն ել աստծու անուն ետու,
Ծռանակ ընկավ մեջքեր,

Ու ծանրիկ գուրզ մի իջավ,
Ու զԲաղդադու խալիֆան՝
Ցոքն գազ գետին վե՛ իջուց,
Զխալիֆան, զենոր մարդեր ամեն սպանեց:

Գնաց, կայնեց աղբոր վերա,
Ջուր ելից գլխուն, գլուխ լվաց, սիրտ մաժեց,
Վոր հարբեցություն թողնի, լրջանա:
Կանչեց·— Բաղդասա՛ր, Բաղդասա՛ր:
Ուշֆ եկավ աղբոր վերան·
Գլուխ վերուց, ասաց·
— Հա՛յ, ֆո տուն չավրի:
Ինչ աղեկ ֆներ եյի· չթողիր՝ յես ֆնեմ:
Ասաց·— Ֆո տուն չավրի·
Մի յե՛լ, ֆո չորս բոլոր աչֆի:

Ելան երկու աղբեր, եկին ֆաղաֆ:
Բաղդասար կանչեց, ասաց·
— Վորն որ ե՛ն կը հավատա, ինչ յես կը հավատամ,
Թող գա անցնի իմ թրի տակով:
Ֆաղաֆ ֆաղֆով թափան, եկին,
Անցան ենոր թրի տակով:

Ենոնց մերն ել, Ծովինար խանում,
Կզավ վեր ֆիթ ու բերնին,
Երկրպագություն արեց ու ասաց·
— Գոհանամ ֆենե, երկնի ու երկրի ստեղծող,
Վոր ըզմեզի ու մեր ժողովուրդ
Ազատ արիր են զալումի ձեռնեն:

18

Մի ժամանակ նստան ենտեղ:
Հետո ելան, առին իրենց մեր ու զֆեռմեր,
Ու դեմ արին, եկին դեհ Հայաստան:
Եկին, Գազիկ թագավորի ֆաղֆին մոտեցան,
Մեկ աղբրի վերա վրան դրին, նստան:

Տեսան, վոր են դեհեն մեկ մարդ կը գա,
Կանչեցին, ասին ենոր.
— Գնա թագավորին աչքալուս.
Շատ բարով տար ենոր ու Քեռի Թորոսին,
Ասա՝ Ձեր Ծովինար ու իր երկու տղան
Վողջ-առողջ եկած, աղբըրի մոտ նստած են.
Աչք ձեր ի լուս ըլնի:

Գագիկ թագավոր ու Քեռի Թորոս
Ելան, եկին ենոնց առաջ:
Եկին, ընկան իրար վզով,
Պագին իրար, լացին ու խնդացին,
Կերան ու խմեցին, ուրախություն արին:
Թագավոր ու Քեռի Թորոս ասին.
— Դեհ, ելեք, երթանք քաղաք:
Խոսք մեկ արին, գնացին քաղաք,
Իջան թագավորի պալատ:
Ցոթն որ, յոթ գիշեր ուրախացան:

Սանասար վերուց, ասաց թագավորին.
— Քեռեհե՛ր, յես մեկ բան կը խնդրեմ քենե:
Ասաց.— Ի՞նչ կը խնդրես:
Ասաց.— Մեկ տեղ մենք մեզ համար
Մեկ տուն ենք շինե, երթանք ենտեղ:
Թագավոր դարձուց, ասաց.
— Վո՛րդի, յես տղա չունիմ,
Ցես կը մեռնիմ, իմ թագավորություն
Ձեզ կը մնա, կ'ըլնի ձեր տուն:
Ասին.— Ձե՛ր, թագավոր, ապրած կենաս,
Եկանք, ձեզի տեսանք,
Գոհություն աստծու, վողջ-առողջ եք,
Ուրարուց կարոտ առանք, կ'երթանք մեր տուն:

Պատրաստություն վոր տեսան,
Մերն իր երկու վորդուն խրատ ետու.
— Վո՛րդիք, թագավորից ես բան ուզեք.
Ասեք, թե՝ Ծովասար, Մարաթկա ջուր,

Ճապաղջրի Բաժն ու Քոդեն տուր մեզ:
Թե երդվավ՝ «Հացն ու գինին, տեր կենդանին»,
կը տա:

Սանասար ասաց թագավորին.
— Մեկ բան ել կը խնդրենք քենե:
— Վո՛րդիք, ասաց թագավոր,
Մեր հոգուց զատ՝ ինչ որ կ'ուզեք,—
Հացն ու գինին, տեր կենդանին,— կը տանք:
Ասին.— Ծովասար, Մարաթկա ջուր,
Ճապաղջրի Բաժն ու Քոդեն տուր մեզ:
Ասաց.— Տվինք, վո՛րդիք:

Ելան Ծովինար թանում ու իր տղեկներ,
Հեծան, ճամբա ընկան ու գնացին.
Ու Քեռի Թորոս ել իրենց հետ գնաց:
Ընկավ իրենց առջեվ Սանասար,
Ու գնացին, ելան վեր Սասնա բերդին:

Սանասար շատ զորընդեղ մարդ եր.
Սեվ սարի բոլոր ու չուրի Ծծմակաքիթ՝
Մշու վերնվով պարիսպ քաշած,
Ելած եր չուրի Սեղանսարու գոտին իվե՝
Ճապաղջրու Դուրան, Մուրադ գետի բերան,
Ու զեդ ամենն ել տիրապետեց:
Զորս դարգահ ել թողեց իր բերդին,
Ու միշտ հանապազ կը զարկեր զիր դարգահ,
Ու կը հեծներ զիր ձին, զԲուռկիկ Ջալալին,
Ու ինչքան զել ու զազան ըլներ, կը բռներ:
Որերուց որ մ' ել զարկեց, գնաց չուրի Մսըր,
Ջուրի Բաթմանա կամուրջ, չուրի Անգղա ձոր:

Ենպես փահլեվան եղավ Սանասար,
Վոր ենոր ձեն աշխարք բռնեց:
Շատ մարդեր վոր լսեցին, ասին.
«Ա՛ղբեր, մենք նստեր ենք եստեղ, ի՞նչ.
Դող մարդեր ամեն ժամանակիկ՝
Կը գան, մեր ապրանք զարնեն, կը տանեն:

Ըհը՛, են աստվածը, մենք կ'երթանք եդա Սասուն,
Վոր Սանասարի, Բաղդասարի պես՝
Երկու զորեդ փահլեվան կա,
Վոր եդ տեղի մարդոց վոչ հարկ կ'առնեն, վոչ տուրք,
Վոր մեկ մարդ մեր ապրանք չզարնե տանի»։
Հա ֆիչ ֆիչ, հա ֆիչ ֆիչ զնացին ենոնց մոտ.
Շատացա՛վ, մե՛ծ ֆաղաք եղավ Սասուն։

Սանասարի -ցեվ Բաղդասարի ամուսնությունը

1

Ողորմի տի տամ, ողորմի
Են խանում Ծովինարին.
Ողորմի տի տամ, ողորմի
Են Սանասարին, Բաղդասարին.
Ողորմի տի տամ, ողորմի
Են Դեղձուն-Ծամին.
Ողորմի տի տամ, ողորմի
Ականջ արողներու անցավորներին.

2

Խաբար վո՞ր դուց տանք:—
Խաբար Պղնձե քաղքից տանք,
Քաջանց թագավորի աղջկանից տանք:

Սանասար-Բաղդասարի անուն բարձր ելավ.
Ենոնց ձեն ընկավ բոլոր երկիր,
Թե եսենց, եսենց, եսենց.
Երկու կտրին կա Սասուն:
Սանասարի քաջությա՛ն ձեն վոր ելավ,
Խոսք ու զրուց գնաց, հասավ Պըղնձե քաղաք,
Հասավ Քաջանց թագավորի աղջըկան,
Քառսուն-Ճուղ-Ծամ Դեղձուն-Ծամին:

Եղ թագավոր երկու աղջիկ ուներ,
Եվ մարդ չկար ենոր:
Դեղձուն աղջիկ կախարդ էր, հմայիչ էր:
Մեջ երազին զինք տեսավ Սանասար,
Ու շա՛տ սիրու տեր եղավ վեր ենոր:
Աղջիկն իմացավ ես բան, ասաց.
«Ենա մարդու սնուն կտրին է.
Յես ենոր թուղթ մի տ՝ուղարկեմ,
Են գա, յես հավանիմ, զեն առնեմ»:

Ես Պղնձե քաղքի թագավորի աղջիկ
Մեկ կուժ լիք ջուր ելից, խնձոր բերան եդիր.
Մեկ կուժ ել դատարկ՝ խնձոր բերան եդիր,
Ելավ, մեկ թուղթ գրեց Սանասարին:
Թղթի մեջ գրեց.

«Քաջանց թագավորի աղջիկ Դեղձուն-Դամից՝
Շատ բարեվ Սանասարին.
Շատ բարեվ Բաղդասարին. Սանասարին:
Սանասա՛ր տղա,
Յես Պղնձե քաղքի թագավորի աղջիկն եմ:
Իմ սի՛րտ՝ քանց ետա դատարկ կուժ սար-սո՛ւրբ է.
Իմ գլո՛ւխ՝ քանց ետա լիք կուժ լաի-լի՛քն է.
Աստրծու շնորհքով լցուկ եմ:
Շատեր եկած իմ վերա, ինձ ուզելու.
Քառասուն տեղե քառասո՛ւն մարդ է եկած,
Յես խոսք չեմ տվե, յես հա չեմ ա՛սե.
Երազով ըզքեզ տեսեր եմ, արի ինձի ա՛ռ.
Ինձի շա՛տ դուր կը գաս դու:
Սանասա՛ր տղա,
Ես թուղթ կը գրեմ քե՛զ համար.
Զուր յե՞ռը յես տի մնում ետեղ քո սպով.
Դլուխ թացեր ես, չկնտես,
Արի, ինձի տար քեզ համար»:

Գրեց, իր պատկեր եդիր մեջ թղթին,
Կանչեց երկու աղջիկ,

Կապեց ենոնց թեվքերուն,
Ասաց·— Կը տանեք Սասուն քաղաք,
Տան երդիսեն կը քցեք
Սանասար տղի տեղաց վերա,
Կժեր կը դնեք ենոր սնարքին,
Վ.որ առավոտուն ելնի, տեսնի:
Ցերբ որ ենի կտրի՛ն մարդ է,
Թող գա, ինձ իր համար տանի:
Զըլնի՛մ, չիմանա՛մ, ասաց,
Վ.որ թալեք Բաղդասարի երդիսն վեր:

Եդ աղջիկներ կախարդ էյին·
Հավքեղեն հայավ հագան,
Եղան երկու սիպտակ աղունիկ·
Թռքռալեն բերին Սասուն ըզքուղք,
Եկան, իջան Սասնա Տան տանիքի վերան:
Ակաղոմ երդիսի վերա գնացին·
Տեսան, վոր մեկ տեղաց շոր է քցած,
Մեկ ջահել-ջիվան տղա մեջ քներ է, քրտներ է,
Ենքան կարմրեր, արեվուն կ'ասի·
«Դու դե՛ն գնա, յե՛ս առաջանամ»:
Մեկ գույգ մոմակալ գլխին կը վառվի,
Մեկ գույգ մոմակալ վոտներին կը վառվի:
Թուղք բերողներից մեկն ասաց·
— Ա՛յ քուրս, արի երթա՛նք,
Են մեկե՛լ երդիսի վերա աչքենք,
Կարելի յե, Սանասար տղան եդ չի:
Գնացին են մեկել երդիսի վերա·
Տեսան մարդ մի քներ է շորերի մեջ·
Աչքեցին, տեսան ենպես է քրտնե,
Վ.որ եսի են տղից տասնապատիկ ադեկ է:
Քուրն ասաց·— Քո՛ւրքս, ես է Սանասար տղան,
Ըզքուղք թալենք ես երդիս վե՛ր:
Մեկել քուրն ասաց·— Աղջիկ, են ա՛ստվածը,
Ես մարդ ել շատ աղեկ մարդ է·
Զեմ գի՛տի՝ ե՞ս է Սանասար,
Թե՞ են մեկելն է Սանասար:

Ձիմացան՝ վարն է Սանասար.
Տարան, թալեցին աջակողմ երդիս վե՛ր,
Դրին Ծո՛ւռ Բաղդասարի տեղաց վերա:

3

Բաղդասար առավոտուն քնից վեր ելավ,
Շորեր հագավ, իրիշկեց, տեսավ՝
Թուղթ մի կո՛ ենտեղ է, իր տեղաց վերա:
Ըզթուղթ առավ ձեռ, եքաց, կարդաց.
Տեսավ՝ Բաջանց թագավորի աղջրկա գի՛ր.
Թղթի մեջ գրած՝ «Շատ բարեվ Սանասարին,
Շատ բարեվ Բաղդասարին, Սանասարին»:
Ասաց. «Ես ի՞նչ բան է. երկու դիր՝
Բարեվ գրե Սանասարին, մեկ դիր՝ ինձի:
Լա՜վ. Սանասար ջոջ աղբերն է,
Առաջ ենոր է գրե. են լավ է:
Ինչո՞ւ երկու դիր գրե ենոր»:
Կարդաց, տեսավ՝ Բաջանց թագավորի աղջիկ
Սանասարի համար գրեր է մեջ թղթին.
«Արի ինձի ա՛ռ», «արի ինձի տա՛ր»:
Բաղդասարի հետ ծուռ երակ մի կար.
Ըռըկավ, ասաց. «Ուր՜յ. իմ աղբեր կնիկ ուզեր.
Առանց ինձի կր պսակվի, ինձի չի հա՛րցնի.
Ինձի բանի տեղ չի դնի»:
Ասաց. «Ջանր՛ա, մենք աղբեր ենք.
Ես յե՞ր ենք խոսք տվեր է, ինձի չա՛սիր.
Սանասար գաղտիկ բան մի կանի»:
Ըռըկա՜վ, նստավ վեր իր տեղաց.
Ձեռա՛վ դուրս իր սենեկից:
Տեսավ թղթի մեջի պատկեր,
Հա՛ռա խելք գնաց, արուն քթից փրթավ, եկավ:
Ասաց. «Կամ իմ աղբե՛ր տի մնա ժի՛ր, կամ յե՛ս»:
Ըզթուղթ ծալեց, եդիր իր ծոց:
Մեջ իր սրտին արավ խոց.
Հետ Սանասարի զրուց չի տար.
Սանասար ինչ կ'ասի՝ պատասխան չի տար:

Առավոտուն ելան, եկան,
Սուփրեն բացին, նստան հացկերույթյուն.
Տեսան՝ Բաղդասար տղան չեկավ:
Բաղդասար ըռըկեր, նստեր ենտեղ,
Ձե՛լնի դուրս իր սենեկից.
«Ե՛յ-հա՛յ, կ'ասի, իմ աղրեր ի՞նչ բերախտ աղրեր ե.
Առանց ինձի գործ կը բռնի:
Վոր եդպես ե, վոչ ենոնց սեղան կ'երթամ,
Վոչ ենոնց հաց կ'ուտեմ:
Տ'ելնեմ, իմ ձին հեծնիմ,
Երթամ ուրիշ երկիր, կորուսիմ,
Տեսնեմ՝ աստված ինձ ինչ կըտա»:

Ենոր մերն ասաց. «Ես ի՞նչ ե,
Բաղդասար ինչո՞ւ չեկավ»:
Ելավ, եկավ վեր սենեկի դռան,
Ըզդուռ եբաց, եկավ մեջ սենեկին, ասաց.
— Բա՛ղդասար, ինչո՞ւ չեկիր՝ քո հաց ուտես,
Եդ ի՞նչ ե եղե քեզ, չըլնի՞ հիվանդ ես:
Բաղդասար ասաց ենոր.
— Մարե, դու իմ մեր չըլնեյիր, ուրիշ ով ըլներ:
Ես դուռ բանար, գար նե՛րս,
Ցես զեն կտոր-կտոր կ'անեյի:
Ասաց.— Ինչո՞ւ, ի՞նչ ե եղե քեզ:
Ըզթուղթ եհան, ետու մոր ձեռ, ասաց.
— Մարե՛, առ ես թուղթ, կարդա՛,
Տես՝ ինչու չեմ իգա հաց ուտեմ.
Ի՞նչ սրտով տի գամ, սեղան նստեմ.—
Իմ աղրեր կնիկ ուզեր ե, ինձ իմաց չարեր:
Ինչո՞ւ, յես մարդ չե՞մ, թող ինձ հարցներ,
Նոր՝ ենպես աներ, նոր՝ պսակվեր:
Ելի՛, գնա՛, Սանասարին ասա՝
Կամ ե՛ն տի մնա ժիր, կամ յե՛ս:
Մեր ըզթուղթ առավ, կարդաց.
Ասաց.— Վորդի, յես խաբար չեմ,
Քանց քեզ շատ ըռըկա եդ զործեն:
Ըզթուղթ առավ, եկավ մոտ Սանասար,

Են թուղթ ետու Սանասար տղին,
Ասաց։— Ա՛ռ քո թուղթ։
Սանասար առավ, կարդաց։

«Քաջանց թագավորի աղջիկ Դեղձուն-Ծամից՝
Շատ բարեվ Սանասարին։
Շատ բարեվ Բաղդասարին, Սանասարին։
Սանասա՛ր տղա,
Ցես Պղնձե քաղքի թագավորի աղջիկն եմ։
Իմ սի՛րտ՝ քանց ես դատարկ կուժ սար-սո՛ւրբ ե։
Իմ գլո՛ւխ՝ քանց ես լիք կուժ լափ-լի՛քն ե։
Աստըծու շնորհքով լցուկ եմ։
Շատեր եկած իմ վերա, ինձ ուզելու։
Քառասուն տեղե քառսո՛ւն մարդ ե եկած,
Ցես խոսք չեմ տվե, ցես հա չեմ ա՛սե,
Երազով ըզքեզ տեսեր եմ, արի ինձի ա՛ռ։
Ինձի շա՛տ դուր կը գաս դու։
Սանասա՛ր տղա,
Ես թուղթ կը գրեմ քե՛զ համար։
Զուր յե՞րբ ցես տի մնամ ետեղ քո ապով։
Գլուխ թացեր ես, չկնտես,
Արի, ինձի տար քեզ համար»։
Ըզթուղթ կարդաց, երդվեցավ, ասաց։
— Մարե՛, ցես քո աստծուն մեղա։
Ցես եդ բանից խաբա՛ր չեմ։
Մերն ասաց։— Քո աղբեր քենե խռովեր ե։
Սանասար ասաց։— Ցես ի՞նչ անեմ։
Են աղջիկ կախարդ ե, հմայիչ ե։
Մեր անուն լսե, ետա թուղթ գրե։
Ի՞նչ անեմ, վոր դա եդպես ե։
Վոր իմ աղբեր ըռըկեր,
Ենի փշուր մի ծուռ ե։
Գնա՛, անուշքյունով ենոր ասա՛։
Թե վոր իր բարկուքյուն իջավ՝ աղեկ։
Թե չե՝ թոդ գա դարբ մի երկու զարնի ինձ,
Իր հավաս անցնի, իր փոր հովնա։

Մեր գնաց, անուշքյունով ասաց Բաղդասարին.
Բաղդասարի բարկություն չիջավ:

Են իրիկուն Սանասար դրսեն եկավ տուն.
Բարեվ ետու, Բաղդասար չսռավ:
Ասաց.— Ա՛ղբեր, ինչի՞ յես նեղացե:
Բաղդասար ասաց Սանասարին.
— Կամ յես քեզ տի սպանեմ, կամ դու՝ ինձ:
Սանասար հարցուց.— Ինչո՞ւ, պատնառ ի՞նչ:
— Ապա ինչո՞ւ Բաջանց թագավորի աղջիկ
Երկու դիր քե՛զ բարեվ գրե, մեկ դիր՝ ինձ:
Ասաց.— Ա՛ղբեր, բա ի՞նչ անեմ, են ե գրե:
— Չե, ասաց, յես դու տի կռվե՛նք:
— Ինչի՞ կռվենք, մեկ դատարկ բարեվի՞ համար:
Բաղդասար ասաց.— Դու զաղտիկ բան մի կ'անես.
Դու թուղթ մի ուղարկեր ես են աղջկան.
Ինչո՞ւ դու ինձ չես ա՛սի:
Սանասար ասաց.— Աղբեր, են ա՛ստվածը,
Յես ենոր թուղթ չեմ գրե:
Բաղդասար ասաց.— Չե՛, յես դու տի կռվենք,
Յես դու տի կուշտի կպնենք, իրար զարկենք:
Ասաց.— Աղբեր, յես չե՛մ զարկի քեզի.
Դու զարկի՛, ինձի սպանի՛:
Ինչքան ասաց, հնարք չեղավ աղբոր հետ:—
Ինչու վոր ենիկ հաստակող եր, երակ ծուռ եր.
Ենոր կ'ասեյին Ծուռ Բաղդասար:

4

Վերջն ինք զինք ասաց Սանասար.
«Ելնեմ, իմ աղբեր առնեմ, երթամ դա՛շտ.
Երթանք են չիման տեղ, քիչ մի խաղամ հետ,
Փշուր մի ձիաթոդս խաղանք,
Բալքի ենոր սիրտ իջնի»:
Ելավ, առավ իր աղբեր, գնաց:
Վոր հասան դաշտ, են չիման տեղ,
Ջիուց իջան, հասան իրար, կպան,

Առին կուշտի— գոտեկոիվ·
Ձեռ թալեցին իրար փողպատ,
Ձուր կեսորին գիրար տրորեցին:

Մերն ասաց· «Ի՞նչ եղավ, եսոնք չեկան»:
Վոր տնեն ելավ, ենոնց ձեն ընկե քարեր,
Գետին թունդ կ'առներ ենոնց վոտաց տակ:
Գնաց, տեսավ ենոնց հալ·
Ծնկներ տփեց, կատամ կոտրավ·
Նստավ ենտեղ մտիկ արավ·
Վոչ ե՛ն զեն կը հաղթի,
Վոչ ե՛ն զեն կը դնի գետին:—
Են ինչ Սանասարն է, հանաք կ'անի·
Են ինչ Բաղդասարն է, սրտանց կը զարնի:

Մեր տեսավ, վոր Բաղդասար նվազավ,
Ուժըն պակսավ, առավ հաղթվել,
Ելաց, բոռաց իր ձենով կանչեց·

«Ո՛ սարեր, ո՛ քարեր, ո՛ թփեր*),
Ձուար տարեք քեռուն,
Թող գա, հասնի իր փահլեվաններուն»:

Մեկ ժամ ել մտիկ արավ,
Տեսավ, վոր Բաղդասար գահ ա ընկնի,
Ելաց, կանչեց·

«Ո՛ ծովեր, ո՛ դրնդեղներ*),
Ձուար տարեք քեռուն,
Թող գա, հասնի իր քեռորդիներուն»:

Ձուր իրիկուն գիրար չըխչըփեցին·
Վոչ ե՛ն զեն եդի գետին, վոչ ե՛ն՝ զեն:
Իրիկուն թողին, եկան տուն:
Բաղդասար ճամբին ասաց աղբոր·

---

*) Ցերդ է:

— Վաղն ել գանք, հասնինք իրար։
Եկան տուն, քնան չուր լուս։

Առավոտուն ելան, հաց կերան.
Ելան, իրենց ձիանք քաշին դռ'ուս,
Իրենց գուրզեր առին,
Իրենց վահաններ կապեցին վեր իրենց,
Ձիանք հեծան, գնացին մեյդան կռիվ։
Իրենց մերն ել գնաց հետքեր.
Նստավ ենտեղ, ելաց.
Անեծք ետու կախարդ աղջկան, ասաց

«Բարի չտեսնի պատճառ ըլնող.
Առավոտ լուսաթաթախ իմ երկու տղաք՝
Մեկմեկու փողպատ եհան.
Տի զարկեն, գիրար խեղեն»։

Երկու աղբեր ձիաթողս խաղացին գուրզով,
Գուրզ կը զարկեն մեկմեկու։
Սանասար կայնեց նշանքարի գլուխ,
Բաղդասար գուրզ առավ, եզար,
Սրտից եզար Սանասարին, վոր սպանի.
Գուրզը գնաց գլխու վերեն։
Սանասար բռնեց ըզգուրզ,
Յետի եթալ, աղբոր մոտ չհասցուց։
Աղբեր առավ, մեկ ել եզար։
Սանասար ելի բռնեց, մեկ ել եթալ։
Սանասարն է, սիրտ մաքուր է, պարզ է.
Սրտե դարբ չգա'ռնե Բաղդասարին,
Ձուզե՝ զարկի աղբոր.
Մենակ իր վահան կը տա առջեվ դարբին,
Ձթո'ղնի, վոր դարբ դիպնի իրեն։
Բաղդասար ինչքան ուժ ունի,
Կը զարնի Սանասարին.
Կ'ուզի զՍանասար ձիուց բերի տա'կ.
Կ'ուզի տեղնուտեղ մեկ դարբով զաղբեր սպանի,
Ան ինչ Սանասարի գուրզ բարձր կ'անցնի։

Սանասար իր միտ վեր կ'ասի.
«Բալֆի դադարի ինձեներ»։
Բաղդասար չդա՛դարի, հա կը զարկի։
Սանասար ինք զինք կ'ասի. «Զդա՛դարի»։
Կռիվ արին չուր կեսորին,
Զուր կեսոր կոտրավ իրիկվան։

Սանասար ինք զինք ասաց.
«Դեռ իր բարկություն չի՛ջնի։
Զանը՛մ, յես քանի կը տեսնեմ՝
Են ինձի սրտե դարբ կը զարնի։
Նայինք՝ իմ աղբեր իմ չափ ուժ ունի՞,
Վոր կը զարնի ինձ սպանելու,
Յես ենոր դարբի առջեվ կ'առնեմ,
Զդի՛պնի իմ ջանին։
Տեսնենք՝ յես ե՛լ դարբ մի զարկեմ ենոր,
Են ել կարնա՞ դարբի առջեվ առնի,
Դեմ տա, դիմանա առջեվ իմ դարբին»։

Սանասար մեկ դարբ, թերե՛վ դարբ մի.
Ուշիկ եզար Բաղդասարին.
Բաղդասար վահան ետու առջեվ,
Զկարցավ դարբի առջեվ առնի։
Դարբ դիպավ, զաղբեր ձիուց եբեր տա՛կ։
Սանասար բռռաց, ասաց.
«Վա՜խ, ես ի՞նչ արի. իմ ուժի չա՛փ,
Իմ ձեռաց դայդեն չիմացա.
Զարկեցի, իմ աղբեր սպանեցի»։
Ձիուց իսկուն իջավ տակ,
Ինք ե՛ն կողմեն եկավ, մեր՝ մե՛կ դիեն,
Լալելեն եկին, զիրքենք զարնեցին վերա.
Տեսան, վոր չեր մեռե,
Գուրզ դիպե ենոր մեկ վոտաց,
Խելք գնացե, ընկե ենտեղ։

Սանասար շալկեց աղբեր, եբեր, եքալ տաւն։
Ձեռ տարավ. ենոր սիրտ մաժեց, պորտ ոլորեց։

Աչքեց՝ պատկերն ի ջեր կա...
Նստավ, չուր լուս ելաց:
Լուս վոր բացվավ, աղբոր ուշք եկավ վերան,
Ելավ, նստավ, Սանասար հարցուց.
— Աղբե՛ր, եդ ի՞նչ եղավ, դու եդպես եղար:
Ասաց.— Վոտս ցավաց, իմ խելք գնաց:

Սանասար ասաց.— Աղբե՛ր,
Ես պատկե՞ր, ես թո՞ւղթ ասլով ե վոր ըռըկեր ես,
Հետ ինձի զրուց չես իտա.
Ցես մեռնիմ քո աչք-երեսին,
Ինձ պետք չե՛, գնա բեր քե՛զ համար:
Բաղդասար ասաց Սանասարին.
— Ա՛ղբեր, յես չգիտեյի,
Վոր դու քանց իս եդքան ուժով եյիր:
Արի հաշտվինք. դու վեր ինձի կտրին ես.
Ինձի թորա. ել յես վեր քեզ ձեռ չվերցեմ.
Ցես քո պստիկ աղբեր, դու իմ ջոջ աղբեր.
Ինչ վոր ասես՝ յես քեզ կը լսեմ:
Ցես քեզ դաստուր տվեր եմ,
Ելի՛, գնա, են աղջիկ ա՛ռ, բե՛ր քեզ համար:
Սանասար ասաց.— Ցես չեմ գնա, բերի.
Դո՛ւ գնա, բեր քեզ համար:
Բաղդասար ասաց.— Դե, մի՛ դադրի,
Ելի՛ քո պատրաստուբյուն արա,
Քո ձին հեծի՛, քո աստված կանչի՛, գնա՛:
Սանասար ասաց.— Ցես չեմ գնա, բերի.
Են կախարդ ե, են հմայիչ ե:
Բաղդասար ասաց.— Ելի՛ գնա, բե՛ր, քեզ կ'ասեմ:
Են լսեր ե՝ մենք ջոջ մարդ ենք.
Են մեր ձեն լսեր ե, մեզ թուղթ ուղարկեր ե:
Վոր դու չերթաս, են աղջիկ բերես,
Մենք ել կ'ըլնինք պստիկ.
Տ'ասեն՝ ենոնց ձեռեն չեկավ,
Երթային, աղջիկ մի իրենց համար բերեն:
Անկարելի՛ բան ե՝ չերթաս, բերես:
Ելի՛, գնա, բեր զեն աղջիկ:

5

Սանասար գնաց մոտ մեր, Ծովինար խանում,
Ասաց։— Մարե՛, իմ պատրաստություն տես,
Ցես պիտի երթամ Բաջանց երկիր։
Են լուղք եկեր իմ հետեվ։
Մերն ասաց։— Վ.ո՛ւրդի, մի՛ երթա,
Են Բաղդադու երկրեն հազիվ փրթանք, եկանք։
Տղան ասաց։— Չե՛, պիտի երթամ,
Թե վոր իմ գլուխն ել գնացեր է։

Մեր՝ պատրաստություն տեսավ, պրծավ։
Սանասար ել ինչ տ'երթար,
Մոր ձեռ պազավ, կաց-բարին արավ։
Թռավ իր ձին հեծավ,
Ելավ, կայնավ ճամբի վերա, կանչեց
— Բա'ղդասար, հոգուդ մեռնիմ,
Արի՛, ըզքեզ տեսնեմ։
Ա'ղբեր, դու կաց եստեղ,
Կո՛ յես կ'երթամ հետեվ են աղջըկան։
Իրեք ավուր վերա վոր յես եկա՞՝ ե'կա,
Վ.որ չեկա՝ նեղուրնի մեջ կ'ընիմ։
Կը գաս հետեվ ինձի ոգնություն։
Հետ իրարու ներում արին,
Հալալություն ուզին իրարուց,
Մատանիներ հետ մեկմեկու փոխեցին։
Կաց-բարով արավ ու գնաց։

Թե վոր քառսուն ավուր ճամբա յեր,
Ենի քշեց, գնաց մեկ որեն։
Հասավ ճամբա-խառնուրդի մի մեջ։
Տեսավ՝ մեկ ծեր, ալեվոր մարդ մի նստե ենտեղ։
Ասաց։— Բարե՛վ քեզ, հե՛րացու։
— Աստծու բարին քեզ, Սանասար, ասաց հալվոր։—
Դե՛ ձիուց իջի՛ր, քեզ խոսք ունիմ ասելու։
— Պա՛պիկ, ասաց, դու ո՞վ ես,
Վոր ինձ կըճանչենաս, թե Սանասարն եմ։

Ասաց։— Յես եմ հրեշտակն աստծուն,
Վոր ետեղ նստեր եմ, ճամբաներ կը բաժնեմ։
Դո՞ր պիտի երթաս, Սա՛նասար։
Պատասխանեց։— Կ'երթամ Քաջանց երկիր։
Ինձ մեկ բարի ճամբա նշանց տուր։
Են ել ասաց։
— Թե ես ճամբան երթաս,
Կ'ընկնիս մեծ թագավոր։
Թե վոր մեկել ճամբան երթաս,
Կ'ընկնիս վանառական։
Ահա թե վոր երթաս Քաջանց երկիր,
Ենտեղ վնաս կը քաշես։
Սանասար ասաց։— Ենտե՛ղ պիտի երթամ,
Թե վոր գիտնամ՝ իմ վիզ իրեք տեղով կտրեն։
Թե վոր ուրիշ խրատ ունիս, ինձ ասա։
Են ել ասաց։— Վորդի, վոր կ'երթաս,
Ինչ որ քեզ ռաստ կը գա,
Թե քար, թե թուփ, թե անասուն, թե գազան,
Ամենո՛ւն ել բարեվ տա՛ս,
Առանց բարեվ տալու չանցնե՛ս։
Թե վոր առանց բարեվի անցար,
Են Քաջանց երկիր հմայքի երկիր է,
Քեզ շա՛տ վնաս կը տա։
Սանասար ասաց։— Մնացի՛ր բարի։
Ելավ, հեծավ, հա՛մա քշեց դեհ Քաջանց երկիր։

Դնաց, շատ-քիչ աստված գիտի,
Մեկել Քաջանց թագավորի հող դուրս եկավ,
Տեսավ մեկ հովիվ ոչխարներու առաջ։
Մի՛ ասի՝ եդ հովիվ թագավորի հովիվն է,
Ենոր փահլեվաններից մեկն է։
Կանչեց, Սանասարին ասաց։
— Ա՛յ կանաչ կտրիճ, եդ դո՞ր կ'երթաս։
Ասաց։— Կ'երթամ Քաջանց թագավորի քաղաք։
Ասաց հովիվ։— Արի՛ նստի՛ ետեղ,
Կաթ մի կթեմ, կե՛ր, նո՛ր ելի՛, գնա՛։
Ասաց։— Չե՛, յես վռազն եմ, յես կ'երթամ։

Հովիվ ասաց·— Եստեղեն երթացողին,
Հնար չկա, անկաթ–ուտել չեմ թո՛ղնի երթա։
Զոռով նստեցուց ըզՍանասար։
Ենոր հետ ջոջ տաշտ մի կար,
Վոր չորս մարդ մեջն կը լողկանար,
Եդ տաշտ իլին կաթ արավ,
Եդի Սանասարի առջեվ հացի հետ։
Եդ հովրվու միտքն ել ի՞նչ է·—
Կ'ուզի փորձի խալխին,
Տեսնենք՝ ենոնց ուժեր քանի՛ մ'է.
Եդ կաթ ուտելով՝ են կը հասկանա՝
Ենոնց ուժեր քանի՛ մ' է։
Ով որ եդ ճամբով կ'երթա,
Եդ հովիվ եդ ցեղ կ'անի,
Ապա կը թողնի, կ'երթան Դեղձուն–Ծամի մուտ.
Ենտեղ փահլեվաններ զենոնք կ'ըսպանեն։

Հովիվ տաշտ իլին կաթ եբեր,
Եդի Սանասարի առաջ ուտելու·
Ձինք զնաց իր ոչխարի բոլոր ման գալ։
Մեկ փաթ վոր ման եկավ. Սանասար բոռաց·
— Հովի՞վ, արի, քո կոտ վերցո՛ւ.
Շնորհակալ եմ, կա՛ց բարով, յես ո՛երթամ։
Հովիվ եկավ, վոր տեսավ՝
Սանասար կաթ կերե, կոտ կործե,
Իրա տեղ դողաց, ասաց·
— Սա՛նասար, զնա՛ բարով, մի վա՛խենա·
Դոր երթաս, մարդ քեզ չի հա՛ղթի։

Դնաց, հասավ Պզրնձե քաղքի դիմաց·
Նայեց, տեսավ ի՞նչ·— Ենտեղ քաղքի պատի տա՛կ
Քառասուն մարդ դադրած, ենքան են մնացած,
Վոր մորուսներն եկեր, դեղին է դարձած։
Ասաց·— Բարե՛վ ձեզ, մեծ մարդեր,
Սիպտակմորուս, կարմրամորուս
Ու թուխմորուս փահլեվաններ։
Եդ մարդեր ասին·— Աստրծու բարին,

Զահել տղա, վաղ չուր կեսորին,
Դուն ե՛լ կ'ելնիս մեր հալին:
Հալվորների մեկն ել ասաց.
— Հե՛յ-վա՜խ, հե՛յ-վա՜խ, կանա՛չ կտրին,
Դու ե՞լ եկար, ընկար ես քաֆրի ձե՛ռ:
Զահել տղեն վերուց. հարցուց.
— Ափա՛ ջան, ի՞նչ, ինչո՞ւ կ'ելնիմ ձեր հալին:
Ասաց.— Մենք ե՛լ քեզ պես կտրին եյինք,
Եկանք են աղջըկա համար.
Ինչ ուշքի եկանք, դարձանք եսպես:
Ասաց.— Ա՛ղբեր. ասեք՝ ի՞նչ բան եղեր,
Վոր դուք եղեր եք եդ հալին:
Ասին.— Ենի հնարք ունի. կախարդ է.
Մի քիչ համբեր արա,
Են քաֆրին ենպես մեկ հավք մի կա,
Կը գա, պատի վերա կը ճվա,
Մեր հասակին ծեր մարդ կը դառնաս:

Սանասարն իմաստուն եր, չգնաց քաղաք.
Իր ձին դարձուց, քաղքից քիչ մի զատացավ,
Մնաց չուր մուք ետու գետին:

6

Մթնեց: Եղ ժամանակ դարձավ. եկավ քաղքի մուտ.
Բուռկիկ Զալալինի սանձ ոլորեց,
Ձիու մեյդա՛ն բաց արավ,
Կանչեց ըզիր աստված,
Զանգու զարկեց ձիուն,
Մեկեն թռավ, անցավ ըզպղընձե պարիսպ,
Իջավ, մտավ քաղքի մե՛ջ:—
Զե՞ հայ քաղաք բաց դուռ չուներ,
Տի թռներ, անցներ զպարիսպ:—
Շատ մանն եկավ քաղքի մեջ,
Իրեն ուզած տեղ չգտավ, վոր նստեր.
Եկավ. հասավ քաղքի կո՛ւշտ,
Մեկ հայի խա՛ն գտավ, իջավ հնտեղ:

Եղոր պահող՝ սիպտակամորուս հալվոր մարդ եր։
Հարցուց։— Ափո՛ ջան, ես խանի վարձ ի՞նչ ե։
Պատասխանեց։— Վո՛րդի,
Ձիուն մե՛կ արծաթ, մարդուն կե՛ս արծաթ։
Թե։— Ափո՛, յես քեզ կը տամ,
Ձիուս երկո՛ւ արծաթ,
Իմ գլխուն իրե՛ք արծաթ։—
Ձինք քանց ձին ավելացուց։—
Իմ ձիուն աղեկ տիրուքյուն կ'անես։
Քուռկիկ Ջալալին եդտեղ կապեց,
Գնաց մեջ եդ քաղքին մանգալու։
Ելավ, մեկ հաց առավ փռնից,
Դարձավ, եկավ իր խան,
Են հալվորի կուշտ նստավ։

Գիշեր եր։ Իր հաց կերավ, ասաց։
— Հալվո՛ր, հեքաթ մ՝ ասա, ականջ անենք։
Հալվորն ասաց։— Յես բան չեմ գի՛տի։
— Ափո՛ ջան, մեկ հարցմունս անեմ քենե։
Թե։— Վորդի, ի՞նչ հարցմունս։
Հարցուց։— Ես քաղքի անուն ի՞նչ կ'ասեն։
Պատասխանեց։— Վո՛րդի,
Ես քաղքի անուն Պոլնձե քաղաք կ'ասեն։
— Դե՛, Պոլնձե քաղաք եստե՞ղն ե։
Պատասխանեց, թե։— Հա՛, եստեղն ե։
Սանասար վերուց, հարցուց։
— Ես քաղքի թագավոր մեկ աղջիկ ունի,
Եդ աղջիկ ի՞մալ աղջիկ ե։
Հալվորն ասաց։— Վո՛րդի, քեզ ի՞նչ կա հետ։
Իմալ կ'ըլնի՝ թող ըլնի։
Ասաց։— Պա՛պիկ, ենպե՞ս, կը հարցընե՛մ։
Հալվորն ասաց։— Վո՛րդի,
Մեր թագավորի աղջիկ հմայք կ'անի։
Քանի՛ քանի թագավորի տղա՝
Եկին, վոր գեն առնեն,
Հմայք արավ, եթալ սարեր։
Մեկըն դրսա, մեկըն դրնա։

Զըլնի՞ թե դու եկեր ես՝ զեն առնես.
Ցես կ'իրիշկեմ, վոր դու ափսոս տղա յես:
Թե ե՛ն ապով ես եկեր,
Թո՛ղ, թո՛ղ, դարձի՛, խեղճ ես, մեղք ես.
Եդ բաներեն ձեռք վեր առ.
Շատեր եկած, չկա՛րցած:
Սանասար ասաց.— Ձե՛, Պա՛պիկ,
Ցես են ապով չեմ ե՛կի.
Ինձ ի՞նչ կա հետ ենոր:
Ապա ենոր հմայք չի խա՛փանի:
Պա՛պիկ, ողորմի՛ քո հոր, ինձ ճիշտն ասես,
Տեսնենք՝ ինչ է ենոր հմայք:
Ասաց.— Ենոր հմայք կո՛ մեջ ծովուն,
Ակնունք կո՛ մեջ ծովուն վիշապի բերնի մեջ:
Հրեղեն մարդ մի տ'ըլնի,
Վոր երթա, մտնի են ծով,
Ակ վիշապի բերնեն հանի.
Առավոտուն ելնի,
Աղջիկ մերկ մեջ իր սենեկին տեսնի,—
Ենոր հմայք ես է, կըխափանի.
Ել հմայք վեր ենոր չբա'նի,
Կարնա զաղջիկ առնի, իրեն տանի:

Սանասար ասաց.— Պա'պիկ, ի՞նչ կ'ըլնի,
Ենոր քոշք ու սարեն շանց տաս, յես ել տեսնեմ:
— Քո ի՞նչ բան է եդ բաների հե՛տ:
Են ել խնդիրք արավ.— Ափո՛ ջան,
Աստված սիրես, յես կարիք երկրից եմ,
Ի՞նչ կ'ըլնի, մեկ ինձի շանց տաս,
Ցես ել մտիկ անեմ,
Երթամ մեր երկիրներ, ասեմ՝
Եսպես քաղաք մի կա:
Հալվորն առավ զտղան,
Ելավ տանիս, ձեռ պարզեց, ասաց.
— Են սեվ պատուհաններ, սեվ պալատներ կը
տեսնե՞ս,—
Թագավորի աղջըկա քոշք ու սարեն է:

Են սեվ փարդա յե կապած պատուհաններին,
Վոր աղջիկ դուռ չտեսնի:
Տղան հարցուց.— Պա՛պիկ,
Են ի՞նչ ե ճրագի՛ պես կը վառվի:
Ասաց.— Վո՛րդի, ենի վոսկի խնձոր ե,
Ենոր դարգահի սա՛ն գլուխ զարկուկ:
Մեկ ել գուրզ մի կա, կո՛ են բրջի գլուխ:
Ով են վոսկի խնձոր բերի տա՛կ, դնի իր ծոց,
Դիր մ՝ ել ձիով բարձրանա, դնի տեղ.
Ով որ ուժով ըլնի,
Են գուրզ բրջի գլխեն թալի տա՛կ.
Ակ վիշապի բերնեն հանի,
Թագավորի հետ կոիվ անի, կտրիճ ըլնի,—
Աղջիկ իրեն կը տանի:
Ասաց.— Ո՛ֆ, ափո՛, յես ի՞նչ եմ,
Վոր եդ բաներին ձե՛ռ թալեմ.
Հարցմունս եր՝ արի բենե:
Կ'երթամ ուրիշ երկիրներ,
Կ'ասեմ՝ Պղընձե բաղաբ եսպես բաղաբ ե:
Քելե՛, բելե՛, երթա՛նք, ինձ բուն կը գա:
Գնացին խա՛ն, տեղ ձգեցին, պառկեցին:

Հալվոր բնավ. համա Սանասար չբընի:
Ասաց. «Խա՛չ, վոր ենպես ե,
Ես գիշեր պիտի գնամ, փորձեմ»:
Տղան տեսավ, վոր հալվոր բնավ.
Քիչ մի հանդարտեց, խալխ պակսեցին,
Ելավ, դարձավ աղոթարան,
Իրեբ անգամ ծունր եդի առաջի աստծու:
Ելավ, գնաց, ըզձին հեծավ, խանից ելավ դո՛ւրս:
Լուսնակ գիշեր մի, ինչպես ցերեկ:
Աստծու անուն ետու,
Խաչ Պատերազմին կանչեց.
Մեյդանի մե՛ջ գնաց, եկավ, ըզձին տաբցուց.
Զանգու զարկեց ձիու կո՛ղ,— ձին բարկացավ.
Ըզձին թռուց, ելավ սան գլխի հե՛տ,

Ձեռ ետու, զոսկի խնձոր առավ, եդի ծո՛ց,
Թաւիկան գնաց, մեկ ժամվա ճամբա հեռացա՛վ:
Նորեն դարձավ, եկավ մեյդանի մե՛ջ:
Դիր մ'ել ըզձին թռուց,
Ելավ բրչի գլուխ,
Աստծու անուն ետու,
Խաչ Պատերազմին կանչեց,
Ձեռ ետու, ըզգուրզ բռնեց,
Ոլորեց, տեղից հհան դո՛ւրս, թալեց,—
Գուրզ կես ժամվա ճամբա գնաց, դիպավ գետին,
Մեջ ամառվա չոր գետնին՝ զազ մի մտավ գետնի մեջ:
Ապա ըզձին քշեց մեջ ծովուն,
Գնաց, մտավ ծովու տա՛կ,
Տեսավ՝ վիշապ գլուխ բարձրացուցեր է.
Վեր վիշապի գլխուն դադրավ.
Գուրզ մի զարկեց վեր վիշապի գլխուն.
Վիշապ գինք թափ ետու,
Ակ բերնեն թռավ, գնաց մեջ դաշտին:
Վիշապ գինք թափ ետու, ջուր ելից քաղաք,
Ինչպես անձրև գա, ենպես զքաղաք եթաց.—
Ծով կատաղավ, վիշապ քամի քաղաք եղավ:
Դարձավ իր խան, ըզգինք ետու քունջ մի,
Կող ելավ, քնավ. չուր լուսաբաց:

Առավոտուն ինչ լուս բացվավ,
Տեսան՝ Դեղձուն-Ծամի պատուհաններ բացվե.
Ենոր լուս ովեր է քաղաք:
Ինչ լուս բացվավ, տղան իր նինջ հհան,
Ելավ տանիս, իրիշկեց՝
Աղջկան պատուհաններու մեջեն՝
Աղջիկ մեջ իր սենեկին կ'երեվեր,
Զաղջիկ մեջ իր սենեկին տեսավ:
Ենոր հմայք խափանե՛ր է՛ր:
Սանասար դարձավ, ասաց հալվորին.
— Պա՛պիկ, ես գիշեր քամի մի փչեց,
Սեվ ամպ մի Սասնա հե՛տ եկավ,
Անձրեվ ենոր մոտեն եկավ, քաղաք թրջեց:

7

Թագավոր եռու մունետիկ կանչել.
— «Տեսնենք՝ ո՛վ ակնունք վիշապի բերնեն հաներ է.
Ման եկեք, տեսնեմ՝ են ի՛նչ մարդ է եկե,
Իմ աղջկան վոսկի խնձոր կոտրե, տարե:
Բռնեցեք, բերեք եստեղ, գլուխ կտրենք»:
Մունետիկներ ընկան քաղքի մեջ ման գալու.
Երկու ժամ ման եկան, մարդ չտեսան.
Գնացին, մտան են հալվորի խան, ասին.
— Հալվո՛ր, եստեղ կարիր մարդ չկա՞:
Ասաց.— Չե՛, ես գիշեր իմ խան՝
Մարդ չե՛կեր, քանց են տղան.
Են ել իմալ եկեր է, ընկեր քնուկ եր:
Են տղան ենքան են հալվորի աչքին չեր գա:
Վոր ասաց՝ «Չե՛, կարիր մարդ չկա»,
Տղան վերուց, ասաց.— Աղբե՛ր,
Ինչի՞ կարիր մարդ չկա, յես կարիր եմ:
Հալվոր բարկացավ.— Սո՛ւս կաց, զքեզ կը տանին,
սպանեն:
Ասաց.— Ինչի՞ տի սպանեն:
Տղան զմունետիկներ կանչեց, ասաց.
— Աղբեր, յես կարիր եմ, ի՞նչ հարցմունս կ'անեք:
Մունետիկներ տեսան՝
Եդ տղան ենենց ջահել, ջիվան տղա յե,
Ենոնց սրուն եռաց ենոր վերա:
Ասին.— Ա՛յ տղա, զքեզ պահենք,
Դու ափսոս ես, մի՛ գա մեր թագավորի առաջ:
Հարցուց.— Թագավորին ի՞նչ է եղե՝
Չգամ թագավորի առաջ:
Ենոնք ասին.— Վո՛րդի,
Ես գիշեր զարկած, տարած են
Թագավորի աղջկան վոսկի խնձոր.
Թագավորից հրաման է՝
Ինչ մարդու մոտ են խնձոր տեսան,
Թե կտրին եղավ, կոիվ արավ,— պրծա՛վ.
Թե վոր կտրին չեղավ, զգլուխ կը զարկեն:

Սանասար ել ձեռ տարավ ծո՛ց,
Զոսկի խնձոր հանեց, նշանց ետու,
Դարձավ, ասաց ենոնց.
— Մուսետիկնե՛ր, գնացե՛ք, թագավորին ասե՛ք,
Թե՝ վոսկի խնձոր տանող տեսեր ենք:

Ենոնք գնացին, թագավորին ասին.
— Մենք քո վոսկի խնձոր տանող տեսեր ենք:
Թագավոր ասաց.— Գնացե՛ք, ասեք՝ գա ետեղ:
Թագավորի բռնավորն ե:
Եկան, ասին.— Դու թագավորի բռնավորն ես.
Երթանք, թագավորին բռնվի՛:
Ասաց.— Թագավո՞ր, ի՞նչ թագավոր.
Հա՛, հա՛, ձեր թագավորից կռիվ կ'ուզեմ.
Աստված կամ ինձ կըտա, կամ իրեն:
Ցես ինչի՞ տի գամ թագավորին բռնվիմ,
Կռիվ կ'ուզեմ, վոր կռիվ անեմ:
Թագավոր լսեց, ասաց.
— Աղեկ, ես բան ով որ արե՝
Իմ աղջըկան համար ե արե.
Թող գա, նայենք՝ ինչպես արե.
Թող ինձ ասի, յես իմ աղջիկ տամ ենոր:

Սանասար եկավ, ասաց.— Ցես եմ արե:
Հարցուց.— Ես բան դո՞ւ յես արե:
Պատասխանեց.— Այո՛, յես եմ արե:
Թագավոր ասաց.— Վոր դու յես արե,
Դե՛, ինչպես վոսկի խնձոր՝
Են սան գլխից բերեր ես տակ,
Դիր ա՛ ել ցերեկով տես՛ր, դիր սան գլուխ,
Վոր մենք տեսնենք, յես իմ աղջիկ տամ քե՛զ.
Կամ թե չե՝ յես քո վիզ սի զարկեմ:

Սանասար ըզձին հեծավ, մեյդան առավ,
Մեյդանի մեջ մա՛ն եկավ, ըզձին տաքցուց,
Գնաց, եկավ, թռուց, եհան են սան գլխու հետ,
Զոսկի խնձոր եզար են սան գլուխ:

Թափկան ժամ մի յետ գնաց,
Մե՛կ ել դարձավ, եկավ մոտ թագավոր:
Թագավոր ասաց·— Ետա ելա՛վ:
Համա են շնորհք քոն չե, քո ձիուն ե:
Ասաց·— Քենե կ'ուզեմ՝
Ինչպես են գուրզ բրջի գլխեն
Քաշեր ես դո՛ւրս, թալեր ես տա՛կ,
Դիր մ' ել հանես բրջի գլուխ, թալես վեր բրջին,
Վոր մենք տեսնենք, յես իմ աղջիկ տամ քե՛զ·
Կամ թե չե՝ յես քո վիզ տի զարկեմ:

Սանասար ելավ, գնաց զեն գուրզ վերուց,
Վեր թեվին վեր ոլորեց, նթալ,
Եզար վեր են բրջի գլխուն,
Հետ զարկելուն ըզրուրջ փլուց, երեր տա՛կ:
Թագավոր ասաց·— Կ'երեվա,
Վոր դու աղեկ կարին, զորեղ ես:
Ետա ելավ իրեք փորձանալիք:
Ինձի վաթսուն հատ փահլեվան կա,
Ձամեն ել շղթայե, բանտ եմ դրե,
Թողնեմ դո՛ւրս, կռիվ արեք·
Թե դու զվաթսուն ել հաղթեցիր,
Աղջիկ կը տա՛մ քեզ, կը տանես:

Սանասար մտածեց· «Յես իմ վադեն դրեր եմ՝
Միայն իրեք որ մնամ ետեղ·
Ես թագավոր վեր ինձ կռիվ տի հանի
Մե՞կ մեկ փահլեվան, թե՞ ամեն մեկդիր»:
Դարձավ, հարցուց·— Թա՛գավոր,
Դու քո վաթսուն փահլեվան մեկդի՞ր տի հանես,
Թե՞ մեկ մեկ տի հանես դեհ ինձ:
Թագավոր ասաց·— Սա՛նասար,
Վաթսուն ել մեկդիր հանե՛մ,
Ըզքեզ ցրի՛վ կը տանե·
Մե՛կ մեկ հանեմ, կռվեցե՛ք:
Թե դու հաղթեցիր, աղջիկ տի տամ քեզ·
Թե չե՝ կո՛ զքեզ տի սպանեն:

— Թա՛գավոր, ապրած կենաս,— ասաց։—
Յես չեմ դադրի եստեղ, չուր վաքսուն որ կովի։
Վաքսուն ել մե՛կդիր թող դո՛ւրս, կովենք։
Աստված կամ ի՛նձ կը տա, կամ փահլեվաններուն։
Թագավորն ել ասաց։— Հա՛յ։
Վաքսուն մեկտե՛ղ թողնեմ դո՛ւրս,
Ըգբեզ տի փըրփըրթե՛ն։
Խե՛ղճ ես, կա՛ց, վաքսուն որ կովի։
Ասաց։— Ձե՛, թագավոր,
Յես վաքսուն որ չեմ կա՛րնա կենա եստեղ։
Դու քո վաքսուն փահլեվան մեկդիր հա՛ն։

Թագավոր ուղարկեց, մեկդիր եթող դուրս
Ըզիր վաքսուն փահլեվան։
Սանասար զԲուռկիկ Ջալալին հեծավ։
Զթուր կեծակին քաշեց, մեյդան կայնավ։
Փահլևաններ գոմշու պես մըռմըռացին,
Եկին դեհ Սանասար։
Մե՛կ ենոնց մոտեն, մե՛կ Սանասարի,
Առին իրար, զարկին իրարու։
Դեղձուն-Ծամ պատուհան կայնե, մտիկ կ'անի։
Սանասար ընկավ մեջքեր,
Թուր կը զարնի փահլեվաններուն,
Ենոնք չեն կա՛րնա ենոր մոտենա։
Զուր իրիկուն կովան,
Քոսան փահլեվանի վիզ կտրեց։
Գիշերն ել փահլեվաններ կռիվ արին։
Ասին։— Կը մթնի, մենք կը զարնենք,
Ձենի կը սպանենք, գիշեր մութն է։
Զուր առավոտ տաս փահլեվան ել սպանեց։
Առավոտից չուր իրիկուն կռիվ արին,
Տասն ել սպանեց, մնաց քսան։

Լեշեր ընկավ չորս բոլոր,
Արուն կայնեց մեջտեղ։
Սանասար մնաց տրնի մեջ,
Արուն Սանասարին բռնեց։

Եվ վոչ ենի կարցավ արնից դուրս գա,
Վոչ ենոնք կարցան զՍանասար սպանեն.
Ենոնք Սանասարի չորս բոլոր մա՛ն կը գան.
Չեն ի՛շխենա մոտենա ենոր:
Սանասարի ձեռ կոմավ,
Եվ չկա՛նա աղեկ կռիվ անի.
Համա ըզինք կը պաշտպանի:
Կռիվ եդպես մնաց:

Դառնանք Բաղդասարի վերան:

8

Բաղդասարն եվ Սասուն եր:
Են մեկ առավոտուն ելավ, կը լվացվեր,
Աչք ընկավ Սանասարի մատնիք,
Ինչ աղբեր աղբոր հետ փոխարկեր եր:
Տեսավ՝ մատնիք մատին սեվցեր ե:
— Ահա՛, ասաց, շտապեք, իմ ձին քաշեք դո՛ւրս.
Ցես հեծնիմ, երթամ, իմ աղբոր հասնիմ:
Ելավ դո՛ւրս, տեսավ՝ ամպն մթներ ե:
Եկավ տո՛ւն, ասաց.— Հե՛յ-վա՞խ, հե՛յ-վա՞խ, մարե՛,
Իմ աղբեր շատ նեղութնի մեջ ե:
Հարցուց.— Դու ի՞նչպես գիտես:
— Մեկ հալվոր մարդ մի մեզ նշանց ետուր,
Ասաց՝ Ցերբ ես ամպ կը մթնի,
Դուք երկու աղբեր՝ վոր մեկտեղ չեք ըլնի,
Իմացեք, վոր մեկը նեղ տեղն ե.
Իրարու ոգնություն հասեք:
Ցես շուտ տ'երթամ, հասնեմ:
Ասաց.— Վո՛ւրդի, համբեր արա,
Ով համբեր ունի՝ կյանք ունի:
Երթանք, կտոր մի հաց ուտենք,
Գնա քո աղբոր հասի՛:

Ելավ գիրեղեն ձին քաշեց,
Թամք եդիր վերան, գիր գուրզ առավ,

Ելավ, Լածակ ըզձին,
Իր աստված կանչեց, քշեց:
Մոռցավ, հաց էլ չկերավ:

Գնաց, հասավ են սարի մեջ.
Ե՛ն աժդահար հովիվ նայեց, տեսավ՝
Մեկ ձիավոր ենպես կը գա՝ քամո՛ւ պես.
Ասաց. «Կա–չկա, ես Սանասարի աղբերն ե»,
Գնաց առջեվ, ասաց.
— Ձիավո՛ր, արի՛, կաք մի կքեմ, կե՛ր.
Նստի, հանգստացիր, ելի՛, գնա՛:
Բաղդասար ասաց.— Սատանա՞ յես դու.
Իմ աղբեր մկա մեռե,
Դու կ'ասես՝ արի կաք կեր, յես կ'երքամ:
Հովիվ ասաց.— Հնար չկա,
Զուր կաք չուտես, չեմ թո՛ղնի՝ ես տեղով երքաս:
Բաղդասար տեսավ՝ եդտեղ կռիվ կ'ըլնի, նստավ,
Հովիվ իր կոտ իլին կաք կքեց,
Հացի հետ եդիր Բաղդասարի առջեվ,
Ձինք գնաց ոչխարի բոլոր ման գալ:
Յոթ փաթ ման եկավ ոչխարի բոլոր,
Նոր՝ Բաղդասար եդ կաք կերավ,
Կոտ կործեց, կանչեց.— Հովի՜վ,
Արի՛, կոտ վերցո՛ւ, յես կ'երքամ:
Հովիվ եկավ, Բաղդասարին ասաց.
— Բա՛ղդասար, քո աղբեր յո՛թ քո չափ ուժ ունի.
Ենոր չըլնիմ հակառ կենաս:
Գնա՛. քո աղբեր քառսուն փահլեվան սպանե,
Մնացե քսան, են էլ դու կը սպանես,
Յետ կը դառնաք, կը գաք:
Մի վա՛խենաք, մարդ չկա՛ընա
Ձեր երկու աղբոր վերան:

Քշեց, գնաց Պղընձե քաղքի պարսպի տակ.
Տեսավ՝ քառսուն հալվոր կայնած են ենտեղ.
Տեսավ, վոր եդ մարդիկ ենքան ծերացած են,
Վոր շորեր, մորուս, վերան–գլուխ դեղին դարձե:

Բարեվ ետու հազրաց, ասաց։— Բարեվ ձեզ,
Սիպտակմորուս, կարմրամորուս, թուխմորուս
մարդեր։
Ելի են հալվոր բարեվ առավ, ասաց։
—Հե՛յ-վա՞խ, հե՛յ-վա՞խ, կանա՞չ կտրին, ջահել տղա,
Դու ե՞լ եկար, երթաս, ընկնես են քափրի ձե՛ռ։
Ասաց։— Ի՞նչ կա, վոր քափրի ձեռ ընկնեմ։
— Վորդի, մեկ ժամ մնաս,
Են քափրին մեկ հավք մի կա՝ կը գա կը ճվա,
Դու ել մեր հասակին մարդ կը դառնաս։
Բաղդասար ասաց։— Ափո ջան,
Երեկ, եռանդ իմ պես ջահել մարդ մի եկե,
Անցեր եստեղ վե՛, չե՞ք տեսե։
Եդա մարդեր դարձան, ասին։
— Երեկ չե եռանդ քեզ պես մարդ մի անցավ,
Դեռ քանց քեզ զորեղ, քանց քեզ կտրին եր։
Վո՛րդի, ենո՛ր ձին ել կրակե ձի յեր։
Թռավ, անցավ քաղքի մե՛ջ։
Զուր եսոր ենոր կռվի ձեն կը գար,
Փահլեվանների կռվի ձեն կը գար։
Եսոր մենք ել ձեն չենք լսե,
Ել չեմ գի՛տի՝ ի՛նչպես եղավ, ի՛նչպես չեղավ։
Բաղդասար ասաց։—Հե՛յ-վա՞խ, են իմ աղբերն ե։
Վոր ել ենոր կռվի ձեն չե՛կեր՝ սպանած են։
Ուխտ ընի՝ յես եստուց առնեմ սպանել,
Եսա քաղաք ավերեմ,
Իմ աղբոր վրեժ առնեմ։

Ըզեն մարդեր անցավ, գնաց։
Ինչ բան վոր ռաստ եկավ,
Ինչ որ իրար կ'առներ՝
Թե տավար, թե մարդ՝ սպանեց։
Գնաց, գուրզ մի զարկեց, պարիսպ փլուց,
Մտավ քաղաք, մոտ հասավ։
Սանասար ու են քսան փահլեվան
Ելած են մեկ մեկի առջև կռիվ։
Սանասար ենպե՛ս եղեր,

Զորով ըզինք կը պաշտպանի.
Արուն աչքեր բռներ է, թուր կը զարնի:
Բաղդասար ըզձին քշեց, գնաց,
Աղջկա պատուհանի առաջեն անցավ.
Ասաց.— Աղջի՛, կռիվ դեհ դո՞րն է:
Աղջիկ ճանչեցավ, պատասխանեց.
— Կռիվ դեհ քաղքով դե՛ս է:
Բաղդասար քշեց ըզձին,
Գնաց, մտավ մեջ կռվուն.
Ճոթից մի են կտրեց գլխակալեվաններ,
Դարձավ, կանչեց,— Տո՛, Սա՛նասար, ա՛դրեր:
Սանասար իմացավ՝ իր աղբերն է եկեր,
Ասաց.— «Որհնյա՛լ է աստված.
Ոգնականս հասավ. ել ահ ու երկուղ չունիմ»:
Կանչեց.— Հրա՛մմե, Բա՛ղդասար աղբեր.
Ուայ, եդ դո՞ւ յես, եկար իմ ոգնություն:
Բաղդասար ասաց.— Հա՛, յես եմ:
Դե՛, ետա դեհեն առջև բռնի՛,
Ցես ես դեհեն սպանեմ, գա՛մ:
Գնաց, աղբորն արնից քաշեց դուրս,
Տարավ, լվաց, աղբոր աչքեր բացվավ, ասաց.
— Ո՞ւր է. քսան փահլևան ել մնացեր է:
— Ցես զենոնք սպաներ եմ,— ասաց Բաղդասար:

Գնացին թագավորի առաջ:
Թագավոր վոր երկու աղբեր տեսավ,
Ասաց.— Ետա եղավ չորս փորձանալիք:
Հիմի տերքաք կանաչ Քաղաք,
Նո՛ր գաք զաղջիկ տանեք:

9

— Կանաչ Քաղաք, ո՞ւր ես, եկա՛նք:—
Գնացին, ընկան չոր ու ցամաք, ոստին տեղեր:
Մտան քաղաք, դես ման եկան, դեն ման եկան.
Վերջը պառվու մի դուռ տփեցին:
Պառավ եկավ, հարցուց.— Ո՞վ է:

Ասին։—Կարիր տղերք ենք, մամիկ, հյուր չե՞ս ուզի։
Ասաց։— Ինչի՞ չե՛մ ուզի, վո՛ւրդիք, հյուրն
աստծունն է։
Պառավ դուռ երաց, տղեք ներս առավ։
Ասաց։— Ցես ել զավակ չունիմ։
Դուք ինձի լա՛ն, յես ձեզի մե՛ր,
Մեկտեղ ապրինք, հացն աստծունն է։

Առավոտուն լուս վար բացվեց,
Սանասար ասաց Բաղդասարին։
— Քաջանց թագավոր մեզ ուղարկեց եստեղ,
վոր ի՞նչ
Մենք ի՞նչ պիտի անենք եստեղ։
Բաղդասար պատասխանեց։
— Ա՛ղբեր, ելնենք, ման գանք ես քաղքի մե՛ջ,
Աստված ինչ որ կը տա՝ են ել կ'անենք,
Զուր կը տեսնենք՝ վերջն ի՞նչ կ'ըլնի։
Ձիանք, զենքեր թողին պառվու մո՛տ,
Ելան քաղքի մեջ մա՛ն գալու։

Եկան թագավորի ախոռի դո՛ւռ, կայնան։
Ախոռապետն եկավ, ենոնց հարցուց։
— Ա՛յ տղա, ի՞նչ մարդ եք։ չե՞ք ըլնի ձիապան։
Ասին։— Կարիր մարդ ենք։ կ'ըլնինք։
Հարցուց։— Գիտե՞ք ձի թիմարեք։
Ասին։— Այո՛, գիտենք։
Ախոռապետն ենոնց տարավ ախոռ,
Ասաց։— Դե ձիերու տեղ շինեք։
Սանասար ցախավել առավ, Բաղդասար՝ թիակ,
Ձիերի տեղ ավլեցին։
Ախոռապետն ասաց։— Հիմի ձիանք թիմարեք։
Սանասար հարցուց։— Ո՞ւր է քերոց։
— Ես ականատն են քերոցներ,—
Ասաց ախոռապետն ու դուրս ելավ։
Սանասար վորին ձեռ տվավ,
Են քերոցներ ձեռաց մեջ եղան հո՛ղ։
Ախոռի մեջ ման եկավ, տեսավ՝

Քերոցի պես՝ մեծ մի բան դրած ենտեղ։—
Պղընձե զուռ եր, ինչ ձիերուն ջուր կը տայինն,
Գարի լցած մեջ՝ ձիերու համար։—
Գարին դատարկեց գետին,
Եդ պղինձ առավ ձե՛ռ, ձիեր թիմարի։
Վորի քամկին մեկ դիր պրտեց,
Կուշին հանեց, բերեց, եթալ պոչից դո՛ւրս։
Եդ ժամանակ ախոռապետ դարձավ յետ,
Կանչեց, ասաց։— Ես ի՞նչ եմ արե։
Պատասխանեցին, թե։— Քերոցեր ենք։
— Աստված ձեր տուն ավրի,
Ամեն սպաներ եմ ձիանք։
Ախոռապետ գնաց, թագավորին ասաց։
— Եսպես մեկ բան ե եղե։
Ես մարդոց հետ ի՞նչ անենք,
Ես մարդեր զորեղ են, աժդահա յեն։
Են ել ասաց։— Թողեք՝ մնան։
Առավոտ կ'ուղարկենք սա՛ր՝
Վիշապի հետ կռիվ անեն։

Տղեք դարձան, եկան պառվու տո՛ւն։
Իրիկնապահին Բաղդասար ասաց։
— Մամի՛կ, ծարավ եմ, պուտ մի ջուր։
Պառավ ասաց։— Հոգիս ելնի, ել ջուր չկա։
Տղան հարցուց։— Մամի՛կ, եդ ի՞նչ խոսք ե։
Պառավ պատասխանեց։— Մեռնիմ քեզի։
Ես Կանաչ Քաղաք անջուր քաղաք ե, ջուր չկա։
Սարի գլուխ մեկ աղբուր կա՛,
Են ել աղբրի ական վերա՝
Վիշապ մի եկեր, բերան տվե, նստե,
Չի թո՛ղնի, վոր ջուր գա քաղաք։
Մենք ել ենոր ահու չենք կա՛րնա ջուր բերի։
Ամեն շաբաթ ազապ աղջիկ մի տի տանք,
Եդ վիշապ ուտի, վոր ջուր բաց թողնի,
Ինչ ե թե՝ ժողովուրդ ծարավ չկոտորվի։
Ու մեր քաղաք չավերի։
Թագավորի մոտ մեկ աղջիկ մի կա,

Վաղ հերթ եդ աղջկան է:
— Մամի՛կ, բա չե՞ք կարնա եդ վիշապ սպանի:
Ասաց·— Վ.ո՛րդի, ենոր սպանելու ճա՞ր կ'ըլնի·
Քանի՛ քանի դիր թագավոր՝
Իր զորքերով գնացե վերան կռիվ,
Բան չի կարցե անի:

Առավոտ վոր լուսացավ,
Պառավ ասաց·— Հա՛նգո ձենձենոց կը գա,
Ցես կ'ասեմ՝ աղջիկ կը տանեն, տան վիշապին:
Տղաներ իրիշկեցին, վոր, ուղորդ,
Լուսնակի պես մեկ աղջիկ,
Վոտից գլուխ սեվեր հագցուցած,
Լալով առեր են, վոր տանեն աղբրի գլուխ·
Կնանիք ել՝ կժեր առած՝ կ'երթան ջրի:
Երկու աղբեր ընկան ենոնց հետեվ, գնացին:
Ցերբ որ քաղքից ելան դուրս,
Սանասարին, Բաղդասարին ասին·
— Ես աղջիկ առեք, տարեք, տվեք վիշապին.
Ենոր հետ կռիվ արեք, սպանեք:
Սանասար ու Բաղդասար ասին թագավորին·
— Մենք ինչո՞վ երթանք կռիվ,
Մենք գենք չունինք հետ մեզ:
Են ել ասաց·— Դուք գիտեք:

Բաղդասար ասաց Սանասարին·
— Երթանք, ենտեղ, ենա մոտիկ ջոջ տան մեջ,
Երկու կլոր քար կա, առնենք, երթանք·
Երկուսի մեջն ել ծակ է,
Կը մտուցենք մեր թեվքեր, կ'երթանք:
Գնացին քարեր առին:

Քարերի տերեր եկան,
Թագավորին գանգատ արին,
Թե·— Մ'ենք ենքան ծախս արինք,
Հազիվ բերինք եդ քարեր·
Եդռնք կը տանեն, կը թալեն սա՛ր,

Եվ մենք չենք կա՛րնա բերի։
Թագավոր ասաց։— Վոր տանեք, եվ կը բերե՞ք։
Ասին։— Հա՛, կը տանենք, եվ կը բերենք։

Ենոնք առին աղջիկ ու քարեր,
Դնացին, հասան սարի գլուխ,
Ենտեղ, վոր աղջիկներ կը կապեն։
Ասին։— Աղջի՛կ, մի վա՛խենա,
Կայնի ետտեղ, մենք երթանք,
Մեկ՝ վիշապի վերեվ կայնենք, մեկ՝ ներքեվ։
Աղջիկ ետտեղ մտածեց,
Թե՝ «Ցես թողնեմ, փախնիմ,
Թող վիշապ գա, զենո՛նք ուտի»։
Տեսան՝ վիշապ չկա, աղջիկ կը փախնի,
Զաղջիկ բռնին, կապեցին։
Սանասար ասաց սղբոր։
— Ցես կը կայնեմ ներքեվ, դու՝ վերեվ։
Ցես կը վախեմ, վոր յես վերեվ կայնեմ, քար
զարնեմ.
Դու իմ քար չես կա՛րնա բռնի։
Հետ վիշապ դուրս գա՛, զարնենք, սպանենք։
Համա զգուշ կաց, աղբեր,
Քարեր չերթան, ձորի մեջ կորուսին։

Մեկ եվ տեսան՝ գըռոց ընկավ սարեր։
Իրիշկեցին՝ մեկ ջոջ գազան եկավ,
Մեկ գոմշի չափ բարձր, հինգ գոմշի չափ երկեն։
Վիշապ հեռվեն տեսավ՝ են որ մեկի տեղ՝
Իրեքն են եկեր իրեն կերակուր,
Ուրախացավ, ատամներ սրեց, բերան երաց։
Պոչն ոլորելով, փըշփըշալով,
Կը գար դեհ աղջիկ, վոր կուլ տա։
Աղջկան կեռիք փակվավ,
Լեզուն կապվավ, ու կը լար,
Արցունք տաք տաք կը թափվեր երեսն ի վար։
Վիշապ եկավ, հասավ ենոնց մոտ։
Բաղդասար քար մի եզար։

Քար բռնեց եդ զազանին, չի ձգեց:
Կանչեց աղբոր·— Իմ քար բռնի՛:
Սանասար եզար, զազանի մեկ կող կոտրեց,
Քար չգնաց աղբոր մոտ:
Մոտեցան, քարերով գլուխ ջարդեցին,
Քարեր առին, եկան աղջկա մո՛տ:
Արձակեցին զաղջիկ, ասին·
— Աղջիկ, ելի՛ գնա տուն:
Վիշապ արենկոլոլ ընկավ, սատկեց:
Աղբուրների ակունք բացվա՛ն·
Աղբրի ջուր վարարեց, եկա՛վ, եկա՛վ·
Ամեն մարդ առատ-առատ ջուր կրեցին:
Բաղդասար ասաց Սանասարին·
— Քարեր քալենք են ձոր, երթանք:
Սանասար ասաց·— Աղբե՛ր, հայեր մեզք են,
Չեն կա՛րնա քարեր բերի, տանենք, տանք ենոնց:
Քարեր առին, աղջկա հետ դարձան քաղաք:
Աղջիկ պատմեց թագավորին, ինչ որ տեսավ:

Թագավոր կանչեց, հարցուց·
— Տղեք, են քարեր բերի՞ք:
Ասին·— Այո՛, բերինք· դրեր ենք դո՛ւռ·
Ենոնց տերեր թող գան, տանեն, դնեն տե՛ղ·
Մենք ենոնց տեղ չենք գի՛տի:
Զուր եստեղ բերեր ենք, դոր թող ենոնք տանեն:
Թագավոր ասաց·— Ենոնք չեն կա՛րնա տանի ներս:
Ասին·— Բա՛ առաջ ի՞նչպես են տարե նե՛րս:
Ասաց·— Առաջ գոմեշներ, ձիեր լծեր են,
Եդ քարեր բերեր են իրենց տեղ,
Նոր՝ ձիքաեանք շիներ են:
Սանասար ասաց·— Թող գան հետ մեզ,
Դոներ բանան, տեղեր շանց տան,
Մենք քարեր տանենք, տեղեր դնենք:
Տերեր գնացին տղաների հետ,
Քարերի տեղ շանց տվին·
Ենոնք քարեր տեղեր դրին,
Դարձան, եկան պատվու տուն:

Մեկել որ թագավոր կանչեց,
Սանասարին, Բաղդասարին ասաց.
— Ուզե՛ք, ձեր ուզած տա՛մ:
Բաղդասար ասաց.— Մենք բան չենք ո՛ւզի,
Մեր ազատած կ'ուզենք:
Թագավոր նորեն հարցուց.
— Բա՛ղդասար, ի՞նչ կ'ուզես՝ տա՛մ:
Թագավոր իրեք անգամ հարցուց,
Բաղդասար տղան իրեք անգամ ել բան չուզեց:
Են ժամանակ ասաց թագավոր.
— Վոր բան մի չեք ուզի,
Ձեր ազատած աղջիկ չխո՛ ձերն է:
Արի՛ քեզ պսակեմ, Բա՛ղդասար:
Բաղդասար տղան ասաց.
— Հիմի յես ժամանակ չունիմ պսակվելու-
Բերին աղջիկ նշանեցին վեր Բաղդասարին:

10

Երկու աղբեր ելան, կաց-բարով արին,
Եդ Կանաչ Քաղքից դարձան,
Եկին, հասան Պղընձե քաղաք:
Քշեցին վեր Քաջանց թագավորի դռան,
Վոր զոռով զԴեղձուն քաշեն, տանեն:
Թագավոր ասաց.— Սա՛նասար,
Դեղձուն կո՛ քաղքից դո՛ւրս իր դղեկի մեջ-
Համտոլ դեվն ենոր դռան պտհապանն է:
Կարնա՛ս, գնա, տա՛ր քեզ համար:

Բաղդասար մնաց քաղաք,
Սանասար, Սասնա Ծուռն եր,
Առավ գենքեր, հեծավ իր ձին, գնաց:
Քարի մ' գլուխ սիպտակ դղեկ մի տեսավ-
Դեմ արավ եդ դղեկին,
Ասաց. «Տեսնեմ՝ եդ Դեղձունի դղեկ չի՞»:
Գնաց, հասավ դռան, տեսավ՝
Ջոջ, տհազին դարգահ մի կա վեր դռան:

Կանչեց·— Ե՛, դուռ բացե՛ք:
Համտոլ դեվ են դեհեն ձեն ետու, ասաց·
— Դու ո՞վ ես, յես դուռ բանամ վեր քեզ:
Սանասար ասաց·— Իմ անուն չե՞ս լսե:
Համտոլ հարցուց·— Քո անուն ի՞նչ է:
Սանասար ասաց·— Դու իմ անուն չես գի՞տի:
Համտոլ ասաց·— Չե՛, չեմ գի՛տի:
Սանասար ասաց·— Յես ել չեմ գի՛տի,
Թե իմ անուն ինչ է·
Իմ մոր մոտեն լսեր եմ...
Համտոլ հարցուց·— Ի՞նչ ես լսեր:
Սանասար ասաց·— Ի՞նչ եմ լսե՛ր:
Ճիժ եյի, իմ մեր ինձ վեր կը թայեր
Ու կ'ասեր՝ Համտոլի գրո՛ղ:
Համտոլ ասաց·— Վոր դու իմ գրողն ես,
Մի քո մատ դռան նղուն վե՛ տուր դե՛ս...
Սանասար ասաց·— Ահա՛ քեզ ձե՛ռ:
Ու թեվ պարզեց են դեհ:
Համտոլ ինչ որ ենոր ձեռ տեսավ, զարմանք մնաց:
Առավ իր ձեռաց մեջ, քամեց,
Ապա ինչպես լու մի Սասնա Ծուռ կծի,
Բան չկալցավ աներ ենոր:
Սանասար ասաց·— Համտո՛լ:
Մի քո՛ ձեռ տուր դըսա:
Համտոլ ըզձեռ ետու:
Սանասար ինչ որ ենոր ձեռ քամեց,
Համտոլի մոր ծծի կաթ արնի հետ մեկտեղ՝
Ենոր ձեռից ետու դուրս եզունգի բերնից:

Համտոլ փախավ, գնաց մոտ Դեղձուն:
Դեղձուն ասաց·— Վա՛-վա՛, Հա՛մտոլ,
Ի՞նչ եղավ քեզ, վոր դու եսպես փախար:
Համտոլ ասաց·— Խա՛թա՛ւն,
Մարդ մի կո՛ վեր դռան,
Ասաց՝ դուռ բաց, չբացի·
Իմ ձեռ քամեց, իմ մոր ծըծի կա՛թ

Իմ եղունգի բերան վե՛ ետու դռ՛ւրս:
Դեղձուն ասաց·— Դու չկարցա՞ր՝
Ենոր ձեռ քամեյիր:
Համտոլ ասաց·— Իր ձեռ ետու իմ ձեռ,
Ձեռ չե՛ր, ապա գերա՛ն եր:
Դեղձուն ասաց·— Դու չհարցուցի՞ր,
Թե ենոր անուն ի՞նչ եր:
Համտոլ ասաց·— Հարցուցի, ասաց՝
«Յես պզտիկ եյի, իմ մեր ինձ վեր կը թալեր,
Կ'ասեր՝ Համտոլի գրոզ»:
Դեղձուն ասաց·— Կարելի յե,
Ենոնք Սասնա Ծռերն են:
Համտոլ հայցուց·— Սասնա Ծռեր ո՞վ են:
Դեղձուն ասաց·— Սանասար, Բաղդասար են,
Ենոնք վոր եկած՝ սասուն տուն են շինած,
Անուն դրած Սասուն— Սասնա տուն:

Զը՛նգ··· զը՛նգ··· եզար դռան:
Ասաց·— Դուռ բա՛ց, թե չե՝
Քո դուռ, երդիս՝ վեր քո գլխուն կը քակեմ:
Համտոլին ձեռ-վոտ չկար, ահռ կանգներ եր:
Դեղձուն պատուհանից իրիշկեց, տեսավ՝
Սասնա Ծուռն եր, Սանասար·
Իր չմըշկներ ձգեց իր վոտք,
Վազեց առաջ, դուռ երաց, ասաց·
— Գլխուս, երեսիս վերան եկար, իմ տե՛ր:
Սանասար իջավ ձիուց,
Ձեռ թալին իրար վզի վերան,
Գնացին, մտան մեջ դղեկին:
Համտոլ եղավ քանց մժիկ մի, փախավ դռ՛ւրս:
Դեղձուն ասաց·— Ե՛, հոգուդ, արեվուդ մեռնիմ,
Սանասար, ի՞նչ կա, բարի ըլնի:
Սանասար պատասխանեց, ասաց·
— Յես եկեր եմ, քեզ ինձ կնիկ տանեմ:
Դեղձուն ասաց·— Աչքի՛ս վերա,
Յես քեզ պես կտրին մի ել տի տեսնե՞մ:

Վոր եկավ Սանասարի դիմաց,
Տեսավ՝ Դեղձուն ենպես խորոտ եր,
Վոր երազի մեջ տեսածեն, իր պատկերեն,
Ցոքնապատիկ ավելի յեր:
Եդ տեղ մատանիներ հետ իրարու փոխեցին:

Դեղձուն-Ծամ վերուց, ասաց·— Սա՛նասար,
Հազա՞ր ափսոս քո ջահլուքնին,
Վոր եկեր ես իմ հետեվ:
— Ի՞նչ դիմացով ափսոս կ'ասես:
Դեղձուն պատասխանեց·
— Են ապով, վոր կը վախնամ՝ զարնեն, քեզ սպանեն·
Ես երկիր հմայքի երկիր ե:
Գիշերով ենպես երքանք, ասաց,
Վոր քաղաք չակահի, չիմանա·
Վոր քաղաք ակահի, իմանա,
Զեն քո՛ղնի՝ դու ինձ տանես:
Են ել պատասխան ետու, ասաց·
— Ցես չեմ վա՛խենա, յես ցերեկո՛վ տ'երքամ,
Երկեն խոսք պետք չի,— ասաց·—
Թե վոր կը գաս ցերեկով,
Թռի՛ ձիուս վերան՝ քեզ տանեմ·
Թե չես իգա, վերջի խոսք տուր՝
Ցես դառնամ, երքամ Սասուն:
— Ինչպե՞ս չգամ, ասաց Դեղձուն·
Ինձ ջան մի կա՝ քո սիրուն ե:
Քեզ կանչեցի, բերի, վոր հետ քեզ գա՛մ:

Ասաց թե չե՝ իսկուն թռավ ձիու քամակ,
Սանասար քշեց ու գնացին:
Վեր նամբուն ինչ որ ըռաստ եկավ,—
Թե քար, թե թուփ, թե գազան,—
Բարեվ ետուր Սանասար,
Մինչեվ եզրեց են երկիր:
Ենտեղ մեկ մուրտառ գազան մի ռաստ եկավ,
Ենոր բարեվ չետուր:
Են գազան ել ելավ հետ երկնուց,

Բարձր ձենով կանչեց.
«Հա՜, տարա՜վ, տարա՜վ.
Սանասար Քառասուն-Ճուղ-Ծամ աղջիկ տարա՜վ»:

Ես ձեն քարն լսեց, տվավ թփին,
Թուփն՝ ծառին, ծառն՝ անասնին,
Զուր ձեն հասավ մեջ քաղքին:
Քաղաք քաղքով մեկ մեկին իմաց տվին,
Քաղքի մարդեր զրմեն ակհան,
Հետիրաց ելան կռիվ:
Հեծել հեծավ, բազմացավ,
Ընկան Սանասարի ետեվեն:
Ծովու ավազին համար կա՛ր,
Երկնուց աստղին համար կա՛ր.
Գետնի բուսին համար կա՛ր,
Հեծելին համար չկար:

Սանասարն եր, զաղջիկ տարավ,
Եդի մեկ բարձր սարի գլուխ,
Դարձավ դեհ եդ հեծել.
Քաշեց Թուր Կեծակին, ասաց.
«Հիշեմ քեզ, հեր կենդանին,
Խաչ Պատերազմին վեր իմ աջ թեվին».
Անոթի, ծարավ բրդեց եդ հեծել:
Քաղքի մարդեր չորս բոլոր բռնին,
Դարգահի առաջ չաթուն բռնին, կայնան:
Սանասար ենոնց մեջ կռիվ կ'աներ,
Կը կոտորե՛ր, կը ջարդե՛ր, առաջ կ'երթար:
Քիչ ել մնաց, իրիշկեց, տեսավ՝
Դարգահի կողմեն մարդեր կը փախնին,
Կ'երթան, կը մտնեն քաղքի մեջ.
Քաղքի կողմեն կը փախնին,
Կը գան դարգահի առաջ:
Մեկել կողմեն՝ Ծուռ Բաղդասարն եր՝
Կը գար, կը ջարդեր զմարդեր:

Ենի զատանց տեսավ մեկ սիպտակ ձիավոր,
Վոր արընի մեջ թաթախվեր,

Ընկե մեջ հեծելին կը կտրեր:
Կանչում մի կանչեց վեր ձիավորին,
Ասաց.— Պատրա՛ստ կաց, կա–չկա,
Դու յես իմ աղբեր սպանե.
Հետ հասա, քո հոգին աստծուն կ'ավանդեմ:
Տարավ, եբեր, մեկ գուրզ եզար մեջ աղբոր սրտին.
Աղբեր ընկավ վեր ձիու գավակին,
Ամա նորեն շուտ թռավ մեջ թամբին.
Դարձավ, գուրզ մ' ել եզար, թամբից ձգեց դուրս.
Աղբեր նորեն շիտկվավ մեջ թամբին,
Սկսեց յեղանակով ասել.

«Որհնյա՛լ, բարերա՛ր աստված*),
Խնամք շա՛տ ե մեծ թագավորին.
Դարբիկ նման եր մեր Ծուռ Բաղդասարին,
Թափիկ նման եր մեր Ծուռ Բաղդասարին»:

Ես խոսքի վերան Բաղդասար ճանչեցավ,
Վոր իր աղբերն եր, ասաց.
— Դու արնոտվեր ես, քե չընանչեցա.
Դո՞ւ ինչի ինձի չընանչեցար.
Խաբար չտվիր, վոր քե դարբ չտայի:
Դարձավ հարցուց Սանասարին.
— Են տեղեն վորս բերե՞ր ես, չե՝ դատարկ ես եկե:
Պատասխան ետու, ասաց.
— Քաչանց թագավորի աղջիկ բերեր եմ,
Կո՛ ենա բարձր սարի գլուխն ե:
Առավ իր սդբեր, տարավ մոտ աղջիկ.
Զատանց աչքով արավ աղջկան,
Վոր գա իր աղբոր ձե՛ռք:
Են ել իսկուն ելավ, եկավ Բաղդասարի ձեռք:
Բաղդասար վերան շատ ուրախացավ.
Ենտեղ ասաց.— Հարսնի՛կ,
Իմ աղբոր շորեր արնից լվա՛:
Են մնացած զորքեր՝ ի՛մ բաժին:

---

*) Ցերգ է։

Ասաց թե չե Բաղդասար,
Հա՛մա առավ իր նիզակ,
Ընկավ մեջ հեծելին, կտրեց.
Մենակ են եթող, վոր տնեն չե՛ր եկե.
Մեկ խաբրաբեր մի չփրթուց:

Եսպես երկու աղբեր,
Մեկ ե՛ն դեհեն, մեկ ե՛ն դեհեն,
Հեծել ամեն ըսպանեցին.
Ըրիվ-ճրիվ ընկավ մեջբեր:
Քաջանց թագավոր եկավ, ասաց.
— Աստծու սիրուն, Սասնա՛ Ծռեր,
Բավ է զիմ մարդիկ սպանեք.
Ինչ վոր կ'ուզեք, յես կը տամ.
Աղջիկ կ'ուզեք, յես կը տամ,
Թագավորություն ել ուզեք, յես կը տամ:
Ասին.— Աղջիկ կ'ուզենք, կո՛ կը տանենք:

11

Զաղջիկ առան, եկին քառսուն հալվորի մոտ.
Եդտեղ կայնան, աղջիկ իջուցին գետին,
Զաղջիկ ենտեղ կայնեցուցին:
Սանասար տղան ասաց.
— Աղջի՛կ, ես քառսուն մարդ քեզի համար եկած,
Ես մարդեր դո՛ւ յես հմայք արեր, եսպես արեր.
Դու կը բերես, կ'արձակես եսա մարդեր,
Են հասակին կը դարձուցես,
Ինչ հասակի եկած են:
Դեղձուն-Ծամ աղջիկն ասաց.
— Ենոնք զըմեն ինձի ապով են եկած.
Վոր յես զենոնք ժրացուցեմ,
Տ'ելնեն, հետ ձեզ կոիվ անեն.
Առե՛ք ըզիս, գնացե՛ք:
— Չե՛, անկարելի յե, ասաց Սանասար:
Աղջիկն ել դարձավ հմայք արավ,
Կանչեց իր հավք եբեր.

Հավք ինչ կանչեց, ինչ հասակի եկած եյին.
Ե՛լի են հասակին դարձան:
Սանասար ասաց.— Հա՜յ աղե՛կ:

Ապա զաղջիկ եդիր մեկ կողմ,
Ինք եկավ մոտ եդ մարդեր,
Ասաց.— Ե՜հ, կտրին փահլեվաններ,
Դուք զըմեն եսա աղջիկ ապով եք եկե.
Դուք տ'երթայիք, կռիվ անեյիք,
Կռվով եսա աղջիկ տի բերեյիք:
Մենք ել եսա աղջիկ ապով ենք եկե,
Կո՛ մենք երկու աղբեր գնացեր ենք,
Կռիվ արեր, հաղթեր ենք,
Նո՛ր՝ եսա աղջիկ առեր, բերեր եստեղ:
Դե՛, մկա նորեն դուք ձեր ուժի վերա հասաք:
Աղջիկ թող կենա են դեհ,
Մենք եստեղ կռիվ անենք:
Թե դուք ըզմեզ երկու աղբեր հաղթեցիք,
Աղջիկ թող ձե՛զ կենա:
Թե մենք ըզձեզ հաղթեցինք,
Աղջիկ թող մե՛զ կենա:
Եդա մարդեր դարձան, ասին.
— Հե՜յ, Սանասա՛ր, Բաղդասար,
Դո՛ւք եղաք պատնառ, զմեզ ազատեցիք,
Ենպես սրիք՝ մենք ժրացանք նորեն.
Դիր մ'ել ելնենք, հետ կռի՞վ անենք:
Մենք չենք ի՛շխենա հետ ձեզ կռիվ անենք:
Ա՛զբեր, մենք չենք կռվի,
Մենք տ'երթանք մեր երկրներ:

Սանասար ասաց.— Ա՛յ կարիք աղբերներ,
Դուք հոժար կ'ընի՞ք՝ յես աղջիկ տանեմ,
Եդոր հետ կյանք վայելեմ:
Ենոնք դարձան, ասին.
— Տա՛ր, բարի տեսնես մոտեն.
Շնորհավո՜ր ընի, բարո՛վ վայելես:

Ոն խոսուն մարդեր կաց-բարով արին,
Ելան, գնացին իրենց երկրներ,
Դարձան ամեն մեկ իր տուն:
Սանասար, Բաղդասար ելան, զաղջիկ առին,
Ընկան ճամբա, վոր գան Սասուն.
Սանասար ասաց.— Ա՛ղբեր,
Ես Դեղձուն աղջիկ դո՛ւ առ:
Բաղդասար ասաց.— Չե՛, յես զեն չեմ առնի.
Ենի երկու դիր խե՛զ բարեվ գրե,
Կոիվն ել դո՛ւ արիր, դո՛ւ տ'առնես:
Ո՞վ ե լսե, ո՞վ ե տեսե,— ասաց,
Ադբեր զաղբոր նշանածն առնի:
Ցես կ'առնեմ իմ նշանած,
Զեն աղջիկ, վոր վիշապից ազատեցինք:

Ու շատ եկին, թե քիչ եկին,
Տեսան՝ կապուտ ձիավոր մի են դեհեն եկավ.
Կանչեց.— Հա՜յ գիտի, սրիկաներ,
Հուրի-փարին ինձ ե վայել, դո՞ր կը տանիք:
Սանասար ասաց.— Ա՛ղբեր,
Դու ենա ձիու գլուխ բռնի՛,
Ցես գնամ, տեսնեմ՝ են ինչ կ'ասի:
Բաղդասար ասաց.— Դո՛ւ գրո՛ղտուն,
Ամեն անգամ ել դու կ'երթաս.
Ես անգամ ել յե՛ս տի գնամ:
Սանասար ասաց.— Դո՛ւ գնա,
Ինչո՞ւ կը նեղանաս:

Բաղդասար ըզձին քշեց, գնաց առաջ.
Խոսք մի ենոր մոտեն, խոսք մի ենոր մոտեն.
Իջան, թռան դեհ իրար:
Բաղդասար վերուց, զեն եդիր գետին:
Իսկուն զփոդպատ քակեց,
Ծրծեր եհան դուրս, ասաց.— Բա՛ղդասար.
Ահա ե՛ն վոր կը տանի, իմ քուրն ե.
Ցոթ տարի կա՝ յես փախեր եյի,
Անհետացեր եյի ենոր դարդեն,

Վոր վեր խալխին ենպես հմայք կը թալեր.
Ընկեր եյի սարեր, եղեր ինչպես հարամիք.
Վերջըն գնացեր Կանաչ քաղաք,
Մոտ են տեղաց թագավոր:
Վոր լսեցի՝ զենոր հմայք խափանեցիք,
Զենի բնրիք Սանասարի համար,
Ցնս ել, քո նշանած, եկա կո քե՛զ համար:

Ելան, չորսով հեծան ձիանք,
Քշեցին, վոր գան Սասուն:
Ականջկլա գնաց ենոնց կողմից,
Մորըն խաբար ետու,
Թե.— Բերեր ենք Քաջանց թագավորի աղջիկներ,
Քառսուն-Շուղ-Ծամ Դեղձուն ու իր քուր.
Փող ու թմբուկ, գուսանք պատրաստ ըլնի,
Վոր գանք, հարսնիք անենք:
Մերն եր, Ծովինար խանում, ուղարկեց,
Քառսուն ձեռք փող ու թմբուկ, գուսանք բերել ետու,
Քաղաքացիք զամեն ժողվեց:
Աղջիկներ պսակեցին,
ԸզԴեղձո՛ւն-Ծամ վեր Սանասարին,
Զենոր քուրն ել վեր Բաղդասարին:
Քառսուն որ, քառսուն գիշեր հարսնիք արին.
Քեֆ, ուրախություն, խնջույք արին:

Բաղդասար ելավ, զիր կին առավ, գնաց Բաղդադ,
Սանասար մնաց Սասուն:
Բաղդասար անորդի մնաց:
Սանասարին, աստված ետու,
Լաճ մի ելավ, անուն եդին Վերգո:
Քանի մի տարի վերա անցավ,
Սանասարին երկու տղա ել ելավ,
Մեկի անուն եդին Զենով Հովան,
Մեկի անուն՝ Մհեր:
Եղոնց մեջ Վերգոն իսկի բանի պետք չե՛ր.
Զենով Հովան ենպես ձենով եր,
Վոր յոթ գոմշի կաշի կը փաթթեր զի՛ճք

Ու նոր կը բռռար, վոր չըլնի պատռեր:
Մեր քանց են երկուսն ել հունարով եր:

Մնաց: Սանասար, մահու որն եկավ, մեռավ:
Ծովինար խանում, ենոնք զըմեն մեռան:
Մնացին Քեռի Թորոս, Դեղձուն,
Վերգո, Ձենով Հովան ու Մեր:
Ընկավ Մեերի ժամանակ:

Մեծ Մհեր

1

Դառնամ, զողորմի՛ն տի տամ
Դեղձուն Ճուղ-Ծամին,—հազա՛ր ողորմի.
Դառնամ, զողորմի՛ն տի տամ
Քեռի Թորոսին,— հազա՛ր ողորմի.
Դառնամ, զողորմի՛ն տի տամ
Ջենով Հովանին,—հազա՛ր ողորմի.
Դառնամ, զողորմի՛ն տի տամ
Են Ջոջ Մհերի՛ն,— հազա՛ր ողորմի.
Դառնամ, զողորմի՛ն տի տամ
Արմաղանին,— հազա՛ր ողորմի.
Դառնամ, զողորմին տի տամ
Իսմիլ խաթունին,— տի տա՛մ ողորմի:

ՄՀԵՐԸ ԽՆԱՄՈՒՄ Է ՍԱՍՈՒՆ

2

Սանասարի մահից հետո Զենով Հովան ասաց
— Սասուն քե՛ կը հասնի, Վերգո,
Դո՛ւ ես մեր ջոջ տղբեր:
—Հե՞,—ասաց Վերգո.—յես չեմ կարնա կառավարի.
Ճողված եմ վաղվընե.
Որ մի, Սանասարի գուրգ վերուցի, թալի,
Ենոր զոռեն նողվա:
Վերջը նստան, խորհուրդ արին.
Քանի տղեք պստիկ եյին,
Ասին.— Թողնենք Քառասուն–Ճուղ–Ծամ Դեղձուն
կառավարի՝
Զուրի տղեք մեծնան:
Դեղձուն Ճուղ–Ծամ հեծավ Քուռկիկ Զալալուն,
Գնաց սարեր ֆրոա,
Զունֆի շատո՛ւնց եր, վոր դուրս չեր ելե տնեն:
Մարդ ահ են գախ թամաշ աներ զինք ու իր ձին:
Սադափե Թամք դրե ձիու վերան,
Պողպատե Սանձ դրե ձիու բերան,
Հագե երկաթե զրահ, պողպատե սոլ,

Բռնե ի ձեռ Սանասարի թուղուզ,
Կախլան ել կապեր եր քամակ:
Ելավ, քշեց չուր սարեր մեկ:
Եսպես քանի մ' տարի Դեղձուն կառավարեց:

3

Բաղդադու Խալիֆային մոտիկ մա'րդ մի կար.
Մըսրա Մելիք անունով մա'րդ մի կար:
Մըսրը ենոր ձեռն եր— Մելիք Մըսրը կը նստեր:
Են իմացավ՝ Սանասարի մեռնել,
Ելավ, եկավ վեր Սասնա,
Խարջ ու խարաջ կապեց Սասնա քաղքին.
Տարին քառասուն անծին երինջ,
Տարին քառասուն կոտ վոսկի,
Տարին քառասուն ազապ աղջիկ կ'առներ:
Քանի մի տարի Սասուն Մելքին խարջդար եղավ:

4

Ցերբ որ Մհեր եկավ-եղավ յոթ տարեկան,
Ցոթ շենք եղավ իր բոյ:
Ենոր վանք—վարժատուն դրին.
Քիչ մի սորվավ, շնորհքով լցվավ,
Որ մ'ել իր մոր ասաց.
— Մարե', հերիք եսպես մնամ.
Հրաման տու ինձ՝ երթամ սարեր, քարեր շրջեմ,
Գազան ու հավք զարկեմ,
Մարդերու շարք մտնեմ:
Քառասուն-Ճուղ-Ծամ ասաց.— Մհեր,
Պստիկ ես, չես կարնա գնա,
Քանի մի տարի համբերե:
Ամա Մհեր ասաց.— Մարե',
Քանի մեր տուն դեռ մարդ չկա՝
Դևեր մեր տան վերա տի գան, վնաս տի տան:
Աղեկ ե, վոր հիմիկվանե պատրաստ ըլնեմ՝
Թըշնամու դե'մ կայնեմ:
Դեղձուն Ճուղ-Ծամ տեսավ՝ չի կարնա վեր տղուն,
Հրաման ետուր:

Եդ ժամանակ Մհեր գնաց վորսի·
Կը պտտվեր սար ու դաշտեր.
Ցերեկ կ'երթար՝ վորս անելու,
Գիշեր կը գար՝ իր տեղ կը քներ:
Վոտքով կ'երթար կը գար— ձի-բան չըկար:
Որ մի Մհեր շատ եր լարե,
Աղվեսներու հետև շատ եր վազե,
Ել չըկարցեր եր բան բռնի:
Իրկուն եկավ հերսոտ, դադրած,
Իր ձեռաց փետ թալեց գետին:
Քեռին հարցուց·— Տըղա, հորի՞ յես հերսոտե:
Մհեր ասաց·— Քեռի Թորոս,
Անտե՛ր մնա եդ տեսակ վորս,
Ես մեկ որ յես շա՛տ եմ վազե,
Ես մեկ որ յես շա՛տ եմ լարե...
Գազաններ վոր կան՝ կը փախնեն,
Չեմ կարնա հասնի լարելով·
Հեռվանց նետ-աղեղ կը թալեմ՝
Չի՛ հասնի, դարդա՛կ կը դառնամ:
Ա՛խ, քեռի, իմա՛ղ կը դադրեմ...
Ինք վոր մարմնով ծանրացեր եր՝ վատ կը վազեր·
Վոր կը վազեր՝ չոքերեն հետ հող կը խրվեր:
Քեռին ասաց·— Դու, իմկընի՛, Սասունա ծուռ,
Սասունցիք բոլոր ծո՞ւռ տ'ըլնեն·
Ախար մարդ ել վոտքո՛վ վազի:
Ջանավարներ ձեռքո՞վ բռնի:
— Հապա՞, քեռի,— ասաց Մհեր—ինչպե՞ս անեմ:
Մհերի մեր վերցուց, ասաց·— Տղաս, Մհեր,
Գորգիկ իշխան մի կա Բիթլիս քաղաք,
Հրեղեն ձիեր շատ կա ենոր· ինքն ել մեզ բարեկամ·
Ելիր, գընա իր մոտ:
Հոգին չ'ելնի, գընա, քեզ ձի՛ մի առ, հեծիր:
Առ, բեր, ձի՛ով գնա վորսի:
Մհեր ասաց·— Նանե, մեկ-երկու հաց պահե,
Լուսուն պիտի ելնեմ երթա՛մ,
Երթա՛մ պիտի Բիթլիս քաղաք:

5

Լուսուն Մհեր ելավ,
Առավ երկու կորեկի հաց— դրավ գոտին,
Ծառ մի քաշեց՝ դրավ ուսին, ընկավ ճամբա.
— Բիբլիսու դաշտ, ո՞ւր ես հասպա, եկա՛ քեզի:
Գնաց իջավ Մառընկա դաշտ,
Գնաց հասավ Բիբլիս քաղաք.
Մըտավ քաղի գըլուխ:
Չահել տղեք կը խաղային քաղի գըլուխ:
Չահել տղեք տեսան՝
Մարդ մի կը գա— խոշո՛ր մարդ մի—
Դրած ուսին խոշոր ծառ մի,
Խոշոր գերան, վոր կը թալեն կտրի վերան:
Տղեկներ վոր եդ մարդ տեսան, ասին.
— Իդա հըմլա ել մա՞րդ կ'ըլնի,
Գերան դրե ուսին, կ'երթա:
Մհեր հասավ ենոնց, հարցուց.
— Տղեկներ, Գորգիկ իշխանի տուն վո՞ր մեկն է:
Տղեք թափվան ենոր բոլոր՝ ասին.
— Արի տանենք քեզի Գորգիկ իշխանի տուն:
Առան բերին Գորգիկի դուռ:
Մհեր իր փետ դրեց գետին ու մտավ ներս:
Տեսավ՝ Գորգիկ իշխան նստուկ է իր սենեկ,
Իր իշխաններ շուրջ բոլորած՝ զրուց կանեն:
Մհեր բարև տվեց:
Գորգիկ իշխան ենոր բա՛րև չա՛ռավ.
Մհեր տեսավ, վոր են վերն է նստուկ, ասաց.
— Կ'ըլնի–չ'ըլնի, ե՛դ է Գորգիկ իշխան:
Մհեր գնաց, բռնեց ենոր թևեն,
Վերցուց, կանգնեցուց իր տեղեն,
Բիչ մի իշխանի թև քամեց:
Գորգիկ գիտցավ՝ իր թև կոտրեց յոթը տեղով:
Դարձավ, ասաց.— Տո, կտրին, հո՞ւստ ես դու:
Մհեր ասաց.— Սասնեցի՛ յեմ:
— Վո՞ր մեկի վորդին ես, տըղաս:

Ասաց·— Սանասարի՛:
Գորգիկ ասաց·— Ա՜խ, դու բարո՛վ եկար, տըղա՜ս,
Ա՜խ, դու հազա՛ր բարով եկար···
Գորգիկ կեղծավորութեն արավ·
Են Միհերի ուժ վոր տեսավ՝
Ուզեց Միհերի սիրտ շահի,
Ասաց·— Հա՛ց բերեք տըղին:

Միհեր նստավ, հանգստացավ,
Իր հաց կերավ, պրծավ:
Ու նոր Գորգիկ հարցուց·— Անունդ ի՞նչ է, տղաս:
Տղան ասաց·— Միհեր:
— Միհե՛ր, տըղա՛ս, իմա՞լ եղավ,
Վոր դու դե՛մ եկել ես ինձի:
Ասաց·— Քեռի, ենպես մարմնես ծանրացե՛ր եմ՝
Յերբ վոր սարեր վորսի կ'ելնեմ՝
Ձեմ կա՛րնա գել–գազաններու հետև հասնեմ·
Կը փախնե՜ն, կ'ազատվե՛ն ձեռքես:
Եկա՝ վոր ձի՛ մի տաս՝
Հեծնեմ, ձիո՛վ երթամ վորսի:
Կը տաս՝ դե տուր· չե՞ս տա՝ հիմիկ կ'ելնեմ
կ'երթամ:

Գորգիկ դարձավ, ասաց·
— Միհե՛ր ջան, արևո՛ւդ մեռնիմ,
Ուզածդ ձի մի չե՞·
Տա՛ս ձի քեզի մատաղ ըլնի:
Քառասուն ձի կա գոմըն կապուկ·
Քառասունից վո՛ր մեկ հավնեցիր՝
Են ել ա՛ռ, տար քեզի, հեծի՛ր:

6

Եդ իրիկուն քնան, առավոտուն ելան·
Առավոտուն վոր ելան, հաց բերին·
Հաց վոր կերան, պրծան,
Գորգիկ մշակին կանչեց, ասաց·

— Մրշա՛կ, կը տանես իմ Միհեր, շանց կը տուս
թալվեն·
Ձիերու միջեն վո՛ր մեկ ձի Միհեր սրտով կը հավնի,

Կը տաս թող տանի...
Մհեր մշակի հետ գնաց թավլեն.
Տեսավ, ի՞նչ տեսնի.
Բրսան ձին մե՛կ շարքին կապուկ,
Բրսան մեկե՛լ շարքին կապուկ—
Քառսունն ել՝ սադափե թամբով՝
Քառսունն ել՝ պողպատե սանձով:
Մշակն ասաց.— Մհեր ջան, յես մեռնի՛մ քեզի,
Վո՛ր մեկ ձին վոր սիրտդ կուզի՝ քաշի ու տար:
Մհերն անցավ եդ ձիերու երկու շարքով՝
Վո՛ր մեկ ձիու մեջքին զարկեց,
Ձին, փոր գետին առավ, կըզեց:
Քառսուն ձին ել փորձեց Մհեր՝
Դարձավ, ասաց.— Ինձ պետքական ձի՛ մի չկա:
Եդոնք յես տանեմ՝ ի՞նչ անեմ:
Իմ ձեռ, վորի մեջքին զարկի՝
Ամենի փոր իջավ գետին.
Իմ տակ կը դիմանա՞ն ըսկի:

Մհեր եկավ, վոր դուրս ելնի դռնեն՝
Մեկ ել տեսավ՝ գոմի միջին,
Երկու տարվա կլոր, փոչոտ,
Պստիկ քուռակ կը վազվրտեր:
Մհեր միտ վե՛ տասաց.
— Ինձի պետքական ձի չըկա.
Կայնի՝ գո՛փ մի զարկեմ քուռկին,
Քուռակ փետնա—ելնեմ՝ երթամ:
Եդ ե՛լ ինձ մեկ անուն կ'ըլնի:
Ասաց, գոփ մի զարկեց քուռկի մեջքին:
Եդ գոփ քսվավ քուռկի գավկին.
Քուռակ թռավ, զտաս ձի կտրեց,
Ջուխտ մի քացի եզարկ պատին.
Թե Մհերի՛ն առներ քացին,
Ըզմհեր կը թալեր Սասուն:
Քըսվավ քացին թրքընոցի քարին
Ու քար կրակ տվավ: Մհեր ասաց.
— Խա՜չ, թե ինձի վերցնո՛ղ կա՝ եդ քուռա՛կն է.

Վերցնող չըկա՝ եդ քուռակն ե:
Ախր յես իմ ուժ լա՛վ գիտեմ:
Զարկ վոր զարկի՝ քուռակ իր տեղը տի փետնար:
Կերթամ՝ թե զեդ քուռակ տվե՛ց—կը տանեմ.
Չըտվեց՝ զաթի թողնեմ— կ'երթամ:

7

Միերն ելավ, եկավ սենեկ, նստավ:
Գորգիկ իշխան հարցուց.
— Միեր ջան, վո՞ր ձիուն հավնար:
Ասաց.— Գորգիկ իշխան, քո ձիաներ
Քեզի թող բումբառաք ըլնեն.
Ցես չեմ ուզի ձիերուդ տեդ խոռեմ.
Կը տա՛ս՝ փոչոտ քուռա՛կն ինձ տուր.
Վոր եդ քուռակ չըտաս՝
Զաթի թողնեմ, կ'երթամ մեր տուն:
Քեռին ասաց.— Միե՛ր, տըղաս, ախըր ամո՛թ ե.
Ախր յես Գորգիկ իշխա՛նն եմ,
Եդ քուռակն ի՞նչ ե, վոր տանես:
Մարդեր տ'ասեն.— Սանասարի տղան եկավ,
Գորգիկ իշխան խնայեց խորոտ ձի տար նվեր:
Միերն ասաց.— Չե՛, քեռի, չե՛,
Են քուռա՛կն եմ քեզնե ուզե.
Կը տաս՝ հո կը տանեմ—
Չըտաս՝ կը թողնեմ, կ'երթամ:
Գորգիկ իշխան ասաց.
— Տըղա, դե, դո՛ւ գինաս,
Հո զոռովեն չ'ըլնի, դե դո՛ւ գինաս,
Վոր կը տանես՝ զեդ քուռակ, տար:

Մըշակ գնաց, պախուց դրեց քուռակի վիզ,
Գոմեն զեդ քուռակ հանեց դուրս,
Պախուց տվեց Միերի ձեռ:
Միեր քաշեց՝ քուռակ տեսնի,
Տեսավ՝ քուռակ չ'երթա:
Պարան ուզեց—բերին:
Բռնեց քուռակի չորս վոտ ամուր կապեց իրուր,

Գերան մտուց մեջ վոտներուն,
Վերցուց, դրեց ուսին, ասաց·
— Քեռի՛, դե մնացի՛ր բարով,
Աստված քո տուն թող շեն պահի:
Վեր ելավ Միհեր, ընկավ ճամբա:
— Ո՛ւր ես, Սասուն, եկա քեզի...
Թիֆլիս քաղքի ճժեր, մարդեր սատանա յեն·
Հավաքվեցին շուրջ Միհերին,
Հո՛ւ-հո՛ւ կանեն, բո՛ւ-բո՛ւ կանեն,
Կծաղրեն, վոր մարդ շալկեր ե ձի— կը տանի:
Միհեր եդ ծաղրին տեր չեղավ,
Ելավ, եկավ, հասավ Սասուն:

8

Քեռի Թորոս տեսավ Միհեր կը գա՝
Քուռակն ենպես ուսին դրած:
Ասաց·— Տըղա՛, փրչոտ քուռակն
Անջա՞խ առար են Գորգիկից—
Ըղկարցա՞ր խորոտ ձի մ'առնես:
Միհերն ասաց·— Քեռի՛,
Ճի՛շտ եր, ինչ կ'ասեյիր·
Գորգիկ իշխան ուներ կապուկ քառասուն ձի·
Անտերներու վո՛ր մեկին վոր ձեռ կպցուցի՝
Կրզավ, իր փոր զարկեց գետին:
Պետքական ձի մի չըկա՛ր մեջ:
Ասաց·— Քեռի, գո՛փ մի զարկի՝
Եդ քուռակի գավկին քսավ·
Քուռակ թռավ, տաս ձին կտրեց,
Ջուխտ մի քացի զարկեց թրքնոցի քարին—
Թրքնոցի քար կըրակ տվավ:
Քեռին ասաց·— Վոր եդպե՛ս ե,
Եդ քուռակ բե՛ր, հրեղեն ե:
Եդ քուռակ յես լա՛վ մի պահեմ,
Իրեք ամիս վոր լրանա՝ նո՛ր կը հեծնես:

Քեռի Թորոս պայտար եր— ձի լավ կ'ճանչնար:
Առավ, իրեք ամիս պահեց,

Քուռակն իր տեղն առավ,
Ու նոր տվավ՝ Մհեր հեծնի:

Մհեր վոր եղավ ձիավոր՝
Սասուն վոտի տսկ տվավ.
Ու կը հեծներ զուր ձին,
Ինչքան ջին–ջանավար ըլներ, կը բռներ,
Կը բերեր եդ իր վորս՝
Սասունցոց վերան կը ցրվեր:
Ցոթ տարի Սասուն պահեց վորսով:

9

Եղավ մեկ որ՝ վոր Սասնա մեջ
Հացի մեծ թանկություն ընկավ.
Մհեր տասնհինգ տարեկան եր:
Ժողովուրդն ելավ, եկավ լցվավ Մհերի դուռ.
Ասաց.— Մհեր, աստծո՛ւ սիրուն,
Մենք սովամահ տի կոտորվենք,
Արի մեզի ճա՛ր մի գտի:
Մհեր ասաց.— Ցես չե՛մ գիդի.
Երթամ քեռուն ասեմ.
Ենի թ՝ գիտնա՝ ես թանկություն ինչի՞ց կ՝ըլնի:

Ելավ, գնաց քեռուն,
Ասաց.— Քեռի, թանկությո՛ւն ե.
Կարնա՞ս՝ մեզի ճար մի գտի:
Քեռին ասաց.— Մհեր, վորդի,
Ի՞նչ ճար գտնեմ. երկիր հաց չըմնաց:
Թե հաց ըլնի՝ քո հոր սմբաներ տի ըլնի:
Մհեր հարցուց.— Ինչի՞ց ե՝ հաց չըկա.
Կարկո՞ւտ զարկե, քամի՞ն քաղե,
Տո՞թն ե տվե...
Քեռին ասաց.— Չե՛, եդուց չե:
Մեր երկիր վար ու ցանք քիչ ե.
Ե՛ծ կը պահենք, տավար ու եշ,
Մեր հաց Շամա, Հալեպա կըզար.

Ջե, մեկ առյուծ է լուս ընկե.
Ցերբ սար չուրի երթանք՝ մեզ կո՛ւլ կը տա:
Ճամբան կտրեց ճամբորդներեն.
Գալող ու երթացող հատավ.
Մարդ չի կարնա ճամբա երթա՝
Շամից եստեղ, եստեղից Շամ.
Եդո՛ր համար հացի պակաս
Ու թանկություն ընկավ աշխարք:
Մհերն ասաց.— Քեռի՛,
Առյուծն ի՞նչ է. իմա՞լ առյուծ:
Ասաց.— Գազաններու ջո՛ջն է առյուծ.
մարդիկ կ'ուտի:
Մհեր հարցուց.— Հեռվա՞նց կ'ուտի,
Թե՝ մոտենաս, ու նոր կուտի:
Քեռին թե՝ մոտենաս ու նոր:
Մհերն ասաց.— Եդպե՛ս է՝ յես լուսուն կ'երթամ:
Քեռին ասաց.— Վորդի, չ'երթաս, քեզ կը ջարդի:
Ականջ չարավ, գնաց:
Առավոտուն վիր վոտ որ ուզանգուն հասավ,
Ամե՛ն, ինչքան ձի հեծնող կար՝
Հեծան՝ Մհերի հետ գնացին:
Գնացին են առյուծին:
Առյուծ տեսավ՝ մա՛րդ մի կը գա՝
Ելավ, եկավ իրեն տեղեն:
Պոչը գետին կը սիտփեր.
Թոզ ու դուման կը բարձրացներ.
Ելավ՝ եկավ Մհերի դեմ:
Մհեր ասաց իրեն զորքին.
— Եդ ի՞նչ է, վոր մեր դեմ կըգա:
Ասին.— Առյուծ է՛դ է, վոր կա:
Ասաց.— Ո՛վ վոր եդ առյուծին թրով զարկեց՝
Ցես կը թողնեմ առյուծն իր տեղ,
Ցետ կը դառնամ ենոր վերան ու կը սպանեմ զենի:
Դարձավ, ասաց.— Առյուծի մեր
Աստված կանչեց՝ ծնավ ենոր.
Իմ մե՛րն ել ինձ, աստված կանչեց, ենպե՛ս ծնավ.

Ցես լմ ասպապը տլ հանեմ,
Կուշտի՛ կպնեմ առյուծի հետ:
Մհերի հետ գնացած մարդիկ հեռու կանգնան.
Մհեր մենա՛կ գնաց:
Գնաց, ինք ու առյուծ առան իրար:
Մհեր կանչեց·— Հացն ու գինին, տեր կենդանին:
Կանչեց, մի ձեռ թալեց եդ առյուծի վերի՛ ծնոտ,
Մյուս ձեռ թալեց ներքի՛ ծնոտ,
Ճղեց եդ առյուծ մեջտեղեն,
Արե՛ց ենոր երկու կտոր:
Մեկ դրեց ճամբու ես դին, մեկել՝ են դին:

Իր հետ գնացած մարդեր եկան,
Կայնան Մհերի մոտ:
Մեկ մարդ ել շուտ խաբար հասցուց Սասուն,
Մհերի մոր, թե·— Աչքդ լուս ըլնի,
Մհերն առյո՛ւծ սպանեց:
Զուր հիմիկ Մհեր եր,
Հիմիկվնե հետ եղավ Առյուծաձև Մհեր:

Մհեր դարձավ, եկավ Սասուն:
Ու սասնեցիք եդ ժամանակ
Եկան Մհերի դուռ, ասին·
— Ետուց հետև մեր տեր դո՛ւն ես,
Մեզի կառավարի:
Ցերբ սասնեցիք Մհեր արին կառավարող՝
Քառասուն-Ճուղ-Ծամ Դեղձուն տվեց ենոր
Քուռկիկ Ջալալին,
Թուր Կեծակին,
Գուտն զրեհին,
Գոտին ի մեջքին
Կապան զադիքեն:
Հեծավ Մհեր Քուռկիկ Ջալալին,
Առավ ի ձեռ Թուր Կեծակին,
Շրջեց իր հոր հողեր:
Ու թշնամիք կորագլուխ ելան ենոր առջև:

Մնաց: Որ մի Քեռի Թորոս, իշխան մարդեր
Ժողվան, նստան Ղեղձուն–Ծամի սենեկ, ասին.
— Սանասարի տղեն հորի՞ չես կարգի դու:
Խորհուրդ արին:
Լուսուն Քեռի Թորոս, Հովան ու կտրիճներ
Ամեն ձի մի հեծան,
Ընկան նամբա, գնացին:
Գնացին Մելքոն թագավորին:
Մելքոն թագավոր հարցուց.
— Ապա ինչի՞ եկեր եք դեմ ինձի:
Քեռի Թորոս ասաց.— Թագավոր,
Եկեր ենք՝ գործ աջողեցուս:
— Ի՞նչ գործ,— հարցուց:
Քեռի Թորոս ասաց.
— Թագավոր, քաղքեն ընի, գեղեն ընի,
Մեկ լավ աղջիկ գտնես,
Տանենք, պսակենք Մհերի վերան:
Մելքոն ասաց.— Ելեք երթանք Մանածկերտ,
Թևաքորոսի աղջիկ՝ Արմաղան ուզենք Մհերին:

Ելան Մելքոն թագավոր ու վազիրներ,
Ելան Քեռի Թորոս ու կտրիճներ,
Գնացին Մանածկերտու բերդ:
Մանածկերտու բերդ Թևաքորոս կա.
Կայնան Թևաքորոսի դուռ
Ու հարցուցին թե.— Թևաքորոս տա՞նն է:
Ասին.— Թևաքորոս գնացեր է Վան:
Ագրատգահ գնացին Վան
Ու հարցուցին.— Թևաքորոս հո՞ղ է:
Ասին.— Զե՛, բերդի հիմ թալեց,
Իր հաց կերավ գնաց Արզրում:
Գնացին կեսավուր Արզրում
Ու հարցուցին ենտեղ.— Թևաքորոս հո՞ղ է:
Ասին.— Բերդի հիմ թալեց,

Կեսոր կերավ ու գնաց Կարս։
Գնացին ի Կարս։— Թևաքորոս հո՞դ է։
Ասին։— Բերդի հիմ քալեց,
Հրամեն կերավ ու գնաց բերդ Մանաձկերտու։
Եկան նորեն հասան Մանաձկերտու բերդ։
Համբավ տարան Թևաքորոսին,
Ասին, թե։— Մելքոն քագավոր,
Քեռի Թորոս, Հովան ու կտրիններ
Կո, հյուր կը գան քեզի։

Են ել—մարդ ուղարկեց առաջ, առավ, գընաց։
Իշխանների տեղ ջո՛կ սարքեց,
Կտրիններրի տեղ ջոկ։
Եկան, նստան ու հաց կերան։
Հաց վոր կերան, պրծան, հաց վերուցին,
Թևաքորոս հարցուց Մելքոն քագավորին։
— Ե՛, քագավոր, բարով եկաք,
Ի՞նչ գործ պատահավ, վոր եկաք։
— Հապա, եկեր ենք քո ոջախ,
Հետ քո խնամություն անենք։
— Ի՞նչ խնամություն է,— ասաց։
Ասին։— Քո աղջիկ, Արմաղան,
Մեր Մհերին տի տաս։
Ասաց։— Մհեր վո՞րիդ տղան է։
Ասին։— Սանասարի՛ տղան է։
Ասաց։— Մելքոն, Քեռի Թորոս, Հովան,
Յերբ վեր դուք եկեր եք ինձի՝
Աղջիկ իմ կը տայի ձեզի փեշքեշ,
Ամա կ'ըլնի ես յոթ տարի
Արմաղան խլաքի տեր, Սիպտակ Դևն տարե գերի,
Թե գերուքենե ազատ անի—Արմաղան Մհերին հայալ։

Ետանք ես զրուց քող անեն՝
Մենք խաբար տանք Սիպտակ Դեվեն։

11

Եդ ժամանակ Սիպտակ Դև խըլաթ թագավոր եր·
Լսեր եր, վոր Մհերի պատիվ
Որեոր շատ կը բարձրանա մեջ աշխարքին:
Ասաց·— Որ մը չե, որ մ'ըլնի
Մհեր ինձի վնաս տի տա·
Խըլաթ պիտի առնի:
Ու Սիպտակ Դև ելավ, թուղթ մի գրեց,
Տվեց Քամի փահլեվանին,
Քամին եդ թուղթ տարավ Սասուն:

Մհեր եդ որ ելեր եր սար՝ վորսի·
Մեկ ել եդ փահլեվան Քամին
Ենոր առաջն ելավ, ասաց·
— Ոհո՛··· բարո՛վ, բարո՛վ, Մհեր,
Ենչափ արդեն դու ջոջացար,
Վոր կը գաս սար վո՞րս անելու:
Գիտցած ըլնես՝ վոր Սիպտակ Դև քեզ կը կանչի կռիվ:
Են թուղթ տվեց Մհերի ձեռ·
Մեջ թղթին գրուկ եր·
— Արի ինձ հետ կռիվ:
Մհեր զթուղթ առավ, ասաց·
— Աղեկ· պատրա՛ստ կաց, կռ, եկա:
Թուղթ բերող դև ասաց·
— Մհեր, խնդիր ունեմ·
Դու բա՛խտ տաս ինձ, վոր ինչ ասեմ՝ անես:
Մհեր պատասխանեց·— Իմ տված խոսք— խո՛սք է·
Թե դուք դև եք,
Մենք ել Սասնա կտրին փահլևան ենք:
Մեզ սուտ չկա· ասա, ի՞նչ կուզես:
Ասաց·— Գիտցած ըլնես,
Մենք Սիպտակ Դևը չենք սիրի·
Կուզենք՝ գաս, ըսպանես·
Ու ազատվենք ենոր ձեռեն:
Մհեր ասաց·— Աղեկ:

Մհեր յետ դարձավ տուն,
Մոր ձեռ պագեց,

Ասաց·— Գիտցած ըլնես,
Սիպտակ Դև գիր մի ուղարկե՝
Ինձ կը կանչե կռիվ:
Քառսուն-Ճուղ-Ծամ Դեղձուն ասաց·
— Մեռնե՛մ քեզի, դուն տըղա յես·
Իր հետ ինչպե՞ս կարնաս կռվի:
Են ամեն թագավորներեն զորընդեղ ե·
Ենոր վերան թուր չի բանի:
Մեր, դու քիչ մի համբերի,
Ձուր մեծանաս ու նոր երթաս կռիվ:
Ասաց·— Մարե, համբերելն աղեկ ե,
Ամա յես խոսք տվի Դևին, տ'երթամ:
Քառսուն-Ճուղ-Ծամ ասաց·— Աղեկ,
Գընա, ամա ես իմ խրատ լսի·
Դու Քուռկիկ Ձալալին հեծիր,—
Գիտնա՛ս՝ Սանասարի ձին ե,
Ամեն շնորհքներով լեցուն,—
Սանասարի զրահ հագիր,
Պողպատ ջզմեն քաշիր քո վոտք,
Երկաթե գուտն դիր քո գլուխ,
Նետն-աղեղ ու կախլան քամակըդ առ,
Ձզուրզ բռնի քո ձեռ,
Կապի Թուր Կեծակին, քըշի:
Եդ խրատներ առնելուն պես,
Մեր շուտ մի հազավ իր հոր զենք ու զրահ,
Թռավ Քուռկիկ Ձալալու քամակ, քշեց:

Քշեց Մեր ետա տեղեն,
Գնաց հասավ Սիպտակ Դևի յայլան,
Մեկ բարձրիկ սարի մի գլուխ:
Ժամանակ գարո՛ւն եր·
Սար հազար ծաղկունքով, ավելուկով լեցուն եր:
Են ժամանակ Սիպտակ Դևըն իր մարդերով
Ցայլա եյին եկած եդ սար:

12

Մեր մինչև հասավ եդ տեղ՝ ենոր ծարավ բռնեց·
Ընկավ սար-ձոր՝ աղբյուր գտնի·

Մեկ ել տեսավ՝ յերկու դև–ածդահա
Աղբրի մ՝ վերա, գոմշու տիկ մի ջրով լցե՝
Կայներ եյին եդտեղ:
Մհեր ենոնց բարև ետու, ասաց.
— Կը թողնե՞ք աղբրից պուտիկ մի ջուր խմեմ:
Դևերը ասին.— Եսա աղբուր Սիպտակ Դևի աղբուր
կ'ասեն.

Ենորեն զատ՝ հրաման չկա
Մարդ ջուր խըմի եսա աղբրից:
Մհեր ասաց.— Աղբե՛ր ջան,
Ձեզի խնդիր կանեմ—պուտիկ ըմ ջուր տվեք ինձի,
Խըմեմ, երթամ ճամբա:
— Չե, չե,— ասին.— Սիպտակ Դևը յերդվեցուցե,
Մեզ պահապան դրե եստեղ.
Վոր ոտար մարդ գալու ըլնի, ենոր իմաց տի տանք:

Ել Մհերի համբերություն հատավ,
Հասավ, զարկեց ենոնց,
Ելավ Մհեր, գնաց վեր աղբրին,
Մեկ ըսպանեց, մեկ վիրավոր եղավ, փախավ:
Կուշտ մի եդ ջուր խմեց,
Փախած դևի արնի հետքով գնաց,
Հասավ մեկ անվեր–վիրի տեղ, այրի մի մոտ:
Են այրից բոց կը թալեր դուրս.
Են այրի դուռ, ծառին կապած՝
Հուրի–հրեղեն աղջիկ մի
Նստե վիրավոր Դևի կուշտ,
Ենոր արունը կը սրբեր:
Մհեր հասավ, բռնեց եդ Դև,
Ենոր ձեռ–վոտ կապեց, դրեց քարի մի տակ,
Ու աղջկա կապեր քանդեց:
Ելավ եդ հրեղեն աղջիկ կայնավ,
Տեսավ՝ ենպե՛ս խորոտ, ենպե՛ս կըտրիճ ըմ է Մհեր.
Խելագնաց ելավ վերան.
Ենչա՛փ, որ ենոր սիրտ ճըխաց:
Շուտ մի ասաց.— Հե՛յ, դու, կտրիճ,
Հավքն իր թևով, ոձն իր պորտով

Չեն կա՛րնա գա եստեղ,
Դու ինչպե՞ս եկար:

Մհեր հարցուց·— Հապա ինչպե՞ս եղավ,
Վոր դու եկար եսա սարեր:
Աղջիկ խորունկ ախ մի քաշեց,
Ասաց·— Ախ-վա՜խ, մի՛ հարցուցի:
Ես յոթ տարի կ'ըլնի
Սիպտակ Դևի ձեռ կը տանջվեմ·
Եդ անիրավ Սիպտակ Դևը
Եկավ վեր մեր յերկրին կռիվ·
Եդ պահ յես խաս բախչեն սեյր կանեյի:
Եկավ անկարծ՝ ինձ առնել փախնել մե՛կ արավ:
Բերեց եստեղ, ուզեց ինձ կին առնի·
Ամա աստծու կամքով իմ ուժ պատավ·
Յես ենոր հետ չ'ապրա:
Յես կույս եմ չուր եսոր:
Գիտցած ըլնես·— ասաց·— յես երազ մ'եմ տեսե·
Են երազի՛ մեջ ինձ ասին,
Վոր շատ գընաց ու քիչ մնաց·
Մհեր անունվոր կտրի՛ճ մի տ'ելնի,
Սիպտակ Դև տի սպանի
Ու ինձ ազատ անի ենոր ձեռքեն:
— Ո՞ւր է ապա Սիպտակ Դև·— հարցուց Մհեր:
Ասաց·— Գնացե Սև Սար՝ ուխտի·
Ելավ ինն որ, եսոր յետ տի դառնա:
Ենոր զորություն սև յեզան մի վերան է,
Են սև յեզ կը հեծնի՝
Կ'երթա ամեն աշխարք,
Կը պտտի, ավերություն կանի:
Ենոր առաջ չի կարնա մարդ կայնի:
Մարդ մ'որ են սև յեզ ըսպանի՝
Նոր Սիպտակ Դևը կը հաղթվի:

Մհեր ել բան չ'ասաց: Թռավ իրեն ձիու քամակ,
Ու ձին քշեց Սև Սար:

Մեջ Սև Սարին Մհեր ճահճուտ տեղ մի տեսավ·
Են ճահիճեն սև յեզ մ' ելավ իր դեմ:
Մհեր ասաց իր աղոքք,
Բաշեց զԹուր կեծակին,
Խոքեց եդ յեզան փոր:
Յեզ բառաչեց, ծառս ելավ վեր ենոր,
Ընկավ գետին, խատավ:
Մհեր դարձուց իր ձին,
Եկավ են այրի դուռ, նստեց:

13

Սիպտակ Դևը կերե, խմե,
Իր քեֆ հասուցե, նոր ծարավացեր եր,
Իր աչք քցե ճամբա, ջուր կ'աչքեր·
Շատ աչքեց, քիչ աչքեց,
Տեսավ, ջուր բերող դևեր չեն ի'զա:
Մտածեց, ասաց·— Կա'-չկա,
Մեկ զորավոր մարդու մ' են պատահե ենոնք:
Շուտ մի ելավ-հեծավ քամու ձին,
Քըշեց, գնաց դեհ են աղբուր:
Ճամբին մեկ ել տեսավ՝ այրի առաջ
Սարի մը պես մարդ մ' ե նստե
Ու հրեղեն ձի մ'ել բողե, կ'արածի:
Սիպտակ Դև գոռաց, ասաց·— Ե՛յ, հողածին,
Հավքն իր թևով, ոձն իր պորտով
Չեն կա'ռնա ես տեղ պտտվեն,
Դու ի՞նչ սրտով եկե,
Հասեր ես չուր եստեղ:
Ասաց·— Կանչեր ելիր, կո', Մհե'ռն եմ,
Եկա վեր քեզ կռիվ: Դե, ելիր, կռվենք:
Ինչ վոր ձեռնեդ կըգա, արա:

Սիպտակ Դև վոր եդ խոսք լսեց՝
Սարսափ մի զինք բռնավ·
Ձեռ վոտ ահու թուլցան:
Ամա սուտ ուրախութենով ասաց·

— Վայ դու, Մհեր, բարո՛վ եկար,
Ելիր երթանք վրանի տակ,
Ուտենք, խմենք, չուր լուսանա՝
Տեսնենք՝ աստված վորո՞ւս կը տա:
— Չե՛,— ասաց Մհեր,— մեր մեծ պապեր
Մեզ ենպե՛ս են խրատ տվե,
Վոր թշնամու դեմ ելնելո՛ւն պես՝ տի կռվենք...

Սիպտակ Դևը ու Զոջ Մհեր ձիեր քշին վեր իրարու,
Իրեք որ ու իրեք գիշեր իրարու հետ կռիվ արին:
Մհեր վոր իր ձեռ կը թալեր Սիպտակ Դևին,
Մհերի ձեռ խոր կը խրվեր ենոր մարմին.
Գիտես թե՝ խրմորի՛ց ըլներ եդ Սիպտակ Դև:
Վերա իրեք որ Զոջ Մհեր ենոր սպանեց,
Արմաղանին գավակ առնել ու գնալ մեկ արավ:

14

Իրիկուն Մհեր իջավ Սասուն.
Ու հալա նոր Քեռի Թորոս, Ջենով Հովան
Դարձեր եյին տուն:
Խաբար ղրկեցին Թևաթորոսին,
Թե Մհեր քո աղջիկ ազատե:
Թևաթորոս ու իր իշխաններ հեծան ձիանք,
Եկան, հասան Սասուն,
Են հուրի-Արմաղան բերին
Պսակեցին վեր Մհերին:
Եսոր համար բերին նռան գինին ու հաց դրին,
Կերան, խմին, ուրախություն, խնդում եղավ,
Յոթ որ ու յոթ գիշեր հարսնիք արին:
Յոթ որեն հետ Թևաթորոս, իր վազիրներ
Յետ դարձան, գնացին իրանց տեղ:

Խաբար հասավ Խլաթ,
Թե,— Մհեր Խլաթի Սիպտակ Դև սպանեց:
Խլաթու ժողովուրդ ուրախացավ,
Ելավ, եկավ Զոջ Մհերի առաջ.

Առավ ենոր, իրենց քաղաք տարավ:
Եդ քաղաքի դևեր ելան Մհերի դեմ:
Կռվան, չեյին թողնի՝ Մհեր մտնի քաղաք:
Մհեր քաշեց Թուր կեծակին:
Ընկավ մեջ դևերուն, զարկեց, զամեն ջարդեց,
Դարձավ, եկավ Սասուն:

Մեծ Մշերի կռիվը
Մարտ Մելիքի դեմ

1

Դեռ կ'ապրեր եդ վախտ Մըսրա Մելիք։
Մհերի քաջություն լսեց Մըսրա Մելիք, կատղավ։
Զե՞ Սասուն Մելիքի խարջդարն եր։
Ամա Մհեր եդ բան չը գիտեր։
Մելիքին հարկ չեր ուղարկի։
Մըսրա Մելիք հրաման արավ,
Ասաց։— Գնացեք Սասուն։
Ասեք Մհեր իրեն պատրաստություն տեսնի։
Ցես ու Մհեր տի կռվենք։
Մըսրա Մելիքի փահլևաններն եկան, ասին։
— Մելիք քեզնե կռի՛վ կուզի։
Մհեր ասաց։— Կռի՞վ կուզի։
Թող գա, տեսնենք ի՞նչ է կուզի մեզնե։

Ետեղ Զենով Հովան ասաց։— Մհե՛ր,
Եղեր ես խոջա մարդ, խելքի հասած,
Հեծի՛ր, գնա Մըսըր, Մըսրա Մելիքի մոտ։
Մելիքի հետ խաթրո՛վ վարվի,
Մարդ ճանչցիր, մարդու շփվիր,
Ու խնդրվի, թող բան մ'ել մեր խարջ պակսեցու։
Մեր խարջ շատ է, չենք կարնա տա։

Մեր դարձավ, ասաց·
— Աստված քու տուն չ'ավրի, Հովան,
Մենք չը գինանք, դուն ել չ'ասիս,
Թե Մելիքին մենք խաբեց կը տանք:

2

Ասաց Մեր, ելավ հեծավ Բուռկիկ Զալալին,
Գնաց, հասավ Մըսրա սահման:
Մըսրա Մելիք իր դուռ բինակ
Դաշտի վերան նստուկ եր:
Տեսավ հեռվանց ձիավոր մի կը գա·
Ինք խոջա ամրոց եր՝ նստած ձիու վերան:
Եդ ձին փոթորկի՛ պես կը գար:
Եկավ, հասավ: Մեր բարև տվեց,
Մըսրա Մելիք եդոր դեմքիցը զարզնդավ:
Զը կարցավ, թե բարև առներ իրեն վախից:
Ու ինք միտ վե ասաց·
«Մագյար հըմլա մարդ ե՞լ կըլնի աշխարհ»
Ասաց·— Ձին բռնե՛ք:
Ծառաներ ձին բռնին:
Մեր իջավ: Մըսրա Մելիք հարցուց·
— Դու վո՞ր տեղացի յես, կըտրին:
Մեր ասաց·— Սասունցի՛ յեմ:
Ցես Սանասարի տղա՛ն եմ:
— Հայ-հա՛յ,— ասաց Մըսրա Մելիք,
Իմ հողի մեջ որ կը նստիք, դո՞ւք եք:
Մեր դո՞ւն ես:
Ասաց·— Մեր յե՛ս եմ:
Մըսրա Մելիք ասաց·— Կովի՞ եկար վեր ինձ:
Ինչի՞ դուք իմ խարջ չեք իտար:
Սասուն որ կա—եդ հող ի՛մն ե·
Առավոտուն իրար զարկենք:
Մեր ասաց·— Զարկենք:

3

Առավոտուն Սասնա Մեր
Գընաց, ենոր դեմը կայնավ:

Սասնա Մհեր, Մըսրա Մելիք
Իրար դեմ ըսկսան կռվել...
Հո՛ղը ենոնց վոտքերու տակը կը հերկեր.
Ասես՝ գուրնի՛ պես կը հերկեր:
Կես կասեյին.— «Ամպեր են վոր կը գոռգոռան».
Կես կասեյին.— «Յերկրաշարժեն սարե՛ր բլան»:
Եդոնց զարկ-զարկոցից աշխա՛րք կը դողդողար:
Ամեն մեկի զուրզն եր իրեք հարիր լիդրից.
Գուրզեր առա՛ն, տվի՛ն, զարկի՛ն մեկ-մեկելի.
Հա՛ր գնացի՛ն, եկա՛ն, զարկի՛ն մեկ-մեկելի,
Իրեք ցերեկ իրեք գիշեր կռվան
Ու չըկարցան հաղթեն իրար:
Են ինչ Մհե՛րն եր, ուժով եր,
Են ինչ Մըսրա Մելիքն եր՝ խորամանկ եր.
Ֆանդով եր:

Մ'ըսրա Մելիք տեսավ, որ Մհեր չի հաղթվի.
Տեսավ՝ Մհեր շատ ազնավուր, հաստա՛տ մարդ է.
Ասաց.— Սասնա Մհեր,
Քելե մենք մի պայման կապենք:
Ասաց.— Յես կասեյի՝ մեջ աշխարքին
Ինձնեն ուժեղ մարդ մի չկար՝
Ամա յես ու դու չը կարցանք իրար հաղթենք:
Ասաց.— Ինչքան խարջ կա ձեզի՝
Ամեն յես քեզի բաշխեցի:
Ել Սասունն ինձ խարջադար չի.
Քոնն են Սասնա ամեն հողեր,
Գընա, կե՛ր, խրմի՛, վայելե՛:
Մենակ՝ կռվի վախտ վոր ըլնի՝
Մենք իրարու պառեկ ընինք:

Ասաց.— Թե յես մեռնեմ՝
Ձիմ թազուհին ու երեխեք հանձնեմ քեզի.
Թե դո՛ւ մեռար՝ զքոն հանձնի մեզի:
Վոր խալխ չ'ասի, մնացեր են վորբ:
Մատներ կտրին, արուն արնի խառնեցին,
Պայման դրին, եղան աղբեր:

Մրսրա Մելիք ես բան մաքուր սրտով չ'ասաց·
Են Մհերից վախցավ, կեղծավորցավ:

4

Մհեր ընկավ ճամբա,
Եկավ, հասավ Սասուն:
Տեսավ՝ Ձենով Հովան կանգնած է դուռ:
Մհեր բարև տվեց ենոր:
Ձենով Հովան բարև առավ, հարցուց·
— Մհե՛ր, լա՛ռ, ըսկի մեր խարջ պակսեցուցի՞ր:
— Հովա՛ն, դու ի՞նչ կ'ասես — ասաց·—
Աղե՛կ մարդ է Մրսրա Մելիք·
Մեր հարկ բաշխեց ինձի,
Ասաց· «Սասնա հողեր թող ձեզ ըլնի»:—
Եդտեղ Մհեր ասաց·— Հովա՛ն, հապա գինա՞ս,
Մենք Մելքի հետ աղբեր եղանք:

Եդ որեն անցավ ժամանակ մի:
Մհեր ենպես կը շախեր Սասուն,
Վոր մարդ կը վախենար Սասնա մոտենա:
Հավք չե՛ր կարնա իր թևով անցնի են տեղեն,
Ոձ չե՛ր կարնա իր պորտով սողա են տեղեն:
Սասուն շա՛տ առաջացուց Մհեր:

5

Ժամանակ մի վրա անցավ, Մրսրա Մելիք մեռավ:

Մրսրա Մելքի մահից հետո
Մրսրա Մելքի կին, Իսմիլ խաթուն,—
Ենիկ ջահել ու խորոտիկ կին մ'եր,—
Ասաց·— Ձա՛նըմ, ինձի մա՛րդ մի հարկավոր է՝
Վոր երկրին տիրություն անի,
Մեր իշխաններ խաղաղեցու:
Ձ'ելնի՞նք՝ ճամբենք Մհերի մոտ,
Մհեր թող գա, ինձ հյուր ըլնի·

Թող իմ սենեկ պառկի,
Ենոր ցեղեն ինձ կտրիճ ելնի։
Չե՞ վոր իմ մարդ կ'ասեր.— Իսմի՛լ,
Թե Մհերից ու իր ձիուց ջինս չը վերունք,
Մհերի ցեղ մեր քոքը տի կտրի։

Մըսրա Մելքի կնիկ կ'ելնի ու ի՞նչ կանի։
Երկու փահլևան կ'ուղարկի Սասնա քաղաք.
Եդ փահլևաններու ձեռով Իսմիլ խաթուն
Իր գոտիկ-լաչակ կ'ուղարկի,
Ու մեկ գի՛ր մի կրտա, կ'ասի.
— Տարեք ես գիր, տվեք Մհերի ձեռ,
Ասեք՝ Իսմիլ խաթուն
Բեզ կը կանչե «իր մոտ»։

Ելան երկու փահլևաններ, զգիր բերին,
Բերին ու հարցուցին Մհերի տուն։
Մհեր վորսի՛ յեր գնացե.
Իրիկուն սարից եկավ՝
Փահլևաններ ենոր առջև ելան, ասին.
— Մըսրա խաթուն գիր մ' ե ուղարկե,
Ուղարկեր ե գոտիկ-լաչակ,
Բեզ կը կանչե «իր մոտ»։
Մհեր աչքեց գոտիկ-լաչակ,
Ասաց.— Եդ ի՞նչ խոսք ե։
Տեսնե՛մ եդ թուղթ։
Փահլևաններ եդ թուղթ տվին Մհերի ձեռ։
Մհեր կարդաց, տեսավ՝ Իսմիլ խաթուն գրեր ե.
— Արի՛, ինձ ա՛ռ.
Գոտիկ-լաչակ, կո՛, կ'ուղարկեմ,
Են վոր Սասուն քո ձեռն ե,
Մըսրին ել թող մնա քո ձեռ։
Թե դուն չըգաս՝ քանի գիս շատ կրնիկ ես։
Դուն Մելիքի հետ ուխտ ունիս,
Վոր ենոր կնիկ-երեխեք պահես։
Մհեր ասաց.— Ե՛յ, կտրիճներ,

Աստծու ուխտ թող վեր ինձ ըլնի:
Եկեք, երթանք մեր տուն.
Եկեք, փըշուր մի հաց կերեք,—գացեք,
Մըսրա խաթին բարև տարեք:
Ցառսուն ավուր վրեն կը գամ իր մոտ:
Տեսնեմ եդ ի՞նչ է կա:

Փահլևանները ելան, գնացին Մհերի տուն,
Հաց կերան, ելան դարձան Մըսրը:
Մհեր մնաց մենակ:

6

Մհեր եդ գիր մեկ ե՛լ կարդաց,
Գնաց Արմաղանին.— Կնի՛կ,— ասաց,—
Իսմիլ խաթուն թուղթ ուղարկե՝
Ինձ կը կանչե Մըսրը, տ'երթա՛մ:
Արմաղան ասաց.— Մհեր, մ'ե՛րթա.
Ինչի՞ կերթաս.
Ենոր հետ գլուխ մե՞կ անես:
Իսմիլ քեզ տեսե՞ր է,
Վոր իր լաչակ-գոտիկ կ'ուղարկե քեզ:
Դիտի թե՝ խորո՞տ ես, գե՞շ ես, ինչպե՞ս ես:
Ո՞ւր կը կանչե Մըսրը. ենի քեզ կը խաբե՛.
Մ'ե՛րթա, ենի քո խորոտություն չ'ուզի.
Ենի քո իգիթություն՛ն, քո կտրիճություն՛ն է կուզի.
Քո կտրիճություն լսե, հասկացե,
Կը կանչե՝ քեզնե լա՛ճ ունենա:
Աղեկ բան չե՛, մարդ, դու մ'ե՛րթա:
Դու զեն կուզես, ինձի կը թողնես:
Ասաց.— Կընիկ, յես որ չ'երթամ՝
Յես ել ենոր պես կընիկ եմ.
Մըսրա Մելքին ո՛ւխտ եմ արե,
Իմ ճար ի՞նչ է. յես տի գնամ:
Մհերի կնիկ ասաց.— Մ'ե՛րթա:
Մհեր ասաց.— Տ'երթամ:
Մհերի կնիկ ասաց.— Մ'ե՛րթա:

Մհեր ասաց.— Տ'երթամ:
Մհերի կնիկ ասաց.— Մհե՛ր,
Իմ զոռ քո վրա չ'անցնի:
Ամա՝ թ'երթաս—յես ուխտ կ'անեմ.
Իմ հե՛րն ես դու, իմ աղբե՛րն ես—
Քառասուն տարի դու իմ գողենք չըգաս:

7

Մհեր ելավ, գնաց Դեղձուն-Ծամի սենեկ,
Բարեկամնե՛ր կանչեց,
Կանչեց իշխան մարդե՛ր,
Կանչեց վարդապետնե՛ր, ասաց.
— Մըսրա թագավորի կընիկ ճամբեր ե իմ ետև.
Յես տի գնամ, դռ՞ւմ ինչ կասեմ:
Ձենով Հովան ասաց.— Ինչի՞ կ'երթաս,
Մելքի կնիկ խորամանկ ե,
Են մեր դուշմանի կնիկն ե,
Քեզի կը խաբե: Մ'երթա,
Քեզի տղա չկա—դու կաց քո տուն,
Աստված բալքի քեզ տըղա մի տա:
Ամա ինչ իշխաններ, վարդապետներ եյին, ասին.
— Մհեր, որ դու կ'երթա՛ս,
Մենք չե՛նք ասի՝ մ'երթա:
Մենք չե՞նք ուզի, թո՛ղ գՄըսըր,
Ուրիշ թագավորաց տեղ ե՛լ հալա կ'ուզենք զավթես:
Իսմիլ խաթուն որ կը կանչե՝ ինչի՞ չ'երթաս:
Ետա հազըր տեղ ե՝ շուտ գընա...Մըսըր տիրապետի:

8

Երեսունինն որ գընաց, մե՛կ որ մնաց:
Հա՛մա Մհեր ելավ վոտքի, սյիտի երթար,
Արմաղան ի՞նչ արաց.
Ելավ, սև մուշամբեն բերեց,
Քաշեց վեր ենոր սնարին:
Ելավ Մհեր, հեծավ իր ձին.

Զենով Հովան վազեց,
Կախվեց ձիու վզին, կուլա՜ր, կ'ասեր.
— Մ'ե՛րթա, մ'ե՛րթա, են անաուսկ խաբած է քեզ:
Շատ որ չարեն կտրավ՝
Մհեր իր զուրզ վերցուց,
Շարժեց վեր Զենով Հովանին:
Դուրզու քամին որ եզար Հովանին՝
Հովանի ուշ գնաց, Մհեր մնաց շիվար:
Իջավ ձիուց, լալով Հովանի սիրտ մաժեց, ասաց.
— Հովան, իմ մե՛ծ ախպեր, վե՛ր ելի, վե՛ր,
Յես հետ աստծու ուխտ եմ արեր:
Թե որ չ'երթամ՝ եդ իմ ուխտի տակ տի մեռնեմ:
Հովան ելավ նստավ, ասաց.
— Հոյ, հո՜յ, Մհեր, դու որ տ'երթաս՝
Զոր ճամբաներ քո առջև թող կանաչ դառնան.
Քո թշնամու ձեռք վեր քեզի չը բարձրանա:
Ելավ Հովան ու Մհերի ճակատ պագեց:
Մհեր հեծավ, քըշեց Քուռկիկ Զալալին
Ու Չարբահար Քամին իր հետ տարավ:

9

Առավոտուն ելավ, եդ իրիկուն հասավ Մըսրը:
Մսրա խաթուն ելե, նստե փանջարեն,
Են իր աչքեր դեղե,
Են իր բսկեր հանե դուս,
Են մեկ ժամվա ճամբա խալիչեք փռե.
Փռե ճամբախներ, մոմակալներ վառե,
Կ'ուզեր, որ Մհեր իրեն սերի՛ զար.
Ու աչք բոներ եր ճամբա.
Տեսավ՝ հեռվանց ձիավոր մի կը գա.
Ձիավոր՝ մեծ ամրոց մ' եր՝
Նստուկ ձիու վերան
Ու ձին փոթորկի՛ պես կը զար:
Խմիլ խաթուն ասաց.
— Կա թե չըկա՝ եդա Սասնեցի Մհերն է:
Մհեր եկավ, հասավ, բարև ետու:

Մհեր կայնեց, ենպե՛ս փանջարի առջև, ասաց·
— Իսմիլ խաթուն, ասա՛ քո խոսք:
Իսմիլ խաթուն ասաց·— Ջա՛նըմ, Մհեր,
Հյուրը եդպե՞ս կը գրուցի·
Իջիր ձիուց տակ, արի, ելիր եստեղ՝
Նոր յես քեզի պատմեմ:
— Չե՛, չեմ գիտի, հիմի՛կ տ'ասես·
Ուխտ եմ արե հետ աստծուն·
Իմ վոտ զանգուեն չեմ հանի դուրս·
Ասա՛՝ ի՞նչ ե քո ասելիք:
Իսմիլ ասաց·— Ուղո՛ղդ կ'ասեն,
Որ հաստակող են Սասնեցիք:
Ձեր երկիր ավերուկ հո չե՞·
Կրակ հո չի՞ պակասե Սասուն,
Որ դու եկիր եսա տեղեն կրակ տանես·
Իջիր տակ, հյուրասի՛րվե, նոր յե՛լ, գընա:
— Չե՛, չե՛, ջանըմ,— ասաց Մհեր,—
Եդ խոսքեր որ դու ինձ կ'ասես՝ յես չեմ հանչնա:
Ասա, նայեմ՝ ի՞նչ ե քո ասելիք:

Իսմիլ խաթուն տեսավ՝ Մհեր պիտի դառնա,
Ծառաներին ասաց·— Ձեր տուն ավրի՝
Նայեք, յոթը տարվա գինի չըկա՞·
Ենի պիտի դառնա գնա, շուտ արեք, շո՛ւտ:
Ծառաներ ելան, յոթ տարվա գինին բերին,
Տվին Մհերին՝ վեր ձիուն· Մհեր խմեց:
Մհեր որ խմեց՝ Մհերի նակատ բռնեց:
Իսմիլ խաթուն հրաման տվեց·—Ձգին բռնեք:
Ձգին բռնին՝ Մհեր իջավ տակ:
Իսմիլ խաթուն տարավ զՄհեր պալատ,
Ենտեղ ենոր բարեբ եկար արավ:
Մհեր հարցուց·— Ինչի՞ ես ինձ կանչե:
Ասաց·— Մհեր, կանչեր եմ՝ կը խնդրեմ—
Ես մեր երկիր խաղաղեցուս·
Մեր յոթ իշխաններ ինձ չեն հանչնա:
Մհեր ասաց·— Լավ, հաց թող բերեն,
Ուտեմ, չուրի լուսնա՝

Եդ իշխաններ կանչեմ։
Վոր եկան՝ յե՛ս գիտեմ, ենոնք։

Իսմիլ խաթուն դարձավ, ասաց.— Միհ՛ր,
Յես քեզ իմ գոտիկ–լաչակ ուղարկեր եմ,
Կանչեր եմ՝ դու ինձ մոտ պառկես,
Ետո՛ր համար եմ կանչե։
— Ետա չելա՛ծ բան ե,— ասաց Միհր։
Ի՞նչպես կարնամ յես քո գողենք մտնի.
Դու անուն՛ն ես, յես՝ քրիստոնյա։
Իսմիլ խաթուն ասաց.— Միհ՛ր,
Դու ինձ երիկ տի ըլնիս.
Իմ թագավորություն քոն տի ըլնի,
Իմ դուշմաններու դեմ տի կայնես։
Միհր, յես քեզ սիրե՛ր եմ.
Խաթրո՛վ ըլնի՝ տի գաս,
Զորո՛վ ըլնի՝ տի գաս։

Իսմիլ խաթուն քաղցր խոսքով,
Սիրով արբեցուց Միհրին,
Պատվեց, կերցուց, խմցուց,
Միհրին վոր շատ գինովցուց՝
Միհրի չարեն կտրավ—
Քըշեց, ելավ Իսմիլ խաթունի մոտ։
Իսմիլ խաթուն եդ վախտ մշակներուն կանչեց,
Ասաց.—Քուռկիկ Զալալին քաշեք ղսրըղներու վերան։
Մըշակներ Զալալին քաշին ղսրըղներու վերան։

Իսմիլ Միհրից մնաց երեխով,
Ղսրըղներ Քուռկիկ Զալալուց բռնեցին։

Առավոտուն Մըսրա յոթ իշխաններ եկան Միհրի մոտ։
Կայնան դիվանխանի դռան։
Միհր իրիշկեց, ասաց.
— Եհե՛յ, իշխաններ, եկե՞ր եք։
Ենոնք յոթ տեղով բաժանվան,
Յետ քաշվան, կանգնան։

Ասաց։— Այ իշխաններ, յես ի՞նչ մարդ եմ։
Ասին։— Վերին դեհ ուստվա՛ծ գիտենք,
Ներքին դեհ քեզի՛ գիտենք։
Մըսրա յոթ իշխաններ խոնարհվեցին։

Ելավ եդ սեզեն Մհեր, վոր դառնար Սասուն։
Ամա Իսմիլ խաթուն չ'եթող,
Վոր Մհերի գլխեն գինովություն անցներ։

Ինն ամիս, ինն որ, ինը սհաթ վոր լրացավ՝
Իսմիլ խաթունին տըղա մի ելավ։
Ենոր հոր հիշատակի համար
Տըղի անուն դրին Մըսրա Մելիք։

10

Յոթ տարի Իսմիլ խաթուն զՄհեր պահեց գինով։
Մհեր մեկ որ դըրսուց տուն կըմտներ՝
Եկավ, կայնավ դուռ։
Տնեն ձեն մի եկավ։
Մըսրա խաթուն տըղան կը խաղցըներ,
Կը ծիծաղեր, կ'ասեր։
«Քո մեր քեզի մեռնի, Մելիք,
Մըսրա ոջախ կ'անգնացուցես,
«Հայու ոջախ փչացուցես»։
Մհեր, վոր եդ խոսքեր լսեց,
Ուշքի եկավ, ասաց։
— Ոհո՛, եկա եստեղ՝ Հայու նրագը հանգցուցի,
Մըսրա նրա՛գ վառի։
Մհեր մըտավ սենեկ, հարցուց։
— Իսմի՛լ, եդ ի՞նչ խրատ կը տաս եդոր։
Եդիկ ձըվից դեռ դուրս չ'եկած՝
Հիմիկվընե դու չարությո՞ւն կը սորվեցուս։
Ին մեծանա՝ Սասնա նրա՞գը հանգուցի։
Իսմիլ ասաց։— Հալբաթ, կ' ծիծաղեմ,
Կ' ուրախանամ տղուս վերան։
Են վոր ելնի՝ ամբողջ աշխարքը տի զավթի։

Մհեր ասաց·
— Տըղա մ'ունես, ասենք, Սասուն տի փչացնի՞:
Դու իմ ազգ կորցուցես՝ զՄըսը՞ր կը կայնեցուցես
Թորա ք'ի՝ ել քեզ մոտ կը գամ·
Թորա ք'ե՝ ել Մըսըր մնամ:
Ցես տի դառնամ երթամ Սասուն:
Մելքի կընիկ ասաց·— Մհե՛ր,
Ցես կ'ուզեյի, վոր ինձի տըղա մի ըլներ·
Ցես կ'ուզեյի, վոր ժառանգ մի ըլներ Մըսրա·
Ցես կ'ուզեյի, վոր չրհանգչեր Մըսրա ճրագ:
Ցես յոթ տարի զքեզ գինով կը տիրեյի·
Հիմի կ'երթաս՝ դու գինաս, չե՛ս երթա՝ դո՛ւ գինաս:
Ես ասելո՛ւ պես՝ Մհերին գինովություն եթող:
Վոր Մհերին գինովություն եթող՝ Մհեր մտածեց·
«Հայ-հո՛յ, ես մե՛կ որ չեմ յես հաստեղ,
«Ցես ինչպե՞ս տի Արմաղանին ու Հովանին
պատասխան տամ:
«Տեսա՞ր, իմ կընկա խո՛սք ելավ:
«Իմ կընիկ ասաց մ'ե՛րթա:
«Ցես ենոր խոսք չը լսեցի»:
Եդտեղ Մհեր բախտակոծվավ, ասաց·
«Թող իմ աչքեր քոռանար,
«Վոր յես եկա, ես յոթ տարի
«Հալխի արտ ջրի՝ կանաչ պահեցի,
«Իմ արտ չորցավ: Վայ, ես ի՞նչ արի:
«Հայու ճրագ հանգուցի, Մըսրա ճրագ վառի»:
Ելավ սուս-փուս, ու դուրս ելավ Մըսրա,
Քոռ ու փոշման դարձավ իր տուն—Սասուն:

11

Աչքալուս տարան Արմաղանին,
Ասին·— Մհեր եկավ:
Արմաղան ելավ, դարբասներ հողեց
Ու դռներ փակեց:
Մհերն եկավ, տեսավ՝ դարբասներ փակ՝
Դռներ զոց— դուռ-բան չ՝ երևար:

Ասաց։— Պատճառն ի՞նչ է,
Դռներ իմ վրա շինած են։
Չեն թո՛ղնի վոր իմ տուն երթամ։
Ու Արմաղան պատասխանեց։
— Պատճառն են է՝ դու իմ մարդ չես։
Դու ինձ թողիր, գնացիր Մրսրր։
Ել դու չըգաս մուտ ինձ։
Մհեր կանչեց։— Դուռ բա՛ց...
Արմաղան ասաց։— Մհե՛ր,
Ցես երթում կերեր եմ։
Զուր քառասուն տարի դուն չես գա իմ գողենք։
Դու իմ հերն ես, իմ աղբերն ես։
Դու գնացիր Մըսրա ոչախ կայնեցուցիր.
Սասնա ոչախ փչացուցիր։
Եդ քո մեղք քավելու համար՝
Քառասուն տարի դու քառասունք տի պահես.
Ու նոր քեզի հրամանք կա. վոր գաս իմ գողենք։
Մհեր մնաց շիվար՝ ասաց։
— Քառասուն տարուց եդև ել բան բանի չ'հա՛սնի։
Մելիք կ'ըլնի կատարյալ մարդ։
Մհեր նստավ ենտեղ։
Ինչպես արավ, քանի մի համոզեց,
Չելավ, զկընիկ բառա չարեց։

12

Խաբար բերին Զենով Հովանին՝ Մհեր Մըսրա եկե։
Հովան եկավ, ասաց։
— Ա՛յ Արմաղան, եսոր ու եսոր հետ եկավ Մհեր,
Ելիր, հե՛տ վերու եդ սև մուշամբեն
Հարս մուշամբեն վերցուց, ասաց։
— Հովա՛ն, իմ մեծ աղբեր,
Զաքի՝ գիտեմ Մհեր անառակեն խաբված եկավ.
Արծաթ տարավ՝ փախոր հետ բերեց...
Ցես չեմ կարնա իմ ուխտ խախտեմ։
Զենով Հովան ասաց։— Հարսի,
Մենք վարդապետնե՛ր կը ժողվենք,

Քանի մի հատ իշխան մարդիկնե՛ր կը ժողվեին,
Դան, ձեզի արձակում անեն։

Վարդապետներ բերին՝ ժողվեցին,
Իշխաններ բերին՝ ժողվեցին։
Են իշխաններ եկան, ընկան մեջտեղ,
Վարդապետներ եկան, ընկան մեջտեղ,
Ասին։— Որինած, ախր վնաս չըկա,
Իսա՛ն է, մա՛րդ է՝ կը խաբվի՛։
Հաշվենք՝ զացեր, յա՛ր է բոներ, հիմիկ եկեր է։
Քանի՞ տարի երդում արեր ես, Արմաղան։
Ասաց։— Քառասուն տարի։
Վարդապետներ ու իշխաններ ասին։
— Ո՞րինած, որենքն ի ձեռ վարդապետաց։
Քառասուն տարին բերենք անենք քառասուն ամիս,
Քառասուն ամիս բերենք անենք քառասուն շաբաթ,
Քառասուն շաբաթ բերենք անենք քառասուն որ,
Քառասուն որ էլ բերենք անենք քառասուն սհաթ։
Ծուռ տերտեր մ՚ էլ կար՝ ասաց։
— Քառասուն սհաթ բերենք անենք մըկա։
Վարդապետ մ՚ էլ պահպանիչ մի ասաց։
Ասաց։— Աստված ձեզ թողություն շնորհե։
Էլեք, գացեք, եղեք երիկ-կընիկ։
Ընի թող, մեկ-մեկու խաբրով ընեք։

Մեր ասաց։— Կընիկ, ըղորդ կասեն։
Թողնի՞ս յես զամ քո զողենք։
Բալքի՛մ աստված զավա՛կ մը տա,
Զը հանգցնի հայու ճրագ։
Կընիկ դուռ բաց արեց, ասաց։
— Տղամարդ վոր կա՝ գլուխ է։
Կնիկ վոր կա՝ վոտ է։
Են չի կարնա դուռ բռնի մարդու վերա։
Դուռ կը բանամ, դու կը գաս տուն,
Աստված մեզ մեկ տրդա կը տա,
Համա երթ մակոտոր կընենք, երկուսս էլ կը մեռնենք։
Տղան անտեր սիտի մընա— խսրի վերա։

Մհեր ասաց։— Աստված քեզ մեկ տըղա տա մեկ,
Նրքա Մելիքի ոձիք բռնի,
Ի

Տարան կնքեցին, անուն դրին 'Դավիթ։
Տղան վոր տուն բերին,
Մհեր ու իր կնիկ երթ-մակստոր եղան, մեռան։

Մհերի մեր, Քառասուն-Ճուղ-Ծամ Դեղձուն,
Մհերի մեռնելեն հետև սուգ մտավ։
Մտավ յոթ դռների յետև,
Փակվեց մեկ սենեկի մի մեջ,
Վոր արև իր գլխուն չ'առներ,
Ենտեղեն արև լուս չ'ելներ,
Զուր նոր մանուկ մեծանար՝
Մհերի տեղ բռներ։
Սասուն սուգ մտավ Մհերից հետո։
Դավիթ մնաց վորբ։

Սասունցի Դավիթ

Դառնանք, զողորմին տի տանք
Դեղձուն Ճուղ-Ծամին
— Քառասուն ողորմի:
Դառնանք, զողորմին տի տանք
Քեռի Թորոսին
— Քառասուն ողորմի:
Դառնանք, զողորմին տի տանք
Ձենով Հովանին
— Քառասուն ողորմի:
Դառնանք, զողորմին տի տանք
Արտատեր Պառվուն
— Քառասուն ողորմի:

Դառնանք, զողորմին չը տանք
Ամշկիկ Սուլթանին,
Զը տանք ողորմի:
Դառնանք, զողորմին չը տանք
Մըսրա Մելիքին
Զը տանք ողորմի:
Դառնանք զողորմին տի տանք
Իսմիլ խաթունին
Քառասուն ողորմի:
Դառնանք, զողորմին տի տանք
Հանդուք խանումին:
Քառասուն ողորմի:
Դառնանք, զողորմին տի տանք
Թառլան Դավթին,
— Հազար ողորմի:

ԴԱՎԹԻ ԿՈՒՐՎԸ
ՄՍԻԱ ՄԵԼԻՔԻ ԴԵՄ

Սասնուկ Դավիթը Մըսրում

2

Դավիթ վոր մնաց վորբ,
Հորդորներներ եկան, ասին իրար:
Զենով Հովան ասաց·— Վե՛րգո,
Դո՞ւ կը տանես զԴավիթ,
Թե չե՝ յե՛ս տանեմ:
Վերգոն ասաց·— Զե, յես վորդի ունեմ,
Դո՛ւ տար, պահի···
Զենով Հովան տարավ զԴավիթ,
Արավ իրան հոգեզավակ:
Ելան, ու եդ Սասնա քաղաք
Ինչքան ծծմեր վոր կար՝
Ետա տղան տվին զետա ծծմեր:
Տղան վո՛չ մեկի ծիծ ել չըվերցուց:
Զենով Հովան քաղաքացիք ժողվեց եդտեղ,

Ասաց·— Ետա տղան տի մեռնի:
Բա ի՞նչ անենք, բա ի՞նչ չանենք,
ԶԴավիթ չենք կա՛ռնա շահի:

Սասնեցիք ասին.
—Մեր յոթ տարի վոր Մըսըր մնաց,
Մըկա ենտեղ ծծմեր մի կա,
Ու Մեելի խաթեր համար՝ ըզԴավիթ տի շաեի:
ԶԴավիթ Մըսը՛ր ուղարկի.
Ենի ենտեղ տ՝ապրի, թե չե ենտեղ
Անկարելի՛ բան է.— ծիծ չի վերցու:

3

Հովան ասաց.— Բա ո՞վ կ՝տանի, բա ո՞վ չի տանի:
Ասին.— Քուռկիկ Զալալու թամբի վրեն դի՛ր,
Ամուր մի կապիր,
Քուռկիկ Զալալուն լավ ճիպոտ մի զար,
Թող տանի Մըսըր:

Հովան ելավ, Քուռկիկ Զալալին դուրս քաշեց գոմից,
Քուռկիկ Զալալուն թիմար մի տըվին,
ԶԴավիթ առան, քարուր կապեցին Քուռկիկի քամակ,
Հովան ասաց.
— Քուռկիկ Զալալին, քեզնե կը խնդրեմ*).
Իմ տըղան դու գե՛տ չ՝թալես,
Իմ տըղան դու քա՛ր չը զարնես.
Տանե՛ս Մըսրա երկիր,
Մըսրա խաթունին դու թասլի՛մ անես:
Քուռկիկ Զալալին, կը տամ ամանաթ,
Կը տամ ամանաթ մեր Սասնա երագ.
Վոչ քա՛ր կը թալես, վոչ թռ՛ուվ կը թալես—
Հասցնես սալամաթ մեր Սասնա երագ:

4

Քուռկիկ Զալալին ըզԴավիթ առավ,
Մեջ երկինք-գետինք թռավ ու գնաց:
Մըսրա Մելքի մեր պատուհան նստե՝
Տեսավ թոզ կը գա դաշտերու վերան.

---

*) Երդվում եմ։

Տեսավ, վոր կրակ գետնու երեսեն կը տա վեր,
երկինք.
Մեջ երկինք, մեջ գետինք կը մոտենա իր տան:
Մըսրա խաթուն ասաց.
— Ես ամպ չի՛. կա՛ ու չկա,
Ես Քուռկիկ Ջալալու ոտաց կրակն եսպես կ՚ելնի:
Դարձավ, ասաց.— Դռնապաններ,
Դնացեք դռներ բացեք.
Կո՛, ձի մի կը հասնի մեր դուռ:
Դռնապաններ հասան ու դռներ բացին:
Տեսավ Քուռկիկ Ջալալին է:
Բան մի վեր քաշակին:
— Մրսրա Մելի՛ք,— կանչեց Իսմիլ խաթուն.
— Են բան առեք, բերեք ինձի:

Մըսրա Մելիք գնաց, մոտիկացավ ձիուն:
Ձին իր գլուխ կոռեց:
Մելիք աչքեց, տեսավ— բարուր:
Ձիու քամկից բարուր առավ,
Տարավ ետուր Իսմիլ խաթուն:
Մելիքի մեր բացեց ու ի՞նչ տեսավ—
Բարուրի մեջ՝ մանուկ Դավիթ,
Թուղթ մ'ել գրուկ դրած կրշտին:
Եդ թղթի մեջ Ջենով Հովան կ'ասե.
— Աղբո՛ր կընիկ, հարսե՛,
Մհերն եկավ ետեղ, ենոր տրղա՛ մ' ելավ.
Մհեր ու իր կնիկ մեռան, տրղան մնաց վորբ:
Ա՛ռ, Մհերի խաթե՛ր համար տրղան շահե:
Մինչև վոր քիչ մի մեծանա, չրդա՛դարի.
Նոր յես կ'առնեմ, յե՛ս կը շահեմ:

Մրսրա թագավորի կընիկ միտ վե՛ ասաց.
— Մհեր ինձի որ մի աղեկություն արեց.
Ենոր խաթեր յես կը շահեմ Դավթին.
Իմ ծիծ կաթ կա՛ հալա.
Իմ տրղան կաթեն կը կըտրեմ,
Ձե՛ն կը շահեմ: Շահեմ, ետեղ կենա,

Մելիքի հետ աղբե՛ր ըլնեն,
Իրար աղբերություն անեն.
Մըսը՛ր, ամբո՛ղջ երկիր, զավթեն, տիրապետեն:
Հե՛յ, մըկա նոր Դավիթ տի մեծնա. երթա Սասո՞ւն:

5

Նդտեղ Մըսրա Մելիք ակահեց, ասաց·
— Տղեկնե՛ր, դարբասներ գոցե՛ք:
Քուռկիկ Զալալին զոռո՛վ ընկավ մեր ձեռ,
Բռնե՛նք մեզ համար: Դարբասներ գոցին,
Ձիավորներ եկան իրար՝ ձիու բոլոր:
Քուռկիկ Զալալին տի բռնեն:
Քուռկիկ Զալալին ասաց·
— Ի՞նչըղ տի պրծնեմ եսոնց մոտեն, տե՛ր աստված:
Գընաց դեն, եկավ դես մեջ պարսպին,
Ասաց·— Տո, տե՛ր աստված,
Ցես տի զարնեմ եդա պարիսպ·
Թե՛ անցնեմ, թե՛ մընամ:
Քուռկիկ Զալալին ո՛ւժ ետու զինք,
Ձիավորներու միջեն ելավ դուրս:
Եզարկ, զքառասուն զազ պարիսպ անցավ,
Թռա՛վ, գնա՛ց:
Մըսրա Մելիք ասաց·
— Ո՛ւ ըլլա՛· գընա՛ց Քուռկիկ Զալալին.
Մեր ձեռնեն պրծավ:

6

Ձին փախավ, գընաց,
Գիշեր ու ցերեկ անդադար քելեց,
Ու ելավ Սասուն:
Ձեռով Հովան իր աչք գցե ճամբան՝ կ'իրիշկեր·
Մեկ ել տեսավ՝ իրիկվան կողմ՝
Մեջ երկինք, մեջ գետինք թոզ մի կ' ելնի:
Ելավ, տեսավ, Քուռկիկ Զալալին ե կը գա·
Բան մի չկա՛ հետ:

Քուռկիկ Զալալին եկավ, հասավ:
Զեռով Հովան իր դեմ ելավ, հարցուց·
— Մեռնեմ քե, Քուռկիկ Զալալին,
Դավիթ վո՞ր սարն ես թալե,
վո՞ր քարն ես թալե, վո՞ր թուփն ես թալե,
վո՞ր գելն ե կերե, վո՞ր ջանավարն ե կերե
Իմ թառլան Դավիթ:
Ասաց·— Վոչ սա՛րն եմ թալե, վոչ ձո՛րն եմ թալե.
Վոչ գե՛լն ե կերե, ու վո՛չ ջանավար:
Տարեր եմ Մրսըր, Իսմիլ խաթունին թասլիմ եմ արե.
Համա հազիվ պրծեր եմ, եկե·
Դարբասներ վեր ինձ ամուր զարկեցին,
Կուզեյին բռնեն.
Քառսուն գազ պարիսպ թռե՛ր եմ, եկե:
Զեռով Հովան ձիու գլուխ պագեց, ասաց·
— Աստծու անեծք վեր ենոր տան տեղա՛ց ըլնի,
Վեր ենոր զավակի՛ն ըլնի,
Ով ես ձիու խաբար աշխարհ հանի:
Ու ձին տարավ, մըլեց յոթ դռնով ներս,
Գոցեց դռներ, հողեց,
Ձիու կեր ու ջուր հերթկեն կըտար:

7

Իսմիլ խաթուն Դավթի վերա շատ խնդացավ:
Ձծիծ ետուր Դավթին:
Դավիթ ենոր ծիծ վերուց:
Ժամանակ մի Դավիթ ծիծ կերավ:
Որ մ'ել Դավիթ ենոր ծիծ չըծրծեց:
Իսմիլ խաթուն Դավթի գլուխ կը բերեր ե՛ս ծծի վերա,
Դավիթ ե՛ն կողմ կը փախցներ,
Կը բերեր մեկե՛լ ծծի վերա,
Են մեկե՛լ կողմ կը փախցներ:
Իրեք որ իրեք գիշեր Դավիթ բան չը կերավ:
Իսմիլ խաթուն ելաց, մնաց շիվար,
Չը գիտեր ի՞նչ աներ հետ Դավթին:

Կանչեց Մըսրա Մելիքին, ասաց·
— Եսա տղան իրեք որ ու գիշեր իմ ծիծ չ'ո՛ւտի:
Ասյա ի՞նչ անենք եսա տղի հետ, ասյա ի՞նչ չ'անենք·
Մըսրա Մելիք ասաց·
— Եդա ազգ հաստակող են, մարե,—
Ենի մեր գլխուն ցա՛վ տ'ըլնի:
Ենի հայ է, մենք արաբ ենք,
Քո ծիծ մի՛ տար ենոր:
Իսմիլ խաթուն ասաց·— Եսպես մնա՝ մեռնի,
Մեզ ամոթանք կ'ըլնի ենոր տիրոջ մոտեն:
Ել վերջ չըկըտրրի, ընկել ենք մեջ···
— Քո տուն ավերի·— ասաց Մելիք·—
Ենոր հոր մալ շա՛տ է,
Ենոր հոր տուն չկա՞ մեղր ու կարագ,
Զըկա՞ն անուշ-անուշ բաներ·
Բաթմանա Բուղեն ուղարկի,
Թող ելնի, երթա Մհերի տուն,
Գնա բեռ մի մեղր բերի,
Գնա բեռ մի կարա՛գ բերի,
Կը շինես յեղ-մեղր, կը տաս, տղան կ'ուտի:
Իսմիլ խաթուն Բաթմանա Բուղեն նամբեց՝
մեղր-կարագ բերի·
Բաթմանա Բուղե՛ն է, ելավ, գնաց Սասուն:
Ձենով Հովան մեղր, կարագ—
Ենոր ուտելիք ի՛նչ է,—
Ամեն տվեց Բաթմանա Բուղին:
Բաթմանա Բուղեն բեռ մի մեղր, բեռ մի կարագ
Բերեց դրեց Իսմիլ խաթնի առաջ:
Մըսրա Մելիք ե՛դ որ տեսավ, ասաց·
— Տեսա՞ր բան, եսպես աղեկ բան վո՞ր տեղ կա·
Տո՛ւր, թող ուտի՛, ջոջնա:
Մեղրով, կարագով Դավթին պահեց Իսմիլ խաթուն:
Թե ուրիշ տղեք տարով կը մեծնան,
Դավիթ որե ո՛ր կը մեծնար:
Իսմիլ խաթուն զԴավիթ լա՛վ կը տիրեր·
Կ'ասեր· «Դավիթ Մելիքին քամագ կ'ըլնի—
Ամբողջ երկիր տի զավթեն, տիրապետեն»:

Ամա Դավիթ ենպես զորեղ եր՝ բնդեր կը կտրեր։
Իսմիլ խաթուն շղթա բերեց, արավ բնդի թել։
Դավիթ ենչափ ուժ ուներ՝
Շղթան չըդիմացավ, կըտրավ։
Ինչ բերեց՝ ճար չ'եղավ, կըտրավ։
Բերեց են վորվանիմ, փեխր մանեց,
Արավ ենոր բնդի թել, վոր պահեց։
Ինչ Դավիթ շունչ կը քաշեր ներս՝
Վորվանիմ կը երկարնար,
Նորեն Դավիթ վոր շունչ կը հաներ դուրս՝
Վորվանիմ կը կըծկեր։

8

Մըսրա Մելիք որ իմացավ Սասնա Մհեր մեռե՝
Կայնավ, թուղթ ուղարկեց,
Իր տեղաց մեջ ցրվեց, զորք հավաքեց,
Գնաց Սասնա տեղաց վերան։
Սասնա երկրի վերա իր սուր քաշեց,
Սասնա ժողովուրդ կոտորեց,
Անհաշիվ խարջ ու խարաջ առավ,
Քըշեց Սասնա տավար, ոչխար,
Սասուն ավրեց, առ ու ավար արավ։
Սասունցոց հպատակ դարձուց,
Ըզվերգոն ու Հովան գերեց,
Տարավ Մըսրը։

Ժամանակ մի անցավ,
Ենոնք ապրուստ չեյին կարնա անի ենտեղ։
Ձենով Հովան Մելքին ասաց։
— Հրաման տուր մեզ, երթանք մեր երկիր։
Մելիք հրաման ետուր, ելան, գնացին։

Ես հետ Վերգոն եղավ կառավարող։
Մըսրա Մելիք չ'եթող, վոր Դավիթ ել երթար։
Մըսրա Մելիք պատվեր ավավ,
Վոր զԴավիթ մեջ ոդային փակված պահեն։

Առավոտուն ելավ Դավիթ, տեսավ՝ դուռ փակ.
Գնաց դռան ետև.
Զարկեց, դուռն իր տեղեն հանեց,
Ելավ դուրս, տեսավ այգի՛ մի.
Տղեկներ հավաքվե՝ դոնգոզա կը խաղային:
Դավիթ բարձր բարդի ծա՛ռ մի բռնեց,
Կորե՛ց, բերեց տակ,
Ինք բռնեց ծառի կատարեն, ասաց.
— Եկեք, հեծեք, ձի՛ խաղացեք:
Եկան, շարվան վերան:
Դավիթ ծառ պահե՛ց, պահե՛ց,
Իր ձեռ շատ վոր դադրավ՝ զոռաց.
— Ցա՛ծ իջեք, ցա՛ծ, իմ ձեռ դադրավ:
Տղեկներ ականջ չ'արին, չ'իջան:
Եդ վախտ Դավիթ ծառի կատար եթող:
Տղեկներ թափվան գետին.
Վոր մեռավ, վորի գլուխ կոտրավ:
Մեծ մարդերու տղեկներ եյին:
Եդոնց հերեր եկան, լցվան Մելիքի դուռ,
Բողոք բարձրացուցին, ասին.
— Թագավոր, եդ ծուռ Դավիթ հեռացուր.
Թե չե՝ կը քոչենք, կ'երթանք ես երկրեն:

9

Մելիք ավելի կատղավ.
Դրավ Դավիթ մուք սենեկ, փակեց,
Վոր են արևի լուս չըտեսնի.
Դավթի վերան վարպետ դրավ,
Վոր հնազանդություն սովորեցու:
Ու ենոր հաց տանողներին ասաց.
— Դավթին որ հա՛ց տանեք,
Մի՛ս կ' ընի՝ վոսկոր կը հանեք,
Զի՛ր կ' ընի՝ կորիզ կը հանեք:
Մեկ որ Դավթի հաց տանողին շա՛տ նեղություն տվին,
Եդ հաց տանող ասաց.— Կայնե՛ք,

Եսար Դավթին հաց տանելուս՝
Միս կը տանեմ, վոսկոր չե՛մ հանի,
Թող ուտի, վոսկոր դեմ առնի,
Դուրս ելնի՝ ձեզի սպանի:
Հացը վերցուց, տարավ ետու Դավթին:
Դավիթ հաց կերավ, միս թալեց իր ատամներ,
Տեսավ՝ վոր միս փլվեց, վոսկոր ատամներ չ՝ կտրավ:
Վերցուց, զարկեց վոսկոր լուսամուտին,
Լուսամուտ փլվեց, շող ընկավ գետին:
Ասաց·— Ես ի՞նչ ընկավ մեջ սենեկին:
Դավիթ ելա՛վ, ընկա՛վ հետ եդ շողին, ընկավ գետին:
Ել յետ ելավ, ընկավ հետ եդ շողին, ընկավ գետին:
Ենպե՛ս ելավ, վոր բրտինք ե՛ս կողմեն,
Են կողմեն թափավ:

Վարպետ, վոր եդոր դաս կը տար,
Դռնով մտավ,
Տեսավ՝ Դավիթ կ՝ ելնի ու կը տփվի գետին·
Ասաց·— Դավիթ, մեռնե՛մ քեզի,
Ինչի՞ եդպես կը տփես դու եդա գետին:
Ասաց·— Եսիկ մտել ե իմ սենեկ, չի՛ ելնի դուրս:
Ասաց·— Մեկ աչքերդ խփիր: Աչքեր խփեց:
Վարպետ թաշկինակով բռնեց են շողի ծակ կալավ,
Շող կտրուվ: Դավիթ ասաց·
— Յա՛, յես եսքան կը չարչարվեմ,
Չե՛մ կարնա դուրս հանի:—
Ասաց·— Ինձնեն զորքա՞ եյիր:
Ինչպե՞ս դու զեն հանեցիր դուրս:
Վարպետն ասաց·— Ղո՛ւրբան, հե՛յրան,
Ենիկ մարդ չեր, ենիկ արևու շո՛ղքն եր:
Դավիթ ասաց·— Յա՛, եդ արև վոր կա՝
Բա ինչի՞ եք ինձի նստեցուցե ես բանտ:
Ասաց·— Ղո՛ւրբան, հե՛յրան,
Արև՛ ել կա, ցերե՛կ ել կա, գիշե՛ր ել կա:
Ասաց·— Բա ինչի՞ ինձ չեք հանի դուրս:
Ասաց·— Կեցի երթամ՝ թագավորին ասեմ:

Գնաց, ասաց·— Թագավոր ապրած կենա·
Դավիթ կ'ուզի, վոր սենեկեն հանենք,—
Կ'ուզի արևի լո՛ւս տեսնի:
Թագավոր ասաց·— Գնա, հան դո՛ւս, պտըտեցուր:

10

Վարպետն եկավ, Դավթի թևեն բռնեց
Ու հանեց դուրս· տարավ, քաղքի մեջով, գընաց:
Ինչ պատահեց, Դավիթ հարցուց՝
Տավա՛ր, գոմե՛շ ու ձի՛՝
Ամեն ինչին հարցում կ'աներ·—
Եսիկ ի՞նչ է, ենիկ ի՞նչ է:
Վարպետ կ'ասեր·— Եսիկ՝ ե՛ս է, ենիկ՝ ե՛ն է:
Քաղքից ելան: Դավիթ աշկեց,
Տեսավ՝ քաղաքի ամեն մարդեր ժողված են դաշտ:
Ասաց·— Արի երթանք են տե՛ղ:
Վարպետն ասաց·— Մեռնեմ քեզի,
Են տեղ բան մի չըկա:
Արի երթանք ե՛ս կողմ:
Ասաց·— Չե՛, ինձի տար ենտեղ:
Ասաց·— Ախր ենտեղ ի՞նչ կա, վոր մենք երթանք:
Ասաց·— Չե՛, կը տանի՞ս, տար, չե՞ս տանի···
Վոր ասաց·— Չե՛,
Դավիթ իր ձեռք թալեց վեր վարպետի ականջ՝ պոկի:
Վարպետն ասաց·— Քելե երթա՛նք:
Տարավ եդոր, գնաց, մի մեյդանի գլուխ: Կայնան:
Կայնելուն պես տեսավ՝ երգնուց բան մի կը գա:
Տեսավ՝ ջրինդ կը գա իր մոտ:
Ջրինդ կը թալեյին: Ջրինդ Մըսրա Մելքին եր:
Դավիթ հասավ, ջրինդ բռնեց,
Թալեց՝ գնաց տաս գազ անցուց Մելքի գլխով:
Մսրա Մելքի ասաց·— Հայ-հա՛յ,
Ես վո՞ր փահլևանն եր՝ վոր իմ ջրինդ անցուց:
Գնացին, տեսան, եկան, ասին·
— Թագավո՛ր ապրած կենա, Դավի՛թն եր:
Ասաց·— Գնացեք, ենոր բերեք, գլուխ կտրեմ:
Վաքիլ, վազիր ընկան Մըսրա Մելքի վոտ ձեռ պագին,

Թե.— Թագավո՛ր ապրած կենա, ենի երեխա՛ յե,
Են ի՞նչ է, վոր ենոր գլուխ կտրես:
Վազիր մարդ ուղարկեց վարպետի կուշտ.
Եկան ասին.— Քո տուն չ'ավրի, ել մի՛ բեր եսատեղ:
Վարպետն ասաց.— Ձեր տուն չ'ավրի,
Մագյար իմ կամքո՞վ կը բերեմ.
Բռնի, ականջես կը քաշի,
Զոռովե՛ն ինձ բերել կը տա:
Ասին.— Առ գընա՛, առ գընա՛, առ գընա՛:
Բերեց իրեն սենեկ:

11

Են իրիկուն Մելիք դաշտեն դարձավ.
Դավիթ հարցուց Իսմիլ խաթնին.
— Ի՛մ մեր, չուր իրիկուն Մելիք եդ ո՞ւր կ'երթա:
Ասաց.— Մե՛ր մեռնի քեզ,
Կ'երթա իրա սեյրանատեղ, ու իրիկուն կը գա.
Կ'երթա հո՛ լը խաղա:
— Ապա ինչի՞ ինձ չի՛ տանի,
Վոր իմ միտք ել քիչ մի բացվի.
Ցես կը մնամ մենակ տուն վե,
Իմ համբերություն կը կտրի:
Մարդ մի չունեմ վոր հետ խաղամ:
Ինձ ե'լ թող դաշտ տանի:
Իր մեր ասաց.— Մեռնե'մ քեզ,
Ձիանք կը տան վեր քեզ, ըզքեզ կը նղոտեն:
Զուր հիմիկ տիրեր, պահեր ենք քեզ.
Հիմիկ կ'ընկնենք ամոթու տակ:
Դավիթ ելաց, ասաց.— Մարե՛,
Ցես կ'երթամ զա՛տ տեղ կը կայնեմ:
Մեր ասաց.— Մե՛լիք, ի՞նչ կ'ըլնի.
Առավոտուն զԴավիթ տար հետ քեզ,
Հոլ խաղ անի, սորվի:
Մըսրա Մելիք ասաց.
— Դավիթ, դու դեռ երեխա՛ ես,
Ձես կարնա հոլ խաղալ հետ մեզ:

Դավիթ ասաց.— Տի գա՛մ հետ քեզ:
Իսմիլ խաթուն ասաց.— Խնդիր կ'անեմ,
Ըզդավիթ տա՛ր, կը տեսնե՞ս թե ինչպես կը լա՝
— Մե՛րիկ,— ասաց,— այսր չորակա՛ղ են եդ ազգ.
Վախնամ՝ Դավիթ պատիժ մի բերի մեր գլուխ:
Մեր ենոր հետ կովավ, ասաց.
— Զե՛, տա՛ր, տար, դիր բարձր մի տեղ.
Դավիթ թող թամաշա՛ անի:
Զելնի՝ գա ցած, ընկնի ձիանց վոտքերի տակ:
Մըսրա Մելիք ասաց.
— Թե չտանե՛մ, շատ մարդ տ'ասի.
Վորր ե, Մելիք ականջ չի՛ դնի:
Աղեկ, մարե, առավոտուն տանեմ հետ ինձ:

12

Առավոտուն Մըսրա Մելիք ելավ, հեծավ իր ձին,
Առավ զԴավիթ, տարավ իր հետ:
Զ'իշխեց տանի իր մոտ, տարավ մեկ մեծ սարի գլուխ:
Երկու փահլևաններ տարան,
Դավթի վոտ ու ձեռքեր կապին,
Դրին եդ մեծ սարի գլուխ:
Ու երկուսով Դավթի մոտ նստան պահապան:
Մելիք իր զորք առավ, իր իշխաններ,
Փահլևաններ առավ ու Լեռա դաշտ իջավ.
Խաղաց հետ փահլևաններուն:
Դավթի մոտեն եդ Լեռա դաշտ
Համա՛-համմա՛ կը նշմարվի:

Դավիթ մինչև կեսոր ենտեղ նստած կեցավ.
Դավիթ նայեց, նայեց՝ բան չը տեսավ:
Բա՛ն մի չը հասկացավ իր նստելուց.
Դավթի սիրտը հոժար չ'եղավ.
Դարձավ, ասաց.— Փահլևաններ,
Եկեք, իմ ձեռներ արձակե՛ք:
Փահլևաններ ասին ենոր.
— Թագավորի հրամա՛նքն ե՝

Մենք քեզ տի պահենք.
Զ'երքաս՝ ձիաներու վոտքերի տակ ընկնես:
Դավիթ ըռկավ ու կամացուկ հիրար տվեց իրան,
Կապած պարաններ կտրտեց:
Երկու փահլևաններ կախվան Դավթից.
ԸզԴավիթ չը կարցան պահեն:
Դավիթ երկու փահլևաններ վեր քիթ բերնին քաշեց,
Ու մինչև տուն տարավ:
Դավիթ գլուխ դրավ գետին, պառկավ ենտեղ:
Մըսրա Մելքի մեր ասաց.
— Ինչի՞ ըռըկար, եկար:
Ասաց.— Մըսրա Մելիք ինձի տարավ՝
Բարձր սարի գլուխ դրավ,
Ու ինք գնաց դաշտ, կը խաղար.
Բան չը տեսա, եկա:

Իրիկուն եղավ, Մելիք կտրիններուն ասաց.
— Հոլեր զարկե՛ք, գնան զԴավիթ ըսպանեն:
Կտրիններ մեկ-մեկու հոլ զարկեցին,
Մելիքը ել իր հոլ զարկեց:
Տարան, հանին Դավթի տեղաց վերան,
Տեսան՝ Դավիթ չըկա:
Ելան, եկան տներ:

Մըսրա Մելիք եկավ իր տուն,
Խսմիլ խաթուն ենոր առջև չ'ելավ-կայնավ.
Մըսրա Մելիք ասաց.
— Դու ինչի՞ ըռկեր ես, նստեր ես եսատեղ.
Չես կայնի, չես ելնի առջև:
Մեր ասաց.— Ինչի՞ զԴավիթ չը տարար՝
Հոլի տեղ, թամաշա աներ:
Ասաց.— Մարե, են խոսք մտիկ չ'անի՛.
Հոլ դպնի, ենոր տի սպանի,
Ուրիշ մարդեր տ'ասեն՝ ելավ հացի կերող,
Մելիք իրեն հացի ապո՛վ ետու սպանել:
Ամո՛թ ե ինձ իմ մարդերու առաջ:
Տարա, փախավ, եկավ:

Իրիկուն, որ հաց դրին Դավթի առաջ,
Գսվիթ ըռկավ, ինչոր արին, հաց չը կերավ:
Իսմիլ խաթուն նորեն կպավ Մելիքի ոձիք, ասաց.
— Մըսրա Մելիք, վորդի,
Առավոտուն տար, մոտի՛կ դիր:
Մելիք ասաց.— Աղեկ, մարե,
Վաղ յես տանեմ, դնեմ մոտիկ:

13

Ես հետ, առավոտուն՝
Մըսրա քաղքի ձիանք, ձիավորներ վոր դուրս ելան,
Մըսրա Մելիք ելավ, իր ձին հեծավ,
Առավ զԴավիթ, տարավ իր հետ:
Մեկտեղ գնացին իր իշխաններ,
Կտրին մարդեր, փահլևաններ:
Գնացին են դաշտ, քարե կալի մեջ գո՛ւրզ թալեն:
Դավիթ նստեցուցին եդ կալի մոտ,
Մեկ արտաչափ հեռո՛ւ դրին:
Մըսրա Մելիք ասաց.— Դավի՛թ,
Եդտեղ կայնի, մտի՛կ արա.
Դավի՛թ,— ասաց,— դու կը տեսնե՞ս, այ.
Եդա գուրզ՝
Շատ գե՛շ բան ե, շատ գե՛շ բան ե.
Եդա գուրզ որ մարդո՛ւ առնի՝ մարդ կը սպանի.
Զգա՛ս, մըտնես մե՛ջ մեր խաղին:
— Աղբեր, աղեկ, քո խոսք կ'անեմ,— ասաց Դավիթ:

Մելիք կայնեց եդ քարե կալ,
Հետ իր ընկերներաց՝ գուրզ կը թալեր.
Դավիթ նստե ենտեղ՝ հետ հողին խաղ կաներ:
Հող կ'առներ ու կը լցներ վեր վոտքերուն,
Հողերու մե՛ջ կը թավալվեր:
Փահլևաններ սովորո՛ւկ եյին.
Հա՛ խաղացած եյին.
Կը խաղային, մեկ մեկելի վնաս չեյին իտա.

Եդպես գուրզեր կը թալեյին,
Զուր կեսավուր ժամանակին:
Դավիթ իր տեղ նստե՝ կ'աչքեր,
Զուր հերթը Մելիքին հասներ— իր գուրզ զարկեր:
Վոր Մելիքի հերթը հասավ,
Մըսրա Մելիք հեծավ իր ձին,
Քըշեց, եկավ զորքերու մեջ:
Բոլոր ժողվան, եկան՝ մտիկ անեն:
Մեծ գուրզ մի կար Մելիքի ձեռ,
Իրեք հարիր վաքսուն ու վեց լիտր եր եդ գուրզ:
Կը խաղցներ—կը տաներ աջ,
Կը բերեր գուրզ իր ձեռի մեջ.
Պտտցնելով եդ գուրզ՝
Գուրզից կըրա՛կ կը թափեր դուրս:

Մելիք գուրզ կը զարներ՝
Գետին սելի աղուրի պես կըճըղճըղվեր:
Դավիթ տեսավ՝ որ հերթ Մելիքին է,
Գընաց, մտավ մեջ աղուրին:
Մեկ ծակ բոլոզ մ' ել կար Դավթի գլուխ:
Դավիթ նըստած ենտեղ, հոզ կը չափեր իր բոլոզով.
Կասեր.— Եսա՛ մե՛կ...
Քանի չափեր, կ'ասեր.— «Եսա՛ մե՛կ...»
Ել չեր կարնա ասի «երկո՛ւ»:
Մըսրա Մելիք կանչեց.
— Դավիթ, եդ տեղեն վեր ելի,
Ցես իմ գուրզ տի թալեմ:
Իրեք անգամ կանչեց.
Դավիթ չը լսուքյո՛ւն դրեց վեր իր:
Մելիք ասաց.— Փահլևաններ՛ը, Կակա՛ն, Ասլա՛ն,
Գնացեք, ճիվ բռնեք, դուրս թալեք:

Կական, Ասլան ու հինգ փահլևաններ
Եկան, ճիվ բռնեցին:
Ինչպես կանեն՝ չի՛ ելնի վեր:
Կ'ասի.— Եսա մե՛կ, եսա մե՛կ...
Փահլևաններ շա՛տ ջանք արին,

Զը կարցան իր տեղեն հանեն,
Ինչպես վոր մա՛րդ մի չի կարնա
Դուրս քաշի ծառն իր արմատով:
Փահլևաններ շիվար կայնան.
Ենոնց խաղ խանգարվեց:
Մըսրա Մելիք շատ բարկացավ, ասաց.
— Գուրզ զարկեցեք, քոզ գա, սպանի:
Փահլևաններ գուրզ զարկեցին:
Դավիթ գուրզ աջ ձեռով բռնեց, թալեց երկինք,
Ձախով գուրզ մ'ել բռնեց թալեց երկինք:
Մըսրա Մելիքն ե, վոր տեսավ, շա՛տ զարմացավ,
Ասաց.— Դե՛ն գնացեք.
Ցես իմ գուրզ տի զարկեմ:
Իմ մոր ասի՝ յես Դավիթ չե՛մ տանի:
Ցես գիտեմ Դավթի բնուրյուն.
Ցերր եղեր ե, են իմ գլուխ տի ցավցուցի:
Աղեկ ե՛ն ե՝ մըկա զարկեմ ու մեռցուցեմ:
Գիտեմ, են իմ գլխակե՛րն ե, ձեզ տվեք դե՛ն:
Դավիթ ենոր խոսքեր լսե՛ց,
Ու ձեն տվեց, ասաց.
— Մելիք, զա՛րկ, զա՛րկ, քոզ գա՛ քո գուրզ:
Զըլնեմ, չիմանամ, որ երկու մրտանի՛ ըլնես:
(Աստծուց դրած չեր,
Վոր մեր ազգ մըսրցոց դեմ փախնի:
Դավիթ ել Մըսրա Մելիքի դեմ չե՛ր փախնի):
Մըսրա Մելիք լսավ Դավթի խոսքեր,
— Հող ե, հող դարձուցեմ,— ասաց ու գուրզ
զարկեց:

Դավիթ գուրզից ենպե՛ս ակահավ,
Ասես՝ ջաղցի քար մի կը գա մեջ իր գլխուն:
Իսկուն Դավիթ իր ձեռ տվեց առջև,
Ու գուրզ բռնեց.
Վոր գուրզ բռնեց՝ ծանր-թեթև արավ,
Ասաց.— Ափսո՛ս, հազա՛ր ափսոս,
Մի քիչ թեթև՛ ե եսա գուրզ:—
(Քառսուն փուք ել արնին ըլներ,

Հալեյին, լցնեյին վերան,
Նոր Դավթի համար լավ տ'ելներ)։
Մելիք եդ որ տեսա՛վ, փռշմանավ, հոնքեր կիտեց։
Ենոր ընկերներ տընազ տվին, ասին.
— Մելիք, Մելիք, դու կ'ասեյիր՝ ուժո՞վ եմ յես։
Տեսա՞ր, Դավիթ դեռ տրղա յե,
Ամա ինչպես բռնեց քո գուրզ։
Մելիք ասաց.— Հեյ վա՛խ,
Վոր յես իմ գուրզ զարկեմ, ու չը դպնի՞ Դավթին,
Իմ թագավորութեն են իմ ձեռնեն տ'առնի՞։
Ինչ Դավի՛թ եր՝ Մելիքի գուրզ ձեռք պտտցուց,
Դրավ իր ծնկան տակ, պահեց։

Կական, Ասլան ու շատ փահլևաններ
Ձիեր քշին, հասան Դավթին,
Մեջ դաշտին գուրզ շա՛տ փնտռեցին, գուրզ չը գտան։
Դավիթ են ժամանակ գուրզ հանեց դուրս,
Պտտցուց մեջ ձեռքին, պտտցուց, ասաց.
— Գո՛ւրզ, սաչա՛ր գուրզ,
Ասաց ու եդ գուրզով զարկեց։ Վոր զարկեց՝
Կական, Ասլան ու հինգ ուրիշ փահլևաններ սպանեց։

Մնացածներ դարձան ասին.— Մե՛լիք,
Եկանք մենք եսատեղ՝ քեզ անելու։
Թե դու գիտիր՝ Դավիթ ծուռ եր,
Ինչի՞ բերիր՝ եսա մարդեր սպանեց։
Են սպանուկներ ի՞նչպես տանենք քաղաք.
Քաղաք տ'ասեն.— Տնեն գնացիք
Քե՞զ անելու, քե՞ ենտեղ մարդ սպանելու։
Մելիք ենպես բարկացավ՝ թուր քաշեց,
Լարեց Դավթի ետև, որ վիզ կտրի։
Կանչեց.— Վայ-վա՛յ, են շան վորբ տի սպանեմ։
Ենոր փահլևաններ թափվան վերան, ասին.
— Վայ-վա՛յ, Մելիք, դու զԴավիթ տի սպանե՞ս։
— Են, վորբ ե, մե՛զք ե։
— Բա՛ց թող։

— Են տըղա՛ յե։ Ենոր խելք չի հասնի։
— Մելի՛ք, մի՛ ըսպանի։ Խալխ տի ասի.
«Մելիք վորբ մի սպանեց իրեն հացի ապով»։
— Են չե՛ր կարնա քո գուրգ թալի.
Աստրծո՛ւցն եր, հլեշտակն եր, որ քո գուրգ թալեց։
Շատեր ասին.— Եդ Միհերից կ'ըլնի,
Դավիթ հոր ուժն ունի։
Զը թողին, վոր Մելիք զԴավիթ սպաներ։

Դավիթ ելավ, մինչև տուն՝ չը կայնավ։
Եկավ ու զինք զարկեց Իսմիլ խաթունի փեշ։
Իսմիլ խաթուն ասաց.— Դավիթ, են ի՞նչ եղավ։
Ասաց.— Մա՛րե, Մելիք կը գա՝ ինձ ըսպանի։
Գախ ե, գա իմ վիզ տի կտրի։
Խաթուն ասաց.— Ինչի՞ տի գա քո վիզ կտրի։
Եդտեղ Դավիթ ուր պատմություն արեց։

14

Իրկուն Մելիք վոր տուն եկավ,
Մըսրա խաթուն հարցուց.
— Մըսրա Մելիք, դու ինչի՞ չե՛ս խոսա.
Ինչի՞ ես քո նոքեր կախե,
Պատասխանեց.— Ինչի՞ խոսեմ.
Դավիթ եսոր ինձ ամչեցուց խալխի առաջ։
Մեր ասաց.— Ի՞նչ արավ։
— Հապա՝ իմ գուրգ որ զարկեցի՝
Են ձեռ ետու, իմ գուրգ բռնեց։
Մեր ասաց.— Ի՞նչ կա, բան չկա։
Մելիք վեր մոր շա՛տ բարկացավ.
Ելավ, Դավթի թևից բռնե՛ց, գոռաց.
— Ինչի՞ եկար իմ գուրգ բռնիր։
— Ինչի՞ չըբռնեմ,— ասաց Դավիթ,—
Ցես քեզնե պակաս տըղա չե՛մ։
Ցես ե՛լ գուրգ տի խաղամ հետ քեզ։
Նախանձեց Մելիք Դավթին,
Ձեռ բարձրացուց, ասաց.

— Մա՛րե, Դավիթ յես ա՞ սպանեմ։
Մեր մոտ վազեց, եկավ Մելիքի վրա, ասաց։
— Ա՛յ տղա, ծուռ հո չե՞ս։
— Մարե՛,— ասաց։— Են վոր իմ գուրգ եսոր բռնեց,
Վա՛ղ ել կը գա, գիմ տուն ու տեղ ել կը բռնի։
Մեր ասաց։— Մարե՛ն մեռնի քա արևուն,
Դավիթ քո ուժն է, քո մեջքի թուրն է։
Դավթի հեր— քո հեր— ջոջ փահլևա՛ն եղե։
Վաղ Դավիթ ել փահլևա՛ն կ'ելնի։
Մեկ մեկելի քամակ պիտի բռնեք, կայնեք։
— Ե, մարե՛,— ասաց Մըսրա Մելիք,—
Ուրիշներ իմ գուրգի տակն ընկնեն, կը մեռնեն։
Դավիթ բռնեց իմ գուրգ ու չը մեռավ։
Զե՛, մարե, յես չեմ ընդունի։
Դավթի վիզ տի կտրեմ։

15

Մելիք իշխաններ կանչեց պալատ,
Ելավ, հայտնեց, ասաց։— Իշխաններ՞ը, ի՞նչ կ'ասեք։
Եդա Դավիթ հիմիկվանե ձեռ կը թալի իմ գուրգ,
Իմ մարդիկ կը սպանի։
Մարդու մեկ բարեխիղճ եր, ասաց։
— Թագավոր ապրած կենա,
Դավթի խելք չի՛ հասնի, խելք ջո՛ւր է, տղա յե։
— Զե,— ասաց,— իր խելք լմից, քոնից շա՛տ է։
Զե՛, ենոր տի զարկեմ։
— Թագավոր ապրած կենա,— ասաց։—
Կուզե՞ս, քելե փորձ մի անենք։
Թե վոր Դավիթ տղա չ'ելավ,
Ելեք զիմ գլուխ, զԴավթի գլուխ զարկեք։
Մելիք ասաց։— Ի՞նչ փորձ անենք։
Ասաց։— Բերեք սինի մի վոսկի մի կողմ դնենք,
Սինի մի կրակ են մեկե՛լ կողմ։
Դավիթ դնենք եդ կրակի, վոսկու արանք։
Թե վոր կրակ վերցուց՝
Խելք չի հասնի, տղա յե,

Թե վոր վոսկի՛ն վերցուց,
Գնա գլուխ զարկի:

Բերին, զԴավիթ դրին սեղանի մոտ.
Վոսկին մի կողմ լցրին, կրակ մի կողմ:
Դրին Դավթի առջև, ասին.
— Դա՛վիթ, ա՛ռ, ա՛ռ, վո՞ր մեկ կուզես:
Դավիթ իր ձեռ պարզեց վոսկուն,
Հրեշտակ ձեռնեն բռնեց, տարավ դեհ կրակ:
Իր մատ վոր կրակին կըպավ, կրակ կպավ մատին.
Մատ երելով՝ տարավ բերան, լեզո՛ւն ել երեց:
Տղան վըժժա՛ց, ելաց:
Կրակ բերնեն դո՛ւրս հանեցին:
Իսմիլ խաթուն Դավթին գրկեց, ելաց:
Դավիթ ել ելաց:
Իսմիլ խաթուն ասաց.— Վո՛ւրդի, Մելիք,
Դու հո տեսա՞ր, ենոր ըսպանել մե՛ղք ե:
Դու կ'ասեյիր՝ թե իր չարությունե՛ն արավ.
Ապա տեսա՞ր՝ միամի՛տ ե,
Զը հասկացա՛վ, ձեռ տարավ, դրավ վեր կրակին,
Հալա լեզուն ել երեց, ելավ թլոր:
Բարեխիղճ մարդն ասաց.
— Թագավոր ապրած կենա,
Իմ խոսք ճի՞շտ ե, ճիշտ չե՞:
Ասաց.— Հա՛, շա՛տ ճիշտ եր քո խոսք:
Անխելքությո՛ւն արավ, խելք չի՛ հասնի:

16

Եստեղեն Դավիթ ելավ,
Գընաց Մելքի զինանոցի դռան վերան:
Տեսավ՝ զինանոցի դուռ բաց:
Սանդուխքով իջավ տակ, մտավ մեջ եդ զինանոցին.
Տեսավ, Մելքի մեծ գուրզ ենտեղ դրած:
Դավիթ ասաց.
— Ես ի՞նչ խաղալու լավ բան ե:
Ասաց, գուրզ վերցուց ու ձեռնեն թալեց գետին:

Դրմփոց ընկավ մեջ քաղաքին,
Մարդիկ, կընիկ, տըղեք վախցան:

Մըսրա Մելիք տեսավ՝ քաղաք ժաժք ընկավ:
Կոահեց, ասաց.— Ես իմ գուրգի ձենն եր.
Տեսեք ո՞վ ե. ի՞նչ բան եկավ վեր քաղաքին:
Վազիր գիտցավ, վոր Դավի՛թն ե,
Շուտ մի ելավ ու վազելեն գընաց.
Գնաց, զինանոցի դուռն վերան կայնեց:
Դավիթ գըմփոց մ'ել հանեց:
Վազիր կանչեց, ասաց.
— Դա՛վիթ, Դա՛վիթ, քո տո՛ւն չ'ավրի,
Դու ի՞նչ կ'անես եդտեղ.
Շո՛ւտ արա, արի վե՛ր:
Դավիթ վեր ելավ ու դուռ դրեց:
Վազիր ասաց.— Դա՛վիթ, Դա՛վիթ,
Դե շո՛ւտ գընա Իսմիլ խաթունի մոտ:
Թե չե Մըսրա Մելիք կը գա,
Քո գլուխ կը ջարդի:
Դավիթ գնաց:

Մըսրա Մելիք շուտ-շուտ եկավ,
Կայնեց դռան վերան, գոռաց, կանչեց.
Ասաց.— Վազի՛ր, ո՞վ ե եդտեղ:
Պասասխանեց.— Դուռ բա՛ց եր, չ'իմացա՝ ով եր:
Վազիր եդ սուտ կ'անի՝ չ'ա՛սի ով ե:
— Ձե՛, եղնի, չ'եղնի՝ եդ Դավիթ եր,— ասաց
Մելիք:—
Դավիթեն զատ իմ գուրգ մարդ չի՛ կարնա վերցու:
Մըսրա Մելիք ելավ քաղաք պտտեց,
Չ'Դավիթ փնտռեց, չը գտավ.
Եկավ տուն, տեսավ, վոր Դավիթ ընկե,
Քուրսու տակ քներ ե:
Մըսրա Մելիք աղեղան լար արձակեց,
Բերեց՝ Դավթի բոզազ խեղդեր:
Եդ վախտ իր մեր դռնեն եկավ,
Մելիքի ձեռ բռնեց, ասաց.—Մե՛լիք, ի՞նչ ե կ'անես:

Ասաց·— զԴավիթ տի խեղդեմ,
Իմ գուրզի հետ խաղացեր է,
Դըմփոց մ' ելավ մեջ քաղաքին:
Մելիքի մեր ծծեր եբաց, կայնեց Մելքի առջև,
Ասաց·— Թե դու Դավիթ ըսպանե՞ս՝
Ես ծծերի կաթ քո վերան հարա՛մ ըլնի:
Մելիք ասաց·— Մա՛րե, ոձու ձա՛գ է Դավիթ,
Թե վոր ինձի վնաս դիպնի, ե՛դ տըղից է:

17

Եդտեղ Մելիք ու մեր կռիվ արին Դավթի վերա:
Վազիր ելավ, Դավթի ձեռեն բռնեց,
Դնաց Իսմիլ խաթնի առջև,
— Դե,— ասաց,— թագուհի,
Ինչո՞ւ Դավիթ չես ուղարկի ուր տիրու քով·
Ձես ուղարկի— գնա Սասուն:
Որ մ'է, որ ըմ չէ, Մելիք զԴավթի տի զարկի:
Դե, վեր ելիր, հաց պատրաստիր,
Ուղարկիր՝ թող երթա Սասուն:
Հերիք է մեր երկիր մնա:

Իսմիլ խաթուն ասաց·— Դավիթ, տըղա՝,
Ուղարկեմ քեզ՝ կ'երթա՞ս Սասուն քո հրոդբրանց:
— Հրոդբե՞ք ունիմ,— ասաց— ինչի՞ չեմ ե՛րթա:
Մարե, իմ հրոդբերանք վո՞րտեղն են:
Ասաց·— Սասուն քաղաք կ'ապրեն:
— Ենոնց անուն ի՞նչ է:
— Ենոնց անուն,— ասաց·—
Մեկին Ձենով Հովան կ'ասեն,
Մեկին՝ Վերգո:
— Մարե՛, քո աչքե՛ր քոռանար,
Ինչի՞ շուտ չ'ասիր,
Դե, շուտ,— ասաց·—
Տաս ջուխտ պունիկ, տաս ջուխտ տրեխ,
Տաս ավուր հաց տի պատրաստես,
Առնեմ, գնամ Սասուն:

Իսմիլ խաթուն պատրաստեց տաս ջուխտ պուճիկ,
Տաս ջուխտ տրեխ, տաս ավուր հաց,
Որհնեց Դավթին, ասաց.
— Գնա՛, գնա՛, տըղա.
Գնա Սասնա քաղաք, հրոդբրանցդ քով.
Աստված թող քեզի հետ ըլնի:

Եդտեղ Մըսրա Մելիք ասաց.
— Դավիթ թող գա՛, ես իմ թրի տակով անցնի՝
Վոր թողնեմ՝ երթա իր երկիր:
Ու թուր բարձրացուց:
Դավիթ պատասխան ետու.
— Ենպես կանի՝ վոր վաղ մեծնամ՝
Սուր չը քաշե՞մ ենոր վերան:
Են ինձ թրով զարկի՛—յես չըզարկե՞մ ենոր:
Հազար եդպես Մելիք մեռնի՝
Ես մեկ չարսու լաչակ ե,
Ես լաչակի տակով կ'անցնե՛մ.
Ենոր թրի տակով չե՛մ անցնի:
Ինչ ձեռեն կը գա՝ թող անի:

Վազիր Դավթի թևեն բռնեց,
Դընաց, վոր անցուցի թրի տակով,
Դավիթ չընկռավ, կայնեց—
Չ'երթա՛, չ'անցնի՛ թրի տակով:
Վազիր Դավթի պառեկ բռնեց,
Հոլրեց, քաշեց, վոր անցուցի թրի տակով.
Դավիթ չը գնաց, չ'անցավ թրի տակով,
Կըշտո՛վ անցավ.
Ճկուք քսվավ ի ջարդու քար՝
Քարեն կրա՛կ ելավ:

Մըսրա Մելիք տեսավ՝
Շա՛տ վախեցավ, ասաց.
— Եդ դեռ պստիկ ե՝ եսպես ե—
Վոր մեծանա՝ ի՞նչ ոտի ըլնի:

18

Ելավ Մելիք, կանչեց երկու փահլևաններ,
Բաքմանա Բուղեն ու Զարբահար Քամին,
Ասաց եդ փահլևաններուն.
— Դավթին տարեք յոթ սարով դեն՝
Տարեք, վեր Բաքմանա կամուրջ— սպանե՛ք:
Դավթի վերան հելա՛կ մի կար:
Մելիք եդ փահլևաններուն ասաց.
— Դավիթ սպանե՛ք, ենոր հելակ
Մեջ արունին թաթխեք, ինձի համար բերեք:
Կուժ մ՝ ել ենոր արնեն բերեք՝
Խըմեմ՝ իմ սիրտ հովնա:
Փահլևաններ գնացին պատրաստություն տեսան:

Իսմիլ խաթուն գիտեր, թե Դավթին Սասուն տի տանեն.

Դավթի համար տաս ավուր հաց պաշար դըրավ.
Տաս ջուխտ պուճիկ, տաս ջուխտ տրրեխ տըվավ.
Դավիթ Իսմիլի ձեռ պագեց,
Կաց բարով արավ, գնացին...
Թող ենոնք իրենց ճամբան երթան,
Մենք խաբար տանք Քեռի Թորոսից:

19

Մհերի մեռնելուց ետև՝
Ցոթ տարի Սասուն սուգ մընաց:
Ցոթ տարին վոր անցավ,
Սասնա իշխաններ, տերտերներ, ռամիկ
Ժողովան, եկան Քեռի Թորոսի մոտ:
Սասունցիք ասին Քեռի Թորոսին.
— Ա՛յ Քեռի Թորոս,
Մեր տղեկներ հալեվորան,
Մեր աղջիկներ պառավան. թե դու գիտես,
Վոր յոթ տարի սուգ պահելով Մհեր կը սաղնա՞,
Ցոթ տարի ել ավե՛լ պահենք:

Քեռի Թորոս հրաման տվեց,
Իր դուռ-դրկիցներուն ասաց.
— Կարգե՛ք ձեր տղեկներ ու աղջիկներ,
Սուգ պահելով բան չի՛ ըլնի:
Եկան, սեղան պատրաստեցին, նստան,
Բերին, գինի դրին, դրին գինեխում:
Բերին, բեփ, կեր ու խում անեն:
Ու Թորոս տերտերոջ ասաց.
— Տերտե՛ր, դու Մհերին հոգո՛ց ասա:
Տերտեր հոգոց ասաց, պրծավ,
Սկսան գինին լցնել,—
Տվին Քեռի Թորոսին,— թե խմե՛:
Քեռի Թորոս առավ կթխեն ի ձեռ,
Կայնեց ու միտք արեց.
Վոչ կը խմե, ու վոչ կթխեն տեղ կը դնե:
Խոր Մանուկ են տեղից ասաց.— Քեռի՛ Թորոս,
Կըխմես՝ խմե, թե չե՛ս խմե՝
Իզին տուր, թող մարդիկ երթան:
Թորոսի տղա՛ն ել մի կողմեն
Ձե՛ն տվեց հորն,— ասաց.
— Արո, Սասնու ծուռ են եդոնք,
Մկա մեկ վատ խոսք կ'ասեն քեզ,
Կամ խմե, կամ դիր գետին, քելեն:
Թորոս վերցուց տղին ասաց.
— Հեյ շա՛ն տղա,
Ցես եսատեղ նստեմ, յես կերուխում անեմ,
Մըսրա Մելիք Դավթին գերի՞ պահի:
Բա ամոթ չե՛ մեզի...
Հացն ու գինին, տեր կենդանին.
Զուր եդա վորբ հետ չը բերեմ,
Ես բաժակ իմ բերան չ'առնեմ:
Ու թող տվեց, մարդիկ ելան, գնացին:

20

Սասունցի քանի մի տուն ջուլհակ կար Մըսրա մեջ
Եդոնք լսեցին եդ ձեն-ձուն,

Թե Սասնա Դավիթ տ' ըսպանեն,
Ելան, իրանք ժողով արին,
Թո՛ւղթ մի գրին Քեռի Թորոսին:
Թղթի մեջ գրուկ եր·
«Քեռի՛ Թորոս,
«Քո գլուխ եդտեղ թրջես, եատեղ կընտես—
«Քանի վոր Դավիթ չեն վնասած,
«Բալքի պըրծցուս, տանես Սասուն»:
Եդ թուղթ տվին ջահել տըղի մի ձեռ, ասին·
— Կըհեծնես, կ'երթաս Սասուն,
Կը տաս Քեռի Թորոսին:
Իրիկուն հասնես՝ իրիկուն թող գա,
Լուսո՛ւն հասնես՝ լուսուն թող գա:
Տըղան կարն նամբով ելավ,
Գընաց դեպի Սասուն:

21

Զուլհակներու նամբած տղան
Եդ գիշեր եկավ, հասավ Սասուն·
Հարցուց·— Քեռի Թորոս վո՞րն է:

Եդ տղին տարան Քեռի Թորոսի մոտ:
Տղան բարև ետու, կանգնեց·
Քեռի Թորոս ենոր բարև առավ:
Տղան հանեց զթուղթ իր ծոցեն·
Քեռի Թորոս նամակ կարդաց,
Ասաց·— Կընի՛կ, վեցոտնեն Լազգին դո՛ւրս քաշե:
Դու տըղին կը պատվես, չուր հետ կը դառնամ:

Եդ գիշեր Քեռի Թորոս հեծավ իր ձին,
Սասնու վոր զարկեց՝ առավոտ իջավ Մըսըր:

Մըսրա Մելիք դուռ նստուկ եր:
Ասաց·— Վա՛յ, բարով, Քեռի՛ Թորոս:
Պատասխանեց·— Աստծո՛ւ բարին, Մըսրա՛ Մելիք:
Ասաց·— Քեռի՛ Թորոս, բարի՞ յե,

Եսպես ըշտապեր ես եստեղ:
Ասաց·— Փառք աստծու, բարի յե,
Խեր է, բան չկա:
Բարևեցին, նստան: Ասաց·
— Հա՛յդե, յես ու դուն՝ աստծու դատաստուն:
Գերին գին ըլնի, տիրուն կը հասնի:
Յես եկեր եմ, որ Դավիթ տաս, տանենք:
Ասաց·— Իրեք որ է, ինչ մեռեր է Դավիթ:
Քեռի Թորոսի արցունքներ թափվան միրուք վե,
Ամա զԴավիթ չը գտավ:

Նստավ Քեռի Թորոս իր վեցտանեն Լազգին,
Առավոտուն ճամբա ընկավ Մսրա՝
Իրիկուն իջավ Սասուն,
Եդ տխուր խաբար երեր սասնեցոց:

22

Են ինչ Դավիթ եր՝
Փահլևաններու հետ շա՛տ եկավ, քի՛չ եկավ,
Հինգ–վեց որ ճամբա եկավ:
Բաթմանա Բուղեն, Զարբահար Քամին
Կուզեն զԴավիթ սպանեն,
Հարմար չեն տեսնի զԴավիթ սպանեն:
Դավիթ ճամբու հետ չ' երթար:
Պահ մի եսպես, պահ մի ենպես կ'երթար,
Զը խոսեր, կ'երթա՛ր ու կ'երթա՛ր...
Փահլևաններ հա առաջադե՛մ կ'երթային,
Դավիթ մեկ առջևից, մեկ հետևից, ճամբակորուս
կ'երթար:
Դավիթ ենոնց մոտեն գա՛տ կը մնար,
Հետ քարի՛ն, հետ թփի՛ն կ'խաղար:
Կ'ընկներ սար–ձոր, հետև հավքերուն, հետև
գազաններուն:
Եդա երկու փահլևաններ ճամբին կը նստեյին՝
Հաց կուտեյին, Դավթին հաց չեյին ի տա:

Դավիթ ի՞նչ կ'աներ։—
Կը քաղեր բանջարներ, կ'ուտեր։
Կ'ընկներ մեջ արտերուն, արմատ կը քաղեր, կ'ուտեր։
Սարեր վոր վե՛ր կ'ը գար, սունկ կը քաղեր, կ'ուտեր։
Մեկ լոր կը տեսներ՝ կը սպաներ,
Մեկ նապաստակ կը տեսներ՝ կը զարկեր, կը սպաներ,
Ականջ չեր անի փահլևաններուն։

Վոր գնացին հասան մոտ Բաթմանա կամրջին,
Բաթմանա Բուղեն ասաց։— Զարբահա՛ր Քամի,
Զ'Դավիթ առնենք, թալենք ջուր։ Դավիթ հեռու յեր։
Նստեցին եդա երկու փահլևաններ հաց ուտելու,
Զ'Դավիթ կանչեցին, ասին։
— Դա՜վիթ, Դա՜վիթ, շո՛ւտ արի։
Դավիթ գընաց, հասավ, ասաց։
— Եսա հինգ որ կա, վեց որ կա, մենք նամբա
կը գանք,
Դուք մեկ որ չ'ասիք՝ «Դա՜վիթ,
Անոթի՞ յես, ծարա՞վ ես»։
Եդ կամրջի մոտ նստե ինձ ինչի՞ կը կանչեք։
Ասին։— Հապա, Դավիթ,
Զուր հիմիկ մենք Մելիքի հող-ջուրն եյինք—
Հիմիկ քո հոր հող-ջուրն եկանք,
Են ապո՛վ քեզի կը կանչենք։
Արի, Դավիթ, արի, էա՛ց կեր։
Դավիթ ասաց։— Իսմիլ խաթուն յոթ ավուր հաց
Հետ մեզ դրեր ե։ դուք կերաք, ինձի չը տվիք։
Եսորվան որ, վոր յես իմ հոր հող-ջուրն ընկա,
Ել չե՛մ ուզի ձեր հաց։

Դավիթ իրիշկեց, տեսավ՝
Եդ երկու փահլևան ելան գնացին
Զուր վեր Բաթմանա կամուրջին, կայնան։
Դավիթ եկավ, հասավ ենոնց, նորեն հարցուց։
— Ինչի՞ կայնաք։
Ասին։— Եկեր, քե՛զ համար կայներ ենք։

Մելիք մեզի ասաց.
«Զ'Դավիթ աղեկ կամուրջ անցուցեք,
Վոր Դավիթ չը վախենա, չ'ընկնի ջուր»։
Դու պստիկ ես. դու կը վախենաս։
Դավիթ ասաց.— Զուր մենք Մըսրա եկա՞նք՝
Դուք չ'ասիք թե՝ «Դավիթ տըղա՛ յեր. կը վախենար»,
Հիմի ի՞նչ եղավ. դուք քելեք,
Զկամուրջ անցեք, յես հետևեն տի գամ։
Փահլևաններ ասին. (Դավիթ չեր իմանա)
— Մեկն անցնենք Դավթի առաջ,
Մեկն գնանք Դավթի հետև.
Վոր կը հասնենք կամուրջի կես՝
Մեկն առջևից կ'ոլորվենք Դավթի վերան,
Մեկն հետևից,— Դավիթ կը սպանենք,
Թալենք ջուր, վոր երթա։
Դարձան Դավթին ասին.— Զե՛, Դավիթ,
Մեկ անցնի, մեկ կենա հետև, վոր չը վախենաս։
Ասաց.— Վոր ենպես է՝ թողեք ձեր խոսք ըլնի։
Դավիթ իր միտ վե ասաց.
— Ինչո՞ւ չուր հիմիկ երկուսն ել առաջս եյին,
Հիմիկ մեկն անցավ առաջ, մեկ մնաց հետև.
Զե՛, բա՛ն մի կա ենոնց սրտին։

23

Գընացին, հասան կամրջի կես տեղ։
Մեկն առջևեն դարձավ Դավթի վերան.
Մեկ՝ հետևեն դարձավ։
Դավիթ ասաց.— Եդ ի՞նչ տ'անեք։
Վա՛յ, դուք կուզեք ինձ ջո՞ւր թալեք։
Դավիթ ձեռ մի թալեց ենո՛ր փողպատ,
Մեկել թալեց ենո՛ր փողպատ,
Տըփեց իրո՛ւր, տըփեց իրո՛ւր,
Կախեց երկուսն ել կամրջի երկու կողեն,
Ասաց.— Դուք չե՛ք գիտի մարդ թալել ջուր։
Յես ձեզ նշա՛նց տի տամ, ինչպես մարդ
թալեք ջուր։

Երկու փահլևաններ ասին.— Աստծո՛ւ սիրուն,
Դու ըզմեզ մի՛ թալի եդ ջուր:
Դավիթ ենոնց բռնեց, հետ իրարու եզար գետին,
Իր ծունկ եդի վեր սրտերուն, ասաց.
— Ըզմեզ երկուսդ ել տի սպանեմ ու թալեմ գետ.
Յա զո՛րդ կ'ասեք, յա կը թալեմ:
— Դավի՛թ,— ասին,— մենք քո բա՛խտն ենք,
Դու ըզմեզ թող, վոր մենք ելնենք
Ու զորդ խաբար տանք քեզ:
Դավիթ իր ձեռ ենոնց մոտեն վերցուց:
Ենոնք ելան վե՛ր, նստան:

Սրհաթ մի խելք չեր գա ենոնց գլուխ,
Ենքան վոր զոռ արավ:
Դավիթ ասաց.— Դե, ասեք ե՛:
Նոր՝ քիչ մի շունչ առան ենոնք,
Ուշքի եկան, ու Զարբահար Քամին ասաց.—Դավիթ,
Քեզնե պահենք, աստծուց ի՞նչպես պահենք:
Եդ քյաֆուր, եդ գալըմ Մելիք
Զորբուրքյունո՛վ եդի վեր մեր վզին,
Զմեզ եդի հետ քե՛զ, վոր քեզ սպանենք.
Մըսրա Մելիք ասաց մեզի՝
«Տարեք Բաթմանա կամըրջի վերան Դավիթ գենեցեք.
Կուժ մի ենոր արնեն առեք,
Ենոր ջանդաք թալեցեք ջուր,
Արուն բերեք, վոր յես խըմեմ, իմ սիրտ հովնա».
Ամա աղաչանք կ'անեմ՝ ինձի չը սպանես:
Դավիթ եր՝ Բաթմանա Բուղա արաբ չը սպանեց.
Խղճավորվավ, եթող: Ենոր քաշեց վե՝
Կայնեցուց վեր կամըրջին, ասաց.— Գնա՛:
Բաթմանա Բուղեն ասաց.— Քո հելակ վոր չը տաս,
Մեջ արնին թաթախենք, տանենք՝
Մըսրա Մելիք մեզ կը սպանի:

Դավիթ տեսավ՝ եդտեղ նապաստակ կը փախնի.
Ելավ, հասավ հետևեն,

Քոնեց, վիզ կտրեց, կուժ լցրեց արուսով,
Հելակ մեջ ետոր արնին թաթախեց, ասաց.
— Տա՛ր Մելֆին, ասա Դավիթ սպանեցիր:
Բաթմանա Բուղեն ուրախացավ, ճամբա ընկավ Մըսըր:
Են որ Զարբահար Քամին եր՝ ասաց.
— Ցես որ կամ՝ Դավի՛թ,
Քո հոր սուփրի վերա՛ն եմ մեծացե:
Զը գիտեյի՝ դու ետա հունարի տերն ես.
Ինչ որ քո հեր մեռավ՝
Մըսրա Մելիք զմեզ տարավ գերի:
Թալել եմ ինձ քո բախտ.
Ցես ել Մելֆին ծառայություն չեմ անի:
Վոր դու եդա մարդն ես,
Վոր եդա հունար քո փոր կա,
Քանի կենդանի՛ յեմ՝ յես քո ծառան տ'ըլնեմ:
Քո հոր խաթեր համար բեզի կը ծառայեմ:
Դավիթ ասաց.— Վոր եդպես ե, կայնի՝ երթանք:
Ետատեղ մեկ-մեկու գլուխ պագեցին,
Եկան ելան Սասնա սահման:

24

Եդ գիշեր Զենով Հովան Դավթի վրա երազ տեսավ:
Ասաց.— Աստվա՛ծ գիտի, մանուկ Դավիթ կա՞,
թե չկա:
Կարելի յե, վոր մեր Դավիթ
Շուտով եսա երկիր կը գա:
Ու մե՛ջ մեր հողուն ե մտե:
Զենով Հովան կնկան ասաց.
— Սառյե՛, Սառյե՛, դու վե՛ր ելի: Սառյեն ասաց.
— Ա՛յ հալեվոր, ինչի՞ չես թողնի, վոր քնենք:
Զենով Հովան ասաց.— Սառյե՛,
Ոտար զարմի՛ց ես դու, քո սիրտ հեչ չի՛ ցավի:
Վե՛ր ելի, վե՛ր:
Դու վե՛ր ելի, իմ սիրտ բա՛ց, տե՛ս.
Եսոր մեր քաղքի պարիսպ կայնե՛ր եր,

Մեր քազա բաղ կանաչեր եր,
Մ'եր ջահեր քաղքի պարսպին վառվեր եր,
Մեր բաղի պլպուլ կանչեր եր.
Կա չըկա, մեր վորբ Դավիթ մեջ մեր հոդին մտեր է։

ԴԱՎԻԹԸ ՀՈՎԻՎ

1

Դավիթ, ինչ խոտ, ինչ բան ընկեր եր ձեռ՝
Անոթուքնե կերեր եր:
Եստուց քիչ մի ծուռ եր դարձե—
Խելք ել գլուխ չեր մնացե:
Քանի մի որ գնացին եսպես
Դավիթ ու Զարբահար Քամին,
Որ մ'ել մոտեցան Սասնա:
Եդտեղ հորթարածներ, եդտեղ նախրորդներ,
Եդտեղ հովիվներ ու գառնարածներ
Թողե իրենց տավար, թողե իրենց ոչխար,
Կ'իրիշկեյին զԴավիթ:
Ու ճանչըցան իր շորերաց,
Թե Սասնա Զոչանց տնի'ց ե:
Գեղացու մեկ ելավ,—
Ենոր Դավիթ պատմեր եր, թե՝ յես Սասուն տ'երթամ,
Սասուն իմ հայրենիքն ե,—
Ակընջկալա տարավ Ջենով Հովանին:
— Ջենո'վ Հովան, դու իմանա'ս,
Մեկ կը գա, ձեր վորդի Դավի'թն ե:
Իմ ակընջկալեն քե:

Ջենով Հովան շատ խնդացավ,
Իմաց արավ Քեռի Թորոսին,
Են մեծ տուներն ելան, եկան ենոնք,
Քաղաքացուն ու գեղացուն ասին.

— Աստվածուքյուն մեզի նոր տղա մի տվեց.
Կը խնդրեմ ձեր մոտեն, ելե՛ք, երթանք Դավթի առաջ:
Քաղաքացիք ու գեղացիք ելան, ժողվան,
Հետ Զենով Հովանին գնացին Դավթի առջև:
Տեսնան՝ ի՞նչ տեսակ տըղա յե Դավիթ:
Գիտեն թե հորից աղե՛կ ե:
— Հե՛յ-հե՛յ, Դավիթ վո՛րն ե, հե՛յ-հե՛յ,
Դավիթ վո՞րն ե.— ասին:

Ելավ Զենով Հովան, իրիշկեց իր նամբան.
Իրիշկեց, տեսավ, վոր մեկ փահլևան կը գա.
Մեկ տղա ել հետևանց կը գա,
Ճամբուց դուրս կը քելե,
Կորընգանու արտերու մեջ:
Հովանն ասաց.— Քեռի Թորոս,
Են տղան, վոր նամբուցը դո՛ւրս, ծուռ-ծո՛ւռ կը գա՝
Ենիկ, վա՛յ թե, մեր ծուռ Դավիթն ե, վոր եկավ.
Սասնա նրագ վառվեց:

Զուրի Դավիթ եկավ, ելավ Սասուն՝
Ենոր տրեխներ կտրտվան,
Ենոր պուճիկներ կտրտվան.
Ինք ելավ անոթի:
Տեսավ՝ շատ մարդեր ժողվված,
Չը գիտեր՝ վո՞ր տեղն ե եկե,
Շիվար մնաց, ասաց.
— Յես անոթի, ծարավ՝ ինչպե՞ս տ'երթամ Սասուն:
Են ինչ գեղացիք՝ ձեռ կտան Դավթի ձեռաց:
Դավիթ խարար չի, չի մոտենա,
Ենի տըտուշ ընկե նամբա, կըգա՝
Խաբար չունի, թե սասնեցի՛ք են
Ենոր առջև պատվի եկե:
Սասնեցիք ել խաբար չե՛ն ենոր հալից,
Թե ինչպես հալից ընկե,
Ինչպես դադրած, անոթի յե:
Զենով Հովան եկավ առաջ,

Եկավ զԴավիթ տեսավ,
Ենար քով կայնավ, ասաց·
— Տղա՛, դու վո՞ր տեղացի յես:
— Ցես Սասնու քաղքի՛ց եմ,— ասաց:
— Սասուն քաղաք յես քեզի չե՛մ տեսեր:
Ե՛ս ե Սասուն քաղաք, ե՛ստեղըն ե:
Սասուն քաղաք դու մարդ ունի՞ս:
— Իմ մեր կ'ասեր՝ երկու հորողբե՛ր ունիմ:
— Իրանց անուն ի՞նչ ե·— հարցուց:
— Մեծ հորողբոր անուն,— ասաց,— Վերգո,
Են մեկելին Ջենով Հովան:
Եղտեղ Հովան ըզԴավիթ պինդ գրկե՛ց, պագե՛ց,
Դավթի ճակատ լալե՛ն պագեց:
— Վա՛յ, Դավիթ,— ասաց·— ես դո՞ւ յես:
Ցե՛ս ել—քո հորողբեր Հովա՛նն եմ:
Հովան, նորեն պագելեն առավ ըզԴավիթ,
Ուրախ-ուրախ գնաց տուն:
Ջեն տվեց ճամբին, կանչեց·— Ե՛, աղբերնե՛ր,
Եկե՛ք, ձեր աչքը լո՛ւս, եկե՛ք, մեր ա՛չքն ել լուս,
Մեր Դավի՛թն ե եկե···

Դավթի հորողբերներ ենտեղ,
Գրկին, համբուրեցին ըզ'Դավիթ:
Սասունցիք ել շատ աչքալուս արին:
Ջենով Հովան ասաց·— Փա՛ռք իմ աստծուն·
Ես մեկ զավա՛կ ել մեզ ելավ կայնավ·
Եկավ մեր աղունիկ:
Համա ի՞նչ տ'անեմ՝ շիվա՛ր ե:
Մենք ասինք լա՛վ մարդ մ'եր,
Ափսոս շիվա՛ր տըղա մե· փա՛ռք իմ աստծուն:
Նստան Հովան, բարեկամներ, քաղաքացիք,
Ուրախություն ու քեֆ արին իրենց համար:
Շատ գրուցին, ելան մեկ-մեկ իրանց տներ գնացին:
Մնացին Ջենով Հովան, Դավիթ:
Դավիթ ասաց·—Հրողբեր, ինչպե՞ս ես, ի՞նչ ունիս:
Ասաց·— Վորդի, փառք իմ աստծուն,

Եհ, տեր աստծո՛ւ ողորմությամբ
Քո հոր գերեզմանով մեր իդարեն կանենք:
— Աղե՛կ, ասաց Դավիթ, վոր եդպես ե, ադեկ ե:

2

Առավոտուն Ջենով Հովան ելավ, կայնավ.
Իրեք անգամ ձեռք ետու գետին,
փառք ետու աստծուն,
Ասաց.— Փա՛ռք իմ քո մոտեն, աստված,
Ես անգամ ել երազ չես քո մոտեն տեսա.
Մեկ պուրակ ըմ ելավ Սասնա ոջխի վերա,
Ցես, իմ աղբեր ել վախ չ'ունենք:
Ելավ, բերեց ձեռք մի խորոտ հալավ, հագցուց,
Ջերեր լիք ճան, չամիչ, պոպոք արեց,
Գլուխ պագեց, ասաց.— Դավիթ,
Գընա մոտ ճժերուն, խաղա:
Դավիթ գընաց մոտ ճժերուն, խաղաց:
Ճժեր լեպ արին, ճաներ զամեն մոտեն տարան:
Դավիթ ապտակ մ'եզար իշխանաց լաճերուն,
Լաճու մի վիզ ծռվեց:

Իրիկուն եդ լաճու մեր եկավ մոտ Հովանին գանգատ:
Ջենով Հովան ասաց.— Վոչինչ, բան չի ըլնի:
Թամբահ կ' անեմ, վոր ել կռիվ չ' անի:
Գնաց Հովան, Դավթին ասաց.
— Հորոդքե՛ր քե մեռնի, Դա՛վիթ,
Ել հեւ խալխին կռիվ չ' անե՛ս:
Դավիթ լուսուն ելավ, գընաց մեջ ճժերուն, խաղաց.
Ճժեր նորեն վոդջ մեկ ելան,
Թափվան Դավթի վերան, կռվան.
Դավիթ զարկեց, իրեք լաճերու վիզ ծռեց:
Եդ վախտ եկան քաղքի մեծեր,
Ամեն ժողվան, իրար ասին.
— Են շան վորք մեր ճժեր խեղեց:
Մենք տ'երքանք, Դավթին սպանենք,
Դավիթ ինչի՞ մեր տըղաներու վիզ ծռեց:

Ելան եկան, կանչեցին Ջենով Հովանին, ասին.
— Դավիթ դո՞ր է, կանչի, թող գա:
Ասաց.— Ինչի՞ կանչեմ Դավիթ:
Ասին.— Մագյար եդ ծուռ Դավիթ
Դուշմա՞ն է մեր տղեկներուն.
Ինչի՞ ենոնց վզեր ծռեց:
Հովան վախեցավ, գնաց Դավթին, ասաց.
— Աստված քո տուն ավրի, Դավիթ,
Եդ տղաներ ինչի՞ խեղիր:
Ասաց.— Ջայնա՛մ ենոնց գըլուխ,
Ինձ հետ կովան՝ յես ել զարկի:
Ասաց.— Քաղքի մարդիկն եկե,
Մեր դուռ բռնե՛, ելի՛ր, պատասխա՛ն տուր ենոնց:
Դավիթ ելավ, եկավ դուռ, տեսավ.
Ենքա՛ն մարդ է հավաքված դուռ:
Շատեր կան՝ Դավիթ չե՛ն տեսած.
Եկած են՝ թամաշա՛ անեն, Դավի՛թ տեսնեն:
Շատեր ել կան, Դավթին զարկելու ապով են եկած:
Դավիթ վոր ելավ դուրս,
Եսքան մարդիկ Դավիթ տեսան,
Աեուց դողդողացին, իրարու գաղտուկ ասին.
— Դավթին դուք ձեռք չը տաք.
Վոր ակահի՝ մեզ է՛լ տ'ըսպանի:

Ու դարձավ, ամեն մեկ գնաց իր տուն:

3

Են մեկել որ քաղքի ջոջեր
Կանչեցին Հովանին, ասին.
— Հո՛վան, գիտե՞ս ինչի համար ենք քե կանչե.
Մենք վոր հրեկ եկանք ձեր դուռ,
Դավթին տեսանք՝ շա՛տ վախեցանք:
Արի Դավթին գործի՛ մի դիր.
Եդոր գործի վոր չը դընես՝
Քաղքի մեջ շա՛տ ավերություն տ'ըլնի:
Հովան ասաց.— Ի՞նչ անեմ, ի՞նչ գործի դնեմ:

Ենոնք ասին։— Դավիթին մենք գառնարա՛ծ անենք,
Թող չը մընա՛ քաղաք։

Ձենով Հովան իրիկուն տուն եկավ, ասաց։
— Դավիթ, մեռնե՛մ քեզի, չե՞ս ըլնի գառնարած։
Աղքատացեր ենք մենք—
Ձա՛փ մի երկու կորեկ առնենք, ուտենք։
Դավիթ ասաց։— Հորդորե՛ր, ինչի՞ չեմ ըլնի...
Եսպես պարապուքյուն չեմ կա՛րնա անցուցեմ։
Դու ջո՛ջ մարդ ես,
Հիմիկ քեզ խա՛թր կա մոտ մեր խալխին,
Ինձ համար մեկ ռանչպարուքյո՛ւն մի առ։
Ասաց։— Դա՛վիթ, քեզի բոներ են գառնարած։
Ամեն մեկ տավարի գլուխ մեկ կոտ կորեկ,
Մեկ կոտ ցորեն մեզ վարձ կը տան։
Կարնա՞ս պահի գառներ, թե՞ չես կարնա։
Ասաց։—Ենե՛նց պահեմ, ծաղկընեռո՛ւ պես։
Ձենով Հովան ելավ քաղքցոց ասաց։
— Ես տարին իմ աղբոր տղան տ՛անենք գառնարած։
Դուք լուսուն ձեր գառներ բերեք քաղաքի դուռ։
Ձ՚Դավիթ կը ճամբեմ, թող ամեն ժողվի, տանի։

Ձենով Հովանին դրկիցներ ասին։— Հովան,
Մեկ ջուխտ մի սոլ ենոր համար կտաս կարել։
Եդոր ի՞նչ սոլ տի դիմանա, վոր եդ հագնի,
Երբա Սասնա սարեր, արածացնի, փըռա։
Հովան ասաց։— Իսկուն կ՚երթամ, կը տամ կարե՛լ։
Ելավ Հովան գնաց, դարբնին
Պողպատե սո՛լ ետու կարել,
Պողպատե կո՛ռ ետու կոռել,
Առեց, բերեց, առավոտուն ետու Դավթին։
Դավիթ իր սոլերու վերան ուրախացավ։
Ձենով Հովան ասաց։— Վո՛րդի,
Ելիր, գառներ քըշիր
Սասնա սարի հետև՝ արոտատեղ։
Կեսորին գառներ կը հավաքես վեր աղբրին,
Քեզի կեսորին հաց կ՚ առնեմ, կը գամ։

4

Ելավ Դավիթ, պողպատե սոլ հագավ,
Պողպատե կոռ բռնեց ի ձեռ,
Կանգնեց Սասնա մեջ, կանչեց.
— Դրկիցնե՛ր, ձեր գառներ հանե՛ք,
Ձեր ուլեր հանե՛ք, դո՛ւրս բերեք,
Տանեմ Սասնա սարեր, արածացնեմ:
Դրկիցներ առան գառներ, առան ուլեր,
Բերին քաղաքի դուռ:
Դավիթ զգառներ ժողվեց, տի տաներ սար.
Մարդեր վոր տեսան զ'Դավիթ, ասին.
— Հո՛վան, Դավիթ տի սպանի՛ գառներ:
Հովան ասաց.— Դա՛վիթ,
Մենք դրկից ենք, տես գառներ չը սպանե՛ս.
Սալամա՛թ տար, սալամաթ յե՛տ բեր իրիկուն:
— Հորոդբե՛ր,— ասաց,— մազյար յես ծո՞ւռ եմ,
Գառներ շա՛տ խորոտ կը պահեմ:

Դավիթ գառներ առաջ արավ, տարավ,
Մեկ բարձը սար մի կար՝ ենտեղ արածացուց:
Գառներ կուշտ-կուշտ կերան:
Դավիթ ենոնց գոմեց քարայր,
Դավիթ հեռացա՛վ գառներուց.
Իր համար թե՛ք ընկավ, քընավ,
Դավիթ ակահ չունե՛ր գառներուց:
Գառներ արթնացան, քարայրից ելան,
Գառներ ամեն մեկ իր տեղ ցրվավ՝ արածելու:
Դավիթ ակահ չուներ գառներուց:
Քնավ, զարթնեց, իրիշկեց, տեսավ գառներ, ուլեր
Ամեն մեկ մի կողմով գացա՛ծ—վերա՛ կորուսված:
Կայնավ, զընաց քարայրի դուռ, մեկ գառ չկա:
Ե՛ս կոդ իրիշկեց՝ գառ չըկա.
Ե՛ն կոդ իրիշկեց՝ գառ չըկա.
Կայնավ՝ գառաց, ելավ ընկավ հետևքեր,
Մաև եկավ, ընկավ եդ սար ու ձոր.
Ենոր վոտքի ձեն վոր ելավ,

Ենոր բոլոց վոր դըմդրմբաց,
Նապաստակներ ու աղվեսներ սարից, քարից ելան,
Թողին իրենց բներ, կը փախչեն, հա՛ կը փախչեն:
Տեսավ նապաստա՛կ մի փախավ,
Ասաց·— Ուը՛հ, նա ուլ ինչպե՞ս կը փախնի:
Ընկավ հետև նապաստակին· են չա՛լ ուլ եր:
Կո՛ւզ մ'ել գընաց, աղվե՛ս մ'ել փախավ,
Դավիթ ե՛լ ասաց·
— Ո՞հ, են ուլեր ինչպե՞ս կը փախնեն:
Ենպես վազեց հետևներեն,
Զուր լեզուներ հանին, դադրան, կանգնան:
Ինչքան աղվես, կուզ, նապաստակ վոր կար՝
Բռնեց բերեց, գցեց մեջ գառներուն, մեջ ուլերուն:

Եդտեղ պոդպատե սոլեր կտրտվան:

5

Կեսորին Հովան հաց առավ, տարավ,
Գնաց տեսավ՝ Դավիթ ենպե՛ս ե ման եկե սարեր,
Վոր են պոդպատե սոլ կտրտվե,
Են պոդպատե կոռ մաշվե՛:
Ասաց·— Դավիթ, քո բան ինչպե՞սն ե:
Տըղա, գլխուդ մեռնեմ·
Որեն մեկ սո՛լ կարել տամ քե,
Որեն մեկ կո՛ռ կոռել տամ քե,
Քո հախն են չափ չի՛ հանի·
Ել մեր ոգուտըն ի՞նչ տ'ըլնի:
Դավիթ ասաց·— Ե՞հ, հորոդբեր,
Ել վաղն եդ գառներ չե՛մ տանի:
Եսոր ենպե՛ս եմ վազվզե,
Վոր իմ սոլ կտրտվի:
Զեռով Հովան ասաց·— Դավի՛թ ջան, ի՞նչ ե,
Գառնարածուքեն անուշ բան չե՞:
Ասաց·— Անո՛ւշ ե, հա, են խա՛չ, անո՛ւշ բան ե·
Եդա սև ուլեր միամի՛տ են·
Եդա կարմիր ուլերու հետ,

Եդա սևլի՛կ ուլտրու հետ
Ցես շա՛տ աղեկ նամբա կ'երքամ.
Համա եդա բալբալոս ուլեր, եդա սիպտա՛կ ուլեր,
Եդա երկարակա՛նջ ուլեր— չե՛ն կանգնի.
Եդոնք ինձ շա՛տ կը չարչըրեն, շա՛տ կը փախնեն,
Ջիմ հոգին անգրո՛ղ առան.
Ենքա՛ն ինձ ցավցուցին:
— Լա՜ռ,— ասաց Հովան.—
Մենք շեկ, սիպտակ ուլեր չունենք:
Դավիթ ասաց.— Ձե՛, հորողբեր,
Շեկ ու սիպտակ ուլեր ել կան:
Թե են ուլեր առավոտուն չը հանե՛ս գառներաց մեջեն,
Ցես չե՛մ երթա հետ գառներաց:
— Մեկ յե՛լ,— ասաց Հովան,—
Քարայրեն եդ գառներ հան դո՛ւրս,
Եդ շեկ ուլեր տեսնեմ:

Ելան, եկան, քարայրի դուռ բացին:
Դավիթն ասաց.— Հորողբե՛ր, դու մտի ներս,
Գառներ հանի՝ յես ենա ուլեր կը բռնե՛մ,
Դու ենոնց չե՛ս կարնա բռնի:
Հրողբեր ասաց.— Ձե՛, չե՛, տըղա, դու պստի՛կ ես:
Դու մտի նե՛րս, քըշե, թող գան, յես կը բռնեմ:
Դավիթ մըտավ եդ քարայր,
Փետ մի զարկեց. մեկ ե՛ս քարին, մեկ ե՛ն քարին.
Կուզեր, աղվես, նապաստակներ ամեն դու՛րս
թափվան:
Ձենով Հովան տեսավ՝ աղվեսներո՛ւն,
Նապաստակներո՛ւն կ'ասի Դավիթ ըսպիտակ ուլ:
Նապաստակներ, աղվեսներ ամեն փախան:
Քարայրեն Դավիթ ելավ դուրս, ասաց.— Հրողբե՛ր,
Դու ինչի՞ իմ ուլեր թողիր՝ գնացին:
Ասաց.— Ենոնք ջանավա՛ր են, տղա լա՛ռ, ուլ չե՛ն,
Եդ շեկ ուլեր թո՛ղ, թող երթա՛ն:
Դավիթ ասաց.— Դու իմ ուլեր թողի՛ր,
Ինչպե՞ս տ'անեմ. ենոնց տերեր ո՛ւլեր տ'ուզեն,
Ինձ ուլ չը կա՝ յես տամ:

Ենոնց ջուաբ ինչպե՞ս տի սամ։
Ասաց Դավիթ. ել հետ վազեց սարեր,
Վոր նապաստակ, աղվես ժողվի։
Հրողբեր հետևեն գոռաց.
— Դավիթ, աստվա՛ծ քո տուն ավրի.
Ենոնք զազանե՛ր են, քո՛ղ, քո՛ղ գընա՛ն։
Դավիթ ականջ չ'արեց, գնաց։

Հրողբեր դարձավ, եկավ տուն. ասաց.
— Ջա՛նըմ, ես ի՞նչ մուր եր՝ քրսեցինք մեր երես։
Ես մեր ծուռ Դավիթ ինչ ջանավար տեսե.
Բերե, լցրե մեջ զառներուն,
Ո՛ւլ, նապաստա՛կ մեկ-մեկից չի՛ ջոկի.
Ասաց.— Դրկի՛ց-գեղացիներ, աստծո՛ւ սիրուն,
Լուսուն Դավիթ ել չը դընե՛ք առջև ձեր զառներուն։

6

Էն ինչ Դավիթ եր՝ ելավ վեր,
Ընկավ հետև աղվեսներու ու կուզերու.
Են կուզ, աղվես ու նապաստակ
Լեզուն չալած կը վազեն,
Հրլիրլոց ընկեր եր զառներ
Ու տկի պես կը զարկվեյին։
Դավիթ ենոնց կը տաներ սար, կը բերեր ձոր,
Կը բերեր. կ'աներ մեջ ուլերուն,
Կ'ասեր.— Ես տերով տերամեռներ,
Գառ-մառ, ուլեր, չեն թողնի՝ յես հանգստանամ.
Ձե՛ն դադարի՝ յես հաց ուտեմ։
Ջանավարներ Դավթի ահուց ել չը փախան։

Իրիկուն Դավիթ գառ ու զազան քշեց քաղաք։
Դավթի սոլեր ենպե՛ս եյին ցրվե՝
Ենպես եյին կտրտվե, վոր Դավիթ սոլեր հանե,
Մտուցե ի կո՛ռ, վոտաբոքի՛կ կը գար։
Եդա անասուններ բերեց, լցրեց մեջ քաղաքն։
Կանչեց.— Դրկիցնե՛ր, եկե՛ք, ձեր ուլ ու գառ
տարե՛ք...

Ենա երկենականչ ուլեր ո՞ւմն է, չեմ ճանչնար,
Շա՛տ կը փախնեն, եկե՛ք, տարե՛ք, կը խատուցեմ...
Ենա երկեն պոչով ուլեր ո՞ւմն է, չեմ ճանչնա,
Շա՛տ կը փախնեն, տփելո՛վ եմ բերե, խառնե մեջ
զառներուն...

Բաղքցիք նդա բան տեսան, ասին.
— Դավիթ ամեն աղվես ու նապաստակ ժողվե,
Մրլե մեջ զառներուն— գնանք, առնենք:
Ելան, ջոկեցին իրանց զառներ, տարան:
Ամեն մեկ ինչ ուզեց՝ տարավ—
Կո՛ւզ, նապաստա՛կ, աղվե՛ս:
Նապաստակներ մորթին, հետ ուլերու կերան.
Աղվեսներու, կուզերու մորթիք քուրքեր արին,
հագան:

Են վախտեն չուր հիմիկ՝
Նապաստակ հա՛ կը զենե՛ն, հա՛ կուտե՛ն,
Աղվես, կուզ ել կանեն քուրք, կը հագնե՛ն:

Են իրիկուն իշխան մարդեր գնացին,
Ջենով Հովանին ասին.
— Են ծուռ արեր ես զառնարած,
Ջանավարներ, ուլեր իրարուց չի՛ ջոկի:
Են սարի վորս ամեն ժողվե բերե՝
Սարեր վորս չի՛ թողե:
Մենք չենք թողնի, վոր Դավիթ զառնարած անեք:

7

Ժողովուրդ հավաքվա՛վ, ասաց.
— Ապա ի՞նչ անենք Դավթի հետ.
Բերենք նախրո՛րդ անենք:
Դավիթ ասաց.— Ինձ բերիք, արիք զառնարած
Ու հանիք դո՛ւրս—հիմիկ նախրո՞րդ կանեք:
Ջենով Հովան ասաց.— Դա՛վիթ, տղա,
Ուլեր քեզ շատ կը չարչարեն.
Դու ուլեր մի՛ տանի.
Նախի՛ր տար, եդա դաշտ արա,

Պառկի ենտեղ քընի,
Մինչև յես քեզ հաց կը բերեմ:

Հրոզբեր գնաց, պողպատե սոլ մ' ել ետու կարել,
Պողպատե կոռ մ'ել ետու կոռել,
Առավ, բերեց, առավոտուն ետու Դավթին,
Ելավ լուսուն կանչեց.
— Հեյ-հե՜յ, ելե՜ք, մալեր թողեք Դավթի առաջ:
Դավիթ հորթեր չի՛ տանի արածացնելու,
Դավիթ տավա՛ր կը տանի արածացնելու:
Ելան, տավար թողին առաջ:
Դավիթ ժողվե՛ց եդա տավար.
Գընաց, ելավ Սասունա դաշտ:
Տավար բաց երդ, թավալավ, քնավ:

Քնուց վոր ակահավ, նստեց, տեսավ՝
Տավար բարձրացե, ելե քարափներու պռունկ:
Ելավ, ընկավ հետև տավարներուն:
Ես դիր՝ խանդքներուց գելե՛ր, արջե՛ր փախան.
Ասաց.— Անիծե՛մ յես ձեր տիրու հեր, ելի՛ փախան:
Ենոնք փախան, Դավիթ ընկավ հետևներեն,
Ենչափ վազեց, մինչև նեղացա՜ն, դադրա՜ն,
ուժից ընկան:
Դավիթ բռնեց, բերեց մեջ տավարին:
Նորեն ընկավ սար-ձոր ու ման եկավ.
Ի՛նչ կադար ջանավար վոր կար՝ ամեն ժողվեց,
Ասլանը մե՛կ կողմից բերեց,
Ղափլանը մե՛կ կողմից բերեց,
Պընգըլը մե՛կ կողմից բերեց,
Գելերը մե՛կ կողմից բերեց,
Արջերը մե՛կ կողմից բերեց—
Ամե՜ն գազաններ ժողվեց, դաշտ լի՛ք արավ:
Դավթի աեից մեկ կարող չեր իրար դիպնի.
Մեկ վոր փորձեր իրար դիպներ, տեղեն շարժվեր՝
Դավիթ ենպես կը բարձրացներ, կը սար գետին,
Վոր մեջ գետնին կը խըրվեյին:
Անասուններ գազաններու ահու կանգնած եյին,

Եդ զազաներ Դավթի ահու կանգնած նյին,
Դավիթ ել ամենու առաջ կայներ եր:

8

Իրիկուն Դավիթ նախիր քշեց,
Բերեց լցրեց մեջ Սասնա քաղքին:
Ել մարդ դուրս չ'ելավ:
Քաղքացիք վախից դռներ չը բացին.
Դռներ գոցեցին, դարգահներ զարկին:
Ինչ Դավիթ՝ կանգնավ Սասունա մեյդան,
Բա՛րձր ձենով կանչեց, բռա՛ց, հա՛ բռռաց.
— Հե՛յ ժողովուրդ, ելե՛ք, ձեր տավար տարե՛ք,
Տարե՛ք, տեղավորե՛ք,— ասաց.
— Ով կո՛վ չուներ՝ կով եմ բերե,
Ով յե՛զ չուներ՝ յեզ եմ բերե,
Բա՛ց արեք ձեր դռներ, դե բա՛ց արեք:
Ում մե՛կն ուներ՝ արի երկուս,
Ում երկո՛ւսն եր՝ արեր եմ տաս,
Ում վոր տա՛սն եր՝ արեր եմ քսան.
Ում քսան եր՝ արեր եմ քառասուն,
Ինչի՞ չեք զա ձեր տավար տանեք:
Մեկ չի՛ ելնի իրեն տավար ջոկի, տանի.
Ենչափ կանչեց՝ մարդ չը տեսավ.
Մարդ չե՛ր իշխենա դուրս ելներ:
Դավիթ ըռկավ, եդտեղ ասաց.
— Կ'ելնեք՝ չխռ բարռ՛վ չ'ելնեք, ջահաննա՛մ ըլնի.
Ցեսս չոլերից ազատե, բերեր եմ տուն.
Տեր չեք ըլնի՝ ո՛ւր կերթան, բռռ երթա՛ն:
Հա՛յ գիդի աշխարք,— ասաց.—
Արի ու լավությո՛ւն արա:
Դավիթ իր գդակ կործեց գլուխ,
Պառկավ ենտեղ, քնավ՝ մինչև առավոտուն:

Իշխան մարդեր ելան, Ձենով Հովանի մոտ գնացին,
Ասին.— Ձենով Հովան, մեզ տավարից պիտի կտրես:
Քռ տղան մեր քաղաք ավրեց.

Կը վախենանք եղ գերերեն,
Եղ արջերեն, գազաններեն:
Ես ի՞նչ բան է, եսքան դազան...
Տրղատերեր վախցան, ահու մեռան:
— Վոր ենպես է,— ասաց Հովան,—
Կ'երթամ զԴավիթ բերեմ տուն:
Ձենով Հովան գնաց, կանչեց.
— Դա՛վիթ, հորողբե՛ր մեռնի քեզ, ասա.
«Հալալ մնացե՛ք, հարամ գնացե՛ք.
Հալալ մնացե՛ք, հարամ գնացե՛ք...»
Դավիթ ելավ վեր, ասաց.
— Հալալ մնացե՛ք, հարամ գնացե՛ք.
Հալալ մնացեք, հարամ գնացե՛ք...
Գազաններ փախան, գնացին սարեր,
Մնացին տավարներ:

Տավարներու տերեր ելան, դոներ բացին,
Ձիլենց տավար տարան, արին գոմեր:
Դավիթ ասաց.— Աստվա՛ծ ձեր տուն ավրի,
Դուք թող տվիք. սպարտու տավարներ փախան սարեր,
Մնացին լդարներ:

Իշխաններ Հովանին ասին.
— Ես ե՛լ չ'ելավ, ես ե՛լ չ'ելավ:
Ես տնավեր իսկի՛ մարդու շնորք չ'ունի,
Ծուռ, ոդորթմա՛նց ծո՛ւռ...
Դավիթ հասկացավ, ասաց.
— Ձեր գլուխն ուտի՝ ել չե՛մ ըլնի ձեզ նախրորդ:
Եդտեղ Հովան բարկացավ, ասաց.
— Դու վոր եսպե՛ս կ'անես,
Ել յես քեզ չե՛մ կարնա շահի,
Դոր ել կ'երթաս՝ գնա:

9

Դավիթ ելավ Սասնուց, տեղ մի սլառկավ քնավ:
Բեռի Թորոս առավոտուն եկավ Սասուն, հարցուց.
— Ես մեր տղան, Դավիթ, ո՞ւր է:

Ինչքան մարդ կար՝ զԴավիթ հայհոյեց.
Ինչքան կնիկ կար՝ անիծեց:
Քեռին գնաց տղան փնտռի.
Տեսավ՝ տեղ մի Դավիթ քնե:
Ենպես քացի մ՝ զարկեց ենոր,
Վոր թե Դավիթ չ՝ըլներ, ուրի՛շ ըլներ,
Ցո՛ր ըն գազ գետնի տակ տ՝երթար:
Դավիթ քնից ելավ, ասաց.
— Քեռի ջան, ինչի՞ կը զարկես:
Քեռին ասաց.— Հաբա, ի՞նչ ես արեր, լաս:
Դավիթ ասաց.— Քեռի՛ Թորոս,
Են-են լըքռոք տավար ինձի շատ չարչրեց:
Եդոր համար ել քաղքցիք ինձ դուրս արին:
Ասաց.— Անխե՛լք, Սասունա ծուռ,
Են տավար, վոր շա՛տ կը փախնի, ենի մի՛ բեր.
Են, վոր շատ չի՛ փախնի, ենի տուր քո առաջ ու բեր.
Դավիթ ասաց.— Չե՛, յես ետա տեղ չե՛մ կայնի:
Ուրիշ երկիր նշանց տուր ինձ,
Վոր յես երթամ ենտեղ:
Ես անգամ քեռին առավ Դավթին, տարավ իր տուն:

10

Ժամանակ մի անցավ:
Եդ տարին գարուն նոր բացվեր ել.
Դավիթ ասաց.— Քեռի, գարո՞ւն ե,
Հոտաղ-մշակի վախտ ե, ռանչպարու վախտ ե:
Մենք քառսուն ջանով լցվեր ենք եդա տուն,
Խո դու պարտական չե՛ս՝ մեզի զամեն պահես:
Ցելի՛, մեզի աշխատող դարձու:
Դատենք, աշունք բերենք մեր աշխատանք:
Ժողվենք վեր իրարու, ուտե՞նք, ապրենք:
— Հա՞,— ասաց.— Դավի՛թ, աստված քո արեվ
ըսպանի,
Հըմլա եղար ինձի աշխատո՞ղ...—
Քեռի Թորոս ծիծաղեց վեր Դավթին, ասաց.
— Ցո՛, ծո՛ւռ Դավիթ, արի քեզի տանեմ
Դաշտու Պադրիալ,

Հոնի քեզ տամ նախրորդ, հոտաղ,
Դու առնես քո հախ՝ կոտ մի կորեկ.
Առնես, բերես մեր տո՛ւն,
Ցես տանեմ ջաղաց, աղա՛մ,
Բերեմ քո քեռակին շաղա՛,
Թխա, թոնդրեն հանա, տա՛ քեզի,
Վերցուս, հաց մի ինձի տաս,
Ասես՝ քեռի, եդ իմ աշխատանքն ե.
Առ, եդա հացը կեր—
Ելի չեմ հա՛վտենա, ելի չեմ հա՛վտենա:
Ասաց.— Քեռի՛, վոր եդմա՛լ ե՝
Ելիր, ինձ տար, արա նախրորդ:

Քեռին գիտեր՝ Դավթի խոսք մեկ եր, երկու
չեր անի:
Ելավ առավ զԴավիթ, գնաց Դաշտու Պադրիալ:
Տարավ, տվեց նախրորդ:
Ամեն բան ել ենոր խրատ տվեց, ասաց.
— Տըղա, ե՛դ տեսակ, ե՛դ տեսակ տավար կը պահեն.
Լուսուն նախիր կը տանես,— ասաց,—
Սասնա սարի հետև, արոտատեղ.
Սիպտակ Քար կա, Սիպտակ Քարի տակ աղբո՛ւր կա.
Են աղբրի վրա կեսոր տի հավաքես, ջուր տի տաս:
Խրատ ետու, ելավ, թողեց զԴավիթ,
Եկավ հասավ Սասուն:

Առավոտուն Դավիթ զնախիր տարավ արոտատեղ,
Ճաշին տարավ Սիպտակ Քար, վե՛ր աղբրին:
Տեսավ՝ վոր յոթ գեղի նախրորդ ժողովված են.
Տավար բերե, կ՚արածան:
Դավիթ ասաց.— Ա՛յ նախրորդներ,
Արեք յես-դուք աղբե՛ր ըլնենք:
Եդ նախրորդներ ու Դավիթ եղան աղբեր:

11

Դարո՛ւն եր. խալխի մալ զարո՛ւն եր...
Անձրե՛վ եր. թացությո՛ւն եր, տի՛լ եր...

Մալեր կը չոքվեյին տիլ, կը պաղեյին.
Որական յո՛ք–ուք հատ տըլի մեջ կը մնային:
Դավիթ կը քաշեր դուրս, տըլից կը հաներ,
Իր փետ ենոնց վոտներ կը կապեր,
Փետ մ' ել կը մտուցեր մալերու վոտներ.
Կը դներ ուսին, ու կը բերեր գեղ.
Կը բերեր տիրու տուն, կ'արձակեր,
Ու կընկտոց կ' ասեր.— Նա՛նե, ձեր կովեր նիհար են:
Յեղանակ ցո՛ւրտ ե, կը պաղե՞ն, կը տլվե՛ն,
Ձեն կարնա ելնի, կը փետնան, մե՛ղք են:
Եդ վախտ կընկտիք կ'որհնեյին Դավթին, կ'ասեյին.
— Շա՛տ դատիս, շա՛տ ուտիս.
Քի՛չ դատիս, շա՛տ ուտիս.
Աստված քո արև պահի.
Վոր դու չ'եղնեյիր ես տարի՝
Մեր կովեր ամեն կը փետնին:
Եդ վախտ Դավթին կը պատվեյին,
Հաց կ'անեյին կը տային, ձվաձեղ կ'անեյին,
Հավկիթ կը տային Դավթին,
Շա՛տ խորոտ հոգ կը տանեյին:
Գեղացիք կ'որհնեյին Դավթին, կ'ասեյին.
— Հարի մըկա եդպես նախրորդ մեզի ռաստ չի՛ եկե:
Դավիթ արածեցուց տավար մինչեվ ամառ.
Տավարներ լցվան, գիրացան:

12

Մնաց: Եկավ, ելավ Աստվածածին.
Աստվածածնա կիրակի որ ցասման ժամ կ'անեն,
Կ' երթան ուխտ, պատարա՛գ կ' անեն.
Պատարագ վոր կ' անեն, հարիսա կը դնեն:
Հարիսա վոր կը դնեն, ժամից վոր կ'ելնեն,
Կը գան պատարագի տիրոջ մոտ, հարիսա կ'ուտեն:
Եդ Աստվածածնա կիրակի որ ճաշոցին
Դավիթ զնախիր ժողվեց, տարավ արոտատեղ,
Սիպտակ Քարի տակ, վե՛ր աղբրին:
Տեսավ՝ յոթ գեղի նախրորդներ ժողովված են.

Դավիթ տեսավ՝ գեղացիք, իշխաններ,
խմբով ընկած նամբա վե, հա՞մա կ'երթան:
Ասաց.—Ձա՛նըմ, լուսուն չուր կեսորին հա՞ կ'երթան,
Եդ կողմեր ո՞ւր կ'երթան:
Ասին.—Ցասման ժամ ե՝ կ' երթան մատա՛դ տի կտրեն,
Ենտեղ սա՛զ տի զարկեն,
Տ'ելնեն խա՛դ անեն,
Ենտեղ քե՛ֆ տ'անեն,
Հարիսա՛ տի դնեն,
Տ'ուտեն, տի գան տակ:

Նախորդ մի ասաց.
— Ո՞վ կ'երթա եդ տեղեն մեզի հարիսա բերի՝
Փըշուր մի ուտենք:
Եդոնցեն մե՛կ ել չը գնաց:
— Վոր եդպես ե,— ասաց Դավիթ,—
Դուք իմ նախիր պահեք՝ երթամ:
Ենպե՛ս մի հարիսա բերեմ, վոր կուշտ ուտեք:
Համա թե եդ նախրեն տավար մի կորչի՝
Ձեր յոթի գլուխ ել տի կտրեմ:
Դավիթ եդոնց վոր ահ տրվեց՝
Եդոնք ահու նստան:

Ու Դավիթ ելավ, գնաց եդա հարիսատեղ:
Հարց ու փորձ արավ եսոր ու ենոր,
Թե հարիսեն վո՞ր տեղն ե դրած:
Ասին.— Ե՛, ե՛ն տեղն ե դրած:
Ու գնաց Դավիթ տեսավ՝
Ձորս ունկանի պղինձ մի հարիսա քոնդիր դրած.
Կընիկ մ' ել կայնուկ պղնձի մոտ:
Դավիթ ասաց.— Նա՛նե, նա՛նե,
Ինձի քիչ մի հարիսա տուր,
Յոթ գեղի նախրորդ ժողովվեր ենք մեկտեղ,—
Դե՛հ, գեղի ադքատ վոր կա,
Գեղի նախրո՛րդն ե, հոտա՛ղն ե,—
Քո հո՛ր խերին՝ մեզի հարիսա՛ տուր—
Տանենք, ուտենք: Կընիկ ասաց.

— Դե դո՛ւրս կորի, Սասունա ծուռ,
Զը գինա՞ս, վոր ժամեն դեռ չեն եկած:
Կեցի՝ ժամեն ելնեն,
Տերտեր ժամեն տի գա մեր հարիսեն որհնի,
Նոր հարիսեն տ'ուտեմք:
Դավիթ ասաց·— Նա՛նե,
Տավար թողած եմ ուրիշին, մոտ մարդ չը կա,
Ցես վռա՛զ եմ, հիմի՛կ տանեմ·
Նախիր կ'երթա սարեր, խալխին վնա՛ս կը գա:
Եդ կընիկ ասաց·— Չե՛մ իտա·
Զուրի տերտեր չը գա, հարիսեն չորհնի, չե՛մ իտա:
Թող ժամավորն ել գա, ուտի,
Մնացող կը տամ՝ տարեք, կերեք:
Դավիթ ասաց·— Նա՛նե, մնացող շա՛ն կ'իտան:
Վոր ասաց՝ նանեն քրվեց: Դավթի հերս ելավ,
Իր ձեռ թալեց, պղինձ թոնդրեն առավ,
Դրեց թոնդրան պռունկ,
Իր փետ անցուց պղնձի ունկ,
Վերցուց պղինձ շալկեց,
Վերցուց տաշտ մ՝ ել դրեց գլխուն,
Ցեղի փարխաջ առավ ի ձեռ,
Ինչքան վոր հաց թխած եյին, վերցուց,
Զարկեց տակ իր թևին:
Ցոթ շերեփ ել վերցուց, ասաց·
— Եդա ել մեզի գդա՛լ:
Աստված թող ձեր մատաղ ընդունելի՛ անի:
Եդա կընիկ դարձավ Դավթին ասաց·
— Անիծե՛մ յես հըմլա մատաղ,
Ել ի՞նչ մնաց, վոր ի՞նչ ընդունելի անի:
Դավիթ զարկեց ու գնաց դուշտ:

Կընիկ վազեց, հավար տրվեց ժամ·
— Ձեր տուն ավերի՛, ա՛յ խալխ,— ասաց·—
Սասունա ծուռ Դավիթ եկավ·
Հարիսեն ու հացեր զամեն ժողվե՛ց, տարա՛վ:
Ենտեղ շատ մարդ զրուց կ'աներ,
Մարդու մեկ բոռբոռաց·

— Ելե՛ք, զարկե՛ք Դավթին,
Հարիսեն ձեռնեն խլե՛ք:
Մեկ մարդ ենտեղ եր, ասաց·
— Դուք չ'ելնիք ընկնիք ենոր առջև:
Քահանան ել ասաց·
— Մ'ե՛րթաք, երկու պղինձ հարիսա կա՛ դեռ կրակին·
Են Սասունա ծուռ ե, մ'ե՛րթաք,
Ձեզ տի զարկի, ձեզ տի խեղի,
Մեզ ել բենամո՛ւս տ'անի:
Ծերունի մարդ մ' ել ենտեղ ասաց·
— Են Մհերի զարմի՛ց ե, մ'ե՛րթաք:
Թե վոր կարցաք՝ են չորս ունկանի պղինձ
Չորսով տեղից վերուք՝ գնացեք,
Թե չե, մ'ե՛րթաք, չե՞ դուք խե՛ղն եք...

Դավիթ հասավ Սիպտակ քար:
Ենտեղ պղինձ դրեց գետին,
Հարիսեն լիք լցրեց,
Ցեղ են շերեփով լիք լցրեց՝
Բռռաց ընկեր նախրորդներուն·
— Արե՛ք, տղեկնե՛ր, հարիսա՛ կերեք:
Ե՛յ, ինչի՞ չեք գա:

Տղեկներ ահուց ցամքած են·
Նոթեր կախած նստեր են:
Դավիթ դարձավ ենոնց, հարցուց·
— Ինչի՞ յեք նոթել կախե:
Նախրորդներեն մեկ ասաց·— Դավի՛թ,
Մենք նոթեր չը կախե՛նք, բա ո՞վ կախի·
Դու վոր գնացիր՝ քեզնից եդեվ
Քառասուն հարամի դեվ եկան, զարկին,
Նախրից քառասուն տավար տարան:
Ասաց·— Բան չի՛ ըլնի, տղեկներ,
Արեք, նստեք, կուշտ մի ուտենք:
Եդ նախրորդներ ահու չը կարցա՛ն ճաշ ուտեն:
Դավիթ ասաց·— Տղեկնե՛ր,
Գիտեք թե վո՞ր տեղով տարան:

Տղեկներ Դավթին ասին.
— Հա՛: Ա՛յ, եդա սարո՛վ զարկին, անցան վերեվ:

13

Դավիթ կոպալ դրեց իր թեվ,
Ճամբան տվեց առաջ,
Շրջվեց սարի են մի երես,
Ելավ սար-ձոր փնտռեց, դեվեր չը գըտավ:
Դավիթ գնաց, իջավ Արքըկու տակ, Սըպղանաց մոտ,
Գնաց, հասավ սարի մի լանջ.
Տեսավ՝ քարափներու մեջեն ծուխ կը գա դուրս,
Բռնեց եդ ծուխ, գնաց.
Տեսավ, քառսուն հարամի-դեվ
Քառսուն կովեր բերե՝ մորթե,
Լցե քառսուն կանթեն պղինձ,
Ոջախ շինե, դըրե ոջախ,
Քըլքըլթալեն կ'եփեն:
Դավիթ վերցո՛ւց քառսուն կանթեն պղինձ,
Շրջեց եդ ոջախի վերան,
Քառսուն կաշին ժողվեց, լցեց մեջ պղնձին,
Գնաց, մտավ ենոնց քարայը:
Մտավ ու ի՞նչ տեսավ.
Վորն իր խալու վրա պառկե,
Վորն իրեն քսմար խա՛ղ կ'անի,
Վորն իրեն տեղ պառկե, քնե,
Վորն ել— ուրախութե՛ն կ'անի:

Դավիթ վոր եդ տեսավ՝ Դավթի աչքեր դարձան:
Դավիթ դարձավ ու ելավ դուրս,
Մեկ մեծ քար մի առավ, գրկեց,
Եկավ մտավ մեջ քարայրին,
Եդ քար դրեց քարայրի դուռ,
Վոր եդոնք չ'ելնեն, չը փախչեն:
Դավիթ եդտեղ մեկ վոր բռռաց,
Սարսափ թափավ հարամի դեվերու վերան.
Դեվերու մեծ ենոր ձեն լսեց, ասաց.

— Ելե՛ք, ծառայությո՛ւն արեք, վոր չըսպանի մեզի։
Ենի Դավիթն է, ելեք վե՛ր։
Համա Դավիթ բռնեց, մեկ-մեկ ենոնց վիզ ոլորեց,
Կտրեց, թալեց քարայրեն դուրս։

Դավիթ դարձավ տեսավ՝ քարայր ենպե՛ս է լիք—
Խազինա՛ է ենոնց քարայր։
Մարդու ինչ բան վոր պետք կը գա՝ լի՛քն եր եդտեղ։
Տեսավ՝ եդտեղ վոսկի երկանք...
Տեսավ կուտակ մի վոսկի՛ յե, մեկել՝ արծաթ։
Վողջ Սասունա ապրանք, հարստություն՝
Քանի Դավթի հեր մեռեր եր՝
Եդոնք ավերությո՛ւն արած,
Բերած լցած են եդա տեղ։

14

Դավիթ իր հաբզա՛ն լցեց վոսկին, կապեց մեջքին,
Են մորթոտած մալի կաշիք ու գըլուխներ
Լցեց մեջ ենոնց պղնձին,
Վոսկի լցրեց մեջ պղնձին,
Կոպալն անցրեց պղնձի կանթ,
Թալեց իրեն ուսի վերան,
Առավ, եկավ հարիսատեղ։
Տեսավ՝ տերտերներ նո՛ր հաց կ'որհնեյին։
Առավ պղինձ, տարավ դրեց ժամու դռան։
Տերտերոջ պա՛հ տվեց, ասաց։
— Տերտե՛ր, հա՛շ տվեք, յես ուտեմ։
Տարածս անջախ իմ ընկեր նախորդնե՛ր կերան։
Տերտերն ահու ասաց։— Ես տղին ձեռ չը տամ։
Համ մեր պղինձ տարավ, համ ել դարձուց, բերեց։
Հաց ե՛լ կտամ, ուտի, ելնի երթա։

Դնաց, նստավ Դավիթ լուկ մի եդ հարիսից կերավ։
Ելավ, եկավ, դարձավ ռամկին։
Ըզյեզնեյրու տերեր կանչեց, ասաց։
— Ձեն մի՛ հանեք, ձեզ բան տ'ասեմ։

Ցեզան կաշիք հանե՛ց, թափեց·
Ամենք եկան, իրենց տավրի կաշին ճանչցան:
Դավիթ ասաց·— Ձեր մայերու վոտն ու գլուխ՝
Ձեր հարիսի՛ փոխ՝ ինչ տարա, առեք,
Նսա մեծ պղի՛նձն ել՝ ձեր պստիկ պղնձի՛ն ե փոխ-
ես վոսկի՛ն ել տարեք,
Բաժին արեք՝ ձեր տավարի մսի՛ն ե փոխ·
Համա կաշիք թողեք տանեն են շիվարներ.
Հագնեն իմ հոր խերին:
Վա՞յն ե եկե ձեր գլխներուն,— ասաց·—
Թե իմ աղբերներու հախից ճանկ մի կորեկ կտրե՞
Ձեր տուն յես կ'անեմ Դավթի ավերած:
Ասին·— Զա՛նըմ, առ քո խաթեն ու հեռացի
Աղբերներուդ հախ չե՛նք կըտրի:
Դավիթն ելավ, եկավ հասավ աղբերներուն:
Եկավ տեսավ հալա հարիսան չե՛ն կերե.
Հալա նստած են՝ նոթեր կիտած:
Ասաց·— Աղբերներ, հարի յե՞րբ նոթեր կիտեք.
Դարդ կ'անեք, վոր աղ չե՞մ բերե·
Ելեք, կերեք եդ հարիսան,
Դագեք իրիկուն, աղն ել ձեր տուն կերեք:
Ասին·— Դավիթ, բա ի՞նչ անենք·
Եդ յեզներու տերերուն ի՞նչ պատասխան տանք:
Ասաց·— Տարե, յեզան կաշին տերվրտե՛ր եմ արե:
Ու թամբահ եմ արե,
Վոր ձեր հախից ճանգ մի կորե՛կ ել չը կտրեն·
Թե վոր կրտրեն, ինձի ասե՛ք,
Կ'երթամ. ենոնց տներ կ'անեմ Դավթի ավերած:
Նոր եդ նախորդներու չանեք բացվավ,
Կարցան հարիսան ուտեն:
Վոր կերան, Դավիթ ասաց·
— Ելեք, տավար ջոկեք, յես տ'երթամ տուն
Ասին·— Դեռ կեսոր ե, Դավիթ:

Դավիթ յոթ հարամու ականջ տվեց ենոնց,
Ասաց·— Գընացեք գեղ, ասեք,
Թող զջորիք առնեն,

Գան եդ ապրանք տանեն:
Նախրորդներ վազեցին գեղ, ասին.
— Ելե՛ք, զընացե՛ք, դևեր զքառսուն յեզ մորթեր են.
Դավիթ զքառսուն հարամի դեվ սպանե՛ր է,
Կ'ասի՝ թող գա՛ն, ապրանք տանե՛ն:
Գեղականներ ասին.— Դուք սուտ կ'ասեք:
Տղեկներ ասին.
— Թե սուտ եղավ՝ զմեր ականջ կտրեք:

15

Ինք, Դավիթ ելավ,
Նախիր խառնեց առաջ,
Քշեց, եկավ Դաշտու Պադրիալ, ասաց.
— Առեք ձեր տավար, ձեր նախիր.
Ձեր նախիր չե՛մ պահի:
Թողեց, զնաց Սասուն, իր տուն:
Եկավ, հասավ Քեռի Թորոսի ոդեն,
Մտավ, բարև՛ ետու, հարցուց.— Քեռի՛,
Մեր տուն քանի՞ մարդ ենք:
Ասաց.— Լա՛ռ, քեզնով քառսո՛ւն մարդ ենք:
Ասաց.— Քեռի՛, ողորմի քո պապուն,
Մեր տուն քանի՞ տղամարդ ենք:
Ասաց.— Տըղա, լա՛ռ, չե՞ վոր ասի,
Աստված քեզի վերու,
Քեզնով քառսո՛ւն կը թամամենք:
— Եդ լա՛վ,— ասաց.— Բա մենք քանի՞ ջվալ ունենք:
Ասաց.— Աստված քո արեվ սպանի,
Քո ջվալով քառսո՛ւն ջվալ ունենք, ի՞նչ կ'ուզես:
Դավիթ ասաց.— Քեռի ջան, դու մի՛ նեղանա.
Ելի՛ր, մարդոց խաբար արա,
Ջվալ առնեն՝ երթանք վոսկի բերենք:
— Դե, դե՛,— ասաց.— Շա՛նորդի ծուռ,
Կորեկ չը բերիր՝ վոսկի՞ բերես:
Ասաց.— Քեռի՛, ելե՛ք, ելե՛ք,
Շա՛տ կ'աղաչեմ, ելեք երթանք,
Աշխարքի մալ-խապինեն ամե՛ն տամ ձեզ.

Եդ երեսունինը մարդ ինձ հետ թող գա, երթանք։
Թե երեսունի՛ն ջվալ վոսկի–արծաթ բերե՛նք՝
Զաքի մեր մալն է՝ կը բերենք, կ՝ ուտենք։
Թե չը բերի՛՝ դուք երեսունինը մարդ
Ինձ բսպանեք. ելեք, եկեք ձեր տուն։
Քեռի Թորոս սուտ խոսելուց կը խրտըներ։
Ասաց։— Տղե՛ք, ելեք երթա՛նք.
Վոր սուտ եղավ՝ զԴավիթ կը սպանենք։
Եդ վախտ, Դավիթ իրա մեջքեն քանդեց հարգան,
Թափեց վոսկին Քեռու առջև։
Քեռին վոսկիք տեսավ՝—Վա՛յ, Դավիթ ջան,—ասաց.
— Քո գլխո՛ւն, արևո՛ւն մեռնեմ,
Դու հարամի դեվեր ըսպաներ ես...
Բռնեց Դավթի երեսներ պագեց։

Ելան, առան ջորիք, ելան երսունինն ել կանգնաս,
Առան երսունինը ջվալ,
Ձենով Հովան ու Վերգոն ել
Առան ամեն մեկ–մեկ ջվալ,
Ընկան Դավթի հետեվ, գնացին...
Դավիթ գնա՛ց, գնա՛ց.
Գնաց հասավ Սիպտակ Քար։

Ենտեղեն ելան քարայր։
Ենոնք տեսան դեվեր ընկած են այրի դուռ,
Ուռած, եղա՛ծ են ամեն մեկ քանց Պող Բլուր։
Ցռան Վերգոն՝ վախցավ,
Իրան ջորին մեկել ջորիներուց պրծուց, փախավ։
Ուրիշներ ել, դեվի ջանդամ, գլուխ վոր տեսան՝
Մեկ–մեկու հետեվեն կ՝ուզեն փախնեն։
Դավիթ դարձավ, բռռաց։— Հեյ–հե՛յ,
Տնավերնե՛ր, ո՞ւր կը փախնեք, ըսպանե՛ր եմ.
Ասաց։— Թե չե՛ք հավատա ինձ
Դարձեք, ձեր ետեվ նայեք.
Ենոնց ականջ կտրե, լցրեր եմ եդատեղ։
Դարձան, եդ ականջներ տեսան,
Ջորիներն առան, եկան դեհ են քարայր։

Քարայրի բերնից Դավիթ են ժայռ վերցուց, քցեց,
Առավ Քեռի Թորոս, Ջենով Հովան, Վերգո,
Մրտավ մեջ քարայրին:
Ենոնք ինչ որ տեսան եդա վոսկի՛ն, ապրա՛նք,
Ուրախություն ենոնց վոտներ գետնեն կտրավ:
Ինչ կա՛ր, չկա՛ր ժողովեցին,
Վոսկիք լցրին ջվալներ,
Վոսկի երկա՛նք, ամեն ապրա՛նք,
Բե՛ռ բեռնեցին, ջորի՛ք բարձին,
Տարան իրենց տներ:

Եդ ամեն լցրին Սասնու ամբարներ:
Սասուն ենպե՛ս եղավ, վոր կը ճրներ:

Դավիթ իր համար մենակ ձի մի առավ քարայրեն:

ՎՈՐՍՈՐԴ ԴԱՎԻԹԸ ՎԵՐԱՀԻՆՈՒՄ Է ՀՈՐ ՎԱՆՔԸ ՅԵՎ ՊԱՏՈՒՀԱՍՈՒՄ Է ԽՈԼԻԱՀՈՒ ԶՈՐՔԵՐԻՆ

1

Դավիթ դեվերուն վոր կոտրեց,
Եդ վախտ եղավ տան ազիզ.
Դտավ աղեկ բազե մի,
Ընկավ արտեր, վորս կ'աներ.—
Ճնճղո՛ւկ կը սպաներ, կաքա՛վ կը սպաներ:

Սասուն Պառա՛վ մի կար.
Եդ Պառավ Մհերի յարն եր եղե:
Ենի արտ մի կորեկ ուներ:
Կորեկի մեջ լորերը շա՞տ, ճնճղուկը շա՞տ:
Պառավ որ մի եկավ, տեսավ՝
Բազեն ի ձեռք, քուռակ հեծած՝
Դավիթ մե՛ջ իր արտին լոր, ճնճղուկ կը զարկեր:
— Դավիթ,— ասաց,— փոեմ, լա՛մ քո արև,
Եդ ի՞նչ կ'անես.
Եկեր ես իմ կորեկի մեջ լո՞ր կը սպանես,
Ելի՛ը, գնա, մեջ սարերուն քի՞չ կա ոչխար.
Են վիրու ոչխարնե՛ր զարկի,
Ես ճնճղու մեջ ինչքա՞ն միս կա,—
Դու Պառավի կորկի ճընճղո՞վ տի կշտանաս...
Դավիթ ասաց.— Պառավ, հապա, սար վոր երթամ
Ինչո՞վ զարկեմ վիրու ոչխար:

Ասաց։— Քո հեր նետ ու աղեղ ուներ։
Եդ նետ-աղեղ, ասա, թող տան՝ ենո՛վ գնա։
— Բա՛,— ասաց Դավիթ։
— Իմ հոր նետ-աղեղ ո՞ւմ մոտն է։
— Քո հրողբոր կընկա՛ն հարցուր։
Եկավ Դավիթ, հրողբոր կնկան, Սառյեյին հարցուց։
— Հրողբոր կնիկ, իմ հոր նետ ու աղեղ ո՞ւր է։
Ասաց։— Մեռնե՛մ յես քե, Դավիթ, յես չե՛մ գիտի։
Տեսեր եմ՝ նետ-աղեղ քո հոր թևո՛ն եր։
Հիմիկ յես չե՛մ գիտի ո՛ւր են մնացե։
Մնաց։ Դավիթ տեսավ, վոր ճար չը կա՝
Ելի գնաց Պառավու կորկի արտ։
— Պառա՛վ,— ասաց,— իմ հրողբոր կընիկ
Ինչանց չի՛ տա նետ ու աղեղ։
Ասաց։— Մեռնե՛մ քեզ, ծուռ Դավիթ, թլո՛ր Դավիթ։
Գնա, նեղի քո հրողբոր կնկան
Ու նետ-աղեղ զոռվե՛ն առ։
— Ինչպե՞ս նեղեմ, Պառավ։
Ասաց։— Գնա, քարից աղանձ արա, ասա՝
«Կամ ես աղանձ տ'ուտես,
Կամ նետ-աղեղ նշա՛նց տի տաս»։
Դավիթ եկավ, ասաց։— Սառյե, անոթի՛ յեմ։
Սառյեն ասաց։— Մեզ հաց չը կա։
Դավիթ նստեր է թոնդրան շուրթ,
Քարե աղանձ կանի, կը ճընընելա։
Սառյեյին դժար եկավ, ասաց։
— Դա՛վիթ, ելի, նա ցանոցից քի՛չ մի ցան բեր։
Խմոր անեմ՝ թխեմ ուտես։
Դավիթ ելավ՝ ցանոցից ցան բերի, տեսավ՝
Բան մի եդա պատից կախուկ—կոռուկ փետ մի։
Առավ եդ փետ, բերեց, ասաց։
—Հրողբոր կնիկ, ենա ի՞նչ է։
Ասաց։— Չեմ գիտի, հրողբե՛ր գիտի։
Դավիթ ըռկավ, ասաց։— Հրողբո՛ր կընիկ,
Ասա՛, են ի՞նչ կոռուկ փետ է։
Սառյեն ասաց։— Ելիր,
Թե ենա թել դու գցեցիր ենա չախմախ, կ' ասեմ,

Թե չե՝ չե՛մ ասի:
Դավիթ ինչ ձեռ տվավ եդա փետին՝
Թել թալեց վեր չախմախին:

Սառյեն շատ շշկլավ, ասաց·
—Մհեր սեա՛թ մի կը բաներ, նոր կը գցեր եդ թել·
Նսի մեկ դիր վոր ձե՛ռ ետու, գցեց չախմախ:—
Դարձավ, ասաց·— Ցես չե՛մ գիտի՝ եդ ինչ ե,
թո՛ղ:
Եդա վախտ Դավիթ Սառյեյի ձեռ բռնեց,
Քաշեց, տարավ են աղանձի բովի վերա,
Իր ձեռ զարկեց. մեկ բուռ քարե աղանձ վերցուց,
Լցեց Սառյեյի ձեռաց մեջ՝ ու ենոր ձեռ խփեց:
Սառյեն «յամա՜ն–յամա՜ն» արեց, ասաց·
— Քո արևո՛ւն մեռնեմ, Դա՛վիթ, թող, յես ասեմ:
— Թափի՛ գետին, երողբոր կընիկ:
Թափեց գետին, ասաց·— Չե՛մ գիտի, չե՛մ ասի:
— Հրողբոր կընիկ, տե՛ս, մեկ ե՛լ կը լցեմ:
Եդ վախտ Սառյեն ասաց·— Դավի՛թ,
Եդա քո հոր նետ–աղե՛ղն ե,
Ենով Մհեր վորսի կ'երթար:
Դավի՛թ եր՝ խնդացավ,
Նետ–աղեղ առավ,
Բերեց մաքրեց, լվաց,
Ժանգեր–մանգեր քերեց,
Նետ–աղեղ իր թեվ եթալ
Ու ամեն որ վորսի կ'երթար:

2

Ամիս մ'երկու եսպես վրա՛ անցավ·
Ը'ասեա՝ Ջենով Հովանի կնիկ Սառյեն—
Դավիթ շատ սիրուն, խորո՛տ տղա յեր—
Գաղտուկ աչք եդի վեր Դավթին, ասաց·
— Տի գաս հե՛տ իմ ձեռաց:
Դավիթ ասաց·— Հրողբո՛ր կնիկ,
Դուն իմ մե՛րն ես, յես քո վորդի՛ն...

Հրողբոր կնիկ ասաց·— «Տանեմ, գլուխ լվամ,
Դավիթ գա՝ ջո՛ւր լցի վեր իմ գլխուն·
Վոր Դավիթ իմ մարմին տեսնա՝
Ենոր սիրտ տի մեղավորնա,
Տի գա հետ իմ ձեռաց»:
Ելավ, ջուրն առավ, տարավ,
Դավթին կանչեց, գա, ջո՛ւր լցնի:
Դավիթ աչքեր բռնեց,
Վոր հրողբոր կնկան լեշ չը տեսներ,
Վոր իր սիրտ չը մեղավորնար,
Ու ենպես ջուր լցրեց Սառյեյի գլխուն:
Հրողբոր կնիկ գլուխ լվաց,
Ելավ, իրիշկեց, տեսավ՝
Դավիթ իր աչքեր պինդ բռնած:
Ելա՛ց, ետո՛ւ գլխուն,
Իր երեսներ արնեց,
Մազեր քըրքըրե՛ց վեր գլխուն,
Գնաց իր տուն՝ նստավ,
Զուր ենոր մարդ, Զենով Հովան եկավ:
— Հե՞, կընիկ, ի՞նչ ե եղեր քեզի:
Կնիկ ասաց·— Ի՞նչ տ'ըլնի:
Ցես գիտեյի՝ թե ինձ վորդի՛ եյիր բերե,
Չը գիտե՛յի, թե դու գնացե՝
Ինձի երի՛կ եյիր բերե:
— Հե՞, կնիկ, եդպես չե՛· դու սո՛ւտ կ'ասես:
Կնիկ ասաց·— Ցես սուտ չե՛մ ասի·
Ելավ, իր ձեռ եթալ ինձի,
Ցես ենոր չը թողի···
— Վոր եդպես ե, իրիկուն դուռ շինենք:
Իրիկուն Զենով Հովան դուռ շինեց·
Զ'եթող Դավիթ գար տուն:
Դավիթ ասաց·— Հրողբեր,
Հիմիկ կարամ քացի մի զարկեմ՝
Դո՛ւ ել, քո դո՛ւռ ել երթաք գետնի տակի
անդունդէ:
Ամա ի՞նչ անեմ, հերագուրթ հրողբեր,
Էրբե՛ խաբված ես:

3

Դավիթ գնաց, իրիկուն մնաց Պառավու տուն:
Առավոտուն եդ տեղեն ելավ, գնաց վորսի:
Ճամբին տեսավ շատ ագռավներ—
Զարկին վեր Պառվու արտին, կորեկ տ'ուտեն:
Դավիթ ասաց·— Ինչպե՞ս անեմ,
Վոր էսան հատ մեկից զարկեմ·
Եսա ագռավներ կը թռնեն:
Ջե, յես բա'ն մի տ'անեմ:
Ձեռ վոր թալեց, մեկ ահագին բարդի քաշեց,
Քաշեց ու մեկ ենպե'ս եզար,
Վոր ագռավնե'ր, կորե'կ մեկտեղ ժողվեց,
Բերեց, արեց բարդոց: Պառավ եկավ,
Տեսավ մեկ հատ կորեկ չը կա մեջ իր արտին:
Ասաց·— Ո՛յ, ո՛յ, գրող-մա'հ տանի էե, Դավիթ·
Դու ինչի՞ իմ կորեկն եսպես արիր:
Ասաց·— Պառավ, չեյի թողնի,
Վոր ագռավներ գէռ կորեկ ուտեն:
— Ջա'ըս գէեզ տանի, գրո'ղ գէեզ խեղդի,— ասաց,—
Տռ, դու գաս վեր Պառվու կորկին
Քռ փռռ՞ղէ տի թափես:
Աստծու կրա'կ ըլնի վեր էեզ·
Են հոր տղեն դռ՞ու տի ըլնես:
Աստված ողորմի Առյուծ Մհերին·
Ենի վոր կար՝ խեղճերու պապ ու մամ:
Համա դու եղ ի՞նչ ե՝ կ'անես·
Իմ հույս՝ եդ փշուր կորե'կն ե:
Դուն ել եկար, տրորեցի'ր:
Յե'ս եմ՝ մեկ աղջի'կ, ես կորե'կ,
Իմ բա՞խտը կը կըտրես վեր ինձ:
Դուն վոր եդպես տղամարդ ես՝
Հորի՞ չես երթա Ծովասար:
Թե կտրին ես՝ գնա, էռ հոր վորսատե'ղ առ:
Քռ հոր սեյրանատեղ Ծովասա'րն ե·
Հրեն, Մըսրա Մելիք եկե,
Քռ հոր սար գավթե',

Եդա Ծովասար բոլոր պարիսպ քաշած՝
Ենքա՛ն գազաններ, վիրու ոչխարներ
Թալա՛ծ են պարսպի ետեվ—
Ջեն կարնա դուրս ելնեն:
Հիմիկ ինչի՞ դու չես երթա ենտեղ.
Վեր ինձի՞ եղար կտրին:
Դավիթ ասաց.— Պառավ,
Ցես հոգո՛ւդ, արեվո՛ւդ մեռնեմ,
Վո՞ւրտեղն է, շա՛նց տու ինձ,
Ծովասար վո՞ւրտեղն է, յես չը գիտեմ:
Ասաց.— Դավիթ, գնա քո հրողբոր ոձիք բռնի.
Քեզ կը տանի, նշա՛նց կը տա:

4

Դավիթ եկավ հրողբոր մոտ, ասաց.— Հրողբե՛ր,
Ծովասար վո՞ւրտեղն է, նշա՛նց տուր ինձ:
Իմ հոր սեյրանատեղ վո՞ւրտեղն է:
Հրողբեր ասաց.— Վո՛ւրդի, քեզ խաբե՛լ են.
Քո հոր սեյրանատեղ չըկա՛.
Քեզ խաբե՛լ են, քեզ սո՛ւտ կ' ասեն:
— Ջե՛, հրողբեր, յես գիտե՛մ, կա՛.
Ցես կ' երթամ, չե՛մ կայնի: Սուտ մի՛ ասա:
Հրողբեր ասաց.— Սովորեցնողիդ բերան կոտրի:
Ա՛յ վորդի, ինչ քո հեր մեռավ՝
Մրսրա Մելիքն են սար խլեց.
Ջե՛նք իշխենա երթանք:
Ասաց.— Հրողբեր, դու ինձ նշա՛նց տու,
Վոր գան, ինձի՛ թող ըսպանեն, քեզի չե՛ն ըսպանի:
Ասաց.— Վո՛ւրդի, եսոր մնանք, են մեկել որ
երթանք:
Դավիթ նորեն ըռկավ, ասաց.— Հրողբեր,
Ծովասարի տեղ թե հիմիկ կ'ասե՞ս, ասա՛,
Ջ'ասես՝ հա՛ցն ու գինին, տեր կենդանին,
Սիլա մի կտամ քո երես, քո վիզ ծռի:
Վոր եդպես ասաց, հրողբեր վախեցավ,
Տեսավ, վոր Դավթի ծռությունը բռներ է:

Ասաց.— Տղա լա՛վ մի՛ հերսոտի,
Արի, տանե՛մ, քեզ նշա՛նց տամ:

Զենով Հովան եկավ Քեռի Թորոսի մոտ,
Քաղքի մարդերու մոտ, ասաց.
— Ցես չե՛մ գիտի՝ Դավթին ո՛վ է նշանց տվե.
Եսար Դավիթ ինձ զոռե՝ կ'ասի տ'երքանք Ծովասար:
Եղա քաղքի ամեն մարդեր ասին.
— Հովան, դուք վոր կ'երթաք՝
Մենք ե՛լ գանք, ենտեղ մտիկ անենք:
Ենտեղ հիմիկ ջոջ-ջոջ արջե՛ր կան, գելե՛ր կան,
Կխտա՛ր, վիրու ոչխա՛ր ել կա.
Տեսնանք Դավիթ ինչպե՞ս տի սպանի վիրու ոչխար:
Ելավ Դավիթ՝ ձի հեծավ, գնաց Ծովասար:
Տգերք պատրաստությո՛ւն տեսան,
Զենով Հովան ու քաղքացիք իր հետ գնացին:
Գնացին, հասան ու—ի՞նչ տեսան:
Ծովասարի բոլոր մի մեծ պարիսպ քաշած,
Դո՛ւռ մ'ել չը կա վերան:
Դավթի հեր—Մհեր,
Վոր սարերու չորս բոլոր պարիսպ եր քաշե,
Ենքա՛ն ժամանակ՝ ենոր մեռնելուց հետո՝
Ինչքան ջեյրան, վիրու ոչխար,
Գե՛լ, ա՛րջ—լցվեր եր Ծովասար:
Դավիթ հարցուց.— Հրողքեր, ես ի՞նչ պարիսպ ե:
— Քո հոր վորսասարն ե,— ասաց:
Դավիթ ելավ սարի գլուխ,
Տեսավ՝ չորս կողմ պարիսպ:
Վո՛ր կողմ դարձավ, փնտռեց, դուռ չը գտավ:
Դավիթ կանչեց.
— Ցա՛, բարձրիկն Մարուքա Աստվածածին...
Գուրզ զարկեց, պարիսպ փլավ:
Դավիթ մտավ ներս—ի՞նչ տեսավ.
Ենտեղ ծա՛ռ, ճո՛ւղ, բա՛ղ ու բաղչա՛, կանա՛չ,
Ենտեղ մեկ մեծ հավո՛ւզ շինուկ,
Աղբուրի պես, մեջ հավուզին ջուր կը գըգլա՛,
կ'երթա՛:

Ի՜նչ չափ գազանները կա՛ն՝ ամեն եդտեղ են։
Ասաց։— Վա՜յ, իմ հեր ինչքա՞ն մեղք ե գործե՝
Վոր ես գազաններ գերի՛ յե դարձուցե։
Եդա մարդիկ, ինչ իր հետ գնացեր են՝
Ուզեցին զարկեն, սպանե՛ն ոչխարներ։
Դավիթ իրիշկեց, իրիշկեց, կանչեց, ասաց։
— Եհե՜յ, ձեզ իրավունք չկա՛։։։
Ենոնցից մե՛կն ել չը սպանե՛ք։
Մոտիկ մի՛ գաք, յես չե՛մ թողնի ենոնց զարկեք։
Ջենով Հովան ասաց։
— Հրողքե՛ր մեռնի քեզի, Դավիթ,
Զա՛րկ, հա՛տ մի ըսպանի, բռնենք գենենք։
Դավիթ ասաց։— Հրողքեր, ջա՜նըմ,
Կապուկ տեղ պա՛պս ել կը զարկի։
Տղամարդն ե՛ն ե, վոր արձակի ու նո՛ր զարկի
Ջե՞ վոր ենոնք գերի յեն, հրողքեր,
Մարդ ել գերին զարկի՞։
Դավիթ քացի մ՝ տվեց։ պատեր զամեն քանդեց։
Իր կապան հանեց, թալեց երկինք վե՛ր, ասաց։
— Հոյ-հո՜յ։։։ Ամեն գազաններ փախան։
Ասաց։— Գնացե՜ք, ձեզի համար ապրե՛ք։
Ինքն ել ելավ եկավ սարի մեջ, ձորի մեջ,
Ման եկավ քարի՛ տակ, ծառի՛ տակ,
Հա՜, ման եկավ, ասաց։
— Ջ՚ըլնի՝ մեկ ջանավար քնո՛ւկ ըլնի—մե՛ղք ե։
Գազաններ ամեն դուրս հանեց,
Եկավ քաղքըցոց ասաց։— Դե, գնացե՛ք,
Վոր կըտրի՛ճ ե՝ իր համար թող զարնի։
Ով ինչ կտրիճ եր՝ գնաց, իրան վորս արեց։
Ով ինչ տնշնորհք եր՝ յետ մնաց։
Ամենն ել յետ դարձան, եկան Ծովասար,
Դավիթ ել գնաց, երկու վիրու ոչխար բռնեց։
Բերեց դրավ հավուզի մոտ,
Ինք մտավ հավուզ լողացավ, ելավ,
Ոչխարներ գենեցին աստծուն,
Իրանց համար կրակ կպցուցին,
Խորոված շինեցին, կերան, նստան եդտեղ։

5

Են մարդեր ու 'Դավիթ մնացին չուր իրիկուն:
Իրիկուն եդա քաղքի մարդեր
Ամեն դարձան, եկան տուն:
Հովանն ասաց·— Դավիթ,
Ելիր, մենք ե'լ երթանք տուն:
'Դավիթն ասաց·— Հրողբեր,
Իմ հեր եստեղ շա'տ ե ման եկե,
Ցես ես գիշեր տի մնամ եստեղ:
Ասաց·— Դա'վիթ, մարդ գիշերներ դուրս չի' մնա.
Գիշեր կ'երթա իր տուն:
Տեսա՞ր, եդա քաղքի մարդեր ամեն գնացին:
Մենք ել տ'երթանք մեր տուն:
Ասաց·— Հրողբե'ր, չե, ես իմ հոր տեղրանքն ե·
Գիշեր յես տի մնամ եստեղ:
Կ'ուզես՝ դուն գնա տուն:
Ելավ, ծառերու տակ պառկավ՝ քնի:
— Դավի'թ,— ասաց Հովան,—
Վոր դու կը մնաս՝ յես ե'լ կը մնամ:

Մընաց: Իրիկուն Դավիթ շուտով քնավ:
Հովան նստեց, չե'ր իշխենա՝ քնի·
Են իր միտ վե' ասաց·— Ինչպե՞ս անեմ,
Վոր դադարի Դավիթ:
Բերեմ, ենոր փեշ դնեմ տակ իմ գլխին,
Վոր գիշերով Դավիթ ինձ չը թողնի՝ չ'ելնի՝ երթա:
Հովան Դավթի կապայի փեշ ժողվեց, քաշեց,
Գաղտուկ բերեց, դրավ տակ իր գլխին,
Քընավ: Համա կը դադարի՞ Դավիթ···
Մընաց· եղավ գիշերվա կես:
Դավիթ զարթնավ քնից·
Ելավ, նստեց, իրիշկեց— ի՞նչ տեսավ·
Սարի գլուխ ճրա'գ մի կը վառվի:
Տեսավ՝ լուս-կամար կանգներ ե·
Ասաց·— Նսա ի՞նչ ճրագ ե·
Տեսնեմ՝ ի՞նչ մարդիկ են ենտեղ:
Ուզեց ելնի, տեսավ՝ կապայի փեշ

Հրողբեր իր գլխու տակ դրե, քնե:
«Ո՞վ տեր աստված,— ասաց,—
Թե իմ հրողբեր վե՛ր հանեմ,
Տ'ասի՝ Դավիթ վախեցավ:
Թե չը հանե՞մ՝ կապայի փեշ իր գլխու տակն ե»:
Դավիթ հրողբոր վե՛ր հանեց, ասաց.
— Ենա լեռի գլոխ ի՞նչ կանաչ-կարմիր բոց կ'իջնի:
Հովան գիտե, վոր Մհերի գերեզմանն ե,
Ու լուս կ'ելնի գերեզմանից,
Համա զԴավիթ խաբեց, ասաց.
— Կըրակ կը կըպցնեն. հալբաթ հովիվ,
Կամ թե նախրո՛րդ ե, գառնարա՛ծ...
Յես ի՞նչ գիտեմ՝ վո՞ր մեկըն ե:
Դավիթ իր սրտի մեջ չը համոզվավ եդ խոսքերուն:
Երկուսի քուն ել տարավ, կող ելան, քնան:
Ջենով Հովան մեկ ե'լ Դավրի փեշ դրեց գլխու տակ,
Վոր Դավիթ չ'երթա՝ եդ գերեզման նայի:
Մնաց. մեկ մ'ել Դավիթ զարթնավ,
Տեսավ՝ սարի վրա մարմար քա՛ր մի բացվե,
Երկնուց լուս եկե վե՛ր են քարին:
Ես դիր Դավիթ հրողբոր ձեն չը տըվեց, ասաց.
— Թե դանակ հանեմ՝ կապայի փեշ կըտրեմ՝
ոսիսո՛ս ե,
Ասաց.— Ջայնա՛մ թե ափսոս ե:
Զինք իր դանակ հանեց,
Դրեց՝ իր կապայի փեշ կտրեց,
Կապայի փեշ մնաց Հովանի գլխու տակ:
Դավիթ իրիշկեց են կրակ, ելավ գնաց վեր:
Գնաց, տեսավ կո, գերեզմա'ն մի կա ենտեղ
Կանաչ-կարմիր բոցն եդ գերեզմանե'ն կ'ելնի:
Լուս կամար գերեզմանի վերան կանգնե:
Դավիթ գնաց մոտ, ձե'ռ ետու բոցին— ձեռ չ'երեց:
Հո'ղ թալեց վերան— չը հանգավ:
Նոր մեջ իր խելքին մտածեց.
«Ե'ն, ինչ Մարուքա բարձր Աստվածածին կ'ասեն՝
Սա յե»: Ջնետ-աղեղ հզար ենտեղ նշան,
Ելավ, իջավ հրողբոր մոտ:

6

Իջավ Դավիթ, տեսավ՝ հրողբեր հալա ֆնած:
Նստավ իր տեղ, կանչեց, ասաց.
— Հրողբեր, ֆո անուշ ֆնից վե՛ր ելի*),
Տո, հրողբե՛ր, մեռնե՛մ ֆեզ, հրողբեր,
Յես տե՛ր չ՚ունեմ, դու ինձ արա տերություն.
Տո հրողբե՛ր, մեռնե՛մ ֆեզ, հրողբե՛ր,
Յես հե՛ր չ՚ունեմ, դու ինձ արա հերություն.
Տո հրողբե՛ր, մեռնե՛մ ֆեզ, հրողբե՛ր,
Յես մե՛ր չ՚ունեմ, դու ինձ արա մերություն.
Տո, հրողբե՛ր, մեռնե՛մ ֆեզ, հրողբե՛ր,
Յես աղբե՛ր չ՚ունեմ, դու ինձ արա աղբերություն:
Հրողբեր վե՛ր ելավ, ասաց.
— Ծո՛ւռ Դավիթ. ել ի՞նչ է եղե:
Ասաց.— Հրողբեր, որինյա՛ղ է բարերար աստված,
Խնամքը շա՛տ է աստծուն.
Մարմար ֆար հրեն բացվեր է.
Լուս կամա՛ր կապեր է մեջ Ծովասարին.
Ելի՛, երթանք, ֆեզ նշա՛նց տամ:

Դավիթ առավ զհրողբեր,
Բերեց վեր հոր գերեզմանին:
Գերեզման շանց տվեց, ասաց.— Ենի ի՞նչ է:
Ասաց.— Ենի ֆո հոր գերեզմա՛նն է:
Վանք ել, վոր ֆարուֆանդ եղե՝
Ֆո հեր, Միհեր ետու շինել,
Անունն ել է՛ն եդի Մարուքա բարձր Աստվածածին:
Համա ինչ որ ֆո հեր մեռավ՝
Մըսրա Մելիք եզար, հիմեն ավրեց, տարավ:

Դավիթ եդ լսեց, դարձավ,
Եզար չոֆեր գետին, գընաց.
Ձեռներ եզար գետին, համբուրեց.
Իր նետ-աղեղով եդա մարմար ֆարի բոյոր
Գի՛ծ մի ֆաշեց, նշան արավ,

---

*) Ցերդ է։

Լուսու ձեվով խորանների կամար քաշեց,
Սեղանատեղ քաշեց, հիման տե՛ղ ել քաշեց.
Ասաց.— Եսա եսպե՛ս տի շինվի:
— Հրողբե՛ր, մեռնեմ քեզ, հրողբեր, յես քենե*)
կ'ուզեմ.
Հինգ հարիր—համար հազա՛ր—քար կտրո՛ղ, քենե
կ'ուզեմ.
Հինգ հարիր—համար հազա՛ր—քար տաշո՛ղ, քենե
կ'ուզեմ.
Հինգ հարիր—համար հազա՛ր—խին բերո՛ղ, քենե
կ'ուզեմ.
Հինգ հարիր—համար հազա՛ր—ջուր կրո՛ղ, քենե
կ'ուզեմ.
Հինգ հարիր—համար հազա՛ր—պատ շարո՛ղ, քենե
կ'ուզեմ.
Հինգ հարիր—համար հազա՛ր—սվաղ անող, քենե
կ'ուզեմ.
Հինգ հարիր—համար հազա՛ր—փայտ փորող, քենե
կ'ուզեմ:

Թե վոր չը շինե՛մ յես ես վանք՝
Իմ ուխտի տակ կը մեռնեմ.
Ջուր վաղն իրիկուն ես ամեն պատրա՛ստ կ'ուզեմ,
Վոր լո՛ւս տա՝ մեկելոր պատարագ մեջ մատուցվի:

Հրողբեր լա՛վ գիտեր,
Վոր Դավթի խոսք մե՛կ եր—երկու չեր անի:
Եդոր համար Հովան լսեց Դավթի խոսքեր, ասաց.
— Դավի՛թ, մենք տո՛ւն երթանք, բանո՛ղ ճարենք:
Դավիթ ասաց.—Յես տի մնամ մարմար քարի մոտ.
Յես տուն չեմ իգա: Դու շո՛ւտ գընա,
Ուստեք, բանողներ ճամբի, թող իգան,
Դու ել ենոնց հետներ արի:
Ձենով Հովան ասաց.
— Յես ես լանու խորհուրդ տի կատարեմ:
Ասաց.— Վո՛րդի.

---

*) Յերդ և։

Ցեսս Զենով Հովա՛նն եմ, ի՞նչ կը վախենաս,
Քառսուն ավուր նամբա իմ ձեն կ'երթա:
Իմ ձեն յոթ քաղաքի ուստա մարդիկ,
Հազար-հազար բանող մարդիկ տի լսեն, տի գան:
Վե՛ր, յոթ հատ վիրու յե՛զ զարկի,
Առնեմ, երթամ քաղաք, պատի՛վ տամ քաղքացոց.
Են ժամանակ ուստեք ու բանողներ
Ամեն կը ժողովվեն,
Դուն ել սրտիդ մուրազ կը կատարես—վանք կը շինվի:
Դավիթ ելավ, վեց վիրու յեզ զարկեց.
Հովան յեզներ շալակն առավ, գնաց քաղաք:

7

Առավոտուն Հովան ելավ, կանչեց ձենով.
— Ա՛խ կը կանչե՛մ, թող գան*),
Ով իր աստված կը սիրե, թող գա.
Մարուքա բարձր Աստվածածին տի շինենք, թող գա՛:
Ա՛խ, կը կանչե՛մ, թող գան,
Ա՛խ, կը կանչե՛մ, թող գան,
Ա՛խ, հի՛նգ հարի՛ր—համա՛ր հազա՛ր—քար կտրո՛ղ,
Ա՛խ, հի՛նգ հարի՛ր—համա՛ր հազա՛ր—քար տաշո՛ղ,
Ա՛խ, կը կանչե՛մ, թող գա՛ն,
Ա՛խ, կը կանչե՛մ, թող գա՛ն,
Ա՛խ, հի՛նգ հարի՛ր—համա՛ր հազա՛ր—խիճ բերո՛ղ.
Ա՛խ, հի՛նգ հարի՛ր—համա՛ր հազա՛ր—ջուր կրո՛ղ,
Ա՛խ, կը կանչեմ, թող գա՛ն,
Ա՛խ, կը կանչեմ, թող գա՛ն,
Ա՛խ, հի՛նգ հարի՛ր—համա՛ր հազա՛ր—փայտ փորո՛ղ,
Ա՛խ, հի՛նգ հարի՛ր—համա՛ր հազա՛ր—պատ շարո՛ղ,
Ա՛խ, կը կանչեմ, թող գա՛ն,
Ա՛խ, կը կանչեմ, թող գա՛ն...

Հովանի ձեն չուր յոթ քաղաք լսան:
Եկ յոթ քաղքի բանողներ, ուստա մարդեր

---

*) Ցերգ ե։

Հազար–հազար թափվան,
Ելան, եկան Հովանի տուն:
Ձենով Հովանին պատիվ տվին, ելան, գնացին՝
Մարուբա բարձր Աստվածածին շինեն:
Դավիթ եդ վախտ ի՞նչ ե արե·
Գնացե, ենտեղ, ուր նետ–աղեղով
Ենա մարմար քարի բոլոր գիծ եր քաշե·
Գրնացե՝ հիմ եր փորե, հիման քարեր բոլոր դրե,
Պա՛տ ել մեկ մեջք բարձրացուցե:
Ձենով Հովան վոր առավ ուստեք, եկավ,
Ուստեք կը տեսնան, կը զարմանան ենտեղ·
Ենպես ջոջ քարեր բերեր դրեր ե մեջ հիման,
Վոր ամեն բանողներ ժողվեն մեկտեղ՝
Ձեն կարնա են քարեր բերեն:

Ուստեք կը կանգնեն պատի վերա,
Դավիթ են ջոջ քարեր ձեռ կը տա,
Կը վերցու, կը բերի, կը դնի իր տեղ:
Վոչ բանողներ կարնան են քարեր բերեն,
Վոչ ուստեք կարնան վերցուն, դնեն տեղ:
Բանողներ ել ենա պստիկ քարեր կը բերեն,
Ուստեք եդ պստիկ քարեր կը տան ջոջ քարերու
բոլոր,
Բանողներ տիլ կը շինեն, կը տան ուստեքին,
Ուստեք տիլ կը զարկեն եդ քարերու բոլոր:
Ձուր մուք կը տա գետին,
Եդ վանք կը գլխեն, կը լմնցուցեն,
Որե՝ Մարուբա բարձր Աստվածածին կը շինեն:

8

Են գիշեր կը քնեն· Դավիթ կը տեսնա՝
Մարուբա բարձր Աստվածածին կը գա երազ, կ'ասի·
«Քո թուր քո մեջքեն քաշի,
«Իմ հիմ քո թրի վերա՛ ձգի,
«Որե՛ մի կը շինես, կը թամամցես,
«Պատարագ մեջ վանքիս կը մատուցես,
«Վոր յես վեր իմ հիման կանգնեմ»:
Ուստեք տիլ կը զարկեն եդ քարերու բոլոր:

Դասվիք գարքնավ, տեսավ՝
Մարուքա բարձր Աստվածածին չըկա:
Քարն իր տեղն է գնացե,
Հողն իր տեղն է գնացե,
Ավազ, կավ ու ինչ վոր պատրաստություն կար՝
Ամենն իր տե՛ղն է գնացե:

Ելավ Դավիք, Հովանին ձեն տվավ,
Քեռի Թորոսին ձե՛ն տվավ, ասաց·
— Հրողբե՛ր, Քեռի՛, ձեր անուշ քնից վե՛ր ելեք:
Մարուքա բարձր Աստվածածին եսոր եկե ինձի երազ·
Իմ մեջքեն իմ թուր տի քաշեմ՝
Վանքի հիմ իմ քրին տի դնեմ·
Վանք տի շինե՛մ, տի թամամեմ:
Պատարագ մեջ տի մատուցեմ:
Հովան շա՛տ զարմացավ, հետա ասաց·— Դա՛վիք,
Ցես Ձենով Հովա՛նն եմ· լուսուն մեկ ե՛լ կ'ելնեմ,
Մեկ ե՛լ բանող կը բերեմ քեզ համար, մեկ ե՛լ շինեն:
Առավոտուն կ'ելնի Հովան, նորեն կը բռռա,
Հազար-հազար բանող, ուստա նորեն կը գան:
Կը գան, կը տեսնեն Դավիք ել հետ
Ենպես ջոջ քարեր բերե, դրեր ե մեջ հիման,
Իր մեջքեն թուր քաշե՝ խրեր ե մեջ հիման:
Քարեր, բաներ հելրոտա կ'անեն,
Մինչ մուք կը տա գետին, կը շինեն, կ'ավարտեն:
Իրիկուն Դավիք կ'ասի·— Հերահոտ հրողբեր,
Եդա վարպետներու վարձ տո՛ւր,
Եդա բանողների վարձն ե՛լ տուր···
Առանց վարձ մի՛ թող:
Հովան կը գնա կը բերի երկու-իրեք բեռ վոսկի,
Կը բերի, Մարուքա բարձր Աստվածածնա դուռ,
Եդտեղ ամեն մարդու մեկ վոսկի կը տա,
Մարդիկ կ' երթան իրենց տուն:
Դավիք Ձենով Հովանին կը դառնա, կ'ասի·
— Հրողբեր, մեռնե՛մ քեզ, հրողբեր*),

*) Ցերդ·

Ինձ բենե պետք են քառսուն եպիսկոպոս,
Ինձ բենե պետք են քառսուն վարդապետ,
Ինձ բենե պետք են քառսուն ավագ սարկավագ,
Ինձ բենե պետք են քառսուն սարկավագ,
Ինձ բենե պետք են քառսուն լուսարար.
Վոր վանք լուս տան, շարաթ պատարագ մատուցենք:
Ելավ Հովան կանչեց.
Վարդապետներ եկան, լուս տվին,
Շարաթ պատարագ մատուցեցին:

Դավթի բեվ ենքան եկա՛վ եկեղեցու վերա՝
Վոր գնաց, Զարբահար Քամին բերեց,
Վանքի դռան հետև դրեց պահեցող:
Որեն մեկ տիկ մեղր, մեկ տիկ կսրագ
Զարբահար Քամու կերակուրն եր:
Թամբահ արավ Դավիթ Զարբահար Քամուն, ասաց.
— Ավեր մարդ վոր կը գա՝ դուռ վերան չը բանաս.
Վոր ուխտավոր կը գա, շիվտր-մարդեր կը գան՝
Դուռ բաց արեք, կերակրեցեք:

9

Մնացին ենտեղ չուրի առավոտուն:
Առավոտուն ելան, Դավիթ աչքեց, տեսավ՝
Մեջ Սասունա, մեջ Մարուքա սարի գե՛տ մի կ՚անցնի.
Դավիթ ասաց.—Պետք ե ետա գետին կամուրջ շինի:
Թե չե՝ մարդիկ տի գան, տի ընկնեն գետ:
Բերին՝ կամուրջի հիմ թալեն՝
Ամա թալած քարեր ջուր կը տաներ՝
Հիմ չեր բռնի: Են ժամանակ ելավ Դավիթ՝
Սարից ե՛ն տեսակ ջոջ քարեր գլորեց տակ,
Վոր ամեն քար քանց ջոջ տո՛ւն մի:
Եդ ջոջ քարեր կամրջի չորս հիմե՛ր թալին,
Քիչ յետ՝ կամուրջ կապին, պրծան:
Եդ քարերաց վերա ուրի՛շ քարեր շարին,
Ենպես լեն եր են կամուրջ,
Վոր երկո՛ւ սել կուշտ-կշտի կ՚անցնեյին:
Են կամրջի անունն մնաց Դավթի կամուրջ:

Քանի մի որ հետո՝ Դավիթ ու հրոդրեր Հովան
Իջան Սասուն՝ աչքե՛ անցնեն,
Թե ի՞նչ եր Սասնա տեղ ելե, դարձե:

10

Խաբար հասավ Մըսրա Մելիքին,
Թե «Դավիթ գնացե Ծովասար ավրե,
Ամեն բռնավոր զազաններ թոդե,
Պարիսպ փլցուցե ու Մարուքա վանք շիներ ե տվե»:
Մսրա Մելիքի հերս ելավ.
Իր նախանձ սիրտ չը հովացավ.
Ելավ, կանչեց իր խոլբաշուն, ասաց.
— Յես տի ելնեմ, հեծե՛լ առնեմ, երթամ.
Վանք Մարուքան թալնեմ բերեմ:
Եդ խոլբաշին ասաց.— Թագավոր ապրած կենա,
Դու հեծելներ ինչի՞ առնես.
Մենք հինգ հարիր հոգի հեծել՝
Կերթանք են Ծովասար, վըրանե՛ր կը զարկենք,
Են վանք կը թալնենք, կը բերե՞նք,
Դավթի՛ն ել կը սպանենք,
Ականջներ կը կտրենք, կը բերե՞նք:
Մելիք ասաց.— Դու եդպես բան անես՝
Քաղա՛ք մի կը տամ քեզ նվե՛ր:
Պատրաստություն տե՛ս. դու Ծովասար կ'երթաս.
Մարուքա բարձր Աստվածածին թալնես, ավրես,
ու գաս,
Դավթի՛ն ել տի սպանես, իր ականջներ բերես:

11

Եդ խոլբաշին հինգ հարիր ձիավոր առավ, եկավ.
Զե՛ր իշխենա գա Սասնա քաղաքի վերան:
Եկավ, ելավ Մարուքա բարձր Աստվածածին:
Զարբահար Քամին ելավ դուրս, իրիշկեց, տեսավ՝
Քանի մի հարիր ձիավոր մեջ դաշտին կը գա:

Ասաց։— Թե ասեմ եսիկ զամեն ուխտավո՞ր են՝
Ուխտավոր զամեն ձիավոր չի՛ ըլնի։
Մա՛ս մի ձիավոր, մա՛ս մի վոտավոր տ ըլնի։
Ցես ասեմ եսիկ ավե՛ր մարդ են, ավազա՛կ են։
Ցես տ'ելնեմ, դուռ դարբաս զարկեմ,
Իմ մեջք տամ դարբասի առաջ։
Թե ուխտավոր ելավ՝ դուռ տի բանամ, զան ներս։
Թե ավե՛ր մարդ ելան, զաթի դուռ չե՛մ բանա,
Թող ելնեն, երթան։
Ու Զարբահար Քամին ելավ իր մեջք տվեց դռան։

Խոլբաշին հի՛նգ հարիր ձիավորով եկան,
Եկան, մեռա՞ն, կտրա՞ն, չը կարցան դուռ բացեն։
Խելքով մա՛րդ մի կար մեջ զորքին, ասաց։
— Բերեք նապաստա՛կ մի զարկենք, շոր մի,
'Դավթի շորի տեսակ, թաթխենք մեջ արունին,
Եդ շոր զարկենք մզրախի ծեր,
Ու պարիսպ վե՛ թալենք տակ, ասենք։
«Զարբահա՛ր Քամի, մենք քո տեր սպանե՛ր ենք,
Դու վո՞ւրտեդ տի մնաս, ի՞նչ տ'անես»։
Վոր տեսնա 'Դավթի շորեր,
Դարբասներ տի բանա, մենք տ'երթանք ներս։
Բերին եդ շոր, թալին պարիսպ վե՛ տակ։
Զարբահար Քամին տեսավ շորեր, ասաց։
— Ես Դավթի հագուստն է։
Բո՛ւռ մի մոխիր գցեց իր գլուխ,
Համա դուռ բաց չ'արավ։
Ինչ արի՞ն–չ'արին, դուռ բաց չ'արավ։

Խոլբաշին գնաց վանքի պարսպի մոտ,
Մեկ ե՛լ կանչեց, ասաց։
— Միաբաննե՞ր, վարդապետնե՞ր, դուռ բացե՞ք։
Ասաց։— Անիրավնե՞ր, ձեր տեր գեներ եմ։
Դուք դռ՞ր կը մնաք՝ դուռ չեք բանա դեմ ինձ։
Մենք գնացինք Սասնա 'Դավիթ ըսպանեցինք։
Ել ձեր հույս մեռա՞վ։
Կուզե՞ք դուռ բացեք, կուզե՞ք մի բանաք,

Զուր սեվ կուպր կը սիպտակի:
Եսա բան որ լսին վարդապետներ՝
Իրենք իրենց ասին· «Սասնա քաղաք ավերեր են,
Մեր տեր ըսպաներ են,
Ել ինչպե՞ս մենք մնանք վեր աշխարհին»...
Գիշեր, Զարբահար Քամու քնած պահին,
Ենոնք ահու ելան, վանքի պարսպի դուռ բացին...
Զարբահար Քամին զարթնավ քնուց,
Ետո՛ւ վեր իր գլխուն, դռներ եթոդ բաց,
Փախավ գնա՞ց, գնաց սար վե՛ր:
Խոլբաշին զորքով մտավ վանք,
Վանքի դուռ բռնեց, ինք կանգնեց դռան,
Եդա հինգ հարիր ջան մտցրրեց ներս·
Թալանեցին, թախթըփեցին,
Կտրեցին քառսուն վարդապետ մեջ խորանին,
Կտրեցին քառսուն ավագ սարկավագ մեջ սենեկին,
Կտրեցին քառսուն լուսարար
Ու քառսունեն մեկ պակաս սարկավագ·
Են մեկ թագնվավ սպանվածներու լեշերու տակ:
Խոլբաշու զորքեր վոր գնացին,
Են ելավ լեշերու տակեն,
Առավ սարկավագի մի շապիկ,
Թաթխեց սպանվածներու արնով,
Հավար տարավ Սասուն, Դավթին:

13

Սարկավագ եկավ, հասավ Սասուն:
Եկավ Զենով Հովանի սենեկ:
Տեսավ՝ Դավիթ նստե, Դավթի քեֆ հասեր է·
Սագեր արե խորոված՝ դրե վլավի վերա,
Յոթ տարվա նռան գինին խմե,
Վոտ թալե վեր վոտուն, ազապ լանեերու,
Ազապ աղջիկներու հետ կեր ու խում կ'անի:
Սարկավագ եկավ, եդոր դիմաց կանգնավ:
Զենով Հովան ասաց·— Եդ ի՞նչ է եղե:
Սարկավագ ասաց·— Մեր վանք թալնեցին·

Դավիթ ծուռ է—եկե նստե, բե՞փ կ'անի:
Ձենով Հովան սիլա՛ մի զարկեց սարկավագին:
Դավիթ են կողմեն ասաց·
— Հլռդրեր, ինչի՞ սարկավագին տփիր:
Ասաց·— Սարկավագ կ'ասի՝ Դավիթ ծռ'ուռ է,
Եկե, նստե, եստեղ բե՛փ կ'անի:
Դավիթ կանչեց սարկավագին, ասաց·
— Տեսնե՛մ, արի եստեղ, ի՞նչ կ'ասես·
Են ի՞նչ է պակաս իմ վանքին·
Խո՞ւնկն է պակաս, ձե՞թն է պակաս, ինչի՞ եկար·
Շուտ ա՛ռ, գընա՛, քո ժամուն հասի՛ր:
— Դավի՛թ,— ասաց եդ սարկավագ,—
Սպանեցին քառասուն եպիսկոպոս*),
Սպանեցին քառասուն վարդապետ,
Սպանեցին քառասուն ավագ սարկավագ,
Սպանեցին քառասուն լուսարար,
Սպանեցին քառասուն մեկ պակաս՝ սարկավագ,
Վանք պլոկեցին, թալնեցին, առա՛ն, գընացին:
— Ե՛,— ասաց Դավիթ,— ինչի՞ գլուխ կը ցավցնես:
Դարձավ Հովանին ասաց·— Հրո՛ղրեր,
Սարկավագն եկեր է· խո՞ւնկն է պակաս,
Ձե՞թն է պակաս, մո՞մն է պակաս,
Տո՛ւր թող երթա:
Սարկավագ մնաց շվար:
Չի կարնա հասկացնի Դավթին:

Դավիթ վոր ետենց ասաց, չը հասկացավ,
Սարկավագ արնոտ շապիկ տփեց առաջ, ասաց·
— Աստված քո տուն ավրի,
Ո՞ւր են քո եպիսկոպոսներ,
Ո՞ւր են քո վարդապետներ,
Ո՞ւր են քո ավագ սարկավագներ...
Դավիթ՝ վոր տեսավ արնոտ շապիկ,
Գինին գլխից անցավ, ասաց·— Տըղա՛,
Եդա ի՞նչ է, ի՞նչ է եղեր:

---

*) Ցերդ·

— Դավիթ, մեռնեմ յես քեզ,— ասաց*),—
Սպանեցին քառասուն եպիսկոպոս,
Սպանեցին քառասուն վարդապետ,
Սպանեցին քառասուն ավագ սարկավագ,
Սպանեցին քառասուն լուսարար,
Սպանեցին քառասուն՝ մեկ պակաս՝ սարկավագ:
Վանք պլոկեցին, թալնեցին, առան, գնացին:
— Ո՞ւրի,— ասաց,— վանք թալնա՞ծ,
Վարդապետներ սպանա՞ծ.
Դու հդպե՞ս կ'ասես, սարկավագ. ո՞վ եր, ո՞վ չեր:
Սարկավագն ասաց.— Խոլբաշի՛ն եր՝
Հինգ հարիր ձիավորով:
Ամեն ըսպանեց, յես ել հազիվ փախա:
— Սարկավա՛գ,— ասաց Դավիթ,—
Ենոնք շո՞ւտ են գացած, թե նոր:
Ասաց.— Ենոնք ենտե՛ղ են գացած,
Կո՛, յես ետե՛ղ եկա:
Դավիթ ելավ կայնեց, ասաց.
— Ազա՛պ լաներ, ազապ աղջկե՛րք, կերե՛ք, խմե՛ք,
Ձեր քե՛ֆն արեք... Յես գնացի...

14

Իսկույն Դավիթ ելավ վազեց, մտավ Պառավու տուն:
Ասաց.— Պառավ, յես վո՞ւրտեղով երթամ—
Եդ խոլբաշու առջև բռնեմ.
Են իմ վանք թալաներ, տարեր է:
Պառավ նշա՛նց տվեց նամբան, ասաց.
—Կ'երթաս են Բաթմանա գետի վերան, կամրջի մոտ:
Եդ խոլբաշին ո՛ւր ել երթա,
Տի գա, եդ տեղե՛ն տ'անցնի:

Դավիթ իրա վոտքեր չըլտեց,
Իրա թեվքեր վե՛ր ետու,

---

*) Ցերգ և.

Գնաց, բարդի ծառ մի քաշեց,
Իր ձեռ քսեց վերան,
Զլուտկացուց, դրեց թևին, գնաց:
Գնաց՝ եդա ջոջ քարի տակ կայնեց:
Խելի ժամանակ կայնեց, նայե՛ց, նայե՛ց...
Դրոդրոտ՛ց մի, ձա՛յն մի չի՛ գա:
Ասաց.— Վա՛յ, թե անցած ըլնեն:
Մեկ ել՝ լսեց, վոր Խոլբաշին կ'ասի.
— Դավթի հե՛ր անիծեցինք,
Համ վա՛նք թալնեցինք,
Համ քառսո՛ւն վարդապետ, սարկավագ կտրեցինք:
Դե՛հ, թող գա, իմ առջև առնի՛:
Դավիթ իսկուն կանչեց.
— Խո՛լբաշի, դու դո՞ր տի փախչես:
Խոլբաշին հետեվ աչկեց, տեսավ՝
Դավիթ բարդու ծառ մի քաշե զորքերու մեջ
Կը փարատի, ու կամրջի վերան
Մեկ ե՛ս կողմեն շուռ կը տա ջուր,
Մեկ ե՛ն կողմեն շուռ կը տա ջուր:
Ենոր զորքեր ամմեն ջարդեց, ենոնք սպանեց,
Մնացած ել լցեց գետ, ենոնք ել խեղդեց:
Իրիշկեց՝ մարդ չի՛ մնացե. տեսավ՝
Խոլբաշին իրեն ձիով անցե գետի են երես:
Ասաց.—Ձիո՛ւ տեր, յես կարնա՛մ գամ քեզ բսպանեմ.
Համա յես քեզ չե՛մ բսպանի.
Դու գնա, Մելքիին բարո՛վ արա,
Ասա՝ դեռ Սասուն չի՛ մեռե.
Մեկ ել թող եսպես բան չանի՛.
Ավեր բանից ի՞նչ կը դառնա:
Ե՛, Խոլբաշին կ'իշխենա՞, դառնա՝ պատասխա՛ն տա.
Կը զարկի ձիուն, կը փախնի:
Դավիթ կ'ելնի կը դառնա Սասնա քաղաք:

ԴԱՎԻԹԸ ՊԱՏՈՒՀԱՍՈՒՄ Է ՄԸՍՐԱ-ՄԵԼԻՔԻ ՀԱՐԿԱՀԱՆՆԵՐԻՆ

1

Խաբար գնաց, հասավ Մըսըր:
Դընացին Մըսրա Մելիքին ասին.
— Մելիք, ի՞նչ կ'անես.
Են Սասունցի Ծուռ քո զորքեր ջարդեց...

Մըսրա Մելիք մեջլի՛ս հավաքեց.
Խելացի մարդեր՝ ինչքան կար, ժողվեց,
Խորհուրդ հարցրեց՝ ճամբան շանց տան՝
Դավթի կյանք երկրի երեսից վերցուն:
Մեջ մեջլիսին Կոզբադին անունով
Կտրին փահլեվան մի կար, են ասաց.
— Թագավո՛ր ապրած կենա, վայել չե՛մ տեսնի՝
Դու երթաս վեր գյավուրի՛ն:
Դու ինձ հազար փահլեվան տաս՝
Տ'երթամ, Սասնա քաղաք թալնեմ, բերեմ քեզի.
Քառասուն երկեն կնիկ բերեմ՝ ուղտեր բառնան,
Քառասուն կոլոտ կնիկ բերեմ՝ երկանք աղան,
Քառասուն ազապ աղջիկ բերեմ քեզ արմաղա՛ն:
Քառասուն արջառ, քառասուն երինջ,
Քառասուն ուղտու բեռով արծաթ,
Քառասուն ուղտու բեռով վոսկի՛ բերեմ—քե խա՛րջ,
Սասուն անեմ առ ու թալան:
Զդավի՛թ ել սպանեմ, գլուխ բերեմ քեզի:
Մելիք ասաց.— Քա՛ջ Կոզբադին,

Եդ իրավունք տվի՛ քո ձեռ։
Կ'ելնես կ'երթաս Սասնա վերան։
Կը բերես մեր յոթ տարվա խարջ։
Քառասուն երկեն կնիկ՝ մեզի ուղտեր բառնան,
Քառասուն կոլոտ կնիկ՝ մեզի երկանք աղան.
Քառասուն կույս աղջիկ մեզի՝ արմաղա՛ն—
Արջառ ու երինջ, վոսկի ու արծաթ,
Մեկ ել Դավթի գլուխ։
Կոզբադին Մելիքին ասաց։
— Մե՛լիք, դու ի՞նչ տի տաս ինձի։
Ասաց։— Թե դու եդպե՛ս արիր,
Իմ կես թագավորություն կը տամ քեզի։
Կոզբադին կ'ելնի, հազար կտրին մարդեր կը ջոկի,
Կ'ասնի, վոր երթա Սասնա վերան։

2

Բադին, Կոզբադին, Սուդին, Զարխադին
Ու Մելքի տված զորք ու զորական ընկան նանասյարի։
Մըսրա քաղքի կընկտիք
Ցերը որ տեսան հնոնց,
Պար բռնեցին, ասին։

« Բարո՛վ, Բադին ու Զարխադին*),
Եդ ո՞ւր կ'երթաք եդպես վազան,
Ե՛յ Կոզբադին, ե՛յ դու Սուդին,
Վոր դարձեր եք եդպես գազան...
Կոզբադին վերցուց, եդ կընկտոցն ասաց։
— Մտեք տուն, արեք շիվան*),
Ելեք դուրս, սրեք դիվան։
Կերթանք Սասուն առ ու թալան
Կարմիր յեզներ բերենք լծան,
Սիրուն կովեր բերենք կըթան,
Վոր դուք անեք յեղ ու չորթան»։
Կրնկտոցից մեկ դարձավ ասաց։
— Սասնա ծռե՞ր... թե յես գիտե՛մ՝
Եդ ձեր ուզած թե՛ տան, թե՛ տան։

---

*) Ցերդ։

3

Կոզբադին իր զորքով գնաց,
Գնաց ու Սասնա մոտկացավ.
Մեջ դաշտին վրաններ զարկեց,
Քառասուն մարդեր ջոկեց զորքից,
Եդ քառասուն մարդ ու քառասուն ուղտ առավ,
Գնաց Հովանի մոտ,
Վոր յոթ տարվա հարկ հավաքի:
Ասաց.— Մելիք ճամբե՛ր ե մեզ,
Վոր յոթ տարվա ձեր հարկ տանենք:

Հովան եդ բան լսեց,— Դավթից կը վախենալ.—
Կանչեց ասաց.— Դա՛վիթ,
Եսոր իմ սիրտ վիրու ոչխարի մի՛ս կ՚ուզի.
Գընա՛, ոչխա՛ր մի զարկ, բե՛ր, յես ուտեմ:
Զ՚Դավիթ խաբեց ու ճամբեց սար,
Վոր Դավիթ խաբար չ՚ըլներ, թե խարջ կը տան:
Դավիթ ելավ գնաց սար:
Վերգոն ու Կոզբադին կ՚երթան,
Քառասուն աղջիկ կը ժողովեն,
Կը լցնեն մեկ մարագ,
Քառասուն երկեն կընիկ կը ժողովեն,
Կը լցնեն մեկ մարագ,
Քառասուն կարճ կընիկ կը ժողովեն,
Կը լցնեն մեկ մարագ,
Պառվու աղջիկն ել կը տանեն:
Կը տանեն արջառներ, կը տանեն յերինջ,
Կը տանեն յեզներ, կը տանեն կովեր.
Կը փակեն մեջ մարագներուն:
Սուդին, Զարխադին, Բադին, Կոզբադին
Կը գան, կը մտնեն վոսկու զարգամբին.
Կը գան, քուրսու վերան կը բազմեն.
Վերգոն ել կ՚ելնի վոր վոսկին չափի,
Մըսրա Մելքի ջվալներ լցնի:
Եդ վախտ Մըսրա զորք կը մտնի Սասուն քաղաք,
Թալան-թալան կ՚անի:
Կնիկ ու ապրանք կը տանի:

4

Դավիթ սար-ձոր ընկած՝ իր վորս կ'աներ:
Սարեն իջավ Դավիթ՝
Իր նիզակին վերու ոչխար տնկած:
Եկավ, մտավ Սասուն,
Իր ձեռ ետու, ժանգոտ շեղբիկ մ'առեց իր ձեռ,
Գնաց Պառվու շաղգամի մարգ,
Շաղգամ քաղեց, շեղբկով մաքրեց,
Ու շաղգամ ուտելեն մտավ քաղաք.
Մտավ քաղաք, եկավ տեսավ՝ ի՞նչ,—
Ամեն որ վոր կը գար, կը տեսներ՝
Ասե՛լ, խոսե՛լ, ծիծա՛ղ, ուրախությո՛ւն.
Ես ո՛ր վոր եկավ, տեսավ՝
Ինչ վոր քաղքի վերան հո՛ղ մաղես,
Քաղաքն ինչ լա՛լ, գոռա՛լ, ծեկո՛ւք,
Մեր ու մանուկ ուրացեր են.
Տեսավ Պառավ, ձեռները ծոց դրած՝
Կը լա՛, կը մռմռա՛, կ'երթա-կը գա, կ'ասի
— Ավե՛ր, ավերվի՛ս Սասուն,
Մեկ թաք աղջիկ ունեյի՝ են ել գերի՛ գընաց Մըսրը:
Նդ ձեն ընկավ Դավթի ականջ.
Դավիթ ելավ, ասաց.— Պա՛ռավ,
Եդ ի՞նչ է, եդ ի՞նչ խաբար է:
Ասաց.— Դրող-մահ քեզ տանի, Դավիթ,
Սասունա ծռ՛ւռ, շաղգամակեր,
Թող դարդակվի քո թամբ:
Դավիթ ասաց.— Ինչի՞ համար ինձ կ'անիծես,
Ի՞նչ եմ արե, Պառավ:
Պառավ ասաց.— Ապա են թաղթ նստող վո՞րն է:
Ասաց.— Իմ հրողբեր Վերգո՛ն է.
Նանե, ինչի՞ ինձ կանիծես:
Պառավ ասաց.— Հալա դեռ չանիծե՛մ,
Մենք ի՛նչ նեղությունով, ի՛նչ տանջանքով
Մեծացուցինք մեր աղջիկներ,
Հիմիկ Վերգոն մեր աղջիկներ ժողվե,

Լցե են մարագներ,
Վոր տա, տանեն Մըսրա Մելիքին:
Գընա, տե՛ս, Կոզբադին եկե՝
Քո հրոդբոր մոտեն խարջ կը տանի՝
Մենք եդոնց խարջ տվո՞ղն ենք, ի՞նչ:
Դավիթ ասաց՝— Պառա՛վ, Պառա՛վ,
Կոզբադին ո՞վ է, ի՞նչ խարջ է:
Պառավ ասաց՝— Հը՞, Կոզբադին ո՞վ է...
Կոզբադնին Մելիքն է ճամբե՝
Քառսուն կարելիկ կընիկ տանի*),
Քառսուն երկեն կընիկ տանի,
Քառսուն ազապ աղջի՛կ տանի:
Կո՛վեր տանի, յեզնե՛ր տանի,
Քառսուն ուղտի բեռնով վոսկի՛, արծա՛թ տանի:
Աղջիկ, կընկտիք, ամեն տարե,
Իրեք մեծ մարագներ արե,
Հիմիկ ել վոսկի՛ն կը չափեն:

Դավիթ շատ բարկացավ,
Ամուր բռնեց Պառավու ձեռ, ասաց՝
— Պառավ, եդա բաներ վո՞ր տեղն է,
Արի, երթանք, ինձ նշանց տուր:

Պառավ Դավթին բերեց, նշանց տվեց գոմեր,
Ուր կարն կընկտիք, երկեն կընկտիք,
Ազապ աղջիկ լցուկ եյին:
Դավիթ իրեք գոմի դռներ կոտրեց,
Դռներ բացեց, կընկտիք, աղջիկներ դուրս հանեց,
Ասաց՝— Իմ մերե՛ր, իմ քուրե՛ր,
Դուրս ելեք, գնացեք ձեր տներ,
Գնացեք, ձեզ համար աղոթք արեք,
Ցես կ'երթամ ձեր չար կը տանեմ:
Դավիթ գնաց, արջառներու, կովերու դուռ ել բացեց,
Ասաց՝— Աստծու անասուններ,
Գնացեք ձեր տիրու դուռ:

---

*) Ցերդ՝

Ապա Դավիթ Պառավու ձեռ քաշեց, ասաց.—Պառավ,
Արի՛ վոսկու զարգամբու տեղ նշա՛նց տուր ինձ:
Վ.ո՞ր տեղն է՝ կը չափեն վոսկին:
Պառավ բերեց, եսապես. հեռու կայնեց.
— Դավի՛թ,— ասաց,— իմ ձեռ թո՛ղ,
Որ չը թողնես, չե՛մ ասի:
Դավիթ Պառավու ձեռ թողեց,
Պառավ ասաց.— Դե՞հ, ահա՛, տե՛ս, ենա՛ յե, տես:
Ու խազնի դուռ նշանց ետու:

5

Դավիթ ելավ, գնաց,
Տեսավ քառսուն փահլեվաններ
Խազնի դռան, թրեր հանե՝
Կես մե՛կ կողմեն, կես են մեկե՛լ՝ նստե:
Ենոնց բարեվ ետու, հարցուց.
— Տեսնես իմ հրողբեր եդ ի՞նչ կանի:
Ջուաբ տվին, թե ի՞նչ կը հարցուցես:
Ասաց.— Երթամ ենոր ոգնեմ: Նե՛ղն է:
Փահլեվաններ ասին.
— Են ի՞նչ արեց, վոր դու ի՞նչ անես:
Ես խոսքի վերան Դավիթ բարկացավ.
Վիրու ոչխար դրավ գետին,
Բռնեց են քառսունի վիզն ել քաշեց,
Ինչպես մարդ եավու մի վիզ դուրս քաշի...
Ել յետ վիրու ոչխարն առավ իր թև,
Մտավ զարգամբին:
Դավիթ մտավ վոսկու զարգամբին,
Տեսավ՝ վոսկին գետնի վերան դիզած.
Տեսավ՝ Հովան ջվալների բերան բռնե,
Վերգոն ել կոտ առե,
Կոտով վոսկի կը չափի՞, կը տա՛,
Կը լցնե՞ն, կը չափե՛ն, կը լցնե՞ն, կը չափե՛ն,
Կը դարդակե՛ն, Մըսրա բեռնե՛ր կը լցնեն.
Հրողբերներ ենպես են քրտընե,
Կը լողան մեջ քրտընքին:

Դավիթ աչքեց տեսավ՝
Քուլսաս բոլոր նստել են.
Մեկտեղ Բադին, մեկ՝ Կոզբադին,
Մեկ՝ Զարխադին, մեկել՝ Սուդին:
Կոզբադին մեկ-մեկ թիզ պռնգնե՛ր ունի,
Սուր-սուր ցրցված բեղեր ունի,
Որ մարդ տեսնի՝ կը սարսափի:
Եդ Կոզբադին նստե ենտեղ,
Վոր հրողբեր վոսկին չափեր՝ կ'ասեր՝ «երկո՛ւ-ո՛ւ»
Կոզբադին կ'ասեր — «մե՛-ե՛կ»:

Բարկութենեն արյուն լցվավ Դավթի աչքեր:
Հովան տեսավ՝ Դավիթ եկավ,
Համա խեղճ Վերգոն չը տեսավ:

Մեկ ել Դավիթ ենե՞նց բոռաց Վերգոյի վերա,
Վերգոն ենենց վախցավ, վոր լավոտեց:
Իրիշկեց՝ Դավիթ գլխու վերև կայնուկ է,
Ասաց.— Դա՛վիթ, մա՛հ քեզ տանի.
Դիր մի քո հե՛ր բոռաց—յես վախեցա:
Դիր մ'ել եդպես դու բոռացիր:
Դավիթ դարձավ Ջենով Հովանին, ասաց.
— Հրողբեր, եդա ի՞նչ է կ'անեք.
Ասաց.— Ծո՛ւռ Դավիթ, քո թևի կեղտե՛ր
կը սրբենք:
— Ա՛յ հրողբեր, իմ թեին կեղտ ո՞ւր է,
Ջե՞ս տեսնա, վոր չը կա, բա՛ն ել չը կա:
Հովան ասաց.— Տե՛ս, հա՛ն, քո թևի վերան:
Դավիթ ոչխար թևեն թալեց են վերի տեղ,
Եկավ մոտ հրողբրանց:
Կամաց Վերգոյի ձեռ բռնեց, ասաց.
— Հրողբե՛ր Վերգո, հրողբե՛ր Հովան,
Դուք շա՛տ եք ծերացե,
Դուք չե՛ք կարնա Սասնու վոսկին չափեք,
Տվեք, յե՛ս տի չափեմ, լցնեմ Մըսրա բեռներ.
Մելիք որ խարջ կ'ուզե,
Մելիքի խարաջ յե՛ս տի տամ:

Եղա փահլևաններ ասին.— Զանըմ.
Դե, եղա նիժ թող դե՛ն, քո գո՛րծ արա:
Դավիթ ասաց.— Զե՛, աստվա՛ծ գիտե, յե՛ս տի
չափեմ:
Զենով Հովան ասաց.— Դավիթ, զնա՛ քո բանին,
Քեզ բան չը կա՛ եսա գործին:
— Զե՛,— ասաց,— յես չե՛մ երթա, տո՛ւր:
Ու ձեռ եյթալ, երողբոր ձեռեն կոտ խլեց,
Կոտ կործեց վեր բերնին, ասաց.
— Հրողբեր, լի՛ց, լի՛ց, վոսկի՛ լիցս
Հրողբեր մեկ թիակ վոսկի լցեց չափի վռոք,
Դավիթ փետ ետու վերան, թափեց,
Դատարկ կոտ վերուց իր ձեռ,
Շրջեց ջվալի մեջ, ասաց.— Եսա մե՛կ-երկո՛ւ...
Կոզբադին չը դիմացավ, բռռաց, ասաց.
— Տո, ծո՛ւռ, եդ ի՞նչ ե կ'անես:
Գնա, տեղդ նստի, կ'ելնեմ գլուխդ կը թոցում:
Բռռաց ասաց.— Զենով Հովան, խաղալի՞ք ենք.
Դու եղա նիժ բերեր ես, վոր ծիծաղա՞ վեր մեզ:
Կը տաս՝ տո՛ւր յոթ տարվա մեր խարջ.
Թե չե՛ս իտա, կ'երթամ Մրսրա Մելքին կ'ասեմ,
Կը գա Սասնա քաղաք կ'ավերի, տանի:
Դավիթ հերսոտավ, ելավ կանգնավ,
Եսպես, վիզ ծռելով՝ մեկ մ'ել Կոզբադնի կողմ աչքեց,
Կոտ վերցուց, ասաց.
— Ցա՛ հացն ու գինին, տեր կենդանին,
Մարութա բարձր Աստվածածի՛ն:
Ասաց, կոտ զարկեց Կոզբադնի գլխուն:
Կոզբադին իր գլուխ կոռեց, բարձր կպավ.
Թե Կոզբադին գլուխ չը կոռեր,
Վիզ կը կտրեր, գլուխ կ'երթար:
Կոզբադին շուտ մի ելավ՝ փախնի:
Դավիթ ընկավ հետև, Կոզբադին բռնեց,
Ենոր շրթունքներ կտրեց,
Ենոր ատամներ քաշեց, շարեց նակատ,
Բերեց, դրեց ձիու վերան,
Վոտքեր ձիու փորի տակ կապեց, ասաց.

— Դե, գնա, թագավորիդ բարե՛վ արա, ասա.
Են Մհերի տղա Դավի՛թն եդպես արեց.
Մեկ ել չը գա՝ Սասնա կընիկ, աղջիկ տանի՞.
Սասնա տուն դեռ չի՛ ավերվե,
Վոր դուք նկե մեզեն խարջ ու խարաջ կ՚ուզեք;
Մրսրա գավառ իրեն. Սասնա գավառ մեզի՞
Թե չե՝ ինչ իրմեն կը գա, թող չը խնայի:

6

Ելան քոռ ու փոշման Բադին, Կոզբադին.
Սուդին, Զարխադին, իրենց զորք թողին
Փախան Մըսրա երկիր:
Կոզբադնի զորքեր ել իրենց ավար քշե,
Հաներ եյին Սասնա սինորեն դուս, կը տանեյին:

Դավիթ ելավ, եեծավ իր ձին,
Քըշեց Կոզբադնի զորքերի առաջ, կանչեց, ասաց.
— Ես մարդիկ ո՞ւր կը տանեք.
Ես թալան ո՞ւր կը տանեք:
Թողեք, զընացեք, քանի շո՛ւտ ե.
Խե՛ղճ եք, մի՛ թողեք, վոր ձեր զլուխ կտրեմ:
Ասին.— Դու մե՛կ՝ մենք հազա՞ր.
Ինչպե՞ս կարնաս դու մեզի հետ...
Դավիթ մրզրախ քաշեց ու ընկավ մեջ,
Եդ զորք բոլոր ջարդ ու փշուր արեց:
Զժողովուրդ, կնիկ, աղջիկ,
Քաղքեն տարած ալան-թալան հետ դարձուց,
Բերեց, հասավ Սասնա քաղաք,
Կանչեց զժողովուրդ, ասաց.
— Ամեն մարդ զա, իրեն ապրանք ճանչնա՛, վերցո՛ւ:
Ով վոր ապրանք տվե՛,—
Թող գա իր ապրանք վերցու:
Ով վոր վոսկի, փող տվե,
Թող գա, իրեն վոսկի՛ն վերցու:
Ով վոր մեկ կորեկ ավե՛լ վերցու՝
Կը զարկեմ՝ զգլուխ կը կտրեմ:
Ամեն իր տվա՛ծ թող վերցու:

Զապրանք, գվոսկի, գփոդ՝
Բոլոր ցրվեց, տվեց ժողովրդին,
Ինք եկավ իր տուն նստավ:

7

Սուդին, Զարխադին, Բադին, Կոզբադին
Լեղապատառ կ'երթան, կը հասնեն Մըսըր:
Կ'իրիշկեն, Մըսրա աղբըրի վերա
Կնկտիք ժողվեր են՝ կժեր կը լցնեն
Կնկտիք գեդ տեղաց տեսան Կոզբադին,
Վոր բերան բացած՝ ուրախ կը ծիծղա:
Ասին.— Կոզբադին խարջ բերե, կը գա:

Համա Կոզբադին գնաց, մոտեցավ,
Տեսան՝ ենոր պոնգներ կտրտած,
Ատամներ քաշած, բեվեռած ճակտին:
Կնկտիքը ասին.— Տեսե՛ք մի, տեսեք,
Մեր Կոզբադին ինչպես կը գա լերան-լերան,
Բերնից կը թափե չորթըն թան:
Կոզբադին վոր քիչ մ'ել մոտիկ եկավ կնկտոց՝
Կնկտիքը ասին, ու խաղ արին.
— Այ, Կոզբադին, մեծաբերան*),
Կերթիր Սասուն՝ բերես թալան՝
Քառասուն երկեն կնկտիք բերես՝ ուղտեր բառնան,
Քառասուն կարելիկ կնկտիք բերես՝ երկանք աղան,
Քառասուն կույս աղջիկ բերես արմաղան,
Քառասուն բեռով վոսկի, արծաթ բերես թալան.
Կարմիր կովեր բերես կթան,
Վոր մենք անենք յեղ ու չորթան:
— Ո՞ւր են հապա կարմիր կովեր:
— Ո՞ւր են հապա են քու կնկտիք.
— Հապա, եկար դու ետապես լերան-լերան,
— Քո ատամներ ճակտիդ վերան շարան-շարան:
— Ցեխո՛վ մոլված մեծաբերան:
— Իդա դիհեն զացիր՝ քանց գել գազան,

---

*) Ցերդ է:

ՆԻ ԵՆ ԴԻՀԵՆ ԵԿԱՐ՝ ՖԱՆՑ ՇՈՒՆ ՎԱԶԱՆ.
— ՄԸԶՐԱԽԴ ՖՈ ՎԱԶԵՆ ԿԱԽՈՒԿ՝ ՖԱՆՑ ՇԱՆ ԽՍՏԱՆ,
ԲԵՐԱՆԴ Ե ԲԱՑ՝ ՖԱՆՑ ՊԱՏՈՒՀԱՆ.
— ՓՍԼԻՖ Կ'ԵՐԹԱ, ՖԱՆՑ ՏՈՊՐԱԿԻ ՏԱԿԻ ԹԱՆ՝
ՃԱՆՃԵՐ ՎԵՐԱՆ ԿԱՊԱԾ ՖԱՐՎԱՆ:

ԿՈԶԲԱԴԻՆ ԱՄՈԹՈՒ ԵՂԱՎ՝ ԱԻՈՒ ԳԸԼՈՒԽ ԿՈՌԵՑ,
ՈՒՐԻՇ ՃԱՄԲՈՎ ԵՐԹԱ: ԿՆԿՏԻՖ ՏԵՍԱՆ՝
ԵՆՈՆՑ ՄԱՐԴԻԿ ԳԱՑԱԾ՝ ՀԵՏ ՉԵ'Ն ԻՋԱ:
ՇԱՏԵՐՈՒ ԱՉՖ ՃԱՄԲԻՆ ԵՐ—ԲՈՌԱՑԻՆ, ԱՍԻՆ.
— ԱԲԱ ՄԵՐ ԵՐԻԿՆԵՐ ՎՈ՞Ր ՏԵՂ ԹՈՂԻՐ:
ԴԱՐԱՎ ԱՍԱՑ.
— ԱՅ ԿԸՆԿԸՏԻՖ ՇԱՏԱԽՈՍԱՆ*),
ՑԵՍ ԳԻՏԵՅԻ, ԹԵ ԵՂ ՍԱՍՈՒՆ ԴԱՇՏ Ե, ԴՈՒՐԱՆ,
ԶԸ ԳԻՏԵՅԻ՝ ՖԱՐ ԵՐ, ԿԱՊԱՆ:
ԵՆՏԵՂ, ՃԺԵՐ, ՎՈՐ ՆՈՐ ԵԼԱԾ՝ ԴԻՎԱՆԱԿԱՆ
ԻՐԵՆՑ ՆԵՏ ԿԱ՝ ՖԱՆՑ ԱԻԹԻՀԱՆԻ ԳԵՐԱՆ,
ԵՆՈՆՖ ԽՈՏԵ'Ր ՈՒՆԻՆ ԿԺԱՆ,
ԵՆՈՆՑ ԹՐԵՐԸ ԿԵԺԱԿԱՆ,
ԵՆՈՆՖ ԿԸ ԶԱՐԿԵՆ ՄԱՐԴՈՒ ՋԱՆ,
ՄԱՐԴՈՒ ԼԵՇ Կ'ԱՆԵՆ ՊԱՏՈՒՀԱՆ.
ԶԵՐ ԵՐԻԿՆԵՐ ԵՆՏԵՂ ԸՆԿԱՆ.
ՇԱՏ ՄԻ ԱՆԱՐԵՎ ԿԸ ԳԱ ԳԱՐՆԱՆ՝
ՍԱՍՆԱ ՏԵՂԱՑ ՀԵՂԵՂ ԿԸ ԳԱ,
ԶԵՐ ՄԱՐԴԵՐՈՒ ՖԻԹ ՈՒ ԱԿԱՆՋ՝
ԿԲԵՐԻ ԱԵԶ՝ ՅԵՂ ՈՒ ՀՈՐԹԱՆ:

8

ՄՆԱՑ: ՈՐ ՄԸ, ԵՐԿՈՒ՝ ՎԵՐԱ ԱՆՑԱՎ.
ՄԸՍՐԱ ՄԵԼԻՖ ՀԱՐՑՈՒՄ ԱՐԵՑ ԻՐ ՄԵՋԼԻՍԻՆ.
— ԿՈԶԲԱԴԻՆ ՎՈՐ ԳՆԱՑ ՍԱՍՈՒՆ՝
ԽԱՐՋ ՈՒ ԽԱՐԱՋ ԴԵՌ ՉԻ՞ ԲԵՐԵ:
ՋՈՒԱՐ ՏՎԻՆ ՄԸՍՐԱ ՄԵԼԻՖԻՆ ԹԵ— ՀԱ՛Լ, ԽՍՎԱ՛Լ...
ԿՈԶԲԱԴԻՆ ՅԵ'Տ ԵԿԱՎ ՄԸՍԸՐ:

---

*) *Ցերդ։*

Մելիք ասաց։— Կանչեք, թող գա՛, գա եսատեղ։
Կոզբադին ամոթու չ'եկավ։

Եդ վախտ, վոր Կոզբադին զորքեր սպանե՛լ ետու,
Ենոնց բարեկամներ ժողվան Մելիքի դուռ,
Դանգատ արին, ասին։
— Կոզբադնին տարեք Մելիքի Դիվանխանեն, դատեք։
Մելիք չորս մարդ նամբեց Կոզբադնի հետեվ։
— Գնացե՛ք,— ասաց,— զոռո՛վ բերեք։
Եդա մարդիկ գնացին, ասին։
— Վա՜յ, Կոզբադին, Մելիք հրամա՛ն արե՝ տի գաս
Վոր դու չը գաս՝ մենք քե տըփելո՛վ տի տանենք։
Ցերբ Կոզբադին առան, բերին Մելիքի դեմ,
Տեսավ՝ ենոր ակռեք քաշած՝ զարկած նակատ՝
Շա՛տ բարկացավ, ասաց։— Եդ ի՞նչ ե եղե քեզ։
Դու շատ կտրին կայիր եստեղ*)։
Ասիր տ'երբամ Սասուն թալնեմ,
Ո՞ւր են ապա, բեր մի տեսնեմ։—
Քառսուն-քառսուն երկեն կնիկ,
Քառսուն-քառսուն կոլոտ կընիկ,
Քառսուն-քառսուն կույս աղջիկ արմաղա՜ն։
Հապա ի՞նչպես գացիր Սասուն,
Եդքան կտրին մարդեր տարար։
Ո՞ւր են ապա եդ քո մարդեր։

Կոզբադին ասաց։— Թագավո՛ր ապրած կենաս,
Սասնա մեջ Դավի՛թ դուրս եկավ,
Նի՛ քո նրաման չը լսե՛ց։
Մեր զորք ջարդեց, յոթ տարվա խարջ չ'ետուր,
Մեզ ել եսպես խեղեց։
Ասաց։ «Դե յե՛լ, գնա՛,
Բարե՛վ տար դու Մսրա Մելքին,
Թող ի՛նք գա իր խարաջ տանի,
Ցես ձեզի խարաջ տվող չե՛մ։
Մըսըր ենոր, Սասուն մեզի։

---

*) Ցերդ ե։

Չե՞, չի՞ ուզի։ Ինչ կուզի՝ թող անի»։
Շա՛տ կտրին տըղա դառեր է Դավիթ։
Ենպես կտրին տըղա չըկա՛...

9։

Եդ վոր լսեց՝ Մելիֆ կատղա՛վ,
Կատղավ, արուն ելավ աչքե՛ր։
Ելավ, եկավ իր տուն, ասաց։
— Ա՛խ, մարե, ա՛խ, մարե,
Ցես են որ Դավթին տի սպանեյի՛, դու չը թողի՛ր։
Տեսա՞ր՝ հիմիկ ի՞նչպես վեր ինձ
Զորբայությունն կը բանացնի։
Ցես զուր են քո ասած արի։
— Հա՛,— ասաց մեր,— դու իմ ասած չ'արի՛ր։
Դու կոզբադնի՛ ասած արիր։
Մելիֆ ասաց։— Ցես քո՞ր ասածն եր՝ չ'արի։
Ասաց։— Վոր դու իմ ասա՛ծն անեյիր,
Տարին երկու անգամ դու տ'երթայիր իր տուն
Ու տեսնեյիր Դավթին։
Ու դեռ Դավի՛թն ել կանչեյիր՝ բերեյիր տուն։
Են վախտ կ'ուրախանա՛ր, կ'ասեր՝ աղբե՛ր կա ինձ։
Ել մարդ չեր կարնա քո վերա խոսի։
Մելիֆն ասաց։— Մա՛րե, յես արա՛ր եմ,
Դավիթ՝ հա՛յ է։ են վո՞նց կըլնի ինձի աղբեր։
— Մելիֆ,— ասաց Իսմիլ խաթուն,—
Ե, քո խելֆ չի՞ կըտրի։
Շատեր՝ արաբ ու հայ, կ'ըլնեն աղբեր։
Մեկ-մեկի տուն կ'երթան
Ու իրար շատ կ'ոգնեն։
Են Դավիթն ել մեր պահած-շահած տըղե՛ն եր։
Թե աղեկ վարվեյիր իր հետ՝
Դավիթ քո խոսք տի կատարեր...
Աղե՛կ, Դավթի մոտ չը գնացիր,
Դավիթն ել չը կանչի՛ր քո տուն,
Ել ի՞նչ ունեյիր Դավթի հետ,
Վոր ճամբեցիր՝ յոթ տարվա խարջ ուզիր։
Դավիթն ել տեղ հանեց։

— Մարե՛,—ասաց Մելիք,—
Դավիթ եդա բանե՛ր հանեց իմ գլուխ,
Վոր ամոթու մե՛ջ եդ քաղքին
Ձեմ կարնա գլուխ հանի դուրս:
— Մելի՛ք,— ասաց Իսմիլ խաթուն,—
Ել դու Դավթի հետ գործ չունե՛ս.
Ել բադալ բադալի՛ն ելավ.
Յես մեկ թուղթ կը նամբեմ Դավթին,
Դավիթ քեզ հետ կը բարիշցում.
Ել ենոր հետ դու գո՛րծ չ'ունես:
Ե՛, Մելի՛քն ե, կը դադարի՞:—Մարե՛,— ասաց.—
Քանի յես քո ասածն արի՝ վնաս տեսա:
Կամ յես զԴավիթ կը սպանեմ,
Կամ Դավիթ ինձի կը սպանի:
— Մելի՛ք,—ասաց Իսմիլ խաթուն,—իմ խո՛սք արա,
Դու չե՛ս կարնա զԴավիթ սպանի:
Վոր ասաց՝ դու չես կարնա զԴավիթ սպանի՝
Մելիք բարկացավ.
Ելավ, իր վազիրի ձեռնեն բռնեց.
— Ելի՛, երթա՛նք,— ասաց:

10

Մելիք գնաց մեջ քաղքին,
Քաղքի խելոք մարդիկ վողջ ժողովեց,
Առաջ եդա խելոք մարդկանց հարցմունք արեց:
Շատեր կային՝ ավերուքյուն չեյի՛ն ուզի.
Շատեր կային՝ վոր կ'ասեյին.— Մե՛լիք,
Դավիթ քեզ ի՞նչ վնաս կը տա իսկի.
Դավիթ միամիտ իր տան նստե,
Դո՛ւ յես ավերուքյուն արե,
Ելի դո՞ւ յես, վոր չես դադրի:

Մելիք եդ մարդերու հետ ել խորհուրդ չ'արեց.
Ջո՛կ մարդերու հետ զրուցեց.
Ասաց.— Դո՞ւք ինչ կ'ասեք.
Մենք Դավթի հետ կռի՛վ տ'ասնենք:
Ասին.— Մե՛լիք, եսոր Դավիթ քսան տարեկան ե.

Դավիթ դեռ չը գիտե կռվել.
Թե դու եսոր կռիվ չ' անես՝
Թե վոր Դավթին դու չը սպանես,
Են վոր ելավ երեսուն տարու,
Քեզ կը սպանի ու զՄըսըր ել կը զավթի.
Ադե՛կն ե՝ քո ամեն զորք ժողովես,
Երթաս Դավթի վերա կռիվ:
Թե որ դու մեզ ակա՛նջ դնես՝
Նդա ամե՛ն բանեն լա՛վ ե: Ես տարի թե չ' երթաս՝
Ել Դավթի վրա չե՛ս կարնա...

Մելիք դարձավ խելոք մարդերու վերա
Գոռա՛ց, կանչե՛ց, ասա՛ց.
— Կերթա՛մ Սասուն, Սասուն կավերե՛մ:
Ըզհոզ ու ջուր, ըզժողովուրդ կը վերում,
Քանդեմ, տանեմ
Մըսրա հետև նոր քաղաք մի շինեմ.
Ել թող Սասուն անուն չ'ըլնի մեջ աշխարհին:

ԴԱՎԹԻ ՅԵՎ ՄԵԼԻՔԻ ՄԵՆԱՄԱՐՏԸ

1

Իրեք կողմըն աշխարհի Մըսրա Մելքի ձեռն եր.
Մենակ մե՛կ կողմն աշխարհի Դավթի հայրենին եր—
Մելիք կանչեց, իրեն իշխաններ ժողվեց,
Հետո բերավ, տաշտ մի դրեց իրեն առջև,
Ածելի զարկեց իրեն նակտին,
Արուն թափվեց, տաշտ լցրեց:
Բացեց Մելիք մեկ թուղթ,
Են արնով գրեց զորականչ.
«Թղթիկ մի գրեմ հարավային*),
Թղթիկ մի գրեմ հյուսիսային,
Թղթիկ մի գրեմ արեվելյան,
Թղթիկ մի գրեմ արեվմտյան,
Իմ բոլո՛ր զորքին ու զորապետին,
Զենքեր վերցնո՛ղ, թող գա՛,
Պատերա՛զմ է.
Եկե՛ք, եկե՛ք.
Խա՛չ պարոններ,
Սակո՛ի գլխներ,
Լե՛ն նակատներ,
Թիա՛կ լեզվներ,
Եկե՛ք վեր գյավուրին.
Պատերա՛զմ է, պատերա՛զմ...
Ինձ պետք են հազա՛ր—հազար անբեղ, անմորուս
զինվոր.

---

*) Ցերգ է.

Ինձ պետք են հազա՛ր—հազար են մոր մինուճա՛ր
զինվոր.
Ինձ պետք են հազա՛ր—հազար թխամազ մորուսով
զինվոր.
Ինձ պետք են հազա՛ր—հազար սիպտակ մորուսով
զինվոր.
Ինձ պետք են հազա՛ր—հազար կարմիր մորուսով
զինվոր.
Ինձ պետք են հազա՛ր—հազար սիպտա՛կ ձիավոր,
Ա՛խ, սիպտա՛կ ձիավոր.
Ինձ պետք են հազա՛ր—հազար կարմի՛ր ձիավոր,
Ա՛խ, կարմիր ձիավոր.
Ինձ պետք են հազա՛ր—հազար սեվ-սե՛վ ձիավոր,
Ա՛խ, սև-սև՛ ձիավոր.
Ինձ պետք են հազա՛ր—հազար փո՛ղ փչողներ,
Թմբո՛ւկ զարկողներ,
Ա՛խ, թմբո՛ւկ զարկողներ.
Եկե՛ք, եկե՛ք, ինձ պետք են բյուր-հազար հետևակ
զինվոր,
Ա՛խ, հետևա՛կ զինվոր:
Եկեք, եկեք վեր գյավուրին.
Պատերա՛զմ է, պատերա՛զմ»:

Քիչ ժամանակ վերա անցավ.
Մըսրա Մելիք տեսավ,
Վոր չորս կողմեն ոգնականներ հասան:
Են ժամանակ ելավ Մելիք,
Ձենով ասաց.
«Եկա՛ն, վոր եկան լոտրի՛կ ջահելներ*),
Եկա՛ն, կո հարի՛ր հազար համար.
Եկա՛ն, վոր եկան թառրե՛ղ ջահելներ,
Եկա՛ն, կո հարի՛ր հազար համար.
Եկա՛ն, վոր եկան մորո՛ւս կնդուկներ,
Եկա՛ն, կո հարի՛ր հազար համար.
Եկա՛ն, վոր եկան փողե՛ր փչողներ,

---

*) Ցերդ և։

Եկա՛ն, կո յո՛ք թագավորներ՝ չորս կողմ աշխարհեն
Եկա՛ն, վոր եկան իմ կտրի՛ն ոգնողներ,
Պատերա՛զմ է, Մելիք, պատերա՛զմ...»

Ենպես, անքիվ ու անհամար ձիավորներ եկան,
Վոր Մսրա գետ հասած ժամանակ՝
Առաջին եկողներ ջրի կե՛ս խմեցին,
Միջին եկողներ ջրի մնացա՛ծ կես խմեցին,
Հետո եկողներ գետի քարե՛ր լիզեցին,
Մնացած հեծելներ ծարա՛վ մնացին:
Եկան հասան Մըսրա դաշտին, վրան զարկին
Ու հարցում արին Մըսրա Մելիքին.
— Մեր դուշման ո՞վ է, ո՞ւմ հետ տի կռվենք:

Պատասխան տվեց.— Դավիթ անունով Սասնեցի՛ն.
Ինձի շատ ու շատ մարդ է կոտրե.
Ոգնությո՛ւն տվեք,
Կռի՛վ տ'երթամ եդ Դավթի դեմ:

2

Եդ գիշեր Իսմիլ խաթուն իրեք երազ տեսավ.
Քուն վոր փախավ՝ ելավ, եկավ,
Տըգի բարձի վերեվ նստեց, ասաց.
— Մե՛լիք, վո՛րդի, մեկ ե՛լ կ' ասեմ,
Դու մի՛ երթա Դավթի վերան:
Ցես ես գիշեր երա՛զ տեսա.
Մըսրա աստըղ մուք, խավար եր,
Սասնա աստըղ լու՛ս, պայծա՛ռ եր.
Ու մեկ դի՛ր ել երազ տեսա՝
Մեր Մըսրա ձին փախեփա՛խ եր,
Սասունա ձին հասեհա՛ս եր.
Ինն մեկ դի՛ր ել երազ տեսա.
Սասնա երկիր արե՛վ եր, լո՛ւս եր, տա՛ք եր.
Մեր Մըսրա երկիր ա՛մպ եր, մո՛ւքն եր,
Մը՛ժ եր, անձրե՛վ կը գար:
Հեղեղ կայնավ. հեղեղի ջուր դառավ արուն,

Ու ջանդամներ մեջ կը տաներ...
Արի, մի՛ երթա վեր Դավթին,
Դու իմ խոսքին ակա՛նջ արա:

Մելիք ասաց.— Սո՛ւս, խարեբա,
Դու քեզ համար կը քնես՝ երազ ինձ համա՞ր
կը տեսնես:

Տ'երթա՛մ Սասնու վերան:
— Վոր տ'երթաս,— ասաց իր մեր,
Ցես ե՛լ տի գամ, մենակ չե՛մ թողնի քեզ:
Մելիք ասաց.— Դու կընի՛կ ես, մի՛ գա:
— Կը գա՛մ,— ասաց,— յես չե՛մ դադրի:

Ելավ Իսմիլ խաթուն,
Ժողվեց քառասուն աղջիկ, քառասուն կնիկ,
Ու երկու ձեռք շավար քաշող,
Ու երկու ձեռք զուռնա փչող առավ,—
Եդ աղջիկներ խաղալո՛ւ ապով առավ,—
Մելիքի հետ գընաց Սասուն:

Մելիք իր զորքեր առավ,
Ինք ել ընկավ զորքի առաջ
Ու դուրս ելավ Սասնա վերա:
Եկավ ու մեջ Լեռա դաշտին բանա՛կ դրավ
Ու անհամար վրա՛ն զարկեց:
Ենոր բանակ ենքան եր մեծ,
Վոր չուր հետինն եկավ, հասավ,
Առջին եկող քարեր քաղեց, ավազ մաղեց,
Ու գետ կըտրեց...

Եդտեղ Մելիք թուղթ մի գրեց Դավթին.
— Դավի՛թ, կռի՛վ տ'անես, արի՛ իմ դեմ,
Չե հա՝ տի տամ յես իմ զորքեր քաղքի վերա
Ու ինչքան վո՛րձ կա՝ տի սպանեմ,
Կրա՛կ տի տամ Սասնա քաղաք ու տի վառեմ,
Զրհեղեղի տակո՛վ տ'անեմ,
Սասնա քար-հող քշեմ գերի:

Առան եդ թուղթ, բերին, տվին Հովանի ձեռ:
Ձենով Հովան կարդաց, ասաց·
— Ձա՛նըմ, եսա ո՞ւմ վերան է՝ կը գա կըռիվ
Եսքան զորքեր ժողվե-եկեր է, ի՞նչ տ'անենք:
Վոչ մա՛րդ ունենք, վոչ զո՛րք:
Կը լա Հովան՝ մորուսը վե,
Կը թափի տաք արտասուքներ:
— Հե՛, բարերա՛ր աստված,— կ' ասի,—
Դո՛ւ ոգնություն հասնես մեզի:

Սասուն եդ թուղթ վոր կարդացին՝ ահ-դող ընկավ
Ամա Դավիթ դեռ չեր լսե:

3

Ձենով Հովան Մելքի գրած եդ թուղթ առավ՝
Գնաց Վերգոյի մոտ:
Ցերբ վոր Վերգոն լսեց՝
Մելիք մեծ զորքերով ելե՛ր, եկե,
Ձարկե վրան, ասաց·
— Հովան, մեր ձեռքեն չի՛ գա, վոր կռվենք,
Բերենք Դավթին, նստենք, քե՛ֆ մի անենք,
Խարենք Դավթին, խմեցուցե՛նք,
Ելնենք, տանենք կընիկ, աղջիկ,
Վոսկի-արծաթ տանք Մելիքին,
Անցնենք ենոր թրի տակով,
Բալքի Մելիք խղնա մեզի:

Ելավ Ձենով Հովան, կեր-խում սարքեց:
Դավթին կուշտ-կուշտ գինի տվին,
Ցոթը կանթեն պղինձ լցրին,
Բերին, դրին իրենց միջև:

Թորոսն ել եդ քեֆին եկավ,
Ու իր միտ վե՛ ասաց·
«Դավիթ տաքարո՛ւն տղա յե,
Ինքզինքը մեջ կռվին վնաս կը տա,
Խմեցուցենք՝ թող տուն մնա···»
Դարձավ ասաց·— Դավիթ,

Թե եդ պղինձ գինին խմես՝ Մեերի տղե՛ն ես,
Թե չը խմես՝ բին ես:
— Քեռի՛,— ասաց,— լի՛ց մի տեսնենք եդա բարոշ:
Քեռին պղինձ լցրեց լիք—չուր բերան:
Դավիթ վերուց, դրեց բերնին,
Խըմե՛ց, խըմե՛ց, խլսուց թողեց,
Պղինձ ընկավ գետին, ծակվավ:
Դավիթ ենպես մի գինովցա՛վ— պառկավ, քնա՛վ:
Քեռի Թորոս ինք ելավ, թմբուկ զարկեց, ասաց.
«Ելե՛ք, ելե՛ք*),
Քոթո՛ք, մոթո՛ք,
Անուշ Քոթոթ,
Վժիկ Մըիտ,
Ճընընդափորիկ,
Ու խոր Մանուկ,
Ու խոր Գուսան,
Ու Ճոռ Վիրապ,
Ելե՛ք, ելե՛ք,
Եսոր լավ է, քանց ամեն որ,
Երթանք, տեսնենք—
Շատեն՝ շա՛տ, ու քչեն՝ քիչ.
Ցա աստված եդ մարդո՛ւն կը տա,
Ցա թե՝ աստված կը տա մեզի»:
Քեռի Թորոս երեսուն ինը վրան վերցուց,
Առավ իր տան անդամներուն,
Ելան, հեծան գնացին.
Գնացին Լեռա սարի գըլուխ,
Իրենց վրաններ զարկեցին:
Երեսուն ինը վրան զարկեց Քեռի Թորոս,
Մնաց, չուր լուս բացվի:

4

Քեռի Թորոսի կընկա, Սանդուխտի սիրտ լցվավ.
Սանդուխտ միտ վե ասաց.

---

*) Ցերդ և։

«Թորոսին ենտեղ կը սպանեն,
Մեր տղեքնե՛ր ել կը սպանեն,
Կը գան, մեզի՛ ել կը սպանեն,
Մեր քոք կը բերեն, կը կտրեն»:
Եկավ Սանդուխտ նստավ,
Լացեց Դավթի գլխու վերեվ:

Ենոր արտասուքն որ թափավ Դավթի երես,
Դավիթ զարթնավ, տեսավ՝ ասաց.
— Ցա՜, նանե՛, աստված խե՜ր անի.
Հալա յես վո՛ղջ եմ—դու ինչի՞ կը լաս:
— Ա՛յ Դավիթ,— ասաց.— Լա՛ռ, գրո՛ղ քեզ խեղդի
Կոզբադնի զորք տվիր, ջարդիր.
Մըսրա Մելիք անթիվ զորք ե քաշե, եկե.
Քեռիդ ելավ, գընաց դեմ ենոր:
Քեռուդ Մելիք տի ըսպանի
Ու գա, մեզի ել տի ըսպանի,
Մեր քոքըն տի կտրեն,
Մեզի ամեն գերի տանեն:

Դավթի հերսըն ենպե՛ս ելավ,
Վոր քո՜ւն, գինովուքե՜ն անցան:
Ելավ, իր նետ-աղեղ առավ,
Ասաց.— Նա՛նե, մի՛ վախենա,
Հիմա կ'երթամ, յես Մելքին պատասխան կը տամ:
Ելավ գնաց...

5

Գնաց Ձենով Հովանի մոտ, ասաց.— Հրողքե՛ր Հովան,
Ինձ զենք ու ձի մի տուր, կռիվ տ'երթամ,
Ձենով Հովան ասաց.— Գընա՛,
Գոմի ձիերուց մեկ ջոկի,
Ոդի թրերուց ել՝ թո՛ւր մի ջոկի:
Վերգուն եդտեղ ծաղրով ասաց՝
— Դավիթ, վոր Մելիք կը սպանես,

ենոր ականջ ինձ նվեր բեր:
Դավիթ ըռկավ, ամա բան չ'ասաց:
Դավիթ գնաց, գոմից կռուտ քուռա'կ մ'առավ,
Թրերեն ել ժանգոտ բուր մի առավ,
Ձին հեծավ, քըշեց, գընաց:

Եդ վախտ արտատեր Պառավ ելավ դեմ Դավթին,
Ասաց·— Դա'վիթ, վա'ղդի, ի՞նչ տ' անես:
Ասաց·— Կ'երթամ վեր Մըսրա Մելիքին կռիվ:
Պառավ խնդաց Դավթի վերա, ասաց·
— Դավիթ, ծո՞ւռ ես, վոր եդոնցով կ'երթաս կռիվ·
Բա ափսոս չի՞, վոր դու են հոր տղան ըլնես:
Դավիթ ըռկավ, ասաց·— Պառա՞վ,
Հապա ինչո՞վ երթամ կռիվ·
Կ'ուզես՝ անթարոցի՛ց, շիշի՛ց,
Ի՛նչ վոր ունես՝ հագի՛ր արա,
Բե՛ր, ենոնցո՛վ երթամ կռիվ:
Պառավն ասաց·— Դավիթ, մեռնե՛մ քո արևուն,
Մի՛ բարկանա, կ'երթաս, քեզ բա՛ն ասեմ՝ նո՛ր գընա:
— Պառավ, դե, շո՛ւտ, ասա տեսնեմ:

Պառավ ասաց·
«Մագյար չը կա՞ր քո հոր Թուրն կեծակին*),
Մագյար չը կա՞ր քո հոր Քուռկիկ Ջալալին,
Մագյար չը կա՞ր Քուռկուն Նալն պողպատի,
Մագյար չը կա՞ր քո հոր Գյամն պողպատի
Վոր դնես Քուռկիկ Ջալալու բերնին:
Մագյար չը կա՞ր քո հոր Թամբը սադաֆի,
Ջանգուներ իր վերան կախուկ են վոսկի,
Մագյար չը կա՞ր քո հոր Գուտն ի գլխին·
Մագյար չը կա՞ր քո հոր Կապեն ղադիֆե·
Մագյար չը կա՞ր քո հոր Քամարն ի մեջքին·
Մագյար չը կա՞ր քո հոր Շալվարն ի վոտին··
Մագյար չը կա՞ր քո հոր Կոշիկն ի վոտին·

---

*) Ցերդ և։

Մագյար չը կա՞ր քո հոր Խաչ Պատերազմին
Վեր իր աջ թևին։
Ասաց։— Պառա՛վ, եղ բոլոր վո՞րտեղն ի։
Պառավն ասաց։— Դավի՛թ, քո հրոդբեր
Անե՛ծք դրեց ենոր վերան,
Ով քեզ քո հոր բաներ, նշա՛նց կը տա։
Ասեմ՝ ենոր անեծքի տակը տի մնամ։
Ելի՛ր, քանի դու եդապես շիվար եղար—
Մըսրա Մելիքն եկե, քեզնից կռիվ կ'ուզե,
Դընա, զորի՛, Հովան թող դո՛ւրս հանի։
Ամա խաթրով Հովան չի՛ տա եդա բաներ։
Տ'երթաս, ենոր փողպատ պինդ տի բռնես
Ու զորովե՛ն տ'առնես։

Ց

Դավիթ գնաց հրոդբոր մոտ։
Իր ձեռ եթալ ու հրոդբոր փողպատ բռնեց,
Պինդ թափ ետու, ենոր վոտքեր հոդից կտրեց։
Ասաց։— Ցես կուզեմ քենե իմ հոր Թո՛ւրն
Կեծակին*)
Ցես կուզեմ քենե իմ հոր Ռուկի՛կ Զալալին՝
Վեր վոտին Նալն պողպատի,
Ցես կուզեմ քենե Սա՛նձը պողպատի,
Որ դնեմ Ռուկիկ Զալալու բերնին։
Ցես կուզեմ իմ հոր Թա՛մքը սադաֆի՝
Վերան կախուկ զանգուներ վոսկի։
Ցես կուզեմ քենեն իմ հոր Գուտն ի գլխին,
Ցես կուզեմ քենե իմ հոր Կապա՛ն դադիֆե,
Ցես կուզեմ քենե իմ հոր Քամա՛րն մեջքին,
Ցես կուզեմ քենե իմ հոր Շալվա՛րն ի վոտին,
Ցես կուզեմ քենե իմ հոր Կոշի՛կն ի վոտին։
Ցես կուզեմ քենե իմ հոր Խա՛չ Պատերազմին։
Կրտա՛ս՝ տո՛ւր խաթրով—
Ձե՛ս ի տա՝ կը կայնեմ, զորովե՛ն կառնեմ։

---

*) Ցեկրգ։

Հրոդբեր դարձավ ասաց.
— Են բերան կոտրի, վոր քեզ սովորցուց.
Են քո գիտցած չե՛ր, քեզի ուստա՛ կա:
Են տարին, ինչ Մհեր մեռավ—
Շեմքի տակ ենոր գեստեր խորեցի:
Դե գնա՛նք, հանեմ:

Գնացին, հանին:
Դավիթ բերեց տուն, եդ գեստեր հագավ:
Հրոդբերն ասաց.— Մեռնե՛մ քեզ, Դավիթ,
Ի՞նչ հոր զենք-զրահ, կո՛, են ներքնատան:
Քառասուն աստինան սանդուխք ցած իջնես,
Նո՛ր քո հոր զենքեր են տեղեն հանես:
Թե եդ զենք վերո՞ւս՝ դու կարնաս կռվես.
Թե չե՛՝ մի՛ երթա, չե՛ս կարնա կռվես:

Դավիթ եր՝ գնաց, իջավ ներքնատուն,
Իր հոր զենք-զրահ տեսավ պատեն կախ:
Եդ ամեն գրկեց, քաշեց իր թեվին,
Դուրս հանեց, բերեց Զենով Հովանին:
Զենով Հովան եդ բան տեսավ, ուրախացավ:
Ասաց.— Բալքի Դավիթ իրա հոր տեղ բռնի:
Ցես Մհերի աղբե՛ր եյի՝ չե՛յի կարնա դուրս բերեյի,
Ամա Դավիթ գրկեց, բերեց:

7

Զենով Հովան ուրախացավ, ասաց.— Դա՛վիթ,
Են որից, ինչ քո հեր մեռավ, մինչև եսոր,
Ցես քո հոր ձին փակեր եյի մեծ գոմ,
Դուռն ել շարե. հերթիկե՛ն խոտ ու ջուր կը տայի:
Մըսրա Մելքի ահուց չե՛մ իշխենա
Որ դուռ բանամ, ձին հանեմ դուրս:
Տարավ Դավթին Զենով Հովան,
Հեռվանց գոմի դուռ շա՛նց տվեց, ասաց.
— Դավիթ, քո հոր ձին ենտե՛ղն ե.
Թե դու կարնա՞ս՝ գնա քաշի, հան դո՛ւրս:

Դավիթ դուռ քանդեց, բացեց, մտավ ներս:
Ձին Միհրի զենք-զրահներ տեսավ թե չե,
Ճանաչեց, ուրախացավ,
Տոնիկ տվեց ու խրխնջաց:
Դավիթ մոտիկ գնաց ձիուն, մազեր բռնեց,
Աչքեր մաժեց, քամակ մաժեց.
Ձին հոտոտաց, ձին լա՛ց եղավ:
Ելավ Դավիթ, զձին գոմեն քաշեց, հանեց:
Գոմեն ելան՝ ձին ճանաչեց, վոր Միհր չեր:
Գինդ ափացի՛ մ'եզար գետին,
Կրակ ետու վոտի տակեն:
Աստծու շնորհով լեզու առավ, ասաց.
— Հողածին, հո՛ղ ես, քեզ հո՛ղ տի դարձնեմ.
Ինձ ի՞նչ տ'անես:
Ասաց.— Ցես քեզի տի հեծնեմ:
Ձին ասաց.— Քեզ ենպե՛ս տի բարձրացուցեմ,
Տի տամ արեգական— վառեմ:
Ասաց.— Կոլորվե՛մ քո փորի տակ:
Ձին ասաց.— Քեզ տի տանեմ սար ու ձորեր,
Ձարնեմ քարեր, ծառեր՝ փշրեմ:
Ասաց.— Տ'ոլորվեմ, ելնեմ քո մե՛ջք:
Ձին ասաց.— Հա՛յ գիդի մարդ,
Դու ինձ տե՛ր, ցես քե ձի՛ ըլնեմք:
Դավիթ ձիուն ասաց.
— Քե տեր չը կար՝ ցես քե տե՛ր կ'ըլնեմ,
Քե թիմարող չը կար՝ ցես քե թիմարող կ'ըլնեմ:
Քե կեր տըվող չը կար՝ ցես կեր տըվո՛ղ կ'ըլնեմ:
Դարձավ Հովանին՝ ասաց.— Հրողքեր,
Ցես կուզեմ քենե թա՛մքը սադափին:

Թամք բերեց Հովան, իր միտ վե ասաց.
— Ինչ Միհր եդ թամք կը դներ ձիուն,
Ինչ թանգ կը կըքեր,
Ձիու առաջի երկու վոտ գետնուց կը կտրեր:—
Ասաց.— Թե Դավիթ ձիու վոտ վերուց,
Թող երբա կռիվ.
Թե վոր չը վերուց՝ չի՛ կարնա երթա:
Դավիթ թամք դրեց ձիու քամակին

Ու բանգ վոր կբեց,
Զիու չորս վատն ել գետնուց կտրեց։
Ասաց։— Հրոդբե՛ր,
Տո՛ւր ինձ Մհերի խաչ Պատերազմին։
Հրոդրերն ասաց։— Ցես չե՛մ կարնա, տա։
Թե արժա՛ն ես՝ կը գա բո բ-ևին,
Թե արժան չես՝ չի գա բո բ-ևին։
Եղտեղ աստծու հրամանով
Խաչ Պատերազմին իջավ վեր աջ բեվին։
Դավիթ ելավ հոր ձին հեծավ,
Իր հոր ջոջ սազ ետու զարկել,
Փչեց իր հոր Պղլորի փող,
Անգամ մի իր դռան առաջ գընաց, եկավ։
Սասուն վոդջ ժողովավ եղտեղ։

8

Ձենով Հովան կայնեց, լավ մի աչբեց տղին,
Սիրտ մըռմըռաց, ըսկսեց լալ, յերգով ասաց։
«Ա՛խ-վա՛խ, ախ-վա՛խ, հազա՛ր ափսոս*),
Ափսո՛ս, հազա՛ր ափսոս Բուռկիկ Զալալին,
Ա՛խ, հալա Բուռկիկ Զալալին,
Ափսո՛ս, հազա՛ր ափսոս Թամբը սադափին։
Ա՛խ, հալա Թամբը սադափին։
Ափսո՛ս, հազա՛ր ափսոս Սանձը պողպատին,
Ա՛խ, հալա Սանձը պողպատին։
Ափսո՛ս, հազա՛ր ափսոս Գուտն ի գլխին,
Ա՛խ, հալա Գուտն ի գլխին,
Ափսո՛ս, հազա՛ր ափսոս Կապան ղադիփե,
Ա՛խ, հալա Կապան ղադիփե։
Ափսո՛ս, հազա՛ր ափսոս Բամարն ի մեջբին,
Ա՛խ, հալա Բամարն ի մեջբին։
Ափսո՛ս, հազա՛ր ափսոս Կոշիկն ի վոտին,
Ա՛խ, հալա Կոշիկն ի վոտին,
Ափսո՛ս, հազա՛ր ափսոս Խաչ Պատերազմին,
Ա՛խ, հալա Խաչ Պատերազմին։

---

*) Բերդ։

Զենով Հովան Դավթին չեր տեսնի,
Դավիթ իր ձիուն նստած՝
Զեռ զարկեց վեր թրին,
Տի քաշեր, զարկեր հրողբոր,
Զենով Հովան կանչեց.
«Ափսո՜ս, հազա՛ր ափսոս մեր թառլան Դավիթ*),
Ա՜խ, հալա մեր թառլա՛ն Դավիթ.
Ափսո՜ս, հազա՛ր ափսոս յեղնիկն ջահել,
Վոր գնաց մեր Սասնա տնեն»:

Վոր ասաց՝ «Ափսո՜ս մեր թառլան Դավիթ»,
Դավիթն ասաց.— Հրողբե՛ր,
Դու մատա՛ղ ըլնես եդա մե՛կ խոսքին.
Եդա մեկ խոսք վոր չ'ասեյիր՝
Քո վիզ տի զարկեյի.
Տըվի՛ եդա մեկ խոսքի խաթեր:
Ինչի՞ առաջ ամե՛ն բանի ափսոսացիր— հետո ինձ.
Առաջ ինձի՛ ափսոսայիր, ու հետո ենոնք:
Ցե՞ս եմ ափսոս, թե՞ Թուր կեծակին.
Ցե՞ս եմ ափսոս, թե՞ Քամարն ի մեջքին:
Ասաց.— Դավի՛թ, քո գլխուն մեռնեմ,
Ախր յես քո ապով կը լամ:
Դավիթ ձիուց իջավ տակ,
Պագեց իր հրողբոր ձեռ, ասաց.
— Հրողբեր, հալա՛լ արա, ինչ ամաղ տվեր ես ինձի.
Հրողբեր Հովան եդ բան վոր լսեց,
Մհերի ջոջ սա՛զ ետու զարնել,
Մհերի թմբո՛ւկ ետու ծեծել,
Մհերի փո՛ղ ետու փչել:
Հարսներ եկան, դեմ կայնան,
Խաղով ասին Դավթին.
«Դավիթ, երբալ քեզ չ'ըլնի, դառնա՛լ քեզ ըլնի*).
Դառնա՛լ քեզ ըլնի, մեր աղբեր Դավիթ.
Զուր հիմիկ քեզ հարսնություն չե՛նք արեր—
Նո՛ր տի հարսնություն անենք, մեր աղբե՛ր Դավիթ.

*) Ցերգ։

Նա՛ր տի քո ձեռքին ջո՛ւր լըցնենք, մեր աղբե՛ր
Դավիթ·
Քո վոտներին սո՛լ տի դնենք, մեր ախպե՛ր Դավիթ·
Քեզ հարսնությո՛ւն տ՛անենք, մեր աղբե՛ր Դավիթ»:

9

Դավիթ ելավ, թռավ վեր իր ձիուն,
Աստծու անուն տվեց,
Դարձավ, առավ խաթրը քաղքըցոց,
Դարձավ, առավ խաթրը գեղացոց,
Առավ Դավիթ խաթրը մալդ ու կընկտոց, ասաց·
— Աղբերնե՛ր, քուրե՛ր, դուք մի՛ վախենաք*),
Աստծու կամքով կ'երթամ յես կռիվ·
Ո՛ քուրեր, դուք կացե՛ք բարով,
Դուք ինձի քուրությո՛ւն եք արե·
Ո՛ մերեր, դուք կացե՛ք բարով,
Դուք ինձի մերությո՛ւն եք արե:
Բարի՛ դրկիցներ, դուք կացե՛ք բարով,
Դուք կացե՛ք բարով մեծ ու պստիկով·
Իմ դուռ-դրկիցներ, ձեր երես շա՛տ եմ թռեր,
Ինձ հալա՛լ արեք:
Բարի տանտիկիններ՛ը, ինչ հա՛ց կը թխեք,
Դավթի անուն հիշեցեք:
Զահելնե՛ր, դուք ե՛լ, ինչ վոր քե՛ֆ կ'անեք,—
Դավթի անո՛ւն հիշեցեք:
Իմ քուրե՛ր, մերե՛ր, իմ լա՛վ դրկիցներ,
Մնացե՛ք բարով:

10

Յերբ որ Դավիթ ես խոսք կ'ասեր՝
Իր մամիկ, Մըհերի մեր, Դեղձուն Ծամ,
Իր սուգեն ելավ սգահան:

Են ժամանակեն վոր Մհեր մեռեր եր,
Հիւ մամիկ մտեր եր յոթոտանու հետև,
Ծառա մի կար,
Ենոր հաց կը տաներ:

---

*) Ցերդ։

Են որ, վոր Դավիթ եկավ
Մհերի սազ ետու զարկել,
Եդ ծառան հաց կը տաներ Մհերի մոր:
Մհերի մեր ասաց·
— Ես Մհերի սազի՛ ձեն կ'առնի իմ ականջ,
Ես ի՞նչ բան ե:
Ասաց·— Խանում, հալա դու դեռ չե՛ս հասկացե,
Դավիթ եկե, իր հոր շորեր հագե,
Իր հոր զենքեր կապե վեր ի՛ր,
Իր հոր Քուռկիկ Ջալալին հեծե,
Իր հոր սա՛զն ե, վոր կը զարկի,
Կռի՛վ կ'երթա Մելիքի դեմ:
Մհերի մեր՝ եդ լսեց, թողեց իր սուգ,—
Ելավ, իրան տեղեն կայնեց, ասաց·
— Իմ մուրազ կատարվեց, տ'ելնեմ դուրս:
Գնաց, գլուխ փանջարեն վեր կախեց,
Աչքեց, տեսավ՝ նորմանուկ Դավիթ
Մհերի ձին հեծե, կայնե: Կանչեց·
— Քուռկի՛կ Ջալալին, մեռնե՛մ քե, մուրա՛զ:
Դավիթ շա՛տ զարմացավ, կայնեց:
Դեղձուն շարունակեց·— Քուռկի՛կ Ջալալին*),
Իմ Դավիթ հե՛ր չ'ունի՝ անես հերուքյուն·
Իմ Դավիթ մե՛ր չ'ունի՝ անե՛ս մերուքյուն,
Իմ Դավիթ աղբե՛ր չ'ունի՝ անե՛ս աղբերուքյուն,
Իմ Դավիթ դու տանես իր հոր Կաթնով Աղբուր.
Դավիթ ձիուց իջնի, իջնի ջուր խըմի,
Իմ Դավիթ դու տանես իր հոր փորձաքար—
Դավիթ իր թուր զարկի, զարկի սան, փորձի:
Քուռկիկ, քե ամանա՛թ իմ նորամանուկ Դավիթ:
Ձին վիզ թեքած լսեց, ասաց·— Շա՛տ լավ, մամիկ:
Պառավ իր խոսք դարձուց Դավթին, ասաց·
— Դավիթ, քո ողորմած հեր իր ձիուն
Ամեն ճար ու ճամբա շանց ե տվե,
Ձին եդ ամեն գիտի:
Դավիթն ասաց·— Շա՛տ լա՛վ, մամիկ:

Ու եկավ Դավիթ՝ քըշեց Քուռկիկ Ջալալին:

*) Ձերդ։

Քշեց, գնաց մեջ հոր Ծովասարին.
Դավիթ որ Սասունեն ելավ՝
Ենպես մշո՛ւշ մի, դումա՛ն մի դրեց,
Վոր Դավթի աչք ըսկի ճամբեն չե՛ր ջոկի:
Ամա Քուռկիկ աղավնիկի՛ նման թռավ:
Դավիթ ասաց.— Զա՛նըմ, եդ ե՛լ աստծու բան ե:
Կայնեմ, թողնեմ Քուռկիկ Զալալու կամքին,
Ուր որ երթա՛, թող երթա՛:
Քուռկիկ Զալալի՛ն եր, գընա՛ց, գընա՛ց,
Են յո՛թ որվա ճամբան մի սհաթվա՛ն անցավ:
Ելավ բարձրիկ սարի գլուխ.
Վոր ելավ եդ սարի գլուխ, կանգնեց.
Կանգնեց վեր են Կաթնաղբրին:
Ամբ լացվավ, դուման բացվավ.
Քուռկիկ չոքեր եզար գետին, մնաց.
Դավիթ գիտցավ, թե ձին դադրավ, ասաց.
— Հեյ-վա՛խ, Քուռկիկ Զալալին,
Քո վի՛զ կստրի,
Ցես կ'ասեյի՝ դու ինձ արնի գետե՛ր տ'անցուցես,
Ես պո՛ւտ մի ջուր ե—ինձ չե՞ս կարնա անցուցես:
Ես տեղ վոր ես պե՛ս կ'անես՝
Բա մեջ կովին ի՞նչպես տ'անես.
Ի՞նչպես տ'երթամ Մըսրա Մելիքի դեմ կռիվ:
Ասաց, զանգուն եզա՛ր,
Ձիու կողաշար կոտրեց:
Ձին ըոկավ, ասաց.
— Կարնա՛մ զքեզ զարնեմ արեգական երես,
Համա քո հոր խաթրին չե՛մ իտա:
Դավիթ ըոկավ, քաշեց իր թուր,
Ու Քուռկիկի վիզ տի կտրեր.
Թուր մինչև կես քաշեց՝
Են դեհեն քամի՛ մի զարկեց ենոր ճակատ.
Դավիթ ուշքի եկավ— լսեց ձիու ձեն:
Ձին ասաց.
— Ես քո հոր Կաթնաղբո՛ւրն ե.
Իջի՛ տակ, ջո՛ւր խմի:

Իջի պո՛ւտ մ'ել ջրից տուր իմ կողաշարին:
Դավիթ իջավ, ձիու գլուխ պագեց,
Պուտ մի ջուր ետու ձիու կողաշարք:
Դավիթ ձին երդդ խոտերի մեջ արածա,
Ինքն ել աղբուրեն ջուր խմեց,
Պառկեց, քնեց, հանգստացավ:
Ձին ել կանգնեց արևու դեմ՝
Հով արեց վերան:

12

Քնից ակահավ, ի՞նչ տեսավ,— հզորացե,
Իր հոր հագուստ հագիվ կը գա վերան:
Ձին խրխնջաց, եկավ, կանգնեց Դավթի առաջ:
Դավիթ սանձ դրեց բերան, ելավ, հեծավ:
Խնդացավ, քըշեց, գնաց:
Ճամբին տեսավ մեկ երկաթե սուն:
Ձին ասաց.— Դավի՛թ,
Են սուն վոր կը տեսնես՝ ենի քո հոր փորձաքա՛րն է:
Թե դու մեկ դարբից կտրեցիր՝ կ'երքա՛նք կռիվ.
Ը կտրեցիր՝ չե՛նք երթա կռիվ:
Դավիթ թուր քաշեց, մեկ դարբից եզարկ.
Թուր կեծակին են սուն կտրեց, մեջեն անցավ:
Երկաթե սուն է—եդ սուր վոր մեջեն անցավ՝
Կտար վեր կտորի՛ն մնաց.
Դավիթ չ'իմացավ թե թուր կտրեր անցեր է.
Նոթեր կիտեց, ենոր սիրտ թոռոմավ:
Ասաց ձենով.
«Վոտի՛կ, դու թո՛ւլ կենայիր*).
Ը գայի՛ր, հասնեյի՛ր եստեղ:
Վոր իմ դարբ զարկեյի՛ եդ սան,
Ը կտրեյի՝ իմ սիրտ թոռոմե՛ր:
Ձեռի՛կ, դու կոտո՛ր կենայիր,
Վոր ուժ ենքան չըկա՛ր քեզի,
Զարնեյիր, են սուն շո՛ւռ տայիր,
Իմ սիրտ եսպես չը թոռոմե՛ր:
Աչքի՛կ, դու խավա՛ր կենայիր,

*) Ցերդ։

Վոր հսա բան չը տեսնեյիր,
Ինչի՞ երկաթե սուն չը կտրեյի,
Վոր գնայի կռիվ դեմ Մըսրա Մելֆին»:

Մեկ ել՝ Դավիթ տեսավ՝ քամի՛ ելավ.
Եդա քամին փոթորկի՛ պես եկավ,
Եկավ, զարկեց երկաթե սուն,
Սուն շո՛ւռ առավ:
Դավիթ գնաց, տեսավ,
Իր զարկած տեղ թուր կսլե՛, անցե:
Խնդացավ, ասաց.
«Վոտի՛կ, դու ուժո՛վ ըլնես*),
Դու բարո՛վ եկար հստեղ.
Վոր յես զարկեցի՛ ես սուն կտրի.
Ձեռի՛կ, դու կանա՛չ ըլնես,
Թող քո ուժ ե՛լ ավելի ըլնի,
Վոր Մելֆի դեմ գնա՛մ կռիվ.
Աչքի՛կ, դու լուսո՛վ ըլնես,
Վոր ես բան տեսար»:

Ասաց, քշե՛ց իր ձին,
Են քարերուց, աղբրներուց, են սարերուց
Հալալուքե՛ն ուզեց,
Մնաք բարե՛վ ասաց, յերգեց.
«Ծովասարու պաղ-պաղ աղբրներ*),
Մնացե՛ք բարով, բարի՛ մնացեք:
Ցես կ'երթամ կռիվ, կը ծարավնա՛մ,
Դուք ինձնից կարո՛տ մնացեք:
Ծովասարու պաղ-պա՛ղ քամիներ,
Մնացե՛ք բարով, բարի՛ մնացեք,
Ցես կ'երթամ կռիվ, կը շոգնա՛մ.
Դուք հո՛վ մնացեք»:

13

Ասաց, քըշեց, գնաց Մըսրա Մելիքի դեմ.
Տեսավ՝ երկնուց աստղին հաշի՛վ կար,

---

*) Ցերգ։

Ենոնց վրանները հաշիվ չը կար·
Կայնեց բարձր սարի վերա,
Տեսավ՝ որ զորք քանց ծովու ավազ շատ է:
Դլուխ թափ ետու, ասաց·
«Տեր աստված, ինչպե՞ս տերքամ կռիվ՝):
Խնամք շա՛տ է մեծ թագավորին:
Ենոնք ըլեն գարնան մատղաշ գառներ,
Յես ըլնեմ անոթի գել՝
Չեմ կարնա ենոնց խեղդի·
Եդ վրաններ ըլնեն դեզեր, յես ըլնեմ կրակ,
Չե՛մ կարնա յես եդոնց վառի:
Եդոնք ըլեն մոխիր, յես ըլնեմ քամի՝
Չե՛մ կարնա ենոնք տեղից վերցուցի»:

Զին իմացավ Դավթի երկմտիլ, ասաց·
— Ե՞յ անիրավ, ի՞նչ կը վախենաս*),
Քանի մի քո՛ւր կը կտրի,
Ենքան ել իմ շո՛ւնչ կը կտրի·
Քանի մի քո՛ւր կը կտրի,
Ենքան ել իմ վո՛տ կը տրորի:
Դավիթ, մի՛ երկմտի, քըշի:
Դու իմ քամկից վե չը գաս, չը խարվես:

Դավթի սիրտ պնդացավ եդ խոսքերով,
Դավիթ քշեց, գնաց, ասաց·
— Զանըմ, յես տի խարա՛ր անեմ ու նո՛ր տերքամ:
Գնաց, ելավ Լեռա սարի գլուխ, կանչեց·— Եհե՞յ*),
Ով քընած է՝ արթուն կացեք,
Ով արթուն է՝ ձիե՛ր թամբեք,
Ով թամբեր է՝ զենքե՛ր կապեք,
Ով կապեր է՝ ելե՛ք, հեծե՛ք·
Չասեք Դավիթ գող-գող եկավ,
Գող-գող գընաց»:

Ասաց, ընկավ եդ զորքի մեջ,
Զարկեց, զարկեց, կանչեց·
«Վազե՛, Քուռկիկ, վազե՛,
Կըտրե՛, թըրիկ, կըտրե՛...»

---

*) Ցերգ է։

Կովան, զաբկին, կոտորեցին.
Արնե հեղեղ ելավ, լեշեր տարավ:

Եդ վախտ Քեռի Թորոս աչքեց
Դեպի Մըսրա Մելիքի զորք,
Տեսավ՝ Մըսրա զորքերի մեջ
Ենպե՞ս մի կտրում ընկե,
Ենպե՞ս վայնասուն ընկե—
Զիրար կը ջարդեն, կը կտրեն:
Քեռի Թորոս դարձավ, ասաց.
— Տղեկնե՞ր, վե՞ր ելեք, մեր աստված մե՞ծ է.
Կտրում ընկե՞ր է Մելիքի զորքերի մեջ:
Ելեք, մենք ել ներքի դեհեն առնենք...
Վերի դեհեն Դավի՞թ կտրեց,
Ներքի դեհեն՝ Քեռի Թորոս...

Մըսրա Մելիքի զորքի միջեն մարդ մի ելավ,—
Մեկ ալեվոր—յոթ տղու հեր:
Մելիք ենոր յոթ տղեկներ զոռուվե՛ն եր բերեր կռիվ:
Եդ ալեվոր ասաց.— Հեյ-վա՞խ, հեյ-վա՞խ...
Դուրս եկավ են՝ առանց զենքի ու գլուխքաց՝
Զորքի միջեն վազեց,
Ասաց.— Ճամբա՞ տվեք, երթամ Դավթի առաջ:
Մի խոսք ասեմ, եսա զորք ազատեմ կռվից:
Եկավ, կանգնեց Դավթի առաջ,
Ասաց.— Դավի՞թ, մեռնե՛մ քեզի,
Ակա՛նջ արա, ձիդ դադրեցրու,
Դամ՝ քեզի խա՛սք տ'ասեմ:
— Ի՞նչ տ'ասես ինձ հալվո՛ր.— հարցուց Դավիթ:
— Դավի՞թ,— ասաց,— մեռնե՛մ քո արևուն.
Չե՞ վոր ենոնք ել մա՛րդ են, իսա՛ն են.
Ինչի՞ կը կոտորես, ինչի՞ կը սպանես.
Չե՞ եդոնք ե՛լ երեխանե՛ր ունեն,

---

*) Ցեղդ։

Տո՛ւն ու կընի՛կ ունեն։
Ենոնց սպանես՝ ճժերու մեղք կ՚ընկնի քո վիզ։
Ադքատ ու խեղճ մարդ են եղոնք։
Վորը իր մոր մեկուճարն է,
Վորը նոր պսակված տրղա,
Վորը իր ոջախի սունն է,
Վորը հանգած մի տան նրագ։
— Ապա ինչի՞ եկած են, հետ ինձ կը կովեն։
Պատասխանեց։— Մեզ ի՞նչ մեղք կա։
Մըսրա Մելի՛քն է զոռովեն բռնե, բերե։
Մըսրա Մելի՛քն է քո դուշման,
Դրնա իր հետ կռիվ արա։
— Ապա Մելիքն ո՞ւր է հիմա։
— Ա՜յ, են կանաչ վրանի տակ քնա՛ծ է, տե՛ս,
Վոսկի խնձորն ենոր չադրի գլխին դրուկ։
Ցոքն ազապ աղջիկ ենոր ճանն կը քշեն,
Ցոքն ազապ աղջիկ ենոր վոտ կը մաժեն։
Են վրանից մուխ վոր կ՚ելնի՝
Են մուխն ել հո մուխ չի,
Են շոգե՛լքն ենոր բերնի։
Դու վոր երթաս Մելիք սպանես՝
Եդ զորք Քեզի աղոթք տ՚անի,
Տի խնդանա ու ամեն մեկն իր տուն տ՚երթա։

Եդտեղ Դավիթ խղճավորվավ,
Զորք ջարդել վերջացուց,
Դարձավ ասաց։— Հա՛լվոր,
Ադե՛կ խոսք ասացիր։
Յես քո ասած տ՚անեմ։

14

Դավիթ քշեց իր ձին, գընաց,
Մելքի վրանի դուռ կայնեց։
Տեսավ՝ Մելիք վրանի տակ
Մեջ վերմակին կոլոնվե՝ պառկե։
Ցոքն աղջիկ ենոր չորս դին նստե՝ ճանն կը քշեն,
Ցոքն աղջիկ իր վոտ կը մաժեն,

Իսմիլ խաթուն նստե Մելֆի գլխու առջեվ,
Երկու արաբ ծառայող ել դռան կանգնած:
Դավիթ արաբներին ասաց·
— Վե՛ր հանեք եդա ձեր աղեն,
Կանչեք, Մելիք թող դուրս գա դուռ:
Եդ արաբներ ասին·
— Մենք չե՛նք կարնա· ենի յո՛ք ը որ տի քնի:
Իրե՛ք անցե, չո՛րս որ ել կա, վոր վեր ելնի:
Դավիթ ասաց·— Ցես չե՛մ դադրի,
Զուր ենիկ իր քեֆով ելնի:
Քրնի-մրնի յես չե՛մ գիտի,
Շուտ մի կանչեք, թող դո՛ւրս ելնի·
Թե մահ չունի՝ մա՛հ եմ բերե·
Թե գրող չունի՝ գրող եմ դառե·
Ենոր ջո՛ջ քուն կը քնացնեմ:
Ելան՝ շամփուր կարմրցուցին,
Դրին Մելֆի վոտների տակ:
Ասաց·— Ո՛ֆ, աղջիկներ,
Ինչի՞ իմ տեղ լավ չեք շինե·
Լո՛ւ կա իմ տեղ, ինձ կը խածե:
Ասաց, ելի մնաց քնուկ:
Բերին՝ գուրքնի խո՛փ մի կարմրցուցին,
Դրին ենոր վոտների տակ:
Ասաց·— Ո՛ֆ, մեջ իմ տեղաց ինչքա՛ն լու կա:
Ինձ կը խածե՛ն, չեն թողնի՝ յես քնեմ:
Դավիթ եդտեղ չը համբերեց, քաշեց նիզակ,
Զարկավ, Մելֆի կրունկ ծակեց:
Ասաց·— Մե՛լիք, դե վե՛ր ելի, բա՛վ ե քնես:
Մրսրա Մե՛լիքն ասաց·— Ո՛ֆ-ո՛ֆ
Ջե՛ք թողնի դինջանամ:
Ելավ, նստեց·
Մեկ ձեռ դրեց եսա՛ աչքի վերա,
Մեկ ձեռ դրեց մեկե՛լ աչքի վերա,
Աչքեր սրբեց, եսպես իրիշկեց դուրս,
Տեսավ Դավիթ իր ձին հեծե՝
Մեջ արնին շաղախվե,
Վրանի դուռ կանգնե:

Մելիք վոր ճանաչեց զԴավիթ,
Փչեց, վոր թոցնի տեղեն:
Տեսավ՝ Դավիթ իրար չ'եկավ:
Մելքի մոտեն քառսուն զոմշի ուժ պակասեց:
Դավիթ ասաց·— Եկել եմ, վոր կռվենք:
Մելիք խնդացավ, ասաց·
— Զա՛ր սատանեն զքեզ տանի, Թլո՛ր Դավիթ,
Ինչ յե՞ր եղար դու ձիավոր՝
Եկար, կանգնիր իմ չադրի դուռ:
Դավիթ, ձիուց իջի,
Արի ետեղ, խոսենք, հանգստանանք:
Նորեն ելնենք, կռիվ անենք:
Դավիթ ասաց·— Չե՛, չեմ իջնի:
Ես սա խեղճ ու կրակ մարդեր
Ինչի՞ յես դու բերե կռիվ·
Մենք ել ճստինք հանգստանա՞նք:
Դուրս արի, դուրս, զարկե՛նք իրար:
Մելիքի մեր, Իսմիլ խաթուն առաջ եկավ,
Ասաց·— Դավիթ, ճամբա եկե՝ նեղացեր ես·
Ձիուց իջի, հանգստանաս,
Նորեն կ'ելնե՛ք, կռիվ կ'անեք:
Շա՛տ որ խնդրեց՝ Դավիթ ուզեց ձիուց իջնի:
Ձին փախ տվավ, չ'ուզեց Դավիթ իջնի:
Մըսրա Մելիք քառսուն զազ հոր փորե մեջ վրանին,
Երկաթե թոռ գցե բերնին,
Ու խալիներ փռե վերան,
Կ'ուզեր Դավիթ գար՝ ճստեր,
Ընկներ մեջ են հորուն:

Խաբեցին Դավթին՝ ձիուց բերին տակ:
Ձին ըռըկավ, փախա՛վ, գընա՛ց,
Դընաց՝ ելավ սարի գլուխ:
Տարան Դավթին, ճստեցուցին վե՛ր են հորին:
Դըրը՛մբ··· ընկավ հոր վե՛, գընաց:
Մեջ եդ հորուն երկաթե թոռ, ողե՛ր կային:
Դավիթ ընկավ ողերու մեջ,
Ընկարցա՛վ դուրս ելներ·
Երկաթե թոռ եկավ իրուր:

Մելիք բերեց ջաղցի քարեր,
Քաշեց հորի բերանի վերան, թողեց, ասաց.
— Ո՞ն եր, որ հետ ինձի կռիվ տ'սներ,
Հայ-հո՛յ... Դավիթ Սասնու եկեր է՝
Հետ Մելքին կռի՛վ կ'անի.
Թող'ր Դավիթ Սասնու եկեր է՝
Կուզի հետ Մըսրա Մելիքին կռի՛վ անի... հայ-հա՛յ...
Դի թող կենա ենտեղ, չուր ոսկորներ փտեն...

Իրիկուն եղավ: Մելիք ընկավ քնավ.
Դավիթ մնաց են հոր:
Դավիթ թող մնա են հոր.
Մենք դառնանք վի՞րմեն խաբար տանք:
Խաբար տանք Զենով Հովանեն:

15

Զենով Հովան գիշերն երազ տեսավ.
Մըսրա աստղը շողի՛ն կը տար,
Սասմա աստղ կը խավարեր:
Հովան քնուց ելավ, ասաց.— Կընիկ, վե՛ր ելի, վե՛ր,
Տեսա՝ Մըսրա աստղը շողի՛ն կրտար,
Սասնա աստղ կը խավարեր—
Դավիթ մեր ձեռքեն գնաց:

Սառյեն ասաց.— Աստված քո տուն ավրի.
Դու քուն քեզ համար կը քնես,
Երազ խալխի՞ն կը տեսնես:
Զենով Հովան ելի՛ քնավ:
Մեկ է՛լ երազ տեսավ.
Մըսրա աստղը շա՛տ եր պայծառ.
Սասնա աստղը խավարե՛ր եր. հա՛, կը հանգչեր:
Հովան քնից ելավ. ասաց.— Կընի՛կ. վե՛ր ելի, վե՛ր:
Ցես տեսա՝ Մըսրա աստղը շա՛տ եր պայծառ,
Սասնա աստղը հա՛ կը հանգչեր:
Սառյեն ասաց.— Քո տո՛ւն ավրի,
Դու ինչի՞ չես քնի, ա՛յ մարդ.

Զր թողի՛ր, վոր եսոր ֆնեմ:
Զեռով Հովան մե՛կ ել ֆնավ:
Ֆնավ, մեկ ե՛լ երազ տեսավ.
Տեսավ՝ Մըսրա աստըղ եկավ,
Ու Սասնա աստըղ կուլ ետու:
Ասաց.— Կրնի՞կ վե՛ր ելի, Դավիթ ըսպանեցին:
Սառյեն ասաց.— Ինչի՞ չես ֆնի դու, ա՛յ մարդ,
Ով գիտի՝ վո՞ր կրնկա ծոց ե պառկե Դավիթ.
Ով գիտի վո՞ր տեղ ֆեփ կ'անի:
Զեռով Հովան ըռկավ,
Ֆացի մ' եզա՛ր կրնկան:
Կնիկն ելավ ճրազ վառեց:
Զեռով Հովան ասաց.— Իմ զրահներ բե՛ր:
Կրնիկ բերեց: Զեռով Հովան ելավ,
Յոթ զոմշի կաշի փաթեց իրեն վերա,
Յոթ զոմշի շղթա փաթեց իրեն վերա,
Վոր բոռալեն չը պատռվի:
Հագավ իր զենֆ զրահ.
Գնաց, զումի դռներ եբաց:
Իր ձեռ տվեց վեր Սիպտակ ձիու մեջֆին.—
Սիպտակ ձին փոր ետու գետին:
Հովան ասաց.— Սիպտակ ձի,
Յե՞բբ տի տանես ինձ, հասցնես Դավթի կռվին:
Ձին ասաց.— Զուր կեսորին:
Զեռով Հովան ասաց.
— Հարա՛մ ըլնի ենա իմ կեր, վոր տվի ֆեզ:
Զուր կեսոր Դավթի հաշի՞ն հասնեմ թե լաշին:
Գնաց Հովան ու ձեռ ետու Կարմիր ձիու մեջֆին,—
Կարմի՛ր ձին ել իր փոր ետու գետին:
Հովան ասաց.— Ա՛յ Կարմիր ձի,
Յե՞բբ տի տանես ինձ հասցնես Դավթի կռվին:
Ասաց.— Զուր արեվն առնելուն:
Զեռով Հովան ասաց.
— Հարա՛մ ըլնի իմ պահել, վոր պահեցի՛ զֆեզ:
Դավթի ինչի՞ն հասնեմ արևն առնելուն:
Հետո գնաց ու ձեռ ետու Սեվո՛ւկ ձիու մեջֆին.
Ես Սև ձին փոր չ'ետո՛ւ գետին:

Ջենով Հովան պագեց Սեվուկ ձիու գլուխ,
Ասաց·— Սե՛վ ձի,
Յե՞րբ տի տանես ինձ—հասցնես Դավթի կռվին:
Սեվ ձին ասաց·
— Վոր դու կարնաս ֆեզ վե՛ր իմ ֆամակին բռնես՝
Մեկ վոտ բալես զանգուն,
Զուր մեկել վոտ շո՛ւռ տաս մեկել զանգուն,
Կը հասցնեմ Դավթի կռվին:
Ելավ. հեծնի Հովան Սեվ ձին.
Մի վոտ եղիր զանգուն,
Զուր մեկել վոտ շուռ ետու մեկել զանգուն,—
Սեվ ձին հրեղեն եր—
Լեռա սարի գլուխ կայնավ:
Քուռկիկ Զալալին զՋենով Հովան տեսավ,
Խրխնջալեն եկավ մոտիկ:
Ջենով Հովան վախցավ, ասաց·
— Դավիթ սպանված է, ձին փախե, եկե ետեղ:
Կանգնեց Ջենով Հովան, կանչեց·
Ձեն բնկավ սար ու ձոր·
Ասաց·— Դավի՛թ, ո՞ւր ես,
Հիշա՛, Մարուքա բարձր Աստվածածին,
Հիշա՛ զնաչ Պատերազմին,
Ինչ վեր ֆո աջ թևին,
Ու բա՛փ տուր ֆեզ···

Կանչեց···
Հովանի ձեն հասավ, բնկավ Դավթի ականջ·
Դավիթ ասաց·— Հայ-հա՛յ,
Հրողքի՛բս է եկե ետեղ·
Ի՛նձ կը կանչի·
Յա, Մարուքա բարձրիկ Աստվածածին,
Խա՛չ Պատերազմին, վեր իմ աջ թևին:
Ասաց, զինֆ բափ ետու:
Երկաթե ոդ ու շղթաներ բոռան երկինֆ,
Ջաղցի ֆարեր բլան, բոռան,
Ենոնց ամեն կտոր ֆառուն մարդ ըսպանեց:

Դավիթ թռավ, կանգնավ հորի բերան, ասաց·
— Մըսրա Մելիք, ել դու բերախտություն չ'անե՛ս·
Լուսուն տղամարդո՛ւ նըման կովենք:
Մըսրա Մելիք ել չը դիտցավ մոտենալ:
Դավիթ ելավ՝ իր ձին փնտռի·
Ձենով Հովան կանչեց·— Դավի՛թ, արի՛:
Դավիթ ենոր կանչով գնաց մոտ հրոդբեր:
Ամա ձին ըռկեր եր՝ չե՛ր իգա ձեռ:
Դավիթ գնաց, գուրգուրելով երեր·
Ձին եկավ ձեռ, Դավիթ ելավ, հեծավ, ասաց·
— Հրոդբեր, դու գնա քալաք, յես տ'երթամ կռիվ:

16

Գնաց, հասավ Մըսրա Մելքին, ասաց·
— Մըսրա՛ Մելիք, են դիր ինձ խաբեցիր,
Մըկա ել ի՞նչ տ'անես:
Մելիք տեսավ՝
Դավիթ դրեր եր ձեռ զուրգին:
Ահից դողաց, ասաց·
— Դավի՛թ ջան, դե արի՛, նստի՛:
Ասաց·— Յես չե՛մ նստի· կռի՛վ անենք:
Մըսրա Մելիք հրաման տվեց·—
Ֆյահլան ձին դուրս բերին:
Հագավ շորեր, կապեց գենքեր,
Նստեց իր ձին, գնաց մեյդան:
Ըսկսեցին մեջ մեյդանին երթալ ու գալ:
Մըսրա Մելիք ասաց·
— Դավի՛թ, կըռիվ զորովե՞ն անենք, թե հերթով:
Դավիթ ասաց·— ինչպես քո ջան կուզի:
Մըսրա Մելիք ասաց·
— Կուզեմ հերթո՛վ անենք·
Իրեք դարբ մեկ զարկի,
Իրեք դարբ մեկել զարկի:
Առաջ ո՞վ տի զարկի:
Դավիթ ասաց·— Առաջ դո՛ւ զարկ,
Տարիքով մեծ դո՛ւն ես:

Դավիթ ձիուց եկավ տակ.
Գնաց, կանգնեց մեջ դաշտին:
Ասաց.— Մըսրա Մելիք, քո դարբեր զարկ:
Մըսրա Մելիք իր գուրզ առավ:
Քըշեց, գնաց մինչև Ֆարկին.
Իրեք ավուր ճամբա՛ անցավ,
Քըշեց, եկավ, հասավ Դավթին,
Գո՛ւրզ մի զարկեց Դավթին:
Ինչպես շո՛ւն մի ոռնա՝ գետին պոռթեց.
Ինչպես քառասուն ջուխտ գոմեշնե՛ր լծես,
Գուրբան վարես՝ գետին պոռթա,
Թոզ ու դուման երկիր-երկինք բռնեց,
Որ ու գիշեր եդ թոզ չիջավ գետին:
Մելիք ասաց.— Ե՛, Դավիթ, հո՛ղ եյիր,
Հող դարձուցի:
Դավիթն ասաց.— Մելիք, դեռ յես կենդանի՛ յեմ:
Եդ մեկ, մե՛կ ել զարկի:
Մելիքն ասաց.— Հա՛, տնավեր,
Ես մեկ անգամ ճամբաս մո՛տ եր.
Թափ չը մնա՛ց մեջ իմ գուրզին:
Ասաց, դարձավ, մեկ ե՛լ քըշեց:

Գընաց, հասավ չուր Դիարբեքիր
Ու ենտեղից քըշեց, եկավ Դավթի վերա:
Եկավ՝ իր գուրզ թալեց Դավթին:
Ինչպես առյո՛ւծ ոռնա՝ գետին պոռթեց,
Ինչպես հեղեղ ավերի, գետին պոռթեց:
Թոզ ու դուման երկիր-երկինք բռնեց,
Արեգական երեսն առավ:
Երկու գիշեր ու երկու որ եդ թոզ կանգնեց Դավթի
վերա:
Մելիք ասաց.— Դավի՛թ, հալա կենդանի՞ յես:
Հող եյիր, քեզ հող դարձուցի:
Դավիթ ասաց.— Մելիք, կենդանի՛ յեմ.
Եսիկ երկու, մեկ ել զարկի:
— Հայ-հա՛յ,— ասաց Մելիք,—
Իմ ձիու մանգզիլ քի՛չ եր.

Թափ չը մնա՛ց մեջ իմ զուրգին:

Նորեն Մելիք դարձավ, գընաց,
Քըշեց, հասավ Մրսըր քաղաք:
Ու Մըսըրից քըշեց, եկավ Դավթի վերա:
Եկավ, զուրգ մ'ել զարկեց:
Ինչպես զարնան ամպ գոռգոռա՝ երկիր պոռթեց,
Ինչպես երկրաշա՛րժ մի զարկի՝ երկիր պոռթեց:
Թոզ ու դուման երկիր-երկինք բռնեց,
Արեգական երեսն ասավ.
Իրեք ցերեկ, իրեք գիշեր
Եղ թոզ կանգնեց Դավթի վերան:
Մելիք ասաց.— Մեռա՛վ Դավիթ.
Հող եր Դավիթ, հող դարձուցի:
Ինչ թոզ-դուման գետնեն ելավ,
Դավիթ, իր ձին, ելան, իրենց տեղ կանգնեցին:

Դավիթ ասաց.— Մելիք, դու քո դարքեր պրծար:
Հերք ի՛նձ հասավ:
— Ե՛յ,— ասաց.— Տնավե՞ր, մեկ ե՛լ երթամ:
— Չե, չե՛,— ասաց,— դու ո՞ւր տ'երթաս:
Հերք ի՛մրն ե. աշխարհ հերքո՞վ ե, թե զոռով:
Մելիքի մեր եկավ, ասաց.
— Դավի՛թ, Մելիք քո աղբե՛րն ե.
Բեբախտություն չ'անես:
— Հա՛, մարե՛, չե՛մ անի բեբախտություն.
Իրեք դարք տի գարկեմ Մելքին:
Մելիք ասաց.— Դավիթ, քեզնե կը խնդրվեմ.
Յոթ սհաթ ժամանա՛կ տաս ինձ:
Թող յես երթամ, վրանի տակ պառկեմ,
Դու գաս ու ինձ զարկես:
Ասաց.— Գընա, պառկի,
Մենակ թե ինձ ասա, Մելիք,
Ինչո՞վ զարկեմ, թրո՞վ զարկեմ, թե՞ իմ զուրգով.
Մելիք իր մտքի մեջ ասաց.
«Զա՛նիրմ, եդ զուրգ վոր ինձ զարկի՝
Եդ զուրգին դիմանա՛լ դ'ըլնի»:
Ասաց.— Դավի՛թ, թրո՛վ զարկի:

Դընաց Մելիք վրանի տակ, ասաց.
— Յես իրեք դարք Դավթին զարկի,
Դավթին ըսկի բա՛ն մի չ՚եղավ.
Հիմի Դավիթ կը գա, ետեղ ինձ կը զարկի:
Մելիքի մեր ասաց.
— Մե՛լիք, արի մտի մեջ եդ հորին:
Մելիք մտավ մեջ հորին:
Բառսուն գոմշու կաշի բերին քաշին վերան,
Բառսուն ջաղացի քար դրին վերան,
Վերմակ քաշին քարի վերան:
Մելիք մեջ են հորին հանգիստ նստեց, ասաց.
— Հիմի հերք Դավթի՛նն ե:
Դավիթ գիտի՛, թե են ինչ արեր ե.
Կը գա, կը տեսնա ջաղացի քար.—
Չե՞ վոր հորու բերնին դրած եսպես բարձրացեր ե—
Վերմակ քաշած քարի վերա:
Գիտի, վոր ենքան Մելիքի ջանդաք չի՛:
Ապա Մելիքի մեր ենտեղ կայնուկ ե:
Դավիթ չ՚ասաց՝ զՄելիք հանեք դուրս, տեսնեմ:

Հեծավ Դավիթ Բուռկիկ Ձալալին,
Գնաց հասավ չուր Ծովասար.
Քաշեց իր թուր կեծակին,
Քըշեց իր Բուռկիկ Ձալալին,
Եկավ, վոր տի զարկեր՝
Իսմիլ խաթուն իրեն ծծեր հանեց,
Դավթի առաջ վազեց, ասաց.
— Դավիթ, քաղցր ծիծ եմ տվե քեզի,
Դու իմ կաթի խաթեր եդ զարկ ինձի քախշի:
Դավիթ ասաց.— Մարե, ինչի՞ դուն չուր հիմիկ,
Մելիքի ջարկ կը գար մեջ իմ գլխուն,
Մեկ մ՚ել չ՚ասիր՝ Մելի՛ք, զարկ մի ինձի՛ քախշի:
Դավիթ իր թուր իջեցուց, տարավ, բերեց.
Բարձրացուց եդ թուր, համբուրեց,
Դրեց նակատին, ասաց.— Մարե՛,

— Ես մեկ զարկ քո՛ խաթեր:

Մեկ էլ դարձավ, գնաց Դավիթ,
Իր ձին քշեց եկավ. եկավ, վոր տի զարկեր՝
Մելիքի քուր վազեց ենոր առաջ, ասաց.
— Դավիթ, դու վոր պստիկ էյիր՝
Յես քեզ շա՛տ եմ գրկեր, պահեր, խաղցուցեր եմ,
Եղա մեկ թուրն էլ ինձ բախշի:
Դավիթ եդ թուր իջեցուց, տարավ բերեց,
Խարձրացուց եդ թուր, համբուրեց,
Դրեց իր ճակտին, ասաց.
— Ես մեկ զարկ էլ քո՛ խաթեր:
Մընաց մե՛կ զարկ, մեկ աստված, մեկ յես—
Յա կը սպանեմ, յա կը թողում:

Դավիթ դարձավ,
Դընաց, հասավ Սասնա սարեր,
Քշեց, եկավ Մելքի վերա:
Վոր տի հասներ հորի բերան՝
Իսմիլ խաթուն իր հետ բերած կնիկներուն,
Եղա ազապ աղջիկներուն,
Եղա շավար քաշողներուն ասաց.
— Շո՛ւտ, շա՛վար քաշեք,
— Շո՛ւտ, փոդե՛ր փչեք,
— Շո՛ւտ, թմբո՛ւկ զարկեք,
— Շո՛ւտ, ձեր քաֆկիրնե՛ր բռնեցեք ձեր ձեռ,
— Խաղացե՛ք, խորո՛ւտ խաղացեք,
— Դավիթ վոր գա՝ ազապ տըղա յե,
Կ՝ իրիշկի ձեզի, զարկ թո՛ւլ կը զարկի.
Մելիք չի՛ սպանի:

Աղջիկներ ելան,
Շավա՛ր քաշեցին,
Փոդե՛ր փչեցին,
Թմբուկնե՛ր զարկին,
Ելան, խա՛ղ կ՝անեն:
Ապա Դավիթ գիտի՛.

— Եդա ինձի՛ համար կ'անեն,— ասաց,—
Կ' ուզեն ինձի շըշկըռացնեն:
Կանչեց, ասաց·
— Յա՜ Մարուքա բարձրիկ Աստվածածին,
Յա խաչ Պատերազմին, ինչ վեր իմ աջ թեվին:
Կանչեց, զարկեց Թուր կեծակին:

Կըտրեց քառսուն ջաղացի քար,
Կըտրեց քառսուն գոմշու կաշին,
Կըտրեց հըրեշ Մըսրա Մելիքին,
Կըտրեց ճակտից, վոտքերուց դուրս ելավ,
Ու յոթ գազ ել մտավ գետին,
Գնաց հասավ սեվ ջուր:
Թե հրեշտակ իր թև չ'առներ առջև,
Սեվ ջուր տ'ելներ, աշխարհ առներ:
Մըսրա Մելիք կանչեց, ասաց·
— Դավիթ, յես եստե՛ղ եմ,
Մեկ ե՛լ զարկի:
Դավիթ ասաց·— Մըսրա Մելիք, քեզի թա՛փ տուր:
Մըսրա Մելիք գինք թափ ետուր,
Մեկ կտոր ընկավ եստեղ, մեկել՝ ենտեղ:
Մըսրա Մելիք խատա՛վ:

18

Դավիթ ասաց·— Մարե՛,
Վերմակ բացե՛ք, տեսնեմ Մելիք:
Ասին·— Գնա, մենք կը բանանք:
Դավիթ զգին քըշեց, եկավ կանգնեց
Ձեռ եթալ, վերմակ բացեց,
Տեսավ քառսուն ջաղցի քարեր,
Ամենն ել թրի առջեվ կտրտված·
Իր ձեռ եթալ, քարեր վերուց, գցեց,
Տեսավ քառսուն գոմշու կաշի՝
Ամեն կտոր–կտոր արած:
Մելիքի մեր կռացավ եդ հորի վերան,
Կանչեց·— Մե՛լիք, Մե՛լիք, Մե՛լիք:

Մելիք ձեն չ'ետու։
Մելիքի մեր ու քիր նստան ենտեղ, վերան լացին։
Ապա մեր դարձավ Դավթին, ասաց.
— Դավի՛թ, ապանեցիր Մըսրա Մելքին,
վնա՛ս չը կա, դու ե՛լ իմ տպան ես։
Արի, ենոր կնիկ դու ա՛ռ,
Մըսրա թագավորությունն մնա՛ քեզի,
Սասուն զարի քո՛նն ե։
Դավիթ ասաց.
— Յես մորե վոր ծնվեր եմ՝ անարա՛տ եմ,
Յես իմ հալալ լեշ հարամ լեշերու չե՛մ խառնի։
Կուզես արի, քե կը տանեմ մոտ ինձ, Սասուն։
Ասաց.— Չե՛, Դավիթ, չեմ գա Սասնա երկիր։
Ասաց.— Վոր չես գա մեր Սասնա երկիր,
Գրնա, Մըսրը տվեր եմ քե, ապրի։

Դավիթ ձիու գլուխ շրջեց,
Ելավ, գընաց մեջ զորքերին.
Ինչ զորք զորական մնացե՝
Կանչեց, հրամայեց, ասաց.
— Ամենին իրավունք կը տամ.
Ուր սեղեն եկեր եք՝ ելեք գնացեք ձեր տեղ։
Ելեք, գնացեք ու ձեր տներ նստեք,
Դուք ինձ համար աղո՛թք արեք,
Իմ հորն ու մորն ել ողորմի՛ տվեք.
Հանդա՛ռտ կացեք,
Մեկ ել չ'ելնեք ու գաք վեր Սասնա։
Մեկ ել որ գենք առնեք մեր դեմ
Թե որ դուք կռվի գաք վեր մեզ՝
Քառասուն գազ խոր հորում ըլնեք,
Թե ջաղացի ջոջ քարի տակ,
Տ'ելնի ձեր դեմ Սասնա Դավիթ,
Տ'ելնի ձեր դեմ Թուր Կեծակին։

Եդա զորք Դավթին որինեց,
Համա դժար կը հավատար, քե Մելիք սպանուկ ե։
— Հա՛ Դավիթ,— կ'ասեն,—

Մեռնե՛նք մենք քո գլխուն,
Ո՛ւր էլ գնաս՝ աստված հետ քեզ,
Աստված քո բան միշտ աջողի,
Աստված քեզ ջանսաղությո՛ւն տա,
Աստված քո հոր ու մոր արքայություն տա:
Իսմիլ խաթուն առավ իր զորք, գընաց Մըսըր.
Են եկած թագավորներ, փաշեք ու զորքեր
Ելան, ցրվեցան չորս կողմն աշխարհին,
Դավթի արած կտրություն ամեն տեղ պատմեցին,
Ասին.— Դավիթ իր հոր ուխտ արավ՝
Մըսրա Մելիք սպանեց,
Սասուն ազատեց:

19

Իր կովի տեղեն իմացավ Թորոս,
Վոր Դավիթ Մըսրա Մելքին սպաներ է:
Դադարեցուց իր կռիվ,
Եկավ, հասավ Դավթին:
Դարձուց Դավիթ իր Բուռկիկ Ջալալին,
Դարձուցին իրենց ձիեր Բեռի Թորոս
Ու երեսուն ուր կտրիններ.— եկան Սասուն:
Ի՞նչ կ'բերեն հետներ են կովից.
Իսկի բան չեն բերի:
Ենոնց բերած եղավ ջուխտ մի յեզ,
Լծեցին սել, քցեցին հետեվներ,
Մսրա Մելիքի ականջ Դավիթ զարկեց նիզակի ծեր,
Դրավ վեր սելին, քաշեցին, բերին,
Քաշեցին բերին՝ Սասնա քաղաք հասցնեն,
Վերգոյին նվեր:

Եդ ժամանակ ի՞նչ կ'անցներ կը դառնար Սասուն:
Հովան վոր հասավ Սասուն,—
Չե վոր Հովան են զորք ամեն տեսեր եր,
Ամեն վրաններ տեսեր եր,
Գընացեր Սասնա քաղաք. ժողովրդին ասեր եր—
Ենքան չա՛դր կա, ենքան զո՛րք կա.

Ժողովուրդ ասեր էր։— Այս–վա՜յս, այս–վա՜յս,
Այս–վա՜յս, տի սպասե՛ն զ'Դավիթ։
Տի գան կընիկ, աղջիկ, ճիժեր տանեն գերի։
Այս–վա՜յս, տեր աստված,
Այս–վա՜յս, դո՛ւ ճար արա...
Եդա քաղքի մարդեր
Են սարի գլուխ պահապան են դրե՝ ի՞նչ ապով։
Վոր իրիշկեն ճամբան,
Դավի՞թ կը գա, թե զո՛ր կը գա։
Վոր շատ մարդ գա՝
Քաղքի մարդերուն խաբար տան,
Իրենց պատրաստություն տեսնեն։

Եղ պահապաններ մեկ ել տեսան՝
Մեկ ձիավոր կը գա առաջից,
Երեսուն հնը ձիավոր հետեվից։
Պահապաններ վազեցին քաղաք, ասին։
— Ձիավորնե՛ր կըգան, մեկն ել առջեվեն։
Հավատաս, Դավի՛թն ըլնի։
Հովանին ասին։— Դավիթն եկավ։
Հովան ելավ՝ երթա Դավթի առաջ։ Են քաղցիք,—
Մարդ, կընիկ, ալեվոր, պառավ, ճիժ–ճիժ—
Ամե՛ն գնացին Դավթի առաջ։

Դավիթ նայեց, տեսավ՝ ջոջ զորք կը գա։
«Ջա՜նըմ,— միտ վե ասաց,— եդա զորք ի՞նչ է։
Ինձի քանի՞ դուշման կա՝ կը գան վեր ինձի»։
Դավիթ իր ձին քըշեց, ասաց։
— Ձի՛, գընա՛, աստված ինչ արե՜ր է, արե՛ր է...
Ձին քըշեց, մոտեցավ, տեսավ՝
Հովան ամենու առջեվն է։
Իրիշկեց՝ տըղա, աղջիկ, գեղական ամեն եկած են։
Բոռաց։— Հրոդբեր, դու ե՞լ եկեր ես հետ ինձ կռիվ։
Հրոդբեր ասաց։— Դավի՛թ,
Մենք եկել ենք քո վերա կը խնդանանք։
Մենք փառք կը տանք աստծուն,
Վոր սալամաթ եկար։

Դավիթ հարցուց·— Եդ կնիկնե՞ր ինչի եկած են
— Դավի՛թ,— ասաց,— ինչ դու գնացիր՝
Զուր եիմիկ եդա շիվարներ կը լան,
Աստված կը կանչեն, կը վախենան,
Թե Մըսրա Մելիք բեզի կը սպանի,
Արաբներ կը գան, քաղքի մարդեր ամեն կր սպանեն,
Կընկտեր կը տանեն:
Քո գալ լսան, ամեն խնդացան, ուրախացան:
Մեծ ու պստիկ քո ապո՛վ եկան:
— Դե դարձի՛ք, գնացե՛ք,— ասաց,—
Մելիք սպանե՛ր եմ· դե դարձե՛ք, դարձե՛ք:
Դավթի հրոդբեր ելավ,
Դավթի գլուխ պագեց, քրտինք սրբեց, ասաց·
— Ել իսկի չե՛նք վախենա:
Սասունցիք գնացին արխային տներ նստան:

Տուն որ եկան, հրոդբեր Դավթի արնոտ շորեր փոխեց,
Առոք-փառոք նստեցուց,
Քուռկիկ-Ջալալին ել մաքուր լվացին,
Տարան, կապեցին իր տեղ:

Ինչ Դավիթ՝ գնաց նստեց իր տեղ,
Ասաց·— Դե մեկ կթխա գինի՛ տվեք ինձ:
Գինին խմեց, ու պառկավ, քնավ իրեք որ:
Ինչ իրեք որ անցավ,
Արտատեր Պառավ ելավ եկավ Դավթի մոտ,
Ասաց·— Դա՛վիթ, բարո՛վ եկար,
Դա՛վիթ, բարո՛վ եկար:
— Աստծու բարի՛ն քե, Պառավ:
— Տեսա՞ր,— ասաց Պառավ,—
Ծանգոտ թրով, քոսոտ ձիով ինչպե՞ս կ'երթայիր·
Տեսա՞ր Մելիքի դեմ կռիվ քանի մի զո՛ռ ե:
— Պառավ,— ասաց,— շնորհակալ եմ քեզնե·
Կը գա՞ս դու ինձի մե՛ր ըլնես· յես մեր չ'ունեմ:
— Դավիթ, յես ելի՛ քեզ մեր եմ,— ասաց,—
Կ'երթամ իմ տուն·
Ինչ բան քեզ պետք կ'ընի՝ կը գամ, կ'ասեմ:

Ըսկի՛ մի վախենա, Դավիթ, ծլի՜ս, ծաղկիս:
Զուր հիմիկ պըստիկ եյիր՝ ջոջացար,
Եվ եստեղ մի՛ նրստի.
Դու գընա, Հովանին ասա.
«Իմ հոր սենեկ պատրաստի,
Յես երթամ, իմ հոր սենեկ նստեմ»:
Դավիթ, դե մնա՜ս բարով:

Դավիթ գնաց, Հովանին ասաց.
— Հրողբեր, իմ հոր սենեկ բաց:
Տ'երթամ, իմ հոր սենեկ նստեմ:
— Հա՛,— կ'ասի Հովան,— հիմիկ կը բանամ:
Եդա Սասնա ճրաց չուր հիմիկ հանգա՛ծ եր,
Հիմիկ Սասնա ճրաց վառվավ.
Ապա չը բանա՞մ:
Ֆո արածն, որ դո՛ւ արիր, յես շա՛տ կը խնդանամ.
Վոր դու եսպես կտրին ես—
Յես գիտեմ, թե աշխարհ ամեն իմն է.
Յես կը խնդանամ, վոր դու ասես, մենք ծիծաղանք:

ԴԱՎԻԹ ՅԵՎ ԻՍԱՆԴՈՒԹ

ԴԱՎԹԻ
ԱՄՈՒՍՆՈՒԹՅՈՒՆԸ

1

Քանի Դավթի չեր գնացե կռիվ,
վորբ տպա յնբ, պահոդ, ականջ արող չկայ։
Վոր գնաց կռիվ, եկավ, փոխվավ, լցվավ։
Ով կը տեսներ ենոր խորոտ աչքեր,
Կարմիր երեսներ, խորոտ քի՛թ-բերան,
Ենոր գլխեն իր խելք կ'երթար։

Մեկ որ, Զենով Հովան քնած եր,—
Ենոր կնիկ ելավ,
Շաքարհաց թխեց գոդտուկ,
Հավ մորթեց, տապակեց,
Մեղր, կարագ, յոթ սարվա գինին առավ,
Ելավ իր խորոտ-խորոտ շորեր հագավ,
Աչքեր դեղեց, բսկեր եհան,
Խորոտ-խորոտ կանդուրեք հագավ,
Առավ եդ բաներ, մոմ վառեց,
Եկավ Դավթի սենեկ։
Դավիթն ել դուռ շինե, քներ ե։
Ասաց։— Դա՛վիթ, ելի՛, դուռ բա՛ց։
Դավիթն ել հարցմունք արավ ենոր մոտեն,
Ասաց։— Դու ո՞վ ես՝ յես դուռ բանամ։

Ասաց.— Քու հրողբոր, Հովանի կնիկն եմ:
Դավիթն ել ելավ, դուռ եբաց.
Հովանի կնիկ եկավ սենեկ, նստավ:
— Դավիթ,— ասաց,— յես շուտուց քո կարոտով եյի,
Չեմ կարցեր անուշ-անուշ բան շինե,
Պատրաստ եդ եր, քեզ համար բերի:
Բացեց իր բերած, եդիր առջև,
Կուժ մի գինի, մեկ կըթխա,
Են ել եդիր առջև Դավթին:
Դավիթ միտք արավ, թե.
«Ինձի մեր չկա, ես իմ մոր տեղն ե»:
Շատ շնորհակալ եղավ, ասաց.
— Դու իմ մոր տեղն եյիր,—
Եսոր ինձի նանչեցար, եկար իմ մոտ.
Հովանի կնիկ ասաց.
— Դավի՛թ, մատաղ եմ քե,
Սասնա մեջ քո պես կտրիճ՝
Վոչ եղեր ե, վոչ կ'ելնի:—
Դավիթ հաց կերավ, նռան գինին խմեց:—
Ե՛, յոթ տարվան գինին,
Դավիթն ել շա՞տ խմեց:
Խնդացավ, ասաց.— Խմե՞մ,
Եսոր իմ հրողբոր կնիկ պատիվ կանի:
Աղե՛կ մի խմեց, հարբավ,
Գլուխ եդիր վեր բարձին, քնավ.
Ել չը կարցավ, վոր զրուցի:

Հովանի կնիկ Դավթի երեսներ պագեց,
Ճակատ պագեց, իրիշկեց՝
Դավիթ քներ ե, իսկի՛ խաբար չի իր մոտեն:
Ելավ, գնաց տուն, դեռ Հովան քնած:

Մեկ շաբաթ եդպես գնաց, եկավ:
Են մեկ որ միտք արեց, ասաց.
— Ցես եդ յոթ տարվան գինին ինչի՞ կը տանեմ.
Դավիթ կը խմի, պառկի, քնի՛.
Ցես ենոր մոտեն ի՞նչ կը հասկանամ:

Են մեկ որ ելավ մե՛կ տարվան տարավ,
Գինին ել քիչ տարավ:
Գնաց սենեկ, նստավ:
Եդիր առջև Դավիթին:
Դավիթ հաց կերավ, գինին խմեց.
Ել գինին ենոր գլուխ չը բռնեց, չը քնավ:
Հովանի կնիկ նստավ Դավիթի գոգ,
Ձեռ քցեց, ենոր վիզ բերի, գրկի.
Արեց, վոր Դավիթի երես բերի, պագի,
Դավիթ ենտեղ ըռըկավ, չ'եթող, վոր պագի.
Ասաց.— Դու իմ մոր տե՛ղն ես.
Ելի՛, նստի՛ ենտեղ, յես, դու զրուցենք:
Ասաց.— Դավի՛թ, ինչի՞,
Ցես քո մոր տե՛ղն եմ.
Ցես ոտար աղջիկ եմ,
Եկեր եմ քո հրողբորն առեր:
Դավիթ ասաց.— Իմ մեր, հրողբոր կնիկ մեկ ե
Են ել իմ մոր տեղն ե...
Են ինձի համար քանց լուսն-արեգակն ե:
Հովանի կնիկ ասաց.
— Դավի՛թ, դու չես գիտի՝ յես ոտար աղջիկ եմ
Ենքան ժամանակ քո հրողբոր ձեռքին եյի,
Հիմի ենոր չեմ ուզի, ըզքե կ'ուզեմ:
Դավիթ մնաց մտածելով.
«Ցես հիմի ելնեմ զարնեմ, սպանե՛մ,
Իմ հրողբեր զանգատ տ'անի,
Թե՝ իմ կնիկ սպանեց Դավիթ.
Թե չը սպանե՛մ, եդ կնիկ ինձնե չը դա'դարի»,
— Հրողբո'ր կնիկ,— ասաց Դավիթ,
Ելի՛ գնա՛, յես քնեմ.
Ջուր վաղ, վաղ քե բան կ'ասեմ:
Խաբեց, եդիր նամբու:

Առավոտուն շուտ Դավիթ ելավ,
Գնաց վեր աղբրին, լվացվեց,
Նստավ ենտեղ, մտածեց:
Տեսավ՝ Պառավ ենտեղ երևաց:

Կանչեց·— Պառա՛վ, արի՛ եստեղ:
Ձեռով արավ, Պառավ եկավ:
Հովանի կնիկ ինչ արեր եր,
Ամեն մեկ-մեկ Պառվուն պատմեց:
Ասաց·— Պառա՛վ, իմ մոր տեղն ես, ընդուց կ'ասեմ:
Ասաց·— 'Դավի՛թ, յես են կնկան մեղէ չեմ դընի:
Են ժամանակ դու պստիկ եյիր,
Հիմի եղեր ես քսան տարեկան,
'Դեռ ապապ մնացեր ես·
Ով զքեզ տեսնի, իր խելք կ'երքա,
Կուզի վոր գա, քո ծոց պառկի:
— Ե՛, Պառավ, ապա ի՞նչ անեմ,— ասաց Դավիթ:
— Յե՛լ, քեզ համար կնիկ մի բեր,
Վոր ել կնիկ քե չը նեղի·
Ով կ'իրիշկի քո բոյ-բոսին՝
Ենոր գլխեն իր խելք կ'երքա:

Մեկ տարի մի վերա անցավ,
Ձենով Հովան ասաց·
— Դա՛վիթ, դու զմեզ ազատիր Մելիքի ձեռեն·
Տ'երքամ, քեզ համար կնի՛կ ուզեմ:

Գնաց Զմշկիկ Սուլթան ուզեց Դավթին:
Զմշկիկն ել շատ խորոտ փահլևան եր,
Դեռ չեր պսակվե:

Դավիթ, Զմշկիկ Սուլթան
Մատնիքներ իրարու հետ փոխեցին:

2

Դավիթ վոր Մըսրա Մելքին հաղթեց,
Ձեն ի ձեն հասավ Կապուտկոզ,
Կապուտկոզի թագավոր Վաչոյ-Մարջոյին,
Ենոր աղջկան՝ խանդուք խանումին:
Ինչպես վոր Դավիթ՝ քաջ, խորոտ մարդ եր,
Խանդուք՝ թե՛ խորոտ եր, թե՛ քաջ եր·
Ենոր սիրունություն աշխարհ բոներ եր:

Շապուհ արքան լսեր էր ենոր ձեն՝
Մարդ զրկեր, խանդուքին կ'ուզեր:
Ուրիշ քաջ մարդիկ քառսուն հոգով
Իրենց ուժին վստահ,
Եկած են խանդուքին ուզելու:
Եդուր սիրուն կ'ուտեն, կը խմեն,
Վոր բալքի հավներ, մեկին առներ:
Համա խանդուք՝ Դավթի ձեն լսեր էր,
Իրեն մտքի մեջ կ'ասեր՝
«Իմն որ կա՝ Դավիթն է.
Իմն որ չկա՝ Դավիթն է.
Եդանք ի՞նչ մարդ են՝ վոր յես եդանցմե առնեմ»:

Մեկ որ խանդուք նստած էր պատուհան,
Տեսավ իրեք գուսան կ'անցնեն փողոցով:
Կանչեց ենոնց, ասաց.
— Գո՛ւսաններ, մի եկե՛ք եստեղ:—
Հարցուց եդ գուսաններուն:
— Գուսաննե՛ր, որական դուք ի՞նչ կ'առնեք:
Ասին.— Խա՛նում, գուսանություն է,
Մենք ի՞նչ գիտնանք, վոր ասենք.
Որ կա՝ շատ կառնենք, որ կա՝ քիչ.
Որ կա՝ մեկ արծաթ, որ կա՝ երկու:
Խանդուք ասաց.— Գո՛ւսաններ,
Դուք եկեք, գնացեք Սասուն.
Քանի որ գնացիք, եկաք,
Որական ձեզի մեկական արծաթ փող տամ:
Գուսաններ շուտ մի ելան, դարձան,
Ուրախ-ուրախ դեմ ի Սասուն գնացին:
Խանդուք ասաց.— Գո՛ւսաններ, ո՞ւր կ'երթաք:
Գուսաններ ասին.— Խա՛նում, դու չասի՞ր՝
Ելե՛ք, գնացեք Սասուն, եկեք:
Ասաց.— Աստված ձեր տուն քանդի,
Սասուն որ կ'երթաք, յես բանի կը ճամբեմ,
Հո՛ դատարկ չե՛ք երթա, գա:
— Խա՛նում,— ասին,— ի՞նչ կ'ասես:
— Գո՛ւսաններ,— ասաց,— կ'երթաք Սասուն,

Կը հարցուէ Դավթի սենեկ,
Կ'երթաէ, կը նստէ ենտեղ,
Դավթի առջև ինձի՝ կը գովեէ,
Վոր ելնի, գա, ինձի առնի՛:
Թե հավնա՛վ ինձի, հավնա՛վ,
Թե չըհավնավ՝ գլուխ էար, երես պատ,
Են ել ինձի պետէ չի:

Գուսաններ ելան, գնացին.
Գնացին դեմ ի Սասուն:
Հասան Սասնա քաղաք:
Եդոնց տղաներ կը խաղային:
Գուսաններ տղաներուց հարցուցին,
Թե.— Դավթի սենեկ վո՞ր մեկն է:
Տղաներ մոտեցան եդոնց, ասին.
— Արե՛ք, ձեզի տանենք Դավթի սենեկ:
Ենոնք վոր մոտիկցան գուսաններուն,
Տեսան՝ մեկ-մեկ փետ կա եդոնց քև,
Եդ փետերի վերան ել ականջ կա:
Հասան տղաներ, ձեռ քցեցին,
Եդ գուսաններու սազեր բռնեցին:
Ասին, թե.— Եդ ի՞նչ տեսակ փետ է
Ձեռ քսվավ են մեկ սազի թելին,
Եդ սազի միջեն ձեն ելավ:
— Վա՛յ,— ասին եդ տղաներ,
Ու թափան գուսաններու վերան,
Վոր սազեր ենոնց ձեռեն առնեն:
Ենոնք մեկ-մեկի ասին.
— Տըղա՛, եդ փետի միջեն ձեն կ'ելնի,
Մի արի՛, աչկենք, տեսնենք եդ ի՞նչ է.
Քեռի Թորոս տեսավ, եկավ.
Եկավ, եդ տղաներուն բարկացավ.
— Իմկնի Սասունա ծոեր,
Եդ գուսա՛ն է, սա՛զ է.

Ձեն կ'ելնի մոտեն, անո՛ւշ-անո՛ւշ:
Դուք իսկի բան չեք տեսե,

Արե՛ք, տանեմ մեր սենեկ,
Եդոնք սազ զարկեն, խաղ ասեն,
Մենք ել ականջ անենք...
Առա՛վ գուսաններուն, գնաց իր սենեկ:
Հաց բերել ետու, գուսաններ կերան:
— Դե՛,— ասաց,— փշուր մի մեզի դամ արեք,
Մենք ել մեր ձեռնեն գալած նվեր կը տանք,
Կ'ելնեք, կ'երթաք ձեր տուն:
Գուսաններ ասին·— Մենք եկեր ենք,
Խանդուք խանում Դավթի համար գովենք:
Քեռի Թորոս ասաց·— Դավիթ յե՛ս եմ,
Դե՛հ, տեսնեմ՝ ինձի համար գովեցեք:
Գուսաններ հանեցին թևերուց սազեր,
Թելներ զըլցուցին, սազեցին,
Դարձան զխանդուք խանում գովեցին:
Վոր գովեցին պրծան,
Քեռի Թորոս հարցուց, ասաց·
— Գո՛ւսաններ, եդ վո՞րտեղ ե ձեր գոված խանդուք:
Գուսաններ ասին·— Կապուտկող ե,
Վաչոյ-Մարջոյ աղջիկն ե:
Քեռին դարձավ տղաներուն, ասաց·
— Զարկե՛ք եդ գուսաններուն:
Եդոնք եկեր են, վոր խաբեն,
Մեր եղնիկի սիրտ ավերեն:
Քեռին ձեռաց հասկացավ,
Վոր խանդուք ճամբեր ե գուսաններ՝
Դավիթ հասկանա, երբա իրեն առնի:
Զարկեցին գուսաններուն, սազեր ջարդեցին.
Գուսաններ ելան փախան...

3

Եկան,— քաղքի տակ կամուրջ մի կար,—
Կամրջի գլուխ կայնան, միտք արին, ասին·
«Կ'ելնի՝ մենք խանդուքի ասած չասինք,
Վոր մեզի ծեծեցին, զարկեցին:
Ձե՛, աղբեր, խանդուք մեզի եդպես սովորցուց,
Ապա եդոնք ծո՞ւռ են,

Ինչի՞ մեզի ծեծեցին, զարկեցին»։

Եդ վոր գուսաններ կ'ասեյին,
Դավիթ Ավագ սարեն վորս վեր թևին՝
Կուգար դեմ ի իրենց տուն։
Իրիկուն եր· կամրջի գլուխ կայներ
Գուսաններու ասած ականջ կաներ։
Դավիթ մոտեցավ ենոնց, ասաց·
— Գո'ւսաններ, եդ ի՞նչ է, վոր կասեք։
Գուսաներ ասին·— Մենք գնացինք Սասուն,
Խանդուք Դավթի համար տի գովեյինք,
Դավիթ եկավ, Սասունա ծուռ ճժեր
Մեր վերան լարեց, մեր սազեր ջարդեցին,
Մեզի ծեծեցին, քաղքեն հանին···
Մեր հույս վեր են սազերին եր։
Ասաց·— Գո'ւսաններ, Դավիթ վոր կա, յես եմ,
Են իմ քեռին է եղեր։
Առեք եսա փոդեր՝
Գնացեք, ձեր սազեր տվեք շինել,
Վոսկի թել տվեք քաշել վերան,
Բերեք, ինձի համար խանդուք խանում գովեցեք։

Գուսաններ գնացին, սազեր տվին շինել,
Եկան Դավթի սենեկ,
Իրեքն ել ջոկ-ջոկ խաղ ասին,
Ամեն մեկ՝ մեկ դիր խանդուք խանում գովեց։

Առաջին դիր են սիպտակմորուս գուսան
Առավ ձեռ իր դամբուրեն, լարեց,
Խանդուք խանում գովեց, ասաց·

«Տ'ասեմ, տի գովեմ խանդուք խանում Դավթին*)·
Ենոր բոյ գյոլու եղեգ նման է։
Տ'ասեմ, տի գովեմ խանդուք խանում Դավթին·
Ենոր սրտիկ Քուռկիկ Ջալալու մեյդանն է·

---

*) Ցերգ է։

Տ'ասեմ, տի գովեմ խանդուք խանում Դավթին.
Ենոր բերան մեղրով բացած է:
Տ'ասեմ, տի գովեմ խանդուք խանում Դավթին.
Ենոր ատամներ մարգրիտ շարած է:
Տ'ասեմ, տի գովեմ խանդուք խանում Դավթին.
Ենոր աչքեր գինու կթխա յե:
Տ'ասեմ, տի գովեմ խանդուք խանում Դավթին»:

Ենոր ետեվեն են թուխմորուս գուսան
Առավ ձեռ իր տամբուրեն, լարեց,
խանդուք խանում գովեց, ասաց.

«Կ'իրիշկեմ խանդուք խանում, ձեռ-վոտ կալամով
հաշած է*),
Ա՛խ, հալա տըգռ, կալամով հաշած է:
Կ'իրիշկեմ՝ ենոր եղնգներ, ռանդայով տաշած է,
Ա՛խ, հալա տըգռ, ռանդայով տաշած է:
Կ'իրիշկեմ՝ ենոր ծամեր, հառսուն նուղ ծամ է,
Ա՛խ, հալա տըգռ, հառսուն նուղ ծամ է:
Կ'իրիշկեմ՝ բոյն ու բուսաք, շատ նման է հաղֆի
բրջին,
Ա՛խ, հալա տըգռ, հաղֆի բրջին:
Կ'իրիշկեմ՝ երեսի կարմրություն, նռան գինի յե,
Ա՛խ, հալա տըգռ, նռան գինի յե.
Կ'իրիշկեմ՝ ենոր ծրծեր մեջ ծոցին,
Քանց Հալապա շաքար քուղցր է,
Ա՛խ, հալա տըգռ, քաղցր է»:

Վրա իրեք դիր են ջահել գուսան
Առավ ձեռ իր սազ, լարեց,
խանդուք խանում գովեց, ասաց.

«Ընդրա բոյն ասեմ,
Քառսուն գազ է, լգռ՛, մե չափ ավելի*).
Ընդրա աչքի թարթափներ ասեմ,

---

*) Ցերդ է։

Կոնկի թևի նման է, լգո՛, մե չափ ավելի։
Ընդրա օրտի լենք գովեմ,
Ցոթը գազ է, լգո՛, մե չափ ավելի։
Ընդրա ոիպտկություն ասեմ,
Քանց մեկ օրվա գալած ձուն սիպտակ է,
լգո՛, սիպտակ է։
Ընդրա կակղություն ասեմ,
Քանց բամբակի ֆուլեն կակուղ է, լը՛գո,
կակուղ է»։

Դավիթ վոր խանդուք խանումի գովք լսեց,
Են ինչ գուսաններ իրեք դիր գովեցին,
Առավ ձեռ իր սազ, յարեց, ասաց։

«Գո՛ւսաններ, դուք բարով եկաք*)։
Իմ սիրտ քանց կաթն անարատ եր,
Մերան թալիք, մակարդիք։
Իմ սիրտ քանց Սասնա բերդն ամուր եր,
Քլունգ առաք, իմ հիմ քանդեցիք։
Իմ սիրտ քանց աշունքվա գետ զուլալ եր,
Գարնան հեղեղի նման սղտորիք։
Գուսաններ, դուք ինձի հալիք, մաշեցիք,
Դեհ ձեր խանդուք խանում ինձի քաշեցեք»։

Դավիթ վոր պրծավ, սազ եդիր գետին, ասաց։
— Գուսաննե՛ր, եդ վո՞ր տեղ է
Ձեր գոված խանդուք խանում։
— Կապուտկող է, Վաչոյ-Մարջոյ աղջիկն է։
Ասաց։— Գո՛ւսաններ, կ'երթաք, կ'ասեք,
Դավիթ ասաց՝ վեց որ կը սպասի,
Ցոթն ավուր վերան իրեն հյուրն եմ։
Իմ ճաշ կ'ուտեմ Ճաժվան,
Խրամենց կը գամ Բանդումահին,
Ընթրիսին կը հասնեմ սեր խանումին։

---

*) Ցերդ է։

Հանեց, քանի մի փող ետու նվեր,
Բարով երթաք ասաց, ճամբու եդիր:
Գուսաններ՝ «Տը՛մբ, տը՛մբ»··· սազեր զարկեցին,
Ելան, ընկան ճամբա:

Դավիթ ելավ, գնաց տուն,
Հրողբոր կնկան ասաց·
— Իմ շորեր լվա, յես տեղ տ'երթամ:
Դառավ հրողբորն ասաց·
— Յես Զմշկիկ Սուլթան չե՛մ առնի·
Տ'երթամ, խանդուք խանում բերեմ:
Հրողբեր ասաց·— Դա՛վիթ, ես յոթ տարի եղավ,
Քառուն փահլևան նստած են առջև ենոր դուռ·
Դու ել կ'երթաս առջև ենոր պատուհան·
Թե քե նշան ետու, կ'երթաս·
Թե չ'ետու, կը դառնաս, կը գաս:

Գուսաններ եկան, հասան կապուտկող:
Խանդուք խանում պատուհան նստած եր·
Վոր տեսավ ենոնց, հարցուց, ասաց·
— Գո՛ւսաններ, գնացի՞ք Սասուն:
Ասին·— Հրամանք ես, խանո՛ւմ:
Աստված ենոնց տուն ավերի,
Եդոնք ամեն ծուռ են:
Գնացինք Դավթի սենեկ,
Քեզի տի զուլեյինք,
Բոնեցին մեզի ծեծեցին, մեր սազեր ջարդին,
Եկանք քաղքի տակ,—
Ելի աստված կյանք տա են Դավթին,
Մեր սազեր ետու շինել, ասաց·
«Կերթա՛ք խանդուքին կասեք՝ վեց որ կը սպասի,
Յոթն ավուր վերան իրեն հյուրն եմ:
Իմ ճաշ կուտեմ Ճաժվան,
Խրամենց կը գամ Բանդումահին,
Ընթրիսին կը հասնեմ սեր խանումին»:

Խանդուք գուսանների փող հաշվեց,

Քանի որ գնացեր, եկեր եյին, ետու:
Գուսաններ ելան, գնացին իրենց տուն:

4

Դավիթ խոսք տվածին պես,
Վեց որեն գնաց իր սենեկ,
Սնդուկ եբաց, շորեր հագավ,
Թուր կեծակին կապեց,
Քուռկիկ Զալալին քաշեց դուրս,
Սանձ եդի բերան, թամք եդի մեջքին,
Հեծա՛վ, ընկավ ճամբա:
Սասնա մինչև Ճաժվան
Ցոքն ավուր ճամբա յե,
Ճաժվանա Բանդումահու կամուրջ՝
Ցոքն ավուր ճամբա.
Բանդումահու կամրջից Կապուտկոդ՝
Ցոքն ավուր ճամբա:
Դավիթ իր ձին քշեց.
Զուր ճաշ հասավ Ճաժվան.
Կեսորին՝ Բանդումահու կամուրջ:
Տեսավ Գործուքա գուքան
Եկեր ե ենտեղ, դաշտ կը վարի:
Ցոք գուքան ե:
Գուքանավոր նստեր են հացի:
Դավիթ եկավ, ասաց.
— Բարի աջողո՛ւմ, գո՛ւքանավոր:
— Աստծու բարին,— ասին,—
Կարի՛ք տղբեր, դու բարո՛վ եկար.
Նստի, հաց անուշ արա:
Դավիթն ասաց.— Չե՛, յես կ՚երթամ,
Թող հաց ձեր ճեր ուտեն:
Ցես ուտեմ իրենց բան չի մնա:
Գուքանավոր վերուց ասաց.
— Աշխարհ գուքանի մոտ կը լիանա:
Դավիթ գնաց արտի կուշտ, ձիուց իջավ,
Սանձ ձիու բերնեն հանեց,

Զին ենտեղ թողեց,
Գնաց, նստավ, մեջք տվեց սելի ական:
Մեծ մի ման փլավ են բերած,
Բերին դրին Դավթի առաջ.
Երկու հաց կաներ մեկ պատառ.
Հինգ պատառ զարկեց, փլավի տակն առավ:
Յոթ որվա պաշար
Բերին դրին Դավթի առաջ.
Յոթ գուրթնի հաց ու ջուր
Բոլոր կերավ, խմեց, մանանա չ'եթող:
Ելավ վոր պիտի երթար,
Գուրթանավորներ իրար ասին.
— Ի՞նչ անենք, մենք մնացինք անոթի,
Եդ նամբորդ մեր յոթ որվա պաշար կերավ.
Վեց որ պիտի եստեղ գուրթան անենք,
Մեր ետև հաց բերող չկա, ի՞նչպես տ'անենք:
Մենք նամբենք տուն, պիտի ասեն՝
Կեսոր եք գնացե, ձեր հաց չի պրծե.
Թե վոր ասենք՝ հյուր եկե մեկ մարդ, չեն հա'վատա:
Թ'ասենք՝ գոմեշն ե կերե, ելի չեն հա'վատա:
Դավիթ լսեց, ասաց.— Ի՞նչ տի վարեք:
Ասին.— Այ, եդա դաշտ:
Ասաց.— Դուք եստեղ փիչ մի նստեք,
Ցես կ'ելնեմ, են վեց ավուր գուրթան
Մեկ ժամվա մեջ կ'անեմ:
Եդ ասելուն Դավիթ ելավ,
Յոթ գուրթան կապեց իրարուց, ձին նստավ
Ու քաշեց զգուրթաններ:
Մեկ տաս փաթ գնաց, եկավ,
Դաշտ մի տեղ սացուց:
Մշակներ ասին.— Եդ քո շնորհք չե,
Քո ձիո՞ւ շնորհքն ե:
Են ժամանակ Դավիթ իջավ ձիուց,
Դավիթն բնատեն առավ ձեռ,
Ու ինք վարե՞ց, վարե՞ց, արտ պրծավ:
Մշակներ զարմացան, բերաններ մնաց բաց:
Գուրթանավոր ասաց.— Սասունա Դավիթ վոր կասեն,

Զըլնի՞ դու յես, ա՛յ ճամբորդ:
Ասաց·— Ցե՛ս եմ, վոր կամ:
Ասին·— Դավի՛թ, աշխարհի մեջ՝
Քո պես կտրին՝ վոչ եղեր ե, վոչ կ'ըլնի,
Վորտեղ վոր դու երթաս՝
Քո վոտ քարին չըդիպնի·
Աստված քեզի վատ որ նշանց չը տա:

Դավիթ ելավ եդ տեղեն,
Սանձ դրեց ձիու բերան, հեծավ քշեց:
Կապուտկող, ո՞ւր ես··· եկա քեզի:

Դավիթ եկավ, տ'անցներ
Զմշկիկ Սուլթանի պատուհանի տակով,
Զմշկիկ Սուլթան տեսավ՝
Եկավ ենոր առաջ, ասաց·
— Դա՛վիթ, արի երթանք եսոր ինձի հյուր:
Ասաց·— Չե, ինձի ճամբուց յետ մի գցի:
Ասաց·— Ցես գիտեմ, դու խանդուքի համար կերթաս,
Համա խանդուք իմ ճկուքի հավասար չի՛լնի:
Զդավիթ խարեց, տարավ տուն·
Կերան, խմեցին, ելան քնան:

Լուսուն Դավիթ փոշմնավ իր բռնած բանեն, ասաց·
«Եդ ի՞նչ բան եր՝ յես բռնեցի,
Պիտի մեր ազգ չխաբվեր·
Ցես ինչի՞ խաբվա մեկ կնկա ապով»:
Ելավ, ձին քաշեց, հեծավ, քշեց:
Զմըշկիկ Սուլթան ասաց·— Դու կեցի՛·
Եկար, ինձի խաբեցիր, գնացիր:
Ու հակառ ընկավ հետ Դավթին:

5

Վեց որ վոր եկավ անցավ,
Խանդուք խանում առավոտ լուսուն՝

Ելավ, նստավ պատուհան,
Դավթի ճամբան բռնեց:
Մեկ ել իրիշկեց՝ ինչ տեսնի.
Կրակ մեջ երկինք, մեջ գետինք կը տա:
Մեկ ձիավոր մի մեջ երկինք, մեջ գետինք կը գա,
Հազիվհազ կերևա:
Ասաց. «Կա–չկա ես Դավիթն է»:
Դարձավ դռնապանին, ասաց.
— Գորգի՛զ, հասի, դուռ գարկ.
Գահ է, վոր ձիավոր մի հասնի դուռ:
Գորգիզ հասավ, դուռ եզար.
Խոսք դեռ բերանն եր, Դավիթ հասավ վեր դռան,
Քշեց, գնաց առջև խանդուքի պատուհան:
Խանդուք խանում՝ վոր աչք ընկավ,
Զ'Դավիթ տեսավ՝ ուրախացավ.
Ուրախություն նստեց խնձոր մ'եզար Դավթին:
Դավիթ խնձոր բռնեց վեր ձիուն,
Խնդացավ վեր խնձորին:
Իրիշկեց, տեսավ զխանդուք
Գուսաններ ինչ գովացեր եյին,
Դեռ կեսն ել չեյին ասե:
Ձին քշեց առաջ, տեսավ՝
Մարդու մեկ գուրզ ձեռք կայնե ետև դռան:
Դավիթ միտ վե ասաց.
«Ինչ մորե մեկներ եմ, մարդու բարև չեմ տվե.
Թե վոր եդոր բարև տամ՝
Տ'ելնի ցավ, ընկնի իմ սիրտ, ինձ տի սպանի:
Թե վոր եդոր բարև չը տամ՝
Եդ փահլևան ինձ տի սպանի»:
Ահու բարև ետու, մտավ ներս:
Գորգիզ ենոր բարև առավ:
Դավիթ ասաց.
— Ինչ մորե մեկներ եմ՝
Մարդու բարև չեմ տվե.
Ենոր Գորգիզն եմ տեսե՝
Ահու բարև եմ տվե,
Լգո, ահու բարև եմ տվե:

Գորգիզ ասաց.
— Քառասուն տարի դռնապանություն եմ արե՞
Մարդու բարև չեմ առե.
Եսոր Դավիթն եմ տեսե՝
Ահու բարևն եմ առե,
Լգո, ահու բարևն եմ առե:
Դավիթ հարցուց եդոր.
— Գորգիզ, եդ ի՞նչ գունդ են դրած քո ձեռք:
Թև երկնցուց, առեց զգուրզ ու թալեց.
Ու դեռ հալա կերքա՛...
Գորգիզ հարցուց.— Դավիթ, ինչի՞ յես եկե:
Ասաց.— Խանդուք խանումի համար.
Ցես ինչպե՞ս տեսնեմ ենոր:
Ասաց.— Ուրբաթե-ուրբաթ խանդուք խանում
Քառասուն նաժիշտներով կը գա խաս բախչեն.
Եսոր ուրբաթ ե, կ'երքանք ենտեղ, կը տեսնես:
Գորգիզ վերուց ասաց.
— Վոր խանդուք խանում առնես,
Ինձի կանե՞ս քեզի քավոր:
Ասաց.— Կ'անեմ,
Կ'ընենք սանհեր Դավիթ, քավոր Գորգիզ:

Դավիթ ելավ գնաց,
Ձիով քշեց խանդուք խանումի խաս բախչի մեջ:
Ջին թողեց վարդ, ըռեհանների մեջ արածի,
Ինք անմահության հավուզի վերան պառկավ:
Արև վոր տաքացավ,
Խանդուք խանում քառասուն նաժիշտով եկավ,
Տեսավ Դավիթ կո ձին թողե խաս բախչի մեջ,
Վարդ, ըռեհաններ կարածի,
Ինք պառկե հավուզի վերան, քնե:
Խանդուք խանում ասաց.
— Են Դավիթ ինչ անհիմա մարդ ե.
Գնացե՛ք, ասեք, վոր են տեսակ մարդ ե,
Թող ելնի, ենտեղեն երքա:
Մեկ հաց ել տարեք, թող ուտի,

Նոր ասեմ՝ մեր խանդուք խանում կասի՝
Թող ելնի, ենտեղեն երթա:

Հաց տարան, դրին առջև Դավթին, Դավիթ կերավ:
Ծառաներ ասին.— Մեր խանդուք խանում կասի՝
«Թող ելնի, ենտեղեն երթա:
Ենոր ո՞վ ասե՝ գա,
Ձին թողնի խաս բախչի մեջ,
Վարդ, ըռեհան ուտի, տրորի, թավալ տա.
Են ենոր հոր չիմա՞նն ե:
Ոձն իր պորտով, հավքն իր թևով
Մեր խաս բախչի վրա չեր իջե.
Են քա՞նի գլուխ ունի,
Մտնի խաս բախչի մեջ,
Ձին թողնի ենտեղ արածի:
Ի՜նչ տեսակ անիմա մարդ ե.
Թող ելնի, ենտեղեն երթա.
Ափսոս ե, թե չե փահլևաններ կը գան,
Ենոր ջոջ պատառ ականջ կը թողնեն»:
Դավիթ ասաց.— Ինչի՞ դուք շուտ չեյիք ասե.
Քանի յես հաց չեյի կերե.
Հաց կերա, պրծա, նոր ասիք:
Վոր եդպես ե, յես չեմ երթա.
Ինչ ենոնց ձեռնեն կը գա, թող չրխնայեն:
Դնացին, խանդուք խանումին ասին՝
— Դավիթ եսպես ասաց:

Ենոնք վոր գնացին,
Դավիթ կանչեց խանդուքի ձիասյան.
Ասաց.— Իմ ձին թողնեմ վո՞ւրտեղ:
Են ել դարձավ, ասաց.
— Քառասուն փահլևանների ձիանք
Կո գոմն ե, դո՛ւ ել տար:
Դավիթ գոմի դուռ բացեց,
Ձիու սանձ ռերնեն եհան,

Քաշեց, եթող են ձիերու մեջ, ասաց·
— Թե դու եդ ձիեր հաղթեցիր,
Ցես ել ենոնց տերվանք տի հաղթեմ:
Ռուդկիկ Զալալին խրխնջաց,
Են քառսուն ձիու կեր մոտերուց առավ,
Ետու իրեն դոշի առջև, ճխթեց, կպցուց պատ,
Ենոնց ամենի դարման կերավ:
Ծառաներ խաբար տարան խանդուքին, ասին·
— Ձին իր հունար ծախսեց, մնաց տեր:

6

Ինչ խանդուք խանում խնձոր եզար Դավթին,
Են քառսուն փահլևան, վոր ենոր համար
Յոթ տարի ենտեղ նստեր եյին,
Շատ նեղացան, ասին·
— Մենք յոթ տարի եստեղ ենք,
Մեզի նշան չ'ետու,
Սասնա շաղգամակեր Դավիթ նոր եկավ,
Դեռ չի տեսե՝ խնձոր եզար ենոր վեր ձիուն:
Դավիթ գնաց եդ քառսուն փահլևանի մոտ,
Տեսավ՝ քառսունն ել նստած, գինի կը խմեն:
Ենոնք ինչպես ճծեր մոտ Դավթին:
Փահլևաններ ինչ Դավթին տեսան,
Ամեն վախեցան, դոդացին,
Խոսք մեկ արին, ասին·
— Զ'Դավիթ հարբեցնենք, սպանենք,
Թե չե՝մեր բան զուր ե·
Մենք ել խանդուքի տեղ ըլնինք,
Ենոր չենք թողնի, մեզնե մեկին առնի:

Տարան Դավթին, նստեցուցին իրենց մեջ,
Յոթ տարվա նուան գինին դրին՝ խմեն:
Դավիթ ինչ նստավ, ենոնք մեկ–մեկ թաս տվին,
Ասին·— Դավի՛թ, դու բարով ես եկե,
Ա՛ռ, խանդուք խանումի կենաց խմի:
Ասաց·— Գինու կարաս ինձի նշանց տվեք՝

Ինքամ գինի խմեմ, գամ հաց ուտեմ.
Վոր իմ սրտի թոզեր սրբվի.
Եդով մարդու բերան չի թացվի.
Ցես ճնճղուկ չեմ, որ ինձի ջուր կուտաք,
Ուղտ գդալով կը ջրվի՞:

Ելան մեկ ուրիշ թաս բերին,
Են թասն ել բանց ջոջ տաշտ եր:
Են թասով սկսեց խմել:
Դավիթ բեֆովցավ, հարբավ.
Դինին ենոր վերուց, տարավ,
Եղավ շոխ շարգան, սրմբուլ գրդական:

Դավիթ վոր հարբավ, գլուխ կիջեցներ սրտին,
Նորեն կը բարձրացներ, կը շիտկեր:
Փահլևաններ եդ վոր տեսան,
Թրեր բաշին, կայնան,
Ու պիտի խփեն Դավթին:
Դորգիզ դռնից տեսավ, կանչեց.
— Սանհե՛ր Դավիթ, սանհե՛ր Դավիթ,
Ճանն գլխուդ վերևով կ'անցնի, գլուխ բոու:
Փահլևաններ իրենց թրեր պահին,
Համա Դավիթ բան չեր լսի:
Խանդուք խանում վերուց աչքեց,
Տեսավ Դավիթ գլուխ կ'իջեցնի սրտին:
Վոր տեսավ, ելավ, գնաց,
Ջվալ մի կաղին բերեց, եդիր երդիսին,
Են ժամանակ ինչ Դավթի գլուխ կիջներ ծոցին,
Փահլևաններ ինչ թրեր կը հանեյին դուրս,
Վոր զարկեն, Դավթի վիզ կտրեն,
Խանդուք խանում վերուց կաղին կը թալեր:
Կը դիպներ սինուն, սինին կը զընգար.
Դավիթ գլուխ կը վերուցեր,
Ենոնք թրեր կը պահեյին,
Կը սրբսրփային, կը դոդային:
Խանդուք են ջվալ կաղին՝
Մեկ-մեկ թափեց տակ, պրծուց:

Դավիթն ել լուրջացավ, ծառային ասաց·
— Ելի՛, եսա սուփրեն վերո՛ւ,
Մեղք ե եսա հացեր կոխեն:
Ելավ ձեռ ետու, սուփրեն տի վերուցեր,
Փահլևաններ ասին·— Սուփրեն թող կենա·
Գնացեք, հաց բերեք մեկ ել ուտենք:—
Ենպես կանեն, վոր թրեր չ'երևան:—
Դավիթ ասաց·— Սուփրեն վերուցե՛ք:
Ձեռ ետու, վերուց, ասաց·
— Սուփրեն կ'երթա ետև հացին,
Հաց չ'երթա ետև սուփրին:
Տեսավ ամեն փահլևանի առջև մեկ թուր տկլորած:
Ասաց·— Եդ ի՞նչ ե ձեր առջև:
Ասին·— Մեր թրերն են:
Ասաց·— Տվեք տեսնեմ:
Ամեն ժողվեցին, տվին ձեռ:
Դավիթ վերուց, ասաց·
— Եսոնք խորոտ կանգրիան կ'ելնեն,
Դարուն աղջիկներ տանեն, բանջար հանեն:
Ձեռ տվեց, թրեր ամեն ժողվեց,
Ետու ծնկան, կոտրտեց,
Ինչ վոր մարդ բուռ մի ֆիրրիք կոտրի:
Ծալեց, ծալմլեց, ասաց·— Գո՛րգիզ,
Տար, թալ մեր ձիու խուրջին·
Լավ պողպատ-երկաթ ե,
Իմ ձիուն նալ, բևեռ չկա·
Տանեմ, շինեմ իմ ձիուն նալ, բևեռ:
Մեկ տարի իմ ձիու համար հերիք ե:
Փահլևաններ վոր ենոր արած տեսան,
Շուտ մի ելան, փախան սենեկեն դուրս:
Դավիթ կանչեց·— Քավո՛ր Գորգիզ, արի
մտնենք ներս,
Տուն մնաց մեզի, բակ մնաց հավերուն:

7

Են փահլեվաններու մեջ
Խանդուք խանում Դավթին հավնեցավ,

Ասաց·— Թող Դավիթ գա վեր,
Մեկել քառասունին հաց տանեն ենտեղ:
Դավիթ ելավ, գնաց Խանդուքի սենեկ:
Ինչ աչք ընկավ, Խանդուքին տեսավ,
Դե՛, ջահել տղա յեր, չդիմացավ,
Ձեռ թալեց, գխանդուք խանում կիք մի գրկեց,
Թև եթալ վիզ, ճակատ պագեց,
Սիրտ չըհովացավ·
Մեկ ել՝ երես պագեց,
Ելի սիրտ չըհովացավ·
Մեկ ել՝ ձեռ թալեց, վոր սիրտ պագի,
Խանդուք բուունցքի մ'եզար Դավթի քիթ-բերան:
Ինչ աղբուր ջուր կը թալի,
Ենպես արուն Դավթի բերնեն թալեց:
Ասաց·— Դու քո հոր կտրիճն ես, յես ել իմ·
Դու են մեկ անգամ իմ ճակատ պագեցիր,
Քո ճամբու խաթրի համար, ինչ դու եկեր եյիր·
Են մեկել անգամ, վոր իմ երես պագեցիր,
Քո ջահելուքյան համար, քեզ հալալ եր·
Դու ինչի՞ վրա իրեք դիր իմ սիրտ տի պագնեյիր:

Դավիթ լռըկավ, դարձավ յեսու,
Եկավ Գորգիզին ասաց·
— Գո՛րգիզ, իմ ձին քաշի դուրս:
Գորգիզ գնաց ձին բերեց,
Դավիթ հեծավ, տ'երքար,
Խանքուդ խանում ընկավ ետև,
Լացեց, աղաչեց Դավթին:
Դավիթ յետ չըդառավ:
Խանդուք խանում ենպես գնաց,
Ձմուշկներ թոդեց, թաթացիկ գնաց·
Թաթեր կտըրտվան, վոտքեր ընկան գետին,
Փշուր մի բորիկ գնաց·
Վոտքեր նոնըդվան, վիրավոր ելան,
Արուն-արնջուր լցվավ տակ·
Ենտեղ ինչ վոտ կը դներ, լիք արուն կ'ելներ գետին:
Դավիթ վեր ձիուն հա՛ կը գա, հա՛ ականջ կ'անի·

Իրիշկեց մեկ ձեն կը գա, հա՛ կը բռռա.
— Դավի՛թ, Դավի՛թ, կանգնի,
Կանգնի, չուր յես գամ, հասնեմ.
Իրիշկի ետև՝ իմ հալ տես, ճոր գնա:
Դավիթ ձիու վերևեն կը դառնա, կ'իրիշկի,
Կը տեսնի խանդուք խանում՝
Բոբիկ ետևեն կը վազի:—
Ե՛, եսքան ժամանակ խանդուք խանում
Բոբիկ վոտ գետին չեր դրե,
Հիմի բոբիկ դաշտի մեջ կը վազի.
Վոտ ամեն եղեր ե արուն:
Խանդուք Դավթին ասաց.
— Իմ մեղք մի՛ թալի քո վիզ, դարձի երթանք.
Դավի՛թ, տնա՛շեն, ի՞նչ շուտ նեղացար:
Դավիթ ասաց.— Ցես Սասունա քո ապով եկա.
Եսքան ճամբա եկա, հասա քո մոտ,
Մեկ անգամ քո երես պագի.
Ասպա են բռունցքին դու ինձի գարկիր,
Հալբա՛թ կը նեղանամ:
Խանդուք ասաց.—Ուխտ ըլնի՝ քանի հոգի ինձի կա,
Ցես քո ետևեն բոբիկ տի գամ:
Դավիթ խղճացավ, դարձավ:
Ինք, Խանդուք եկան տուն:

8

Աջմու Շապուհ արքան ելավ,
Թուղթ գրեց Բապը փրենկին,
Ասաց. «Մեկ մարդ Սասունա եկե,
Եդ մարդու անուն ել Դավիթ կ'ասեն,
Կապուտկոդու խորոտ Խանդուք
Զոռովեն կուզի տանի»:
Բապը փրենկին կանչեց իր վազիր-վաքիլ, ասաց.
— Շահու թուղթ կարդացեք,
Տեսնենք ի՞նչ ե գրած մեջ:
Թուղթ կարդացին, իմացան:
Բապը փրենկին ելավ գրեց Դավթին.

«Դա՛վիք, մենք լսեր ենք՝
Դու շատ զորեղ մարդ մ՝ ես.
Կը գաս, արի հետ մեզ կռիվ.
Վոր չես իգա, զորք կը քաշենք՝
Քո երկիրը քար ու քանդ կանենք,
Ինչ կա չկա, լոպկենք տանենք»:

Թուղթ առան, բերին,
Տվին Խանդուքի ծառային.
Են ել ետու Խանդուքին.
Խանդուք կարդաց, ասաց.
— Եդ թուղթ ո՞վ ե բերե:
Ծառան ասաց.— Երկու հատ մարդ:
Խանդուք ասաց.— Տար մեր սենեկ,
Են երկու մարդ լավ մի պատվի:
Ծառան ելավ ենպես արեց:
Մնաց, չուր լուս բացվեց,
Խանդուք խանում թուղթ գրեց.
«Մենք քե վնաս մի չենք տվե,
Մենք քո անուն չենք ել լսե,
Ու քեզի ել չենք ճանչենա:
Վոր դու կը գաս, մենակ մի՛ գա,
Դու չես կարնա Դավթին հաղթի.
Քեզ հետ ուրիշ թագավոր ել բե,
Թող են ել գա, վոր քեզ ոգնի»:

Խանդուք են թուղթ ծալեց,
Տվեց ծառային, ասաց.
— Առ ես նամակ, տու են երկու մարդուն,
Աղեկ շոր հագցրու, տաս վոսկի ել հետ,
Երկու ձի ել տու, թող հեծնեն երթան:
Ծառան ելավ ենպես արեց:
Են երկու մարդ Խանդուքին ոբհնեցին,
Գլուխ տալով ասին.
«Վոտոքով եկանք, ձիով կ՝երթանք»:
Խանդուք Դավթին բան չի ասի՝
Մեջ են թղթին ինչ կար գրված:

Են երկու մարդ թուղթ տարան,
Տվին իրենց թագավորին:
Թագավոր իր վազիր-վաֆիլ ժողվեց.
Թուղթ կարդացին, զարմացան, ասին.
— Եդ ի՞նչ զորեղ մարդ է Դավիթ.
Ելեք,— ասին,—խարար ղրկենք
Խանդուքի հոր հողի դուշման՝
Են վեց երկրի նստողներին:
Ելան ենտեղ խարար ղրկին...
Մեկ թուղթ էլ նամբեցին Դավթին, ասին.
«Դավիթ կո՛ մենք եկանք»:

Թուղթ բերին, տվին Դավթին.
Են էլ տվեց Խանդուքին.
Խանդուք կարդաց, ասաց.
—Ես երկու դիր թուղթ կը գա.
Մեկ առաջ, մեկն էլ հիմի:
Բասլը ֆրենկի թագավորն է
Եդ թուղթ գրե, ղրկե ֆեզի.
Հետ ֆեզ ենիկ կռվել կուզի:
Են մեկ անգամ թուղթ վոր եկավ,
Ցես ֆեզ չ'ասի, ասաց Խանդուք.
Ելա գողտուկ թուղթ գրեցի.
«Թե վոր կը գաֆ՝ երկսով եկեֆ.
Դուֆ չեֆ կարնա մենակ կռվեֆ»:
Ենպես գրի, վոր վախենա,
Չ'ելնի ու գա հետ ֆեզ կռիվ:
Համա դու տես, չի՛ վախեցե,
Զորքով, զոռով ելեր եկե, կուզի կռվել...

9

Զուր լուսուն, ինչ աղոթքան բացվավ,
Քանի աստղ երկինք կար,
Ենքան վրաներ բռնեցին
Թալոր Խանդուք Խանումի հոր քաղքին,
Ամեն Խանդուք Խանումի հոր դուշման:

Բապը Ֆրենկին
ժողվեր ե իր զորք, եկե
Դրե մեջ խանդուք խանումի հոր հողին,
Վոր խանդուք խանում առնի, տանի:

Աջմու Շապուհ արքան
ժողվեր ե իր զորք, եկե,
Դրե մեջ խանդուք խանումի հոր հողին.
Վոր խանդուք խանում առնի, տանի:

Չինաստանա թագավոր
ժողվեր ե իր զորք, եկե,
Դրե մեջ խանդուք խանումի հոր հողին.
Վոր խանդուք խանում առնի, տանի:
Սև թագավոր
ժողվեր ե իր զորք, եկե,
Դրե մեջ խանդուք խանումի հոր հողին,
Վոր խանդուք խանում առնի, տանի:

Ողան-Տողան
ժողվեր են իրենց զորք, եկե,
Դրե մեջ խանդուք խանումի հոր հողին,
Վոր խանդուք խանում առնեն, տանեն:

Հալապա թագավոր
ժողվեր ե իր զորք, եկե,
Դրե մեջ խանդուք խանումի հոր հողին,
Վոր խանդուք խանում առնի, տանի:

Լանդբանդ թագավոր՝
ժողվեր ե իր զորք, եկե,
Դրե մեջ խանդուք խանումի հոր հողին,
Վոր խանդուք խանում առնի, տանի:

Են քառասուն փահլևաններ մեկ-մեկի ասին.
— Մենք կռիվ չենք երթա.
Ես յոթ տարի եստեղ նստեր ենք,

Մենք խանդուքի երես չենք տեսե·
Դավիք երեկն եկավ,
Զխանդուք տեսավ, հետ ենոր բեռ արեց·
Թող են երքա կռիվ անի:

Լուսուն խանդուք ասաց·
— Ո՞վ տ'երքա ձեզնեն կռիվ:
Են քառուն փահլևան ասին·
— Ով տ'երքա մեզնեն կռի՞վ·
Խնձոր ում տվեր ես՝ են տ'երքա կռիվ:
Թե կուզես խարար մեզ տուր, մենք երքանք կռիվ:

Դավիք լսավ եդ խոսքեր, ասաց·
— Են կռիվ իմ բանն է·
Ցես տ'ելնեմ, երքամ կռիվ:
Ելավ, խանդուքի կամքն առավ, ասաց·
— Ցես գնացի կռիվ···
Իրեք որ վոր լըմընցավ, եկա՝ եկա,
Վոր չ'եկա, յես սպանվա·
Դաս, սպանվածներու մեջեն
Իմ մարմին վերցնես, տաս թաղել:
Իմ նշան ել ի՞նչ է·—
Խաչ Պատերազմին վեր իմ աջ թեվին:
Են խաչով ինձի կը ճանչենաս,
Իմ մարմին կը բերես, կը հորես:

Դավիք գնաց, վոր ձին քաշի, խանդուք ասաց·
— Վա՜յ, իմ մտեն գնաց քո ձին քաշելի դուրս:
Ետև Դավքին վազեց, ասաց·
— Դավի՛ք, Դավի՛ք, կանգնի·
Ցես գամ քո ձին քաշեմ դուրս:
Դավիք ենտեղ դադրավ:
Խանդուք մոտավ ախոռ՝
Տեսավ են քառսուն ձին ել
Փախած են վերին քունջ, կծկըված,
Զեն իշխենա դուրս փախնի·
Դավքի ձին մեկ սալի պես մեջ ախոռին կայնե:

Խանդուք ձեռ թալեց ձիու վիզ՝
Տի բռներ, քաշեր դուրս,
Ձին իրիշկեց, չը նանչեցավ, վիզ չ'ետու.
Գլուխ ենպես թալեց,
Խանդուք եկավ, թոքփալով դիպավ գետին:
— Վա՜խ, Դա՛վիթ,— ասաց,— քո ձին ինձի սպանեց:
Դավիթ մտավ ներս, Խանդուքին գրկեց, ասաց.
— Ե՜յ ձի, աստված քո շնորհ կտրի.
Ինչի՞, մարդ կնկան կը զարկի՞.
Դու չը տեսա՞ր՝ կնիկ եր:
Ասաց.— Խանդո՛ւք, ձեռ տու, քաշի դուրս:
— Ս՛իտ ունես ինձի քո ձիով սպանե՞ս:
— Ձե՛,—ասաց,— ձին ել ձեն չի տա, քաշի,
Են գիտեր դու ստար եյիր:
Գնաց, ձեռ ետու ձիու գլուխ, քաշեց.
Ձին բան ել չ'արավ. թամբ եդիր վերան:
Դավիթ ինք փարքաշներ կապեց,
Ելավ, հեծավ Քուռկիկ Ջալալին,
«Հի՜» երավ, թռուց Քուռկիկ Ջալալին,
Ջպարիսպ անցավ, հասավ մեջ կռվին:

10

Դավիթ մեկ քարի վրա կայնավ, իրիշկեց՝
Տեսավ, ինչքան ծառ կա անտառ,
Ենքան մարդ եկած մեջ դաշտին.
Ենքան վրան զարկած են ենտեղ, ասաց.
«Ենոնք տի զարթեցնեմ, նոր կռվեմ»: Ասաց.—Ե՜յ,

«Ով քուն եք, արթուն կացեք*),
Ա՜խ, հալա արթուն կացեք.
Ով արթուն եք, ձեր ձիանք թամբեցեք.
Ա՜խ, հալա ձիանք թամբեցեք.
Ով թամբեր եք, ելեք հեծեցեք,
Ա՜խ, հալա ելեք հեծեցեք.

---

*) Ցերդ ե։

Զասեմ՝ Դավիթ գող եկավ, գող գնաց,
Ա՜խ, հալա գող գնաց»:

Դավիթ էշեց Ռուդկիկ Զալալին,
Շիտկավ թամբին, կանչեց, ասաց.
«Հիշա Մարուքա բարձր Աստվածածին,
Խաչ Պատերազմին վեր Դավթի աջ թեվին.
Աջու երթա, ձախու գա,
Կտրելով, զորբ չը թողա»:
Ասաց, անցավ վրաններու մեջ, զարկեց:

Ինչ ոլ կարկուտ ընկնի՝
Հասած ալտ փչացու, ջարդի,
Ենպես Դավիթ ընկեր ե զորբի մեջ,
Շարբով կը ջարդի, կը գա:
Շապուհ արբան, վոր Դավթին տեսավ,
Գիլու պես կատղավ, վռնաց:
Շապուհ արբան զորբին ձենեց.
«Ելե՛ք, պատրաստվե՛ք, ամուր կայնե՛ք».
Ելան մեյդան, կռիվ արին:
Դավիթ դարձավ, զարկեց Շապուհին,
Թուր կեծակով գլուխ կտրեց.
Զորբ ահու չըխլվլաց:
Ելավ, գնաց մեկ-մեկ երեր՝
Ողան-Տոդան թագավորներ,
Կտրեց մեկ-մեկ ենոնց վզներ,
Դրեց ենտեղ:

Իրիկուն եկավ՝ մոտ Խանդուքին:
Լուսուն ել մ' ել գնաց կռիվ:
Զկարցան հետ Դավթին կռիվ անեն:

11

Դուշմաններ խորհուրդ արին,
Հալապա թագավոր դրկեցին Սասնա քաղաք՝
Մոտ Զենով Հովան, ասին.

— Մենք իմացեր ենք՝
Սասնա քաղաք շատ կտրիճ փահլեվան կա.
Մեկ փահլեվան ճամբես,
Ետեղ մարդ մի կա շատ կտրիճ է,
Դա, ենոր սպանի, երթա,
Մենք յոթ քաղաք նվեր կը տանք:

Ցռան Վերգոյին մեկ տղա կար,
Անուն ենոր Պարոն Աստղիկ:
Պարոն Աստղիկ հեծավ իր ձին,
Մեջ երկինք, մեջ գետինք,
Թռավ, գնաց, հասավ կովուն:
Դավիթ ճանաչեց ենոր:
Իրիկուն եկավ, ասաց.— Խանդո՛ւթ,
Յես չեմ երթա լուսուն կռիվ:
Խանդութ խանում դարձավ, ասաց.
— Վոր դու չե՛ս ամչենա, յե՛ս կ'երթամ կռիվ:
Դավիթ ասաց.— Դե՛, երդըվցի,
Վոր երթամ կռիվ, դուրս չ'ելնես,
Դուռ չը բանաս, երդիս չը բանաս,
Նոր յես կ'երթամ կռիվ:
Խանդութ խանում ասաց.
— Լավ, յես չեմ ելնի դուրս,
Իմ դուռ կը շինեմ, կը նստեմ ետեղ,
Ինձի համար քարգահ քաշեմ:

Լուսուն Դավիթ գնաց կռիվ:
Զուր կեսորին կռիվ արեց,
Կռիվ արեց հետ Պարոն Աստղկան:
Թրի շառավիղք եզար մեջ երդիսին:
Խանդութ խանում մեկ ել տեսավ՝
Լուս մի եկավ իրեն սենեկ.
Ասաց. «Ես ի՞նչ բան է, յես չեմ գլտի
Ամպ չի, անձրեվ չի գա,
Դիշեր չի, կայծակ չի տա»:
Խանդութ խանում չը դիմացավ,
Ելավ, պատուհան եբաց, իրիշկեց.

Տեսավ մեկ մի հրեղեն ձին հեծե,
Դավթի գլխու վերև կը փրռա.
Հավլունի թուր կը փրռացու,
Կրակ կը թափի վեր Դավթի գլխուն:
Խանդուք խանում իմաստուն, կարդացվոր եր.
Գիրք եդիր ենտեղ, գիրք կարդաց.
Տեսավ Դավթի հրողբոր տղան եր,
Ինչ թուր կը շարժեր ենոր գլխուն,
Կրակ կը թափեր վեր Դավթին, կ'երթար անդունդք:
Դավիթ ենոր բան չեր անի:
Խանդուք խանում յերգեց, ասաց.

«Հրողբեր, դու եկիր բարով, հազար բարով*).
Կրակ թափեցիր մեր Դավթի գլխուն,
Կրակ թափեցիր մեր Դավթի գլխուն,
(լա՛) Տուն ավրեցիր Խանդուք խանումին»:
Դավիթ ենոր ձեն առավ, ասաց.
— Վա՛յ, քո կնկան բախտ կտրի.
Ցես գիտեյի դու չես մնա տուն:
Դավիթ շատ բարկացավ,
Նետ-ազեղ դեմ արավ
Պարոն Աստղկա ձիու փորին,
Ձիու փոր ենտով ծակեց,
Պարոն Աստղկան գլխու գազար վե դուրս ետու:
Պարոն Աստղիկ ընկավ գետին, ձեն ետու, ասաց.
— Ա՛խ, ես մեր ազգականի զարկերն ե ինձի
հասավ:—
Են չեր ճանաչի զԴավիթ:
Դավիթ ասաց.— Ցես իմ աչքեր կուրցուցի.
Մեր ադաթ են ե, ով մեռնի,
Գլուխ դնի ազգականի ծնկան վերան,
Հոգին տա աստրծուն:
Դավիթ Աստղկան գլուխ եդիր վեր իր ծնկան.
Ենոր քոց ընկավ, հոգին ետու:
Վոր Պարոն Աստղիկ հոգին ետու,

---

*) Յերգ 6։

Դավթի ուշ գնաց,
Զորքեր եկան, վոր ենոր բռնեն:
Քուռկիկ Զալալին տիրոջ բոլոր կայներ եր,
Ձեթող, վոր Դավթին բռնեն,
Զուր ենոր ուշ եկավ գլուխ,
Ելավ, ձին հեծավ, ընկավ մեջ զորքին:
Զորք առջեվ Դավթին փախավ:
Դավիթ կանչեց·— Դու մի՛ փախնեք,
Ձեր թագավորի տեղ ինձի ասեք:
Ենոնք կանգնան, ել չը փախան:
Մեկ մի դարձավ Դավթին, ասաց·
— Մեր թագավոր Բապը փոքենկին է,
Ենիկ փախե, գնացե իր քաղաք:
Դավիթ դարձուց ձիու գլուխ՝
Եկավ Բապը փոքենկու քաղաք,
Մարդ ճամբեց թագավորին, ասաց·
— Թող ելնի գա, իրեն տեսնեմ:
Թագավորն ելավ, եկավ,
Վոր տեսավ ենտեղ Դավթին,
Վախեցավ, ուզեց փախչի:
Դավիթ ընկավ ետև,
Բռնեց, ենտեղ գլուխ կտրեց:
Քաղքի մեջ ով մնացեր եր,
Ենոնց համար թագավոր դրեց·
Զոջ մարդեր սպանեց,
Պստիկներ տեղ դրեց, ասաց·
— Քանի դու ժիր եք, կռիվ միք ե՛րթա:
Վոր դու նեղ կ'ընկնեք,
Ինձի՛ թուղթ գրեք, յես կը գամ:
Քաղաք ամեն ասաց·— Դավի՛թ,
Զուր մեռնենք, քո խոսք տ'անենք:
Դավիթ ելավ, եկավ դեհ զորք,
Ասաց·— Դարձեք ձեր քաղաք,
Ձեր թագավոր սպաներ եմ:

Են որ իրիկուն Դավիթ չ'եկավ խանդուքի մոտ:
Խանդուք գիտցավ, վոր Դավիթ սպաներ են,
Կսկծուց իր սիրտ վառվավ:
Լուսուն ելավ, մարդանակ շորեր հագավ,
Նիզակ առավ, ձին հեծավ, ասաց.
— Երթամ Դավթի մարմին ջոկեմ, բերեմ, թաղեմ:

Գնաց, ընկավ մեջ լեշերուն:
Ինչ կը տեսներ, վոր մեծ լեշ է.
Նիզակ կը տար, կը հաներ վեր,
Կը տար առջեվ արեգական,
Ու կ'իրիշկեր՝ խաչ կա՞ թևին:
Մեկ ել տեսավ՝ են մեկ կողմեն.
Մեջ լեշերուն մեկ մի եկավ:
Դավիթ պրծեր իր կոտորած,
Մեջ լեշերուն ելեր, կը գար:
Իրիշկեց, տեսավ խանդուք խանում
Նիզակ կը զարկի մեջ լեշերուն,
Լեշ կը վերցի, թև կ'իրիշկի:
Դավիթ կանչեց.— Ե՛յ, ի՞նչ կը փնտռես
Ում ետեվեն տու ման կը գաս,
Իրեք որ կա սպաներ եմ,
Թե մարդ կուզես, յես քեզի մարդ:
Խանդուք աչքեց, աչքեց, ասաց
«Ես սա ձին Դավթի ձին է,
Ամա ինք չը նըմաներ զԴավիթ, ես ո՞վ է»
Դարձավ ասաց.— Բերանդ շատ մի՛ ցրվի
Քենե ավել է, դու են մարդ սպանես.
Քսան քե պես, տասն ել իմ պես
Մատաղ կ'անեմ ենոր եղնգին,
Ենոր սպանած լե՛շն ել տեսնեմ,
Քենե՛ ավել է ինձ համար:
Դավիթ ասաց.
— Վոր ենպես է, մենք տի կռվենք.
Ելան, կռվան.

Թոզ ու դուման գդաշտ բռնեց:
Հող եղվավ ձիերու վոտքերու տակ:
Շատ կռվան, իրարու չ'աղքեցին.
Դավիթ սրտով չեր զարնի,—
Ամա խանդուք կ'ուզեր սպանի:
Մեկ ել տեսար՝ իր գուրզ քաշեց,
Արեց վոր զարնի Դավթին,
Դավիթ վահան դեմ ետու,
Խանդուք դառավ, վոր փախնի.
Դավիթ քշեց Քուռկիկ Ջալալին,
Շիտկավ թամքին, դարձավ, ասաց
«Հացն ու գինին, տեր կենդանին»,
Քաշեց իր գուրզ, վոր զարներ,
Խանդուք ետեվանց ծամեր եքող,
Թռավ ձիուց, իջավ գետին:

Ենոր ետեվեն Դավիթ թռավ,
Վերուց, զխանդուք ետու գետին,
Ջոքեր զարկեց ենոր սրտին:
Խանդուք խանում ասաց.
— Ամա՜ն, կտրի՛ճ, ինձ մի՛ սպանի, յես կնիկ եմ:
Դավիթ ասաց.— Ցես գիտեմ դու կնիկ ես.
Եսիկ են ավուր փոխ՝
Մի՞տդ ե, ինչ դու բռունցքի մ' զարկիր՝
Արուն-արնջուր եկավ բերնես:
Խանդուք ասաց.— Դավիթ, դո՞ւ յես.
Դավիթ ասաց.— Ցես եմ, Խանդուք:
— Վոր եդպես ե, ինձի թող դու.
Տեսա՞ր, Դավիթ, քառասուն փահլեվան,
Ցոք տարի կա ենտեղ նստած.
Ջիմ նշան յես տվի քեզի,
Ինչ դու եկար, իջար իմ տուն.
Դավիթ, ինձի թող դու,
Դոր յես քե կնիկ, դու ինձի մարդ:
Դավիթ Խանդուքին թող ետու:
Ելան մեկտեղ, եկան դեհ տուն:

Ճամբեն խանդուք Դավքին ասաց.
— Դավի՛ք, բան մի պատմեմ քեզի.
Երկու-իրեք տարի կ'ըլնի՝
Ինձի տարան մեկ թագավորի տղի,
Դրին մեկ սենեկի մեջ.
Մարդս ել եկավ, մտավ ենտեղ.
Հետ իրարու հանաք արինք.
Ձեռս թալի վոր թեվ բռնեմ, տեղեն պրծավ.
Թագավորի տղա յե, ասի,
Չ'երթա վար-ցանք ինձի համար.
Անթեվ ել ինձ բավական ե:
Ձեռս թալի են մեկել թեվ,
Համ մեջք կոտրավ, համ թեվ պրծավ,
Շունչը փչեց, ընկավ մեռավ:
Ցես նոր իմացա իմ ուժի չափ:
Թագավորն ել դարձավ, ասաց.
«Վա՜ղ, եդա հարս մարդասպան ե»:
Ինձի նորեն ուեր տուն ճամբին:
Ել մ'ել եկա իմ հոր տուն.
Ուխտ արեցի, ասի ենտեղ՝
«Ով իմ մեջք գետին դնի՝
Ցես ենոր կ'առնեմ»:
Ենոր յես՝ դու կռիվ արինք,
Դու դրեցիր իմ մեջք գետին.
Ետուց յետքը՝ յես քե կնիկ, դու ինձի մարդ,
Ուր կը տանես՝ ա'ռ ինձի տար:

13

Ինչ հասան տուն, խանդուք կանչեց ծառաներին.
Եկան Քուռկիկ Ջալալին տարան,
Դավքի արնոտ շորեր լվացին:

Դավիք ու խանդուք սեղան նստեցին.
Կերան, խմեցին, ելան քնեցին...

Իրեք որ վոր անցավ, Դավիք քաշեց ձին,
Մեկ ձի ել խանդուք բերեց.

Ելան երկսով եեծան են ձիեր,
Թեվ-թեվի զարկին, եկան դեհ Սասուն:
Վոր եկան հասան խլաք՝
Առջեվ Զմշկիկ Սուլթանի պատուհան տի անցնելին:
Զմշկիկ Սուլթան զԴավիթ տեսավ,
Եկավ ենոր առջև,
Ասաց.— Թըլո՛ր Դավիթ,
Դու ուխտ արիր ինձի առնելիր.
Մենք մատնիքներ իրարու հետ փոխեցինք.
Դու ինձի թողիր, գնացիր խանդուքին բերիր.
Ինչի՞, յես խորոտ չե՞յի,
Դու ինձի չը հավնար,
Գնացիր ենոր բերիր:
Տի գաս, յես դու կռիվ անենք.
Կամ յես քեզի տի սպանեմ,
Ցես ել, խանդուք խանումն ել մնանք որբեվարի.
Կամ դու ինձի սպանես,
Նոր երթաս խանդուք խանումի ծոց պառկես:
Դավիթ ասաց.— Զմշկի՛կ Սուլթան,
Խնդիրք կ'անեմ քո մոտեն.
Կնիկարմատ կա հետ ինձի.
Թող յես երթամ իմ տուն,
Ցոթ որ վոր լրանա,
Ցես կը գամ, կռիվ անենք:
Զմշկիկ Սուլթան ասաց.
— Դե՛, երդըվցի՝ Մարուքա բարձր Աստվածածին,
Խաչ Պատերազմին վեր քո աջ թևին,
Ինչ յոթ որ լրանա,
Գաս հետ ինձ կռիվ,—
Վոր թողնեմ դու երթաս:
Դավիթ ասաց.— Մարուքա բարձր Աստվածածին,
Խաչ Պատերազմին, ինչ վեր իմ աջ թեվին,
Ինչ յոթ որ լրանա,
Ցես կը գամ, կռիվ անենք:
Ասաց. առավ գխանդուք խանում, եկան դեհ Սասուն:
Վոր եկան, հասան տուն,
Բերեցին յոթ ձեռք գուսան,

Ցոքն որ, յոք գիշեր հարսնիք արին,
Դավիք ու խանդուք պսակեցին...
Ուտել, խմել, մեծ ու պստիկ ուրախացան...
Ինչ Դավիք խանդուք խանումի ծոց պառկավ,
Խաչ Պատերազմին, վոր երդում եր արե,
Մոռացավ:

ԴԱՎԹԻ ՄԱՀԸ

1

Ավուր մեկ Դավիթ ասաց.— Խա՛նդուք,
Են, ինչ յես բեզի բերի՝
Են քառասուն փահլևանի մեղաց տակ ընկա.
Իմ խիղճ չի տանի՝ բեզի ենոնց ձեռքեն խլեցի:
Յես լսեր եմ՝ Դյուրջիստան խորոտ աղջիկներ շատ
կան,
Տ'երթամ, գըտնեմ են քառասուն փահլևաններ,
Քառասուն ազապ աղջիկ պսակեմ վեր եդոնց,
Վո՛ր աղջիկ իրենց բեփ կ'ուզի,
Նոր դառնամ, գամ Սասուն:
Խանդուք խանում ասաց.
— Դա՛վիթ, դու իմ մեղաց տակ մտար,
Ինձի հորե, մորե հանեցիր,
Ինձի բերիր, ես քաղաք դրիր,
Կը թողնես ինձի, երթա՞ս:
Վոր բեզի տղա մ'ելավ, յես ի՞նչպես տ'անեմ:
Դավիթ ասաց.— Խանդուք խանում,
Վոր ինձի տղա ելավ,
Անուն կը դնես Միհր.
Իմ հոր անուն գետին չը մնա:
Հանեց մեկ վոսկի բազբանդ ետու,
Անգին քարերն ել մեջ:
Ասաց.— Թե տղա ելավ,
Կը կապես ենոր աջ թեվին.
Թե վոր աղջիկ ելավ,
Ասաց.— կըտաս իրեն բաժինք:

Ցես վոր շատ ուշացա, զՄեր ճամբի, թող գա,
Բազբանդ տեսնեմ, կը ճանչենամ:

Ելավ, հեծավ Քուռկիկ Զալալին,
Ընկավ ճամբա, քշեց գնաց:
Են քառսուն փահլեվաններ,
Քառսուն երկիր մեկ-մեկ գտավ,
Տարավ ենոնց դեհ Գյուրջիստան:
Գնացին, գնացին հասան Գյուրջու քաղաք:
Քառսուն փահլևանին աղջիկ գտավ:
Դավիթ ենտեղեն դարձավ գնաց Ադրբեջան:
Իրիշկեց, տեսավ, վոր մեկ աղջիկ կա եդա տեղ.
Են աղջկան պես ել աղջիկ խորոտ չկա:
Ասաց.— Տանեմ խանդուք խանումին խրդամ:
Եդ մեկ աղջիկ ել վերուց
Ասաց.
— Ամեն մարդ իրեն աստված,
Երթա իրեն յերկիր,
Ցես ել կ'երթամ դեհ Սասուն:
Փահլևաններ առան իրենց աղջիկներ,
Գլուխ տվին, ասին.
— Շնորհակալ ենք քեզնե, Դա'վիթ,
Վոր հասուցիր մեր մուրազին:
Կաց-բարեվ արին, գնացին:
Դավիթն ել առավ են մեկ աղջիկ,
Եդի ձիու գավակ, եկավ:
Մենք խաբար տանք խանդուքի մոտեն:

2

Դավիթ վոր գնաց Գյուրջիստան,
Վաչոն մարդ ճամբեց խանդուքի ետև,
Առավ, եկավ Կապուտկող:
Խանդուք են ժամանակ երեխով եր.
Վոր եկավ իր հոր տուն,
Պառկավ, տղա մի բերեց:

Վաչոն ասաց Խանդուքին.
— Թե վոր եդ տղան Դավքի տղան ե,
Ենոր մոտեն նշան մի, գոլուքյուն մի տ'ելնի:
Ելան զտղեն բարուրեցին,
Գուքնի շղթաներ բնդի տեղ փաքթեցին վեր ենոր.
Տղան եր՝ ինչ ելաց ու նմլտկաց մեջ նղորին,
Են շղթաներ կտոր-կտոր եղան:
'Ե՜հ, 'Դավքից ու Խանդուքից
Մանդր տղա հո՛ չ'ըլներ...
Տեսան վոր՝ Ազնանցորդի՛ յե:
Համա տղան, վոր կը լողկըցուցեն.
Տեսան՝ մեկ ձեռք խուփ ե:
Ինչ նար արին-չարին,
Տղի ձեռք չը բացվավ:
Քաղաք քաղքով չեն կա՛րնա ենոր ձեռք բանա:
Վաչոն ելավ իրեն աեռուն,
Նամակ գրեց Դավքի քեռուն
«Թո՛րոս, աչքդ լուս ըլնի.
Դավքին տղա մի եղեր ե,
Մենակ մի ձեռք խեղ ե»:
Թորոս վոր եդ նամակ կարդըցավ
Ելավ, եեծավ Վեցոտնեն Լազգին.
Եկավ, հասավ Կասլուտկող.
Եկավ Վաչոյի տուն, ասաց.
— Հըլա տղի բարուր տվեք,
Աչքեմ իմա՞լ տղա յե:
Թորոս առավ ըզտղան, տեսավ.
Զմանուկի ձեռք մաժեց, մատներ բացվան.
Տեսավ, կաթ մի արուն ձեռքի մեջ.
Ասաց.— Հա՜յ, հա՜յ, թե քար եսոր մուտ տա,
մուտ տա,
Հող չի կարնա պահի.
Զաշխարք արեր ե կաթ մի արուն,
Դրեր ե մեջ ձեռքին:
Թե վոր եդի մնաց,
Եդոր մոտեն զարմանալի բան տ'ելնի:
Մնաց երկու-իրեք որ,

Խանդուք տղան ետու կնքել,
Անուն եդիր Մհեր:

Ինչ խալխի տղեք տարով կը ջոջանային,
Մհեր որով կը ջոջանար,
Ինչ ամսով, Մհեր՝ ժամով:

Մնաց ժուկ մ' ու ժամանակ մի՝
Քեռի Թորոս ելավ, առավ զՄհեր,
Առավ զխանդուք խանում,
Եկան ելան Սասուն:

Տարին վոր քամամավ,
Մհեր ելավ, գնաց մեջ քաղքին ման կը գար:
Զոչ գետ մի Սասնու քաղքի առջևեն կ'երքար.
Մհեր վեց ելից՝ կամուրջ կապեց վեր են գետին:
Վոր մարդիկ կ'երքային՝
Վեր կամրջին ինի կ'երքային:
Մհեր կ'երքար, մարդեր կը տփեր, կ'ասեր.
— Շա՛ն վորդիք, յես կամուրջ կապեր եմ,
Ձե՞զ համար եմ կապե.
Ինչի՞ վեր իմ կամրջին կ'երքաք:
Մարդիկ կը դառնային, գային,
Զարկեյին, ջրով անցնեյին:
Մհեր կ'երքար, կը տփեր, կ'ասեր.
— Շա՛ն վորդիք, յես կամուրջ կապեր եմ,
Ձե՛զ համար եմ կապե,
Դուք ինչի՞ կը տաք ջրին,
Զուր զձե տանի, մեզք ընկնի իմ վիզ:
Քաղքցիք եկան մոտ Քեռին զանգատ:
Քեռի Թորոս զՄհեր խրատեց:

3

Յոթ տարին լրացավ, Դավիթ չ'եկավ:
Մհեր իր մորն ասաց.
— Ի՛մ մեր, իմ հեր ո՞ւր ե.

Երեխեք ինձի կ'ասեն՝
Դու հեր չունես, բիճ ես,
Ինձի հեր չկա՞, երթամ ետև.
Իմ հեր ո՞ւր է գնացե:
Մերն ասաց.— Քո հեր Դավիթն է.
Գնացե Գյուրջիստան երկիր,
Քառասուն փահլեվաններուն պսակի, գա.
Մեկ վոսկե բազբանդ ել տվե,
Վոր իրեն տդա ըլնի՝ կապեմ թևին,
Ճամբեմ գնա ենոր առջև:
Միեր ասաց.— Ցես տ'երթամ իմ հոր գտնեմ:
Մերն ել երեր վոսկե բազբանդ.
Կապեց Միերի թեվին,
Գյուրջիստանի ճամբան նշանց ետու:

Միեր գնաց ախոռ, ձի մի հանեց,
Զենքեր առավ, հեծավ, ընկավ ճամբա:

Եկավ մեջ դաշտին, իրիշկեց՝
Տեսավ թուխմորուս մարդ մի,
Խորոտ աղջիկ մի առե ձիու գավակ, կուգա.
Միեր կանչեց.— Ե՛յ, մարդ,
Դու միրուքավոր մեկ մի, եդ ջահել աղջիկ
Քե վայե՞լ է, վոր առեր, կը տանես:
Եդ աղջիկ տի տաս ինձի:
Ասաց.— Տղա՛, դու գյադա մի,
Քեզի վայել է, ինձի վայել չե՞:
Ասաց.— Ենդուց ինձի վայել է,
Ցես ազապ, են ազապ:
Դավիթ արավ, վոր անցներ,
Միեր ձեռ եթալ, ասաց.
— Ջե՛մ իսա, տ'սանեմ քո մոտեն:
Ենտեղ Դավթի սիրտ ելավ, ասաց.
— Հա՛յ-հո՛յ, հա՛յ-հո՛յ, իրիշկեցեք.

«Շատ ծովեր եմ մտե*)
Իմ ձիու նաներ չեն թացվե.
Հիմիկ մեկ բարակ առու յեմ տեսե,
Չի թողնի, վոր յես անցնեմ:
Շատ սարեր, քարեր եմ ման եկե,
Իմ առջեվ դեմ կանգնող չեր եղե,
Մեկ բարակ բատան եմ տեսե,
Շատ եմ մոտեն վախեցե»:
Դավիթ վոր պրծավ, Մհեր ասաց.

— Գյուվա բարակ առուն յե՞ս եմ,
Գյուվա բարակ բատան յե՞ս եմ:
Ձիուց վեր ելի, յես-դու կպնենք կուշտի:
Դավիթ ձիուց վեր եկավ ասաց.— Կայնի,
Ես աղջիկ տանեմ ենտեղ,
Նոր յես դու կովենք:
— Ելի տար,— ասաց Մհեր:
Տարավ, աղջիկ եդիր սարի գլուխ,
Ինք դարձավ եկավ ենտեղ:
Դավիթ, Մհեր մտան կուշտի:
Ենպես զարկվան, կովան իրարու հետ,
Փոշին ելավ երկնուց երես բռնեց,
Քրտինք իջավ գետին ցեխ արեց:
Ենոնց զուրզի զորությունից
Քամին զարկեց Դավթի թաշկինակ տարավ,
Տարավ, թալեց առջև խանդուքի դռան:

Խանդուք խանում ելավ դուրս,
Իրիշկեց, փոշին աշխարք բռներ ե:
Տեսավ ենտեղ մեկ թաշկինակ.
Առավ, հոտ արավ, ասաց.
«Ըհը՛, ես Դավթի թաշկինակն ե»:
Տեսավ՝ գրգռոց ընկե դաշտ:
Ելավ, ձին հեծավ, քշեց գնաց.
Տեսավ՝ թոզ-դուման կ՝ելնի,

---

*) Ցերդ 6։

Ինչ որ երկու սար
Կը գան, դիպնեն իրար,
Ենպես են Դավիթ, Մհեր առած իրար.
Արընի մեջ լոդ կը տան:
Մարդ չեր կարնա մոտենա:
Խանդուք խանում առավ կանչի, ասաց.

«Դավի՛թ, դու մի՛ զարնի*),
Դավի՛թ, դու մի՛ զարնի,
Մեր նորելուկ մեկ տակ մանուկին,

Դավիթ ինք չի զարնի,
Համա կուզի իր հոգին փրկի,
Իր աեու կը զարնի Մհերին:
Մհեր դարձավ, ասաց.
— Մա՛րե, դու հոդ մի՛ անի,
Ենոր զարկեր կը նմանի Ծովասարու քամի՝
Վոր կը հասնի իմ մազերուն:

Խանդուք խանում դոր ասաց.

«Մհեր, դու մի՛ զարնի*)
Մհեր, դու մի՛ զարնի,
Մեր թուիմորուս Դավթին»:

Մհեր իսկի չը լսավ:
Խանդուք խանում դոր յերգեց.

«Սարեր, հըմդաք եկեք,
Ձորեր, հըմդաք եկեք,
Հե՛ր, տղեն մե-մեկից բաժանեք»*):

Սարեր, ձորեր հըմդա՞ք կը գան,
Սարեր, ձորեր հըմդաք չեն իզա:
Խանդուք խանում կանչեց.

---

*) Ցերգ ե։

«Որենյա՛լ, բարերար աստված*),
Քո հրամանքն եր շատ.
Հրաման ենես՝ Գաբրիել հրեշտակ վար իջներ,
Հեր, տղեն մե-մեկից հետ կտրեր:

Աստծու հրամանքով Գաբրիել հրեշտակ վար իջավ,
Ձեռ ետու, հեր-տղան յետ կտրեց իրարուց,
Ինչ վոր երկու աքլոր կռվեն, մեկ երթա, յետ կտրի:

Դավիթ դարձավ, ասաց.
— Ա՛յ տղա, դու ինձի տի սպանեյիր,
Իմ կտրինի ձեռնեն ի՞նչպես տի պրծնեյիր:
Ասաց.— Քո կտրինն ո՞վ է:
Ասաց.— Իմ կտրին են է,
Ինչ վոսկի բազբանդ կո վեր թևին:
Տղան իրիշկեց վեր, իր թևին,
Տեսավ՝ վոսկի բազբանդ կապած է.
Լացեց, հասավ Դավթի ձեռք պագեց, ասաց.
— Իմ հեր դո՞ւն ես, յես քե մեզա:
Դավիթ կանչեց, ասաց.
— Մեհ՛ր, վոր դու հետ ինձի կռիվ արիր,
Ինձի ամանչեցրիր,
Կանչեր եմ քաղցրիկ աստված,
Անմահ ընիս, անժառանգ:

Ինչ Դավիթ անեծք ետու,
Մեհեր ըռըկավ, գնաց Կապուտկող:
Քառասուն ազապ լան առավ,
Քառասուն ազապ աղջիկ, նստավ,
Ցոթ տարվան նռան գինին դրին, խմեցին:

4

Դավիթ ելավ, առավ են աղջկան,
Առավ զխանդութ խանում, եկան տուն:

---

*) Բերդ է:

Ինչ կռիվ արին հետ Մհերին,
Մեջ արընին կարմրցեր եր·
Ասաց·— Խանդուք խանում, ջուր բեր, լվացվեմ:
Դավիթ շորեր եհան, տի լվացվեր,
Կնիկ իրիշկեց՝ ենոր խաչ վեր բեվին
Սեվցեր եր ածուխի պես,
Ելաց, դժարացավ:
Դավիթ ասաց·— Կնի՛կ,
Ինչի՞ դժարացար, լացիր:
Ասաց·— Խաչ Պատերազմին վեր ֆռ աջ թևին՝
Սևցեր ե, ելեր ե սև կուտ:
Ասաց·— Խանդուք խանում,
Են չեր Մհերի զարկեր կը գար վեր իմ գլխուն,
Են խաչ Պատերազմին եր, ինձի կը զարներ:
Կնի՛կ, յես տ'երթամ Զմշկիկ Սուլթանի մոտ,
Երթում արի յոթ որ, գնաց յոթ տարի·
Յես երթմակոտոր եմ ելե,
Կնի՛կ, յես գնացի···

Ասավ թե չե, ելավ,
Ֆուռկիկ Զալալին հեծավ,
Թուր կեծակին կապեց, գնաց:
Հասավ առջև Զմշկիկ Սուլթանի ֆոշկին:
Զմշկիկ Սուլթան տեսավ՝
Դավիթ եկավ առջեվ իրեն սարին, ասաց·
— Դավի՛թ, դու երդում եյիր արե յոթն որ,
Ֆռ երդում տարար յոթ տարի·
Յես մնացի առանց մարդ,
Ֆռ ճամբան կ'իրիշկեմ:
Ասաց·— Դե՛հ, ֆռ պատրաստություն տես,
Ելնենք մեյդան, կռվե՛նք:
Են ել ասաց·— Մեկ ժամ ժամանակ տու,
Զիմ շորեր հագնեմ, զենքեր կապեմ, գամ:
Դավիթ կապեց զֆուռկիկ Զալալին
Վեր Զմշկիկ Սուլթանի դռան, ասաց·
— Զին եստեղ թող մնա,

Ցես երթամ գետ, լողանամ,
Զուր քո շորեր հագնես, գաս:

Դավիթ շորեր եհան,
Մտավ գետ, մեջ ջրին լողանա:
Եդ ջրի ափ եղեգնուտ եր,
Զուր Զմշկիկ Սուլթան կը գար,
Ենոր աղջիկ առավ նետ-աղեղ,
Եկավ եդ եղեգներու մեջ, պահ մտավ:
Դավիթ վոր լողանալու հետ եր,
Եդ աղջիկ գողտուկ ելավ՝
Թունավոր նետով եզար Դավթին,
Վոր եզար մեջքին, ծակեց,
Սրտեն ինի ետու դուրս:
Վոր զարկեց՝ Դավիթ բոռաց,
Ենոր մոտեն յոթ գոմշու ձեն ելավ.
Գնաց, հասավ Սասուն:
Քեռի Թորոս լսեց Դավթի ձեն,
Ասաց.— Տղեկնե՛ր, ելեք,
Մեր Դավթին զարկեցին:
Քեռի Թորաս, Ջենով Հովան, Ճենղափորիկ,
Խոր Մանուկ, Խոր Գուսան ժողվին իրար:
Ջենով Հովանն ել Սասնու բոռաց.
— Դավի՛թ, կո մենք եկանք:
Ու եկան Դավթին ոգնուքյան:

Եկան, հասան են ջրի մոտ:
Քեռին հարցուց Դավթին.
— Տղա՛, Դավիթ, քեզի ո՞վ զարկեց:
Ասաց.— Չեմ գիտի ով զարկեց.
Են եղեգնուտեն մեկ մի ելավ, զարկեց:

Գնացին եղեգնուտի մեջ,
Փնտուեցին, գտան, տեսան՝
Մեկ չինի աչքերով աղջիկ.
Ինչ Դավիթ բոռացեր եր, մեռեր եր ահու:
Եդ աղջիկ Զմշկիկ Սուլթանի աղջիկն եր:

Դավիթ վոր իմացավ՝ ասաց.
— Իմ ցեց իմ անձից է,
Եդ իմ սերմն եր, վոր ինձի սպանեց:
Դավիթ եդ խոսք ասաց,
Ու ինքն ել ենտեղ մեռավ,—
Արեվ ետու ձեր վորդոց:
Են մեռավ, ձին ենտեղ ծռավ,
Ծռակապ կտրեց, ընկավ դուրս,
Ինչքան մարդ պատահավ,
Տավար պատահավ, ձի, կտրեց,
Գնաց, կանգնավ առջեվ խանդուք խանումի դռան:
Խանդուք խանումն ել ելավ, իրիշկեց,
Տեսավ՝ ձին եկե, տեր հետ չը կա.
Շուտ մի խաբար արավ,
Թե Դավիթ կորե, չը կա:

5

Քեռի Թորոս ասաց.
— Տղեկնե՛ր, բերեք Դավթին,
Քոթակ կապենք ձիու վերան,
Ելնենք ջրինդ խաղալով երթանք,
Բալքի խանդուք չը գիտնա, վոր Դավիթ մեռեր է:

Համա խանդուք ելած տանիք,—
Բարձր եր իրենց տանիք,
Քարերու վրա յեր շինած,—
Ամեն կողմ կ'իրիշկեր, տեսներ՝
Դավիթ վո՞ղջ կը գա, թե՝ մեռած:
Խանդուք իրիշկեց, տեսավ, վոր
Ջրինդ խաղալով կը գան եդանք:
Դավիթ հեծեր է մեկ ուրիշ ձի,
Իսկի չի խլվլա իր տեղեն:
Են հասկացավ, վոր Դավիթ մեռած է.
Ասաց.
«Վոր աժեց, եկավ*),

*) Ցերգ է։

Վոր չ'ուժեց, եկավ,
Իմ կանաչ կտրին Դավիթ չ'եկավ»:

Են քոփակ ցոռան Վերգոն
Ենտեղ տանիքի վերան կայնած եր.
Առաջ եկավ՝ վերցուց, ասաց,
— Դավիթ մեռավ առանց կռիվ.
Են մեռավ, յես քեզի անուշ.
Կը պակսի քե կտրին Դավիթ,
Չի պակսի պարոն երիկ:
Խանդուք դարձավ ասաց.
— Ըստուց ետև արև-լուս ինձի հարամ ըլնի,
Ետև Դավթին յես աշխարք չեմ մնա:

Ես անգամ խանդուք ելավ բերդի գլուխ
Ու ենտեղեն իրեն թալեց.
Գլուխն առավ վեր քարին, քար ծակեց, եղավ փոս:
Են փոսի մեջ՝ Սասունա կես շնիկ կորեկ
Կը լցնեն ու կը ծեծեն սանդի տեղ:
Ենոր ծծերի տեղ հիմի ել երկու աղբուր կը թալի:
Ցոթ նուղ ծամի տեղ ել հիմի կ'երևա,
Քանց յոթ սուն կը սեվկըտի:
Ու հիմի ել սանդ ենտեղ ե, բերդի առաջ:

Եկան տեսան, վոր խանդուք խանում ընկե մեռե:
Մեկ դարդն եղեր ե երկու:
Քեռի Թորոս հարցուց.
—Եդ ո՞վ ասաց:
Ասին, թե.— Վերգոն եր:
Ասաց.— Քոփա՛կ, ինչի՞ չը համբերիր՝ չուր գայինք:

Բերին, երկուսին ել պատանքեցին,
Ելան երկսի նաշն ել կապեցին իրարու,
Քառսուն տերտերով, քառսուն վարդապետով,
Քառսուն ել սարկավագով,
Քաղքի ժողովուրդն ել բոլորը հետ.

Լալով, գոռալով, ժամով–պատարագով,
Տարան երկուս մեկտեղ Ծովասար,
Մարութա վանք թաղեցին,
Յոթն որ սուգ կապեցին:
Ենոնք մեռան, աստված ողորմի իրենց հոգուն.
Դո՛ւք, ձեր անուշ ջա՛ն սաղ ըլնի:

ՄԵԾ ՓՈՔՐ

Տի տամ ողորմին Պստիկ Մհերին,
Տի տամ ողորմին Գոհար խանումին,
Տի տամ ողորմին Զենով Հովանին,
Տի տամ ողորմին Քեռի Թորոսին,
Տի տամ ողորմին յոթ եուղ Դավթին,
Ճղեեուղ եկանք վեր Մհերի եուղին:

ՄՀԵՐՆ ԱՌՆՈՒՄ Է ԴԱՎԹԻ ԱՐՅԱՆ ՎՐԵԺԸ

2

Ցն ժամանակ ինչ Դավիթ մեռավ,
Իր արև ետու ձեր վորդոց,
Ենոր տղան՝ Մհեր, Կապուտկող էր.
Մհեր չ'իմացավ՝ իր հեր մեռե:
Քառսուն ազասլ լաճ առեր,
Քառսուն ազապ աղջիկ առեր,
Ցոթ տարվան նռան գինին դրեր, քեֆ կ'աներ:

Մնացին մեկ ժամանակ՝
Քեռի Թորոս միտք արեց,
Ասաց.— Ջենով Հովան, ելի՛,
Ձմշկիկ Սուլթան տի գա,
Սասնա հող-քար տ'ողողի, տանի:
Ելի երթանք Դավթի տղա Մհեր առնենք, գանք,
Թե՛ իր հոր վրեժ առնի,
Թե՛ Սասուն չը մնա անտեր,
Տեր կենա Ջոջանց տան:

Ելավ, առավ Ջենով Հովան,
Ցոթ հատ ել զոմշի կաշի.
Գնացին. հասան Կապուտկող,

Ու տեղի նստողին ասին.
— Մեր աղբոր ու հարսին եդտեղ տղա մի կա,
ո՞ւր է.
Ենոնք էլ ասին՝ մեռեր է։—
Զմիեր տարե յոթ դարգիով ներս,
Պահապան են դրե վերան,
Փող ու թմբուկ կը զարնեն՝
Վոր են չը լսեր եդոնց ձեն, դուրս չը գար։
Միեր մեկ բերդի պես կայներ եր,
Զեր թողնի, վոր դուշման թագավորներ
Վոտ դնեն կապուտկողի հող։—
Քեռի Թորոս ասաց.
— Մեր մեռելներուն նշան կա.
Մեր տան մարդ վոր մեկ տարեկան մեռնի,
Ենոր տապան տաս Հալապա գազ է.
Երկու տարեկան մեռնի՝ քսան Հալապա գազ.
Քանի տարեկան վոր մեռնի՝
Ամեն տարվան տաս-տաս գազ է ենոր գերեզման.
Մենք մեր ցեղի գերեզման կը ճանչենանք։

Ելան, գնացին գերեզմաններ,
Տեսավ, վոր իրենց շենքով գերեզման չը կար։
Զենով Հովան ասաց.
— Բերե՛ք, կաշիք փաթթեք, վոր յես բռռամ։
Բերին յոթ գոմշի կաշի փաթթեցին։
Ելան, գնացին սարի գլուխ.
Զենով Հովան կանչեց.

«Տա՛ Միեր, դու խմի՛*),
Տա՛ Միեր, դու խմի՛
Նռան գինին.
Քո հեր սպանած,
Եսոր յոթն ենք արե»։

Զեն եկավ, Միերի ականջ ընկավ։
Փող, թմբուկ ավելի զլլեցին։

---

*) Ցերդ է։

Մհեր գուսաններուն ասաց·
— Եդոնց ձեն կտրեմ, եդ իմ ցեղի ձենն եր եկավ:

«Զենիկ մի կը գար, չեմ գիտի*)
Արեվելն եր, թե արեվմուտն եր·
Չեմ գիտի հարավա յեր, հյուսիսա յեր»:

Հրոդբեր դարձավ, ասաց·
«Մեջ հյուսիսա յեր*),
Մեջ հարավա յեր,
Մեջ արևմուտ եր,
Մեջ արևել եր,
Քո հեր սպանած,
Եսոր յոթն ենք արե:

Քո հոր վրեժ մնացե գետին·
Հիմի դու չե՞ս գա ենոր վրեժ առնենք:
Ախը՛ր, դու ել Սասնա տան խոյերեն ես:

Գուսաններ ավելի զլեցին իրենց փող ու թմբուկ:
Մհեր ասաց·— Ցես տ'երթամ,
Իմ հրոդբոր ձեն կը գա:
Արեց, վոր տ'ելներ, պահապան ասաց·
— Եդ ձեր ցեղի ձեն չե՛·
Ճժերն են ու թմբուկներն են· ենո՛նց ձենն ե:
Մհեր իրեք անգամ վոր ձեն լսեց,
Ափացի մ'եզար դարգահին,
Առաջի դարգահ կոտրեց·
Ենի հասավ մեկելին, մեկել մեկելին,
Ցոթն ել ջարդեց, ելավ դուրս:

Վոր հասավ Քեռի Թորոսի մոտ,
Քեռի Թորոս ասաց·
— Ջենով Հովան, կայնի փորձեմ.
Թե Դավթի տղան ե, կը տանեմ,

---

*) Ցերդ և:

Թե Դավթի տղան չե, կը զարկեմ,
Թողնենք երթանք Սասուն:
Վոր հասավ Քեռի Թորոսի մոտ.
Քեռին ասաց·— Տղա՛, եդ ո՞ւր եդպես
հպարտ, հպարտ:
Ասաց·— Ինձի երկու մարդ կը կանչեն,
Ենոնք վո՞ր կողմ գնացին:
Ասաց·— Դու ի՞նչ մարդ ես, վոր, քեզի կանչեն·
Դու նիժ մ՚ ես, տղա յես:
Մհեր ասաց·— Ինչի դու մարդ ես, յես մարդ չե՞մ:
Քեռի Թորոս ասաց·
— Ա՛յ տղա, քեզի գուրզ մի կը թալեմ,
Համա դու նիժ ես, առաջ դու քո գուրզ թալ,
Ետեվ յես կը թալեմ իմ գուրզ:
Տղան վոր իր գուրզ բերեց,
Քեռի Թորոս քշեց Վեցոտնեն Լազգին,
Մհերի գուրզ ենոր ձիու տակով պարապ գնաց:
Քեռի Թորոս կայնավ, ոլբրավ, ասաց·
— Ա՛յ տղա, քեզի պատրաստ պահի,
Վոր իմ գուրզ զարկեմ:
Թորոս վոր գուրզ զարկեց,
Մհերի նուռ բեվեռեց թամբին·
Վոր քաշեց, Մհեր իսկի ո՛ֆ չարեց:
Քեռի Թորոս ասաց·
— Ցա՛, տղա, քո հոր հերական ասա,
Քո մոր մերական ասա·
Ցա, յես գիտեմ դու բին ես·
Ցես իմ գուրզ կը զարկեմ,
Ապառաժ քարեր կը ձեվի, կը թալի,
Դու իսկի ո՛ֆ չ՚արիր···
Մհեր ասաց·— Բին դու յես,
Իմ հոր հերական Դավիթն է·
Իմ մոր մերական Խանդուքն է:
Եդտեղ իրար ճանչեցան:
Մհեր վոր տեսավ քեռին–հրոդքեր եկեր են,
Հեր չկա, հարցուց ենոնց:
Ջենով Հովան ասաց·

— Քո հեր սպանած, քո մերն ել մեռե.
Զմշկիկ Սուլթան գահ ե գա,
Սասնա եռդ-քար ողողի, տանի:

Ելաց ու վեր քիթ ու բերնին ընկավ գետին:
Մհեր վոր ընկավ գետին,
Քեռին ու հրողբեր թափան վերան՝
Ինչ արեցին, չը կարցան շիտկել:
Մհերի արտսունք գետին արեց խանդակ, գնաց:
Իրեք որ վոր թամամավ, Մհեր նոր շիտկավ, ասաց.
«Աչքեր, դուք կուրանայիք, տղա-տղա չ'որբանայիք*),
Խնդայիք վեր ձեր հոր Գուտն ի գլխին,
Աչքեր, դուք կուրանայիք, տղա-տղա չ'որբանայիք,
Խնդայիք վեր ձեր հոր Քամարն ի մեջքին,
Աչքեր, դուք կուրանայիք, տղա-տղա չ'որբանայիք,
Խնդայիք վեր ձեր հոր Թուրն կեծակին,
Աչքեր, դուք կուրանայիք, տղա-տղա չ'որբանայիք,
Խնդայիք վեր ձեր հոր Շապիկն զրեհին.
Աչքեր, դուք կուրանայիք, տղա-տղա չ'որբանայիք.
Խնդայիք վեր ձեր հոր Կոշիկն ի վոտին.
Աչքեր, դուք կուրանայիք, տղա-տղա չ'որբանայիք.
Խնդայիք վեր ձեր հոր Քուռկիկ Ջալալին»:

Ասաց, հեծավ իր ձին՝
Ու հետ Քեռի Թորոս, հետ հրողբեր
Ճամբա ընկավ դեհ Սասուն:

3

Սասունա ճամբին մեկ վանք կար.
Եդ վանքի անունն ել Մատղավանք եր:
Գավթի թշնամի թագավորներ
Իմացան, վոր Մհեր պիտի գա,
Եդ ճամբով երթա Սասուն,
Ելան, եկան վանահորն ասին

*) Ցեղրդ. հ.

— Ինչ ժամանակ Միհեր գա, անցնի եստեղեն,
Մարդ դրկես, մեզի իմաց տա։—
Ենոնց միտք են եր՝ ճամբան կտրեն,
Միհերին ըսպանեն։—
Վոր եկան, մոտեցան վանքին՝ իրիկվա կողմն եր.
Մեկ ել Քեռի Թորոս կայնավ,—
Են առաջ կ'երթար, Հովան ու Միհեր ետևեն,—
Միհեր վոր տեսավ Քեռու կայնել, ասաց.
— Քեռի՛, ինչի՞ կայնար։
Ասաց.— Ջոջ գերաններ թալե, ճամբեն փակեր են,
Վոր դուշման գա մեզի բռնի։—
Եդ թալաք վանահոր սարքածն եր։
Երեր եր, վոր Միհեր գերաններ թալելուց բեզրի,
Իջնի վանք հանգստանա,
Դուշմաններ գան, վրա տան։
Միհեր հարցուց.— Ի՞նչ հնարք կա՝ ճամբեն բանանք։
Ասաց.— Հնարքն են է, վոր Դավիթ եստեղ ըլներ.
Ցես իմ նիզակով կը վերուցի եդ գերաններ,
Են ել կ'առներ, կը թալեր դեն։
Միհեր ասաց.— Քեռի՛, դու վերու, յես թալեմ։
Թորոսն ելավ նիզակ ետու՝
Մեկ ջոջ գերան վերուց,
Ետու Միհերին, ասաց.
— Ա՛ռ, եսա են կողմ թալ։
Միհերն ել, փաթթվավ գերան,
Տարավ ձորի բերան,
Ու վոտքով քշեց անդունդք։
Եդապես մեկ-մեկ գերաններ վերուցին,
Ջուր իրիկուն ճամբեն բացին.
Գնացի՞ն առաջ, հասան վանք։
Վանահեր ենոնց մեկ ջոջ սենեկ ետու,
Հաց եդիր վոր ուտեն,
Ինքն ել զոզտուկ ելավ,
Խաբար դրկեց դուշմաններին։
Միհեր, Ջենով Հովան, Քեռի Թորոս.
Իրիկնահաց վոր կերան, քնան։

Քեռի Թորոս լուսուն շուտ մի զարթնավ,
Իրիշկեց, տեսավ՝ յոթ թագավորի զորք
Եկե, փաթթեր է վանքի բոլոր:
Թորոս վոր եդ զորք տեսավ,
Ձեն ետու Մհերին, բոռաց.
— Մհե՛ր, վեր ելի, մեկ դուրս իրիշկի՝
Յոթ թագավորի զորք եկե,
Փաթթեր է վանքի բոլոր:
Մհեր զարթնավ, աչքեր տրորեց,
Ձենով Հովանն ել են կողմեն ելավ,
Եկան առջև պատուհան, իրիշկեցին,
Տեսան՝ անտառի ծառներին թիվ կա,
Են յոթ թագավորի զորքին թիվ չկա:
Վանահերն ել ենոնց մեջ:—
Մհեր ասաց.— Ցես գնացի,
Դուք ել իմ ետևեն եկեք:
Գնաց, հեծավ իր ձին, քշեց...
Քեռին ու հրողքերն ել ելան՝
Իրենց ձիանք թամքեցին, քշեցին.
Մհերն ընկավ զորքի մեջ,
Աջո՛ւ եզար, ձախո՛ւ եզար,
Ենպես ջարդեց, քշեց,
Ինչպես քամին մժիկի երամ:

Քեռին ու Հովան եդ վոր տեսան՝
Իրենց յեռանդն ել եկավ.
Մեկ-մեկ բարդի քոքհան արին,
Առան իրենց ձեռ, ընկան մեջ զորքին:
Մհեր վոր տեսավ, հարցուց.
— Եդ ի՞նչ կանեք, ծառո՞վ կը կռվիք:
Ասին.— Բան չենք անի, տղա՛,
Տեսանք, վոր դու կալի մեջ հաշան կ'անես,
Որանը ցրիվ կը տաս,
Մենք ել ափները վրա կը բերենք

Զորքի քոք վոր առան, պրծան,
Վանահոր հետ եկան վանք:

Մհեր մեկ ձեռքով վերուց վանքի գերան,
Մեկելով բռնեց վանահոր մազեր,
Գլուխ դրեց գերանի տակ,
Գերան թողեց վեր գլխուն, ասաց.
— Ես վանքի անուն ըստուց յետ՝
Մատղավանք չը պիտի ըլնի,
Մատնավանք պիտի ըլնի,
Քանի որ վանահեր մատնություն արեց:

Ու ելան իրեքով եկան դեհ Սասուն:

4

Վոր եկան հասան Սասուն,
Ձենով Հովան Սասնա տան շորեր,
Ձենքեր հանեց, Մհերին ետու:
Քուռկիկ Ջալալին բերեց,
Ասաց.— Վո՛ւրդի, ա՛ռ հազի, նստի,
Սասնա տան խոյերեն դու յես մնացե,
Ել յես խնայեմ ո՞ւմ համար:

Մհերն եր, ելավ վեր,
Հազավ Դավթի Զրեհի Շապիկ,
Կապան Ղադիֆե, Կոշիկ Արզըրմին,
Կապեց վեր իրեն Թրիկ Կեծակին,
Առավ են իր ձեռ Նիզակ կտրինին,
Դրեց վեր թեվին Գուրզիկ ջոջանին,
Սանձ պողպատին եզար Քուռկիկ Ջալալու բերան,
Թամբ սադաֆին եդիր Քուռկիկ Ջալալու մեջքին.
Քաշեց դուրս վոր հեծներ,
Քուռկիկ Ջալալին լեզու առավ, ասաց.
— Ե՛յ, անիրավ, դու ո՞վ ես, վոր ինձի հեծնես:
Քո բերա՞ն ե, ինձի հեծնես դու:
Մհեր ասաց.— Քուռկիկ Ջալալի,
Անբախտություն մի՛ անի հետ ինձ,
Ցես ել Սասնա տան խոյերեն եմ:
Քուռկիկ Ջալալին ասաց.

— Դավթի խաթեր համար,
Եդ մեկ խոսք ասիր,
Քեզ ձեն չեմ տա, ելի հեծի:
Մհեր ելավ, հեծավ,
Հրողբեր ու Քնռին ետու առջև,
Գնաց Զմշկիկ Սուլթանի կովի մեջ:
Զենով Հովան ասաց.— Յես ի՞նչպես անեմ,
Մհեր տղա յե, բան չի հասկանա.
Յես ել ծերացեր եմ, չեմ կարնա կովի:
Մհեր ասաց.— Հրողբե՛ր,
Բա մենք Սասնա տնեն չե՞նք,
Չե՛ մենք Սասնա տնեն ենք.
Մենք մեռնենք, մեր գերեզմանի վերա
Թագավորներ չեն կարնա գա:
Քշի՛, երթանք, մեր կռիվն անենք:
Քուռկիկ Զալալին ասաց.
— Ե՛յ, անիրավ, ի՞նչ կը վախենաս,
Իրեք եդբան զորք ընի, կը կոտորեմ:
Են ի՞նչ բան ե, իմ պոչի առջեվ,
Իմ վոտներու, իմ շնչի առջեվ,
Ենոնք ամեն կը կոտորեմ:

Ելան գնացին, քաղաքին հասան:
Մհեր ասաց.
—Հրողբեր, դուք տ'երթաք դեհ քաղաք,
Քե՞ դեհ զորք:

Ենոնք մտածեցին, ասին.
— Երթանք դեհ քաղա՛ք՝ քաղաք ծանր ե,
Չենք կարնա ավերի:
Մհեր վերուց ասաց.
— Ամեն մեկդ երկու անգամ ինձի կը կշռեք,
Յես երկուսիդ դրկեմ մե կողմ,
Մենակ երթամ մե կողմ, ձեր սրտով չի՞:
Զենով Հովան, Քեռի Թորոս ասին.
— Մենք տ'երթանք դեհ քաղաք: Գնացին:
Մհեր ելավ, Թուր կեծակին քաշեց,
Գնաց խառնվա՛վ զորքին.

Աչու եզար, ձախու եզար,
Վո՛չ զորք թողեց, վո՛չ զորական,
Ինչ վոր կար, բոլոր կոտորեց, ասաց
— Ես իմ հոր փոխ:
Զմշկիկ Սուլթան բերեց,
Ծամեր կապեց Քուռկիկ Ջալալու պոչ·
Զին ենոր ամեն պատառ մեկ երկիր թալեց·
Ծամեր մնացին պոչ:
Մհեր ասաց· «Տ'երթամ տեսնեմ՝
Իմ քեռին ու հրոզբեր ի՞նչ են արե»:

Գնաց, տեսավ քաղաք ավերած,
Մնացե մեկ կատու, թոռ միհարի ծեր,
'Իադրած կ'իրիշկի:
Մհեր քաշեց չինարի մ' ծառ,
Զարկեց, կատուն երեր տակ:
Ու ելավ Նեմրութա սարի գլուխ:
Իրիշկեց, վոր ծուխ կ'ելնի·
Մեկ ել դարձավ, գնաց,
Տեսավ՝ մեկ ջադու պառավ ե մնացե,
Վոր քաշված անկյուն մի ծուխ կ'անի:

Ելան իրեքով եկան ենոր քով,
Հարցուցին·— Ինչի՞ ծուխ կ'անես
Պառավ ասաց·— Վոր չ'ասեք թե՛
Ենպես ավերեցինք խլաթ,
Վոր հեչ մի տեղից ծուխ չ'ելնի՛
Մհեր բռնեց են ջադու պառավ.
Ամեն վոտ կապեց մեկ ծառ
Ու ծառեր թողեց:
Խլաթի ծուխ ու մուխ կտրեց,
Ասաց·— Ոխա՛յ, իմ հոր վրեժ առա
Ելան իրեքով եկան տուն:

ՄՀԵՐԻ ԱՄՈՒՍՆՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՎԵՐՔԸ

1

Մեկ ժամանակ վրա անցավ,
Միեր ասաց·— Հրողբեր,
Տերքամ աշխարհ ման գալու·
Յես չեմ կարնա եստեղ նստի,
Վոչ ժառանգ կա ինձի, վոչ մահ ունիմ:

Ելավ, առավ Թուր կեծակին,
Հեծավ Քուռկիկ Ջալալին, գնաց:
Շատ գնաց, քիչ գնաց,
Տեսավ ճամբեն ընկեր է անտառի մեջ,
Ծառներ չեն թողնի ինք երթա:
Ջարդեց գծառներ, անցավ առաջ:
Գնաց, գնաց, չուր առավոտ՝
Դեմ ընկավ մեկ մեծ քարափի:
Միեր չեր ուզի յետ դառնա,
Ամա քարափ կտրեր եր ճնոր ճամբան:
Մեկ ել տեսավ աղվես մի ենտեղով փախավ,

Մհեր գնաց ենոր ետևեն,
Ելավ քարափի գլուխ:
Իրիշկեց, թագավորական քաղաք մի.
Ճամբան ետու առաջ ու գնաց...
Հասավ մեկ խորոտ երի առաջ.
Նստավ ենտեղ հանգստանա:
Մեկ էլ տեսավ մարալ մի՝
Լեզուն թալե դուրս, կը վազի:
Մհեր քաշեց իր նետ ու աղեղ,
Զարկեց մարալին, սպանեց:
Աչքեց—տեսավ են դեհեն՝
Քսանի չափ ձիավորներ եկան,
Հայհոյանք կ'անեն, կ'ասեն.
— Սասնա ծուռ Դավթի տղան
Ելնի մեր թագավորի մարալ սպանի՞...
Եդ վոր լսեց Մհեր, սիրտ հարքեր չ'ետու,
Ելավ, ընկավ ետևներ.
Ենոնք վոր տեսան Մհերին,
Ձիերու գլուխ դարձուցին, փախան...

Մհերն էր, շատ գնաց, քիչ գնաց,
Մոտեցավ Պաճիկ թագավորի քաղաքին:
Ձիուց իջավ տակ, վրան զարկեց:
Խաբար տարան Պաճիկ թագավորին,
Թե՝ Սասունա Մհեր եկե,
Քո քաղաքի մոտ վրան զարկե:
Պաճիկ թագավորն էլ առավ իր վազիր, վաքիլ.
Առավ իր սինոդներ,
Եկավ Մհերի առաջ, ասաց.
— Են ժամանակ, ինչ քո հեր
Մըսրա Մելիքի հետ կռիվ արեց,
Յես ու քո հեր ուխտ ենք արե:
Թե.— Ի՞նչ ուխտ եք արե:
Ասաց.— Ուխտ ենք արե քո հոր հետ,
Վոր ինձի աղջիկ ընի, քեզի տղա,
Իմ աղջիկ տամ քո տղին.
Վոր քեզի աղջիկ եղավ, ինձի տղա,

Քո աղջիկ տաս իմ տղին:
Հիմի աստված քեզ քո հորն է տվել,
Ինձի ել աստված աղջիկ է տվել.
Տեսնենք՝ դու կառնե՞ս իմ աղջիկ:
Ասաց.— Վոր աղջկան հավնա, կ'առնեմ.
Թե չը հավնա, չեմ առնի:
Ելան գնացին աղջկա մոտ.
Ենոր անունն ել Գոհար խանում էր:
Մհեր վոր տեսավ, հավնավ.
Աղջիկն ել տղին հավնավ:

2

Մնաց: Առավոտ Գոհար ելավ,
Պատուհանեն իրիշկեց, տեսավ՝
Մհեր վրանի տակ քնած է:
Ենոր վոտներ չուրի չոքեր մնացե դուրս:
Գոհար տեսավ, սիրտ ցավեց, ասաց.
«Զըլնի՝ արև զարնի Մհերին»:
Ելավ, հեծավ խարտեշ ձի մի,
Հագավ կարմիր շորեր,
Ձենք կապեց վեր իրեն,
Նկավ դեմ ի Մհեր.
Եկավ դռնեն բռռաց, ասաց.
— Մհե՛ր, տե՛ս, արեվ քեզի կը զարնի:
Մհերն ասաց.— Ե՛, յես ի՞նչ անեմ,
վոր վրան պստիկ է:
—Պստիկ չե,— ասաց Գոհար,— ջոջ է,
Համա դուն ազնահուրի ջան ունիս:
Մհեր ասաց.— Լա՛վ, թող քնեմ:
Ասաց.— Յե՛լ, յես թագավորի տղան եմ,
Նկեր եմ, վոր քեզի փորձեմ:
Հետ ինձի կռիվ տ'անես.
Թե դու ինձի հաղթեցիր,
Լուսուն զիմ քուր Գոհար կը տամ՝ կ'առնես կ'երթաս:
Թե դու ինձի չը հաղթեցիր,
Յես քո գլուխ կը զարնեմ:

Միեր հեծավ, ելավ մեյդան։
Գոհարն ել ելավ մեյդան, կայնավ։
Միեր վոր զուրզ թալեց, Գոհար վերուց։
Գոհար վոր թալեց, Միեր վերուց։
Մեկ մեկու չը կարցան հաղթեն։
Գոհար ասաց։— Միե՛ր, հերիք է,
Եդ անասուններ սպանեցինք։
Գնա, իջի քո տեղ, հանգստացի։
Յես քեզի հաց ու ջուր կը նամբեմ։
Գոհար ելավ գնաց,
Վոչխար մի կարմրցուց,
Տիկ մի գինի, հաց ել հետ,
Ետու իր առջևի ծառային,
Տարավ Միերի վրանի դուռ։
Միեր հաց կերավ, գինին խմեց,
Պառկավ, քնավ չուրի լուս...

Լուս վոր բացվավ, Գոհար հագավ սև շոր,
Զենքեր կապեց վեր իրեն,
Ելավ, եկավ դեհ Միեր։
Եկավ, ենոր վրանի դուռ կտրեց,
Ասաց։— Դավթի տղա Միեր դո՞ւն ես։
Միեր ասաց։— Հա՛, յես եմ։
— Իմ քուր Գոհար վոր եկեր ես կ'առնես, դո՞ւն ես։
Միեր ասաց։— Հա՛, յես եմ։
— Դ'ելի, արի քեզի պայման մի կտրեմ։
Թե դու տարար, ասաց,
Իմ քուր Գոհար կը տամ քեզի,
Առավոտուն կ'առնես, կ'երթաս։
Թե յես տարա քեզի,
Յես զքո գլուխ կը կտրեմ։
Ասաց։— Ի՞նչ է քո պայման։
Ասաց։— Քո մատնիք դնենք, զարկենք,
Նետ-աղեղ միջեն անցունք։
Ով վոր չը կարցավ, են տարված է։—
Միերի մատնիք պստիկ մատնիք չեր, վոր չ'անցներ։—
Բերին, դրին մեջտեղ։

Առաջ Գոհար զարկեց:
Նետ ենպես անցուց,
Մատնիֆ իսկի չը խըլվլաց:
Ես անգամ հերթ եկավ Մհերին:
Մհեր վոր զարկելու արեց,
Գոհար եկավ, կայնավ ենոր առաջ:
Մհեր աչֆեց Գոհարի երես,
Գոհար ենպես խորոտ եր,
Աչֆ մնաց ենոր երես.
Նետ եգար, մատնիֆ թռուց.
Ըը կարցավ միջեն անցուցեր:
Գոհար գուրզ ֆաշեց, ասաց.
— Խոսֆ խոսֆ ե, ըզֆո գլուխ տի զարկեմ:
Մհեր վերուց, ասաց.
— Ձե՛, դու իմ աչֆ խաբիր.
Դու կայնար իմ առաջ,
Վոր աչֆեցի ֆո երես,
Իմ նետ դիպավ մատնիֆին:
Բերեց, մեկ ել եդ՝իր, ասաց.
— Մհե՛ր, ես անգամ անցուցիր,
Իմ խոսֆ խոսֆ ե,
Իմ ֆուր Գոհար կը տամ ֆեզի.
Ձ'անցուցիր, ֆո գլուխ տի զարկեմ:
Դրեցին. Մհեր նշնեց, զարկեց,
Մատնիֆի միջեն անցուց իր նետ:
Գոհար եդտեղ ասաց.
— Դու արժան ես՝ Գոհարի մարդն ըլնիս,
Համա ելի կ'ասեմ՝ տե՛ս, արև չը զարնի:
Գնաց մեկ վրան ել դրկեց, ասաց.
— Զարկեֆ Մհերի վոտներին:
Մհեր գլխի ընկավ,
Վոր են թագավորի տղան չեր,
Աղջիկն եր, ինֆ Գոհարն եր:
Մնաց ֆանի մի որ՝
Բերին Գոհարին ու Մհերին պսակեցին.
Յոթն որ, յոթ գիշեր հարսնիֆ արին,
Կերան, խմեցին, ուրախացան:

Մեր գիշեր պառկավ Գոհարի մոտ·
Գոհար բերեց, թուր եդիր մեջտեղ, ասաց·

— Արևմտից թագավոր մեր մոտեն
խարջ կ'առնի:—

Ասաց,— են խարջ վոր կտրեցիր,
Ցես բեզի կնիկ, դու ինձի մարդ:
Գնան: Լուս բացվավ, ելան,
Մեր հեծավ ձին, բշեց:
Հասավ արևմտից թագավորի բաղաբ:
Ենոնք վոր տեսան Մեերին՝
Մենակ ձիու վրա նստած՝
Ինչպես մի մեծ սար ելնի սարի վերա,
Շատ վախեցան ենոր մոտեն:
Նլան զորք արին, եկան Մեերի վերան:
Մեեր բշեց Բուտկիկ Զալալին,
Մեկ կողմեն ինք, մեկ կողմեն ձին,
Զորքի ծերն առան, սկսին ջարդել···
Ջարդեցին, կտրեցին չուրի իրիկուն:
Իրիկուն Մեեր ձիու գլուխ դարձուց,
Եկավ տուն Գոհարի մոտ, ասաց·
— Արեվմտից թագավոր սպաներ եմ,
Նլ բո հոր մոտեն խարջ տանող չ'իլնի:

::

Մնաց ժամանակ մի՝
Ձենով Հովան ելավ,
Թուղթ նամբեց դեհ Մեեր, ասաց· «Մեե'ր,
Կոզբադնի թոռներ ելած են, կտրնացած,
Եկած Սասնա բաղքի վեն կանեն·
Ցես չեմ կարնա, իմ ուժ չի հաղթի·
Կ'ելնես, կը գաս, հասնես»:
Մեեր ասաց·— Ա՛յ կնիկ,
Կ'առնես զիմ գուրգ, դուռ կը դնես,
Ինչ փահլեվաններ կը գան,

Քեզի նեղություն չեն տա.
Կ'ասեն՝ Մհեր ստուն բնած է:

Ելավ բշեց, եկավ Սասնա բաղաբ.
Վոր եկավ, Սասնա բաղաբին մոտեցավ.
Ելաց, դժարացավ:
Իրիկվան ժամանակն եր.
Հրոդբեր դուռ շիներ, բներ եր:
կանչեց.

«Հերահո՛տ հրոդբեր, վե՛ր ելի*),
Քո անուշ բնուց վե՛ր ելի,
Ա՛խ, հալա վե՛ր ելի»:

Ձեն ընկավ հրոդբոր ականջ, մեջ բնուն ասաց.
— Մեկ բարակ ձեն եկավ, դիպավ ականջիս,
Իմ խոր բնու մեջեն զարկավ:
Կնիկ ասաց.— Ա՛յ աղբեր, ի՞նչ ձեն:
Ասաց՝ Սասնա տուն է, դուռ շիներ ես,
Դեռ ելի կը վախենա՞ս:
Հրոդբեր ասաց.
— Հալբաթ կը վախենամ,
Ծերացեր եմ, իմ ազգական մոտես հեռացած:

Մեկ ել գնաց՝ երդսի վերա.
Կանչեց.

«Հերահո՛տ հրոդբեր, վե՛ր ելի*).
Իմ տուն գետին եմ դրե,
Իմ տուն իմ գուրգին պահ իմ տվե,
Իմ գուրգ Պաճիկ թագավորի աղջկան
պահ իմ տվե»:

Հրոդբեր վազեց, գնաց,
Մհերի գլուխ պագեց,
Ասաց.— Դու ի՞նչխ ես պահ տվե,

---

*) Ճիրդ է։

Ֆո տուն թողե, եկե:
Ասաց.— Ցես ենպես եմ եկե,
Մեկ աստված խաբար ելե, մեկ հրեշտակ:
Ասաց.— Ֆո գուրզ դուռ դրեր ես, նշան ի՞նչ ե:
Ասաց.— Ջավահիր քար կո երեսին.
Ինչ արեվ դիպնի, լուս կը տա,
Մարդ չեն քշի վեր իմ դռան.
Ինչ իրիկուն կը գա,— ասաց,—
Մեղրե մոմեր կը վառեն,
Ելի լուս կը տա, չեն իշխեցնա քշի:
Ասաց.— Դու հազար բարով եկար.
Ցես գիտեմ՝ քո հոր տեղ կը բռնես:
Ասաց.— Ո՞վ ե՝ քեզի նեղություն կը տա:
Ասաց.— Կոզբադնի թոռներն են:
Զորս թոռ են, չորսն ել նման են գազան:
Ասաց.— Ցես երթամ, չորսին ել բռնեմ՝
Սպանե՞մ, թե վողջ-վողջ բերեմ:
Ասաց.— Երկսից մեկն արա՝
Կ'ուզես սպանի, կ'ուզես բեր:

Միերն եր, լուսուն ելավ,
Իր ձին հեծավ, քշեց, գնաց Լեռա դաշտ:
Տեսավ՝ Կոզբադնի չորս թոռներ եկան.
Վոր տեսան Միերին,
Իրենց նետ թալեցին.
Վոր թալեցին, նետ մի եկավ,
Կպավ Ֆուռկիկ Ջալալու վոտին:
Միեր Թուր Կեծակին եզար:
Կես կտրավ, կես մնաց ձիու վոտին:
Ելավ, չորս թոռներն ել բռնեց,
Առավ, եբեր հրողբոր մոտ:
Ֆուռկիկ Ջալալին գվոտ վերուց.
Վոր վերուց, հրողբեր ասաց.
— Եդ ի՞նչ ե ելե քո ձիու վոտաց:
Աչքեց, տեսավ՝ կո նետի կտոր մեջն ե:
Ելավ, եբեր յաղուբ, գմրուբ,

Հալեց, ելից ենոր վոտաց վերք,
Ժրավ, ելավ քանց առաջ աղեկ:

Միեր երեր գկոզբաղնի չորս թոռներ,
Երկուս բեվեռեց դռան են կողմ, երկուս են կողմ:

Ելավ, հեծավ Քուռկիկ Զալալին,
Ճամբա ընկավ դեհ Գոհար խանում:
Շատ գնաց, քիչ գնաց,
Տեսավ Հալեպա թագավորի տղաներ,
Քառսուն փահլևան աղբերներ,
Իրենց հեծնելու ձին ել ուղտ ե:
Եդ քառսուն առջև Միերին եկան:
Բարեվ ետու,— բարեվ առան:
Բարև առնելուց ետև ասին·
— Մենք քառսուն ենք, աղբեր ենք ,
Դուն ել ընիս մեզի աղբեր,
Ընենք քառսունմեկ աղբեր:
Ասաց·— Ցես կ'ընենմ ձեզ հետ աղբեր,
Համա ասեք տեսնեմ՝ ձեր քաղաք վո՞րն ե·
Ասին·— Հալեպ:
Ասաց·— Դուք եստեղ ի՞նչ կանեք:
Ասին·— Մենք մե քուր ունենք,
Մեր քուր մեր հոր թախտ զավթե,
Մեզի նամբեր ե եսուեղ,
Ինք թագավորություն կանի:
Ասաց·— Դուք կը գաք, ինձի նշանց տաք,
Տեսնեմ ի՞նչ տեսակ քուր ե,
Վոր թագավորություն կանի:
Ասին·— Վոր դու խարցնես,
Մեր քուր ինչ մորից ելավ, մարդակեր եր·
Մեր հերն ել, մեր մերն ել են ե կերե·
Քաղքի ժողովուրդ բոլոր կերե:

Միեր գնաց, են քառսուն փահլեվանի քուր՝
Մարդակեր պառավին գտավ,
Մեկ ճըլխտրիկ եզար, գլուխ թռուց···

Են քառսուն փահլևանների կուշտ եկավ, ասաց.
— Ձեր մարդակեր հուր սպանեցի,
Դարձեք ձեր քաղաք:
Ենոնք Մհերի վոտ ու ձեռ պագեցին,
Ասին.— Մենք չեյինք կարնա եդ պառվուն հաղթի,
Վոր դու ենոր սպանիր, մեզի ազատիր,
Կուզե՛ս, քաղքի թագավորություն առ,
Մենք քո ծառան մինչև որ մեռնելուն:
— Ցես ձենե բան չեմ ուզի,
Վո՛չ թագավոր կ'ըլնեմ,
Վո՛չ քաղքի տեր կ'ըլնեմ:
Ցես Դավթի տղա Մհե՛րն եմ,
Ցես չեմ կարնա եստեղ նստի,
Վոչ ժառանգ կա ինձի, վոչ մահ ունեմ.

4

Մհեր ենտեղեն նամբա ընկավ, գնաց,
Հասավ Բաղդադ քաղաք.
Տեսավ՝ մեկ ծերանուկ մարդ ենտեղ նստած.
Հարցուց, ասաց.— Ի՞նչ կա Բաղդադ քաղաք.
Բաղդադա թագավոր վո՞ր մեկն է:
Ասաց.— Ցես թագավոր չեմ նանչենա,
Համա կասեն՝ թագավոր Խալիֆի թոռներն են:
Ասաց.— Բաղդասարի գերեզման վո՞րտեղ է:
Ասաց.— Թագավորի սենեկի դեմն է:
Մհեր ասաց.— Բաղդասար մեր ազգեն է, Սասնա տնեն է.
Ենոր գերեզման ինձի նշանց կը տա՞ս:
Նշանց ետու, տարավ ենտեղ,— տեսավ:

Մհեր ձիուց իջավ բախչի մեջ,
Գերեզմանին երկրպագություն ետու,
Աղոթք արավ:— Ինչ աղոթք արեր է,
Ջեռն ել զարկեր վեր քարին, տեղ կ'երեվա:—
Մհերն ենտեղեն ելավ, գնաց,
Եկավ հասավ Ջզիրու քաղաք.

Զզիրու քաղաք մեկ գետ կա,
Անուն Զզիրու Շատ.
Կ'ելնի վոր հարուր քառսուն գետ
Իրարու կը խառնվեն, կ'ելնեն մեկ գետ:
Եդ գետ իրեք անգամ զեն քաղաք ավերեց:
Միեր եկավ ենտեղ,
Մեկ մեծ, ահագին քար երեր,
Թալեց քաղքի քամակ, գետի մեջ.
Գետ ելավ երկու ճուղ.
Մեկ ճուղ են կողմեն կ'երթա, մեկ՝ են,
Ել քաղաք չի ավերի:
Բրջա-Բալաքն ել վեր են քարին շինեց,
Իսկի ավերել չը կա են բերդին:

Մեեր ելավ՝ զձին հեծավ,
Գշեց, գնաց Պանիկ թագավորի քաղաք:
Գնաց տեսավ՝ գուրգ ինչպես դրեր եր,
Են ենպես մնացեր եր.
Մարդ չեր գնացե ենտեղ.
Գնաց, մտավ իր տուն,
Տեսավ՝ կնիկ կո թախտին մեռեր ե:
Զեռ ետու կնկան ձեռ,
Տեսավ՝ թուղթ մի կա ենտեղ,
Մեջ գրուկ. «Բենե կը խնդրեմ՝
Ինչ ժամանակ դու գաս, ինձի տեսնես,
Ինձի տանես Սասուն,
Խանդուք խանումի կուշտ թաղես»:

Միեր ելավ, երարձ Գոհարի մարմին,
Առեց, տարավ Սասնա տուն.
Եկավ, տեսավ՝ հրողքեր մեռած.
Գերեզման շինեց, զԳոհար Խանդուքի կուշտ թաղեց:
Ելավ, քառսուն պատարագ հետու անել,
Սասնա տուն քանի վոր մեռած կային,
Բոլորին պատարագ արավ:
Ելավ, վոր տ'երթար,

Տեսավ՝ վուոֆեր չեր դաղրի վեր հողին.
Դարձավ, գնաց վեր մոր գերեզմանին, կանչեց.

«Մերի՛կ, վե՛ր ելի, մերի՛կ, վե՛ր ելի*),
Միերն եմ, քո ծծի վորդին,
Ինն ամիս ինձի շահեր ես վեր քո սրտին,
Շատ տանջան ես քաշե վեր աստնվորին,
Շատ եմ ման եկե աշխարք, շվար եմ
ման եկե.
Ջը տեսա քո պես քաղցրիկ մեր վեր
աշխրքին»:

Մոր գերեզմանեն ձեն եկավ, ասաց.
«Վո՛ղդի, վի՞նչըխ անեմ*),
Վո՛ղդի, վի՞նչըխ անեմ,
Գույն, կերպ թափե երեսես,
Լուս կտրվե աչքերես,
Ոձ, կարին բուն դրե վերաս:
Բոլ ե ման գաս վեր աշխրքին,
Բոլ ե ման գաս...
Քո տեղ Ագռավու քարն ե,
Գնա Ագռավու քար»:

Միեր ենքան ելաց,
Ել ձեն չ'ելավ մոր գերեզմանեն:
Գոր գնաց վեր հոր գերեզմանին,
Ելաց, ասաց.

«Հերի՛կ, վե՛ր ելի, հերի՛կ, վե՛ր ելի*),
Սասնա Ջոջ տնեն անմաս եմ ելի,
Աշխրքի երեսեն անմաս եմ ելի:
Հերի՛կ, վե՛ր ելի, հերի՛կ, վե՛ր ելի,
Եսոր մրմուռ ձուն եկեր ե,
Քո վորդի Միերի վուոֆեր կը մռմռան:
Հերի՛կ, վե՛ր ելի, հերի՛կ, վե՛ր ելի,
Քո անուշ հոտուն փափագ մնացի,

---

*) Ցերդ է։

Քո անուշ խոսքերուն կարոտ մնացի,
Ենքան մենակ աշխարք գնացի»:
Հոր գերեզմանեն ձեն եկավ, ասաց.
«Վո՛ւրդի, վի՞նչըխ անեմ*),
Վո՛ւրդի. վի՞նչըխ անեմ.
Գուլն, կերպ թափե երեսես,
Լուս կտրվե աչքերես,
Ոձ, կարին բուն դրե վերաս:
Բոլ ե մաե գաս վեր աշխարքին,
Բոլ ե մաե գաս...
Քո տեղ Ագռավու քարն ե,
Աշխարք ավերի, մեկ ել շինվի,
Վոր գետին քո ձիու առջև դիմանա,
Աշխարք քոնն ե»:

Ենքան ելաց, ել ձեն չելավ հոր գելեզմանեն,
Եդ մեկ խոսք ելավ:

Մեր գնաց, հասավ Վոստանա կապան.
Վոր հասավ Վոստանա կապան,
Ենտեղեն,— մեկ իշխան կար,
Կապ եթալ, զՄեր կապեց:
Մեր ձիով ընկավ կապ, ասաց.
«Հիշա իմ հացն ու գինին, տեր կենդանին
Մարուքա բարձր Աստվածածին»:
Ասաց, եզար, կտրեց ըզկապ,
Ազատեց Քուռկիկ Զալալին:

Դարձավ աստծուց խնդրեց՝
Վոր կամ կռիվ մի տա իրեն,
Կամ իրեն ամանաթ առնի:

Աստված յոթ ձիավոր հրեշտակ ճամբեց
Հետ Մեերին կռվելու:
Կես որվնե չուր իրիկուն կռվան,

---

*) Ցերդ ե։

Մեր թուր կեծակին կը թալեր,
Հրեշտակներուն չեր բռնի.
Ձիու վոտ չեր դադրի վեր հողին,
Վոր զվոտքեր կը թալեր՝ կ'երթար մեջ հողին.
Հող առջեվ բուլացեր եր,
Ձեր դադրի առջեվ Միհերին:
Միհեր ասաց. «Հա՜յ-հո՜յ, զո՛ւր ե,
Գետինն ել հալեվորցեր ե,
Իմ ձիու վոտաց տակ չի դիմանա»:
Որ կեսոր եր, քանի քշեց,
Ձին թաղվավ չուր իրիկուն:
Ձձին ասավ, քաշեց եկավ,
Հասավ Վանա մոտ սարի մի սակ:
Մեկ քար մի պատահավ եդոր:
Եդ քարին Վանա քար կ'ասեն:
Ասաց. «Կանգնի, իմ թուր զարնեմ եդ քարին,
Թե կտրեց, յես չեմ մեղավորցեր.
Թե չը կտրեց, մեղավորցեր եմ»:
Թուր վոր եզար քարին,
Քար երկու կոզմեն փեղկվավ,
Ինք, իր ձին զնացին մեջ.
Քար եկավ, իրար կպավ:

Քեռի Թորոս կսկծուց մեռավ,
Վոր իմացավ Միհերի փակվել:

Վ Ե Ր Ջ Ե Ր Գ

Կ'ասեն՝ տարին երկու անգամ
Եդ բար իրարուց կը բացվի.
Մեկ անգամ Վարդեվորին,
Մեկ անգամ՝ Համբարձման:
Վոր բար կը բացվի, Մ'հեր՝
Քառասուն ավուր ճամբա մեկ ժամվա կ'երթա.
Քառասուն որ վեր բարերին կ'երթա,
Ինչ հողի վերան ընկնի՝ ձին կը խանգկի,
Չը կարնա բելի, յետ կը դառնա:
Կ'ասեն՝ մեկ Համբարձման գիշեր
Հովիվ կ'երթա եդ բարի առաջ,
Մհերի բար իրարուց կը բացվի,
Հովիվ ներս կը մտնի, կը տեսնի՝
Հսկա մարդ մի եդտեղ նստած.
Հովիվ կը հարցու.
— Մհե՛ր, դու յե՞րբ տ'ելնիս եդտեղեն:
Մհեր կը դառնա՝ կ'ասի.
— Ցես վոր ելնեմ եստեղեն,
Հողն ինձ չի պահի:
Քանի աշխարհ չար ե,
Հողն ել դալբցեր ե,
Մեջ աշխարհին յես չեմ մնա:
— Վոր աշխարհ ավերվի, մեկ ել շինվի,
Յերբոր ցորեն եղավ բանց մասուր մի,
Ու գարին եղավ բանց ընկուզ մի,
Են ժամանակ հրամանք կա, վոր ելնենք եդտեղեն:

Հովիվ վոր դուրս կ'ելնի,
Քար կը գա կը հասնի իրարու:

Ուրբաթ ուրբաթ,— կ'ասեն,—
Ջուր կը գա, կաթի եդ քարեն:
Կ'ասեն՝ Մեերի ձիու ջուրն է:
Ու ամեն ճամբորդ՝ ուրբաթ արեր
Կը լսի Բուռկիկ Ջալալու խրխնջոցն եդ քարեն:

— —

Հիշենք զոզորմին Ծովինարին,
Քառասուն ոզորմի Սանասարին:
Հիշենք զոզորմին Բաղդասարին,
Քառասուն ոզորմի Դեղձուն Ծամին:
Հիշենք զոզորմին Քեռի Թորոսին,
Քառասուն ոզորմի Ջենով Հովանին:
Հիշենք զոզորմին Ջոջ Մհերին,
Քառասուն ոզորմի Արմաղանին:
Հազար ոզորմի են Թառլան Դավթին,
Քառասուն ոզորմի Խանդուք Խանումին:
Հիշենք զոզորմին Պատիկ Մհերին,
Քառասուն ոզորմի Գոհար Խանումին:
Հիշենք զոզորմին, քառասուն ոզորմի,
Մեր փիր վարպետին, վոր մեզի պատմեց:
Հիշենք զոզորմին, հազար ոզորմի
Ականջ արողի հոր ու մոր հոգուն:

ԲԱՌԱՐԱՆ

Ա.

ԱԳՐԱՏԳԱՀ— նախաճաշի ժամանակ
ԱԳՈՒԲԵ— խուրջին, պայուսակ
ԱԶԱՊ— չամուսնացած տղա, ապրիկ
ԱԶՐԱՑԻԼ— հոգեառ հրեշտակ
ԱԶՆԱՎՈՒՐ— ազնվական, ազնիվ, հակտ
ԱԺԴԱՀԱՐ— աժդահա, վիթխարի
ԱԿԱՆՋԿԼԱ— համբավ, լուր
ԱԿԱՆԱՏ— դռան փայտե բանալիի աեղ
ԱԿՀԱՎ, ԱԿԱՀԱՎ, ԱԿԱՀԵՑ— կռահեց, իմացավ
ԱՂԵԿ— լավ, պեղեցիկ
ԱՂԲԵՐՈՒԿ— յեղբայր, յեղբայրիկ
ԱՂՈՒՐ— փչրանք
ԱՄԱՆԱԹ— հավատարմի մոտ պահ տված վորևե իր
ԱՄԱԳ— աշխատանք
ԱՆԱԿԱՀ— հանկարծակի, վոչ արթուն, վոչ զգաստ
ԱՆԳՑԱԼ— անպետք, անգործունյա
ԱՆՀԻՄԱ— անհասկացող
ԱՊՈՎ— համար, հուսով
ԱՌ ՈՒ ԱՎԱՐ— թալան, ավար, կողոպուտ
ԱՍՔԱՐ— զինվոր, զորք
ԱՍՂԱՆ— առյուծ
ԱՍՏԵՎՈՐ— ապրող
ԱՎԱՏԱՍ— հավատաս, հավատացիր
ԱՎԱ— ահավասիկ, ահա
ԱՎՈՒՐ— որերից մի որ
ԱՐՈՒՆՔ— արյուն
ԱՐՄԱՂԱՆ— դեղեցկուհի, նրբագեղ, կույս, կին, (հատուկ անուն)
ԱՓՈ— պապ, պապիկ
ԱՔՈՒՑ— աքացի, քացի

Բ.

ԲԱԴԱԼ— փոխարեն
ԲԱՁԲԱՆԴ— բաղկին կապվող պահպանակ, նշան
ԲԱԼՔԻ— գույն
ԲԱՐՈՇ— պղինձ (ման)
ԲԻՋ, ԲԻՃ, ՊԻՋ— ապորինի զավակ, ընկեցիկ
ԲԻՆՏ, ԲԻՆԴ— փաթաթան, կապ
ԲԼԵԼ— փուլ դալ
ԲՂՈՒՂ— ման, քասա
ԲՆԱՏԱ— դուքանի մաս
ԲՈՒՄԲԱՐԱՔ— վայելումն
ԲՈՒՐՋ— բերդ
ԲՈՒՍԱԹ, ԲՈՑ ՈՒ ԲՈՒՍԱԹ— տեսք, մարդու արտաքինը
ԲՍԿԵՐ— կանանց դանդուրներ, վոր կախվում են դեմքի յերկու կողմերից

Գ.

ԳՍԶ— չափ ե
ԳԱՀԱ, ԳԱԽ Ե— ժամանակն ե, ահա
ԳԱՂՏԻԿ— դաղտնի
ԳԵՍՏԵՐ— զգեստներ
ԳԻՆԱՍ— գիտես
ԳՌԲԱ, ԳՑՈՐԱ— չափ
ԳՐՓ, ԳՈՄՓ— բռունցք
ԳՈՒՍԱՆ— ժողովրդական յերգիչ, աշուղ
ԳՑՈՂ— լիճ
ԳՑՈՒՎԱ— իբր թե

Դ.

ԴԱՍՏՈՒՐ— հրաման
ԴԱՎԱ— ուղտ

Բառարանը կազմել է ընկ. Ս. Տարոնցին

ԴԱՐԲ— զարկ, հարված
ԴԱՐԳԱՀ— դարպաս
ԴԵՀ— դեպի, կողմ
ԴԻՎԱՆՔ— քրիստոնեական չար վոգիներ
ԴՂԵԿ— ղղյակ
ԴՈ՞Ր— վո՞րտեղ, ո՞ւր
ԴՈՐ— այս անգամ, հերթ
ԴՆԴԵՂ— ալիք
ԴՈՒՌ ԲԻՆԱԿ— գուռը բռնած նստած
ԴՌԸՆԳՈՋԱ— մանկական խաղ, փայտե լրծակով

Ե.

ԵԲԱՑ— բացեց
ԵԲԱՐՁ— բարձեց
ԵԲԵՐ— բերեց
ԵԼԻՑ— լցրեց
ԵԿՈ— արի
ԵՀԱՆ— հանեց
ԵՆԻ— նա, այն
ԵՆ ԴԻԵՆ— այն կողմից
ԵՌԱՆԴ— յերեկ չե մյուս որը
ԵՍԱ— այս
ԵՍ ԴԻՐ— այս անգամ
ԵՏՈՒ— տվեց
ԵՐ— այր, քարայր

Զ.

ԶԱՊՈՒՆ— նիհար
ԶԱԼՈՒՄ— անսիրտ, անգութ
ԶԱԹԻ— արդեն
ԶԱՂՋԿԱՆ— աղջիկը, աղջկան
ԶԱՄԵՆ— ամենը, բոլորը
ԶԱՆԴՈՒ— ասպանդակ
ԶԱՐՄ— ցեղ
ԶԱՐԶԱՄԲԱ— նկուղ
ԶԱՏԱՆՑ— հեռվից, առանձին
ԶԱՏԱՆԱԼ— հեռանալ, առանձնանալ
ԶԵՆ— այն, նա
ԶԵՆԻ— նրան
ԶԵՆԵԼ— զոհել
ԶԵՆՈՆՔ— նրանք
ԶԵՏ— այդ, դա
ԶԻՐ— իր, յուր
ԶԻՐԱՆՑ— իրանց, յուրյանց
ԶԻՆՔ— ինքը, իրեն

ԶՄՐՈՒՐ— զմռուռ
ԶՄԵՐ— ժերը
ԶՄԵՆ— ամենը, բոլորը
ԶՈՂՈՐՄԻ— վողորմի
ԶՈՒՈՎ— ուժով, բռնի
ԶՈՐԸՆԴԵՂ— զորեղ

Ը.

ԸԶՔՈ— քո, քոնը
ԸԼՆԵՐ— լիներ
ԸԼԼԻ— լինի
ԸՌԸԿԵԼ, ԸՌԿԵԼ, ԸՌԿԱՎ— խուզել, բարկանալ, բարկացավ
ԸՐԻՎ-ՃԸՐԻՎ— խուճապ

Թ.

ԹԱԹԱՑԻԿ— վոտաբաց
ԹԱԼԵԼ— գցել, նետել
ԹԱԼԱԿ— թակարդ
ԹԱԹԹՔՓԵԼ— թափ տալով մաքրել
ԹԱՇԿԵԼ— թոռոմել
ԹԱՍԼԻՄ— հանձնումն
ԹԱՍԻԲ— պատիվ
ԹԱՌԲԵՂ, ԹԱՌԲԵԽ— նորածիլ բեղ ունեցող
ԹԱՐԹԱՓ— արտևանունք
ԹԱՄԲԱՀ— պատվեր, ապսպրումն
ԹԱՄԱՄ— լրիվ
ԹԱՎԼԱ— ախոռ
ԹԻՐԵՆ— կողմից
ԹՈՆԴԻՐ— թոնիր
ԹՈՐԿԵԼ— թոզնել
ԹՌՈՒՑԻՆ— թոցրին

Ի.

ԻԴԱ— դա
ԻԴԱՐԵ, ԻԴԱՐԱ— ապրուստ
ԻԼԻՆ— լիքը, լեցուն, նաև՝ լցրեցին
ԻՇԽԵՆԱԼ— համարձակվել
ԻՍԿԻ— բոլորովին
ԻՎԵ— իվեր, վեր
ԻԴԱ— այս, այդ
ԻՐԻՇԿԵԼ— նայել, դիտել
ԻՐՈՒՐ— իրար

Լ.

ԼԱՃ— տղա
ԼԱՌ— վորդի, վորդյակ
ԼԱՎՈՏԵԼ— տակը կեղտոտել
ԼԲՈԿ— լերկ կաշի
ԼԸՄԱՆ— լրիվ
ԼՄՆՑԱՎ— լրացավ
ԼՆՈՒՄ— լցնեմ
ԼՈԴՐԻԿ— կտրիճ
ԼՌԻԼԱ— խողովակ
ԼՈՐԿԵԼ, ԼԲՈԿԵԼ— քերթել, պլոկել
ԼՑՈՒԿ— լցված

Խ.

ԽԱԲՐԱԲԵՐ— լրաբեր
ԽԱՁԻՆԱ— հարստություն, գանձ
ԽԱԹՐ, ԽԱԹԵՐ— հարգանք
ԽԱԼԻՖ— արաբական հոգևոր և աշխարհիկ իշխանության պետ միջնադարում
ԻԱՆԴԱԿ— փոս
ԽԱՉ ԳԱՏԵՐԱԶՄԻՆ, ԽԱՉ ԳԱՏՐԱԶԻՆ, ԽԱՉ ԳԱՏՐԱՍՏԻ— հաղթության նշան
ԽԱՌԱՆ— շունը կապելու շղթա
ԽԱՏԵԼ, ԽԱՏՆԵԼ— վերջանալ
ԽԱՐՏԵՇ— խարտյաշ, շաղանակագույն
ԽԱՐՋ— հարկ, միաժամանակ և հարմար
ԽԱՐՋԴԱՐ— հարկատու
ԽԴԱՄ— նաժիշտ
ԽԵԼԻ— բավական
ԽՆՂ— խեղանդամ, հաշմանդամ
ԽԵՂԵԼ— խեղանդամ դարձնել, հաշմանդամ դարձնել
ԽԵՎԸՎԱԼ— շարժվել
ԽԻՐՈՏ, ԽՈՐՈՏԻԿ— սիրուն, սիրունիկ
ԽՈՌԵԼ— կիսել
ԽՈՋԱ— մեծ, ահագին, նաև պատվավոր, հարուստ
ԽՈՑ— ղոչ, եղոսում՝ քաջի իմաստով

Ծ.

ԾԼԾԿՈՒԻՔ— ՏԼՏ, հեծեծանք
ԾՌԱՆԱԿ— խենթի պես, գժի պես

Կ.

ԿԵԴԱՐ— ինչքան
ԿԱԼԱՄ— գրիչ
ԿԱՀԱՆ— կապարճ, նեռերը պահելու տեղ
ԿԱՆԳՐՀԱՆ— կանգառ բույսը հանող գործիք
ԿԱՊԱ, ԿԱԲԱ— վերնազգեստ
ԿԱՊՈՒԿ— կապած
ԿԱՐԻԲ— ոտաբական, պանդուխտ
ԿԸԱՎ— կոացավ
ԿԹԽԱ— թաս, բաժակ
ԿԻՔ— ամուր, պինդ, կիպ
ԿԽՏԱՐ— յեղջերու
ԿՆԳՈՒԿ, ԿՆԴԵԼ— թրաչված, ածիլված, թրաչել, ածիլել
ԿՆԿՌԱԼ, ԶԸՆԿՌԱԼ— համառել, մի աեղում կանգնել
ԿՑՈՒՑ— կպցրեց
ԿՈ— ահա
ԿՈՆԴՈՒՌԱ— կոչիկ
ԿՈՊԱԼ— կեռագլուխ ձեռնափայտ
ԿՈՌ— գավազան
ԿՍՌԵԼ— կորացնել, կոփել
ԿՌՈՒԿ— կոռ, ծռված
ԿՈՏ— ցորենի չափման
ԿՈՒԶ— սև գույնի մի կենդանի
ԿՈՒԴՈՒՄ— ուժ
ԿՐԻՏ— այրված հաց
ԿՈՒՇՏԻ— ըմբշամարտ
ԿՈՒՍ— կույս
ԿՌՄԵԼ— թմրել
ԿՌԶԱԼ— ճարճատել

Հ.

ՀԱՐԿԱ— խուրջին, պայուսակ
ՀԱԶՐԱՑ— բարեի յեղանակ
ՀԱԼԱՎ— հաղուստ
ՀԵԼՎՈՐ— ծիրանի
ՀԱՂԹՈՒԿ— հաղթող, հաղթանդամ
ՀԱՆ ԳՈ— ահավասիկ, ահա
ՀԱՎՈՒԶ— ավազան
ՀԱՑՐԵՆԻ— հայրենիք
ՀԱՐ— մինչև
ՀԵԼԱԿ— բաճկոնակ
ՀԵՂ— անգամ
ՀԵԼՍՏԱ— սվաղ
ՀԵԾԵԼ— հեծյալ
ՀԻԵՐԱՆ— սիրահարություն, սիրելի
ՀԵՏ ԻՐ— իր հետ
ՀԵՏ ԻՐԱՑ— իրար հետ
ՀԵՐԱԳՈՒԹ— հոր դուք ունեցող

ՀԵՐԱՀՈՏ— հերաղութ
ՀԼՀԼՈՑ— հևք
ՀՄԴԱԹ— ոգնող, ոգնություն
ՀՈԼՐԵԼ— վոլորել
ՀՈՐԻ՞— ինչո՞ւ
ՀՐԱՄԱ, ՀՐԱՄԵՆ— ընթրիքի ժամանակ

Ջ.

ՋԻԱԹՈՂՍ— ձիաբշավ, խաղ

Ղ.

ՂԱԴԻՖԱ— թավիշ
ՂԱԼԲ— խարդախ, կեղծ
ՂՆՑԴԱ— յեղանակ, կերպ
ՂԱՓԼԱՆ— վաղը
ՂԱԲՈՒԿ, ՂԱՓՈՒԴ— մահուդե վերնազգեստ
ՂԸՍԲԸՂ— եղ ձի

Ճ.

ՃԱՄԲԱՐՈՒԿ— դութանի մաս
ՃԱՆ— վեղ
ՃԱՆԿ— ափ, բուռ, ձեռքի մատներ
ՃԱՐ— հնար, ղեղ
ՃԻԺ— յերեխա
ՃԻՎ— վոտքից մինչև աղդրը, նաև՝ հավ
ՃԼԸՆՏՐԻԿ— ապտակ
ՃՆԱԼ— ուրախությունից սիրտը դարկել
ՃՂՈՒՆ— ճեղքած
ՃՂՈՐ— որորոց
ՃՃԵԼ— հարստության մեջ լողալ
ՃՄԼՏԿԱԼ— մարմիներ կուչ ու ձիգ տալ՝ դարթնելուց հետո
ՃՆՃՆԱԼ— թնդթնդալով լաց լինել
ՃՈԹ— կողմ, ծայր
ՃՐՂԱԾ— փորը պատռած
ՃՎԱԼ— բղավել

Մ.

ՄԱԿՑԱՐ— միթե
ՄԸԳԱՐ— միթե
ՄԱՐԴԱՆԱԿ— տղամարդու նման
ՄԱՐԵ— մայրիկ
ՄԱԺԵԼ— չփել, չոյել
ՄԱՆՁԻԼ— սարսածություն
ՄԵՋԼԻՍ— դիվան, ժողով
ՄՁՐԱԽ— նիզակ
ՄԺԻԿ— մժեղ, մժղուկ
ՄԻԴ ՎԵ, ՄԻՏ ՎԵ— մտքում, մտքի մեջ
ՄԼԵԼ— խցկել, կոխել
ՄԿԱ— հիմա, այժմ
ՄՈԼՎԱԾ— ծեփված
ՄՈՒՇԱՄԲԱ— նրբաղորձ ծածկոց
ՄՈՒՐԱՁ— խղճ, փափաղ

Ն.

ՆԻԱԹ— ղեմքի խոժոռումն, ախուր, թբթ-ված դեմք
ՆՍՏՈՒԿ— նստած
ՆՇԱՆԴԱՀ— նշած տեղը, նշանը
ՆՎԱՁՑՈՒՑ— նվազեցրեց, կարեց

Շ.

ՇԱՌԱՎԻՂԹ— ցոլք, շողք
ՇԱՎԱՐ— ջութակ
ՇԵԼԱՊՈՒՏԻԿ— գլխկոնծի
ՇԵՆԹ-ՇՆՈՐՀԹ— շնորհք, ընդունակություն
ՇՆԻԿ— ցորենի չափաման
ՇՈԴԵԼԹ— բերանի դոլորշի
ՇՈՂՇԱԲԴԱՆ— հարբած ժամանակ կարմրելը

Ո.

ՈՒՂՈՐԴ— ճիշտ, ճշմարիտ
ՈՒՆԿ— կանթ, ականջ
ՈՒՍՏ— վոստեղից
ՈՒՇԻԿ— կամաց
ՈՍՏԻՆ— անջրդի

Զ.

ՁԱԴԸՐ— վրան
ՁԱԹՈՒՆ— ամբոխվել, կիտվել
ՁԱՓԱՐԱՐ— չափող
ՁԵՎ— մինչև
ՁԸՂՁԸՓԵԼ— շարժել, թափ տալ
ՁԼՈՒՏ— մերկ
ՁԸԼՏԵԼ— մերկացնել
ՁԻՈՒԼ— վտանդավոր
ՁԻՈ— արդեն, թե չե
ՁՈՒՐ— մինչև

Գ.

ԳԱԴԵԼ— համբուրել
ԳԱԽՈՒՑ— պախուրց
ԳԵԴԱՆԱԼ— մեծանալ, խոշորանալ
ԳԼԸՆԴ— փալանք, վազը
ԳՂԼՈՐԻ ՓՈՂ— դալարափող
ԳՈՌԹԵԼ— պատռել
ԳՈՒՌԻԿ— շուրթ
ԳՈՏԵԼ— քսել
ԳՈՒՃԻԿ— գուլպա

Ջ.

ՋԱՆԴԱՔ— դիակ
ՋԻՆ-ՋԱՆԱՎԱՐ— դեվ-դազան
ՋԻՐԻՆԴ— ձիարշավ
ՋՐԲԱՔԱՐ— փորձաքար
ՋՋՄԱ— յերկարաճիա կոշիկ
ՋՈԿ— առանձին
ՋՈՋ— մեծ
ՋՈՒԱՐ, ՋՈՒՂԱՐ— լուր, համբավ
ՋՈՒԽՏ— գույդ

Ռ.

ՌԱՆԴԱ— փայտահարթիչ գործիք
ՌԱՍՏ— հանդիպումն

Ս.

ՍԱԼԱՄԱԹ— վողջ-առողջ
ՍՍԿՌԻ— կողովի մեծ տեսակ, քթոց
ՍԱՐԱՑ— պալատ
ՍԱՐ-ՍՈՒՐԲ— մաքուր, հստակ, սերսուվ
ՍԵՆԵԿ— սենյակ
ՍԵՑՐ-ՍԵՑՐԱՆ— պտույտ, ման գալը
ՍԹՐԵԼ— տեղավորվելով հանդստանալ
ՍԻԼԱ— ապտակ
ՍԻՆՈՐ— սահման
ՍՄԲՈՒԼ ԳԴԱԿԱՆ— գլխարաց՝ հարբած ժամանակ
ՍՈՂ— շուստ (վոտնաման)
ՍԳԱՆՈՒԿ— սպանված
ՍՏԱ— այստեղ

Վ.

ՎԵԳԱ— ժամանակ
ՎԱՋԻՐ— թագավորության յերկրորդ անձը
ՎԱՌԻԼ— փոխանորդ
ՎԵ— ի վեր, վեր
ՎԵՐԱՆ— ավեր, ավերակ
ՎԷՐԱՆ— վրա, վրան
ՎԵՐՔԵՐ— վայրեր, տեղեր
ՎԵՐՈՒՑ— վերցրեց
ՎԵՑԿԻՒ— վեց զույդով լծված գութան
ՎԺԺԱԼ— բարձրաձայն լաց լինել
ՎԻՐՈՒ, ՎԵՐՈՒ— վայրի, վայրենի
ՎԻՈՆՁԸՆ— ինչպե՞ս, վո՞նց
ՎՈՐՎԱՆՔ— դդած բրդի տականք, անա-ցորդ

Տ.

Տ'— պիտի
Տ'ԱՍԵՄ— պիտի ասեմ
ՏԻ— պիտի
Տ' ՏԱՄ— պիտի տամ, պետք է տամ
ՏԻ ՏԱՍ— պիտի տաս, պետք է տաս
Տ'ԸԼԼՆԻ— պիտի լինի
ՏԻԼ— ցեխ
ՏԻՐՎԱՆՔ— տերեր
ՏՂԱՄԵՐ— հղի կին
ՏՈՋԻԿ, ՏՈՃԻԿ— տրտինդ, ցատկռտել
ՏՓԵԼ— ծեծել

Ք.

ՔԱԿԵԼ— քանդել
ՔԱՆՑ— քան
ՔԱՐԳԱՀ— իլիկ
ՔԱՖԿԻՐ— միջնադարյան յերաժշտական գործիք
ՔԱՖ, ՔԱՖՈՒՐ— անդութ, անխիղճ
ՔԵ— քեզ
ՔԵՆԵ— քեզնից
ՔԵՌՄԵՐ— մորեղբայր
ՔԻՐԲԻԹ— լուցկի
ՔՈԹԱԿ— դիակը նստած, կենդանի գույդ տալու փորձ
ՔՈՇՔ— պալատ
ՔՈՔ— արմատ

ՔՈՓԱԿ— չնաբարո մարդ
ՔՈՒՈՑ— հոգևարքի հոնդյուն
ՔՈՒՆՋ— անկյուն
ՔՈՒՇՏԻ— տես՝ կուշտի
ՔՈՒՐՍԻ— աքոռ, թոնրի ծածկ
ՔՐՎԵԼ, ՔՎՐԵԼ— հայհոյել

Փ.

ՓԱԼԱՍԱՆՔ— անպետք
ՓԱՐԴԱ— վարագույր
ՓԱՔԻՇԱՀ— թագավոր, արքա
ՓԱՀԼԵՎԱՆ— քաջ, հերոս, դյուցազն
ՓԼՈՒՑ— փլուզվել
ՓՈՂՊԱՏ— ոժիք
ՓՈՒԼ— թումբ
ՓՍԼԻՔ— բերանի ջուր
ՓՐՋՈՏ— մազոտ
ՓՌՈՂՔ— զայրույթ, ցասում

ՎԱՆԻ ԱՆՈՒՆՆԵՐ

ԱԴՌԱՎՈՒ ՔԱՐ, ԱԳՐՓՈՒ ՔԱՐ, ՎԱՆԱ ՔԱՐ, ՄՀԵՐԻ ԴՈՒՌ— Վանա մոտ մի քար է՝ հին սեպագրերով

ԱԽՄԱԽՈՒ ՍԱՐ— սարի անուն է

ԱՆԴՂԱ ԳԵՏ— Տիգրիսի վտակներից մեկը

ԱՐԶՐՈՒՄ, ԵՐԶՐՈՒՄ— Կարին քաղաքի անունն է

ԱՐՔԻԿ— գյուղ Սասուն գավառում

ԲԱՆԴՈՒՄԱՀՈՒ ԿԱՄ ԲԵՐԿՐԻ ԳԵՏ— գետ Վանի շրջանում

ԲԻԹԼԻՍ— քաղաքի անուն է, Սասունի հարավ-արևելյան կողմը

ԲԱՂԴԱԴ— քաղաք Միջագետքում

ԲԱԹՄԱՆԱ ԿԱՄՈՒՐՋ, ԳԵՏ— կամուրջի և գետի անուն, Մանա սահմանում

ԳՑՈՒՐՋԻՍՏԱՆ— Վրաստան

ԴԻԱՐԲԵՔԻՐ— քաղաք, նախկին Տիգրանակերտը, կամ նախկին Տիգրանակերտի սահմաններում

ԴԵՂԴԻՍ ԿԱՄ ՏԵԽՏԻՍ— գյուղ Սասունում

ԴԱՇՏՈՒ-ՊԱԴՐԻԱՂ— գյուղ Սասունում

ԼԵՌՎԱ ՍԱՐ ԿԱՄ ԼԵՌԱ ՍԱՐ— սար Մանա սահմաններում

ԽԼԱԹ, ԱԽԼԱԹ— միջնադարյան հայկական քաղաքի անուն, այժմ գյուղ

ԾՈՎԱՍԱՐ— սար Սասունում

ԾԵՄԱԿԱԿԻԹ— սար Սասունում

ԿԱԹՆԱՂԲՑՈՒՐ— առասպելական աղբյուր

ԿԱՆԱՁ ՔԱՂԱՔ— առասպելական քաղաքի անուն

ԿԱՊՈՒՏԿՈՂ— կապույտ բերդ

ԿԱՊՈՏԻՆ ԲԵՐԴ ԿԱՄ ԲԵՐԴ ԿԱՊՈՏԻՆ— բերդ Կողվանում

ՀԱԼԵՊ— քաղաք Միջագետքից արևմուտք, Սիրիայում

ՀԻԼԻ— վանքի անուն Ռչտունիքում

ՃԱԺՎԱՆ— հին Ճոճվանը, տեղի անուն է

ՇԱՊԱՂՋՈՒՐ— տեղի անուն է, Տարոնի և Դիարբեքիրի մեջտեղը

ՄԱՆԶԿԵՐՏ, ՄԱՆԱԶԿԵՐՏ— միջնադարյան բերդ-քաղաք, այժմ գյուղ

ՄԱՌՆԻԿ, ՄԱՌԸՆԿԱ ԴԱՇՏ— գյուղ Տարոնում

ՄԱՐՈՒԹ, ՄԱՐԱԹՈՒԿ, ՄԱՐՈՒԹԱ— սար Սասունում

ՄԱՏՂԱՎԱՆՔ— հին Հայաստանի վանքերից մեկը

ՄԱՐԱԹԿԱՋՈՒՐ— Տիգրիսի վտակը

ՄԱՐՈՒԹԱ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ— վանք Մարութա սարի վրա

ՄՈՒՐԱԴ ԳԵՏ— Արածանի գետը, այժմ Մուրադ-չայ

ՄՈՒՇ— քաղաք Տարոնում

ՄՍԸՐ— Եգիպտոս

ՆԵՄՐՈՒԹ— սար Սասունի և Մոկսի միջանցք
ՆՈՐԱԳԵՂ— գյուղի անուն Մուշում և Վանի մոտերքը
ՋԶԻՐ— պատմական Աղբակից գետի հարավ ընկնող գավառ
ՇԱՄ— Դամասկոս քաղաքը
ՋԶԻՐՈՒ-ՇԱՏ— Զգիրու գետի անունը
ՊՂՆՁԵ ՔԱՂԱՔ— առասպելական քաղաք
ՍԱՍՈՒՆ— Տարոն-Տուրուբերանի լեռնային գավառներից մեկը
ՍԵՂԱՆՍԱՐ— սար Մուշի գավառում
ՍԵՎՍԱՐ— սար Սասունում
ՍՈՒՐԲ ԿԱՐԱՊԵՏ— Իննակնյան Գլակա վանքը
ՎԱՆ— քաղաքի անուն և
ՎՈՍՏԱՆԱ ԿԱՊԱՆ— Վանա ծովի հարավային ափին, պատմական Ռշտունյաց գավառի կենտրոնը, հայանի Նարեկ գյուղի մոտ
ՏՈՍՊԱՆ ԲԼՈՒՐ— տես՝ Ագոռավու քար
ՑԱՐԿԵՆ— Նփրկերտ քաղաքը, Դիարբեքիրի մոտերքը

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաջաբան IX
Կազմողների կողմից XXXI

Ճյուղ առաջին

ՍԱՆԱՍԱՐ ՑԵՎ ԲԱՂԴԱՍԱՐ 3
Մաս Ա
Կռիվ Բաղդադի խալիֆայի դեմ 7
Մաս Բ
Սանասարի յեվ Բաղդասարի ամուսնությունը 65

Ճյուղ յերկրորդ

ՄԵԾ ՄՀԵՐ 109
Մաս Ա
Միհրը խնամում և Սասունը 113
Մաս Բ
Միհրի կռիվը Մսրա Մելիքի դեմ 135

Ճյուղ յերրորդ

ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԻԹ 151
Մաս Ա
Դավթի կռիվը Մսրա Մելիքի դեմ 153
Սանուկ Դավիթը Մսրում 155
Դավիթը հովիվ 187
Վշտասոր Դավիթը վերաշինում է հոր վանքը և պատուհասում է Խոլբաշու զորքերին 213
Դավիթը պատուհասում է Մսրա Մելիքի հարկահաններին . . . 235
Դավթի և Մսրա Մելիքի մենամարտը 250
Մաս Բ
Դավիթ յեվ խաղդուք 287
Դավթի ամուսնությունը 289
Դավթի մահը 325

Ճյուղ չորրորդ

ՄՀԵՐ ՓՈՔՐ 339
Մաս Ա
Միհրն առնում է Դավթի աշյան վրեժը 343
Միհրի ամուսնությունը յեվ վերջը 355
Վերջերդ 369

Բառարան 375
Վայրերի անուններ 381

Տեխ. խմբագիր՝ Ստ. Ալթունյան. սրբագրիչներ՝ Հ. Մանուկյան, Վ. Ավագյան, կոնտրոլ սրբագրիչներ՝ Լ. Արովյան, Ցե. Տ-Մինասյան. գլավլիտի լիազոր՝ Վ—2170 հրատ. №4909, պատվեր 461, տիրաժ 10000. Թուղթ 72×110. 26 1/4 մամ. մեկ մամ. 49280 նշան. հանձնված է արտադրության 10 մայիսի 1939 թ. ստորագրված է տպագրության համար 15 ոգոստոսի 1939 թ. տպագրված է Կրասնոկամսկի Դաշնակի գործարանի թղթի վրա. Պետհրատի 1 տպարան, Երևան. Լենինի 65։

Գինը 35 ռ.
Կազմը 5 ռ.

(3n)